

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ  
ԸՆՏՐԱՆԻ

ՀՈՒՆՎԱՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ 2008

ՀԱՏՈՐ III

Երևան  
«Բավիդ» ՍՊԸ  
2010

ՀՏԳ 347 (479. 25)

ԳՄԴ 67. 99 (2Հ) 9

Հ 247

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի որոշումների  
Հ 247 ընտրանի (հունվար-դեկտեմբեր 2008).-Եր.:

«Բավիղ» ՍՊԸ, 2010. 612 էջ

ՀՏԴ 347 (479. 25)

ԳՄԴ 67.99 (2 Հ) 9

© Դրմեյան Լիպարիտ, 2010 թ.

Սկրոչյան Արսեն, 2010 թ.

**ISBN 978-9939-818-12-2**



Bundesministerium für  
wirtschaftliche Zusammenarbeit  
und Entwicklung

«Հարավային Կովկասում իրավական և դատական  
բարեփոխումների համար խորհրդատվություն»  
ծրագիր

### **Programm „Rechts- und Justizreformberatung im Südkaukasus“**

Սույն ընտրանին հրատարակվել է Տեխնիկական  
համագործակցության գերմանական ընկերության (GTZ)  
օժանդակությամբ

Սույն ընտրանում արտահայտված տեսակետները պարտադիր չէ,  
որ արտացոլեն ԳԴՀ կառավարության տեսակետները



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ**

Թիվ 3

հունվար-դեկտեմբեր 2008 թվական

**Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

**ԽՆԴԻՐՆԵՐ**

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ**

**Նյութական իրավունքի վերաբերյալ որոշումներ**

Սեփականության իրավունք.....	1-18
Գործարքներ.....	19-29
Հայցային վաղեմություն.....	30
Ընդհանուր դրույթներ պարտավորությունների մասին.....	31-37
Պայմանագրերից ծագող պարտավորություններ.....	38-41
Միակողմանի գործողություններից ծագող պարտավորություններ.....	42
Վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորություններ.....	43-45
Ժառանգման իրավունք.....	46-49
Ընտանեկան իրավունք.....	50-53
Աշխատանքային իրավունք.....	54-56

**Դատավարական իրավունքի վերաբերյալ որոշումներ**

Դատարան դիմելու իրավունք.....	57
Դատավորի ինքնաբացարկ.....	58
Գործին մասնակցող անձինք.....	59-61
Ապացույցներ և ապացուցում.....	62-67
Դատական ծախսեր.....	68
Դատական ծանուցումներ.....	69-70
Հայցի հարուցում.....	71-72
Դատարանի վճիռը.....	73-74
Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման գործերի վարույթ.....	75
Վարույթը վճռաբեկ դատարանում.....	76
Կատարողական վարույթ.....	77-78

**Նյութական և դատավարական իրավունքի վերաբերյալ որոշումներ**

Հայցից հրաժարում և սեփականության իրավունքից հրաժարում.....	79
Ներկայացուցչություն և ժառանգության ընդունում.....	80
Ներկայացուցչություն և համատեղ գործունեություն.....	81
Նախադատելիություն և անհիմն հարստացում.....	82
Տիրագործի գույք և գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստեր.....	83

Մեփականության իրավունքի ծագում և օրենքի մեկնաբանության կիրառում .....84

**ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ**

**Նյութական իրավունքի վերաբերյալ որոշումներ**

Շահութահարկ և եկամտահարկ .....85  
 Լրացուցիչ հարկային պարտավորություններ.....86  
 Լիցենզավորում .....87  
 Հաշվանց .....88  
 Ատեստավորում .....89  
 Հաստատագրված վճար .....90  
 Ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ) ..... 91-93  
 Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցում ..... 94-95  
 Վարչարարության հետևանքով պատճառված վնաս .....96  
 Վարչական պատասխանատվություն ..... 97-98  
 Արտադրական վտանգավոր օբյեկտներ .....99  
 Պարզեցված հարկ .....100  
 Գործարքից ծագող իրավունքների գրանցում .....101  
 Ձեռնարկատիրական գործունություն ..... 102-103  
 Վարչական վարույթ.....104  
 Կրեդիտորական պարտք.....105  
 Հարկային արտոնություններ .....106  
 Ոչ պատրաստի արտադրանքի կամ ապրանքի ներտնտեսական տեղափոխում .....107

**Պատավարական իրավունքի վերաբերյալ որոշումներ**

Ապացույցներ և ապացուցում..... 108-113  
 Գործ հարուցելու հիմքը և հայցի տեսակները ..... 114-116  
 Վարչական դատարանի դատական ակտը..... 117-119

**Նյութական և դատավարական իրավունքի վերաբերյալ որոշումներ**

Շինարարության թույլտվություն և ապացուցման ոչ ենթակա փաստեր .....120  
 Ապացուցում և նյութաիրավական նորմի կիրառում .....121

**Այլ գործեր**

Վճռաբեկ բողոքի հիմքեր.....122  
 ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշման կիրառելիություն .....123

---

---

# ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

## Նյութական իրավունքի վերաբերյալ որոշումներ

### Սեփականության իրավունք

01.02.2008թ.

1. Վարդիթեր Ավոյան *v.* Գայանե և Կարինե Հայրապետյաններ, Վարդգես Էջ Վարդանյան, քաղ. գործ թիվ 3-84/ՎԳ (սեփականության իրավունքը ճանաչելու 82-87 պահանջով):

**Խնդիրը.** Արդյո՞ք վեճի առարկա գույքը հայցվորի փաստացի տիրապետման անցնելու պահին նա ուներ բավարար հիմքեր ենթադրելու, որ այդ գույքը ձեռք է բերում և այդ պահից սկսած տիրապետելու է որպես սեփականություն:

**ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց.** Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել և գնահատման առարկա չի դարձրել այն հարցը, թե արդյո՞ք վեճի առարկա գույքը հայցվորի փաստացի տիրապետման անցնելու պահին նա ուներ բավարար հիմքեր ենթադրելու, որ այդ գույքը ձեռք է բերում և այդ պահից սկսած տիրապետելու է որպես սեփականություն:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով պայմանագրի կնքման պահին վեճի առարկա գույքը Գալուստ Հովհաննիսյանին սեփականության իրավունքով չպատկանելու դեպքում պայմանագրի կողմ հանդիսացող Ավետիք Մարտիրոսյանը և Վարդիթեր Ավոյանը չէին կարող **բավարար հիմքեր** ունենալ ենթադրելու, որ այդ գույքը տիրապետելու են որպես սեփականը: Վերոնշյալ հարցադրումը կարևորվում է նաև այն տեսանկյունից, որ մասն հանգամանքը կբացառի վեճի առարկա գույքի իրական սեփականատիրոջ կողմից գույքից հրաժարվելու փաստը:

*\* Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը անդրադարձել է դատարանի կողմից հայցապահանջի շրջանակներից դուրս գալու հարցին՝ կրկնելով նախկինում կայացրած որոշմամբ արտահայտած դիրքորոշումը (տե՛ս՝ Ժիրայր Մինասյան ընդդեմ Արուս Խաչումյանի, Հրաչիկ Մինասյանի, 26.01.2007, քաղ. գործ թիվ 3-29/ՎԳ (բնակարանի նկատմամբ իր և որդու սեփականության իրավունքը ճանաչելու, ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու և բաժինն առանձնացնելու պահանջով)):*

29.02.2008թ.

2. «Թաթուլ և Արտավազ Մնացականյաններ» ԱԿ *v.* Համլետ, Կարինե, Մա- Էջ  
րիամ, Գագիկ Ֆիդանյաններ, երրորդ անձինք՝ ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Արովյանի ՍՍ, 88-93  
Ջրվեժի գյուղապետարան, քաղ. գործ թիվ 3-87/ՎԳ (անշարժ գույքի կադաստրի գրանցամատյաններում պատասխանողներին որպես սեփականատեր գրանցումը, սեփականության իրավունքի գրանցման վկայականը մասնակիորեն անվավեր ճանաչելու և հողամասի, դրա վրա կառուցված շինության նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջներով):

**Խնդիրը.** 1991 թվականի ՀՀ հողային օրենսգրքով, որ սպացույցն է համարվում թույլատրելի հողի սեփականության և մշտական օգտագործման իրավունքի ծագման փաստը սպացուցելու համար:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. ՀՀ հողային օրենսգրքի 13-րդ հոդվածի առաջին պարբերության համաձայն՝ հողը որպես սեփականություն և օգտագործման տրամադրելն իրականացվում է հատկացման կարգով: Հողերի հատկացումը կատարվում է ՀՀ նախարարների խորհրդի, պատգամավորների շրջանային, քաղաքային, ավանային և գյուղական խորհուրդների որոշումների հիման վրա՝ վերջիններիս իրավասության սահմաններում, հողերի օգտագործման և պահպանության նկատմամբ պետական վերահսկողություն իրականացնող մարմինների համաձայնությամբ: Հողամասերը հատկացնելու մասին որոշումներում նշվում են հողամաս հատկացնելու և հողից օգտվելու պայմանները:

Նույն օրենսգրքի 18-րդ հոդվածի առաջին պարբերության համաձայն՝ հողի սեփականության և մշտական օգտագործման իրավունքը հաստատվում է համապատասխան պետական ակտով, որը տրվում է պատգամավորների համապատասխան տեղական խորհրդի գործադիր կոմիտեի կողմից:

Վերոգրյալից հետևում է, որ 1991-1992 թվականներն ընկած ժամանակահատվածում պետական սեփականություն հանդիսացող հողամասը կարող էր հատկացվել համապատասխան գյուղական խորհրդի որոշմամբ, ինչի հիման վրա էլ նոր սեփականատիրոջը կամ օգտագործողին պետք է տրվեր համապատասխան պետական ակտ: Հետևաբար, Կադաստրում վեճի առարկա հողամասի նկատմամբ հայցվորի իրավունքների գրանցման քացակայության պայմաններում դրա նկատմամբ սեփականության իրավունքը կարող է հաստատվել 1991 թվականի ՀՀ հողային օրենսգրքի 18-րդ հոդվածով նախատեսված պետական ակտով: Մինչդեռ, սույն քաղաքացիական գործի նյութերում համապատասխան պետական ակտը քացակայում է:

3. Կամո Ներսիսյան, Անյուտա Բաբայան v. Հրաչյա, Ալլա, Սամվել, Անուշ Ներսիսյաններ, Արփիկ Մուրադյան, Շահումյանի գյուղապետարան, քաղ. գործ թիվ 3-115/ՎԳ (խախտված իրավունքը վերականգնելու, գյուղապետարանի կողմից տրված քաղվածքը, դրա հիման վրա ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ ՏՄ կողմից տրված սեփականության իրավունքի գրանցման վկայականները փոփոխելու, ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը բնակելի տան, տնամերձ ու սեփականաշնորհված հողամասերի նկատմամբ ճանաչելու և համասեփականատերերի ցանկում ընդգրկելու պահանջներով):

Էջ  
94-97

Խնդիրը. Արդյո՞ք կուլտնտեսային ծխի անդամը, որը հետագայում ընդգրկվել է գյուղացիական տնտեսության կազմում, ձեռք է բերում կալտնտեսային ծխի գույքի նկատմամբ սեփականության իրավունք:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 127-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ կուլտնտեսային ծխի գույքը պատկանում է նրա անդամներին համատեղ սեփականության իրավունքով:

Հողային օրենսգրքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ տնամերձ հողամասերը, ինչպես նաև այգեգործության (ամառանոցի) և բնակելի տան շինարարության ու դրա սպասարկման համար ՀՀ քաղաքացիների ունեցած հողամասերը անհատույց կարգով թողնվում են նրանց որպես սեփականություն:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Արարատի մարզի Շահումյան համայնքում գտնվող տունը, կուլտնտեսային ծխին պատկանող այլ գույքի հետ միասին հանդիսացել է տվյալ ծխի անդամների ընդհանուր համատեղ սեփականությունը: Հետևաբար, Կամո Ներսիսյանը, Անյուտա Բաբայանը, Հրաչիկ Ներսիսյանը որպես ընտանիքի (ծխի) անդամ, որոնք հետագայում ընդգրկվել են Արփիկ Մուրադյանի գյուղացիական տնտեսության կազմում, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 127-րդ հոդվածի և Հողային օրենսգրքի 9-րդ

հողվածի 4-րդ մասի ուժով ձեռք են բերել սեփականության իրավունք վեճի առարկա տան և 1900 քմ տնամերձ հողամասի նկատմամբ:

*\* Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը անդրադարձել է սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի անվավեր ճանաչման հարցին՝ կրկնելով նախկինում կայացրած որոշմամբ արտահայտած դիրքորոշումը (տես՝ Միսիանի քաղաքապետարան v. Շահեն Սարգսյան, երրորդ անձինք՝ ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Միսիանի ստորաբաժանում, Կորյուն Օհանյան, քաղ. գործ թիվ 3-1920/ՎԳ (պայմանագիրը լուծելու անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը, ինչպես նաև սեփականության իրավունքի վկայականն անվավեր ճանաչելու պահանջներով), ՀՀ վճռաբեկ դատարանի 26.10.2006 թվականի որոշումը):*

4. Անահիտ Խանադյան v. Վեներա Ավետիսյան, քաղ. գործ թիվ 3-47/ՎԳ (սեփականության իրավունքի խախտումը վերացնելու և տարածքից վտարելու պահանջներով) ըստ հակընդդեմ հայցի v. Անահիտ Խանադյանի, Վասիլ Խանադյանի, Դաշտավանի գյուղապետարանի և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Մասիսի տարածքային ստորաբաժանման (աճուրդն անվավեր ճանաչելու և ձեռքբերման վաղեմության իրավունքով հին դպրոցի շենքի՝ իր կողմից զբաղեցրած տարածքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջներով):

Էջ  
98-101

Խնդիրը. Արդյո՞ք գյուղապետի տված թույլտվության առկայության պայմաններում հին դպրոցի շենքում զբաղեցրած տարածքը տիրապետելը կարող է տիրապետողին տալ բավարար հիմքեր, որ նա այդ գույքը տիրապետել է որպես սեփականը: Արդյո՞ք նման տիրապետումը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի իմաստով կարող է որակվել որպես բարեխիղճ տիրապետում:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ - հոդվածի 1-ին մասի վերլուծությունից հետևում է, որ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռքբերման համար անհրաժեշտ է մի շարք վավերապայմանների միաժամանակյա առկայությունը (տես օրինակ՝ Վոլոդյա և Միշա Նիկողոսյաններ ընդդեմ Մանվել, Սոֆիկ, Մելանյա, Մամվել Մարիբեկյաններ և Քնարիկ Աղազարյան, Մանվել Մարիբեկյան և Քնարիկ Աղազարյան ընդդեմ Վոլոդյա և Միշա Նիկողոսյաններ, 10.10.2007, քաղ. գործ թիվ 3-1435/ՎԳ (ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը և սեփականության իրավունքի վկայականը մասնակի անվավեր ճանաչելու պահանջ)): Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ նույնիսկ Գյուղապետի կողմից Վեներա Ավետիսյանին տրված բնակության թույլտվության առկայությունը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի իմաստով չի կարող որակվել որպես վեճի առարկա գույքի բարեխիղճ տիրապետում:

Այսինքն՝ սույն քաղաքացիական գործում բացակայում է որևէ ապացույց, որով կարող էր հաստատվել Վեներա Ավետիսյանի կողմից վեճի առարկա գույքի տիրապետման բարեխիղճությունը, գործով հիմնավորված չէ, որ այդ գույքի տիրապետումը հիմնված է այնպիսի փաստի վրա, որը տիրապետողին կարող էր տալ բավարար հիմքեր ենթադրելու, որ նա այդ գույքը իր տիրապետմանն անցնելու պահից տիրապետել է որպես սեփականը:

### 27.03.2008թ.

5. Գրիգոր Խաչատրյան v. Թամո Թամոյան, Երևանի քաղաքապետարան, երրորդ անձ ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Էրեբունու SU քաղ. գործ թիվ 3-153/ՎԳ (ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու պահանջով):

Էջ  
102-106

**Խնդիրը.** Արդյո՞ք ՀՀ 1991 թվականի հողային օրենսգրքի 9-րդ հոդվածի ուժով հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման պայմաններում կիրառելի են ՀՀ հողային օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կանոնները: Արդյո՞ք նոտարական կարգով չվավերացված առուվաճառքի պայմանագրով՝ հողամասը Օրենքի ուժով սեփականատեր հանդիսացող անձից ձեռքբերելը, տաս (10) տարվա ընթացքում բացահայտ և անընդմեջ տիրապետելը կարող է հիմք հանդիսանալ ձեռքբերման վաղեմության ուժով տիրապետողի սեփականության իրավունքը ճանաչելու համար:

**ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց.** 29.01.1991 թվականի ՀՀ հողային օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տնամերձ հողամասերը, ինչպես նաև այգեգործության (ամառանոցի) և բնակելի տան շինարարության ու դրա սպասարկման համար Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ունեցած հողամասերը անհատույց կարգով թողնվում են նրանց որպես սեփականություն:

ՀՀ հողային օրենսգրքի 52-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ մինչև 1999 թվականի մայիսի 6-ը հողամասերի նկատմամբ իրավունքների վերաբերյալ սահմանված կարգով տրված, ձեռք բերված փաստաթղթերն ունեն իրավաբանական ուժ, վերագրանցման ենթակա չեն և հիմք են հանդիսանում անշարժ գույքի նկատմամբ գործարքներ կատարելու համար:

Հիմք ընդունելով վերոնշյալը և հաշվի առնելով այն հանգամանքը որ դեռևս ՀԽՍՀ Ն.Շենգավիթ Կալինինի կոլտնտեսության ընդհանուր ժողովի 29.04.1980 թվականի թիվ 3 որոշմամբ վեճի առարկա տնամերձ հողամասը հատկացվել էր Ալթուն Թամոյանին, որը 29.01.1991 թվականի ՀՀ հողային օրենսգրքի ուժով դադարել է պետական սեփականություն լինելուց, Վճռաբեկ դատարանը արձանագրում է, որ ՀՀ հողային օրենսգրքի 72-րդ հոդվածի առաջին մասը սույն քաղաքացիական գործով կիրառելի չէ:

*\* Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է. Սույն քաղաքացիական գործի փաստերի համաձայն՝ 1989 թվականի նոտարական կարգով չվավերացված առուվաճառքի պայմանագրով՝ վեճի առարկա հողամասը Ալթուն Թամոյանը վաճառել է Գրիգոր Խաչատրյանին, որը մինչև օրս բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ տիրապետում է որպես սեփական գույք:*

*Հիմք ընդունելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Գրիգոր Խաչատրյանը վեճի առարկա գույքի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի ուժով ձեռք է բերել սեփականության իրավունք:*

6. Ռիմա Վարդանյան v. Միքայել Միրիջանյան, երրորդ անձ՝ ՀՀ ԿԱ ԱԳ-Կ ԳԿ Էրեբունու ՍՍ, քաղ. գործ թիվ 3-184/ՎԴ (ձեռքբերման վաղեմության ուժով անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջով) և ըստ հակընդդեմ հայցի (բնակելի տարածության օգտագործման իրավունքը դադարեցնելու և վտարելու պահանջներով):

Էջ  
107-112

**Խնդիրը.** Արդյո՞ք գույքի նկատմամբ օգտագործման իրավունքի առկայության պայմաններում ձեռքբերման վաղեմության հիմքով նույն գույքի նկատմամբ կարող է ծագել սեփականության իրավունք:

**ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց.** Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ռիմա Վարդանյանի կողմից վեճի առարկա գույքի տիրապետումը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի իմաստով չի կարող դիտվել բարեխղճ, քանի որ Երևան քաղաքի Օրջոնիկիձեի շրջանի ժողդատարանի վճռի հիման վրա Ռիմա Վարդանյանը ձեռք է բերել վեճի առարկա գույքի օգտագործման իրավունք և բավարար հիմքեր չէր կարող ունենալ ենթադրելու, որ նա այդ գույքը իր տիրապետման անցնելու պահից տիրապետելու է որպես սեփականը: Հետևաբար Ռիմա Վարդանյանը բարեխղճորեն չի տիրապետել վեճի առարկա անշարժ գույքը:

\* Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը անդրադարձել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի մեկնաբանության հարցին՝ կրկնելով նախկինում կայացրած որոշմամբ արտահայտած դիրքորոշումը (տես՝ Վոլոդյա և Միշա Նիկողոսյաններ v. Մանվել, Սոֆիկ, Մելանյա, Մամվել Սարիբեկյաններ և Քնարիկ Աղազարյան, Մանվել Սարիբեկյան և Քնարիկ Աղազարյան v. Վոլոդյա և Միշա Նիկողոսյաններ քաղ. գործ թիվ 3-1435/ՎԳ (ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը և սեփականության իրավունքի վկայականը մասնակի անվավեր ճանաչելու պահանջով), ՀՀ վճռաբեկ դատարանի 10.10.2007 թվականի որոշումը):

7. Ռոմելա Սողոյան v. Հակոբ, Դավիթ, Մելանյա, Սրբուհի Ասատրյաններ, Անթառամ Ավդալյան (բնակելի տարածության օգտագործման իրավունքը ճանաչելու պահանջով), Ռոմելա Սողոյան, Նարեկ և Նարինե Ասատրյաններ v. Հակոբ, Դավիթ, Մելանյա, Սրբուհի, Կարապետ Ասատրյաններ, Անթառամ Ավդալյան, երրորդ անձինք՝ Երևանի քաղաքապետարան, ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Էրեբունի ՏՍ, քաղ. գործ թիվ 3-151/ՎԳ (քաղաքապետի որոշումը, դրանից ծագող իրավունքի պետական գրանցումը մասնակի անվավեր ճանաչելու, համասեփականատեր ճանաչելու և հաշվառելու պահանջներով):

Էջ  
113-116

Խնդիրը. Արդյո՞ք վեճի առարկա բնակելի անշարժ գույքում գրանցում (հաշվառում) չունենալը հիմք է սեփականաշնորհման սուբյեկտ չլինելու փաստը հաստատված համարելու համար:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. «ՀՀ պետական, հանրային և համայնքային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ սեփականաշնորհման սուբյեկտ են հանդիսանում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, տվյալ բնակտարածությունում գրանցում ունեցող, ինչպես նաև օրենքով սահմանված դեպքերում բնակտարածության նկատմամբ իրավունքը պահպանած քաղաքացիները:

Հիմք ընդունելով վերոնշյալը Վճռաբեկ դատարանը արձանագրում է, որ վեճի առարկա գույքում գրանցում չունենալը հիմք է Ռոմելա Սողոյանի, Նարեկ և Նարինե Ասատրյանների սեփականաշնորհման սուբյեկտ չլինելու փաստը հաստատված համարելու համար:

8. Սվետլանա Պետրոսյան v. Սոֆիա Սուքիասյան, Գագիկ, Նաիրա, Մարինե և Ռուզաննա Եղիազարյաններ, քաղ. գործ թիվ 3-174/ՎԳ (ընդհանուր բաժնային սեփականության իրավունքում բնակարանի օժանդակ մակերեսներն առանձնացնելու պահանջով և ըստ հակընդդեմ հայցի՝ օժանդակ մակերեսները կողմերի միջև հավասար կիսելու, իսկ անհամաչափ կիսելու դեպքում անհամաչափություն կազմող տարածքի դիմաց վճարելու պահանջներով):

Էջ  
117-120

Խնդիրը. Արդյո՞ք ընդհանուր սեփականության ներքո գտնվող տարածքից օգտվելու կարգ սահմանելու վերաբերյալ սեփականատերերի համաձայնությունը կարող է որակվել որպես բաժինները որոշելու համաձայնություն:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ընդհանուր սեփականության ներքո գտնվող տարածքից օգտվելու կարգ սահմանելու վերաբերյալ սեփականատերերի համաձայնությունը չի կարող որակվել որպես բաժինները որոշելու համաձայնություն, քանի որ այդ համաձայնությամբ կողմերը որոշել են վեճի առարկա գույքի օգտագործման և ոչ թե բաժինները որոշելու (փոփոխելու) կարգ, որը պետք է դրսևորվի սեփականատիրոջ կողմից անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի հրաժարման և այլ անձի կողմից այդ իրավունքի ձեռք բերման ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կանոններով:

**23.05.2008թ.**

9. Լենա Աբգարյան v. Սկրտիչ Համբարձումյան և Գրիգոր Գորոյան, քաղ. էջ 121-126  
 գործ թիվ 3-342/ՎԳ- (ձեռքբերման վաղեմության ուժով գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու և ըստ հակընդդեմ հայցի՝ ապօրինի զբաղեցրած տարածքից վտարելու և հաշվառումից հանելու պահանջներով):

**Խնդիրը.** Արդյո՞ք նոտարական կարգով չվավերացված տան առուծախի պայմանագրի հիման վրա այդ տանը բնակվելը և տան սեփականատիրոջ համաձայնությամբ հաշվառվելը, զնորդին կարող են տալ բավարար հիմք ենթադրելու, որ նա այդ գույքն իր տիրապետմանն անցնելու պահից տիրապետել է որպես սեփական:

**ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց.** Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Հակոբ Այվազյանը Երևանի Գուլակյան փողոցի թիվ 71 հասցեում գտնվող վեճի առարկա անշարժ գույքը վաճառելով Ստեփան Գևորգյանին հրաժարվել է **իրեն պատկանող վեճի առարկա գույքի** սեփականության իրավունքից: Հետևաբար, Լենա Աբգարյանի կողմից վեճի առարկա անշարժ գույքի տիրապետումը հիմնված է այնպիսի փաստի վրա, որը տիրապետողին կարող էր տալ բավարար հիմքեր ենթադրելու, որ նա այդ գույքն իր տիրապետմանն անցնելու պահից տիրապետել է որպես սեփական:

**20.06.2008թ.**

10. Ռուզաննա Խաչիկյան v. Անդրե Ջելոյան, քաղ. գործ թիվ 3-422/ՎԳ- (համատեղ սեփականատեր ճանաչելու պահանջով): էջ 127-130

**Խնդիրը.** Ո՞ր փաստերի միաժամանակյա առկայությունն է հանգեցնում ամուսիններից մեկին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի նկատմամբ ամուսինների համատեղ սեփականության իրավունքը ճանաչելուն, և ո՞ր հարցերին պետք է անդրադառնա դատարանը նման վեճերի լուծման ընթացքում:

**ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց.** Ամուսնության ընթացքում ամուսիններից մեկին սեփականության իրավունքով պատկանող գույքը կարող է ճանաչվել ամուսինների համատեղ սեփականության իրավունքը հետևյալ վավերապայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

- ամուսնության ընթացքում ամուսինների ընդհանուր գույքի կամ մյուս ամուսնու անձնական գույքի հաշվին ներդրումներ կատարելը,
- գույքի արժեքի **նշանակալի չափով** ավելանալը,
- կատարված ներդրման և արժեքի ավելացման միջև պատճառահետևանքային կապի առկայությունը:

Հիմք ընդունելով վերոգրյալը Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործի լուծման համար անհրաժեշտ է անդրադառնալ և գնահատման առարկա դարձնել հետևյալ հարցերը.

- բնակարանի վերանորոգման պահին՝ 2005 թվականին ի՞նչ արժեք ուներ բնակարանը:
- արդյո՞ք բնակարանի վերանորոգման հետևանքով դրա արժեքը ավելացել է նշանակալի չափով:
- առկա է արդյո՞ք կատարված վերանորոգման և արժեքի նշանակալի չափով ավելացման միջև պատճառահետևանքային կապ:

20.07.2008

11. Գոհար և Գայանե Թումանյաններ v. Սոնա, Գոհար, Գևորգ և Մարտին Էջ  
Գասպարյաններ, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պե- 131-133  
տական կոմիտեի Արաբկիրի տարածքային ստորաբաժանում, քաղ. գործ թիվ 3-  
436/ՎԳ (Ժառանգության իրավունքի վկայականը գրանցելու, ընդհանուր համա-  
տեղ սեփականության ներքո գտնվող հողամասից բաժինն առանձնացնելու պա-  
հանջներով և ըստ հակընդդեմ հայցի՝ ձեռքբերման վաղեմության ուժով հողատա-  
րածքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու և այն առանձնացնե-  
լու պահանջներով):

Խնդիրը. Արդյո՞ք 1991 թվականի դրությամբ հողամասի փաստացի առանձ-  
նացված լինելու փաստը 1991 թվականի ՀՀ հողային օրենսգրքի 9-րդ հոդվածի ու-  
ժով հանգեցնում է այդ մասերի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 1991  
թվականի դրությամբ վեճի առարկա հողամասն արդեն իսկ առանձնացված է եղել  
Գասպարյանների ու Թումանյանների միջև՝ ուստի 29.01.1991 թվականի ՀՀ հողա-  
յին օրենսգրքի 9-րդ հոդվածի ուժով վերջիններս դարձել են իրենց կողմից փաս-  
տացի զբաղեցրած հողամասի սեփականատեր:

Սինչեռ, Վերաքննիչ դատարանը, վեճը լուծելիս անտեսել է այն հանգաման-  
քը, որ 1991 թվականի դրությամբ տնամերձ հողամասն արդեն իսկ փաստացի ա-  
ռանձնացված էր Գասպարյանների ու Թումանյանների միջև (տե՛ս Համեստ Վի-  
րաբյան ընդդեմ Լիլյա Սահրադյան՝ հողամասն առանձնացնելու, սեփականու-  
թյան իրավունքը ճանաչելու պահանջի մասին, Լիլյա Սահրադյան ընդդեմ Համեստ  
Վիրաբյան, Լիլյա Սկրտչյան՝ հողամասն առանձնացնելու, սեփականության իրա-  
վունքը ճանաչելու պահանջների մասին քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ  
դատարանի 03.02.2006 թվականի որոշումը, թիվ 3-204(ՎԳ)):

25.07.2008

12. Արամ Սանասարյան v. Գուրգեն Սկրտչյանի, Երանիկ, Էռնեստ և Էռնա Էջ  
Հայրիյաններ, երրորդ անձ՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կա- 134-137  
դաստրի պետական կոմիտեի Կենտրոն տարածքային ստորաբաժանում, քաղ.  
գործ թիվ 3-454/ՎԳ (փաստացի զբաղեցրած հողամասի նկատմամբ պետական  
գրանցում կատարելու պահանջով և ըստ հակընդդեմ հայցի՝ ընդհանուր սեփակա-  
նության ներքո գտնվող գույքից բաժինն առանձնացնելու պահանջով):

Խնդիրը. Արդյո՞ք բնակելի տան մի մասի առուժախի դեպքում տան համասե-  
փականատերերը դառնում են այն հողամասի համասեփականատեր, որի վրա  
կառուցված է բնակելի տունը:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն  
քաղաքացիական գործով Սլավիկ Հայրիյանի և Սկրտիչ Չեբիշյանի միջև կնքվել է  
Երևանի Չկալովի թիվ 35 հասցեում գտնվող տան 27/80 մասի առուվաճառքի պայ-  
մանագիր, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերոնշյալ հոդվածների ու-  
ժով հողամասի սեփականատերեր են դարձել Արամ Սանասարյանը և Սլավիկ  
Հայրիյանը՝ որպես դրա վրա գտնվող շենքի համասեփականատերեր: Հետևա-  
բար, վեճի առարկա ամբողջ հողամասի նկատմամբ Արամ Սանասարյանի սեփա-  
կանության իրավունքի ճանաչման հայցապահանջը ենթակա է մերժման:

13. Զնբուշ Գալստյան v. Կարինե Գալստյան, քաղ. գործ թիվ 3-433/ՎԳ (նվի- Էջ  
րատության պայմանագիրը, դրա հիման վրա անշարժ գույքի նկատմամբ կա- 138-141

տարված պետական գրանցումն անվավեր ճանաչելու և ձեռքբերման վաղեմության ուժով բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջներով):

**Խնդիրը.** Արդյո՞ք նվիրատուն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի իմաստով համարվում է բարեխիղճ տիրապետող, երբ բնակարանի նվիրատվության պայմանագիր կնքելուց հետո շարունակում է բնակվել նշված բնակարանում:

**ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց.** Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Քնքուշ Գալստյանի կողմից վեճի առարկա գույքի տիրապետումը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի իմաստով չի կարող դիտվել բարեխիղճ, քանի որ վեճի առարկա գույքն այլ անձի սեփականությանը հանձնելուց հետո բնակարանում բնակվելով Քնքուշ Գալստյանը բավարար հիմքեր չէր կարող ունենալ ենթադրելու, որ նա այդ գույքը իր տիրապետմանն անցնելու պահից տիրապետելու է որպես սեփականը: Հետևաբար Քնքուշ Գալստյանը բարեխիղճորեն չի տիրապետել վեճի առարկա անշարժ գույքը:

**31.10.2008թ.**

14. Համեստ Վիրաբյան v. Արաբկիրի թաղապետարան, Լիլիա Սահրադյան, քաղ. գործ թիվ 3-595/ՎԳ (ձեռքբերման վաղեմության ուժով տան ամբողջ տանիքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու, նշված տանիքի վրա շինարարություն իրականացնելու վերաբերյալ թույլտվությունն անվավեր ճանաչելու և մինչև իրավունքի խախտումը եղած դրությամբ վերականգնելու պահանջներով):

Էջ  
142-145

**Խնդիրը.** Արդյո՞ք վեճի առարկա հանդիսացող առանձնատան նկատմամբ կիրառելի են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ բազմաբնակարան շենքերի հետ կապված հարաբերությունները կանոնակարգող հոդվածները:

**ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց.** Բազմաբնակարան շենքի պարտադիր վավերապայմաններն են.

1. մեկից ավելի սեփականատերերին սեփականության իրավունքով բնակարան և (կամ) ոչ բնակելի տարածք պատկանելը,
2. շենքի կառուցման և սպասարկման համար հատկացված հողամասը կամ շենքի ընդհանուր գույքը սեփականատերերի միջև բնակարանների կամ ոչ բնակելի տարածքների առանձնացնելու անհնարիությունը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործով կողմերին սեփականության իրավունքով պատկանող շինությունը առանձնատուն է, որի մոտ բացակայում է բազմաբնակարան շենքի համար օրենքով նախատեսված պարտադիր վավերապայմանները, այն է՝ առանձնացման ոչ ենթակա ընդհանուր գույքը (մասնավորապես բացակայում է բազմաբնակարան շենքի միասնական ամբողջական սպասարկման համար նախատեսված տարածքը): Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 222-րդ և 224-րդ հոդվածները սույն գործով կիրառելի չեն:

*\* Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը անդրադարձել է ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ծագման վավերապայմանների հարցին՝ կրկնելով նախկինում կայացրած որոշմամբ արտահայտած դիրքորոշումը (տե՛ս՝ Վոլոդյա և Միշա Նիկողոսյաններ v. Մանվել, Սոֆիկ, Մելանյա, Սամվել Սարիբեկյաններ և Քնարիկ Աղազարյան, Մանվել Սարիբեկյան և Քնարիկ Աղազարյան v. Վոլոդյա և Միշա Նիկողոսյաններ, քաղ. գործ թիվ 3-1435/ՎԳ (ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը և սեփականության իրավունքի վկայակա-*

ընդ մասնակի անվավեր ճանաչելու պահանջներով), ՀՀ վճռաբեկ դատարանի 10.10.2007 թվականի որոշումը):

15. Լիլիա Գրիգորյան v. Երևանի քաղաքապետարան, Հայաստանի Հանրապետություն՝ ի դեմս ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության և «ԳԱՊ բնակչին» ՍՊԸ, քաղ. գործ թիվ 3-594/ՎԳ (ամիսն հարստացման գումարները վճարելու պահանջով):

Էջ  
146-149

**Խնդիրը.** Ո՞ր դեպքում են կիրառելի ՀՀ կառավարության 19.05.2005 թվականի թիվ 759 որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետով նախատեսված խրախուսումները:

**ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց.** ՀՀ կառավարության թիվ 759 որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետով նախատեսված խրախուսումները կիրառելի են այն դեպքում, եթե համապատասխան շինության սեփականատերը Հայաստանի Հանրապետության հետ կնքված պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո 10 օրվա ընթացքում ազատի շինությունը երրորդ անձանց **իրավաբանորեն** և փաստացի տնօրինումից, տիրապետումից, օգտագործումից, բնակեցումից և հաշվառումից և այն սահմանված կարգով հանձնի Ընկերությանը:

Սինդեռ սույն քաղաքացիական գործում առկա ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության կենտրոնական բաժնի կողմից տրված 19.10.2007 թվականի գրության համաձայն՝ Լիլիա Գրիգորյանը տարածքն իրացնելու կապակցությամբ դուրս է գրվել Երևանի Արամի փողոցի 76-րդ տուն հասցեից 17.05.2006 թվականին՝ Պայմանագրի 2.1-րդ կետով սահմանված 10-օրյա ժամկետի ավարտից հետո:

### **01.02.2008թ.**

16. Արթուր Հովհաննիսյան v. Վանաձորի քաղաքապետարան, երրորդ անձ՝ Էջ Գագիկ Դազարյան, քաղ. գործ թիվ 3-85/ՎԳ (քաղաքապետի որոշումն անվավեր ճանաչելու և ապօրինի կառույցը քանդելուն պարտավորեցնելու պահանջներով):

Էջ  
150-152

**Խնդիրը.** Ո՞վ է կրում ինքնակամ կառույցը քանդելու պարտականությունը:

**ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց.** ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի առաջին պարբերության համաձայն՝ ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ **ինքնակամ կառույցը կարող է քանդվել հողամասի սեփականատիրոջ կողմից:** Ինքնակամ կառույցը պետության, համայնքի կամ այլ շահագրգիռ անձի հայցով, որի իրավունքները և օրենքով պահպանվող շահերը խախտվել են, ենթակա է քանդման, իսկ հողամասը՝ նախկին վիճակի վերականգման՝ **հողամասի սեփականատիրոջ հաշվին:** Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ ինքնակամ կառույցը քանդելու պարտականությունը օրենքով դրված է համապատասխան հողամասի սեփականատիրոջ վրա:

### **27.03.2008թ.**

17. Շահեն Վարդանյան v. «Վանաձորի շուկա» ՍՊԸ, քաղ. գործ թիվ 3- Էջ 63/ՏԳ (սեփականության իրավունքի խախտումները վերացնելու պահանջով):

Էջ  
153-156

**Խնդիրը.** Ինչպիսի՞ հարցերի պետք է անդրադառնա դատարանը ինքնակամ կառուցված հարթակը քանդելու պահանջ ներկայացված լինելու դեպքում:

**ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց.** Հայցապահանջի հիմնավորվածությունը որոշելու համար, Տնտեսական դատարանը պետք է անդրադառնար և գնահատման առարկա դարձներ հետևյալ իրավական հարցերը.

1. Արդյո՞ք վեճի առարկա հարթակը կառուցվել է օրենքով սահմանված կարգով տրված ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերին և շինարարական թույլտվությանը համապատասխան, և եթե ոչ, ապա

2. Արդյո՞ք վեճի առարկա կառույցը խախտում է սեփական գույքը անարգել օգտագործելու հայցվորի իրավունքը.

*\* Միաժամանակ չ՛չ վճռաբեկ դատարանը անդրադարձել է դատական ակտի իրավական հիմնավորվածության հարցին՝ կրկնելով նախկինում կայացրած որոշմամբ արտահայտած դիրքորոշումը (տե՛ս՝ չ՛չ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունն Վ. «Քնար-88» ՍՊԸ, քաղ. գործ թիվ 3-2504/ՏԴ(գումարի բռնագանձման պահանջով), չ՛չ վճռաբեկ դատարանի 21.12.2006 թվականի որոշումը):*

**26.12.2008թ.**

18. Վրեժ Կնյազյան Վ. Երևանի քաղաքապետարան, քաղ. գործ թիվ ԵԿԴ 0785/02/08 (քաղաքապետի որոշումն անվավեր ճանաչելու պահանջով): Էջ 157-160

**Խնդիրը.** Արդյո՞ք ստորգետնյա ավտոտնակ կառուցելու համար հատկացված հողամասում կառուցված վերգետնյա ավտոտնակը հանդիսանում է ապօրինի շինություն:

**Չ՛չ վճռաբեկ դատարանը որոշեց.** Երևանի շրջխորհրդի գործկոմի 25.12.1991 և 20.08.1992 թվականների որոշումներով Վրեժ Կնյազյանին վերգետնյա ավտոտնակ կառուցելու թույլտվություն չի տրվել: Այդ թույլտվությունը տրվել է ստորգետնյա ավտոտնակներ կառուցելու համար: Ավելին, ստորգետնյա ավտոտնակներ կառուցելու համար անհրաժեշտ է համարվել կոռպերատիվ հիմունքներով դրանց կառուցումը:

Մինչդեռ Վրեժ Կնյազյանը, խախտելով վերոգրյալ որոշման՝ ավտոտնակը գետնափոր կառուցելու պայմանը, և չունենալով հողամասի վրա վերգետնյա շինարարություն իրականացնելու համապատասխան շինարարական թույլտվություն, կառուցել է ապօրինի շինություն:

*\* Միաժամանակ չ՛չ վճռաբեկ դատարանը անդրադարձել է հողամասի պետական սեփականություն հանդիսանալու կանխավարկածի հարցին՝ կրկնելով նախկինում կայացրած որոշմամբ արտահայտած դիրքորոշումը (տե՛ս՝ Գոհար Հակոբյան Վ. Հրածին Վարդանյան, քաղ.գործ թիվ 3-410(ՎԴ) (ուրիշի ապօրինի տիրապետումից գույքը հետ պահանջելու պահանջով), չ՛չ վճռաբեկ դատարանի 18.05.2007 թվականի որոշումը):*

**Գործարքներ**

**01.02.2008թ.**

19. Թամարա Բաուեր Վ. Գևորգ Բաուեր և Երևանի «Կենտրոն» տարածքային նոտարական գրասենյակ, քաղ. գործ թիվ 3-35/ՎԴ (նվիրատվության պայմանագիրն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջներով): Էջ 161-165

**Խնդիրը.** Ինչպիսի՞ փաստեր պետք է հաստատվեն, շինծու լինելու հիմքով, առջինը գրավոր գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու համար:

**Չ՛չ վճռաբեկ դատարանը որոշեց.** Չ՛չ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ - հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ շինծու գործարքը, այսինքն՝ մեկ այլ գործարքի քողարկման նպատակով կնքված գործարքն առաջինն է:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ գրավոր գործարքների նկատմամբ շինծու լինելու հիմքով առաջինը գործարքի անվավերության հետևանքների կիրառման համար անհրաժեշտ է ապացուցել, որ՝

1. գործարքն իրականում կնքվել է ոչ այն ստորագրած անձանց միջև, կամ

2. այն ստորագրած անձանց կամքը չի համապատասխանում պայմանագրում շարադրվածին (տես, օրինակ՝ Հասմիկ Բլուրցյան, երրորդ անձինք Տիգրան Թերգյան և Գոհար Գողյան ընդդեմ Շահեն Բաբայանի՝ Վահե Այվազյանի, Գառնիկ և Գոհար Փանոսյանների, 18.05.2007 Քաղ. գործ թիվ 3-793 (ՎԳ) (անշարժ գույքի առուվաճառքի գործարքն անվավեր ճանաչելու և բնակարանից վտարելու պահանջներով)):

Այսինքն՝ շինծու գործարքն առկա է այն դեպքում, երբ կողմերի միջև իրականում ծագում են իրավահարաբերություններ, սակայն դրանք իրենց բնույթով այլ են, քան այն իրավահարաբերությունները, որոնք կողմերը ցանկանում են ներկայացնել երրորդ անձանց:

Սույն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանը հաստատված է համարել վեճի առարկա նվիրատվության պայմանագրի շինծու լինելու հանգամանքը՝ վճռի հիմքում դնելով այն հանգամանքը, որ պայմանագիրը կնքվել է գույքահարկի և կոմունալ այլ վճարումների վճարման նպատակահարմարության պատրվակով:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ հանգամանքը նվիրատվության պայմանագիրը շինծու ճանաչելու հիմք չէ, քանի որ տվյալ դեպքում խոսքը գնում է ոչ թե այլ գործարք քողարկելու մասին, այլ պարտավորությունների կատարման (գույքահարկի և կոմունալ այլ վճարումների վճարում) նպատակահարմարության մասին, ինչն իրականացվել է կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

20. «ԱՎԱ» ՍՊԸ v. ԱԶ Սերգեյ Գաբրիելյան և Վիդեոտա Գաբրիելյան, քաղ. **Էջ 166-170**  
գործ թիվ 3-89/ՏԳ (անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագիրը վաղաժամկետ լուծելու և տարածքից վտարելու պահանջներով):

**Խնդիրը.** Ինչպիսի՞ հանգամանքների հաշվառմամբ կարելի է եզրակացնել, որ գույքի անհատույց օգտագործման պայմանագիր կնքելով՝ կողմերը նպատակ են հետապնդել քողարկել վարձակալության պայմանագիրը:

**ՀՀ Վճռաբեկ դատարանը որոշեց.** Սույն քաղաքացիական գործով անհատույց օգտագործման և վարձակալության պայմանագրերի համեմատական վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ իրականում կողմերի միջև կնքվել է գույքի վարձակալության պայմանագիր և անհատույց օգտագործման պայմանագրով քողարկվել է կողմերի միջև իրականում ծագած վարձակալական իրավահարաբերությունը:

Վճռաբեկ դատարանը նման եզրահանգման համար հիմք է ընդունում հետևյալ հանգամանքները.

1. Ընկերության ի դեմս Վիլեն Առաքելյանի և Սերգեյ Գաբրիելյանի միջև 03.03.2005 թվականին կնքվել է անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագիր: 15.03.2005 թվականին Վիլեն Առաքելյանի և Սերգեյ Գաբրիելյանի միջև կնքվել է վարձակալության պայմանագիր, որը սակայն չի ենթարկվել նոտարական վավերացման, և պայմանագրից ծագող իրավունքները չեն ստացել պետական գրանցում:

Այսինքն՝ Վարձակալության պայմանագիրը առաջինը է, սակայն այդ պայմանագրի վերլուծությունը հնարավորություն է տալիս փաստելու, որ իրականում կողմերը ցանկացել են, որպեսզի իրենց միջև առաջանան վարձակալական հարաբերություններ: Մինչդեռ, Տնտեսական դատարանը, առաջինը համարելով կողմերի

միջև կնքված վարձակալության պայմանագիրը, այն բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի ուսումնասիրել որպես կողմերի իրական կամքի արտահայտման ապացույց:

2. Թե գույքի անհատույց օգտագործման պայմանագիրը և թե վարձակալության պայմանագիրը կնքվել են նույն անձանց միջև, պայմանագրերում հիշատակվող անշարժ գույքի մակերեսը նույնն է՝ 75 քմ:

3. Անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագրով վեճի առարկա գույքը անհատույց օգտագործման է հանձնվել Ընկերության կողմից, որը սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն է և հետապնդում է շահույթ ստանալու նպատակ: Այսինքն, այն հանգամանքը, որ Ընկերությունը, որի գործունեության նպատակը շահույթ ստանալն է իրեն սեփականության իրավունքով պատկանող գույքը հանձնում է անհատույց օգտագործման, Վճռաբեկ դատարանը համարում է անիրատեսական և փաստում այդ պայմանագրով մեկ այլ պայմանագրի քողարկման հանգամանքը:

**29.02.2008թ.**

21. Արմեն Մահտեսյան v. Մայիս Մեիրաբյան և Գայանե Թադևոսյան, քաղ. գործ թիվ 3-161/ՎԳ- (բնակելի տարածության օգտագործման իրավունքը դադարեցնելու և բնակարանից վտարելու պահանջով և ըստ հակընդդեմ հայցի՝ առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջով):

Էջ  
171-174

Խճողոր. Արդյո՞ք անշարժ գույք ձեռք բերողի սեփականության իրավունքը ծագում է այդ գույքը հանձնելու պահից:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 176-րդ - հոդվածի առաջին մասի համաձայն՝ պայմանագրով գույքը ձեռք բերողի սեփականության իրավունքը ծագում է գույքը հանձնելու պահից, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այն դեպքերում, երբ գույքի նկատմամբ իրավունքը ենթակա է պետական գրանցման, ձեռք բերողի սեփականության իրավունքը ծագում է դրա գրանցման պահից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը և այլ գույքային իրավունքները, այդ իրավունքների սահմանափակումները, դրանց ծագումը, փոխանցումն ու դադարումը ենթակա են պետական գրանցման:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ սույն քաղաքացիական գործով վեճի առարկա անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը գնորդի մոտ ծագել է այդ իրավունքի պետական գրանցման, այլ ոչ թե գույքը գնորդին հանձնելու պահից: Այսինքն, Վերաքննիչ դատարանը անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման պահը որոշելիս կիրառել է շարժական գույքի նկատմամբ իրավունքների ծագման համար օրենքով սահմանված կանոնը:

Նույնանման փաստական հանգամանքներով գործերի համար դատարանները պետք է նկատի ունենան, որ անշարժ գույքի նկատմամբ ձեռք բերողի սեփականության իրավունքի ծագման պահը չի կապվում գույքը հանձնելու հետ և վերջին հանգամանքը որոշիչ չէ սեփականության իրավունքի ծագման իրավաբանական փաստը որոշելու համար:

**27.03.2008թ.**

22. ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն v. Հենրիկ Սիմոնյան, քաղ. գործ թիվ 3-192/ՎԳ- (պահանջի իրավունքի զիջման պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջով):

Էջ  
175-177

**Խնդիրը.** Արդյո՞ք կազմակերպության լուծարային հանձնաժողովի նախագահի և նույն անձի՝ որպես կազմակերպության բաժնետիրոջ միջև կնքված կազմակերպության պահանջի իրավունքը զիջելու պայմանագիրը կարող է գնահատվել, որպես ներկայացուցչի՝ ներկայացվողի անունից անձամբ իր նկատմամբ կնքված գործարք:

**ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց.** Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ընկերության լուծարային հանձնաժողովի նախագահ Հ.Սիմոնյանը Ընկերության պահանջի իրավունքը 20.09.2005 թվականի պայմանագրով զիջել է Ընկերության բաժնետեր Հ.Սիմոնյանին, որը նույն անձն է, գտել է, որ տվյալ դեպքում առկա է դեպք, երբ ներկայացուցիչը ներկայացվողի անունից գործարք է կնքել անձամբ իր նկատմամբ, ինչը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 318-րդ հոդվածի 3-րդ մասի խախտում է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ օրենքին հակասող գործարքներն անվավեր են, եթե օրենքը չի սահմանում, որ նման գործարքն առչկինչ է, կամ չի նախատեսում խախտման այլ հետևանքներ:

### **23.04.2008թ.**

23. Օքսաննա Մեյթարջյան v. Մարիամ, Աշոտ և Զնարիկ Ազիզյաններ՝ քաղ. գործ թիվ 3-163/ՎԳ (բնակելի տարածության օգտագործման իրավունքը փոխհատուցմամբ դադարեցնելու և վտարելու, ինչպես նաև հակընդդեմ հայցով՝ առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու, անվավերության հետևանքները կիրառելու, շինարարական աշխատանքների գումարի բռնագանձման պահանջներով):

Էջ  
178-181

**Խնդիրը.** Արդյո՞ք կողմերի միջև կնքված գործարքը իրականում այլ անձանց միջև կնքված լինելու հանգամանքը հիմք է գործարքը շինծու գնահատելու համար:

**ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց.** Շինծու գործարքն առկա է այն դեպքում, երբ կողմերի միջև իրականում ծագում են իրավահարաբերություններ, սակայն դրանք իրենց բնույթով այլ են, քան այն իրավահարաբերությունները, որոնք կողմերը ցանկանում են ներկայացնել երրորդ անձանց (տե՛ս օրինակ՝ «ԱՎԱ» ՍՊԸ ընդդեմ Սերգեյ Գաբրիելյան և Վիոլետա Գաբրիելյան՝ պայմանագիրը վաղաժամկետ լուծելու, Սերգեյ և Վիոլետա Գաբրիելյաններին տարածքից վտարելու պահանջների մասին թիվ 3-89(ՏԳ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 01.02.2008 թվականի որոշումը): Սույն քաղաքացիական գործում առկա 22.04.1997 թվականին կնքած առուվաճառքի պայմանագրի և 02.05.1997 թվականին տրված ստացականի համեմատական վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ իրականում գործարքը կնքվել է ոչ այն ստորագրած անձանց միջև, որի արդյունքում քողարկվել է գործարքի իրական կողմ հանդիսացող անձանց միջև կնքած գործարքը:

### **25.07.2008թ.**

24. Ավետիս Սորսումատյան v. Ռիմա Կարապետյան, Վալերի Հովսեփյան, քաղ. գործ թիվ 3-417/ՎԳ (առուվաճառքի պայմանագիրը վավեր ճանաչելու պահանջով):

Էջ  
182-185

**Խնդիրը.** Արդյո՞ք վաճառողի կողմից բնակարանի համար կանխավճար ստանալը և ստացված գումարով բանկի հանդեպ ունեցած պարտականությունը կատարելը, առուձախի առարկա հանդիսացող բնակարանը գրավից հանելը կարող

են գնահատվել գնորդի կողմից նոտարական վավերացում պահանջող գործարքի լրիվ կատարում և հիմք հանդիսանալ այդ գործարքը վավեր ճանաչելու համար:

**ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց.** Սույն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանը պատշաճ գնահատման առարկա չի դարձրել «Ստացական» վերնագրված երկու գրավոր փաստաթղթերը, ինչպես նաև այն հանգամանքը, որ այդ փաստաթղթերը ստորագրելուց հետո Ռ-իմա Կարապետյանը և Վալերի Հովսեփյանը 03.05.2007 թվականին մարել են «Արֆին» վարկային կազմակերպության հանդեպ ունեցած 4.213.811 ՀՀ դրամ գումարի պարտքը:

Մասնավորապես, «Ստացական» վերնագրված երկու գրավոր փաստաթղթերում նշված են գործարքի առարկան՝ բնակարանը, կողմերը, գործարքի գինը և վճարման կարգը: Բացի այդ վաճառողները նույն օրը գործողություններ են կատարել բնակարանը գրավից հանելու համար, սակայն հետագայում խուսափել են առուվաճառքի գործարքն ավարտին հասցնելուց, այն դեպքում երբ գնորդը իր կողմից կատարել է մինչ այդ պահը գործարքն ավարտին հասցնելու բոլոր հնարավոր գործողությունները:

Հիմք ընդունելով վերոգյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ավետիս Սորսումատյանի կողմից լրիվ կատարվել է նոտարական վավերացում պահանջող գործարքը, իսկ վաճառողները՝ սույն գործով պատասխանողները խուսափել են գործարքի նոտարական վավերացումից, հետևաբար, առուվաճառքի գործարքը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 300-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներին համապատասխան, ենթակա է վավեր ճանաչման:

25. Արֆինիկ Մուխայեյան, Գոհար Անտոնյան, Վերոնիկա Շահինյան v. **Էջ 186-190**  
Նաիրա Անտոնյան, երրորդ անձ Շիրակ Գևորգյան, Նոր Նորք նոտարական տարածքի նոտար Օսան Հակոբյան, քաղ. գործ թիվ 3-425/ՎԳ (գործարքն անվավեր ճանաչելու պահանջով):

**Խնդիրը.** Արդյո՞ք վեճի առարկա բնակարանի բաժինների նվիրատվության պայմանագիրը նպատակ է հետապնդել քողարկել առուվաճառքի պայմանագրի առկայությունը:

**ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց.** Այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը:

Սույն քաղաքացիական գործում առկա Նաիրա Անտոնյանի 07.08.2007 թվականի բացատրության, ինչպես նաև Երևանի Նոր Նորքի 4-րդ զանգվածի 2-րդ - հատվածի 33ա շենքի թիվ 25 բնակարանի համասեփականատեր Արմեն Շահինյանի կողմից իր բաժնի նվիրատվության դիմաց դրամական փոխհատուցում ստացած լինելու փաստի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ իրականում կողմերի միջև կնքվել է բաժնի առուվաճառքի պայմանագիր, իսկ նվիրատվության պայմանագրով քողարկվել է կողմերի միջև իրականում ծագած առուվաճառքի իրավահարաբերությունը:

Այդ ապացույցները վկայում են նվիրատվության պայմանագրի հատուցելի լինելու, գույքի հանդիպական հանձնման մասին, որի պայմաններում Վերաքննիչ դատարանը պետք է կիրառեր ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունը:

26. Ռոբերտ Ամիրյան, Իռա Ամիրյան v. Ավետիք Ամիրյան, քաղ. գործ թիվ 3-439/ՎԳ (տան առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջով): **Էջ 191-193**

**Խնդիրը.** Արդյո՞ք առուծախի պայմանագրով կարող է քողարկվել փոխառության գործարքը:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Պարտավորագրից հետևում է, որ Ռոբերտ Ամիրյանի և Ավետիք Ամիրյանի միջև կնքված առուվաճառքի պայմանագրով նրանց միջև իրականում ծագել են այլ իրավահարաբերություններ, քան այն հարաբերությունները, որոնք կողմերը երրորդ անձանց ներկայացրել են առուվաճառքի պայմանագիրը կնքելիս: Մասնավորապես, առուվաճառքի պայմանագիրը Ավետիք Ամիրյանի համար հանդիսացել է երաշխիք հետագայում Ռոբերտ Ամիրյանին փոխառությամբ տրված գումարը հետ ստանալու համար, իսկ պարտավորագիրը վերջինիս համար հանդիսացել է երաշխիք հետագայում իրեն պատկանող տունը հետ վերադարձնելու համար:

*\* Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը անդրադարձել է գրավոր գործարքի նկատմամբ շինծու լինելու հիմքով առաջին, գործարքի անվավերության հետևանքների կիրառման համար անհրաժեշտ փաստերի հաստատման հարցերին՝ կրկնելով նախկինում կայացրած որոշմամբ արտահայտած դիրքորոշումը (տե՛ս՝ Թամարա Բաուեր v. Գևորգ Բաուեր և Երևանի «Կենտրոն» տարածքային նոտարական գրասենյակ, քաղ. գործ թիվ 3-35/ՎԳ (նվիրատվության պայմանագիրն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջներով), ՀՀ վճռաբեկ դատարանի 01.02.2008 թվականի որոշումը):*

#### **26.09.2008թ.**

27. Սեյրան Խաչատրյան v. ՀՀ Սյունիքի մարզի Գորիս նոտարական տարածքի նոտար Լենա Գյուլնազարյան, Հայկուշ Խաչատրյան, Գագիկ Հարությունյան, քաղ. գործ թիվ 3-539/ՎԳ (անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջով):

Էջ  
194-196

Խնդիրը. Ո՞ր դեպքում կարող է ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող գույքի նկատմամբ համասեփականներից մեկի կողմից կնքված գործարքը ճանաչվել անվավեր:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ, 319-րդ հոդվածի 1-ին մասերը և 201-րդ հոդվածը սերտորեն փոխկապակցված են և իրավակիրառական պրակտիկայում դրանցից յուրաքանչյուրը պետք է մեկնաբանվի մյուսների բովանդակության և տրամաբանության տիրույթում (տես օրինակ՝ 30.03.2007թ. Քաղ. գործ թիվ 3-459/ՏԳ, (բաժնետոմսերի առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի մասին)):

Սույն գործի փաստերի համաձայն՝ ամուսիններ Սեյրան և Հայկուշ Խաչատրյանների միջև այլ բան նախատեսող համաձայնություն չի եղել: Այսինքն, Հայկուշ Խաչատրյանը՝ որպես համատեղ սեփականության մասնակից, ունեցել է համատեղ սեփականություն հանդիսացող գույքը տնօրինելու իրավունք: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Սեյրան Խաչատրյանի կողմից գույքի առուվաճառքի գործարքը անվավեր ճանաչելու պահանջը դատարանի կողմից կարող էր բավարարվել միայն Հայկուշ Խաչատրյանի մոտ վիճելի գործարքը կնքելու համար անհրաժեշտ լիազորությունների բացակայության և դրա մասին գործարքի մյուս կողմի՝ զնորդ Գագիկ Հարությունյանի կողմից իմանալու կամ դրա մասին ողջամտորեն ենթադրելու ակնհայտ հնարավորության առկայության փաստը ապացուցված համարելու դեպքում:

#### **31.10.2008թ.**

28. Շողիկ Ղարիբյան v. Թամարա Վարդանյան, Անահիտ Հակոբյան, Արսեն Մխիթարյան, երրորդ անձ՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կա-

Էջ  
197-200

դաստրի պետական կոմիտեի Էրեբունու տարածքային ստորաբաժանում (անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը, դրա հիման վրա կատարված պետական գրանցումը և տրված սեփականության իրավունքի վկայականն անվավեր ճանաչելու պահանջներով) Շողիկ Ղարիբյան v. Անահիտ Հակոբյան, երրորդ անձ Արսեն Մխիթարյան, քաղ. գործ թիվ 3-558/ՎԳ (տան առուվաճառքի պայմանագիրը վավեր ճանաչելու և սեփականության իրավունքը ճանաչելու պահանջներ):

**Խնդիրը.** Արդյո՞ք բնակարանի նկատմամբ առուծախի հասարակ գրավոր ձևով կնքված գործարքը և ի կատարումն այդ գործարքի կողմերի միջև կնքված փոխառության պայմանագիրը կարող են հիմք հանդիսանալ բնակարանի նկատմամբ կնքված առուծախի պայմանագիրը վավեր ճանաչելու համար:

**ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց.** Վերաքննիչ դատարանը մերժելով գործարքը վավեր ճանաչելու մասին հայցապահանջը, պատշաճ գնահատման առարկա չի դարձրել Անահիտ Հակոբյանի և Շողիկ Ղարիբյանի միջև 23.05.2006 թվականին հասարակ գրավոր ձևով կնքված պայմանագիրը, ինչպես նաև Շողիկ Ղարիբյանի և Անահիտ Հակոբյանի միջև 24.05.2006 թվականին կնքված փոխառության պայմանագիրը, որով Անահիտ Հակոբյանին տրվել է 13.500 ԱՄՆ դոլար:

Մասնավորապես՝ վերոնշյալ պայմանագրերը վկայում են կողմերի միջև տան առուվաճառքի վերաբերյալ գործարքի առկայության, ինչպես նաև այն մասամբ կատարված լինելու՝ որոշակի գումար վճարված լինելու մասին: Մինչդեռ, հետագայում Անահիտ Հակոբյանը խուսափել է առուվաճառքի գործարքն ավարտին հասցնելուց:

Հիմք ընդունելով վերոգյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Շողիկ Ղարիբյանի կողմից մասամբ կատարվել է նոտարական վավերացում պահանջող գործարքը, իսկ Անահիտ Հակոբյանը խուսափել է գործարքի նոտարական վավերացումից, հետևաբար, առուվաճառքի գործարքը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 300-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներին համապատասխան, ենթակա է վավեր ճանաչման:

29. Անահիտ Գևորգյան v. Գրիշա Երվանդյան, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե, քաղ. գործ թիվ 3-560/ՎԳ (առուվաճառքի գործարքը վավեր ճանաչելու, այն կադաստրում գրանցելու, բնակարանի նկատմամբ պատասխանողների սեփականության իրավունքը դադարեցնելու, իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջներով և ըստ հակընդդեմ հայցի՝ սեփականության իրավունքի գրանցումը մասնակի անվավեր ճանաչելու պահանջով):

Էջ  
201-203

**Խնդիրը.** Արդյո՞ք բնակարանում հաշվառված լինելը, ինչպես նաև բնակարանի մի մասի նկատմամբ սեփականության իրավունքի վկայական ձեռք բերելը բավարար են ամբողջ բնակարանի առուծախի գործարքը վավեր ճանաչելու համար:

**ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց.** Գործարքը վավերական ճանաչելու համար անհրաժեշտ է հաստատել հետևյալ 2 փաստերի միաժամանակյա առկայությունը՝

1. գործարքը լրիվ կամ մասնակի կատարված լինելը,
2. կողմի խուսափելը գործարքի վավերացումից:

Մինչդեռ, սույն քաղաքացիական գործով, Վերաքննիչ դատարանը գործարքը վավեր ճանաչելու հիմքում դնելով Նինա Դավթյանի և Հենրիկ Ավետիսյանի կողմից ստորագրված «ստացական» վերնագրված փաստաթուղթը հաշվի չի առել, որ նրանում ոչ մի խոսք չկա անշարժ գույքի առուվաճառքի վերաբերյալ: Ինչ վերաբերում է Անահիտ Գևորգյանի՝ վիճելի բնակարանում հաշվառված լինելուն, ինչպես նաև՝ իր անվամբ վեճի առարկա բնակարանի մի մասի նկատմամբ սեփականության իրավունքի վկայական ձեռք բերելուն, ապա նշված հանգամանքները չեն կարող վկայել ամբողջ բնակարանի առուվաճառքի գործարքի գոյության մասին:

## Հայցային վաղեմություն

26.09.2008թ.

30. Գայանե Հովհաննիսյան, Գավիթ Բալասանյան v. Աջափնյակ և Գավթաշեն համայնքների դատախազություն, երրորդ անձ՝ Գևորգ Բալասանյան, քաղ. գործ թիվ 3-486/ՎԳ (գույքն արգելանքից հանելու պահանջով և ըստ հակընդդեմ հայցի՝ բնակարանի բաժինն առանձնացնելու և բռնագանձում տարածելու պահանջներով):

Էջ  
204-206

Խնդիրը. Ո՞ր պահից կարող է սկսվել ընդհանուր գույքից պարտապանի բաժինն առանձնացնելու և դրա վրա բռնագանձում տարածելու պահանջով հայցային վաղեմության ժամկետը:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Սույն քաղաքացիական գործի փաստերի համաձայն՝ հարկադիր կատարողի 11.12.2003 թվականի որոշմամբ պահանջատերը տեղեկացվել է իր իրավունքների չվերականգնման և դրանց վերականգնման նոր հնարավորության մասին, որ պահից և սկսվել է ընդհանուր գույքից պարտապանի բաժինն առանձնացնելու և դրա վրա բռնագանձում տարածելու պահանջով հայցային վաղեմության ժամկետի ընթացքը: Փաստորեն, 11.12.2003 թվականից պահանջատերը հնարավորություն է ունեցել ձեռնամուխ լինել իրականացնելու իր խախտված իրավունքների պաշտպանությունը, մինչդեռ, հայցով դատարան է դիմել միայն 21.03.2007 թվականին՝ հայցային վաղեմության ժամկետը լրանալուց հետո:

### Ընդհանուր դրույթներ պարտավորությունների մասին

29.02.2008թ.

31. Ալվարդ Դուկեյան v. Վասիլ և Վարդան Նիկողոսյաններ, քաղ. գործ թիվ 3-117/ՎԳ (դրամական պարտավորությունները կետանցով կատարելու համար վնասի հատուցման պահանջով):

Էջ  
207-210

Խնդիրը. 1. Արդյո՞ք փոխատուի և փոխառուի միջև կնքված պայմանագրի ապահովմանն ուղղված երրորդ անձի կողմից տրված գույք հանձնելու պարտավորագրի ուժով երրորդ անձի համար կարող է ծագել փոխառության պայմանագրով սահմանված գումարը վճարելու պարտականություն:

2. Ո՞ր պահից են հաշվարկվում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. 1) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ - հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Սույն քաղաքացիական գործով Վարդան Նիկողոսյանի և Ալվարդ Դուկեյանի միջև կնքված 23.12.2000 թվականի, 04.10.2001 թվականի փոխառության պայմանագրերի, ինչպես նաև Վասիլ Նիկողոսյանի կողմից տրված 24.04.2003 թվականի պարտավորագրի վերլուծությունից հետևում է, որ Ալվարդ Դուկեյանի հանդեպ գումար վճարելու պարտավորությունը կրում է Վարդան Նիկողոսյանը, իսկ Վասիլ Նիկողոսյանը կրում է միայն սահմանված ժամկետում այդ գումարը չվերադարձ-

վելու դեպքում գույք հանձնելու պարտավորություն: Այսինքն՝ Վասիլ Նիկողոսյանը իր սեփականության ներքո գտնվող գույքով փոխառության գումարի վերադարձման կապակցությամբ որոշակի ապահովվածություն է երաշխավորել Ալվարդ Ղուկեյանին, որպիսի պայմաններում փոխառության գումարի վերադարձման կետանցի դեպքում Վասիլ Նիկողոսյանը չի կարող կրել այդ գումարին հաշվարկված տոկոսների վճարման պարտավորություն:

2) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելու, դրանք վերադարձնելուց խուսափելու, վճարման այլ կետանցով դրանք օգտագործելու, կամ այլ անձի հաշվին անհիմն ստանալու կամ խնայելու դեպքերում այդ գումարին վճարվում են տոկոսներ: Տոկոսները հաշվարկվում են կետանցի օրվանից մինչև պարտավորության դադարման օրը՝ ըստ համապատասխան ժամանակահատվածների համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքների:

Նույն օրենսգրքի 337-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին: Այդ կանոնից բացառությունները սահմանվում են սույն օրենսգրքով և այլ օրենքներով:

Ալվարդ Ղուկեյանի և Վարդան Նիկողոսյանի միջև 10.04.2001 թվականին կնքված փոխառության պայմանագրով գումարը Վարդան Նիկողոսյանին է տրամադրվել մեկ տարի ժամկետով: Այսպիսով, Ալվարդ Ղուկեյանին վերադարձման ենթակա դրամական միջոցները Վարդան Նիկողոսյանի կողմից առանց իրավական հիմքի պահվել են 11.04.2002 թվականից սկսած, հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները պահանջելու իրավունքը Ալվարդ Ղուկեյանի մոտ ծագել է հենց այդ պահից:

Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ալվարդ Ղուկեյանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսների բռնագանձման պահանջը դատարան է ներկայացրել 06.06.2007 թվականին, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցային վաղեմությունը պետք էր հաշվարկել սկսած 11.04.2002 թվականից: Հետևաբար, հայցվորը Վարդան Նիկողոսյանից կարող է պահանջել վճարելու ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները սկսած 06.06.2004 թվականից մինչև պարտավորության կատարման պահի:

32. «Թամամ» ԱԿ v. «ԱՍ-ԿԱ» ՍՊԸ, քաղ. գործ թիվ 3-27/ՏԳ (գումար բռնագանձելու պահանջով):

Էջ  
211-215

**Խնդիրը.** 1. Տուժանքի (տուգանք, տույժ) չափը նվազեցնելիս, որ հարցը պետք է հանդիսանա զնահատման առարկա:

2. Արդյո՞ք հայցվորը կրում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված տոկոսների հաշվարկի և դրույքչափերի վերաբերյալ ապացույց ներկայացնելու պարտականություն:

3. Արդյո՞ք պայմանագրով տոկոսագումարի՝ որպես տուժանքի (տուգանք, տույժ) նախատեսումը բացառում է այդ պայմանագրով նախատեսված պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված տոկոսներ հաշվեգրելը:

**ՀՀ Վճռաբեկ դատարանը որոշեց.** 1) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 369-րդ - հոդվածի համաձայն՝ տուժանք (տուգանք, տույժ) է համարվում օրենքով կամ պայմանագրով որոշված այն դրամական գումարը, որը պարտապանը պարտավոր է վճարել պարտատիրոջը՝ պարտավորությունը չկատարելու կամ անպատ-

---

շած կատարելու դեպքում՝ ներառյալ կատարման կետանցի դեպքում: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդվածի համաձայն՝ եթե վճարման ենթակա տուժանքն ակնհայտորեն անհամաչափ է պարտավորության խախտման հետևանքներին, դատարանն իրավունք ունի պակասեցնել այն:

Վերոնշյալից հետևում է, որ տուժանքը պարտավորությունների կատարումն ապահովող երաշխիք է: Այն նպատակաուղղված է ապահովելու պարտապանի կողմից պարտավորության կատարումը, իսկ դրա չկատարման կամ անպատշաճ կատարման դեպքում նրա համար նախատեսել գույքային անբարենպաստ հետևանքներ՝ դրամական պատասխանատվություն, իսկ դատարանը կոչված է ապահովելու սահմանված տուժանքի չափի և պարտավորության խախտման հետևանքների ողջամիտ հարաբերակցությունը: Տուժանքը պակասեցնելու դատարանի իրավունքը կոչված է կանխելու անձի կողմից իր քաղաքացիական իրավունքների իրականացման չարաշահումը:

Յուրաքանչյուր դեպքում տուժանքը պակասեցնելիս դատարանը առաջին հերթին պետք է գնահատման առարկա դարձնի այն հարցը, թե պայմանագրով նախատեսված տուժանքը որքանով է անհամաչափ պարտավորության խախտման հետևանքներին:

2) Սույն քաղաքացիական գործով դատարանը մերժել է հայցապահանջի՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի հիմքով տոկոսների բռնագանձման պահանջը՝ վճռի հիմքում դնելով այն հանգամանքը, որ հայցվորի կողմից չներկայացվեց ոչ պահանջվող բանկային տոկոսների վերաբերյալ հաշվարկ և ոչ էլ տոկոսի՝ համապատասխան ժամանակահատվածների համար սահմանված դրույքաչափի վերաբերյալ որևէ ապացույց:

Դատարանի վճռի հիմքում դրված վերոնշյալ պատճառաբանությունը Վճռաբեկ դատարանը գտնում է անհիմն, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված բանկային տոկոսների դրույքաչափերը սահմանվում են ՀՀ կենտրոնական բանկի իրավական ակտերով և հրապարակվում են օրենքով սահմանված կարգով: Հետևաբար, դրանք հայցվորի կողմից ներկայացնելու անհրաժեշտությունը բացակայում է:

Իսկ ինչ վերաբերում է բանկային տոկոսների վերաբերյալ հաշվարկ չներկայացնելու վերաբերյալ Դատարանի պատճառաբանությանը, ապա այն նույնպես անհիմն է, քանի որ դրա չափը կախվածության մեջ է դրվում պարտավորության դադարման օրվանից, այսինքն, պարտավորության կատարման պահից: Հետևաբար, դրանք հայցվորի կողմից ներկայացնելու անհրաժեշտությունը նույնպես բացակայում է:

3) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածից հետևում է, որ վնասի հատուցման կամ պայմանագրային պարտավորությունները չկատարելու կետանցի համար սահմանված պատասխանատվության այլ կարգի առկայության դեպքում կամ եթե տոկոսի (տուժանքի) այլ չափ նախատեսված է պայմանագրով, ապա նույն հոդվածի 1-ին մասով սահմանված կարգը չի գործում: Օրենսդրության նման ձևակերպումը կոչված է ապահովելու կրկնակի պատասխանատվության անթույլատրելիության սկզբունքը: ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում ընդունված որոշումներով արդեն ընդգծել է, որ այդ սկզբունքը բխում է ՀՀ Սահմանադրությունից և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի դրույթներից և այն պետք է պահպանվի բոլոր պետական մարմինների կողմից (տե՛ս օրինակ՝ Աշխեն Ենգոյանն ընդդեմ Երևանի քաղաքապետի՝ Երևանի քաղաքապետի վարչական իրավախախտումների գործերով հանձնաժողովի 15.09.2006 թվականի որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին ՀՀ վճռաբեկ դատարանի 09.11.2007 թվականի որոշումը քա-

դաքացիական գործով թիվ 3-1670(ՎԳ)): Սույն գործով հաստատված է, որ Կազմակերպության և Ընկերության միջև 01.10.2005 թվականին կնքված թիվ 19 պայմանագրով ապրանքի դիմաց վճարումն ուշացնելու համար սահմանված է տուգանք 0.15 տոկոսի չափով: Հետևաբար, Ընկերության կողմից դրամական պարտավորությունները պատշաճ չկատարելու համար պայմանագրով արդեն նախատեսված է պատասխանատվություն: Ոստի վերջինիցս պայմանագրով նախատեսված տոկոսով տուգանքից բացի պայմանագրային պարտավորությունների կետանցի համար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսներ գանձվել չեն կարող:

**23.05.2008թ.**

33. Նշան Չուքիյան v. «Կապիտալ Մ» ՍՊԸ, Ռուբիկ Թադևոսյան, գումարը, **Էջ 216-219**  
 քաղ. գործ թիվ 3-338/ՎԳ- (տոկոսները բռնագանձելու և վնասը հատուցելու պահանջներով):

**Խնդիրը.** Արդյո՞ք նախնական պայմանագրի և նախավճարի տարրեր պարունակող խառը պայմանագրի՝ նախնական պայմանագրի մասով անվավերությունը հանգեցնում է նաև նախավճարի պարտավորության անվավերությանը:

**ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց.** Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կողմերի միջև 15.01.2007 թվականին կնքված գործարքի առուվաճառքի նախնական պայմանագրի վերաբերյալ պայմանն առաջինչ է և չի կարող հանգեցնել իրավաբանական հետևանքների:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 338-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հիմնական պարտավորության անվավերությունը հանգեցնում է այն ապահովող պարտավորության անվավերության, եթե այլ բան սահմանված չէ օրենքով:

Հիմնական պայմանագրի անվավերության դեպքում նախավճարի պայմանագրի անվավերության վերաբերյալ օրենքով այլ բան նախատեսված չլինելու պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անվավեր է նաև Պայմանագրի 1.4. կետով սահմանված հիմնական պայմանագրի պարտավորության կատարումն ապահովված նախավճար վճարելու պարտավորության պայմանը:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Նշան Չուքիյանի և Ռուբիկ Թադևոսյանի միջև կնքված պայմանագրի առաջինչ լինելու փաստով կողմերի միջև չեն կարող առաջանալ նաև տոկոսների և նախավճարի վճարման հետ կապված լրացուցիչ պարտավորական իրավահարաբերություններ:

34. Դավիթ Դավթյան, Ալիսա Ջոբաբուրյան v. «Գրանդ» ապահովագրական **Էջ 220-223**  
 ՍՊԸ, քաղ. գործ թիվ 3-356/ՎԳ- (առանց որևէ նախապայմանի գումար վճարելու պահանջով):

**Խնդիրը.** Արդյո՞ք անձնակազմերի կյանքին և առողջությանը հասցված վնասի հետ կապված կազմակերպության գույքային շահերի ապահովագրության դեպքում, ապահովագրող ընկերության և անձնակազմի անդամի կամ նրա ժառանգների միջև կարող են առաջանալ պարտավորաիրավական հարաբերություններ:

**ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց.** Սույն քաղաքացիական գործով Ընկերության և Կազմակերպության միջև կնքված Պայմանագրի համաձայն՝ ապահովագրվել է թռիչքային առաջադրանքի ընթացքում ինքնաթիռի թռիչքային և աշխատանքային պարտականություններ կատարելու ժամանակ ինժեներատեխնիկական անձնակազմերի կյանքին և առողջությանը հասցված վնասի հետ կապված **Կազմակերպության գույքային շահերը:** Պայմանագրով շահառու է հանդիսացել Կազմակերպությունը:

Վերոնշյալ Պայմանագրից հետևում է, որ սպահովագրության օբյեկտ են ոչ թե Կազմակերպությանը պատկանող ինքնաթիռի անձնակազմի կյանքը կամ առողջությունը, այլ անձնակազմին հասցված վնասի հետ կապված **Կազմակերպության գույքային շահերը**: Իսկ Պայմանագրով շահառուն Ընկերությունն է:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն քաղաքացիական գործով Ընկերության և Արման Դավթյանի, ինչպես նաև նրա ժառանգների միջև որևէ պարտավորաիրավական հարաբերություններ առկա չեն:

### **20.06.2008թ.**

35. ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն v. Աշոտ Ջանջուղայան, քաղ. գործ թիվ 3-280/ՎԴ (գումար բռնագանձելու պահանջով): **Էջ 224-227**

**Խնդիրը.** Արդյո՞ք անվճարունակության գործերով կառավարչի գործունեության լիցենզիայի համար նախատեսված տարեկան պետական տուրքի չվճարման դիմաց հաշվարկված տույժը կարող է նվազեցվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդվածի կիրառմամբ:

**ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց.** Սույն քաղաքացիական գործով վեճը ծագել է ֆիզիկական անձի կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե մուծվող օրենքով սահմանված պարտադիր վճարի չվճարման կապակցությամբ վարչական ենթակառուցվածքի վրա հիմնված իրավահարաբերություններից:

Հետևաբար, հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 6-րդ մասով Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ որ սույն վեճի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի նորմերը կիրառելի չեն: Այսինքն՝ հիմնավոր չէ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդվածի կիրառմամբ Աշոտ Ջանջուղայանի նկատմամբ հաշվարկված տույժի գումարի պակասեցումը:

### **25.07.2008թ.**

36. Երևան քաղաքի դատախազություն v. Միսակ Ավետիսյան, քաղ. գործ թիվ 3-328/ՎԴ (գումարի բռնագանձման պահանջով): **Էջ 228-231**

**Խնդիրը.** 1. Արդյո՞ք պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության շրջանակներում կատարված ծախսերը ենթակա են փոխհատուցման:

2. Ե՞րբ է ծագում հետադարձ պահանջի (ռեգրեսի) իրավունքը:

**ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց.** 1) Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ պետական պատվերի շրջանակներում անվճար բժշկական օգնության տրամադրումը իրենից ներկայացնում է պետական մարմինների կողմից իրենց սահմանադրական առաքելության շրջանակներում ի շահ ուրիշի կատարված գործողություն, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նման բժշկական օգնության շրջանակներում տրամադրվող գումարները պետությանը վերադարձման ենթակա չեն:

2) Անձը ստանում է ռեգրեսի իրավունք այն դեպքերում, երբ նա աշխատանքային կամ այլ իրավահարաբերությունների (աշխատանքային, հանձնարարության կամ այլ պայմանագրի) ուժով պարտավորություն է կրում վնասը հասցրած անձի գործողությունների համար:

**26.09.2008թ.**

37. Արամ Հայրապետյան v. Նորիկ Գ-գիրյան, Լիլյա և Վիլեն Հայրապետյան- **Էջ 232-237**  
 ներ, քաղ. գործ թիվ 3-502/ՎԳ (ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու և բնակարանը հրապարակային սակարկություններով վաճառելու պահանջներով և ըստ հակընդդեմ հայցի՝ գումարի բռնագանձման պահանջով):

**Խնդիրը.** Արդյո՞ք դատարանի կողմից հաշտության համաձայնությունը հաստատելու միջնորդությունը մերժելու պահից այդ համաձայնության կողմ հանդիսացող անձի կողմից վերադարձման ենթակա գումարի պահումը կարող է գնահատվել ապօրինի:

**ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց.** Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հաշտության համաձայնության հաստատման միջնորդությունը մերժվելու պահից, Արամ Հայրապետյանը պետք է վերադարձներ Վիլեն Հայրապետյանին 1.020.000 ՀՀ դրամ գումարը, որի չկատարման պարագայում այն պահել է ապօրինի:

**Պայմանագրերից ծագող պարտավորություններ**

**29.02.2008թ.**

38. Արթիկի «Ստեկլոմաշ» ԲԲԸ v. «Ռեյլ Էքսպրես» ՍՊԸ, «Հայկական երկաթ- **Էջ 238-240**  
 թուղի» ՓԲԸ, քաղ. գործ թիվ 3-119/ՏԳ (գումար և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսներ բռնագանձելու պահանջներով):

**Խնդիրը.** Արդյո՞ք տրանսպորտային առաքման և բեռնափոխադրման պայմանագրի տարրեր պարունակող խառը պայմանագրով առաքվող բեռի համար կարող է սահմանվել պատասխանատվություն բեռնափոխադրման պայմանագրի համար սահմանված կարգով:

**ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց.** ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ - հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կողմերը կարող են կնքել օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված մի քանի պայմանագրերի տարրեր պարունակող պայմանագիր (խառը պայմանագիր): Խառը պայմանագրի կողմերի հարաբերությունների նկատմամբ համապատասխան մասերով կիրառվում են այն պայմանագրերի մասին կանոնները, որոնց տարրերը պարունակվում են խառը պայմանագրում, եթե այլ բան չի բխում կողմերի համաձայնությունից կամ խառը պայմանագրի էությունից:

Նույն օրենսգրքի 447-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի պայմանները մեկնաբանելիս՝ դատարանը պետք է ելի նրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից:

Սույն քաղաքացիական գործով Կազմակերպության և Ընկերության միջև 20.01.2007 թվականին կնքված Պայմանագրի վերոնշյալ 2.1.3. և 2.1.1 կետերի տառացի նշանակությունից հետևում է, որ Ընկերության և Կազմակերպության միջև կնքվել է տրանսպորտային առաքման և բեռնափոխադրման պայմանագրերի տարրեր պարունակող խառը պայմանագիր: Պայմանագրում Կազմակերպության պատասխանատվությունը առաքվող բեռի համար սահմանվել է բեռնափոխադրման պայմանագրերի համար սահմանված կարգով, որին համապատասխան էլ պետք է կարգավորվեն առաքվող գույքի կորստի հետ կապված իրավահարաբերությունները:

39. «Ֆինքս» բարեգործական հիմնադրամ v. Արմեն Գրիգորյան, Կարապետ **Էջ 241-244**  
 և Հռիփսիկ Վարդանյաններ, քաղ. գործ թիվ 3-241/ՎԳ (գումարի բռնագանձման պահանջով):

---

---

**Խնդիրը.** Արդյո՞ք առաջինը է փոխառության պայմանագրով նախատեսված տույժ վճարելու համաձայնությունը այլ պայմաններով քան նախատեսված է ՀՀ - քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածում:

**ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց.** Վճռաբեկ դատարանը գտնում է, որ փոխառության պայմանագրի 5.2-րդ կետով նախատեսված տույժ վճարելու վերաբերյալ համաձայնությունն առաջինը է: Հետևաբար, Արմեն Գրիգորյանի կողմից փոխառության գումարի վճարման կետանցի դեպքում այդ գումարին ենթակա են վճարման միայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված չափով տոկոսներ:

**23.04.2008թ.**

40. Արմեն Ստեփանյան v. Արամ, Ֆլորա, Հասմիկ, Գոռ Ստեփանյաններ և Գայանե Գևորգյան, քաղ. գործ թիվ 3-243/ՎԳ (բնակելի տարածության նկատմամբ բնակության իրավունքը փոխհատուցմամբ դադարեցնելու, հաշվառումից հանելու և վտարելու և ըստ հակընդդեմ հայցի՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայականը մասնակի անվավեր ճանաչելու, պապի ունեցած բաժնի և իր կողմից կատարված շինարարական ավելացումների նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջներով):

Էջ  
245-249

**Խնդիրը.** Արդյո՞ք նվիրատուի գույքային, ընտանեկան դրության կամ առողջական վիճակի վատթարացումը նվիրատվության պայմանագիրն անվավեր ճանաչելու հիմք է:

**ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց.** Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհիմն է վերաքննիչ դատարանի կողմից նվիրատվության պայմանագրի անվավեր ճանաչումը, քանի որ նվիրատուի գույքային դրության վատթարացումը ոչ թե պայմանագիրն անվավեր ճանաչելու, այլ դեռևս չկատարված պայմանագրի կատարումից հրաժարվելու հիմք է:

**26.09.2008թ.**

41. Ջուլիետա Դազարյան v. Արմավիրի գյուղապետարան, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանում, քաղ. գործ թիվ 3-506/ՎԳ (փաստաթղթում ուղղում կատարելու և գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման պահանջներով):

Էջ  
250-254

**Խնդիրը.** Արդյո՞ք բնակելի տան առուծախի պայմանագրում տան կիսանկուղի և պատշգամբների վերաբերյալ նշման բացակայությունը կարող է փաստել այն մասին, որ դրանք պայմանագրի առարկա չեն հանդիսացել:

**ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց.** Սույն քաղաքացիական գործով 26.09.2006 թվականի բնակելի տան և տնամերձ հողամասի առուվաճառքի պայմանագրում նշվել է, որ վաճառողը վաճառում է, իսկ գնորդը ձեռք է բերում *բնակելի տուն իր տնամերձ հողամասով*, որը կազմում է 0,20 հա: Ամբողջ տունն ունի 85,2 քմ բնակելի մակերես, 106,3 քմ մակերեսով օժանդակ շինություն:

Վերաքննիչ դատարանը վճիռ կայացնելիս եկել է այն եզրահանգման, որ իրականում առուվաճառքի պայմանագրի առարկա են հանդիսանում միայն այդ տարածքները, իսկ նույն տան կիսանկուղը և պատշգամբները պայմանագրի առարկան չեն կազմում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի պայմանները մեկնաբանելիս դատարանը պետք է ելնի նրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից:

Հիմք ընդունելով պայմանագրում պարունակող բառերի տառացի նշանակությունը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն պայմանագրի առարկա է հանդիսանում ամբողջ բնակելի տունը՝ որպես մեկ ամբողջական միավոր: Չնայած պայմանագրում նշվել է միայն բնակելի մակերեսը և օժանդակ շինությունները, սակայն դա չի նշանակում, որ կիսանկողը և պատշգամբները, որոնք պայմանագրում հատուկ նշված չեն, չեն վաճառվել:

**Միակողմանի գործողություններից ծագող պարտավորություններ**

**20.06.2008թ.**

42. Արա Խաչատրյան v. «ԱրմենՏել» ՓԲԸ, քաղ. գործ թիվ 3-377/ՎԳ- (խաղի հաղթող ճանաչելու և շահումը վճարելու պահանջներով): Էջ 255-258

**Խնդիրը.** Արդյո՞ք խաղի հաղթող ճանաչելու, այդ թվում խաղի կանոններին համապատասխան դրանց անցկացված լինելու վերաբերյալ վեճերը ենթակա են դատարանում քննության:

**ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց.** Ռիսկի վրա հիմնված խաղեր և գրազ (մոլե-խաղեր) կազմակերպելու կամ դրանց մասնակցելու հետ կապված պահանջները ենթակա չեն դատարանում քննության և միայն բացառիկ դեպքերում դատարանը կարող է քննել այս ոլորտում ծագող վեճերը: Մասնավորապես, դատարանում քննության ենթակա են այն անձանց պահանջները, ովքեր խաղերին կամ գրազին մասնակցել են խաբեության, բռնության, սպառնալիքի կամ իրենց ներկայացուցչի՝ խաղերի կամ գրազի կազմակերպչի հետ չարամիտ համաձայնության ազդեցության ներքո: Բացի այդ, դատարանին են ենթակա խաղի կազմակերպչի կողմից շահումը վճարելուց խուսափելու հետ կապված վեճերը:

Այսպիսով՝ խաղի հաղթող ճանաչելու հետ կապված վեճերը, այդ թվում խաղի կանոններին համապատասխան դրանց անցկացված լինելու հարցերը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1039-րդ և 1040-րդ հոդվածների ուժով դատարանի իրավասությունից դուրս են, իսկ դրանք կազմակերպող և դրանց մասնակցող անձանց պահանջները՝ դատական պաշտպանության ոչ ենթակա:

*\* Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը անդրադարձել է օրենքի մեկնաբանության վերաբերյալ դատարանի իրավական դիրքորոշման նախադատելիության հարցին՝ կրկնելով նախկինում կայացրած որոշմամբ արտահայտած դիրքորոշումը (տես՝ Ա.Եփրեմյան v. Ն.Մանվելյանի, քաղ. գործ թիվ 3-132(ՎԳ) (անհիմն հարստացման գումարները վերադարձնելու պահանջով) ՀՀ վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի որոշումը):*

**Վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորություններ**

**29.02.2008թ.**

43. Գազիկ Շուդուրյան v. Ֆելիքս Շմավոնյան, Յոլակ Բարայան, երրորդ անձ Էջ 259-262  
 Ֆելիքս (իրականում՝ Ֆրունզիկ) Արամյան, քաղ. գործ թիվ 3-38/ՎԳ- (գույքին պատճառված վնասի փոխհատուցման պահանջով):

**Խնդիրը.** Ի՞նչն է հանդիսանում առավել վտանգի աղբյուրների փոխներգործության հետևանքով հասցված վնասի համար պատասխանատվության նախապայման:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Վերաքննիչ դատարանը չի պարզել հասցված վնասում հայցվորի մեղքի աստիճանը, պատասխանողների մեղքի առկայության հանգամանքը, որը վերջիններիս պատասխանատվության ենթարկելու (և դրա չափը որոշելու) միակ նախապայմանն է:

44. Սուրեն Գալստյան v. Կամո Պետրոսյան, քաղ. գործ թիվ 3-43/ՎԳ (պատ-

Էջ  
263-267

ճառված վնասի փոխհատուցման պահանջով):  
Խնդիրը. Ո՞վ է հատուցում բազմաբնակարանային շենքում շինության սեփականատիրոջ կողմից այլ շինություններին կամ բաժնային սեփականությանը հասցված վնասը:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Շինության սեփականատիրոջ կողմից անձամբ կամ նրա հետ համատեղ ապրող անձանց կողմից այլ շինություններին կամ ընդհանուր բաժնային սեփականությանը վնաս պատճառելու դեպքում շինության սեփականատերը պարտավոր է իր հաշվին վերացնել հասցված վնասը: Վնաս կրած շինության սեփականատերն օրենքով սահմանված կարգով վնասի հատուցման պահանջի իրավունք ունի (տե՛ս օրինակ՝ Անժելա Գազարյան, Արփիկ և Արմինե Գասպարյաններ ընդդեմ Շուշանիկ Սարգսյան, Ոսկեհատ, Նունե, Հրանուշ Գասպարյաններ, 12.12.2007թ., քաղ. գործ թիվ 3-1843/ՎԳ (ժառանգական գույքը ժառանգների միջև բաժանելու պահանջով)):

Հիմք ընդունելով վերոնշյալը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն քաղաքացիական գործում առկա ապացույցներով հիմնավորվում է այն փաստը, որ Սուրեն Գալստյանին վնասը հասցվել է Վանաձորի Խորենացու փողոցի 6-րդ - շենքի թիվ 5 բնակարանում կատարված խողովակները թույլատրված նորմերի խախտումով միացված լինելու պատճառով. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Սուրեն Գալստյանի գույքին պատճառված վնասը պետք է հատուցվի այդ բնակարանի սեփականատեր Կամո Պետրոսյանի կողմից:

26.09.2008թ.

45. Հրաչյա Մանուչարյան v. «ՍՏԱՖ» ՍՊԸ, Նորայր Գրիգորյան, քաղ. գործ թիվ 3-533/ՎԳ (վնասի հատուցման պահանջով):

Էջ  
268-271

Խնդիրը. Ո՞րն է առավել վտանքի աղբյուրների փոխներգործության հետևանքով դրանց տերերին հասցված նյութական վնասի հատուցման հայցապահանջով գործի ապացուցման առարկան:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Վնասի հատուցման պատասխանատվության և դրանից ազատվելու հնարավորության ընդհանուր հիմունքները՝ կախված վնաս պատճառելու եղանակից, ձևից, միջոցից և այլն, սահմանված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1060-1073 հոդվածներում, մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1072-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավաբանական անձինք և քաղաքացիները, որոնց գործունեությունը կապված է շրջապատի համար առավել վտանգի աղբյուրի հետ (**տրանսպորտային միջոցների**, մեխանիզմների, բարձր լարվածության էներգիայի, ատոմային էներգիայի, պայթուցիկ նյութերի, ուժեղ ներգործող թույների և այլնի օգտագործում, շինարարական և դրա հետ կապված այլ գործունեության իրականացում), պարտավոր են հատուցել առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասը, եթե չեն ապացուցում, որ վնասը ծագել է անհաղթահարելի ուժի կամ տուժողի դիտավորության հետևանքով:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ սույն քաղաքացիական գործով ներկայացված հայցապահանջի շրջանակներում ապացուցման առարկա միակ փաստը դա պատասխանողի՝ շրջապատի համար առավել վտանգի աղբյուրի հետ կապված գործունեությամբ հայցվորին նյութական վնաս պատճառելն է: Իսկ վնաս

պատճառած անձը կարող է ազատվել հասցված վնասը հատուցելու պարտականությունից միայն այն դեպքում, եթե ապացուցի, որ վնասը ծագել է անհաղթահարելի ուժի կամ տուժողի դիտավորության հետևանքով:

**Ժառանգման իրավունք**

**29.02.2008թ.**

46. Նշան Ղազարյան v. Արմենուհի Խաչատրյան, Երևանի առաջին նոտարական գրասենյակի նոտար Ե.Սարգսյան, երրորդ անձինք՝ Աշոտ Խաչատրյան, ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Դավթաշենի ՏՍ, քաղ. գործ թիվ 3-29/ՎԴ (կտակը, ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրը, դրա հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու և տիրապետման փաստով ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջներով):

Էջ  
272-278

**Խնդիրը.** Արդյո՞ք կտակում վկայի բնակության հասցեն չնշելը պետք է դիտել կտակը կազմելու կարգի խախտում և նման խախտումը կարող է ազդել կտակարարի կամքի արտահայտության ըմբռնման վրա, ինչպես նաև կտակն անվավեր ճանաչելու հիմք հանդիսանալ:

**ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց.** Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կտակում վկայի բնակության վայրի չնշելը սույն քաղաքացիական գործով կտակը կազմելու աննշան խախտում է և չէր կարող ազդել կտակարարի կամքի արտահայտության վրա: Վճռաբեկ դատարանը նման եզրահանգման համար հիմք է ընդունում այն հանգամանքը, որ նոտարական գործում առկա է վկայի անձնագրի պատճենը, որը հնարավորություն է տալիս պարզելու վկայի բնակության վայրի հասցեն: Հետևաբար, կտակում վկայի բնակության վայրի մասին նշում չկատարելը կտակն անվավեր ճանաչելու հիմք չէ:

**27.03.2008թ.**

47. Վլադիմիր Բալասանյան v. Կարինե Սերոպյան, ՀՀ կենտրոն նոտարական տարածքի նոտար, երրորդ անձ ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ (ժառանգության իրավունքի վկայագիրը և դրա հիման վրա տրված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականներն անվավեր ճանաչելու և սեփականության իրավունքի վկայականը համապատասխան բաժիններով տրամադրելու, կտակը մասնակիորեն անվավեր ճանաչելու, փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունն ընդունած միակ ժառանգ ճանաչելու և բնակարանի ու ավտոտնակի նկատմամբ սեփականության իրավունքը փոխհատուցմամբ դադարեցնելու պահանջներով) Կարինե Սերոպյան v. Վլադիմիր Բալասանյան, քաղ. գործ թիվ 3-183/ՎԴ (բնակարանը հրապարակային սակարկություններով վաճառելու և ստացված գումարը կողմերից յուրաքանչյուրի բաժնին համաչափ բաշխելու կամ ըստ սեփականության վկայականի 1/2 բաժնի դիմաց փոխհատուցելու պահանջներով)

Էջ  
279-285

**Խնդիրը.** 1. Արդյո՞ք էլեկտրաէներգիայի և հեռախոսակապի բաժանորդ հանդիսանալը, ինչպես նաև ՀՀ-ում աշխատելը հիմնավորում են ժառանգի կողմից ժառանգությունը ընդունելու փաստը:

2. Ո՞ր բացառիկ դեպքերում կարող է կիրառվել դատարանի՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածով նախատեսված գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու իրավունքը:

**ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց.** 1) Ինչ վերաբերում է «Արմենիա Տելեֆոն Կոմպանի» ՓԲԸ-ի 26.09.2006 թվականի թիվ 09/173 գրությանը և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 12.09.2006 թվականի տեղեկանքին, որոնք վկայում

են Սերյոժա Բալասանյանի բաժանորդ լինելու մասին, ինչպես նաև Երևանի պետական համալսարանում աշխատելու վերաբերյալ տեղեկանքներին, սպա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանցով չի կարող հիմնավորվել Սերյոժա Բալասանյանի կողմից վեճի առարկա գույքը փաստացի տիրապետելու փաստը:

2) Ընդհանուր գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու համար սահմանվել է պարտադիր նախապայմաններ, այն է՝ ընդհանուր գույքը բաժանելու, կամ նույն հոդվածի 3-5-րդ կետերում սահմանված կանոններով բաժինն առանձնացնելու ակնհայտ աննպատակահարմարությունը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ - հոդվածի 6-րդ կետով սահմանված գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու դատարանի իրավունքը կարող է կիրառվել միայն բացառիկ, այսինքն՝ վերը նշված պարտադիր պայմանների առկայության դեպքում:

### **25.07.2008թ.**

48. Իրինա Շահումյան v. Երևանի Կենտրոն և Արաբկիր թաղային համայնք- **Էջ**  
ներ, քաղ. գործ թիվ 3-446/ՎԴ (գումարի բռնագանձման պահանջով): **286-289**

Խնդիրը. Արդյո՞ք համայնքը կարող է ձեռք բերել ժառանգի կարգավիճակ:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Օրենսդիրը, սահմանելով ժառանգների ցանկը, որոնք իրավունք ունեն օրենքով սահմանված կարգով և ժամկետներում ընդունել ժառանգությունը, միաժամանակ նույն ժամկետը նախատեսել է ժառանգատուի պարտատերերի կողմից իրենց պահանջների ներկայացման համար: Իսկ բոլոր այն դեպքերում, երբ ժառանգներ չկան կամ նրանք հրաժարվել են ժառանգությունից, ժառանգության ընդունման կամ պարտատերերի կողմից իրենց պահանջների ներկայացման համար օրենքով նախատեսված ժամկետի լրացման փաստի ուժով ժառանգական գույքը ձեռք է բերում մի կարգավիճակ, որով փաստորեն համարվում է որևէ մեկի իրավունքով չժանրաբեռնված գույք՝ անժառանգ գույք:

Այսինքն՝ համայնքը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1224-րդ հոդվածի ուժով ոչ թե ձեռք է բերում ժառանգի կարգավիճակ, այլ ժառանգների բացակայության, ինչպես նաև ժառանգատուի պարտատերերի կողմից օրենքով սահմանված ժամկետում որևէ պահանջ չներկայացնելու ուժով ձեռք է բերում սեփականության իրավունք ժառանգական զանգվածի նկատմամբ:

### **31.10.2008թ.**

49. Մամվել, Դուրդես և Դեզի Հովհաննիսյաններ v. Ռոզա Գրիգորյան, Նիկոլայ **Էջ**  
և Հասմիկ Սողոմոնյաններ, քաղ. գործ թիվ 3-509/ՎԴ (իրավունք սահմանող **290-296**  
փաստաթղթերի պատկանելության և ժառանգությունն ընդունելու փաստերը հաստատելու պահանջներով և ըստ հակընդդեմ հայցի՝ սեփականության իրավունքի գրանցումը մասնակի անվավեր ճանաչելու և բնակելի տան ու հողամասի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականատեր ճանաչելու պահանջներով):

Խնդիրը. 1. Արդյո՞ք կարգավիճակը չորոշված շինությունը կարող է ներառվել ժառանգական զանգվածի կազմում:

2. Արդյո՞ք անհայտ կարգավիճակ ունեցող կառույցների (ինքնակամ կառույցի) նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով կարող է ճանաչվել որևէ անձի սեփականության իրավունք:

**ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց.** 1) Ինչ վերաբերում է 1989 թվականին Վալենտին Սողոմոնյանի կողմից Երևանի Քանաքեռ 13 փողոցի թիվ 49 հասցեում գտնվող տանը կատարված շինարարական աշխատանքներին, որի արդյունքում Երևանի Քանաքեռ 13 փողոցի թիվ 49 հասցեում գտնվող գույքի մակերեսը զգալիորեն ավելացել է, ապա այդ շինությունների կարգավիճակը պարզված չէ, հետևաբար դրանք ժառանգության զանգվածի մաս չեն կարող կազմել:

2) Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով, այն հանգամանքը, որ Երևանի Քանաքեռ 13 փող. թիվ 49 հասցեում առկա են նաև կարգավիճակը չորոշված (ինքնակամ կառույցներ) շինություններ, հարկ է համարում արձանագրել, որ անհայտ կարգավիճակ ունեցող կառույցների (ինքնակամ կառույցի) նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունք չի կարող ճանաչվել, իսկ նման շինությունների նկատմամբ ձեռք բերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ճանաչման վերաբերյալ վեճը ՀՀ քաղաքացիական դատարանի օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի ուժով ենթակա չէ դատարանում քննության:

*\* Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը անդրադարձել է ձեռքբերման վաղեմության իրավունքով սեփականության իրավունքի ծագման վավերապայմանների հարցին՝ կրկնելով նախկինում կայացրած որոշմամբ արտահայտած դիրքորոշումը (տես՝ Վոլոդյա և Միշա Նիկողոսյաններ v. Մանվել, Սոֆիկ, Մելանյա, Մամվել Սարիբեկյաններ և Քնարիկ Աղազարյան, Մանվել Սարիբեկյան և Քնարիկ Աղազարյան v. Վոլոդյա և Միշա Նիկողոսյաններ, քաղ. գործ թիվ 3-1435/ՎԳ (ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը և սեփականության իրավունքի վկայականը մասնակի անվավեր ճանաչելու պահանջներով) ՀՀ վճռաբեկ դատարանի 10.10.2007 թվականի որոշումը):*

## Ընտանեկան իրավունք

### 27.03.2008թ.

50. Արման Միքայելյան v. Հայրապետյան, Արագածոտնի մարզպետարանի խնամակալության և հոգաբարձության մարմին, քաղ. գործ թիվ 3-237ՎԳ (երեխաների տեսակցության կարգ սահմանելու պահանջով): **Էջ 297-300**

**Խնդիրը.** Արդյո՞ք երկու օրվա ընթացքում ընդամենը 9 ժամ երեխաներին տեսակցելու համար յուրաքանչյուր անգամ այլ քաղաք գնալը, ինչպես նաև տեսակցությունը երեխայի մոր ներկայությամբ իրականացնելը կարող է անհարկի սահմանափակել երեխայի հոր՝ երեխայի դաստիարակությամբ զբաղվելու իրավունքը:

**ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց.** Ծնողների վրա է դրված երեխաների դաստիարակության, այդ թվում՝ առողջության, ֆիզիկական, հոգեկան, հոգևոր և բարոյական զարգացման հարցերի լուծման պարտականությունները, ընդ որում՝ նշված պարտականությունները ծնողների միջև բաշխված են հավասարապես, ծնողներն ունեն **հավասար** իրավունքներ և կրում են **հավասար** պարտականություններ՝ իհարկե հաշվի առնելով երեխաների շահերը:

Սույն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանը Արման Միքայելյանի համար սահմանելով տեսակցության կարգ, ըստ էության հաշվի չի առել այն հանգամանքը, որ շաբաթ և կիրակի օրերին (ընդամենը 9 ժամ) երեխաներին տեսակցելու համար յուրաքանչյուր անգամ այլ քաղաք գնալը, ինչպես նաև տեսակցությունը Հայրապետյանի տանն իրականացնելն անհարկի սահմանափակում է Արման Միքայելյանի՝ երեխաների խնամքով ու դաստիարակությամբ զբաղվելու իրավունքը, ինչպես նաև չի բխում երեխաների շահերից:

51. Նիկողոս Գաբաղյան v. Մարի, Նշան և Տաթևիկ Գաբաղյաններ քաղ. գործ թիվ 3-222/ՎԳ- (բնակելի տնից վտարելու պահանջով):

Էջ  
301-303

Խնդիրը. Արդյո՞ք ծնողի հետ ապրելու երեխայի իրավունքը կարող է նույնա-  
նալ բնակելի տարածության օգտագործման իրավունքի հետ:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Ծնողի հետ ապրելու երեխայի իրավունքը չի  
կարող նույնացվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածով նախատես-  
ված բնակելի տարածության օգտագործման իրավունքի հետ, քանի որ ապրելու  
իրավունքը անմիջականորեն կապված է ծնողի անձի հետ, այլ ոչ թե ծնողի սեփա-  
կանության կամ վարձակալության իրավունքով պատկանող գույքի հետ: Ծնողի  
զբաղեցրած բնակարանում երեխայի ապրելու իրավունքը ծագում է օրենքի ուժով  
և պահպանվում է մինչև երեխայի 18 տարին լրանալը: Այսինքն՝ ծնողի հետ ապրե-  
լու իրավունքը երեխայի մոտ ծագում է ծնող-երեխա ազգակցական կապի ուժով:

Ավելին, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ծնողներից յուրաքանչյուրի հետ  
ապրելու երեխայի իրավունքը պահպանվում է նույնիսկ այն դեպքում, երբ նրա  
խնամքը հանձնված է ծնողներից մեկին, այսինքն՝ անգամ ամուսնալուծված ծնո-  
ղը պարտավոր է թույլատրել երեխային բնակվել իր կողմից զբաղեցրած բնակա-  
րանում:

26.12.2008թ.

52. Վազգեն Ասատրյան v. Վալերի Աշխեն Գուրգենի Գործունյան Ասատր-  
յան, «Փարիզյան Սուրճ» ՄՊԸ, երրորդ անձ՝ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի  
պետական կոմիտեի «Վենտորն» տարածքային ստորաբաժանում, քաղ. գործ թիվ  
3-699/ՎԳ- (սեփականության իրավունքը ճանաչելու պահանջով):

Էջ  
304-308

Խնդիրը. Արդյո՞ք կողմերի միջև կնքված ամուսնական պայմանագրի ուժով  
վեճի նկատմամբ կարող է կիրառելի լինել այլ երկրի օրենսդրությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. «ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը գործո-  
ղության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ մինչև  
01.01.1999 թվականը ծագած պայմանագրային և այլ քաղաքացիական իրավա-  
հարաբերությունների նկատմամբ օրենսգիրքը կիրառվում է այն իրավունքների ու  
պարտականությունների մասով, որոնք կծագեն օրենսգիրքը գործողության մեջ  
դրվելուց հետո:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ ամուսնական պայմանագրի նկատմամբ  
ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը կիրառելի է, քանի որ վեճի առարկա գույքի  
նկատմամբ իրավունքները ծագել են 01.01.1999 թվականից հետո՝ 26.01.2006 և  
22.01.2007 թվականներին:

Բացի այդ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1285-րդ հոդվածի 3-րդ մասի հա-  
մաձայն՝ կիրառվելիք իրավունքի վերաբերյալ կողմերի համաձայնության բացա-  
կայության դեպքում նույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերում չթվարկված պայմա-  
նագրերի նկատմամբ կիրառվում է այն պետության իրավունքը, որտեղ հիմնադր-  
վել է, բնակության վայր կամ գործունեության հիմնական վայր ունի այն կողմը, ո-  
րը կատարում է նման պայմանագրի բովանդակության համար վճռական նշանա-  
կություն ունեցող պայմանը: Պայմանագրի բովանդակության համար վճռական  
նշանակություն ունեցող պայմանը որոշելու անհնարինության դեպքում կիրառ-  
վում է այն պետության իրավունքը, որի հետ առավել սերտ է կապված տվյալ պայ-  
մանագիրը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով պայմանագրի կնքման պահի  
դրությամբ ամուսիններից մեկի՝ Վալերի Գործունյանի, Ֆրանսիայի քաղաքացի  
լինելու, ամուսինների Ֆրանսիայում բնակվելու փաստերը, ինչպես նաև այն հան-

գամանքը, որ կողմերը ամուսնության պայմանագրով որպես միության հիմք ընդունել են Ֆրանսիայի օրենսդրությամբ (Ֆրանսիայի քաղաքացիական օրենսգրքի 1536-1543-րդ հոդվածներ) նախատեսված իրավական ռեժիմը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վազգեն Ասատրյանի և Վալերի Գործունյանի միջև կնքված ամուսնական պայմանագրի նկատմամբ կիրառելի է Ֆրանսիայի օրենսդրությունը:

53. Ավարդ Խաչատրյանի օրինական ներկայացուցիչ Թեհմինե Խաչատրյան v. Արմեն, Անահիտ Խաչատրյաններ, Քանաքեռավանի գյուղապետարան, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Եղվարդի տարածքային ստորաբաժանում, քաղ. գործ թիվ ԿԳ-03/0026/02/08 (շրջխորհրդի գործկոմի որոշումը, սեփականության իրավունքի պետական գրանցումը, գրանցման վկայականը մասնակիորեն անվավեր ճանաչելու և համասեփականատեր ճանաչելու պահանջներով և ըստ հակընդդեմ հայցի՝ բնակության իրավունքը դադարեցնելու և բնակելի տարածությունից վտարելու պահանջներով):

Էջ  
309-314

**Խնդիրը.** 1. Արդյո՞ք 16 տարին չլրացած քաղաքացիների գրանցման փաստը հաստատված համարելու համար պարտադիր է առանձին հաշվառման փաստաթղթի առկայությունը:

2. Արդյո՞ք ծնողներից յուրաքանչյուրի հետ ապրելու երեխայի իրավունքը պահպանվում է նույնիսկ այն դեպքում, երբ նրա խնամքը հանձնված է ծնողներից մեկին:

**ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց.** 1) Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ 16 տարին չլրացած քաղաքացիների գրանցումը հաստատված համարելու համար առանձին հաշվառման փաստաթղթի առկայությունը պարտադիր չէ, քանի որ այն պարտադիր կերպով կատարվում է իրենց ծնողի հաշվառման փաստաթղթերում գրառում կատարելու միջոցով:

2) Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ծնողներից յուրաքանչյուրի հետ ապրելու երեխայի իրավունքը պահպանվում է նույնիսկ այն դեպքում, երբ նրա խնամքը հանձնված է ծնողներից մեկին, այսինքն՝ անգամ ամուսնալուծված ծնողը պարտավոր է թույլատրել երեխային բնակվել իր կողմից զբաղեցրած բնակարանում (տես օրինակ՝ Նիկողոս Գաբաղյանն ընդդեմ Մարի, Նշան և Տաթևիկ Գաբաղյանների՝ բնակելի տնից վտարելու պահանջի մասին, ՀՀ վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի որոշումը, քաղաքացիական գործ թիվ 3-222(ՎԳ-)):

## Աշխատանքային իրավունք

### 23.05.2008թ.

54. Սուրեն Ակրտումյան v. «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ, քաղ. գործ թիվ 3-321/ՎԳ (աշխատանքային պայմանագրի մասը և ազատման հրամանը անվավեր ճանաչելու, աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդի գումարը բռնագանձելու պահանջներով):

Էջ  
315-318

**Խնդիրը.** 1. Արդյո՞ք կարող է կնքվել որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր՝ անկախ կատարվելիք աշխատանքի բնույթից կամ կատարման պայմաններից:

2. Որո՞նք են որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր կնքելու համար նախատեսված պայմանների բացակայությամբ կնքված պայմանագրի իրավական հետևանքները:

**ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց.** 1) Որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիրը հանդիսանում է **բացառություն ընդհանուր կանոնից**, այսինքն,

որպես կանոն, աշխատանքային հարաբերությունները պետք է կարգավորվեն անորոշ ժամկետով պայմանագրով և միայն բացառիկ դեպքերում է թույլատրելի որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագրի կնքումը: Այսինքն, որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր կարող է կնքվել միայն այն դեպքերում, երբ կատարվելիք աշխատանքը կամ կատարման պայմանները կրում է ոչ մշտական բնույթ կամ առկա են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված նախապայմանները:

2) Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ հիմքերի բացակայության պայմաններում կնքված պայմանագիրը առաջացնում է գործատուի կողմից աշխատողի աշխատանքային իրավունքների և երաշխիքների սահմանափակում, հետևաբար, նման պայմանագիրը պետք է համարվի անորոշ ժամկետով կնքված և դրա նկատմամբ պետք է կիրառվեն անորոշ ժամկետով պայմանագրի նկատմամբ կիրառելի նորմերը:

55. Մանյա Գալուստյան v. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ, քաղ. գործ թիվ 3-357/ՎԳ (կարգապահական տույժն անվավեր ճանաչելու, աշխատանքում վերականգնելու, հարկադիր պարապորդի ամբողջ ժամանակահատվածի և անաշխատունակության ողջ ժամանակաշրջանի համար վճարելու պահանջներով):

Էջ  
319-324

Խնդիրը. Արդյո՞ք գործատուի կողմից որպես կարգապահական տույժ աշխատողին խիստ նկատողություն հայտարարելը և միաժամանակ բացատրագիր պահանջելը կարող է դիտվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 121-րդ հոդվածի 3-րդ մասի և 226-րդ հոդվածի կանոնների պահպանում:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Գործատուն աշխատանքային կարգապահության խախտման մասին գրավոր բացատրությունը պետք է աշխատողից պահանջի *մինչև կարգապահական տույժի կիրառումը*, սահմանելով այդ բացատրությունը տալու համար ողջամիտ ժամկետ:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ գործատուն Մանյա Գալուստյանից աշխատանքային կարգապահության խախտման մասին գրավոր բացատրությունը պահանջել է 21.05.2007 թվականի թիվ 76/Կ հրամանով՝ կարգապահական տույժ կիրառելիս, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ընկերության կողմից չի պահպանել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 121-րդ հոդվածի 3-րդ մասի և 226-րդ հոդվածի ուժով կարգապահական պատասխանատվության կիրառման կանոնները:

**25.07.2008թ.**

56. Մուսաննա Կարապետյան v. «Գ-Տելեկոմ» ՓԲԸ, քաղ. գործ թիվ 3-456/ՎԳ (աշխատանքում վերականգնելու պահանջով):

Էջ  
325-328

Խնդիրը. Արդյո՞ք առանց փորձաշրջանի ընթացիկ արդյունքների ամփոփման աշխատանքային պայմանագիրը կարող է լուծվել:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 93-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ եթե գործատուն գտնում է, որ նախատեսված աշխատանքում աշխատողի համար սահմանված փորձաշրջանի ընթացիկ արդյունքներով աշխատողը չի համապատասխանում առաջադրված պահանջներին, ապա կարող է մինչև փորձաշրջանի ժամկետը լրանալը աշխատողին ազատել աշխատանքից **այդ մասին 3 օր առաջ գրավոր ձևով ծանուցելով նրան:**

Նույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ի մասի 5-րդ կետի համաձայն՝ գործատուն իրավունք ունի լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայ-

մանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը՝ փորձաշրջանի անբավարար արդյունքի պատճառով:

Վերոնշյալ հոդվածներից հետևում է, որ աշխատողին առաջադրված պահանջներին համապատասխանության հարցը որոշվում է փորձաշրջանի ընթացիկ արդյունքներով: Օրենքը չի սահմանում փորձաշրջանի ընթացիկ արդյունքների ամփոփման որևէ կարգ, պայման կամ չափանիշ: Այսինքն՝ յուրաքանչյուր գործատու ազատ է սահմանելու այն անհրաժեշտ գիտելիքները, ունակությունները և վարքը, որն աշխատողը պարտավոր է ունենալ համապատասխան պաշտոնը զբաղեցնելու համար:

Սինչեռ, սույն քաղաքացիական գործով Դատարանը հայցի բավարարման հիմքում դրել է այն հանգամանքը, որ աշխատանքային պայմանագիրը լուծվել է առանց փորձաշրջանի ընթացիկ արդյունքների ամփոփման՝ գնահատման առարկա չդարձնելով այն հանգամանքը, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքով փորձաշրջանի ընթացիկ արդյունքների ամփոփման հատուկ կարգ կամ չափանիշ նախատեսված չէ:

## **Դատավարական իրավունքի վերաբերյալ որոշումներ**

### **Դատարան դիմելու իրավունք**

**26.12.2008թ.**

57. «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ v. Սպարտակ, Էդգար, Էրիկ, Նավասարդ **Էջ 329-332**  
Սկրտչյաններ, Նաիրա Արուստամյան, քաղ. գործ թիվ 3-678/ՎԳ- (վարկային պայմանագրով պարտքը բռնագանձելու, բռնագանձումը գրավի առարկայի և այլ գույքի վրա տարածելու, վարկային պայմանագրով նախատեսված տոկոսները հաշվեգրելու պահանջներով):

**Խնդիրը.** Արդյո՞ք նյութական նորմով սահմանված արտադատական կարգով իրավունքի պաշտպանության լրացուցիչ եղանակի առկայությունը սահմանափակում է դատական պաշտպանության դիմելու իրավունքը:

**ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց.** Նույնիսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածով Ընկերությանն իր իրավունքների պաշտպանության լրացուցիչ եղանակ ընձեռելու պայմաններում վերջինս իր հայեցողությամբ է իրականացնում իր իրավունքների պաշտպանությունը: Ուստի նյութական իրավունքի որևէ նորմ (այդ թվում՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածը) չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ, իրավական այլ ակտերով և միջազգային պայմանագրերով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը սահմանափակող դրույթ:

### **Դատավորի ինքնաբացարկը**

**20.06.2008թ.**

58. Ջոն Սարգսյան v. Էդուարդ Սարգսյան, Կարինե Սարգսյան (ժառանգության ընդունման բաց թողնված ժամկետը հարգելի համարելու և ժառանգությունն **Էջ 333-338**  
ընդունած ժառանգ ճանաչելու պահանջներով), Կարինե Սարգսյան v. Էդուարդ Սարգսյան, քաղ. գործ թիվ 3-444/ՎԳ- (սեփականության իրավունքի վկայականն անվավեր ճանաչելու և ընդհանուր բաժնային սեփականության մեջ բաժինը որոշելու պահանջներով):

**Խնդիրը.** Արդյո՞ք նույն անձանց միջև քննված մեկ այլ քաղաքացիական գործին որպես դատավոր հանդես գալու հանագամանքն ինքնին բավարար է ինքնաբացարկի միջնորդությունը բավարարելու համար:

**ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց.** ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածում նշված հիմքերից քննարկման առարկա կարող է դառնալ միայն օրենսգրքի այն դրույթը, որը նախատեսում է, որ ինքնաբացարկի հիմք կարող է հանդիսանալ այն, որ դատավորը մասնակցել է տվյալ գործի քննությանը ստորին ատյանում՝ որպես դատավոր կամ գործին մասնակցող անձ: Նման դրույթն օրենսդրի կողմից դիտարկվել է ինքնաբացարկի հիմք այն պարզ պատճառաբանությամբ, որ ստորին ատյանում գործի քննությանը որպես դատավոր մասնակցած լինելու դեպքում դատավորը վերադաս դատական ատյանում ըստ էության վերանայում է իր իսկ կայացրած ակտի օրինականությունը: Մինչդեռ զուտ այն հանգամանքը, որ դատավորը մասնակցել է նույն անձանց միջև քննված մեկ այլ քաղաքացիական գործին որպես դատավոր, նրա անաչառության վերաբերյալ կասկածի և ինքնաբացարկը բավարարելու հիմք հանդիսանալ չի կարող: Բացի այդ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ինքնաբացարկի հիմք և դատավորի անաչառությունը կասկածի տակ դնող հանգամանք կարող է հանդիսանալ դատավորի ներքին կողմնակալ վերաբերմունքի հանգեցնող ցանկացած փաստ, որը կարող է ազդել թե՛ դատավորի կողմից գործը լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննելու և թե՛ գործի քննության արդյունքում դատավորի մոտ այնպիսի ներքին համոզմունքի ձևավորման վրա, որը չի բխում օրենսդրության նորմերից և գործում հետազոտված փաստերից, այլ հիմնվում է դրանցից դուրս գտնվող այլ հանգամանքի վրա:

### **Գործին մասնակցող անձինք**

#### **01.02.2008թ.**

59. «Գ-ավիթ առևտրի տուն» ՓԲԸ v. «Գ-վին կոնցեռն» ՓԲԸ, քաղ. գործ թիվ 3-59/ՏԳ (զումար բռնագանձելու պահանջով): Էջ  
339-343

**Խնդիրը.** Արդյո՞ք գործի քննությունը հետաձգելու վերաբերյալ միջնորդությունը դատարանի համար պարտադիր է գործի քննությունը հետաձգելու համար և արդյո՞ք գործի քննությունը հետաձգելու հիմքի առկայության դեպքում գործի քննությունը չհետաձգելը հանգեցնում է անձի արդար դատաքննության իրավունքի խախտմանը:

**ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց.** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի առաջին և երրորդ կետերով սահմանված է, որ գործին մասնակցող անձինք իրավունք ունեն ծանոթանալ գործի նյութերին, քաղվածքներ անել, ստանալ դրանց պատճենները, ինչպես նաև ներկայացնել ապացույցներ և մասնակցել դրանց հետազոտմանը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) քաղաքացիական իրավունքների և պարտականությունների առնչությամբ ծագած վեճերով արդար դատաքննության իրավունքի ապահովման տեսանկյունից իր նախադեպային իրավունքում առանձնացնում և պարզաբանում է այդ իրավունքի կարևոր բաղադրիչների՝ կողմերի հավասարության և մրցակցային դատավարության պահանջների էությունը: Այսպես, Եվրոպական դատարանը (Ռ-աֆիներիս Գրեկ Ստրան է Ստրատիս Անդրեստիսը ընդդեմ Հունաստանի, 09.12.1994) գործով նշել է, որ դատական քննության ընթացքում կողմերի հավասարությունը նշանակում է, որ դատավարության յուրաքանչյուր կողմի պետք է ընձեռվի պատշաճ հնարավորություն ներկայացնելու իր գործը (ներառյալ ապա-

ցույցները) այնպիսի պայմաններում, որոնք նրա համար մյուս կողմի համեմատությամբ չեն ստեղծի անբարենպաստ վիճակ:

Եվրոպական դատարանն իր պրակտիկայում արձանագրել է նաև, որ Կոնվենցիան կոչված է ապահովելու ոչ թե իրավունքի տեսական առկայությունը, այլ դրա պրակտիկ կիրառությունը և արդյունավետությունը (Իմբրիոսիան ընդդեմ Շվեյցարիայի, գործ N 13972/88, 24.11.1993 թվական):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատարանն իրավունք ունի հետաձգել գործի քննությունը, եթե դա թելադրված է լրացուցիչ ապացույցներ ներկայացնելու անհրաժեշտությամբ: Այս հիմքով դատարանի կողմից գործի քննությունը հետաձգելը դատարանի իրավունքն է և ոչ պարտականությունը, և դատարանն իր այդ իրավունքն իրականացնում է հայեցողական իրավագործությամբ՝ ելնելով կոնկրետ գործի հանգամանքներից (տես՝ ՀՀ ԿԱ ՀՊԾ ընդդեմ Արմեն Խուդինյանի, քաղաքացիական գործ թիվ 3-1822/ՏԳ (գումարի բռնագանձման պահանջով) ՀՀ վճռաբեկ դատարանի 26.10.2006 թվականի որոշումը):

Հաշվի առնելով Գատարանի կողմից բողոք բերած անձին ապացույցների ներկայացման և իրավական պաշտպանության կազմակերպման համար ողջամիտ ժամկետի տրամադրման անհրաժեշտությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով գործի քննությունը հետաձգելու անհրաժեշտությունն առկա էր:

Փաստորեն, մերժելով գործի քննությունը հետաձգելու վերաբերյալ բողոք բերած անձի միջնորդությունը, Գատարանը խախտել է վերջինիս՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի առաջին մասի 1-ին և 3-րդ կետերով երաշխավորված գործի նյութերին ծանոթանալու, քաղվածքներ անելու, դրանց պատճենները ստանալու, ապացույցներ ներկայացնելու և դրանց հետագոտմանը մասնակցելու իրավունքները, ինչպես նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը (տես օրինակ՝ ՀՀ ԿԱ ՀՊԾ v. Արմեն Խուդինյան, քաղ. գործ թիվ 3-1822/ՏԳ (գումարի բռնագանձման պահանջի մասին) ՀՀ վճռաբեկ դատարանի 26.10.2006թ. որոշումը):

*\* Միաժամանակ ՀՀ Վճռաբեկ դատարանը անդրադարձել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածով սահմանված հայցադիմումի պատասխանի ներկայացման համար սահմանված երկշաբաթյա ժամկետի՝ դատարանի կողմից ապահովման անհրաժեշտությանը:*

**26.09.2008թ.**

60. Այսա Մարկոսյան v. Համիկ Մարտիրոսյան, Հայկարամ Հակոբյան, քաղ. **Էջ 344-346**  
 գործ թիվ 3-470/ՎԳ (բնակարանից վտարելու պահանջով և ըստ հակընդդեմ հայցի՝ բնակարանի նվիրատվության պայմանագիրը, դրա հիման վրա կատարված իրավունքների պետական գրանցումն անվավեր ճանաչելու և որպես միակ փաստացի տիրապետող ժառանգի ժառանգության և սեփականության իրավունքները ճանաչելու պահանջներով):

**Խնդիրը.** Արդյո՞ք դատարանը իրավասու է իր նախաձեռնությամբ ոչ պատշաճ երրորդ անձին փոխարինել պատշաճ երրորդ անձով և արդյո՞ք պայմանագիրը վավերացրած նոտարին որպես երրորդ անձ գործի քննությանը մասնակից չդարձնելը վճռի բեկանման հիմք է:

**ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց.** Վերաքննիչ դատարանը Գատարանի վճռի բեկանման հիմքում ղեկելով այն հանգամանքը, որ գործին որպես երրորդ անձ է ներգրավվել ոչ այն նոտարը, որը վավերացրել է վեճի առարկա նվիրատվության

պայմանագիրը, կիրառել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածը:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոնշյալ հանգամանքը ՀՀ - քաղաքացիական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի կիրառման հիմք չէ, քանի որ նշված հոդվածը վերաբերում է միայն ոչ պատշաճ հայցվորին կամ պատասխանողին պատշաճ հայցվորով և պատասխանողով փոխարինելուն, այլ ոչ թե երրորդ անձին:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը արձանագրում է, որ նվիրատվության պայմանագիրը վավերացրած նոտարին գործի քննությանը մասնակից չդարձնելը Դատարանի վճիռը բեկանելու հիմք չէ, քանի որ այդ հանգամանքը չէր կարող հանգեցնել սույն քաղաքացիական գործի սխալ լուծմանը: Մասնավորապես, սույն քաղաքացիական գործով վիճարկվում է ոչ թե վեճի առարկա նվիրատվության պայմանագրի կնքման պահին նվիրատու Շենգավիթի թաղապետարանի մոտ համապատասխան լիազորությունների առկայության կամ բացակայության հարցը, այլ վերջինիս սեփականության իրավունքը:

61. Լ.Գաբոյան v. Գ.յունրու քաղաքապետարան, երրորդ անձինք՝ Գ.Եզան-Էջյան, Գ.Բակմազյան, Վ.Գասպարյան, Ա.Համբարձումյան, Ռ.Գասպարյան, Գ.-Համբարյան, Կ.Եղիկյան, քաղ. գործ թիվ 3-650/ՎԳ (սեփականության իրավունքի իրականացման խոչընդոտները վերացնելու և այդպիսի խոչընդոտներ առաջացնող որոշումներն անվավեր ճանաչելու պահանջով և ըստ հակընդդեմ հայցի՝ սեփականության իրավունքով պատկանող շինության քանդման թույլտվություն և ճարտարապետահատակագծային առաջադրանք ստանալու համար քաղաքապետարան դիմելուն պարտավորեցնելու պահանջներով): **Էջ 347-350**

Խնդիրը. Արդյո՞ք սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գլխավոր տնօրենի կողմից հայց ներկայացվելու դեպքում նա համարվում է պատշաճ հայցվոր:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Վերաքննիչ դատարանը, հայցը մերժելիս, պատճառաբանել է, որ տվյալ պարագայում սկզբնական հայցի մասով պատշաճ հայցվոր կարող էր հանդիսանալ «Առևտրի կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, այլ ոչ թե վերջինիս տնօրեն Լյովա Գաբոյանը: Նշվածի հիման վրա, Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ Լ.Գաբոյանի կողմից չի ներկայացվել իր իրավունքի խախտման վերաբերյալ որևէ ապացույց:

Մինչդեռ, «Մահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի համաձայն՝ ընկերության գլխավոր տնօրենը համարվում է ընկերության գործադիր մարմին: Նույն հոդվածի 3-րդ մասի «ա» կետի համաձայն՝ ընկերության գործադիր մարմինն առանց լիազորագրի գործում է ընկերության անունից, այդ թվում՝ ներկայացնում է նրա շահերը և կնքում գործարքներ:

Վերոգրյալից բխում է, որ Լ.Գաբոյանը, լինելով Ընկերության գլխավոր տնօրեն, կարող է ներկայացնել Ընկերության շահերն՝ առանց լիազորագրի: Հետևաբար, հիմնավոր չէ Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությունը, որ պատշաճ հայցվոր կարող էր լինել Ընկերությունը, այլ ոչ թե տնօրեն Լ.Գաբոյանը:

## **Ապացույցներ և ապացուցում**

**29.02.2008թ.**

62. «Մաքնե» ՍՊԸ v. Աշոտ և Հենրիկ Այվազյաններ, քաղ. գործ թիվ 3-93/ՎԳ (հողի վարձակալության իրավունքի առուվաճառքի պայմանագիրը լուծելու և վարձակալության իրավունքը վերադարձնել պարտավորեցնելու պահանջներով): **Էջ 351-355**

**Խնդիրը.** Արդյո՞ք նախկինում քննված քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված ցանկացած հանգամանք ՀՀ - քաղաքացիական օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով ունի նախադատելի նշանակություն քննվող այլ գործի համար, նույնիսկ եթե այդ հաստատված հանգամանքը վերաբերելի չէ նախկինում քննված քաղաքացիական գործով հայցի առարկային (չի դասվում հաստատման ենթակա հանգամանքների շարքին):

**ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց.** Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոհիշյալ իրավական հարցադրմանը պետք է պատասխանել նախադատելիության կամ պրեյուդիցիայի (լատիներեն *praesudicialis*-ից) դատավարական ինստիտուտի, դատական ակտերի պրեյուդիցիալ կապի և նման կապի օբյեկտիվ սահմանների վերլուծության լույսի ներքո: Այսպես՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վեճի լուծման պահին գործող խմբագրությամբ 52-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նախկինում քննված քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքները դատարանում այլ գործ քննելիս կրկին չեն ապացուցվում: Այսինքն, օրինական ուժի մեջ մտած սկզբնական դատական ակտի նախադատելիությունը պայմանավորում է նոր կայացվելիք դատական ակտի բովանդակությունն այն մասով, որը վերաբերում է նախկինում քննված այլ գործով արդեն իսկ հաստատված հանգամանքներին: Գործին մասնակցող անձանց համար նախադատելիությունը նշանակում է որոշակի սահմաններում ապացուցման պարտականությունից ազատում, ինչպես նաև կրկնակի ապացուցման կամ նման հանգամանքները հետագա դատավարություններում հերքելու արգելք: Նախադատելիությունը դատարանի համար ենթադրում է պարտականություն ներմուծելու նման հանգամանքը նոր կայացվող դատական ակտում: Որպես կանոն դատական ակտերի պրեյուդիցիալ կապը ենթադրում է դատական ակտի նախադատելիության տարածում ամբողջ ծավալով թե գործին մասնակցող անձանց, թե դատարանի վրա (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մաս): Հետևաբար, նախադատելիությունը օրենքի ուժով միանշանակ կանխորոշիչ դերակատարություն է ունենում նոր դատական ակտի համար, իսկ գործին մասնակցող անձանց կամքը և դատական հայեցողությունն այս հարցում ազդեցություն չունեն: Սակայն դատական ակտի նախադատելիության օբյեկտիվ սահմանները և դրանցից դուրս գալու հնարավորությունը ստեղծում է որոշակի իրավիճակներ, երբ պրեյուդիցիալ կապը դառնում է չկանխորոշող և կախված է լինում գործին մասնակցող անձանց կամքից և դատական հայեցողությունից: Գատական ակտի պրեյուդիցիալ կապի կամ նախադատելիության օբյեկտիվ սահմանները որոշվում են հանգամանքների այն շրջանակով, որոնք պետք է հաստատված լինեն օրինական ուժի մեջ մտած դատական ակտով և ենթակա չեն կրկին ապացուցման կամ հերքման այլ գործ քննելիս:

**23.04.2008թ.**

63. Օֆելյա Պետրոսյան v. Գևորգ Անտոնյան, Երևանի քաղաքապետարան, ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Նոր Նորքի ՏՄ, քաղ. գործ թիվ 3-168/ՎԴ (սեփականության իրավունքի խախտումները վերացնելու, քաղաքապետի որոշումն անվավեր ճանաչելու, անհատապես որոշվող գույքն ապօրինի տիրապետումից հետ վերադարձնելու և պատճառված վնասը հատուցելու պահանջներով):

Էջ  
356-362

**Խնդիրը.** Արդյո՞ք գործին մասնակցող անձի նախաձեռնությամբ անցկացված փորձաքննությամբ տրված եզրակացությունը կարող է համարվել անթույլատրելի:

**ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց.** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսվում է գործի քննության ժամանակ ծագող հատուկ գիտելիքներ պարունակող հարցերի պարզաբանման նպատակով դատա-

րանի կողմից փորձաքննություն նշանակելու հնարավորություն: Մինչդեռ որևէ հողվածով նախատեսված չէ դատավարության մասնակցի նախաձեռնությամբ անցկացված փորձաքննության անթույլատրելիությունը:

**25.07.2008թ.**

64. «Գլխի Գրուպ» ՍՊԸ v. Արշակ Աբրահամյան և Աստղիկ Սիմոնյան, քաղ. **Էջ 363-366**  
գործ թիվ 3-459/ՎԳ (վարձակալության պայմանագիրը, վարձակալության իրավունքի պետական գրանցումը մասնակի անվավեր ճանաչելու և հողամասի նկատմամբ վարձակալության իրավունքը ճանաչելու պահանջներով):

**Խնդիրը.** Արդյո՞ք գործի քննության ընթացքում նշանակված փորձաքննությանը անհրաժեշտ փաստաթղթերի բացակայության պատճառով անկատար մնալու (մնան միջնորդության ներկայացրած կողմը չի ներկայացնում նախորդ փորձաքննության համար անհրաժեշտ փաստաթղթերը) պայմաններում կրկին փորձաքննություն նշանակելը հակասում է արդարադատության արդյունավետության շահերին:

**ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց.** Դատարանում սույն քաղաքացիական գործի քննության ընթացքում նշանակված փորձաքննության իրականացումը մեկ անգամ արդեն իսկ անկատար է մնացել ներկայացված հարցերին պատասխանելու համար Ընկերության կողմից տրամադրման ենթակա փաստաթղթերի բացակայության պատճառով, իսկ նոր փորձաքննություն նշանակելու միջնորդության ներկայացման ժամանակ Ընկերությունը չի ներկայացրել նախորդ փորձաքննության արդյունքներով անհրաժեշտ համարված փաստաթղթերը: Հետևաբար, վճռաբեկ դատարանը գտնում է, որ փորձաքննության կատարման համար պահանջվող փաստաթղթերի բացակայության պայմաններում կրկին անգամ փորձաքննության անցկացումը անհարկի կձգձգեր գործի քննությունը՝ հակասելով արդարադատության արդյունավետության շահերին:

*\* Միաժամանակ չՀ վճռաբեկ դատարանը անդրադարձել է դատական հայեցողության իրավունքով դատարանի նախաձեռնությամբ փորձաքննություն նշանակելու իրավասության հարցին՝ կրկնելով նախկինում կայացրած որոշմամբ արտահայտած դիրքորոշումը (տե՛ս՝ Ռազմիկ Մարգարյան և Լիդա Սևոյան v. Ռաֆիկ Հախվերդյան, քաղ. գործ թիվ 3-259 (ՎԳ) (առուվաճառքի պայմանագիրը լուծելու պահանջով) ՀՀ վճռաբեկ դատարանի 02.03.2007 թվականի որոշումը):*

**26.09.2008թ.**

65. Զինա Ալբերտյան v. «Բալենի» արտադրական կոոպերատիվ, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Էրեբունի տարածքային ստորաբաժանում, քաղ. գործ թիվ 3-495/ՎԳ (սեփականության իրավունքի գրանցումը մասնակի անվավեր ճանաչելու, շենքի կրող կոնստրուկցիա հիմնապատը վերականգնելու, դեպի նկուղ աջակողմյան աստիճանավանդակի (լուսամուտի տակի) մուտքը փակելու, սեփականատիրոջ իրավունքների իրականացման խոչնդոտները վերացնելու պահանջներով և ըստ հակընդդեմ հայցի՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքը և շինարարության թույլտվությունը անվավեր ճանաչելու պահանջներով):

**Խնդիրը.** 1. Արդյո՞ք ՀՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչության մասնագիտական եզրակացությունը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի իմաստով համարվում է գրավոր ապացույց:

2. Արդյո՞ք բնակարանի նպատակային նշանակության փոփոխումը **ոչ բնակելի տարածքի**, բավարար հիմք է դրա՝ **առևտրային նպատակ** ունենալու փաստը հաստատված համարելու համար:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. 1) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ և 54-րդ հոդվածներից հետևում է, որ գրավոր ապացույցներ կարող են հանդիսանալ համապատասխան քաղաքացիական գործով ապացուցման առարկան կազմող հանգամանքները բացահայտող տեղեկատվություն պարունակող ցանկացած փաստաթուղթ, եթե հնարավոր է հաստատել դրա խկությունը:

Մասնավորապես, ՀՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչության եզրակացությամբ հաստատվում է Ջինա Ալբերտյանի կողմից իրականացվող շինարարական աշխատանքներով Կոոպերատիվի սեփականության իրավունքի խախտման փաստը, որը հանդիսանում է սույն քաղաքացիական գործի համար էական նշանակություն ունեցող հանգամանք:

2) «Բազմաբնակարան շենքերի կառավարման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ շինության սեփականատերն իրավունք ունի առանց մյուս սեփականատերերի համաձայնության, **ոչ առևտրային նպատակներով**, իր շինության պատերից բացել կամ փակել պատուհաններ, դռներ, մուտքեր, ծխնելույզներ, պատերի այլ բացվածքներ, աստիճանավանդակներ, աստիճաններ, իր շինության ներքին կամ արտաքին պատերի վրա կամ դրանց կից իրականացնել այլ քաղաքաշինական գործունեություն (ներառյալ այն դեպքերը, երբ այդ պատերն ամբողջությամբ կամ մասնակիորեն հանդիսանում են ընդհանուր բաժնային սեփականություն):

Դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Սույն քաղաքացիական գործով, Ջինա Ալբերտյանին պակասող բնակարանի նպատակային նշանակության փոփոխումը ոչ բնակելի տարածքի, բավարար հիմք չէ դրա՝ **առևտրային նպատակ** ունենալու փաստը հաստատված համարելու համար:

**31.10.2008թ.**

66. Գ-յումբու քաղաքապետարան *v.* «Չապ» ՍՊԸ (սեփականատիրոջ իրավունքների խախտումները վերացնելու պահանջով), «Չապ» ՍՊԸ *v.* Գ-յումբու քաղաքապետարան, քաղ. գործ թիվ 0351/02/08-(ՇԳ) (հարկադիր սերվիտուտ սահմանելու պահանջով):

Էջ  
371-374

Խնդիրը. Արդյո՞ք դատարանը, մերժելով կողմի՝ փորձաքննություն նշանակելու, գործի քննությունը հետաձգելու մասին միջնորդությունները կարող է խախտել կողմերի իրավահավասարության և մրցակցության սկզբունքները:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Դատարանի գործի քննության հետաձգման հայեցողական իրավունքը, կարող է իրականացվել, եթե դա թելադրված է լրացուցիչ ապացույցներ ներկայացնելու անհրաժեշտությամբ: Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է այս կամ այն հայեցողական լիազորությունն իրականացնելու դատարանի իրավունքին:

Սույն գործի փաստերի համադրությամբ արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերության 25.02.2008 թվականի դատատեխնիկական-շինարարական փորձաքննություն նշանակելու մասին, 26.02.2008 թվականի գործի քննությունը հետաձգելու մասին միջնորդությունները Դատարանի կողմից մերժվելիս Ընկերությունը զրկվել է իր գործը Դատարանին արդյունավետ ներկայացնելու հնարավորությունից, որով խախտվել են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածով երաշ-

խավորված կողմերի իրավահավասարության և մրցակցության հիմնարար սկզբունքները (տե՛ս օրինակ՝ Ալբերտ Հակոբյանն ընդդեմ «Դավիթ Երթուղային Տաքսի» ՓԲԸ-ի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին թիվ 3-346(ՏԴ) Վճռաբեկ դատարանի 18.05.2007 թվականի որոշումը):

**26.12.2008թ.**

67. Արթուր Հունանյան *vs.* ՀՀ ԱՆ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևանի ստորաբաժանման հարկադիր կատարող և «Առեքսիմբանկ» ՓԲԸ, քաղ. գործ թիվ 3-710/ՎԴ (ավագ հարկադիր կատարողի որոշումն անվավեր ճանաչելու պահանջով): Էջ 375-378

**Խնդիրը.** Արդյո՞ք գործի քննության ավարտից հետո մեկ այլ գործով դատական ակտի կայացման հանգամանքը կարող է դիտվել այդ ակտը նախորդ դատական քննությանը չներկայացնելու հարգելի պատճառ և հիմք հանդիսանալ բողոքարկվող դատական ակտը բեկանելու համար:

**ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց.** Սույն գործի վերաքննության փուլում Ընկերության կողմից ներկայացվել է Վճռաբեկ դատարանի 26.05.2005թ. թիվ 3-337 (ՎԴ) որոշումը, որը թե հայցվորը և թե պատասխանողը հնարավորություն չեն ունեցել ներկայացնելու ստորադաս դատարան, քանի որ այն Վճռաբեկ դատարանի կողմից հրապարակվել է սույն գործի՝ առաջին ատյանի դատարանում դատաքննության ավարտից հետո: Բացի այդ, վերոնշյալ դատական ակտն էական նշանակություն ունի գործի քննության համար, քանի որ դրանով հաստատվել է կողմերի հաշտության համաձայնությունը:

Այսպիսով, սույն գործի փաստերից հետևում է, որ Վճռաբեկ դատարանի 26.05.2005թ. թիվ 3-337 (ՎԴ) որոշումն առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ չի ներկայացվել կողմերի կամքից անկախ հանգամանքներով, և նշված ապացույցն էական նշանակություն ունի գործի լուծման համար: Հետևաբար, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի հիմքով, պետք է բեկաներ Աջափնյակ և Դավթաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 19.01.2005 թվականի թիվ 2-203 վճիռը և գործն ուղարկեր ստորադաս դատարան՝ նոր քննության:

**Դատական ծախսեր**

**28.11.2008թ.**

68. Արմենակ և Գուլյա Սահակյաններ *vs.* ՀՀ կենտրոնական բանկ, քաղ. գործ Էջ 379-382  
թիվ 3-734/ՎԴ (նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված ավանդի գումարը փոխհատուցելու պահանջով):

**Խնդիրը.** Դատավարական ո՞ր սկզբունքն է խախտվում, երբ պետական տուրքի վճարումից ազատելու միջնորդության առկայության դեպքում դատարանը որոշում է կայացնում պետական տուրքի վճարման հետաձգման մասին:

**ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց.** Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, **ըստ էության, առանց որևէ իրավական հիմքի**, այն է՝ առանց «Պետական տուրքի վճարումը տարածամեկտեղի մասին» միջնորդության առկայության, Արմենակ և Գուլյա Սահակյանների՝ **«Պետական տուրքի վճարումից ազատելու մասին»** միջնորդությունը դիտել է որպես **«Պետական տուրքի վճարումը տարածամեկտեղի մասին»** միջնորդություն և Արմենակ ու Գուլյա Սահակ-

յաններին պետական տուրքի վճարումից ազատելու փոխարեն տարածամկետել է պետական տուրքի վճարումը, որով և խախտել է գործին մասնակցող անձանց դատավարական իրավունքների իրականացման տնօրինչականության սկզբունքը:

**Դատական ծանուցումներ**

**01.02.2008թ.**

69. «Ուրարտու» արտադրական միավորում մսի կոմբինատ ԲԲԸ-ի բաժնետեր Ռազմիկ Դարբինյան, Վրեժ Հարությունյան և Ընկերություն v. ՀՀ ԿԱ ՊԳԿ վարչություն, Վարդիթեր Եզրագարյան և ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ «Մարաշ» ՏՍ, քաղ. գործ թիվ 3-57/ՎԴ (աճուրդը, ինչպես նաև առուվաճառքի պայմանագիրը և դրա հիման վրա կատարված իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու, խանութի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու և վերը նշված անշարժ գույքը ապօրինի տիրապետումից հետ պահանջելու պահանջներով):

Էջ  
383-387

**Խնդիրը.** Գործին մասնակցող անձանց ո՞ր իրավունքներն են խախտվում, երբ դատարանը նրանց պատշաճ ձևով չի ծանուցում դատական նիստի ժամանակի և վայրի մասին և գործը քննում է նրանց բացակայությամբ:

**ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց.** Մույն գործի փաստերի համաձայն՝ Վերաքննիչ դատարանը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ - հոդվածի պահանջներին համապատասխան, Ալիսա Շիրինյանին պատշաճ ձևով չի տեղեկացրել դատական նիստի ժամանակի և վայրի մասին, գործը քննել է նրա բացակայությամբ ու վճիռ կայացրել: Քաղաքացիական գործում առկա չէ 29.11.2007 թվականի դատական նիստի ժամանակի և վայրի մասին Ալիսա Շիրինյանին ուղարկված դատական ծանուցագիր, կամ վերջինիս պատշաճ ծանուցելու վերաբերյալ որևէ այլ ապացույց:

Վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում անդրադարձել և գնահատման առարկա է դարձրել այն դեպքերը, երբ դատարանը գործը քննել է գործին մասնակցող անձանցից որևէ մեկի բացակայությամբ: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, արձանագրել է կողմերի իրավահավասարության և մրցակցության դատավարական սկզբունքների խախտում և, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի 2-րդ - մասի 2-րդ կետով, բեկանել է դատական ակտը (տե ս օրինակ՝ Շենգալիթի թաղապետարանն ընդդեմ Ալվինա և Լիանա Կազկոներ, Արամ, Ֆրունզ և Նարեկ Մարկոսյաններ, 21.12.2006թ., քաղաքացիական գործ թիվ 3-2236/Ա (բնակելի տարածության օգտագործման իրավունքը փոխհատուցմամբ դադարեցնելու պահանջով)):

70. Ծովինար և Տիգրան Աղամյաններ v. Ռոբերտ Խաչատրյան, քաղ. գործ թիվ 3-21/Ա (իրավահաջորդներ ճանաչելու և գումար բռնագանձելու պահանջներով):

Էջ  
388-389

**Խնդիրը.** Ու՞մ կողմից ստորագրված ծանուցագրով կարող է հաստատվել գործին մասնակցող անձին դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ ձևով ծանուցելու փաստը:

**ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց.** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող անձինք դատական ծանուցագրերով տեղեկացվում են դատական նիստի կամ առանձին դատավարական գործողություններ կատարելու ժամանակի և վայրի մասին, իսկ 2-րդ մասի համաձայն՝ ծանուցագիրն ուղարկվում է պատվիրված նամակով՝

հանձնման մասին ծանուցմամբ կամ հաղորդագրության ձևակերպումն ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ կամ հանձնվում է ստացականով: Սա ենթադրում է գործին մասնակցող անձանց դատական նիստի ժամանակի և վայրի մասին իրազեկելու կապակցությամբ դատարանի ակտիվ գործողություններ, որոնք պետք է իրականացվեն միայն վկայակոչված հոդվածով նախատեսված միջոցների և եղանակների օգտագործմամբ: Ընդ որում, անկախ ծանուցման եղանակից, ծանուցումը պետք է լինի այնպիսին, որով հնարավոր է ապացուցել գործին մասնակցող անձին (անձանց) դատական նիստի մասին տեղեկացնելու փաստը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Դատարանը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, Ռոբերտ Խաչատրյանին պատշաճ ձևով տեղեկացրել է 29.08.2007 թվականի դատական նիստի ժամանակի և վայրի մասին, որն էլ հաստատվում է գործում առկա ծանուցագրի վրա առկա Ռոբերտ Խաչատրյանի ստորագրությամբ:

### **Հայցի հարուցում**

**29.02.2008թ.**

71. Կարինե Մարգարյան v. ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Կենտրոն ՏՍ, «ԱՎՈ Ֆ.Մ.Հ.» ՍՊԸ, «Երևանի կառուցապատման ներդրումային ԾԻԳ» ՊՈԱԿ, Ռուզաննա Մանիջոյան, քաղ. գործ թիվ 3-124/ՎԴ (անշարժ գույքը պետական կարիքների համար վերցնելու և դրա դիմաց փոխհատուցման գումար վճարելու մասին պայմանագիրը փոփոխելու և պակաս վճարված փոխհատուցման գումարը վճարելուն պարտավորեցնելու պահանջներով):

Էջ  
390-393

**Խնդիրը.** Արդյո՞ք ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ - հոդվածի 2-րդ կետի կիրառմամբ դատարանը կարող է դուրս գալ հայցապահանջի շրջանակից:

**ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց.** Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով դատարանը պետք է անդրադառնար և գնահատման առարկա դարձներ հետևյալ հարցադրումը. Արդյո՞ք դադարել է Ռուզաննա Մանիջոյանի սեփականության իրավունքը Երևանի Նալբանդյան փողոցի 5-րդ տան թիվ 1 բնակարանի նկատմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նախկինում քննված քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքները դատարանում այլ գործ քննելիս կրկին չեն ապացուցվում:

Սույն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանը հայցի բավարարման հիմքում դրել է ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ մտած 14.04.2006 թվականի վճռով հաստատված հանգամանքն այն մասին, որ թիվ 1012861 սեփականության իրավունքի գրանցման վկայականում Առաքել Մամվել, Ռուզաննա և Համլետ Մանիջոյանների անունների գրանցումը հիմնավոր չէ:

Սինչեռ Վերաքննիչ դատարանը անտեսել է այն հանգամանքը, որ թե Վերաքննիչ դատարանի վերոնշյալ վճռով և թե սույն քաղաքացիական գործով Երևանի Նալբանդյան փողոցի 5-րդ տան թիվ 1 բնակարանի նկատմամբ Ռուզաննա Մանիջոյանի սեփականության իրավունքի գրանցումն անվավեր ճանաչելու վերաբերյալ պահանջ չի ներկայացվել, հետևաբար Վերաքննիչ դատարանը կիրառելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածը դուրս է եկել հայցապահանջի շրջանակներից:

Հիմք ընդունելով վերոնշյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածը կիրառելի չէ, իսկ հայցապահանջի բավարարումը անհիմն՝ Երևանի Նալբանդյան փողոցի 5-րդ տան թիվ 1 բնակարանի նկատմամբ Ռուզաննա Մանիջոյանի սեփականության իրավունքը դադարած լինելը ապացուցված չլինելու պայմաններում:

*\* Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը անդրադարձել է գործի վերաքննության ժամանակ 23.11.2007 թվականի դրությամբ գործող խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 31-րդ և 215-րդ հոդվածների կիրառման հարցին:*

**28.11.2008թ.**

72. Հրիտա Հակոբյան v. Հենրիկ Հովհաննեսի և Սյուզաննա Հովհաննեսի Հարությունյաններ, «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար, քաղ. գործ թիվ ԵԷԴ-0272/02/08 (ժառանգության իրավունքի վկայագրերն անվավեր ճանաչելու, փաստացի տիրապետման ուժով ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու և կտակով ու փաստացի տիրապետման ուժով ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջներով):

Էջ  
394-397

**Խնդիրը.** Արդյո՞ք դատարանը կաշկանդված է հայցադիմումի պատասխաններ կայացնելու երկշաբաթյա ժամկետով և պարտավոր է դատական նիստ նշանակել այդ ժամկետի ավարտից հետո:

**ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց.** Վճռաբեկ դատարանը գտնում է, որ թեև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածով հայցադիմումի վերաբերյալ պատասխաններ կայացնելը պատասխանողի դատավարական պարտականությունն է, սակայն միաժամանակ դա վերջինիս դատավարական իրավունքն է, քանի որ դատավարական այդ ինստիտուտը պատասխանողի դատավարական պաշտպանության եղանակներից մեկն է: Ավելին, նույն հոդվածով սահմանված դրույթն անձին իրավունք է վերապահում ներկայացնել հիմնավորված միջնորդություն՝ մինչև երկու շաբաթ տևողությամբ լրացուցիչ ժամկետ խնդրելու վերաբերյալ: Սա ևս հիմնավորում է այն եզրակացությունը, որ դատարանը պարտավոր է դատական նիստ նշանակել ոչ շուտ, քան այդ երկշաբաթյա ժամկետի լրանալը (տե՛ս օրինակ՝ «Դավիթ առևտրի տուն» ՓԲԸ-ի ընդդեմ «ԴՎին կոնցեռն» ՓԲԸ՝ 26.031.400 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ 3-59(ՏԴ) գործով 01.02.2008 թվականի որոշումը):

**Դատարանի վճիռը**

73. Միխայիլ Լատիշևիչ v. Օնիկ Հունանյան, քաղ. գործ թիվ 3-130/Ա (գումար բռնագանձելու պահանջով):

Էջ  
398-401

**Խնդիրը.** Ինչպիսի՞ տարրեր է իր մեջ ներառում դատական ակտի իրավական հիմնավորվածությունը:

**ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց.** Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին (տե՛ս օրինակ՝ «Բնար-88» ՍՊԸ ընդդեմ ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության, 21.12.2006թ. Քաղ. գործ թիվ 3-2504/ՏԴ/ՏԴ, (գումար բռնագանձելու պահանջով)): Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ վճռի թե՛ փաստական, և թե՛ իրավական հիմնավորումը: Ըստ Վճռաբեկ դատարանի վերոհիշյալ որոշման, վճռի իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ նյութական իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կի-

րառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանն եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Վճռում ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Վճռի իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա վճռի իրավակիրառ գործառույթը, ընդգծում դատական գործունեության և դատական վճռի օրինակալությունը:

Սինչդեռ, Դատարանի վճռում նշված չեն և ոչ մի օրենք կամ այլ իրավական ակտ, որոնցով ղեկավարվել է դատարանը վեճը լուծելիս:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ Դատարանի վճիռը գուրկ է իրավական հիմնավորումից, և այս առումով այն չի կարող լինել օրինական, համոզիչ, ինչպես նաև հեղինակավոր:

**29.02.2008թ.**

74. Լևոն Ոսկանյան v. Կոլյա և Գրիգոր Անտոնյաններ, քաղ. գործ թիվ 3-33/ՎԳ (երկաթյա դուռը քանդելու՝ մուտքն ազատելու պահանջով և հակընդդեմ հայցով՝ մուտքի նկատմամբ օգտագործման կարգ սահմանելու և իրենց անհատույց օգտագործման իրավունքը 55քմ մակերեսով հողամասի նկատմամբ ճանաչելու պահանջներով): Էջ  
402-405

Խնդիրը. Դատական ակտի ինչպիսի՞ հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Սույն քաղաքացիական գործի քննության ժամանակ գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 218-րդ հոդվածից հետևում է, որ դատարանը պետք է նշեր ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և արդյունքում վճիռ կայացնելիս, այլև պետք է պատճառաբաներ, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին (տե՛ս Անժելա Ղազարյանը, Արփիկ և Արմինե Գասպարյաններն ընդդեմ Շուշանիկ Սարգսյանի, Ոսկեհատ, Նունե, Հրանուշ Գասպարյանների՝ ժառանգական գույքը ժառանգների միջև բաժանելու պահանջի մասին, ՀՀ վճռաբեկ դատարանի 12.12.2007 թվականի որոշում, քաղաքացիական գործ թիվ 3-1843(ՎԳ-)):

### **Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման գործերի վարույթ**

**23.05.2008թ.**

75. Նատալյա Թամրազյանի դիմումը, քաղ. գործ թիվ 3-317/ՎԳ (գույքը տի-րագուրկ ճանաչելու և ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու պահանջով): Էջ  
406-408

Խնդիրը. Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման մասին դիմումի քննության ընթացքում ո՞ր դեպքերը կարող են դատարանի կողմից գնահատվել որպես իրավունքի վերաբերյալ վեճ:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման մասին հատուկ վարույթի կարգով քննվող գործերն այն գործերն են, որտեղ պետք է բացակայի նյութաիրավական վեճը: Հատուկ վարույ-

թի հիմնական տարբերությունը հայցային վարույթից կայանում է հենց իրավունքի մասին վեճի բացակայության մեջ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ յուրաքանչյուր դեպքում **իրավունքի վերաբերյալ վեճի առկայությունն ստուգելիս** դատարանը պարտավոր է պարզել, թե արդյո՞ք գործի փաստերից ելնելով առերևույթ առկա է փոխադարձ կապ քննարկվող փաստի և այլ անձի իրավունքների միջև, և արդյո՞ք նման փաստի հաստատումը կարող է որևէ կերպ ազդել այլ անձի իրավունքների ծավալի վրա:

Նման կապի, ինչպես նաև այդ փաստի և այլ անձի իրավունքների ծավալի փոփոխության միջև պատճառահետևանքային կապի բացակայության դեպքում իրավունքի մասին վեճի վերաբերյալ հայտարարությունն ինքնին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի իմաստով հայցն առանց քննության թողնելու հիմք չէ:

Դատարանը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում վեճի առկայության կամ բացակայության հարցը պետք է պարզի՝ ելնելով տվյալ գործի փաստերից, ինչպես նաև օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջներից (տե՛ս օրինակ՝ «Ֆիրմա ՄՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության դիմումը՝ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին ՀՀ վճռաբեկ դատարանի՝ թիվ 3-445(Ա) գործով 02.03.2007 թվականի որոշումը):

### Վարույթը վճռաբեկ դատարանում

**26.12.2008թ.**

76. Միքայել Մեժլումյան v. Ռուդոլֆ, Անդրանիկ, Սահակ, Հրաչիկ Վարդանյաններ Գուրգեն Ասատրյան և Անահիտ Անտոնյան, երրորդ անձ Գայանե Գալոյան (հողամասի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու առանձնացնելու պահանջներով), Անահիտ Անտոնյան v. Ռուդոլֆ, Հրաչիկ Վարդանյաններ և Միքայել Մեժլումյան, երրորդ անձ՝ Գայանե Գալոյան (բաժինն առանձնացնելու և սեփականության իրավունքի խախտումը վերացնելու պահանջով և ըստ հակընդդեմ հայցի՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը, սեփականության իրավունքի վկայականները մասնակի անվավեր ճանաչելու և համասեփականատեր ճանաչելու պահանջներով), անհատ ձեռնարկատեր Հրաչիկ Վարդանյանի սնանկության գործով կառավարիչ Արամ Կարապետյան v. Ռուդոլֆ, Անդրանիկ, Սահակ Վարդանյաններ, Միքայել Մեժլումյան, Գայանե Գալոյան, Անահիտ Անտոնյան, քաղ. գործ թիվ 3-590/ՎԳ (բաժինն առանձնացնելու և տունը հրապարակային սակարկություններով վաճառելու պահանջներով):

Էջ  
409-412

**Խնդիրը.** Արդյո՞ք առաջին ատյանի դատարանում գործն ըստ էության լուծված չլինելու պայմաններում վճռաբեկ դատարանը քննում է նյութական իրավունքի վերաբերյալ վճռաբեկ բողոքի պատճառաբանությունները:

**ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց.** Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր է Վերաքննիչ դատարանի եզրահանգումն այն մասին, որ Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը չհետազոտելով և գնահատման առարկա չդարձնելով գործում առկա մի շարք ապացույցներ, չի լուծել Անահիտ Անտոնյանի և Միքայել Մեժլումյանի միջև առկա վեճը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը բողոքը համարում է անհիմն, քանի որ Վերաքննիչ դատարանը, արձանագրելով Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի կողմից թույլ տրված դատավարական իրավունքի նորմերի խախտումները, ՀՀ քաղաքացիական դատավարության օ-

րենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված լիազորությունների շրջանակներում գործն ուղարկել է նոր քննության:

Հետևաբար առաջին ատյանի դատարանում գործն ըստ էության լուծված չի ներկայացվում պայմաններում Վճռաբեկ դատարանը քննարկման առարկա չի դարձնում նյութական իրավունքի նորմերի խախտման վերաբերյալ բողոքի պատճառաբանությունները:

### **Կատարողական վարույթ**

#### **29.02.2008թ.**

77. Վասիլ Նիկողոսյան v. ՀՀ ԱՆ ԳԱՀԿ ծառայության Կոտայքի մարզային Էջ քաժմի Եղվարդի բաժանմունք, երրորդ անձ՝ Ալվարդ Դուկեյան, քաղ. գործ թիվ 3- 413-416 114/ՎԳ (դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության անգործությունը վիճարկելու պահանջով):

**Խնդիրը.** Արդյո՞ք կատարողական վարույթի ընթացքում պարտականության կատարումը հիմք է կատարողական վարույթը կարճելու, իսկ պարտապանի գույքի վրա դրված արգելանքը հանելու համար:

**ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց.** «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հարկադիր կատարողը կատարողական վարույթը կարճում է, եթե կատարողական թերթը փաստացի կատարվել է: Նույն օրենքի 44.1-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ արգելանքի տակ գտնվող պարտապանի գույքը հարկադիր կատարողի որոշմամբ արգելանքից հանվում է, եթե առկա են նույն օրենքի 42-րդ հոդվածում նշված հիմքերը:

Վասիլ Նիկողոսյանը, թիվ 2-3-34 քաղաքացիական գործով հանդիսանալով պարտապան, Ալվարդ Դուկեյանին վճարել է 11.434.000 դրամ, որպիսի հանգամանքն ընդունվել է Ալվարդ Դուկեյանի կողմից: Այսինքն՝ պարտապանի կողմից կատարողական թերթի պահանջը փաստացի կատարվել է: Հետևաբար, թիվ 2-3-34 քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա հարուցված կատարողական վարույթը ենթակա էր կարճման, իսկ արգելանքի տակ գտնվող Վասիլ Նիկողոսյանին սեփականության իրավունքով պատկանող գույքը հարկադիր կատարողի որոշմամբ պետք է հանվեր արգելանքից:

Ինչ վերաբերում է թիվ 2-3-16 քաղաքացիական գործով կայացված օրինական ուժի մեջ մտած վճռով Վասիլ Նիկողոսյանի համար պարտավորությունների առաջացման հարցին, ապա Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ Վասիլ Նիկողոսյանը պարտապան է միայն թիվ 2-3-34 քաղաքացիական գործով, հետևաբար՝ վերջինս պարտավորություններ է կրում միայն այդ գործով օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա հարուցված կատարողական վարույթի շրջանակներում:

#### **28.11.2008թ.**

78. Էմմա Կիրակոսյան v. Օնիկ Գրիգորյան, քաղ. գործ թիվ 3-690/ՎԳ (վճռի Էջ կայացման օրվանից մինչև փաստացի կատարման օրը հաշվարկված տոկոսների 417-419 բռնագանձման պահանջով):

**Խնդիրը.** Արդյո՞ք դատական ակտի հարկադիր կատարման փուլում գտնվելը հիմք է ակտի պահանջների կատարման պարտականությունից պարտապանին ազատելու համար:

**ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց.** Օրինական ուժի մեջ մտած դատական ակտը պարտադիր կարգով ենթակա է կատարման պարտապանի կողմից, իսկ դա-

տական ակտի հարկադիր կատարման փուլում գտնվելը հիմք չէ ակտի պահանջների կատարման պարտականությունից պարտապահին ազատելու համար:

Վերոնշյալ եզրահանգման համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում այն հանգամանքը, որ դատական ակտերի հարկադիր կատարումը դրա կամավոր չկատարման այլընտրանքային եղանակն է: Այսինքն՝ Օնիկ Գրիգորյանը, ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած 02.05.2007 թվականի վճռով բռնագանձման ենթակա 2.388.100 ՀՀ դրամի վճարման պարտավորությունը չկատարելով, ապօրինի կերպով պահել է այդ դրամական միջոցները:

## **Նյութական և դատավարական իրավունքի վերաբերյալ որոշումներ**

**29.02.2008թ.**

79. Արմեն Ալլահվերդյան v. Բաբկեն Տեր-Մանվելյան, «Կենտրոն» նոտարական գրասենյակ, քաղ. գործ թիվ 3-148/ՎԳ (ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը մասնակի անվավեր ճանաչելու և ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջներով):

Էջ  
420-424

Խնդիրը. Արդյո՞ք հայցից հրաժարումը կարող է դիտվել որպես հայցվող գույքի նկատմամբ սեփականության իրավունքից հրաժարում:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1230-րդ - հոդվածի համաձայն՝ ժառանգն իրավունք ունի հրաժարվել ժառանգությունից ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում՝ ներառյալ այն դեպքում, երբ նա արդեն ընդունել է ժառանգությունը: Ժառանգությունից հրաժարվելն իրականացվում է ժառանգի կողմից ժառանգության բացման վայրի նոտարին դիմում տալու միջոցով: Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ ժառանգը կարող է հրաժարվել ժառանգությունից ժառանգության բացման վայրի նոտարին ժառանգությունից հրաժարվելու վերաբերյալ դիմում տալու միջոցով: Մինչդեռ, սույն քաղաքացիական գործով Նորայր Ալլահվերդյանը նման եղանակով իրեն հասանելիք ժառանգությունից չի հրաժարվել:

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքում ներկայացված պատճառաբանությանն այն մասին, որ հայցից հրաժարումը անհրաժեշտ է որակել որպես ժառանգությունից հրաժարում, ապա Վճռաբեկ դատարանը այն անհիմն է համարում, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ հայցվորն իրավունք ունի մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը փոխել հայցի հիմքը կամ առարկան, ավելացնել կամ նվազեցնել հայցային պահանջների չափը կամ հրաժարվել հայցից: Վերոնշյալից հետևում է, որ հայցից հրաժարումը հայցվորի դատավարական իրավունքն է: Հայցից հրաժարվելով, հայցվորն ըստ էության հրաժարվում է ոչ թե պատասխանողի նկատմամբ ունեցած պահանջից, այլ քաղաքացիական դատավարության կանոններով իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության միջոցից: Վճռաբեկ դատարանը նման եզրահանգման համար հիմք է ընդունում նաև դատավարական օրենքի այն կարգավորումը, համաձայն որի հայցից հրաժարումը հայցվորին չի գրկում նույն հայցով կրկին անգամ դատարան դիմելու իրավունքից:

*\* Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը անդրադարձել է դատական ակտի պատճառաբանական և եզրափակիչ մասերի միջև առկա անհամապատասխանության հարցին:*

80. Սիրանուշ և Սաթենիկ Ճճարիտյանների դիմումը, քաղ. գործ թիվ 3-23/ՎԳ (բաց թողնված ժամկետը հարգելի համարելու և ժառանգությունն ընդունած ժա-

Էջ  
425-429

---

ռանգներ ճանաչելու, ինչպես նաև Հասմիկ Ճշմարիտյանի դիմումը՝ բաց թողնված ժամկետը հարգելի համարելու և ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջներով):

**Խնդիրը.** 1. Արդյո՞ք գործին մասնակցող անչափահասի՝ գործի քննության ժամանակ չափահաս (գործունակ) դառնալը ինքնին կարող է խոչընդոտ հանդիսանալ դատարանի կողմից գործի քննությունը շարունակելու և վճիռ կայացնելու համար:

2. Արդյո՞ք ժառանգությունն ընդունելու համար սահմանված ժամկետում ժառանգական զանգվածում ներառված տան միակ բնակչի կողմից կոմունալ և տան տիրապետման և շահագործման համար անհրաժեշտ այլ վճարումների կատարումը հիմք է ժառանգության ընդունման փաստը հաստատված համարելու համար:

**ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց.** 1) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 42-րդ հոդվածի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածների խախտման մասին վճռաբեկ բողոքի պատճառաբանությունը հիմնավոր է, քանի որ գործի քննության ժամանակ 31.07.1989 թվականին ծնված Սիրանուշ Ճշմարիտյանը 31.07.2007 թվականին ձեռք է բերել լրիվ գործունակություն, հետևաբար, նրա շահերը դատարանում կարող էին ներկայացվել միայն վերջինիս կողմից տրված համապատասխան լիազորագրի հիման վրա, ինչը սույն քաղաքացիական գործում բացակայում է:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ փաստը Վերաքննիչ դատարանի վճիռը բեկանելու հիմք չէ, քանի որ հայցապահանջի ներկայացման պահին Սիրանուշ Ճշմարիտյանն անչափահաս էր, հետևաբար, Անահիտ Ալեքսանյանն իրավասու էր Սիրանուշ Ճշմարիտյանի անունից ներկայացնելու հայց, իսկ 31.07.2007 թվականին վերջինիս չափահաս դառնալը ինքնին չի կարող խոչընդոտ հանդիսանալ դատարանի կողմից գործի քննությունը շարունակելու և վճիռ կայացնելու համար:

2) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, եթե այլ բան ապացուցված չէ, ապա ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել կամ կառավարել ժառանգված գույքը՝ ներառյալ, երբ ժառանգը միջոցներ է ձեռնարկել գույքը պահպանելու և այն երրորդ անձանց ունեցություններից կամ հավակնություններից պաշտպանելու համար, իր հաշվին կատարել է գույքը պահպանելու ծախսերը, իր հաշվից վճարել է ժառանգատուի պարտքերը կամ երրորդ անձանցից ստացել է ժառանգատուին հասանելիք գումարները:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ ժառանգության փաստացի տիրապետումը կամ կառավարումը, որպես ժառանգության ընդունման եղանակ, կարող է դրսևորվել ժառանգի կողմից ժառանգական գույքի պահպանման ծախսերը կատարելով:

Սույն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությամբ չի գնահատել քննվող քաղաքացիական գործում առկա բոլոր ապացույցները, որի արդյունքում անտեսել է վեճի առարկա տան միակ բնակիչ Հասմիկ Ճշմարիտյանի կողմից ներկայացված՝ ժառանգությունն ընդունելու համար սահմանված ժամկետում կոմունալ և տան տիրապետման և շահագործման համար անհրաժեշտ այլ վճարումներ կատարված լինելու մասին ապացույցները, որոնցով հիմնավորվում է Հասմիկ Ճշմարիտյանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով ժառանգությունը ընդունելու հանգամանքը:

**27.03.2008թ.**

81. «ԻՓՄԻԼՈՆ» ԲԲԸ v. «ՄԻՄԲԱԲ» ՍՊԸ, քաղ. գործ թիվ 3-82/ՏԳ (գումարի **Էջ 430-434**)  
 բռնագանձման պահանջով):

**Խնդիրը.** 1. Արդյո՞ք համատեղ գործունեություն իրականացնելու վերաբերյալ կազմակերպությունների միջև պայմանավորվածության առկայությունը հիմք է ներդրված գույքը այդ կազմակերպությունների բաժնային սեփականությունը դիտելու համար:

2. Արդյո՞ք ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 42-րդ հոդվածով նախատեսված գործողություններից յուրաքանչյուրը կատարելու համար լիազորագրում պետք է հատուկ նշված լինի ներկայացուցչի այդ լիազորությունը:

**ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց.** 1) Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերության և Կազմակերպության կողմից դատաբանության ընթացքում արված հայտարարություններով հաստատվել է համատեղ գործունեություն իրականացնելու վերաբերյալ պայմանավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ընկերության և Կազմակերպության՝ համատեղ գործունեության մեջ ներդրված գույքը դարձել է նրանց ընդհանուր բաժնային սեփականությունը: Միաժամանակ, ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ կողմերը չեն որոշել իրենցից յուրաքանչյուրի կողմից ներդրման ենթակա գույքային ավանդների չափը և արժեքը, ինչպես նաև համատեղ գործունեության հետ կապված ծախսերը և վնասները ծածկելու կարգը, հետևաբար Ընկերության և Կազմակերպության ավանդները ենթադրվում են հավասար, իսկ համատեղ գործունեության արդյունքում կրած ծախսերը և վնասները նրանցից յուրաքանչյուրը պետք է կրի իր ավանդի արժեքին համամասնորեն (հավասարապես):

2) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 42-րդ հոդվածում նշված գործողություններից յուրաքանչյուրի կատարման համար ներկայացվողի տված լիազորագրում պետք է հատուկ նախատեսված լինի ներկայացուցչի այդ լիազորությունը:

Նույն օրենսգրքի 92-րդ հոդվածի հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ դատավորը վերադարձնում է հայցադիմումը, եթե հայցադիմումն ստորագրված չէ կամ ստորագրել է այն ստորագրելու լիազորություն չունեցող անձը կամ այնպիսի անձ, որի պաշտոնական դրությունը նշված չէ:

Վերոնշյալից հետևում է, որ.

1. ներկայացվողն իրավունք ունի ներկայացուցչին լիազորել, կատարելու վերոնշյալ բոլոր դատավարական գործողությունները կամ դրանց մի մասը.

2. լիազորագրում պետք է հատուկ նշված լինի, որ ներկայացուցչին իրավունք ունի կատարելու վերոնշյալ դատավարական գործողություններից յուրաքանչյուրը:

82. Ա.Եփրեմյան v. Ն.Մանվելյան, քաղ. գործ թիվ 3-132/ՎԳ (անհիմն հարստացման գումարները վերադարձնելու պահանջով): **Էջ 435-439**

**Խնդիրը.** 1. Արդյո՞ք օրենքի մեկնաբանության մասին դատարանի իրավական դիրքորոշումը ընդգրկվում է դատական ակտի պրեյուդիցիալ կապի (նախադատելիության) օբյեկտիվ սահմաններում, այսինքն՝ ունի նախադատելի նշանակություն:

2. Ո՞ր պայմանների միաժամանակյա առկայությունն է անհրաժեշտ անհիմն հարստացման հետևանքով պարտավորության առաջացման համար :

**ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց.** 1) Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ դատարանի իրավական դիրքորոշումը նախադատելի հանգամանք չէ: Իրավունքի սեփական ընկալման հիքով դատարանն իրավասու է կատարել որոշակի եզրահանգումներ: Նախադատելի այս դեպքում կարող է լինել հաստատված հանգամանքը, սակայն ոչ դատարանի իրավական դիրքորոշումը:

2) Անհիմն հարստացման հետևանքով պարտավորության առաջացման համար անհրաժեշտ է երկու վավերապայմանների միաժամանակյա առկայությունը՝

1. որպեսզի անձը ուրիշի հաշվին ձեռք բերի կամ խնայի գույք

2. գույքի ձեռք բերումը կամ խնայումը տեղի ունենա իրավական հիմքի բացակայությամբ:

Հիմք ընդունելով վերոնշյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհիմն է վճռաբեկ բողոքի փաստարկն այն մասին, որ Նարինե Մանվելյանը անհիմն խնայել է վեճի առարկա տարածքի մեկ ամսվա վարձավճարը, քանի որ՝

ա) վեճի առարկա տարածքը օգտագործում է ոչ թե Նարինե Մանվելյանը, այլ Ընկերությունը.

բ) Նարինե Մանվելյանի՝ որպես ֆիզիկական անձի կողմից ուրիշի հաշվին գույք ձեռք բերելու կամ խնայելու փաստը գործով հաստատված չէ:

Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով Նարինե Մանվելյանը պատշաճ պատասխանող չէ, որի հիմքով հայցը ենթակա էր մերժման:

**23.05.2008թ.**

83. Երևան քաղաքի դատախազության դիմումը, քաղ. գործ թիվ 3-361/ՎԳ- Էջ  
(գույքը տիրագործի ճանաչելու և այն պետության սեփականությանը հանձնելու 444-443  
պահանջներով):

**Խնդիրը.** 1. Արդյո՞ք դատախազը, ելնելով իր սահմանադրական կարգավիճակից, կարող է գույքը տիրագործի ճանաչելու պահանջ ներկայացնել դատարան:

2. Ինչպիսի՞ փաստ պետք է հաստատի դատարանը, որպեսզի շարժական գույքը ճանաչվի տիրագործի:

**ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց.** 1) Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գույքը տիրագործի ճանաչելու պահանջ ներկայացնելը քաղաքացիական իրավունքի յուրաքանչյուր սուբյեկտի իրավունքն է, իսկ դրա իրականացման շրջանակները կարող են տարբեր լինել կախված համապատասխան սուբյեկտի լիազորությունների շրջանակից:

Հիմք ընդունելով դատախազության սահմանադրական կարգավիճակը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատախազությունը լիազորված է ներկայացնելու գույքը տիրագործի ճանաչելու պահանջ բոլոր այն դեպքերում, երբ դրանով խախտվում են կամ կարող են խախտվել պետության գույքային շահերը:

2) Շարժական գույքը տիրագործի ճանաչելու համար դատարանում պետք է հիմնավորվի սեփականատիրոջ կողմից այդ գույքը դեն նետելը: Սինչդեռ, բողոք բերած անձը չի հիմնավորել վեճի առարկա գույքը սեփականատիրոջ կողմից դեն նետված լինելու հանգամանքը:

**25.07.2008թ.**

84. «Արաբկիր Ալկո Լիկյոր-Օդո գործարան» ՍՊ ընկերություն v. Սոս Բաղդասարյան, քաղ. գործ թիվ 3-480/ՎԳ- (բնակարանի 1/7 մասի սեփականատերի ճանաչելու և բնակարանի մասի վրա բռնագանձում տարածելու պահանջներով): Էջ  
444-449

**Խնդիրը.** 1. Արդյո՞ք պետական կամ հանրային ֆոնդի բնակարանը վարձակալին վաճառելիս բնակարանի նկատմամբ ծագում է միայն վարձակալի սեփականության իրավունքը, եթե այդ բնակարանը հատկացվել է վարձակալին և վերջինիս ընտանիքին:

2. Ինչ՞ կարգով պետք է որոշվի Վճռաբեկ դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտով տրված իրավական մեկնաբանության համապատասխան գործով կիրառելիության հարցը:

**ՀՀ Վճռաբեկ դատարանը որոշեց.** 1) Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդի և Արիեստակցական միությունների հայկական հանրապետական խորհրդի «Պետական ու հանրային բնակարանային ֆոնդի տներում բնակարաններն որպես անձնական սեփականություն քաղաքացիներին վաճառելու մասին» 13.06.1989 թվականի թիվ 272 որոշմամբ հաստատված կանոնադրության 20-րդ կետի դրույթը պետք է մեկնաբանել սեփականաշնորհման ողջ հայեցակարգի լույսի ներքո: Տվյալ դեպքում, պետական և հանրային բնակարանային ֆոնդի տների սեփականաշնորհման համար ընտրվել էր վաճառքի ձևը, որի հիմնական նպատակը պետական և հանրային բնակարանային ֆոնդից յուրաքանչյուր քաղաքացու որոշակի սեփականության բաժնի հատկացումն էր:

Նշված տրամաբանությունից է ելնում նաև հետագայում՝ 29.06.1993 թվականին ընդունված և 01.09.1993 թվականին ուժի մեջ մտած «Պետական և հանրային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենքը, որի 13-րդ հոդվածի համաձայն՝ բնակարանային ֆոնդի բնակարանների սեփականաշնորհումն ընտանիքի չափահաս անդամների համաձայնության դեպքում ձևակերպվում է տվյալ բնակարանի վարձակալի անունով, կամ նրա ընտանիքի որևէ չափահաս անդամի անունով՝ **որպես ընտանիքի բոլոր անդամների ընդհանուր համատեղ, կամ ընդհանուր բաժնային սեփականություն:** Վարձակալի ընտանիքի այն անդամները, որոնք բնակվում են նրա հետ համատեղ, Հայաստանի Հանրապետության բնակարանային օրենսգրքի համաձայն՝ վարձակալի հետ համահավասար օգտվում են բնակտարածության վարձակալության պայմանագրից բխող բոլոր իրավունքներից և կրում բոլոր պարտականությունները, ինչպես նաև օգտվում են բնակարանների սեփականաշնորհումից բխող իրավունքներից:

Վերը նշված փաստերի համադրության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Սոսիկ Բալաբեկի Բաղդասարյանի ընտանիքին բնակվելու համար հատկացված Երևանի Չ.Սարկվազի (նախկին՝ Կամոյի) փողոցի թիվ 126/1 շենքի թիվ 14 բնակարանը չէր կարող վաճառվել ընտանիքի մեկ անդամին՝ մյուսներին զրկելով բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքից: Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Երևանի, Չ.Սարկվազի (նախկին՝ Կամոյի) փողոցի թիվ 126/1 շենքի թիվ 14 բնակարանը Սոսիկ Բալաբեկի Բաղդասարյանին վաճառելիս, տվյալ բնակարանի նկատմամբ ծագել է նրա և նրա ընտանիքի բոլոր 6 անդամների՝ այդ թվում նաև պատասխանող Սոս Աշոտի Բաղդասարյանի սեփականության իրավունքը:

2) Վճռաբեկ դատարանը գտնում է, որ յուրաքանչյուր գործ իր փաստական հանգամանքներով եզակի է և Վճռաբեկ դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտով տրված իրավական մեկնաբանության՝ համապատասխան գործով կիրառելիության հարցը լուծելիս, դատարանները պետք է համադրեն նախադեպային գործի և քննության առարկա գործի էական նշանակություն ունեցող փաստերը: Այսինքն, դատարանը նախադեպային որոշմամբ տրված օրենքի մեկնաբանության՝ քննվող գործով կիրառելիության հարցը լուծելիս պետք է նախ առանձնացնի այն փաստական հանգամանքները, որոնք էական նշանակություն են ունեցել նախադեպային որոշման կայացման համար և այնուհետև դրանք համադրի քննվող քաղաքացիական գործի փաստական հանգամանքների հետ, որոշելով դրանց նույնական լինել կամ չլինելու հարցը:

# Վ Ա Ր Չ Ա Կ Ա Ն Գ Ո Ր Ծ Ե Ր

## Նյութական իրավունքի վերաբերյալ որոշումներ

### Շահութահարկ և եկամտահարկ

29.02.2008թ.

1. (85) «ՍԱՎԱ» ՍՊԸ v. ՀՀ ԿԱ ՀՊԾ, քաղ. գործ թիվ 3-28/ՏԳ (օրենքին հա- Էջ  
կասող ակտը մասնակիորեն անվավեր ճանաչելու պահանջով): 451-454

Խնդիրը. 1. Արդյո՞ք Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս մատուցված ծառայության դիմաց տրված եկամտի համար ռեզիդենտ կազմակերպության վրա կարող է դրվել շահութահարկ պահելու պարտականություն:

2. Արդյո՞ք ենթաօրենսդրական ակտով նախատեսված՝ օրենքով սահմանված պարտականությունը վերացնող դրույթը կարող է իրավական ուժ ունենալ:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. 1) Ոչ ռեզիդենտի՝ փոխադրման պայմանագրի հիման վրա ռեզիդենտից ստացված եկամտից շահութահարկը հարկային գործակալի կողմից պետք է վճարվի միայն մատուցված ծառայությունների այն մասով, որոնք փաստացի մատուցվել են Հայաստանի Հանրապետության տարածքում:

Սույն քաղաքացիական գործով Դատարանը 19.04.2007 թվականի թիվ 1011172 ստուգման ակտի 1-ին կետն անվավեր ճանաչելիս հիմք է ընդունել այն հանգամանքը, որ Ընկերության կողմից վճարվել է Հայաստանի Հանրապետության տարածքով բեռների փոխադրման համար ստացված եկամտից պահված շահութահարկը: Այդ հանգամանքը չի վիճարկվել նաև Ծառայության կողմից:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերության համար Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս մատուցված ծառայության դիմաց տրված եկամտի համար շահութահարկ պահելու պարտականություն չի կարող դրվել:

2) Սույն քաղաքացիական գործով Դատարանը հետադարձ ուժ է տվել ՀՀ պետական եկամուտների նախարարության «Եկամտահարկի հաշվարկման բյուջե վճարման կարգի մասին» հրահանգի 29.1 կետին՝ Ընկերությանը ազատելով «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով նախատեսված տեղեկություններ ներկայացնելու պարտականությունից: Մինչդեռ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ իրավական ակտերում փոփոխությունները կամ լրացումները կատարում են միայն իրավական ակտն ընդունած մարմինը կամ նրա իրավահաջորդը: Իրավաստեղծ մարմինն իրավական ակտում փոփոխություններ կամ լրացումներ կարող է կատարել **միայն նույն տեսակի** իրավական ակտով: Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այլ իրավական ակտով նախատեսված օրենքով սահմանված պարտականությունը վերացնող դրույթը վերոհիշյալ նորմի իմաստով իրավական ուժ ունենալ չի կարող, հետևաբար դրանով սահմանված դրույթին չի կարող տրվել նաև հետադարձ իրավական ուժ:

**Լրացուցիչ հարկային պարտավորություններ**

**29.02.2008թ.**

2. (86) «Խասուրո Գրուպ» ՓԲԸ v. ՀՀ ԿԱ ՀՊԾ, քաղ. գործ թիվ 3-31/ՏԴ (հաստատագրված վճարի գծով Ընկերության անձնական հաշվի քարտում կատարված գրանցումը՝ վերահաշվարկը, օրենքին հակասող ճանաչելու և անձնական հաշվի քարտից այդ վերահաշվարկի արդյունքում հաշվեգրված հարկային պարտավորությունները հանել պարտավորեցնելու պահանջներով):

Էջ  
455-458

**Խնդիրը.** Արդյո՞ք իրականացված ուսումնասիրության արդյունքում տնտեսվարող սուբյեկտի անձնական քարտի հաշվում կատարված վերահաշվարկի հիման վրա վերջինիս համար կարող են առաջանալ լրացուցիչ հարկային պարտավորություններ:

**ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց.** «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 3-րդ - մասի 5-րդ և 6-րդ պարբերությունների համաձայն՝ կամերալ ուսումնասիրության արդյունքում հաշվետվություններում խախտումներ, անճշտություններ, *անհամապատասխանություններ* հայտնաբերելու դեպքում դրա վերաբերյալ կազմվում է արձանագրություն (երկու օրինակից), որն ուսումնասիրություն անցկացնող հարկային մարմինը երեք աշխատանքային օրվա ընթացքում փոստով կամ առձեռն տրամադրում է տնտեսվարող սուբյեկտին: Տնտեսվարող սուբյեկտի ղեկավարը (նրան փոխարինող պաշտոնատար անձը) հինգ աշխատանքային օրվա ընթացքում արձանագրված խախտումների հետ համաձայնվելու դեպքում հարկային մարմին է ներկայացնում օրենսդրությամբ սահմանված ճշտված (ճշգրտված) հաշվետվությունը կամ հաշվետվությունները: Արձանագրված խախտումների հետ համաձայն չլինելու դեպքում տնտեսվարող սուբյեկտի ղեկավարը (նրան փոխարինող պաշտոնատար անձը) հարկային մարմին է ներկայացնում իր գրավոր առարկությունները: Նույն հոդվածով նախատեսված ուսումնասիրության ընթացքում լրացուցիչ հարկային պարտավորություններ կարող են առաջանալ միայն տնտեսվարող սուբյեկտի կողմից հարկային մարմնի հայտնաբերած խախտումները ընդունելու և ճշգրտված հաշվետվություններ ներկայացնելու արդյունքում: Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ կամերալ ուսումնասիրության ընթացքում լրացուցիչ հարկային պարտավորություններ կարող են առաջանալ միայն տնտեսվարող սուբյեկտի կողմից հարկային մարմնի հայտնաբերած խախտումներն ընդունելու և ճշգրտված հաշվետվություններ ներկայացնելու արդյունքում: Մինչդեռ սույն գործում բացակայում է որևէ ապացույց Ընկերությունում կատարված ուսումնասիրության արդյունքում կազմված արձանագրությունը Ընկերության ղեկավարին տրամադրելու, ինչպես նաև Ընկերության կողմից դրանցով արձանագրված խախտումները ընդունելու վերաբերյալ: Հինք ընդունելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ծառայության կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքում Ընկերության անձնական քարտի հաշվում կատարված վերահաշվարկի հիման վրա Ընկերության համար լրացուցիչ հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ:

**Լիցենզավորում**

**29.02.2008թ.**

3. (87) ՀՀ ԿԱ ՀՊԾ Խորհրդային ՀՏ v. ԱԶ Գոհարիկ Հովհաննիսյան, քաղ. գործ թիվ 3-34/ՏԴ (գումար բռնագանձելու պահանջով):

Էջ  
459-462

**Խնդիրը.** Արդյո՞ք լիցենզիան քաղաքացուն տրված լինելու հանգամանքը կարող է հիմք հանդիսանալ այդ լիցենզիայի համար նախատեսված պետական տուրքի գումարը անհատ ձեռնարկատեր նույն քաղաքացուց զանձելու մասին հայցապահանջը մերժելու համար:

**ՀՀ վճարելի դատարանը որոշեց.** ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացին, որպես անհատ ձեռնարկատեր գրանցվելու պահից, իրավունք ունի, առանց իրավաբանական անձ կազմավորելու, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ:

«Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի առաջին պարբերության համաձայն՝ անհատ ձեռնարկատերն այն **ֆիզիկական անձն է**, որն իրավունք ունի, առանց իրավաբանական անձ կազմավորելու, ինքնուրույն, իր անունից և իր ռիսկով իրականացնել գործունեություն, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ (եկամուտ) ստանալն է:

Նույն օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ անհատ ձեռներեցն իր պարտականությունների և ստանձնած պարտավորությունների համար կրում է պատասխանատվություն իր անձնական այն գույքով, որի վրա բռնագանձում է տարածվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Վերոնշյալ հոդվածներից հետևում է, որ անհատ ձեռնարկատեր գրանցվելու պահից փոփոխվում է ֆիզիկական անձի իրավունակության բովանդակությունը: Այսինքն՝ այդ պահից ֆիզիկական անձը հնարավորություն է ստանում ունենալու այնպիսի իրավունքներ և կրելու այնպիսի պարտականություններ, որոնք ոչ անհատ ձեռնարկատեր քաղաքացին չի կարող ունենալ կամ կրել: Մինչդեռ քաղաքացին և անհատ ձեռնարկատերը պարտավորաիրավական հարաբերություններում հանդես են գալիս որպես նույն սուբյեկտը:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճարելի դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով 19.04.2002 թվականի թիվ ՔՊԼ 6920 լիցենզիան քաղաքացի Գոհարիկ Հովհաննիսյանին տրված լինելու հանգամանքը չի կարող հիմք հանդիսանալ այդ լիցենզիայի համար նախատեսված պետական տուրքի գումարը անհատ ձեռնարկատեր Գոհարիկ Հովհաննիսյանից զանձելու մասին հայցապահանջը մերժելու համար:

*\* Միաժամանակ ՀՀ վճարելի դատարանը անդրադարձել է դատական ակտի իրավական հիմնավորվածության հարցին՝ կրկնելով նախկինում կայացրած որոշմամբ արտահայտած դիրքորոշումը (տե՛ս օրինակ՝ ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչություն v. «Ընար-88» ՍՊԸ, քաղ. գործ թիվ 3-2504/ՏԳ (գումար բռնագանձելու պահանջով), ՀՀ վճարելի դատարան 21.12.2006 թվականի որոշումը):*

## Հաշվանց

**29.02.2008թ.**

4.(88) «Բրիդենս Միսթենզ Արմենիա» ՍՊԸ v. ՀՀ ԿԱ ՀՊԾ, քաղ. գործ թիվ 3- Էջ 37/ՏԳ (ուսումնասիրության արձանագրությունը մասնակի անվավեր ճանաչելու և 463-466 Ծառայության գանգատարկման հանձնաժողովի որոշումն անվավեր ճանաչելու պահանջներով):

**Խնդիրը.** Արդյո՞ք հարկային հաշիվներում իրավաբանական հասցեի փոխարեն գործունեության հասցեն նշված լինելը կարող է հիմք հանդիսանալ այդ փաստաթղթերը հարկային հաշիվ չդիտելու համար:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Ընկերության ներկայացրած հարկային հաշիվներում իրավաբանական հասցեի փոխարեն գործունեության հասցեն նշելը չի կարող խոչընդոտ հանդիսանալ գործարքի կողմերին, ինչպես նաև նրանց միջև կնքված գործարքի էությունը պարզելու համար, հետևաբար հաշվանցում իրականացնելիս չի կարող հիմք հանդիսանալ այդ փաստաթղթերը հարկային հաշիվ չդիտարկելու համար:

**Ատեստավորում**

27.03.2008թ.

5. (89) «Երևանի մենեջմենթի համալսարան» ՍՊԸ v. ՀՀ կրթության և գիտության նախարարության և Նախարարության «Լիցենզավորման և հավատարմագրման ծառայություն», քաղ. գործ թիվ 3-61/ՏԳ (պետական մարմնի անգործությունն անվավեր ճանաչելու, շրջանավարտների 19.02.2007 թվականի ամփոփիչ ատեստավորման քննության արդյունքներն անվավեր ճանաչելու և հավատարմագիր ստանալու իրավունքը ճանաչելու պահանջներով):

Էջ  
467-469

Խնդիրը. Արդյո՞ք միջին և բարձր ուսումնական հաստատության պետական հավատարմագիր հայցող ընկերությունը իրավասու է անցկացնել շրջանավարտների ատեստավորում:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. «ՀՀ-ում միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգի կարգի 7-րդ կետի համաձայն՝ դրական փորձագիտական եզրակացության դեպքում նախարարության սահմանած կարգով իրականացվում է 2 տարվա շրջանավարտների ամփոփիչ ստուգում (ատեստավորում):

Մինչդեռ, սույն քաղաքացիական գործով Տնտեսական դատարանը հայցի բավարարման հիմքում դնելով Ընկերության կողմից սեփական նախաձեռնությամբ 2006 թվականի շրջանավարտների ատեստավորման քննությունների արդյունքները չի անդրադարձել և գնահատման առարկա չի դարձրել այդ ատեստավորումը ՀՀ կրթության և գիտության նախարարության սահմանված կարգին համապատասխան անցկացված լինելու հարցը:

**Հաստատագրված վճար**

27.03.2008թ.

6. (90) «Հրաշք պարտեզ» ՍՊԸ v. ՀՀ ԿԱ ՀՊԾ Աշտարակի տարածքային ՀՏ, քաղ. գործ թիվ 3-58/ՏԳ (ակտն անվավեր ճանաչելու պահանջով):

Էջ  
470-472

Խնդիրը. Արդյո՞ք «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով տնտեսվարող սուբյեկտի կողմից ներկայացված ելակետային տվյալների ճշտությունը ստուգելիս հարկային ծառայությունը պարտավոր է պարզել հաշվետու ժամանակշրջանում տնտեսվարող սուբյեկտի կողմից փաստացի օգտագործվող տարածքի չափը:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 32-րդ և 35-րդ հոդվածներից հետևում է, որ հաստատագրված վճարի հաշվարկման համար ելակետային տվյալ է համարվում ոչ թե հաշվետու ժամանակաշրջանում Ընկերության կողմից փաստացի օգտագործվող տարածքը, որը կարող է պայմանավորվել սպառողների թվով, այլ հանրային սննդի գործունեության կազմակերպման համար նախատեսված ամբողջ տարածքը: Հետևաբար, վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերության կողմից ներկայացված ելակետային

---

տվյալների ճշտությունը ստուգելիս Ճառայությունը պարտավոր չէ պարզելու հաշվետու ժամանակաշրջանում Ընկերության կողմից փաստացի օգտագործվող տարածքի չափը:

### **Ավելացված արժեքի հարկ**

**27.03.2008թ.**

7. (91) «Կոմուննախագիծ» ՓԲԸ v. ՀՀ ԿԱ ՀՊԾ Սպանդարյան-1 ՀՏ, քաղ գործ թիվ 3-30/ՏԳ (ստուգման ակտն անվավեր ճանաչելու պահանջով):

Էջ  
473-477

**Խնդիրը.** 1. Ո՞ր կանոններով պետք է առաջնորդվի հարկային մարմինը հարկային պարտավորությունները հաշվարկելիս ելակետային չափերը պարզելու համար:

2. Ո՞ր արժեքը պետք է հիմք ընդունվի շենքերի, շինությունների իրացման ժամանակ ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշելիս:

**ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց.** 1) Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հարկային մարմնի կողմից հարկային պարտավորությունները հաշվարկելիս ելակետային չափերը պարզելու համար մի քանի աղբյուրների օգտագործումը օրենքի պարտադիր պահանջ չէ: Հարկային մարմինը յուրաքանչյուր դեպքում պետք է գնահատի վերոնշյալ նորմերով իր առջև դրված նպատակը, օգտագործված աղբյուրի(ների) պիտանելիությունը և բավարարությունը այդ նպատակի կենսագործման համար:

2) Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ շենքերի, շինությունների իրացման ժամանակ ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշելիս որպես նվազագույն արժեք պետք է ընդունվի տվյալ շինության կադաստրային արժեքը:

**26.09.2008թ.**

8.(92) «Նաիրիտ գործարան» ՓԲԸ v. ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն, վարչական գործ թիվ ՎԳ/0005/05/08 (ավելացված արժեքի հարկի գծով առաջացած գերավճարը հաստատելու պահանջով):

Էջ  
478-481

**Խնդիրը.** Արդյո՞ք ք գործակալության պայմանագրի շրջանակներում մատուցված ծառայությունների հարկվող շրջանառության նկատմամբ կիրառվում է ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափ:

**ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց.** Զննվող քաղաքացիական գործի փաստերի համաձայն՝ ծառայությունները ստացած Ընկերության գտնվելու վայրը Երևան, Բագրատունյաց 70 հասցեն է, իսկ ծառայություններ մատուցած Կազմակերպության գրանցման վայրը գտնվում է Միացյալ Թագավորությունում:

Հետևաբար, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի իմաստով գործակալության պայմանագրով մատուցված իրավաբանական ծառայության մատուցման վայրը Հայաստանի Հանրապետությունն է, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գրոյական դրույքաչափով հարկման վերաբերյալ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ կետը Ընկերությանը մատուցված ծառայությունների նկատմամբ կիրառելի չեն:

**28.11.2008թ.**

9.(93) «Գիասերվ» ՍՊԸ v. ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետա- Էջ  
կան ծառայության Արաբկիրի հարկային տեսչություն, վարչական գործ թիվ 482-485  
ՎԳ/0213/05/08 (գումարի բռնագանձման պահանջով):

**Խնդիր.** 1. Արդյո՞ք ենթաօրենսդրական ակտով կարող է սահմանվել ավելաց-  
ված արժեքի հարկումը բացառող այլ պայման քան նախատեսված է «Ավելաց-  
ված արժեքի հարկի մասի» ՀՀ օրենքով:

2. Ինչպիսի՞ փաստերի հաստատման դեպքում է բժշկական տեխնիկա ներ-  
մուծած սուբյեկտը ազատվում այդ սարքավորումների համար սահմանված ավե-  
լացված արժեքի հարկը վճարելու պարտականությունից:

**ՀՀ վճարեկ դատարանը որոշեց.** 1) Վճարեկ դատարանը գտնում է, որ «Ա-  
վելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 19-րդ կետը հստա-  
կորեն սահմանում է, որ բժշկական տեխնիկայի և պարագաների իրացումն ա-  
զատվում է ավելացված արժեքի հարկից: Հետևաբար այդ նորմի կիրառումը կա-  
րող է սահմանափակվել միայն օրենքով:

Մինչդեռ Ծառայության պետի 27.08.1997 թվականի թիվ 767 հրամանով  
բժշկական տեխնիկայի իրացումն ավելացված արժեքի հարկից ազատելու հա-  
մար սահմանվել է որոշակի պայման, այն է՝ դրանք բժկական օգնության և սպա-  
սարկման ծառայություններ մատուցող անձանց իրացնելը, որն .Իրավական ակ-  
տերի մասին է ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի ուժով կիրառման ենթակա չէ:

2) Սույն գործով կազմված ստուգման ակտում նշվել է, որ Ընկերությունը 2005  
թվականի ընթացքում ՀՀ տարածք է ներմուծել «ԱՊՀ արտաքին տնտեսական  
գործունեության ապրանքների անվանացանկ» դասակարգչի 84716040 ապրան-  
քախմբին դասվող ապրանքներ, որոնք ընդգրկված չեն վերոնշյալ հրամանով  
սահմանված ցանկում:

Վճարեկ դատարանը գտնում է, որ սույն գործի լուծման համար էական նշա-  
նակություն ունի ոչ միայն ներմուծված ապրանքների բժշկական տեխնիկա հան-  
դիսանալու փաստի ապացուցման հանգամանքը, այլ այդ ապրանքների՝ Ծառա-  
յության հրամանով հաստատված ցանկում ընդգրկված լինելու փաստը:

Հետևաբար հիմնավոր չեն վճարեկ բողոքում բերված այն փաստարկները,  
որ ստուգման ակտը կազմվել է միայն այդ ապրանքները բժշկական ծառայու-  
թյուններ չմատուցող անձին իրացնելու հիմքով, քանի որ ակտի կազմման հիմքում  
դրվել է նաև Ընկերության կողմից ներմուծված ապրանքները ՀՀ հարկային տես-  
չության պետի 27.08.1997 թվականի թիվ 767 հրամանով հաստատված հրահան-  
գով սահմանված ցանկում ընդգրկված չլինելու հանգամանքը:

**Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցում**

**23.04.2008թ.**

10. (94) Հ.Գևորգյան և Է.Սարգսյան v. ՀՀ ԿԱ ԱԳ-Կ ՊԿ Շենգավիթի ՏՄ, քաղ. Էջ  
գործ թիվ 3-247/ՎԳ- (քնակարանի նկատմամբ սեփականության իրավունքի 486-489  
գրանցման մերժումն անվավեր ճանաչելու և սեփականության իրավունքը գրան-  
ցելուն պարտավորեցնելու պահանջներով):

**Խնդիրը.** Արդյո՞ք կադաստրի կողմից անշարժ գույքի նկատմամբ սեփակա-  
նության իրավունքի գրանցման դիմումը կարող է մերժվել՝ սահմանելով «Գույքի  
նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով չնախա-  
տեսված փաստաթղթեր կամ հիմնավորումներ ներկայացնելու պարտականու-  
թյուն:

---

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Կադաստրը միայն ծագած իրավունքները գրանցող պետական մարմին է և չի կարող անձանց համար սահմանել «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով չնախատեսված փաստաթղթեր կամ հիմնավորումներ ներկայացնելու պարտականություններ (տե՛ս օրինակ՝ Բորիս Սկրտչյան ընդդեմ ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Մարաշ տարածքային ստորաբաժանում՝ պետական մարմնի ապօրինի գործողությունները վիճարկելու պահանջի մասին թիվ 3-1640 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 28.09.2006 թվականի որոշումը):

26.09.2008

11.(95) Անժելա Քոչինյան v. Արճիսի գյուղապետարան, վարչական գործ թիվ **Էջ 490-493**  
ՎԳ-2/0051/05/08 (գյուղապետի գործողություններն ապօրինի ճանաչելու, հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու և հողամասի հատակագիծը համայնքի հողերի քարտեզից սահմանազատելու և ներկայացնելուն պարտավորեցնելու պահանջներով):

Խնդիր. Արդյո՞ք սեփականության իրավունքի պետական գրանցման բացակայության պայմաններում հողամասի նկատմամբ անձի մոտ կարող է ծագել սեփականության իրավունք:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Վճռաբեկ դատարանն արդեն անդրադարձել է նույնանման փաստական հանգամանքներում օրենքի ուժով սեփականության իրավունքի ծագման հարցերին (տե՛ս օրինակ՝ Սկրտիչ և Գյուլխանում Գասպարյաններն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, երրորդ անձ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Էրեբունու տարածքային ստորաբաժանման՝ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին թիվ 3-106(ՎԳ) գործով Վճռաբեկ դատարանի 26.01.2007 թվականի որոշումը): Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ 1991 թվականի ՀՀ հողային օրենսգրքի 9-րդ հոդվածի ուժով տնամերձ հողամասերի նկատմամբ ծագում է այն անձանց սեփականության իրավունքը, ում դրանք հատկացվել են: Տվյալ դեպքում Անժելա Քոչինյանի սեփականության իրավունքը վեճի առարկա հողամասի նկատմամբ ծագել է օրենքի ուժով:

Վիճելի հողամասի սեփականատեր օրենքի ուժով հանդիսանում է Անժելա Քոչինյանը: Հետևաբար, վերջինս իրավունք ունի պահանջել ճանաչելու իր սեփականության իրավունքը:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում Վարչական դատարանի եզրահանգումն այն մասին, որ ՀՀ հողային օրենսգրքի 9-րդ հոդվածի ուժով Անժելա Քոչինյանի սեփականատեր դառնալու վերաբերյալ հայցվորի պնդումը հիմնավոր չէ, քանի որ սեփականության իրավունքը հաստատող միակ փաստաթուղթը իրավասու մարմնի կողմից տրվող վկայականն է, որը հայցվորը չունի: Այսինքն՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն քաղաքացիական գործով վեճի առարկա հողամասի նկատմամբ Անժելա Քոչինյանի սեփականության իրավունքը ծագել է օրենքի ուժով, անկախ դրա պետական գրանցման փաստից:

**Վարչարարության հետևանքով պատճառված վնաս**

**23.04.2008թ.**

12. (96) Արմեն Ապրեսյան v. Երևանի քաղաքապետարան, Երևանի Կենտրոն **Էջ 494-499**  
 քաղաքի համայնք, քաղ. գործ թիվ 3-273/ՎԴ- (պետական մարմնի, տեղական ինքնակառավարման մարմնի պաշտոնատար անձանց գործողությունները վիճարկելու և որոշակի գործողություններ կատարելուն պարտավորեցնելու պահանջներով):

**Խնդիրը.** Ու՞մ կողմից է հատուցվում տարածքային կառավարման մարմնի կողմից ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով ֆիզիկական կամ իրավաբանական անձին պատճառված վնասը:

**ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց.** Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Երևանի քաղաքապետի կողմից իրականացված վարչարարության հետևանքով Արմեն Ապրեսյանը զրկվել է սեփականության իրավունքով իրեն պատկանող շինությունից, ինչպես նաև վարձակալության իրավունքով տրամադրված հողամասը պայմանագրի պայմաններին համապատասխան տիրապետելու և օգտագործելու իրավունքից: Հետևաբար, Արմեն Ապրեսյանի հայցապահանջը 6.436.200 ՀՀ դրամի չափով հասցված վնասի փոխհատուցման մասին հիմնավոր է, և այն ենթակա է հատուցման Քաղաքապետարանի կողմից:

*\* Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը անդրադարձել է բաց թողնված օգուտը բռնագանձելու հարցին ( տե՛ս օրինակ՝ Ջուլիետա Պետրոսյան, Կարեն Դավթյան և Արման Դավթյան v. Թևոս Սաֆարյան, քաղ. գործ թիվ 3-691(ՎԴ) (պատճառված վնասների հատուցման պահանջով), ՀՀ վճռաբեկ դատարանի 30.03.2007 թվականի որոշումը):*

**Վարչական պատասխանատվություն**

**31.10.2008թ.**

13.(97) Երևանի քաղաքապետարան v. Սարգիս Նազարյան, վարչական գործ **Էջ 500-503**  
 թիվ ՎԴ/0429/05/08 (գումարի բռնագանձման և ինքնակամ կառույցը քանդելուն պարտավորեցնելու պահանջներով):

**Խնդիրը.** Արդյո՞ք հողօգտագործման իրավունք ունեցող անձի կողմից ինքնակամ շինություն կառուցելու դեպքում վերջինիս նկատմամբ կարող է կիրառվել առանց հողօգտագործման իրավունքի պետական կամ համայնքային հողամասում ինքնակամ շինություն կառուցելու համար ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերությամբ նախատեսված վարչական տուգանք:

**ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց.** Վարչական տուգանքը 200.000 ՀՀ դրամ գումարի չափով ծագում է սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձանց կողմից այդ հողամասի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելու դեպքում, իսկ 400.000 ՀՀ դրամ գումարի չափով վարչական տուգանքը՝ հողօգտագործման իրավունք չունեցող անձանց կողմից պետությանը և համայնքներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելու դեպքում:

Սույն վարչական գործի փաստերի համաձայն՝ Սարգիս Նազարյանը՝ որպես հողօգտագործման իրավունք ունեցող անձ, առանց համապատասխան թույլտվության իրականացրել է Երևանի Մանուշյան փողոցի թիվ 4 հասցեում գտնվող տան երկրորդ հարկի կառուցման աշխատանքները, որի համար ենթարկ-

վել է վարչական պատասխանատվության վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությամբ սահմանված կարգով:

Մինչդեռ, վարչական դատարանը հաստատված համարելով Սարգիս Նազարյանի կողմից Երևանի Մանուշյան փողոցի թիվ 4 տան հարթ տանիքի վրա երկրորդ հարկի կառուցման աշխատանքների ինքնակամ իրականացման փաստը, կիրառել է վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերությունը, որը վարչական պատասխանատվություն է նախատեսում ոչ թե հողօգտագործման իրավունք ունեցող անձի կողմից այդ հողամասի վրա շինություն կառուցելու, այլ հողօգտագործման իրավունք չունեցող անձանց կողմից պետությանը և համայնքներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի վրա շինություն կառուցելու համար:

14.(98) Երևանի քաղաքապետարան v. Յողիկ Հակոբջանյան, վարչական գործ թիվ ՎԳ/0380/05/08 (գումարի բռնագանձման, ինքնակամ կառույցը քանդելու և տարածքը նախկին տեսքի բերելու պարտավորեցնելու պահանջներով):

Էջ  
504-507

Խնդիր. 1. Արդյո՞ք վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասում և 154-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերությունում ամրագրված «զավթել» և «կառուցել» օրենսդրական եզրույթները կարող են նույնացվել:

2. Ո՞ր արարքի համար անձը պետք է ենթարկվի վարչական պատասխանատվության, երբ ինքնակամ զավթել է պետության կամ համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասը և դրա վրա կառուցել է ինքնակամ շինություն:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. 1) վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 48-րդ և 154-րդ հոդվածներից հետևում է, որ նրանցում արտացոլված իրավախախտումները (զանցանքները) միմյանցից տարբերվում են ինչպես կատարման ձևերով (օբյեկտիվ կողմով), այնպես էլ վարչական պատասխանատվության միջոցի՝ վարչական տուգանքի չափով: Ընդ որում, վարչական տուգանքը՝ 200.000 ՀՀ դրամ գումարի չափով՝ որպես վարչական պատասխանատվության միջոց, ծագում է պետական և (կամ) համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն ինքնակամ զավթելու և դրա հետևանքները չվերացնելու դեպքում, իսկ վարչական տուգանքը՝ 400.000 ՀՀ դրամ գումարի չափով՝ հողօգտագործման իրավունք չունեցող անձանց կողմից պետությանը և համայնքներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելու դեպքում:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ վճռաբեկ դատարանը գտնում է, որ «ինքնակամ զավթել» և «ինքնակամ կառուցել» օրենսդրական եզրույթները միմյանցից տարբերվող հասկացություններ են և չեն կարող նույնացվել:

2) վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե անձը կատարել է մի քանի վարչական իրավախախտումներ, որոնց վերաբերյալ գործերը միաժամանակ քննվում են նույն մարմնի (պաշտոնատար անձի) կողմից, տույժը նշանակվում է առավել լուրջ խախտման համար սահմանված սանկցիայի շրջանակներում:

Սույն գործի փաստերի համադրության արդյունքում վճռաբեկ դատարանը գտնում է, որ Յողիկ Հակոբջանյանը, Նոր Նորք համայնքի 7-րդ գանգվածի 1-ին շենքի դիմաց, իր պատուհանների տակ գտնվող մոտ 25 քմ հողատարածքը եզրաքարերով և մետաղյա ցանկապատով սահմանազատելով, ինքնակամ զավթել է պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը, ինչպես նաև որպես հողօգտագործման իրավունք չունեցող անձ պետությանը և համայնքին սեփականության պատկանող հողամասի վրա ինքնակամ կառուցել է շի-

նություն: Այսինքն՝ կատարել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված տարբեր իրավախախտումներ (զանցանքներ), որի համար ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ առավել լուրջ խախտման համար սահմանված սանկցիայի շրջանակներում՝ վարչական տուգանքի՝ 400.000 ՀՀ դրամ գումարի չափով:

### Արտադրական վտանգավոր օբյեկտներ

#### 31.10.2008թ.

15.(99) ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն **Եջ**  
լրբալ» ԲԲԸ, վարչական գործ թիվ ՎԳ/0173/05/08 (գումարի բռնագանձման պա- **508-511**  
հանջով):

Խնդիր. Արդյո՞ք կամրջակային կռունկը «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի իմաստով հանդիսանում է արտադրական վտանգավոր օբյեկտ և դրա հետ կապված հարաբերությունները կարգավորվում են վերոնշյալ օրենքով:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Սույն գործի փաստերի համաձայն՝ վիճելի իրավահարաբերության ծագման հիմք հանդիսացող կամրջակային կռունկը, որն ըստ Օրենքի 6-րդ հոդվածի համարվում է արտադրական վտանգավոր օբյեկտ, գտնվել է ընկերության տիրապետման ներքո:

Սույն գործով, Դատարանը հայցի մերժման հիմքում դնելով այն հանգամանքը, որ ընկերությունը արտադրական վտանգավոր օբյեկտը չի շահագործել, գնահատման առարկա չի դարձրել ընկերության կողմից նախարարությանը հասցեագրված 23.04.2007 թվականի գրությունը, որով ընկերության տնօրենը հայտնել է, որ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 11.04.2007 թվականի հրամանով և թիվ 5 կարգադրագրով արձանագրված խախտումները վերացվել են, այն է՝ 16.04.2007 թվականից կամրջակային կռունկի շահագործումը դադարեցվել է և ընկերությունում առկա արտադրական վտանգավոր օբյեկտները ներկայացված են գրանցման:

Այսինքն, վերոնշյալ գրությամբ ընկերությունն ընդունել է իր կողմից մինչև 16.04.2007 թվականը արտադրական վտանգավոր օբյեկտ շահագործելու փաստը:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Օրենքի 4-րդ հոդվածի իմաստով ընկերությունը համարվել է արտադրական վտանգավոր օբյեկտ շահագործող, հետևաբար, պարտավոր էր Օրենքի 19-րդ հոդվածի հիմքով կամրջակային կռունկը ներկայացնել գրանցման համապատասխան ռեեստրում:

### Պարզեցված հարկ

#### 31.10.2008թ.

16.(100) «Մուստանգ» արտադրական կոոպերատիվ **Եջ**  
առընթեր հարկային պետական ծառայության Էրեբունու հարկային տեսչություն, **512-515**  
վարչական գործ թիվ ՎԳ/0694/05/08 (ակտն անվավեր ճանաչելու պահանջով):

Խնդիր. Արդյո՞ք «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածից բխում է եկամուտ ստանալու փաստի պարտադիր լինելը և ի՞նչն է հիմք ընդունվում նշված հոդվածով սահմանված դեպքերում եկամտի հաշվարկի համար:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Սույն գործով Վճռաբեկ դատարանն արդեն արտահայտել է «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքի վերոնշյալ հոդվածների մեկնաբանության հետ կապված իր դիրքորոշումը:

Մասնավորապես, վերոնշյալ հոդվածը հիմք ընդունելով՝ Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ սույն գործով պարզեցված հարկով հարկվող շրջանառությունը կազմում է տվյալ շինության գույքահարկով հարկման նպատակով դրա համար օրենքով սահմանված կարգով որոշվող արժեքից ոչ պակաս (տես՝ «Մուստանգ» արտադրական կոդայերատիվն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության Էրեբունու հարկային տեսչության՝ 13.06.2007 թվականի թիվ 1023320 ստուգման ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին թիվ 3-1765(ՏԳ) գործով Վճռաբեկ դատարանի 25.12.2007 թվականի որոշումը):

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ գույքահարկով հարկման բազա է համարվում հարկվող օբյեկտի արժեքային մեծությունը: Ընդ որում, շինությունների հարկման բազա է համարվում նույն օրենքի բաղկացուցիչ մասը կազմող հավելվածով սահմանված կարգով գնահատված կադաստրային արժեքը: Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ սույն գործով գույքի արժեք պետք է համարել առնվազն դրա կադաստրային արժեքը: Այսինքն՝ «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածը վերը նշված դեպքերում եկամտի հաշվարկման համար հիմք է ընդունում դրա կադաստրային արժեքը՝ անկախ նրանից՝ շինությունն օտարվել է հատուցմամբ, թե անհատույց:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածից ամենևին չի բխում եկամտո ստանալու փաստի պարտադիր լինելը:

### **Գործարքից ծագող իրավունքների գրանցում**

#### **31.10.2008թ.**

17.(101) Արմինե Աբրոյան v. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արարատի մարզի Մասիսի տարածքային ստորաբաժանում, ՀՀ Արարատի մարզի Այնթափի գյուղապետարան, Լյովիկ Սուքիասյան, երրորդ անձ՝ ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի նոտարական գրասենյակ, վարչական գործ թիվ ՎԳ-3/0099/05/08 (անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցումն անվավեր ճանաչելու, սեփականության իրավունքը տան և տնամերձ հողամասի նկատմամբ գրանցելուն պարտավորեցնելու պահանջներով): Էջ  
516-519

Խնդիր. Արդյո՞ք ՀԽՍՀ 1964 թվականի քաղաքացիական օրենսգրքի գործողության ժամանակ կնքված և գրանցված գյուղական բնակավայրերում գտնվող բնակելի տան առուծախի պայմանագիրը կարող է անվավեր ճանաչվել, այն հիմքով, որ պայմանագրի գրանցումը կատարվել է դրա համար օրենքով նախատեսված ժամկետի խախտմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Սույն գործով կիրառելի ՀԽՍՀ քաղաքացիական օրենսգրքի 257-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բնակելի տան և շինանյութերի նվիրատվության պայմանագրերը պետք է կնքված լինեն սույն օրենսգրքի համապատասխանաբար 241 և 241<sup>1</sup> հոդվածներով սահմանված ձևով:

Նույն օրենսգրքի 241-րդ հոդվածի համաձայն՝ գյուղական բնակավայրերում գտնվող բնակելի տան առուծախի պայմանագիրը պետք է կնքվի գրավոր և գրանցվի պատգամավորների գյուղական խորհրդի կոմիտեում: *Բնակելի տան առուծախի պայմանագիրը կնքված է համարվում նրա գրանցման պահից:* Գրանցումը պետք է կատարվի նոտարական վավերացման օրվանից ամենաուշը երեք ամսում: Այս հոդվածի կանոնների չկատարումը անվավեր է դարձնում տան առուծախի պայմանագիրը:

Վերոնշյալ հոդվածներից հետևում է, որ դրանցով կարգավորվում են ոչ թե բնակելի տան նկատմամբ գնորդի իրավունքների պետական գրանցման, այլ բնակելի տան առուծախի պայմանագրի գրանցման հարցը, որով պայմանավորվում է դրա կնքման պահը: Այսինքն՝ վերոնշյալ հոդվածներով նախատեսվում է անշարժ գույքի օտարման պայմանագրի գրանցման պարտավորություն և դրա չգրանցման հետևանքը, այն է՝ պայմանագրի անվավերությունը: Հետևաբար, պայմանագրի անվավերության հիմք էր պայմանագրի չգրանցումը, իսկ արդեն իսկ գրանցված պայմանագիրը չի կարող անվավեր ճանաչվել այն հիմքով, որ պայմանագրի գրանցումը կատարվել է դրա համար օրենքով նախատեսված ժամկետի խախտմամբ:

## Ճեռնարկատիրական գործունեություն

**26.12.2008թ.**

18.(102) ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության **Էջ 520-525**  
 Եղեգնածորի տարածքային հարկային տեսչություն v. Սերգեյ Սկրտչյան, վարչական գործ թիվ ՎԳ-3/0169/05/08 (գումարի բռնագանձման պահանջով և ըստ հակընդդեմ հայցի՝ ստուգման ակտը վերացնելու պահանջով):

**Խնդիր.** 1. Որո՞նք են ձեռնարկատիրական գործունեության հիմնական բնորոշիչ հատկանիշները:

2. Ո՞ր դեպքում տարածքային հարկային տեսչության պետի կողմից արձակված հանձնարարագիրը կարող է դիտվել իրավասու մարմնի կողմից արձակված հանձնարարագիր:

**ՀՀ վճարելի դատարանը որոշեց.** 1) Քաղաքացու կողմից իրականացվող գործունեության բնույթը (այդ թվում նաև՝ ձեռնարկատիրական լինելը) որոշելիս, անհրաժեշտ է օրենքով սահմանված պարտադիր հատկանիշների առկայությունը որոշել, մասնավորապես, հետևյալ հանգամանքները բացահայտելուց հետո.

1. արդյո՞ք գործունեությունն իրականացվել է անձի նախաձեռնությամբ և կամքով,

2. արդյո՞ք գործունեությունը կրում է պարբերական բնույթ,

3. արդյո՞ք գործունեությունն ի սկզբանե իրականացվել է հատկապես շահույթ (եկամուտ) ստանալու նպատակով,

4. արդյո՞ք գործունեությունն իրականացվում է որպես մասնագիտություն (արհեստ), որի արտաքին դրսևորումներից կարելի համարել առևտրի իրականացման կամ ծառայությունների մատուցման հատուկ տարածքի (խանութ, սրահ, արհեստանոց, այլ արտադրական տարածք, հատուկ հարմարեցված տրանսպորտային միջոց), տեղեկատվական-գովազդային բնույթի միջոցառումների, սպրանքի մեծ քանակության և տեսականու առկայությունը,

5. արդյո՞ք քաղաքացու տնտեսական գործունեությունը (քաղաքացիաիրավական գործարքը) վերաբերում է նրա անձնական գույքին,

6. այլ առանձնահատուկ հատկանիշներ (տե՛ս օրինակ՝ Նունե Սահակյանն ընդդեմ «Իտարկո Քոնսթրաքշն» ՓԲԸ-ի՝ ապօրինի տիրապետումից «Շինտրաստ» ՓԲԸ-ի 102.050 հատ բաժնետոմսերը հետ պահանջելու և վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձ Ստեփան Ախոյանի հայցի ընդդեմ «Իտարկո Քոնսթրաքշն» ՓԲԸ-ի՝ սեփականատիրոջ իրավունքի խախտումը վերացնելու նպատակով «Իտարկո Քոնսթրաքշն» ՓԲԸ-ի՝ ապօրինի տիրապետումից «Շինտրաստ» ՓԲԸ-ի 102.050 հատ բաժնետոմսերը հետ պահանջելու պահանջների մասին, թիվ 3-1161 (ՏԳ) քաղաքացիական գործով ՀՀ վճարելի դատարանի 01.08.2007 թվականի որոշումը):

2) Սույն գործի փաստերի համաձայն՝ 27.02.2008 թվականի թիվ 2325406 ստուգման հանձնարարագիրն արձակվել է Եղեգնաձորի տարածքային հարկային տեսչության պետի կողմից, որի արձակման լիազորությունը, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 11.1-րդ հոդվածի, «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ մասի և ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության պետի 15.07.2005 թ-ի թիվ 1-06/379-Ա հրամանի ուժով, տեսչության պետին է փոխանցվել ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության պետի կողմից:

Վերոնշյալից հետևում է, որ 27.02.2008 թվականի թիվ 2325406 հանձնարարագիրն արձակվել է նման լիազորություն ունեցող մարմնի կողմից:

### 26.12.2008թ.

19.(103) ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության Արտաշատի տարածքային հարկային տեսչություն v. Ժորա Դանիելով, վարչական Էջ 526-530 կան գործ թիվ ՎԴ-3/0207/05/08 (գումար բռնագանձելու պահանջով և ըստ հակընդդեմ հայցի՝ ակտը վերացնելու պահանջով):

Խնդիր. Արդյո՞ք դատարանը, անհրաժեշտ համարելով որևէ փաստի ապացուցման անհրաժեշտությունը, պարտավոր է պահանջել այդ փաստը հիմնավորող ապացույցներ:

#### Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը, անհրաժեշտ համարելով Տեսչության պետի կողմից համապատասխան փաստի ապացուցման անհրաժեշտությունը, պետք է պահանջեր ներկայացնելու այդ փաստերի ապացույցները: Մինչդեռ Դատարանը, առանց Տեսչությունից համապատասխան ապացույցը պահանջելու, այդ փաստը հիմնավորված չի համարել՝ այդ հանգամանքը նույնպես դնելով վարչական ակտն անվավեր ճանաչելու հիմքում:

## **Վարչական վարույթ**

### 26.12.2008թ.

20.(104) ՀՀ աշխատանքի պետական տեսչություն v. «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի խորհրդի նախագահ-գլխավոր տնօրեն Վալերի Օվսյաննիկով, վարչական գործ թիվ ՎԴ-0016/05/08 (պատասխանողին գործողություններ կատարելուն պարտավորեցնելու և պարտավոր անձի նկատմամբ տուգանք նշանակելու պահանջներով ըստ հակընդդեմ հայցի՝ որոշումն անվավեր ճանաչելու և այն վերացնելու պահանջներ):

Խնդիր. Արդյո՞ք վարչական մարմինը վարչական պատասխանատվության ենթարկվող անձին վարույթի տեղի և ժամանակի մասին ծանուցելով, կարող է խախտել անձի՝ վարույթին ներկա գտնվելու և լավամ լինելու իրավունքը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վարչական մարմինը (տեսչությունը) ունի պատշաճ ծանուցման ձևի ընտրության հայեցողություն: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերի քննության մասին վարույթի մասնակիցներին ծանուցելը պետք է նպատակ հետապնդի ապահովել պատասխանատվության ենթարկվող անձին լսելու հնարավորությունը, ինչը հնարավորություն կտա վերջինիս լիարժեք իրականացնել իր իրավունքների պաշտպանությունը: Հետևաբար, ընտրվող պատշաճ ծանուցման ձևը պետք է լինի այնպիսին, որ անձին հնարավորություն ընձեռի ապահովել վերոհիշյալ պահանջները:

Սույն գործի փաստերից հետևում է, որ Տեսչության պետի՝ Վարչական վարույթ հարուցելու մասին 09.10.2007 թվականի թիվ 13-Ա որոշմամբ հարուցված վարչական վարույթը նշանակվել է 15.10.2007 թվականին ժամը 11:00-ին, որպիսի որոշումն էլ 12.10.2007 թվականի թիվ 542 ծանուցմամբ, փոստային առաքմամբ, ուղարկվել է Ընկերության տնօրենների խորհրդի նախագահ, գլխավոր տնօրեն Վալերի Օվսյաննիկովին, Ընկերությունում այն ստացել է 15.10.2007 թվականին 11:45-ին: Նույն օրը՝ 15.10.2007 թվականին, ժամը 11.00-ին նշանակված վարչական գործի քննության արդյունքում Տեսչությունը կայացրել է Ընկերության աշխատողներին գիշերային աշխատանքի համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով հավելումը վճարելու մասին 15.10.2007 թվականի թիվ 15-Ա որոշումը:

Վերը նշված փաստերի համադրության արդյունքում Վճարել դատարանը գտնում է, որ չնայած Տեսչությունը ծանուցել է Ընկերությանը և Ընկերության տնօրենների խորհրդի նախագահ, գլխավոր տնօրեն Վալերի Օվսյաննիկովին վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության մասին, սակայն ծանուցելու օրենքով սահմանված իր հայեցողությունն իրականացրել է ոչ պատշաճ, քանի որ թե Ընկերությունը և թե Ընկերության տնօրենների խորհրդի նախագահ, գլխավոր տնօրեն Վալերի Օվսյաննիկովը 15.10.2007 թվականին ժամը 11:00-ին նշանակված վարչական վարույթի մասին ծանուցումը ստանալով նույն օրը՝ 15.10.2007 թվականին, չէին կարող ողջամտորեն ներկա գտնվել նշանակված վարչական վարույթին, ինչի արդյունքում չի ապահովվել նրանց՝ լսված լինելու իրավունքը, գրկելով վարչական վարույթի մասնակիցներին լիարժեք իրականացնելու իրենց իրավունքերի ու ազատությունների արդյունավետ պաշտպանությունը, դրանով իսկ խախտելով ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասով և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 13-րդ հոդվածով երաշխավորված՝ պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը:

### Կրեդիտորական պարտք

#### 26.12.2008թ.

21. (105) ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության Մպանդարյանի 1 հարկային տեսչություն v. «Հայթորթերդ» ՓԲԸ, վարչական գործ թիվ ՎԳ/0217/05/08 (գումարի բռնագանձման պահանջով և ըստ հակընդդեմ հայցի՝ ակտն անվավեր ճանաչելու պահանջով):

Էջ  
538-542

Խնդիր. Արդյո՞ք ք դուրս գրված անհուսալի կրեդիտորական պարտքի գումարը հաշվի է առնվում հաշվետու տարվա հարկվող շահույթը որոշելիս:

Վճարել դատարանի դիրքորոշումը. Ընկերության կողմից շահաբաժինների վճարումը բաժնետիրոջը 2002 թվականի համար կարող էր կատարվել ոչ ուշ, քան 01.10.2002 թվականը, իսկ 2003 թվականի համար՝ 01.10.2003 թվականը, որպիսի գործողությունները, սակայն, ոչ միայն սահմանված ժամկետներում, այլև ընդհանրապես չեն կատարվել Ընկերության կողմից: Այսինքն՝ ՀՀ կառավարության 19.12.2002 թվականի թիվ 2052-Ն որոշմամբ հաստատված կարգի ուժով Ընկերության նշված կրեդիտորական պարտքը կետանցված դառնալու 366-րդ օրվանից համարվել է անհուսալի, որը ենթակա էր դուրսգրման՝ անհուսալի դառնալու հաշվետու տարում, իսկ դուրս գրված անհուսալի կրեդիտորական պարտքի գումարն էլ, որպես եկամուտ, պետք է հաշվի առնվեր Ընկերության հաշվետու տարվա հարկվող շահույթը որոշելիս:

---

---

## Հարկային արտոնություններ

**26.12.2008թ.**

22. (106) «Սափ» ՓԲԸ v. ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն, վարչական գործ թիվ ՎԳ/0041/05/08 (օրենքին հակասող ակտերն անվավեր ճանաչելու պահանջով): **Էջ 543-547**

**Խնդիր.** Ո՞վ է կրում ստուգման ժամանակ հարկային արտոնությունների առկայության վերաբերյալ փաստաթղթեր ներկայացնելու պարտականությունը և դրանք չներկայացնելու իրավական անբարենպաստ հետևանքների բեռը:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը, հարկ է համարում արձանագրել, որ վարչարարության յուրաքանչյուր առանձին տեսակի իրականացման ժամանակ պետք է հաշվի առնվեն ոչ միայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթները, այլև համապատասխան կոնկրետ ոլորտը կարգավորող օրենքների պահանջները: Այս եզրահանգման համար հիմք է հանդիսանում նաև վերոնշյալ օրենքի 2-րդ հոդվածը, որի համաձայն՝ առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և ՀՀ միջազգային պայմանագրերով:

Մասնավորապես, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածով հստակ սահմանված է, որ հարկային արտոնությունների առկայության փաստը հաստատելու համար փաստաթղթեր ներկայացնում է հարկ վճարողը:

Հետևաբար, ստուգման ժամանակ հարկային արտոնությունների առկայության վերաբերյալ փաստաթղթերը պետք է ներկայացնեն Ընկերությունը, որը չներկայացնելու դեպքում այդ արտոնությունների առկայությունը համարվում է չհիմնավորված:

### Ոչ պատրաստի արտադրանքի կամ ապրանքի ներտնտեսական տեղափոխում

**26.12.2008թ.**

23. (107) «Կայարանչին» ՍՊԸ v. ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն, վարչական գործ թիվ ՎԳ/0470/05/08 (օպերատիվ-հետախուզական վարչության Սպանդարյանի բաժնի ակտը վերացնելու պահանջով): **Էջ 548-550**

**Խնդիր.** Արդյո՞ք տնտեսվարող սուբյեկտների կողմից առաքումների գրանցման գրքերում գրանցման (հաշվառման) ենթակա են ոչ պատրաստի արտադրանքի կամ ապրանքի ներտնտեսական տեղափոխումը:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** ՀՀ կառավարության 31.07.1997 թվականի թիվ 314 որոշմամբ հաստատված Կարգի 2-րդ մասի կիրառման համար անհրաժեշտ է երկու վավերապայմանների միաժամանակյա առկայությունը: Դրանք են՝ գույքի պատրաստի արտադրանք կամ ապրանք չհանդիսանալը և դրա ներտնտեսական (նույն հասցեի տարածքում) տեղափոխումը:

Դատարանը հայցի մերժման հիմքում դրել է այն հանգամանքը, որ Ընկերությունը շինարարական կազմակերպություն է, որն իրականացրել է ոչ պատրաստի արտադրանք ապրանքի (հումքի) ներտնտեսական տեղափոխություն: Հետևաբար՝ Ընկերության կողմից պահեստից նույն հասցեում գտնվող շինհրապարակ տեղափոխվող ամրանը, մեխը և բետոնը պատրաստի ապրանք չէ, ուստի այն են-

թակա չէ գրանցման առաքվող, տրամադրվող, տեղափոխվող կամ վաճառվող արտադրանքի, ապրանքների գրանցման գրքում:

Մինչդեռ սույն գործով Դատարանը չի անդրադարձել և գնահատման առարկա չի դարձրել ապրանքը նույն հասցեով տեղափոխված լինելու հանգամանքը, ուրը համապատասխան գրանցման գրքում գրանցում չկատարելու համար պարտադիր վավերապայման է:

## Դատավարական իրավունքի վերաբերյալ որոշումներ

### Ապացույցներ և ապացուցում

#### 31.10.2008թ.

24.(108) Երևանի քաղաքապետարան v. Արսեն Մակարյան, վարչական գործ **Էջ 551-554**  
 թիվ ՎԴ/0009/05/08 (գումարի բռնագանձման պահանջով):

Խնդիր. Ինչպիսի՞ փաստեր պետք է հաստատվեն ինքնակամ շինություն կառուցելու համար նախատեսված տուգանքը կիրառելու և այդ շինությունը քանդելու պահանջի մասին գործերի քննության ժամանակ:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը, մեկնաբանելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 168-րդ և ՀՀ հողային օրենսգրքի 55-րդ հոդվածները, նշել է, որ հողամասի՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձին պատկանելու մասին գործում որևէ ապացույցի բացակայության պայմաններում գործում է դրա՝ պետական սեփականություն լինելու կանխավարկածը (տե՛ս Սիմոն Սարգսյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին թիվ 3-1835(Ա) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 12.12.2007 թվականի որոշումը):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի համաձայն՝ ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված շենքը, շինությունը կամ այլ կառույցը: Հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցը: Չօրինականացված ինքնակամ կառույցը պետության, համայնքի կամ այլ շահագրգիռ անձի հայցով, որի իրավունքները և օրենքով պահպանվող շահերը խախտվել են, ենթակա է քանդման, իսկ հողամասը՝ նախկին վիճակի վերականգնման՝ հողամասի սեփականատիրոջ հաշվին: Ուրիշի հողամասում ինքնակամ կառույց իրականացրած անձը պարտավոր է հատուցել հողամասի սեփականատիրոջը հասցրած վնասը, ներառյալ ինքնակամ կառույցի քանդման և հողամասի նախկին վիճակի վերականգնման ծախսերը:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ ինքնակամ կառույցը քանդելու նախապայման է հանդիսանում այդ կառույցով այլ անձանց իրավունքների խախտումը, անկախ ինքնակամ կառույցը կառուցած անձին սեփականության իրավունքով պատկանող հողամասում կառուցված լինելու հանգամանքից:

Մինչդեռ Դատարանը, ինքնակամ կառույցը քանդելուն պարտավորեցնելու հարցը կախվածության մեջ դնելով ինքնակամ շինությունը պետության սեփականություն հանդիսացող հողամասում կառուցված լինելու փաստից, չի հիմնավորել սույն վարչական գործի համար այդ փաստի էական նշանակություն ունենալու հանգամանքը:

*\* Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը անդրադարձել է դատական ակտի իրավական հիմնավորվածության հարցին՝ կրկնելով նախկինում կայացրած որոշմանը՝ արտահայտած դիրքորոշումը (տե՛ս օրինակ՝ ՀՀ ԿԱ պետական գույքի*

---

---

կառավարման վարչություն v. «Բնար-88» ՍՊԸ, քաղ. գործ թիվ 3-2504/ՏԳ (գումար բռնագանձելու պահանջով), ՀՀ վճռաբեկ դատարան 21.12.2006 թվականի որոշումը):

25.(109) ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտե v. Մամվել Հովսեփյան, վարչական գործ թիվ ՎԳ/0557/05/08 (գումարի բռնագանձման և մաքսային պարտավորության կատարմանը պարտավորեցնելու պահանջներով): Էջ  
555-557

Խնդիր. Ո՞ր փաստին պետք է անդրադառնա դատարանը մաքսային ապրանքները մի մաքսային մարմնից մյուսը օրենքով սահմանված ժամկետում չհասցնելու դեպքում կիրառված վարչական պատասխանատվության դեպքում:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Սույն գործով հայցապահանջի մերժման հիմքում դրվել է այն հանգամանքը, որ Մամվել Հովսեփյանը ՀՀ մաքսային օրենսգրքի 105-րդ հոդվածի հիման վրա իրավունք ունի առանց մաքսատուրք վճարելու որպես ուղեկցող բեռ ՀՀ մաքսային սահմանով տեղափոխել ապրանքներ, որոնց ներմուծման համար մաքսատուրքի դրույքաչափը նույն օրենսգրքով սահմանված չէ գրո տոկոս և որոնց ընդհանուր քաշը չի գերազանցում 50 կիլոգրամը, իսկ ընդհանուր մաքսային արժեքը՝ 150.000 ՀՀ դրամը և սույն գործով չի հիմնավորվել ներմուծված անվադողերի և անվահեծերի արժեքի՝ 150.000 ՀՀ դրամից ավելի լինելու հանգամանքը:

Մինչդեռ Մամվել Հովսեփյանը վարչական պատասխանատվության է ենթարկվել մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքները Արարատյան տարածաշրջանային մաքսատուն սահմանված ժամկետում չհասցնելու համար: Այսինքն՝ սույն գործով կիրառման ենթակա է ՀՀ մաքսային օրենսգրքի 195-րդ հոդվածը, որով վարչական պատասխանատվություն է նախատեսվում մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքները կամ տրանսպորտային միջոցները սահմանված ժամկետում չհասցնելու համար:

Հետևաբար, ներկայացված հայցապահանջի հիմնավորվածությունը գնահատելիս Դատարանը պետք է գնահատման առարկա դարձներ ամփոփագրի մեջ նշված ապրանքները Մամվել Հովսեփյանի կողմից մինչև օրենքով սահմանված տասնօրյա ժամկետը Արարատյան տարածքային մաքսային կետ հասցված լինելու հանգամանքը:

26.(110) ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության Մարտունու հարկային տեսչություն v. անհատ ձեռնարկատեր Վաղարշակ Մկրտչյան, վարչական գործ թիվ ՎԳ-2/0038/05/08 (գումարի բռնագանձման պահանջով): Էջ  
558-561

Խնդիր. Ինչի՞ հիման վրա է դատարանը հաստատում այս կամ այն փաստի առկայությունը կամ բացակայությունը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը պետք է պարզի կողմերի ներկայացրած պահանջների և առարկությունների, ինչպես նաև այն իրավական ակտերի հիման վրա, որոնք կիրառելի են տվյալ գործով: Դրանց միջոցով է Դատարանի համար պարզ դառնում, թե տվյալ գործով որ փաստի (փաստերի) առկայությունը կամ բացակայությունը կարող է հիմք հանդիսանալ հայցը բավարարելու կամ մերժելու և համապատասխան իրավական նորմերը տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի դարձնելու համար:

27.(111) ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության Վարդենիսի հարկային տեսչություն v. «Պապ Գերասիմ» ՍՊԸ, վարչական գործ թիվ ՎԳ-2/0083/05/08 (գումարի բռնագանձման պահանջով): Էջ  
562-565

**Խնդիր 1.** Արդյո՞ք դատարանը պետք է պատճառաբանի նաև կողմի ներկայացրած ապացույցները ոչ բավարար համարելու վերաբերյալ իր դիրքորոշումը:

2. Ինչպիսի՞ փաստերի առկայության ուժով լիցենզավորված անձի մոտ կարող է հիմնավորվել պետական տուրք վճարելու պարտավորության առկայությունը:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. 1)** Դատական ակտի պատճառաբանվածության վերաբերյալ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 132-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածների պահանջը ենթադրում է, որ դատարանը պետք է պատճառաբանի նաև կողմի ներկայացրած ապացույցները ոչ բավարար համարելու վերաբերյալ իր դիրքորոշումը, ինչպես նաև որոշի տվյալ փաստական հարաբերությունների նկատմամբ կիրառման ենթակա նորմը, որը սույն գործով դատարանը չի կատարել:

2) Հիմք ընդունելով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 7-րդ և 19-րդ հոդվածները, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ լիցենզավորված անձի մոտ յուրաքանչյուր տարի պետական տուրք վճարելու պարտավորությունը ծագում է լիցենզիա տալու ուժով: Այսինքն՝ Ընկերության մոտ պետական տուրք վճարելու պարտավորության առկայությունը կարող է հիմնավորվել համապատասխան իրավասու պետական մարմնի կողմից լիցենզիա տրված լինելու և այն Ընկերության կողմից արդեն իսկ վճարված չլինելու փաստով:

**31.10.2008թ.**

28.(112) ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության **Էջ** Ավանի հարկային տեսչություն v. «Վառադ» ՍՊԸ, վարչական գործ թիվ **566-569** ՎԳ/0193/05/08 (գումարի բռնագանձման պահանջով):

**Խնդիր.** Արդյո՞ք պաշտոնատար անձի տրամադրած տեղեկությունները, որպես ապացույց, բավարար են գործի համար էական նշանակություն ունեցող փաստերը պարզելու հարցում:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Սույն գործով պետական տուրքի մասով հայցը մերժելիս Դատարանը գտել է, որ հայցվորի կողմից գործի քննության ընթացքում չներկայացվեց պետական տուրքի գանձման օբյեկտը՝ լիցենզիան:

Սինդեռ դատարանը գնահատման առարկա չի դարձրել այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալի կողմից ներկայացված տեղեկությունները վերաբերելի ապացույց են և հավանական են դարձնում լիցենզիա տալու փաստը, քանի որ նշված տեղեկությունները ուղղակիորեն հավաստում են լիցենզիան տրամադրելու փաստը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալի կողմից տրված տեղեկությունները կարող են փոխարինել լիցենզիայի բնօրինակին գործի համար էական նշանակություն ունեցող փաստերը պարզելու գործում, քանի որ ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալի տեղեկությունները տրամադրվել են լիցենզիան տրամադրված մարմնի՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության պաշտոնատար անձի կողմից:

**26.12.2008թ.**

29.(113) Օլեգ Գոլովյան v. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի **Էջ** կադաստրի պետական կոմիտե, երրորդ անձինք՝ Երևանի քաղաքապետարանի, **570-574** «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ, «Գլենդել Հիլզ» ՓԲԸ, վարչական գործ թիվ ՎԳ/1822/05/08 (սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելուն պարտավորեցնելու պահանջով):

Խնդիր. Արդյո՞ք հողամասի՝ պետական սեփականություն հանդիսանալու փաստը ենթակա է ապացուցման:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշմամբ արդեն իսկ արտահայտել է իրավական դիրքորոշում այն մասին, որ վեճի առարկա հողամասը ֆիզիկական կամ իրավաբանական անձին պատկանելու մասին որևէ ապացույցի բացակայության դեպքում գործում է դրա՝ պետական սեփականության լինելու կանխավարկածը (իրավական հիմնավորումները տես՝ Սիմոն Սարգսյան ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին, քաղաքացիական գործ թիվ 3-1835 (Ա) ՀՀ վճռաբեկ դատարանի 12.12.2007 թվականի որոշում), (տես օրինակ՝ Երևանի քաղաքապետարան v. Արտակ Ռսկանյան, վարչական գործ թիվ ՎԳ/0377/05/08 (ինքնակամ շինությունը քանդելու և գումար բռնագանձելու պահանջներով) ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2008 թվականի որոշում):

### **Գործ հարուցելու հիմքը և հայցի տեսակները**

#### **26.12.2008թ.**

30.(114) Երևանի քաղաքապետարան v. Լենո Չախարյան, վարչական գործ **Էջ** թիվ ՎԳ/1494/05/08 (տարածքը նախկին տեսքի բերելուն պարտավորեցնելու և **575-578** գումար բռնագանձելու պահանջներով):

Խնդիր. Արդյո՞ք Երևանի քաղաքապետարանի կողմից ինքնակամ շինությունը քանդելու և տարածքը նախկին տեսքի բերելու վերաբերյալ կայացրած որոշման առկայությունը բավարար է որոշակի գործողություններ կատարելուն պարտավորեցնելու մասին հայց ներկայացնելու համար:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Երևանի քաղաքապետը, ՀՀ Նախագահի 06.05.1997 թվականի թիվ ՆՀ-727 հրամանագրով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում, միջոցներ է ձեռնարկել ապօրինի շինարարության վերացման ուղղությամբ, որպիսի գործողություններն իրենց մեջ ընդգրկում են նաև ինքնակամ կառույցի քանդման ու հողամասի սեփականատիրոջ հաշվին հողամասի նախկին վիճակը վերականգնելու ուղղությամբ համապատասխան միջոցների ձեռնարկումը:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում Դատարանի եզրահանգումն այն մասին, որ բացակայում է տարածքը նախկին տեսքի բերելուն Լենո Չախարյանին պարտավորեցնելու պահանջի բավարարման իրավական հիմքերը:

Բացի այդ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Երևանի քաղաքապետի 07.11.2007 թվականի թիվ Վ-18/4 որոշմամբ Լենո Չախարյանին առաջարկվել է տարածքը բերել նախկին տեսքի, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անհիմն է դատարանի եզրահանգումն այն մասին, որ Երևանի քաղաքապետարանը պարտավորեցման հայցադիմում է ներկայացրել դատարան առանց վարչական ակտի ընդունման:

31.(115) ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության **Էջ** Կապանի տարածքային հարկային տեսչություն v. «Հ.Թոսունյան» ՍՊԸ-ի տնօրեն Հակոբ Թոսունյան, վարչական գործ թիվ ՎԳ-1/0052/05/08 (վարչական տուգանքի բռնագանձման պահանջով և ըստ հակընդդեմ հայցի՝ որոշումը և ակտը վերացնելու պահանջներով): **579-581**

Խնդիր. Ո՞ր օրվանից է հաշվարկվում վարչական ակտը դատական կարգով բողոքարկելու երկամսյա ժամկետը այն դեպքում, երբ այդ ակտը, մինչ դատական կարգով բողոքարկելը, բողոքարկվել է նաև վարչական կարգով:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Տեսչության 20.02.2008 թվականի թիվ 1110403 ակտն Ընկերության տնօրենին ներկայացվել է 22.02.2008 թվականին: 13.03.2008 թվականին ակտը վարչական կարգով բողոքարկվել է Հանձնաժողովին, որի 28.03.2008 թվականի որոշմամբ ակտը թողնվել է անփոփոխ: Վերոնշյալից հետևում է, որ Տեսչության 20.02.2008 թվականի ակտը դատական կարգով կարող էր բողոքարկվել 14.04.2008-ից (վարչական կարգով ակտի բողոքարկման համար սահմանված երեսուրյա ժամկետն ավարտվելու հաջորդ օրվանից) հաշվարկած երկու ամսվա ընթացքում՝ մինչև 14.06.2008 թվականը:

Սույն գործով Տեսչության 20.02.2008 թվականի թիվ 1110403 ակտի վիճարկման պահանջը դատարան է ներկայացվել 20.05.2008 թվականին: Այսինքն, Ընկերությունն ակտի վիճարկման պահանջը դատարան է ներկայացրել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածի պահանջների պահպանմամբ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների խախտման արդյունքում պատասխանողը գրկվել է դատական կարգով բողոքարկված վարչական ակտի ըստ էության քննության հնարավորությունից:

32.(116) Ռուբեն Միրաքյան v. Եվա Գևորգյան, Երևանի քաղաքապետարան, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Կենտրոն տարածքային ստորաբաժանում, վարչական գործ թիվ ՎԳ/0476/05/08 (Երևանի քաղաքապետի որոշումը և սեփականության իրավունքի գրանցումը մասնակի անվավեր ճանաչելու և տան 1/2 մասի սեփականատեր ճանաչելու պահանջներով):

Էջ  
582-584

Խնդիր. Արդյո՞ք սեփականության իրավունքի գրանցումը մասնակի անվավեր ճանաչելու պահանջ ներկայացված լինելու դեպքում սեփականության իրավունքի գրանցումն ամբողջությամբ անվավեր ճանաչելով՝ դատարանը դուրս է գալիս հայցապահանջի շրջանակներից:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Ռուբեն Միրաքյանը պահանջել է մասնակիորեն անվավեր ճանաչել Քաղաքապետի 09.11.2005 թվականի թիվ 2391-Ա որոշման 100-րդ կետը և սեփականության իրավունքի գրանցումը՝ 1/2 մասով այն հիմքով, որ տարածքի նկատմամբ Ռուբեն Միրաքյանի օգտագործման իրավունք ունենալու պայմաններում վիճելի որոշմամբ ճանաչվել է միայն Եվա Գևորգյանի սեփականության իրավունքը: Մինչդեռ, Դատարանը Քաղաքապետի որոշման 100-րդ կետը և Եվա Գևորգյանի սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր է ճանաչել ամբողջությամբ: Այսինքն՝ Դատարանը, դուրս է եկել հայցի շրջանակներից, ինչը հանգեցրել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ, 64-րդ և 113-րդ հոդվածների պահանջների խախտմանը և վարչական գործի սխալ լուծմանը:

### **Վարչական դատարանի դատական ակտը**

#### **31.10.2008թ.**

33.(117) Գրիգոր Գավայան v. ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության Երևանի ստորաբաժանման Մալաթիա-Սեբաստիա բաժանմունք, վարչական գործ թիվ ՎԳ/0292/05/08 (արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին հարկադիր կատարողի որոշումը վերացնելու պահանջով):

Էջ  
585-588

Խնդիր. Ի՞նչպիսի հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վճիռ կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի:

ռաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին (տե՛ս օրինակ՝ Անժելա Ղազարյան, Արփիկ և Արմինե Գասպարյաններ v. Շուշանիկ Սարգսյան, Ոսկեհատ, Նունե, Հրանուշ Գասպարյաններ, քաղ. գործ թիվ 3-1843(ՎԳ) (Ժառանգական գույքը ժառանգների միջև բաժանելու պահանջով), ՀՀ վճռաբեկ դատարանի 12.12.2007 թվականի որոշումը):

**28.11.2008թ.**

34.(118) ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտե v. Ռոման Վարդանյան, վարչական գործ թիվ ՎԳ/0139/05/08 (գումարի բռնագանձման և մաքսային պարտավորության կատարմանը պարտավորեցնելու պահանջներով):

Էջ  
593-592

Խնդիր. Արդյո՞ք մաքսային օրենսդրությամբ սահմանված պայմանի խախտման փաստը հաստատված լինելու դեպքում օրենքով սահմանված սանկցիա չկիրառելով՝ դատարանը թույլ է տվել նյութախրավական նորմի խախտում:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. ՀՀ մաքսային օրենսգրքի 40-րդ հոդվածի համաձայն՝ «Ժամանակավոր ներմուծում» ռեժիմով ներմուծված ապրանքները սահմանված ժամկետում չարտահանելու կամ մասնակի արտահանելու դեպքում ապրանքները տեղափոխող անձը, եթե սահմանված ժամկետում չարտահանված ապրանքները չի հանձնել մաքսային մարմինների պատասխանատու պահպանմանը, պարտավոր է այդ ապրանքների արտահանման համար սահմանված ժամկետի լրանալուն հաջորդող տասն օրվա ընթացքում դրանք վերահայտարարագրել «ներմուծում» ազատ շրջանառության համար» կամ «վերաներմուծում» մաքսային ռեժիմով՝ վճարելով այդ ռեժիմով նախատեսված մաքսային վճարները և դրանք սահմանված ժամկետից ուշ վճարելու համար օրենքով սահմանված տույժերը՝ հաշվարկված այդ ապրանքներն արտահանելու համար սահմանված ժամկետի ավարտի պահից, կամ նույն հոդվածի .աե ենթակետում նշված ժամկետում ապրանքներն արտահանելու դեպքում վճարել նույն ենթակետում նշված տույժերը՝ հաշվարկված դրանք արտահանելու համար սահմանված ժամկետի ավարտի պահից:

ՀՀ մաքսային օրենսգրքի 199-րդ հոդվածի համաձայն՝ հետագա արտահանման պարտավորությամբ ՀՀ ներմուծված ապրանքները և տրանսպորտային միջոցները սահմանված ժամկետում չարտահանելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ այդ ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային արժեքի տասը տոկոսի չափով:

Դատարանի կողմից սույն գործով հաստատված է համարվել Ռոման Վարդանյանի կողմից ՀՀ մաքսային օրենսգրքի 40-րդ հոդվածով նախատեսված պարտավորության չկատարման փաստը:

Վերոնշյալից ակնհայտ է, որ Դատարանի կողմից նորմի դիսպոզիցիայով նախատեսված խախտման փաստը հաստատված համարելու դեպքում օրենքով նախատեսված սանկցիայի չկիրառելը հանդիսանում է ՀՀ մաքսային օրենսգրքի 40-րդ և 199-րդ հոդվածների խախտում:

**26.12.2008թ.**

35.(119) ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն v. «Անկրկնելի Յուլ» ՍՊԸ-ի տնօրեն Մերյոժա Հակոբյան, վարչական գործ թիվ ՎԳ/1492/05/08 (վարչական տուգանք բռնագանձելու պահանջով եւ ըստ հակընդ-

Էջ  
593-596

դեմ հայցի՝ որոշումը մասնակի վերացնելու և մնացած մասը փոփոխելու պահանջներով):

**Խնդիր.** Արդյո՞ք դատարանը, հաստատված համարելով վարչական մարմնի կողմից հայեցողական լիազորության իրականացումը ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ, իրավասու է սահմանել վարչական պատասխանատվության առավելագույն, նվազագույն կամ կոնկրետ չափ:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Այն դեպքում, երբ Դատարանը հաստատված է համարում վարչական մարմնի հայեցողական լիազորության իրականացումը ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ, իրավասու չէ սահմանել պատասխանատվության առավելագույն, նվազագույն կամ կոնկրետ չափ: Այսինքն՝ Դատարանը միջամտել է վարչական մարմնի հայեցողական լիազորությանը, ինչը թույլատրելի է միայն հայեցողական լիազորության իրավաչափության ստուգման տեսանկյունից (տե՛ս Արթուր Խաչատրյանն ընդդեմ Երևանի քաղաքապետի՝ պաշտոնատար անձի օրենքին հակասող ակտը մասնակիորեն անվավեր ճանաչելու պահանջի մասին թիվ 3-295 (ՎԴ) գործով Վճռաբեկ դատարանի 02.03.2007 թվականի որոշումը):

### **Նյութական և դատավարական իրավունքի վերաբերյալ որոշումներ**

#### **28.11.2008թ.**

36. (120) Երևանի քաղաքապետարան v. Արտակ Ռսկանյան, վարչական գործ **Էջ** թիվ ՎԴ/0377/05/08 (ինքնակամ շինությունը քանդելու և գումար բռնագանձելու **597-601** պահանջներով):

**Խնդիր.** 1. Արդյո՞ք հին շինության քանդման և դրա փոխարեն թեկուզև նույն մակերեսով նոր շինության կառուցման համար անհրաժեշտ է համապատասխան թույլտվություն:

2. Արդյո՞ք հողամասի՝ պետական սեփականություն հանդիսանալու փաստը ենթակա է ապացուցման:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** 1) կառույցը համարվում է ինքնակամ, ե-թե

1. այն կառուցվել է օրենքով կամ այլ իրավական ակտերով այդ նպատակի համար չհատկացված հողամասում,

2. կառուցվել կամ վերակառուցվել է առանց թույլտվության,

3. կառուցվել կամ վերակառուցվել է թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական կանոնների էական խախտումներով:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝ շինարարական թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է կառուցապատողի իրավունքը՝ իրականացնել որոշակի շինարարական գործունեություն ինչպես նոր կառուցվող կամ վերակառուցվող տարածքում, այնպես էլ գոյություն ունեցող շենքերում և շինություններում: Շինարարական թույլտվություն չի պահանջվում ՀՀ - կառավարության սահմանած ցանկում ներառված շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման, ներքին հարդարման և տարածքների բարեկարգման աշխատանքների համար, եթե դրանք չեն խոչընդոտում անշարժ գույքի նպատակային օգտագործմանը և չեն հակասում սահմանված սերվիտուտներին:

Սույն գործով Դատարանը հայցի մերժման հիմքում դրել է այն հանգամանքը, որ Արտակ Ռսկանյանի կողմից իրականացվել է վերակառուցում, որի համար շինարարության թույլտվություն չի պահանջվում, հետևաբար, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի կիրառման հիմքերը բացակայում են:

Մինչդեռ վերոնշյալ իրավական ակտերից հետևում է, որ հին շինության քանդման և դրա փոխարեն նորի կառուցման (թեկուզև նույն մակերեսով) համար անհրաժեշտ է համապատասխան թույլտվություն:

2) Վճռաբեկ դատարանը, հաստատված համարելով այն հանգամանքը, որ գործի նյութերում բացակայում է վեճի առարկա հողամասը ֆիզիկական կամ իրավաբանական անձին պատկանելու մասին որևէ ապացույց, արձանագրել է, որ նման դեպքերում գործում է դրա՝ պետական սեփականություն լինելու կանխավարկածը (տե՛ս օրինակ՝ Սիմոն Սարգսյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին թիվ 3-1835(Ա) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.12.2007 թվականի որոշումը):

37.(121) «Նոր Շին» ՍՊԸ v. ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայություն, վարչական գործ թիվ ՎԳ/0262/05/08 (ակտի 1-ին և 4-րդ կետերն անվավեր ճանաչելու պահանջով): Էջ  
602-605

Խնդիր. 1. Արդյո՞ք արդեն իսկ կատարված ծառայությունների մատուցման կամ մատակարարման պայմանգրի դեպքում կիրառելի է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 7-րդ մասը:

2. Արդյո՞ք վարչական գործեր քննելիս դատարանի պարտականությունն է պահանջել վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստեր պարունակող ապացույցներ:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. 1) Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով կիրառելի չէ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասը, քանի որ կողմերն ընդունել են միմյանց միջև մատակարարման պայմանագրի համաձայն պարտավորությունների կատարված լինելու հանգամանքը, իսկ վերոնշյալ նորմը վերաբերում է այն դեպքերին, երբ պայմանագրի կողմը դեռևս ունի պայմանագիրը կատարելու պարտավորություն:

2) ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը վեճի լուծման համար անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով իրավասու է, չսահմանափակվելով վարչական դատավարության մասնակիցների միջնորդություններով, նրանց ներկայացրած ապացույցներով և գործում առկա այլ նյութերով, ձեռնարկելու ողջամիտ միջոցներ, մասնավորապես պահանջելու վարչական վարույթի նյութեր, տեղեկություններ, ապացույցներ, լրացուցիչ բացատրություններ, հանձնարարելու կողմերին անձամբ ներկայանալ դատական նիստի:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ Դատարանի պարտականությունն է պահանջել վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստեր պարունակող ապացույցներ:

Մինչդեռ Դատարանը, գործի քննության ընթացքում պարզելով, որ Կազմակերպության և Ընկերության տնօրենների միջև առկա է մատակարարման կեղծ պայմանագրեր կնքելու փաստի առթիվ հարուցված քրեական գործ, որևէ միջոց չի ձեռնարկել նշված քրեական գործի մասին լրացուցիչ տեղեկություններ պահանջելու համար, այն պայմաններում, երբ վճռի կայացման օրվա դրությամբ առկա էր Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 27.05.2008 թվականի դատավճիռը, առավել ևս, որ դատաքննության ընթացքում Ծառայությունը միջնորդել էր կասեցնելու գործի վարույթը, համապատասխան քրեական գործի առկայության պատճառով:

## Այլ գործեր

### 26.12.2008թ.

38.(122) Ռուբեն Գինույան v. Երևանի քաղաքապետարան, վարչական գործ **Էջ 606-608**  
 թիվ ՎԳ/1944/05/08 (պետական մարմնի ակտը մասնակի վերացնելու պահանջով):

Խնդիր. Արդյո՞ք ք վճռաբեկ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վարչական դատարանում դիրքորոշում արտահայտած չլինելը հիմք է վճռաբեկ բողոքի այդ հիմքը քննության առարկա չդարձնելու համար:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Գործի քննության ընթացքում Քաղապետարանը մերժումը հիմնավորել է այն հանգամանքով, որ սույն գործով շինության՝ կրպակի օգտագործումը չի համապատասխանում հողամասի նպատակային նշանակությանը:

Մինչդեռ վճռաբեկ բողոքը բերվել է այն հիմքով, որ վեճի առարկա հողամասը զբաղեցված է ոչ թե կառուցված հիմնական շինությամբ, այլ ոչ հիմնական շինություն համարվող, սպասարկման համար տեղադրված մետաղական կրպակով, որը սույն գործով քննության առարկա չի դարձվել:

Հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ վճռաբեկ բողոքում բարձրացված հարցադրումները Վարչական դատարանում գործի քննության ժամանակ չեն բարձրացվել, քանի որ դրանք չեն հանդիսացել սույն գործով վեճի առարկա հողամասը Ռուբեն Գինույանին սեփականության իրավունքով փոխանցելը մերժելու հիմք, վճռաբեկ բողոքի հիմքը Վճռաբեկ դատարանը քննության առարկա չի դարձնում:

### 28.11.2008թ.

39.(123) «Գրվաչ» ՍՊԸ v. ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայություն, վարչական գործ թիվ ՎԳ/0695/05/08 (ակտն անվավեր ճանաչելու պահանջով): **Էջ 609-611**

Խնդիր. Արդյո՞ք նույն գործով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ նախկինում արտահայտած դիրքորոշումը հաշվի առնելը պարտադիր է այդ գործի նոր քննության ժամանակ:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մաս ով ուղղակիորեն սահմանվում է Վճռաբեկ դատարանի կողմից տրված իրավական հիմնավորումների պարտադիր բնույթը բոլոր դատարանների համար նույնանման փաստական հանգամանքներով գործեր քննելիս:

Ավելին, սույն գործով առկա են ոչ միայն նույնանման փաստական հանգամանքներ, այլև խոսքը գնում է նույն գործի մասին, որով Վճռաբեկ դատարանը հստակ արտահայտել է իր դիրքորոշումը Հարկերի մասին ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի կիրառելիության վերաբերյալ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարանը թույլ է տվել ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի պահանջների խախտում, հետևաբար ավելորդ է համարում կրկին անդրադառնալ նշված հարցի մեկնաբանմանը:

*\* Միաժամանակ վճռաբեկ դատարանը անդարդարձել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի կիրառելիության հարցին՝ կրկնելով նախկինում կայացրած որոշմանը արտահայտած դիրքորոշումը (տե՛ս օրինակ՝ «Գրվաչ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության՝ 26.04.2007 թվականի թիվ 1107563 ստուգման ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին թիվ 3-1799(ՏԳ) գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.12.2007 թվականի որոշումը):*



*ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ*

---

---

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի վճիռ  
Քաղաքացիական գործ թիվ 07-1961/2007թ.  
Նախագահող դատավոր՝ Վ.Ավանեսյան  
Դատավորներ՝ Գ.Մատինյան  
Դ.Խաչատրյան

Քաղաքացիական գործ թիվ **3-84(ՎԴ)**  
**2008թ.**

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Հ.ՍԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի փետրվարի 01-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Գայանե և Կարինե Հայրապետյանների, Վարդգես Վարդանյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 31.05.2007 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի Վարդիթեր Ավոյանի ընդդեմ Գայանե և Կարինե Հայրապետյանների, Վարդգես Վարդանյանի՝ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին,

### Պ Ա Ր Ձ Ե Ց

#### 1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան, Վարդիթեր Ավոյանը պահանջել է ձեռքբերման վաղեմության ուժով ճանաչել սեփականության իրավունքը Երևանի Ներքին Շենգավիթի 12 փողոցի 1-ին նրբանցքի 19ա տան 25 և 22 քմ մակերեսով սենյակների նկատմամբ:

Երևանի Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանի 27.03.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ վերաքննիչ դատարան) 31.05.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է: Ճանաչվել է Վարդիթեր Ավոյանի սեփականության իրավունքը Երևան քաղաքի Ներքին Շենգավիթի 12 փողոցի 1-ին նրբանցքի 19ա տան 25 և 22 քմ մակերեսներով սենյակների, 8,37 և 1,44 քմ մակերեսներով օժանդակ հարմարությունների և այդ կառույցներով ծանրաբեռնված հողամասի նկատմամբ:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Գայանե, Կարինե Հայրապետյանները և Վարդգես Վարդանյանը:

Վճռաբեկ բողոքին պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) *Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, որի արդյունքում չի կիրառել ՀՀ Սահմանադրության 8-րդ, 31-րդ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածները, ինչպես նաև Կոնվենցիայի առաջին արձանագրության առաջին հոդվածը, որոնք պետք է կիրառեն, կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ, 280-րդ հոդվածները, որոնք չպետք է կիրառեն:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով:*

23.04.1970 թվականի պայմանագրով վեճի առարկա 25 և 14 քմ մակերեսներով սենյակների նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցելու պարտավորություն նախատեսված չէ: Այդ պայմանագրով Ավետիք Մարտիրոսյանը և Վարդիթեր Ավոյանը ձեռք են բերել ընդամենը բնակության (օգտագործման) իրավունք վիճելի բնակավայրերի նկատմամբ: Նշվածը հիմնավորվում է նաև այն հանգամանքով, որ վերոհիշյալ պայմանագրով որպես պայմանագրի հիմնական առարկա նշվում է գրանցման հանգամանքը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ և 280-րդ հոդվածները տվյալ դեպքում չէին կարող կիրառվել, քանի որ Վարդիթեր Ավոյանի կողմից վիճարկվող գույքը ունի սեփականատեր, որի իրավունքները գրանցված են պետական մարմնում: Նախկինում այն պատկանել է Նինա Գալուստի Հովհաննիսյանին, որը 09.08.1988 թվականի նվիրատվության պայմանագրով այն օտարել է Գայանե, Կարինե Հայրապետյաններին և Վարդգես Վարդանյանին:

Բացի այդ, ինչպես պարզ հետևում է գործում եղած ապացույցներից, թե Նինա Հովհաննիսյանը, և թե մյուս համասեփականատերեր Գայանե և Կարինե Հայրապետյանները, Վարդգես Վարդանյանը երբևիցե չեն հրաժարվել իրենց պատկանող վեճի առարկա անշարժ գույքից, վճարել են հարկեր:

Ընդ որում, մշտական բնակության իրավունք վերապահելու մասին 23.04.1970 թվականի պայմանագիրը կնքվել է այդ պահին գործող խորհրդային օրենսդրության ժամանակաշրջանում, երբ «մշտական գրանցումը» արդեն իսկ բավարար հիմք էր մշտական բնակության իրավունքի ծագման համար: Հենց այդ պատճառով էլ պայմանագրում նշված է «բնակության պայմանով» արտահայտությունը, ինչից պարզ հետևում է, որ տվյալ պայմանագրի առարկան հենց «բնակության իրավունքն» է:

2) *Դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32-րդ հոդվածի 1-ին կետը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով:*

Վարդիթեր Ավոյանը պահանջ է ներկայացրել ճանաչելու սեփականության իրավունքը Երևանի Ներքին Շենքավիթի 12 փողոցի 1-ին նրբանցքի 19ա տան 25քմ և 22քմ - մակերեսներով սենյակների նկատմամբ: Մինչդեռ դատարանի վճռով ճանաչվել է հայցվորի սեփականության իրավունքը նաև 8.37քմ և 1.44քմ մակերեսով օժանդակ կառույցների և շինություններով ծանրաբեռնված հողամասի վերաբերյալ:

3) *Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը, 111-րդ հոդվածը, 47-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով:*

Վերաքննիչ դատարանը, մերժելով գործի քննությունը հետաձգելու՝ պատասխանող կողմի միջնորդությունը, ըստ էության, վերջինիս գրկել է գործի ելքի համար էական նշանակություն ունեցող ապացույցներ ներկայացնելու հնարավորությունից:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է քեկանել Վերաքննիչ դատարանի 31.05.2007 թվականի վճիռը և հայցը մերժել:

---

---

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 23.04.1970 թվականին կնքվել է «Պայմանագիր», ըստ որի՝ Գալուստ Հովհաննիսյանն իրեն պատկանող մեկ սենյակը՝ 25քմ մակերեսով, նրան հարակից մեկ սենյակը՝ 12քմ մակերեսով, **քնակվելու պայմանով** վաճառել է Ավետիք Մարտիրոսյանին և Վարդիթեր Ավոյանին:

2) 1970 թվականի ապրիլի 23-ի պայմանագրում 8.37քմ և 1.44քմ մակերեսներով օժանդակ կառույցների, ինչպես նաև վեճի առարկա շինություններով ծանրաբեռնված հողամասի վերաբերյալ որևէ նշում չկա:

3) Հայցվորը 8.37քմ և 1.44քմ մակերեսներով օժանդակ հարմարությունների, ինչպես նաև կառույցներով ծանրաբեռնված հողամասի նկատմամբ հայցապահանջ ընդհանրապես չի ներկայացրել:

4) Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման 07.07.1997 թվականի վկայականի համաձայն՝ Ն.Շենգավիթի 12 փողոցի 1-ին նրբ. 19ա տան 1/4-րդ մասը Գայանե Կարապետյանի սեփականությունն է:

5) 31.07.1989 թվականի տեխնիկական անձնագրի համաձայն՝ վեճի առարկա գույքը սեփականության իրավունքով պատկանում է Ռայա Հովհաննեսյանին:

6) ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Էրեբունի տարածքային ստորաբաժանման(այսուհետ՝ Կադաստր) պետի տված 21.11.2006 թվականի եզրակացության համաձայն՝ Ն.Շենգավիթի 12 փողոցի 1-ին նրբ. 19ա տուն հասցեում Վարդիթեր Ավոյանի հայտարարության հիման վրա չափագրվել է ամբողջությամբ կառուցատված 150 քմ մակերեսներով հող: Սակայն, քանի որ կադաստրային գործում գլխավոր հատակագիծ առկա չէ, ուստի Վարդիթեր Ավոյանի կողմից օգտագործվող մակերեսների՝ հողի և շինությունների կարգավիճակի մասին տվյալների տրամադրումը հնարավոր չէ:

7) Պատասխանող Վարդգես Վարդանյանը Վերաքննիչ դատարանի 22.05.2007 թվականի դատական նիստում միջնորդել է նոր ապացույցներ ներկայացնելու համար գործի քննությունը հետաձգել:

### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

*1) բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 172-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով՝ անձը կարող է սեփականության իրավունք ձեռք բերել սեփականատեր չունեցող գույքի նկատմամբ, ինչպես նաև այն գույքի, որի սեփականատերն անհայտ է, կամ որից սեփականատերը հրաժարվել է, կամ որի նկատմամբ սեփականության իրավունքը նա կորցրել է օրենքով նախատեսված այլ հիմքերով:

Նույն օրենսգրքի 280-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացին կամ իրավաբանական անձը կարող է հրաժարվել **իրեն պատկանող գույքի** սեփականության իրավունքից՝ այդ մասին գրավոր հայտարարելով կամ այնպիսի գործողություններ կատարելով, որոնք ակնհայտ վկայում են գույքի տիրապետումից, օգտագործումից և տնօրինումից նրա մեկուսացման մասին՝ առանց այդ գույքի նկատմամբ որևէ իրավունք պահպանելու մտադրության:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացին կամ իրավաբանական անձն, որն անշարժ գույքի սեփականատերը չէ, սակայն այն տասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ տիրապետում է որ-

պես սեփական գույք, այդ գույքի նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրավունք (ձեռքբերման վաղեմություն):

Վերոնշյալ հոդվածների համադրումից հետևում է, որ ձեռքբերման վաղեմությունն իրենից ներկայացնում է օրենքով նախատեսված որոշակի ժամկետի լրանալու և որոշակի պայմանների վրա հասնելու ուժով **անկ անձի կողմից սեփականության իրավունքի ձեռքբերման**, իսկ մյուսի կողմից **այդ իրավունքի դադարման** միջոց:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից հետևում է, որ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռքբերման համար անհրաժեշտ է մի շարք վավերապայմանների միաժամանակյա առկայությունը: Մասնավորապես դրանք են՝

1. **տիրապետումը պետք է լինի բարեխիղճ:** Տիրապետման բարեխիղճությունը գնահատվում է գույքը անձի փաստացի տիրապետմանն անցնելիս: Գույքն անձի փաստացի տիրապետմանը պետք է անցնի առանց որևէ բռնության գործադրման: Տիրապետողի մոտ պետք է առկա լինի այն համոզմունքը, որ նա գույքը ձեռք է բերում օրինական հիմքերով: **Տիրապետումը պետք է հիմնված լինի այնպիսի փաստի հիման վրա, որը տիրապետողին կարող է տալ բավարար հիմքեր ենթադրելու, որ նա այդ գույքը ձեռք է բերում և տիրապետելու է որպես սեփականություն:**

2. փաստացի տիրապետողը գույքը պետք է տիրապետի որպես սեփականը, այսինքն՝ գույքը փաստացի տիրապետողը պետք է մասնակցի գույքի կառավարմանը, հոգ տանի դրա պահպանման համար, ինչպես իր սեփական գույքի դեպքում: Անձը պետք է գույքը տիրապետի ինչպես սեփականը նաև երրորդ անձանց հետ հարաբերություններում;

3. տիրապետումը պետք է լինի 10 տարի և անընդմեջ: Այսինքն՝ 10 տարվա ընթացքում գույքի տիրապետումը չպետք է ընդհատվի: Տիրապետումը կարող է ընդհատվել կամ տիրապետողի կամքով, երբ նա հրաժարվում է գույքի հետագա տիրապետումից (գույքը դուրս է գալիս նրա տիրապետումից), կամ գույքի սեփականատիրոջ կամ այլ անձանց գործողություններով, որոնք ուղղված են գույքը վերադարձնելուն;

4. տիրապետումը պետք է լինի բացահայտ, այսինքն՝ փաստացի տիրապետողը գույքը չպետք է տիրապետի երրորդ անձանցից գաղտնի եղանակով (տես օրինակ՝ Վոլոդյա և Միշա Նիկողոսյաններ ընդդեմ Մանվել, Սոֆիկ, Մելանյա, Մամվել Սարիբեկյաններ և Քնարիկ Աղազարյան, Մանվել Սարիբեկյան և Քնարիկ Աղազարյան ընդդեմ Վոլոդյա և Միշա Նիկողոսյաններ, 10.10.2007, քաղ. գործ թիվ 3-1435/ՎԳ (ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը և սեփականության իրավունքի վկայականը մասնակի անվավեր ճանաչելու պահանջ):

Սույն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանը վճռի հիմքում դնելով 1970 թվականին Ավետիք Մարտիրոսյանի, Վարդիթեր Ավոյանի և Գալուստ Հովհաննիսյանի միջև կնքված պայմանագիրը հաստատված է համարել, որ Գալուստ Հովհաննիսյանը 1970 թվականին գրավոր հրաժարվել է իր սեփականությունից, իսկ հայցվորն շուրջ 37 տարի բարեխիղճորեն, բացահայտ և անընդմեջ տիրապետում է այն որպես սեփական գույք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վերաքննիչ դատարանը վճռի հիմքում դնելով վերոնշյալ պայմանագիրը, պատշաճ գնահատման առարկա չի դարձրել այն և չի պարզել, թե արդյո՞ք պայմանագրի կնքման պահին (1970 թվականին) վեճի առարկա գույքի սեփականատերը հանդիսացել է պայմանագիրը ստորագրած Գալուստ Հովհաննիսյանը:

---

---

Այսինքն, Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել և գնահատման առարկա չի դարձրել այն հարցը, թե արդյո՞ք վեճի առարկա գույքը հայցվորի փաստացի տիրապետման անցնելու պահին նա ուներ բավարար հիմքեր ենթադրելու, որ այդ գույքը ձեռք է բերում և այդ պահից սկսած տիրապետելու է որպես սեփականություն:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով պայմանագրի կնքման պահին վեճի առարկա գույքը Գալուստ Հովհաննիսյանին սեփականության իրավունքով չպատկանելու դեպքում պայմանագրի կողմ հանդիսացող Ավետիք Մարտիրոսյանը և Վարդիթեր Ավոյանը չէին կարող **բավարար հիմքեր** ունենալ ենթադրելու, որ այդ գույքը տիրապետելու են որպես սեփականը: Վերոնշյալ հարցադրումը կարևորվում է նաև այն տեսանկյունից, որ նման հանգամանքը կբացառի վեճի առարկա գույքի իրական սեփականատիրոջ կողմից գույքից հրաժարվելու փաստը:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել և գնահատման առարկա չի դարձրել պատասխանողի այն փաստարկները, թե կողմերի միջև կնքված պայմանագրով հայցվորը ձեռք է բերել ընդամենը բնակության իրավունք: Մասնավորապես նման փաստի հաստատման պարագայում նույնպես կբացառվի հայցվորի կողմից վեճի առարկա գույքը որպես սեփականություն տիրապետելու հանգամանքը:

Վերաքննիչ դատարանը գնահատման առարկա չի դարձրել նաև Կադաստրի 21.11.2006 թվականի եզրակացությունը, որի համաձայն՝ Ն.Շենգավիթի 12 փողոցի 1-ին նրբ. 19ա տուն հասցեում Վարդիթեր Ավոյանի հայտարարության հիման վրա չափագրվել է ամբողջությամբ կառուցապատված 150 քմ մակերեսներով հող: Սակայն, քանի որ կադաստրային գործում գլխավոր հատուցագրի չափերը առկա չէ, ուստի Վարդիթեր Ավոյանի կողմից օգտագործվող մակերեսների՝ հողի և շինությունների կարգավիճակի մասին տվյալների տրամադրումը հնարավոր չէ:

Վերոնշյալից հետևում է, որ Վերաքննիչ դատարանը ճանաչել է Վարդիթեր Ավոյանի սեփականության իրավունքը իր կողմից օգտագործվող մակերեսների նկատմամբ առանց պարզելու դրանց կարգավիճակը: Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրելու, որ անհայտ կարգավիճակ ունեցող կառույցների (ինքնակամ կառույցի) նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունք չի կարող ճանաչվել:

*2) բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում արդեն անդրադարձել է նշված իրավական հարցի գնահատականին (տես օրինակ՝ Ժիրայր Մինասյան ընդդեմ Արուս Խաչումյանի, Հրաչիկ Մինասյանի, 26.01.2007, քաղ. գործ թիվ 3-29/ՎԳ (բնակարանի նկատմամբ իր և որդու սեփականության իրավունքը ճանաչելու, ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու և բաժինն առանձնացնելու)):

Սակայն կարևորելով սույն բողոքի հիմքում ընկած իրավական հարցադրումը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում կրկին անդրադառնալ նշված հարցին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը քաղաքացիական գործը հարուցում է միայն հայցի կամ դիմումի հիման վրա: Իսկ նույն օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ դատարանը վճիռ կայացնելիս որոշում է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը:

Այսինքն՝ վերը նշված հոդվածների իմաստով դատարանը պարտավոր է՝

- քաղաքացիական գործը հարուցել միմիայն համապատասխան հայցի կամ դիմումի հիման վրա,

- քաղաքացիական գործը քննել միմիայն այդ գործով ներկայացված հայցապահանջների շրջանակում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 215-րդ հոդվածի համաձայն՝ վերաքննիչ դատարանում գործը քննվում է առաջին ատյանի դատարանում գործի քննութ-

յան կանոններով, բացառությամբ հայցի հիմքը կամ առարկան փոխելու, հայցային պահանջների չափը փոփոխելու, հայցից հրաժարվելու (32-րդ հոդվածի 1-ին կետ) կանոններին:

Սույն գործով հայցվորը առաջին ատյանի դատարանում հայցի առարկան և հայցապահանջի չափը չի փոխել, իսկ Վերաքննիչ դատարանում նա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 215-րդ հոդվածի ուժով արդեն իսկ գրկված էր նման դատավարական գործողություն կատարելու իրավական հնարավորությունից:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում բողոքի սույն հիմքում նշված այն փաստարկը, թե Վերաքննիչ դատարանը ճանաչելով հայցվորի սեփականության իրավունքը նաև 8.37քմ և 1.44քմ մակերեսով օժանդակ կառույցների, ինչպես նաև վեճի առարկա շինություններով ծանրաբեռնված հողամասի նկատմամբ, դուրս է եկել գործով ներկայացված հայցապահանջի շրջանակից:

*3) բողոքը երրորդ հիմքով անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.*

Վերաքննիչ դատարանում գործի քննության ժամանակ գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 217-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձանց ներկայացրած լրացուցիչ ապացույցները վերաքննիչ դատարանն ընդունում է, եթե դրանք ներկայացնողը հիմնավորում է առաջին ատյանի դատարանում այդ ապացույցները ներկայացնելու անհնարիությունը՝ իրենից անկախ պատճառներով: Իսկ նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե գործին մասնակցող անձինք ներկայացնում են վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող լրացուցիչ ապացույցներ, ապա դատարանը գործին մասնակցող անձանց միջնորդությամբ ողջամիտ ժամկետով հետաձգում է գործի քննությունը: Տվյալ դեպքում պատասխանող գործի քննությունը հետաձգելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելիս չի հիմնավորել գործի համար էական նշանակություն ունեցող չներկայացրած ապացույցների՝ իրենից անկախ պատճառներով առաջին ատյանի դատարանում ներկայացնելու անհնարիությունը, ինչի պայմաններում անհիմն է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերի խախտման վերաբերյալ վճռաբեկ բողոքի պատճառաբանությունները:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի առաջին և երկրորդ հիմքերի հիմնավոր լինելը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի 31.05.2007 թվականի վճիռը բեկանելու հիմք է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 31.05.2007 թվականի վճիռը և գործն ուղարկել Երևանի Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՈՒՐՆԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի վճիռ

Քաղաքացիական գործ թիվ **3-87(ՎԳ)-  
2008թ.**

Քաղաքացիական գործ թիվ 07-2723/2007թ.

Նախագահող դատավոր՝ Գ.Խաչատրյան  
Դատավորներ՝ Վ.Ավանեսյան  
Գ.Մատինյան

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Հ.ՍԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի փետրվարի 01-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Համլետ Ֆիդանյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.11.2007 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի «Թաթուլ և Արտավազդ Մնացականյաններ» արտադրական կոոպերատիվի (այսուհետ՝ Կոոպերատիվ) ընդդեմ Համլետ, Կարինե, Մարիամ, Գագիկ Ֆիդանյանների, երրորդ անձինք՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արովյանի տարածքային ստորաբաժանման (այսուհետ՝ Կադաստր), Ջրվեժի գյուղապետարանի՝ անշարժ գույքի կադաստրի գրանցամատյաններում պատասխանողներին որպես սեփականատեր գրանցումը, սեփականության իրավունքի գրանցման վկայականը մասնակիորեն անվավեր ճանաչելու և 60 քմ հողամասի, դրա վրա կառուցված շինության նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջների մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Կոոպերատիվը պահանջել է մասնակիորեն՝ 60 քմ մակերեսով հողամասի և այդ տարածքի վրա կառուցված՝ պատասխանողների սեփականության իրավունքի գրանցման վկայականում որպես «մառան» նշված շինության մասով անվավեր ճանաչել անշարժ գույքի կադաստրի գրանցամատյանում պատասխանողների սեփականության իրավունքի գրանցումը, որպես դրա հետևանք այդ մասով անվավեր ճանաչել նրանց անվամբ տրված սեփականության իրավունքի գրանցման վկայականը և վերոնշյալ անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Կոոպերատիվի սեփականության իրավունքը:

ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանի 14.06.2007 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 05.11.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն: Վճռվել է մասնակիորեն՝ 60 քմ մակերեսով հողամասի և դրա վրա կառուցված, պատասխանողների սեփականության իրավունքի գրանցման վկայականում որպես «Մառան» նշված շինության մասով անվավեր ճանաչել Կադաստրի Արմավրի տարածքային ստորաբաժանման գրանցամատյանում պատասխանողների անվամբ կատարված սեփականության իրավունքի գրանցումը: Քաղաքացիական գործի վարույթը մնացած մասով կարճվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Համլետ Ֆիդանյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) *Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ հողային օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ հողային օրենսգրք) 13-րդ և 18-րդ հոդվածների առաջին մասերը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

1991 թվականին «Անի» կոոպերատիվին հողամաս հատկացված լինելու հանգամանքը պետք է հաստատվի միայն համապատասխան պետական ակտով: Սակայն Վերաքննիչ դատարանը այդ հանգամանքը հաստատված է համարել այդ ակտի բացակայության պայմաններում:

Դատարանն ապացուցված է համարել, որ շինությունը կառուցելու ծախսերը կատարել է Թաթուլ Մնացականյանն, ինչը է դիտել որպես Կոոպերատիվի համար վիճելի շինության նկատմամբ իրավունքներ առաջացնող իրավաբանական փաստ:

2) *Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 23-րդ և 43-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անվավեր է ճանաչել սեփականության իրավունքի գրանցումը՝ չանդրադառնալով այդ իրավունքի գրանցման իրավական հիմքերին: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը քննության առարկա չի դարձրել Հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 17.02.1993 թվականի թիվ 16 որոշման օրինականության հարցը:

Դատարանը ժառանգության իրավունքի վավեր վկայագրի առկայության պայմաններում անվավեր է ճանաչել դրանից բխող իրավունքների պետական գրանցումը:

Մինչդեռ, վերլուծելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 23-րդ և 43-րդ հոդվածները՝ կարելի է եզրակացնել, որ գործարքից բխող իրավունքների պետական գրանցումը մերժվում է միայն այդ օրենքի 43-րդ հոդվածով սահմանված դեպքերում: Այսինքն, եթե իրավունքների պետական գրանցումը կատարելիս պահպանվել է այդ հոդվածի պահանջը, հետևաբար, պետական գրանցումը բոլոր դեպքերում օրինական է, քանի դեռ անվավեր ճանաչված չեն այդ գրանցման համար հիմք հանդիսացած վարչական ակտը և գործարքը:

3) *Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը և չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Նախքան ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածի 4-րդ կետի կիրառումը, Վերաքննիչ դատարանը պետք է նշեր, թե պատասխանողների սեփականության իրա-

---

---

վունքի գրանցմամբ հայցվորի ո՞ր իրավունքներն են խախտվել: Նշված հարցի պատասխանը վճռում բացակայում է:

Վիճելի հողամասը հայցվորին հատկացնելու վերաբերյալ պետական ակտ գոյություն չի ունեցել, վիճելի շինությունը հայցվոր կազմակերպության կողմից կառուցված լինելու վերաբերյալ տվյալներ չկան և վճռում նշված չեն, ուստի որևէ մեկի՝ այդ թվում նաև պատասխանողի իրավունքների գրանցումը նշված գույքի նկատմամբ չի կարող առաջացնել հայցվորի իրավունքի խախտում:

Ելնելով վերոգրյալից բողոք բերած անձը պահանջել է վճիռը՝ հայցապահանջը բավարարելու մասով բեկանել, փոփոխել և հայցապահանջը մերժել:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Կոտայքի շրջանի Ջրվեժի գյուղական խորհրդի գործադիր կոմիտեի 1985-1990, 1991-1996 թվականների տնտեսիրությունների գրքից կատարված քաղվածքի համաձայն՝ Մարիամ Լևոնի Ֆիդանյանի տնտեսության օգտագործման տակ գտնվող հողը գրանցված է 1986 թվականին 0,03 հա, այդ թվում շինությունների տակ՝ 0,01 հա, 1987 թվականից մինչև 1995 թվականը ընդամենը 0,02 հա, որից շինությունների տակ՝ 0,01 հա:

2) Կոտայքի շրջանի Ջրվեժի գյուղական խորհրդի գործադիր կոմիտեի 25.09.1991 թվականին կայացած նիստում գյուղխորհրդի գործադիր կոմիտեն չի առարկել Թաթուլ Մնացականյանին Երևանից Ջրվեժ մտնող ճանապարհի աջ մասում 50 քմ մակերեսով հողամաս հատկացնել՝ պայմանով, որ լինի ճարտարապետական բաժնի համապատասխան թույլտվությունը:

3) ՀՀ պատգամավորների Կոտայքի շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի 30.09.1991 թվականի նիստում որոշվել է գրանցել «Անի» կոոպերատիվ փոքր ձեռնարկության կանոնադրությունը և թույլատրել գործելու հաստատված կանոնադրությամբ:

4) ՀՀ պատգամավորների Կոտայքի շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի 31.08.1992 թվականի թիվ 09 որոշման առաջին կետով բավարարվել է «Անի» փոքր ձեռնարկության խնդրանքը և հաշվի առնելով Ջրվեժի գյուղական խորհրդի 25.09.1991 թվականի որոշումը, թույլատրվել է գյուղ մտնող ճանապարհի աջ մասում հատկացված 50 քմ - տարածքում տեղադրելու կոմիսիոն խանութ:

5) Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի բնակելի տան և տնամերձ հողամասի նկատմամբ Հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 17.02.1993 թվականի թիվ 16 որոշման և 21.03.2002 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի հիման վրա սեփականության իրավունք են ձեռք բերել Համլետ Ֆիդանյանը՝ 2/5-րդ բաժնի նկատմամբ, Կարինե Ֆիդանյանը՝ 1/5-րդ բաժնի նկատմամբ, Մարիամ Ֆիդանյանը՝ 1/5-րդ բաժնի նկատմամբ, Գագիկ Ֆիդանյանը՝ 1/5-րդ բաժնի նկատմամբ:

6) «Անի» փոքր ձեռնարկությունը 2006 թվականի վերակազմակերպվել և անվանվել՝ «Թաթուլ և Արտավազ Մնացականյաններ» արտադրական կոոպերատիվ:

### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.**

Քննելով վճռաբեկ բողոքները նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

1) բողոքն առաջին հիմքով հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Սույն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանը հաստատված է համարել «Անի» փոքր ձեռնարկության մոտ վեճի առարկա անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ծագած լինելու հանգամանքը՝ այդ եզրակացության հիմքում դնելով Կոտայքի շրջանի Ջրվեժի գյուղական խորհրդի գործադիր կոմիտեի 25.09.1991 թվականի որոշումը, ինչպես նաև ՀՀ պատգամավորների Կոտայքի շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի 30.09.1991 թվականի որոշումը:

Սույն քաղաքացիական գործի փաստերի համաձայն՝ վեճի առարկա հողամասը գտնվել է Մարիամ Ֆիդանյանի օգտագործման ներքո դեռևս 1986 թվականից, ինչից հետո միայն կայացվել է Կոտայքի շրջանի Ջրվեժի գյուղական խորհրդի գործադիր կոմիտեի 25.09.1991 թվականի որոշումը, որի համաձայն՝ գյուղխորհրդի գործադիր կոմիտեն չի առարկել Թաթուլ Մնացականյանին Երևանից Ջրվեժ մտնող ճանապարհի աջ մասում 50 քմ մակերեսով հողամաս հատկացնել՝ պայմանով, որ լինի ճարտարապետական բաժնի համապատասխան թույլտվությունը:

Այսինքն՝ վերոհիշյալ որոշմամբ Թաթուլ Մնացականյանի մոտ հողամասի նկատմամբ, որևէ իրավունք չի առաջացել, քանի որ դրա առաջացումը կապված է եղել իրավաբանական մեկ այլ փաստի՝ ճարտարապետական բաժնի համապատասխան թույլտվության առկայության հետ:

Հետագայում, ՀՀ պատգամավորների Կոտայքի շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի 31.08.1992 թվականի թիվ 09 որոշման առաջին կետով բավարարվել է «Անի» փոքր ձեռնարկության խնդրանքը, և հաշվի առնելով Ջրվեժի գյուղական խորհրդի 25.09.1991 թվականի որոշումը՝ թույլատրվել է գյուղ մտնող ճանապարհի աջ մասում հատկացված 50 քմ տարածքում տեղադրել կոմիսիոն խանութ:

Վերոնշյալ որոշմամբ նույնպես վիճելի հողամասի նկատմամբ որևէ իրավունք չի ծագել, այլ ընդամենը թույլատրվել է կառուցել կոմիսիոն խանութ:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանը արձանագրում է, որ վերոհիշյալ որոշումներից և ոչ մեկով վեճի առարկա հողամասի նկատմամբ իրավունքներ չեն ծագել, ինչի պայմաններում հիմնավոր է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի առաջին մասի խախտման վերաբերյալ պատճառաբանությունը:

Բացի այդ, ՀՀ հողային օրենսգրքի 13-րդ հոդվածի առաջին պարբերության համաձայն՝ հողը որպես սեփականություն և օգտագործման տրամադրելն իրականացվում է հատկացման կարգով: Հողերի հատկացումը կատարվում է ՀՀ նախարարների խորհրդի, պատգամավորների շրջանային, քաղաքային, ավանային և գյուղական խորհուրդների որոշումների հիման վրա՝ վերջիններիս իրավասության սահմաններում, հողերի օգտագործման և պահպանության նկատմամբ պետական վերահսկողություն իրականացնող մարմինների համաձայնությամբ: Հողամասերը հատկացնելու մասին որոշումներում նշվում են հողամաս հատկացնելու և հողից օգտվելու պայմանները:

Նույն օրենսգրքի 18-րդ հոդվածի առաջին պարբերության համաձայն՝ հողի սեփականության և մշտական օգտագործման իրավունքը հաստատվում է համապատասխան պետական ակտով, որը տրվում է պատգամավորների համապատասխան տեղական խորհրդի գործադիր կոմիտեի կողմից:

Վերոգրյալից հետևում է, որ 1991-1992 թվականներն ընկած ժամանակահատվածում պետական սեփականություն հանդիսացող հողամասը կարող էր հատկացվել համապատասխան գյուղական խորհրդի որոշմամբ, ինչի հիման վրա էլ նոր սեփականատիրոջը կամ օգտագործողին պետք է տրվեր համապատասխան պետական ակտ: Հետևաբար, Կադաստրում վեճի առարկա հողամասի նկատմամբ հայցվորի իրավունքների գրանցման բացակայության պայմաններում դրա նկատմամբ սեփականության իրավունքը կարող է հաստատվել 1991 թվականի ՀՀ հողային օրենսգրքի 18-րդ հոդվածով նախատեսված պետական ակտով: Մինչդեռ, սույն քաղաքացիական գործի նյութերում համապատասխան պետական ակտը բացակայում է:

---

---

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից խախտվել է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ - հոդվածը, համաձայն որի՝ գործի հանգամանքները, որոնք օրենքի կամ այլ իրավական ակտի համաձայն՝ պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում նաև Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 218-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետի խախտման վերաբերյալ վճռաբեկ բողոքի պատճառաբանությունը, քանի որ վճռի պատճառաբանական մասում բացակայում է այն իրավական ակտերի կամ միջազգային պայմանագրերի վրա կատարված հղումը, որոնցով Վերաքննիչ դատարանը ղեկավարվել է պատասխանողների իրավունքի գրանցումը մասնակիորեն անվավեր ճանաչելիս:

Ինչ վերաբերում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի խախտման փաստարկին, ապա այն անհիմն է, քանի որ տվյալ հոդվածով սահմանվում է միայն անձի՝ դատարան դիմելու իրավունքն անկախ իրականում վիճարկվող իրավունքների առկայության հանգամանքից:

*2) բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ.*

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 43-րդ - հոդվածով սահմանված է գույքի նկատմամբ իրավունքների գրանցումը մերժելու հիմքերը, իսկ բողոքի սույն կետով ներկայացված հիմքը վերաբերում է իրար հակասող երկու իրավաստեղծ հիմքերի միաժամանակյա գոյության անհնարինությանը, ինչը նույն օրենքի 43-րդ հոդվածի կարգավորման առարկա չէ:

Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի խախտման հարցին, քանի որ վճռաբեկ բողոքում նշված հոդվածի խախտման հիմնավորումները բացակայում են:

*3) բողոքը երրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատարանը հայցային վաղեմությունը կիրառում է միայն վիճող կողմի դիմումով, որը պետք է տրվի մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը: Հայցային վաղեմության ժամկետի լրանալը, որի կիրառման մասին դիմել է վիճող կողմը, հիմք է դատարանի կողմից հայցը մերժելու մասին վճիռ կայացնելու համար:

Սույն քաղաքացիական գործով պատասխանողները միջնորդել են կիրառել հայցային վաղեմություն: Վերաքննիչ դատարանը միջնորդությունը մերժել է:

Մինչդեռ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետը, համաձայն որի՝ հայցային վաղեմությունը չի տարածվում սեփականատիրոջ կամ այլ տիրապետողի իրավունքի ամեն մի խախտման վերացման պահանջների վրա, թեկուզև այդ խախտումները կապված չեն եղել տիրապետումից զրկելու հետ, վերաբերում է նեգատոր հայցին (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 277-րդ հոդված) և որևէ կապ չունի սեփականության իրավունքը ճանաչելու վերաբերյալ սույն վեճի հետ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի առաջին և երրորդ հիմքերի հիմնավոր լինելը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի 05.11.2007 թվականի վճիռը բեկանելու հիմք է:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.11.2007 թվականի վճիռի հայցապահանջը բավարարելու մասը, և այդ մասով դատական ակտը փոփոխել. բավարարված մասով հայցապահանջը մերժել:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վերաքննիչ քաղաքացիական

դատարանի վճիռ

Քաղաքացիական գործ թիվ 07-2450

Նախագահող դատավոր՝ Կ. Հակոբյան

դատավոր՝ Լ. Գրիգորյան

դատավոր՝ Լ. Սոսյան

Քաղաքացիական գործ թիվ **3-115 ՎԳ**

**2008թ.**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

*նախագահությամբ* Հ.ՍԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՍԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի փետրվարի 29-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Կամո Ներսիսյանի և Անյուտա Բաբայանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.07.2007 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի Կամո Ներսիսյանի, Անյուտա Բաբայանի ընդդեմ Հրաչյա, Ալլա, Սամվել, Անուշ Ներսիսյանների, Արփիկ Մուրադյանի, Շահումյանի գյուղապետարանի՝ խախտված իրավունքը վերականգնելու, Շահումյանի գյուղապետարանի կողմից տրված թիվ 356 քաղվածքը, դրա հիման վրա ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ Կադաստր) Արտաշատի տարածքային ստորաբաժանման կողմից 14.04.2000 թվականին տրված թիվ 0152349 և 28.11.2002 թվականին տրված թիվ 730154 սեփականության իրավունքի գրանցման վկայականները փոփոխելու, Կամո Ներսիսյանի, Անյուտա Բաբայանի և Հրաչիկ Կամոյի Ներսիսյանի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը Արփիկ Մուրադյանի, Հրաչյա, Ալլա, Սամվել և Անուշ Ներսիսյանների անվամբ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով գրանցված Արարատի մարզի Շահումյան գյուղում գտնվող բնակելի տան, 1900 քմ մակերեսով տնամերձ ու 6200 քմ մակերեսով սեփականաշնորհված հողամասերի նկատմամբ ճանաչելու և նրանց համասեփականատերերի ցանկում ընդգրկելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Գիմելով դատարան՝ հայցվորները պահանջել են Արարատի մարզի Շահումյան գյուղում գտնվող բնակելի տան, 1900 քմ մակերեսով տնամերձ և 6200 քմ մակերեսով սեփականաշնորհված հողամասերի նկատմամբ Արփիկ Մուրադյանի, Հրաչյա, Ալլա, Սամվել, Անուշ Ներսիսյանների հետ միասին ճանաչել Կամո Ներսիսյանի, Անյուտա Բաբայանի և

Հրաչիկ Կամոյի Ներսիսյանի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը և որպես համասեփականատերերի, ընդգրկել 14.04.2000 թվականին տրված թիվ 0152349 և 28.11.2002 թվականին տրված թիվ 730154 սեփականության իրավունքի գրանցման վկայականներում:

Արարատի մարզի առաջին ատյանի դատարանի 18.05.2007 թվականի վճռով հայրը բավարարվել է մասնակիորեն:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 23.07.2007 թվականի վճռով հայրը բավարարվել է մասնակիորեն: Բնակելի տան և տնամերձ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասով Կամո Ներսիսյանի, Անյուտա Բաբայանի հայրը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Կամո Ներսիսյանը և Անյուտա Բաբայանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով:

1) *Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել 29.01.1991 թվականին ընդունված ՀՀ հողային օրենսգրքի (այսուհետ՝ Հողային օրենսգրք) 9-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձինք նշված պնդումը պատճառաբանել են հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը գնահատման առակա չի դարձրել այն հանգամանքը, որ Հողային օրենսգրքի 9-րդ հոդվածի ուժով վեճի առարկա հողամասը պետք է դառնար կոլեկտիվ տնտեսության ընդհանուր համատեղ սեփականակությունը:

Բացի այդ, Արփիկ Մուրադյանի կոլեկտիվ տնտեսությանը հատկացված 3 բաժին հողամասի թվում է նաև վեճի առարկա հողամասը, հետևաբար, դրա նկատմամբ նույնպես ծագել է կոլեկտիվ տնտեսության սեփականության իրավունքը:

2) *Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածը, որը չպետք է կիրառել:*

*Բողոք բերած անձինք նշված պնդումը պատճառաբանել են հետևյալ փաստարկներով.*

14.04.2000 թվականի և 28.11.2002 թվականի վկայականները չեն վիճարկվել: Ընդամենը պահանջվել է պատասխանողների հետ միասին ճանաչել նաև հայցվորների սեփականության իրավունքը վիճելի անշարժ գույքի նկատմամբ, որի դեպքում վկայականներում պետք է կատարվեր անհրաժեշտ փոփոխություններ: Հետևաբար, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածը սույն գործով չպետք է կիրառվեր:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձինք պահանջել են բեկանել Վերաքննիչ դատարանի 23.07.2007 թվականի վճիռը և օրինական ուժ տալ ՀՀ Արարատի մարզի առաջին ատյանի դատարանի 18.05.2007 թվականի վճիռին:

## **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 01.01.1991 թվականի դրությամբ Արփիկ Մուրադյանի գյուղացիական տնտեսության կազմում գրանցված են եղել նաև Կամո Ներսիսյանը, Անյուտա Բաբայանը, Հրաչիկ Կամոյի Ներսիսյանը:

2) Գյուղացիական տնտեսությանն է պատկանել նաև 1978 թվականին կառուցված Արարատ մարզի Շահումյան համայնքում գտնվող բնակելի տունը:

---

---

3) Վերոգրյալ տունը՝ 1.900 քմ մակերեսով տնամերձ հողամասով, համասեփակա-  
նությամբ գրանցվել է միայն Արփիկ Մուրադյանի, Հրաչյա, Ալլա, Սամվել, Անուշ Ներսիս-  
յանների անվամբ:

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը  
գտնում է, որ

*1) բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի  
127-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ կոլտնտեսային ծխի գույքը պատկանում է  
նրա անդամներին համատեղ սեփականության իրավունքով:

Հողային օրենսգրքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ տնամերձ հողամասերը,  
ինչպես նաև այգեգործության (ամառանոցի) և բնակելի տան շինարարության ու դրա  
սպասարկման համար ՀՀ քաղաքացիների ունեցած հողամասերը անհատույց կարգով  
թողնվում են նրանց որպես սեփականություն:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Արարատի  
մարզի Շահումյան համայնքում գտնվող տունը, կոլտնտեսային ծխին պատկանող այլ  
գույքի հետ միասին հանդիսացել է տվյալ ծխի անդամների ընդհանուր համատեղ սեփա-  
կանությունը:

Հետևաբար, Կամո Ներսիսյանը, Անյուտա Բաբայանը, Հրաչիկ Ներսիսյանը որպես  
ընտանիքի (ծխի) անդամ, որոնք հետագայում ընդգրկվել են Արփիկ Մուրադյանի գյուղա-  
ցիական տնտեսության կազմում, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 127-րդ հոդվածի և Հո-  
ղային օրենսգրքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով ձեռք են բերել սեփականության իրա-  
վունք վեճի առարկա տան և 1900 քմ տնամերձ հողամասի նկատմամբ:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհիմն է Վերաքն-  
նիչ դատարանի կողմից հայցի մերժումն այն հիմքով, որ Արարատի մարզի Շահումյան  
համայնքում գտնվող տունը գրանցվել է միայն Արփիկ Մուրադյանի անվամբ:

*2) բողոքն երկրորդ հիմքով անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի առաջին մասի  
համաձայն՝ դատարանը կարճում է գործի վարույթը, եթե վեճը ենթակա չէ դատարանում  
քննության:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է այն  
հարցին, որ սեփականության իրավունքի գրանցման վկայականը հանդիսանում է սեփա-  
կանության իրավունքի գրանցման մասին տեղեկություններ պարունակող փաստաթուղթ,  
և այդ փաստաթղթի անվավեր ճանաչելը չի հանգեցնում իրավական հետևանքների, քանի  
որ ուժի մեջ է մնում վարչական ակտը՝ անշարժ գույքի գրանցման մատյանի գրանցումը  
(իրավական հիմնավորումը տես՝ Միսիանի քաղաքապետարան ընդդեմ Շահեն Սարգս-  
յան, երրորդ անձինք ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Միսիանի ստորաբաժանում, Կորյուն Օհանյան,  
26.10.2006 թվական, քաղաքացիական գործ թիվ 3-1920/ՎԴ- գործով 2002 թվականի օ-  
գոստոսի 26-ին կնքված պայմանագիրը լուծելու, Շահեն Սարգսյանի և Կորյուն Օհանյա-  
նի միջև 11.09.2002 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը,  
ինչպես նաև Կորյուն Օհանյանին տրված սեփականության իրավունքի վկայականն ան-  
վավեր ճանաչելու պահանջներով Վճռաբեկ դատարանի որոշումը):

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը նպատակահարմար չի համարում  
կրկին անդրադառնալ նշված իրավական հարցի գնահատականին:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վճռաբեկ դատարանի նախկինում կայացված ո-  
րոշումներով արձանագրված իրավական դիրքորոշումը կիրառելի է նաև սեփականու-  
թյան իրավունքի պետական գրանցման վկայականը փոփոխելու պահանջի նկատմամբ:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի առաջին հիմքի առկայությունը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով, Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար Վերաքննիչ դատարանի վճիռը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240- 241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.07.2007 թվականի վճիռը՝ Կամո Ներսիսյանի, Անյուտա Բաբայանի՝ բնակելի տան և տնամերձ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջը մերժելու մասով և այդ մասով գործն ուղարկել Արարատի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Վճիռը՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արտաշատի տարածքային ստորաբաժանման կողմից 14.04.2000 թվականին տրված թիվ 0152349 և 28.11.2002 թվականին տրված թիվ 730154 սեփականության իրավունքի գրանցման վկայականները փոփոխելու պահանջի մասով քաղաքացիական գործի վարույթը կարճելու մասով թողնել օրինական ուժի մեջ:

3. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ քաղաքացիական վերաքննիչ  
դատարանի վճիռ

Քաղաքացիական գործ թիվ **3-47(ՎԳ)**  
**2008թ.**

Քաղաքացիական գործ թիվ 07-2377  
Նախագահող դատավոր՝ Ն.Հովսեփյան  
Դատավորներ՝ Լ.Սոսյան  
Կ.Հակոբյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Հ.ՍԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՍԿԻՐՈՒՄՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի փետրվարի 29-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Անահիտ և Վասիլ Խանադյանների վճռաբեկ բողոքը ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի 15.08.2007 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի Անահիտ Խանադյանի ընդդեմ Վեներա Ավետիսյանի՝ սեփականության իրավունքի խախտումը վերացնելու և նրան ընտանիքով իր սեփականությունը համարվող տարածքից վտարելու պահանջների մասին, Վեներա Ավետիսյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Անահիտ Խանադյանի, Վասիլ Խանադյանի, Դաշտավանի գյուղապետարանի (այսուհետ՝ Գյուղապետարան) և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Մասիսի տարածքային ստորաբաժանման՝ աճուրդն անվավեր ճանաչելու և ձեռքբերման վաղեմության իրավունքով Արարատի մարզի Դաշտավան գյուղում գտնվող հին դպրոցի շենքի՝ իր կողմից զբաղեցրած տարածքի նկատմամբ սեփականատեր ճանաչելու պահանջների մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Անահիտ Խանադյանը պահանջել է վերացնել իր սեփականության իրավունքի խախտումը, վտարել Վեներա Ավետիսյանին և նրա ընտանիքին Արարատի մարզի Դաշտավան գյուղում գտնվող և իրեն պատկանող հին լաբորատորիայի շենքից:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Վեներա Ավետիսյանը պահանջել է անվավեր ճանաչել Արարատի մարզի Դաշտավան գյուղում գտնվող հին լաբորատորիայի շենքի 28.02.1996 թվականի աճուրդը և ձեռքբերման վաղեմության հիմքով նշված շենքի իր կողմից զբաղեցրած տարածքի նկատմամբ ճանաչել իր սեփականության իրավունքը:

ՀՀ Արարատի մարզի առաջին ատյանի դատարանի 15.02.2007 թվականի վճռով հայ-  
ցը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժվել:

ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)  
15.08.2007 թվականի վճռով հայցը մերժվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ բավարարվել:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Անահիտ և Վասիլ Խանադյանները:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմ-  
նավորումներով.

1) *Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի  
187-րդ հոդվածով նախատեսված ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության ի-  
րավունքի ձեռք բերման հիմքերը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը պատշաճ գնահատման չի արժանացրել այն փաստը, որ  
Վեներա Ավետիսյանը գիտակցել է, որ վիճելի գույքը Գյուղապետարանի սեփականու-  
թյունն է, այն տիրապետել է Գյուղապետարանի թույլտվությամբ և ոչ որպես իր սեփակա-  
նություն:

2) *Վերաքննիչ դատարանը խախտել է սույն քաղաքացիական գործի քննության ժա-  
մանակ գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի 2-րդ  
մասի 3-րդ կետի պահանջը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը վճիռ է կայացրել Վեներա Ավետիսյանի ամուսին Մայիս  
Դանիելյանի իրավունքների վերաբերյալ, որը գործի քննությանը մասնակից չի դարձվել:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դա-  
տարանի 15.08.2007 թվականի վճիռը և օրինական ուժ տալ ՀՀ Արարատի մարզի առա-  
ջին ատյանի դատարանի 15.02.2007 թվականի վճռին:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 28.02.1996 թվականի աճուրդով և գույքի օտարման պայմանագրով Դաշտավան  
գյուղում գտնվող հին լաբորատորիայի շենքի նկատմամբ Անահիտ Խանադյանը ձեռք է  
բերել սեփականության իրավունք:

2) 07.11.2006 թվականին Անահիտ Խանադյանին տրվել է Արարատի մարզի Դաշ-  
տավան գյուղի հին լաբորատորիայի շենքի և հողամասի նկատմամբ թիվ 2175690 սեփա-  
կանության իրավունքի գրանցման վկայականը:

3) Վեներա Ավետիսյանի ընտանիքը Դաշտավան գյուղի հին լաբորատորիայի շեն-  
քում բնակվում է 1995 թվականից:

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը  
գտնում է, որ՝

1) *բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 172-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ նույն օ-  
րենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով՝ անձը կարող է սեփականության իրա-  
վունք ձեռք բերել սեփականատեր չունեցող գույքի նկատմամբ, ինչպես նաև այն գույքի,  
որի սեփականատերն անհայտ է, կամ որից սեփականատերը հրաժարվել է, կամ որի  
նկատմամբ սեփականության իրավունքը նա կորցրել է օրենքով նախատեսված այլ հիմ-  
քերով:

---

---

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացին կամ իրավաբանական անձը, որն անշարժ գույքի սեփականատերը չէ, սակայն այն տասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ տիրապետում է որպես սեփական գույք, այդ գույքի նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրավունք (ձեռքբերման վաղեմություն):

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ ձեռքբերման վաղեմությունն իրենից ներկայացնում է օրենքով նախատեսված որոշակի ժամկետի լրանալու և որոշակի պայմանների վրա հասնելու ուժով **մեկ անձի կողմից սեփականության իրավունքի ձեռքբերման**, իսկ մյուսի կողմից **այդ իրավունքի դադարման** միջոց:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից հետևում է, որ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռքբերման համար անհրաժեշտ է մի շարք վավերապայմանների միաժամանակյա առկայությունը: Մասնավորապես դրանք են՝

1. տիրապետումը պետք է լինի բարեխիղճ: Տիրապետման բարեխղճությունը գնահատվում է գույքն անձի փաստացի տիրապետմանն անցնելիս: Տիրապետողի մոտ պետք է առկա լինի այն համոզմունքը, որ նա գույքը ձեռք է բերում օրինական հիմքերով: **Տիրապետումը պետք է հիմնված լինի այնպիսի փաստի վրա, որը տիրապետողին կարող է տալ բավարար հիմքեր ենթադրելու, որ նա այդ գույքը տիրապետելու է որպես սեփականություն:**

2. փաստացի տիրապետողը գույքը պետք է տիրապետի որպես սեփականը, այսինքն՝ գույքը փաստացի տիրապետողը պետք է մասնակցի գույքի կառավարմանը, հոգ տանի դրա պահպանման համար, ինչպես իր սեփական գույքի դեպքում: Անձը պետք է գույքը տիրապետի ինչպես սեփականը նաև երրորդ անձանց հետ հարաբերություններում;

3. տիրապետումը պետք է լինի 10 տարի և անընդմեջ: Այսինքն՝ 10 տարվա ընթացքում գույքի տիրապետումը չպետք է ընդհատվի: Տիրապետումը կարող է ընդհատվել կամ տիրապետողի կամքով, երբ նա հրաժարվում է գույքի հետագա տիրապետումից (գույքը դուրս է գալիս նրա տիրապետումից), կամ գույքի սեփականատիրոջ կամ այլ անձանց գործողություններով, որոնք ուղղված են գույքը վերադարձնելուն;

4. տիրապետումը պետք է լինի բացահայտ, այսինքն՝ փաստացի տիրապետողը գույքը չպետք է տիրապետի երրորդ անձանցից գաղտնի եղանակով (տես օրինակ՝ Վոլոդյա և Միշա Նիկողոսյաններ ընդդեմ Մանվել, Սոֆիկ, Մելանյա, Մամվել Սարիբեկյաններ և Քնարիկ Աղազարյան, Մանվել Սարիբեկյան և Քնարիկ Աղազարյան ընդդեմ Վոլոդյա և Միշա Նիկողոսյաններ, 10.10.2007, քաղ. գործ թիվ 3-1435/ՎԳ (ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը և սեփականության իրավունքի վկայականը մասնակցի անվավեր ճանաչելու պահանջով)):

Սույն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանը, վճռի հիմքում դնելով այն հանգամանքը, որ Վեներա Ավետիսյանը Գյուլապետի թույլտվությամբ 12 տարի բնակվել է վեճի առարկա շենքում, հաստատված է համարել, որ վերջինս բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ տիրապետում է այն որպես սեփական գույք:

Սինչդեռ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ նույնիսկ Գյուլապետի կողմից Վեներա Ավետիսյանին տրված բնակության թույլտվության առկայությունը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի իմաստով չի կարող որակվել որպես վեճի առարկա գույքի բարեխիղճ տիրապետում:

Այսինքն՝ սույն քաղաքացիական գործում բացակայում է որևէ ապացույց, որով կարող էր հաստատվել Վեներա Ավետիսյանի կողմից վեճի առարկա գույքի տիրապետման բարեխղճությունը, գործով հիմնավորված չէ, որ այդ գույքի տիրապետումը հիմնված է

այնպիսի փաստի վրա, որը տիրապետողին կարող էր տալ բավարար հիմքեր ենթադրելու, որ նա այդ գույքը իր տիրապետմանն անցնելու պահից տիրապետել է որպես սեփականը:

Վերոնշյալ հանգամանքները Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար հիմք արձանագրելու համար, որ գույքի փաստացի տիրապետող Վեներա Ավետիսյանը բարեխղճորեն, բացահայտ, անընդմեջ և որպես սեփական գույք չի տիրապետել վեճի առարկա անշարժ գույքը և դրա նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի ուժով ձեռք չի բերել սեփականության իրավունք:

*2) բողոքի երկրորդ հիմքը այն մասին, որ Վերաքննիչ դատարանը վճիռ է կայացրել գործին մասնակից չդարձած Մայիս Դանիելյանի իրավունքների վերաբերյալ, Վճռաբեկ դատարանը քննության չի առնում, քանի որ բողոք բերած անձը՝ Անահիտ Խանադյանը իրավասու չէ վճռաբեկ բողոք ներկայացնել Մայիս Դանիելյանի անունից:*

Այսպիսով, վճռաբեկ բողոքի առաջին հիմքի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի համաձայն, Վերաքննիչ դատարանի վճիռը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: ՀՀ վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի վերը նշված հոդվածներով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Սույն քաղաքացիական գործով հաստատված փաստական հանգամանքները Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար Վերաքննիչ դատարանի վճիռը փոփոխելու համար, որը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի 15.08.2007 թվականի վճիռը և փոփոխել: Անահիտ Խանադյանի հայցը բավարարել, Վեներա Ավետիսյանի հակընդդեմ հայցը մերժել:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒՐՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի վճիռ  
Քաղաքացիական գործ թիվ 1948/2007թ.  
Նախագահող դատավոր՝ Կ.Հակոբյան  
Դատավորներ՝ Լ.Գրիգորյան  
Լ.Սոսյան

Քաղաքացիական գործ թիվ **3-153(ՎԴ)**  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ  
դատարան)

*նախագահությամբ* Հ.ՍԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի մարտի 27-ին,

դռնբաց դատական նիստում, քննելով Գրիգոր Խաչատրյանի վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.09.2007 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի Գրիգոր Խաչատրյանի ընդդեմ Թամո Թամոյանի, Երևանի քաղաքապետարանի, երրորդ անձ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Էրեբունու տարածքային ստորաբաժանման(այսուհետ՝ Կադաստր)՝ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունք ճանաչելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ հայցվորը պահանջել է ձեռքբերման վաղեմության ուժով ճանաչել սեփականության իրավունքը Երևանի Շիրակի փողոցի 2/3 հասցեում գտնվող 1300 քմ մակերեսով հողատարածքի նկատմամբ:

Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանի 02.02.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 27.09.2007 թվականի վճռով հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Գրիգոր Խաչատրյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) *Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ հողային օրենսգրքի 72-րդ և 64-րդ հոդվածները, որոնք չպետք է կիրառեր:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ հողային օրենսգրքի 72-րդ և 64-րդ հոդվածները՝ առանց հիմնավորելու դրանց կիրառելիության հարցը:

2) *Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի առաջին մասը, որը պետք է կիրառեր:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հաստատված համարելով վեճի առարկա հողամասի անվանումը, տեղանքը, չափերը նշված չլինելու մասին, չի հետազոտել և գնահատման առարկա չի դարձրել Հայաստանի Ազգային Արխիվ Երևանի քաղաքային մասնաճյուղի 15.03.2006 թվականի և 08.12.2006 թվականի տեղեկանքները, որոնց համաձայն՝ վիճելի հողատարածքը նախկինում պատկանել է Ն.Շենգավիթի Կալինինի անվան կոլտնտեսությանը և վերջինիս ընդհանուր ժողովի նիստի թիվ 3 արձանագրությամբ Ալթուն Թամոյանին հատկացվել է 1300 քմ հողատարածք:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել 1989 թվականից մինչ օրս Գրիգոր Խաչատրյանի կողմից վեճի առարկա հողամասը բարեխիղճ և որպես սեփական գույք տիրապետելու փաստը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի վճիռը և օրինական ուժ տալ Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանի 02.02.2007 թվականի վճիռին:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) ՀԽՍՀ Ն.Շենգավիթ Կալինինի կոլտնտեսության ընդհանուր ժողովի 29.04.1980 թվականի թիվ 3 որոշմամբ Ալթուն Թամոյանին հատկացվել է 1300 քմ մակերեսով տնամերձ հողամաս:

2) 1989 թվականի նոտարական կարգով չվավերացված առուվաճառքի պայմանագրով՝ հաստատված հարևանների ստորագրություններով և վավերացված քաղաքային կոմիտեի նախագահի կնիքով, վեճի առարկա հողամասը Ալթուն Թամոյանը վաճառել է Գրիգոր Խաչատրյանին:

3) 1989 թվականից մինչ օրս Գրիգոր Խաչատրյանը տիրապետում է վերը նշված հողամասը, ոռոգման ջրի և էլեկտրաէներգիայի մատակարարման առանձին բաժանորդ է, վճարում է բոլոր կոմունալ ծախսերը:

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ.

1) *Վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ հողային օրենսգրքի 72-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք պետության ու համայնքների հողերի այն հողամասերի նկատմամբ, որոնց տիրապետում են առանց իրավաբանական ձևակերպման և որոնցից օգտվում են անընդմեջ ու բացահայտ ավելի քան տասը տարի, ունեն օգտագործման իրավունքի ձեռքբերման վաղեմության իրավունք, եթե հողամասերը համապատասխանում են սույն օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պահանջներին:

---

---

29.01.1991 թվականի ՀՀ հողային օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տնամերձ հողամասերը, ինչպես նաև այգեգործության (ամառանոցի) և բնակելի տան շինարարության ու դրա սպասարկման համար Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ունեցած հողամասերը անհատույց կարգով թողնվում են նրանց որպես սեփականություն:

ՀՀ հողային օրենսգրքի 52-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ մինչև 1999 թվականի մայիսի 6-ը հողամասերի նկատմամբ իրավունքների վերաբերյալ սահմանված կարգով տրված, ձեռք բերված փաստաթղթերն ունեն իրավաբանական ուժ, վերագրանցման ենթակա չեն եւ հիմք են հանդիսանում անշարժ գույքի նկատմամբ գործարքներ կատարելու համար:

Հիմք ընդունելով վերոնշյալը և հաշվի առնելով այն հանգամանքը որ դեռևս ՀԽՍՀ Ն.-Շենգավիթ Կալինինի կոլտնտեսության ընդհանուր ժողովի 29.04.1980 թվականի թիվ 3 որոշմամբ վճի առարկա տնամերձ հողամասը հատկացվել էր Ալբուն Թամոյանին, որը 29.01.1991 թվականի ՀՀ հողային օրենսգրքի ուժով դադարել է պետական սեփականություն լինելուց, Վճռաբեկ դատարանը արձանագրում է, որ ՀՀ հողային օրենսգրքի 72-րդ - հոդվածի առաջին մասը սույն քաղաքացիական գործով կիրառելի չէ:

2) *Վճռաբեկ բողոքն երկրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 218-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ վերաքննիչ դատարանի վճռի մեջ պետք է նշվեն վերաքննիչ դատարանի կողմից պարզված գործի հանգամանքները, ապացույցները, որոնց վրա հիմնված են վերաքննիչ դատարանի հետևություններն այդ հանգամանքների մասին, և փաստարկները, որոնցով վերաքննիչ դատարանը մերժում է այս կամ այն ապացույցը, ինչպես նաև այն օրենքները, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը, և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է վերաքննիչ դատարանը վճիռ կայացնելիս:

Վճռաբեկ դատարանը, իր նախորդ որոշումներում անդրադառնալով այս հարցին նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ վճռի թե՛ փաստական և թե՛ իրավական հիմնավորումը:

Վճռի իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ նյութական իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Վճռում ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Վճռի իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա վճռի իրավակիրառ գործառույթը, ընդգծում դատական գործունեության և դատական վճռի օրինականությունը (տե՛ս օրինակ՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն ընդդեմ «Զնար-88» ՍՊԸ՝ գումարի բռնագանձման պահանջի մասին թիվ 3-2504/ՏԳ քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 21.12.2006 թվականի որոշումը):

Սինչեռ սույն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանը հայցապահանջի մերժման հիմքում դնելով այն հանգամանքը, որ ՀԽՍՀ Ն.Շենգավիթ Կալինինի կոլտնտեսության ընդհանուր ժողովի 29.04.1980 թվականի թիվ 3 որոշման արձանագրությունում նշված չէ հողամասի անվանումը, տեղանքը, չափերը և այլ տվյալներ պատշաճ կերպով չի հետազոտել գործում եղած բոլոր ապացույցները, մասնավորապես Հայաստանի Ազգային Արխիվ Երևանի քաղաքային մասնաճյուղի 15.03.2006 թվականի և 08.12.2006

թվականի տեղեկանքները, որոնց համաձայն ՀԽՍՀ Ն.Շենգավիթ Կալինինի կոլտնտեսության ընդհանուր ժողովի 29.04.1980 թվականի թիվ 3 որոշմամբ Ալթուն Թամոյանին հատկացվել է 1300 քմ տնամերձ հողամաս:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ Վերաքննիչ դատարանի վճիռը գուրկ է իրավական հիմնավորումից, և այս առումով այն չի կարող լինել օրինական, համոզիչ, ինչպես նաև հեղինակավոր:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով, Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար Վերաքննիչ դատարանի վճիռը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 172-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ նույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով՝ անձը կարող է սեփականության իրավունք ձեռք բերել սեփականատեր չունեցող գույքի նկատմամբ, ինչպես նաև այն գույքի, որի սեփականատերն անհայտ է, կամ որից սեփականատերը հրաժարվել է, կամ որի նկատմամբ սեփականության իրավունքը նա կորցրել է օրենքով նախատեսված այլ հիմքերով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացին կամ իրավաբանական անձն, որն անշարժ գույքի սեփականատերը չէ, սակայն այն տասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ տիրապետում է որպես սեփական գույք, այդ գույքի նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրավունք (ձեռքբերման վաղեմություն):

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ ձեռքբերման վաղեմությունն իրենից ներկայացնում է օրենքով նախատեսված որոշակի ժամկետի լրանալու և որոշակի պայմանների վրա հասնելու ուժով **մեկ անձի կողմից սեփականության իրավունքի ձեռքբերման**, իսկ մյուսի կողմից **այդ իրավունքի դադարման** միջոց:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից հետևում է, որ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռքբերման համար անհրաժեշտ է մի շարք վավերապայմանների միաժամանակյա առկայությունը: Մասնավորապես դրանք են՝

1. տիրապետումը պետք է լինի բարեխիղճ: Տիրապետման բարեխղճությունը գնահատվում է գույքը անձի փաստացի տիրապետմանը անցնելիս: Տիրապետողի մոտ պետք է առկա լինի այն համոզմունքը, որ նա գույքը ձեռք է բերում օրինական հիմքերով: **Տիրապետումը պետք է հիմնված լինի այնպիսի փաստի վրա, որը տիրապետողին կարող է տալ բավարար հիմքեր ենթադրելու, որ նա այդ գույքը տիրապետելու է որպես սեփականություն:**

---

---

2. փաստացի տիրապետողը գույքը պետք է տիրապետի որպես սեփականը, այսինքն՝ գույքը փաստացի տիրապետողը պետք է մասնակցի գույքի կառավարմանը, հոգ տանի դրա պահպանման համար, ինչպես իր սեփական գույքի դեպքում: Անձը պետք է գույքը տիրապետի ինչպես սեփականը նաև երրորդ անձանց հետ հարաբերություններում;

3. տիրապետումը պետք է լինի 10 տարի և անընդմեջ: Այսինքն՝ 10 տարվա ընթացքում գույքի տիրապետումը չպետք է ընդհատվի: Տիրապետումը կարող է ընդհատվել կամ տիրապետողի կամքով, երբ նա հրաժարվում է գույքի հետագա տիրապետումից (գույքը դուրս է գալիս նրա տիրապետումից), կամ գույքի սեփականատիրոջ կամ այլ անձանց գործողություններով, որոնք ուղղված են գույքը վերադարձնելուն;

4. տիրապետումը պետք է լինի բացահայտ, այսինքն՝ փաստացի տիրապետողը գույքը չպետք է տիրապետի երրորդ անձանցից գաղտնի եղանակով (տես օրինակ՝ Վոլոդյա և Միշա Նիկողոսյաններ ընդդեմ Մանվել, Սոֆիկ, Մելանյա, Սամվել Սարիբեկյաններ և Քնարիկ Աղազարյան, Մանվել Սարիբեկյան և Քնարիկ Աղազարյան ընդդեմ Վոլոդյա և Միշա Նիկողոսյաններ՝ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը և սեփականության իրավունքի վկայականը մասնակի անվավեր ճանաչելու պահանջի մասին թիվ 3-1435/ՎԳ- քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 10.10.2007 թվականի որոշումը):

Սույն քաղաքացիական գործի փաստերի համաձայն՝ 1989 թվականի նոտարական կարգով չվավերացված առուվաճառքի պայմանագրով՝ վեճի առարկա հողամասը Ալթուն Թամոյանը վաճառել է Գրիգոր Խաչատրյանին, որը մինչև օրս բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ տիրապետում է որպես սեփական գույք:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Գրիգոր Խաչատրյանը վեճի առարկա գույքի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի ուժով ձեռք է բերել սեփականության իրավունք:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.09.2007 թվականի վճիռը և օրինական ուժ տալ Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանի 02.02.2007 թվականի վճիռին:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱՆԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի վճիռ  
Քաղաքացիական գործ թիվ 07-3700  
Նախագահող դատավոր՝ Տ.Սահակյան  
Դատավորներ՝ Ն.Հովսեփյան  
Մ.Ասատրյան

Քաղաքացիական գործ թիվ **3-184 (ՎԳ)**  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Հ.ՍԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՍԿԻՏՈՒՄՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի մարտի 27-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Միքայել Միրիջանյանի վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.12.2007 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի Ռ-իմա Վարդանյանի ընդդեմ Միքայել Միրիջանյանի, երրորդ անձ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Էրեբունու տարածքային ստորաբաժանման (այսուհետ Կադաստր)՝ ձեռքբերման վաղեմության ուժով անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին, և ըստ Միքայել Միրիջանյանի հակընդդեմ հայցի՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքը դադարեցնելու և վտարելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Ռ-իմա Վարդանյանը պահանջել է ձեռքբերման վաղեմության ուժով ճանաչել սեփականության իրավունքը Երևանի Բելինսկի փողոցի թիվ 5 հասցեի անշարժ գույքի առաջին հարկի 17,3 և 12 քմ մակերեսներով սենյակների և դրանցով ծանրաբեռնված հողամասի նկատմամբ և այդ մասով անվավեր ճանաչել Միքայել Միրիջանյանի անվամբ կատարված իրավունքի պետական գրանցումը:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Միքայել Միրիջանյանը պահանջել է դադարեցնել Ռ-իմա Վարդանյանի օգտագործման իրավունքը Երևանի Բելինսկի փողոցի թիվ 5 հասցեում Միքայել Միրիջանյանին պատկանող տան նկատմամբ և նրան վտարել այդ տանից:

Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 24.09.2007 թվականի վճռով հայցը մերժվել է, հակընդդեմ հայցը՝ բավարարվել:

---

---

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 04.12.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է, հակընդդեմ հայցը՝ մերժվել: Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Միքայել Միրիջանյանը: Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով:

1) *Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածով նախատեսված՝ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռք բերման հիմքերը, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի իմաստով քաղաքացին կամ իրավաբանական անձը, որն անշարժ գույքի սեփականատեր չէ, կարող է դրա նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերել, եթե տասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ, անընդմեջ, որպես սեփական գույք տիրապետում է այն: Տվյալ դեպքում հայցվորը բնակելի մակերեսը չի տիրապետել տասը տարի անընդմեջ, քանի որ 1991-1992 թվականներից սկսած պարբերաբար բացակայել է ՀՀ-ից, իսկ 1997 թվականից սկսած ընդհանրապես չի բնակվել վիճելի հասցեում, որպիսի հանգամանքները հիմնավորվում են գործում առկա տեղեկանքներով և հայտարարություններով:

Հայցվորը այն չի տիրապետել նաև որպես սեփական գույք, քանի որ Երևան քաղաքի Օրջոնիկիձեի շրջանի ժողդատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով վերջինիս վիճելի մակերեսը հատկացվել է միայն օգտագործման իրավունքով, այսինքն՝ հայցվորն ի սկզբանե գիտակցել է, որ վիճելի գույքը չի կարող տիրապետել որպես իր սեփականը:

Բացի այդ, Դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել ՌԻՄԱ Վարդանյանի անձնագրի «Նշումներ» և «Վիզա» բաժիններում կատարված գրառումներն այն մասին, որ հայցվորը պարբերաբար բացակայել է ՀՀ-ից, ինչպես նաև բնակվել է արտասահմանում, մասնավորապես՝ 07.03.1994 թվականից մինչև 07.03.1995 թվականը բնակվել է Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքի Միտնայա փողոցի 46 շենքի 1-ին մասնաշենքի 12 բնակարանում:

Դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել Դերենիկ Նավիկի Մարգարյանի և Գայանե Հովհաննեսի Բարոջյանի հայտարարություններն այն մասին, որ նրանք 1998-2003 թվականներին բնակվել են Երևան քաղաքի, Բելինսկու 5 հասցեում, այն է՝ վիճելի բնակելի մակերեսում, քանի որ ՌԻՄԱ Վարդանյանն այդ ժամանակահատվածում նույնպես բացակայել է ՀՀ-ից, ինչպես նաև՝ համայնքի տվյալ թաղամասը սպասարկող թաղային լիազոր Արտակ Խորենի Ավետիսյանի հայտարարությունն այն մասին, որ 1999 թվականից Բելինսկու 5 հասցեն իր կողմից սպասարկելու ողջ ժամանակահատվածում բնակելի մակերեսներում միշտ ապրել են այլ մարդիկ:

Դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել նաև Էրեբունու թաղապետարանի թիվ 3 տեղամասի լիազոր ներկայացուցչի կողմից 15.08.2007 թվականին տրված տեղեկանքն առ այն, որ ՌԻՄԱ Վարդանյանը 05.08.1975 թվականից գրանցված է Բելինսկու 5 հասցեում, սակայն նա այնտեղ չի բնակվում: Չի գնահատել նաև Միքայել Միրիջանյանի կողմից բնակելի մակերեսների համար կատարված կոմունալ վճարների անդորրագրերը: Դատարանը բազմակողմանի չի գնահատել կողմերի բացատրությունները, մասնավորապես, հայցվորի աղջկա ամուսնության հետ կապված փաստերի վերաբերյալ տեղեկությունները (հայցվորը բացակայել է իր աղջկա՝ 1997 թվականին կայացած հարսանիքից՝ ՀՀ-ից բացակայելու հիմքով):

2) *Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 218-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի պահանջները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Բողոքարկվող վճռում չեն պահպանվել օրենքով վճռին առաջադրված պահանջները և կայացվել է չհիմնավորված վճիռ: Վճռում չի տրվել դրա իրավական և փաստական հիմնավորումները:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 04.12.2007 թվականի վճիռը և օրինական ուժ տալ Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 24.09.2007 թվականի վճռին:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Երևանի Բելինսկոյ 5 հասցեի գույքը 59,86 քմ բնակելի և 32,2 քմ օժանդակ մակերեսներով սեփականության իրավունքով պատկանում է Մ.Միրջյանյանին:

2) Ռ-իմա Վարդանյանի օգտագործման իրավունքը վեճի առարկա գույքի նկատմամբ օրենքով սահմանված կարգով գրանցված չէ:

3) Երևան քաղաքի Օրջոնիկիձեի շրջանի Ժողդատարանի օրինական ուժի մեջ մտած 02.03.1987 թվականի վճռով վեճի առարկա գույքը Ռ-իմա Վարդանյանին հատկացվել է օգտագործման իրավունքով:

### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

*1) բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 172-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ նույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով՝ անձը կարող է սեփականության իրավունք ձեռք բերել սեփականատեր չունեցող գույքի նկատմամբ, ինչպես նաև այն գույքի, որի սեփականատերն անհայտ է, կամ որից սեփականատերը հրաժարվել է, կամ որի նկատմամբ սեփականության իրավունքը նա կորցրել է օրենքով նախատեսված այլ հիմքերով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացին կամ իրավաբանական անձն, որն անշարժ գույքի սեփականատերը չէ, սակայն այն տասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ տիրապետում է որպես սեփական գույք, այդ գույքի նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրավունք (ձեռքբերման վաղեմություն):

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ ձեռքբերման վաղեմությունն իրենից ներկայացնում է օրենքով նախատեսված որոշակի ժամկետի լրանալու և որոշակի պայմանների վրա հասնելու ուժով **մեկ անձի կողմից սեփականության իրավունքի ձեռքբերման**, իսկ մյուսի կողմից **այդ իրավունքի դադարման** միջոց:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից հետևում է, որ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռքբերման համար անհրաժեշտ է մի շարք վավերապայմանների միաժամանակյա առկայությունը: Մասնավորապես դրանք են՝

1. տիրապետումը պետք է լինի բարեխիղճ: Տիրապետման բարեխղճությունը գնահատվում է գույքը անձի փաստացի տիրապետմանը անցնելիս: Տիրապետողի մոտ պետք է առկա լինի այն համոզմունքը, որ նա գույքը ձեռք է բերում օրինական հիմքերով: **Տիրապետումը պետք է հիմնված լինի այնպիսի փաստի վրա, որը տիրապետողին կարող է տալ բավարար հիմքեր ենթադրելու, որ նա այդ գույքը տիրապետելու է որպես սեփականություն:**

---

---

2. փաստացի տիրապետողը գույքը պետք է տիրապետի որպես սեփականը, այսինքն՝ գույքը փաստացի տիրապետողը պետք է մասնակցի գույքի կառավարմանը, հոգ տանի դրա պահպանման համար, ինչպես իր սեփական գույքի դեպքում: Անձը պետք է գույքը տիրապետի ինչպես սեփականը նաև երրորդ անձանց հետ հարաբերություններում;

3. տիրապետումը պետք է լինի 10 տարի և անընդմեջ: Այսինքն՝ 10 տարվա ընթացքում գույքի տիրապետումը չպետք է ընդհատվի: Տիրապետումը կարող է ընդհատվել կամ տիրապետողի կամքով, երբ նա հրաժարվում է գույքի հետագա տիրապետումից (գույքը դուրս է գալիս նրա տիրապետումից), կամ գույքի սեփականատիրոջ կամ այլ անձանց գործողություններով, որոնք ուղղված են գույքը վերադարձնելուն;

4. տիրապետումը պետք է լինի բացահայտ, այսինքն՝ փաստացի տիրապետողը գույքը չպետք է տիրապետի երրորդ անձանցից գաղտնի եղանակով (տես օրինակ՝ Վոլոդյա և Միշա Նիկողոսյաններ ընդդեմ Մանվել, Սոֆիկ, Մելանյա, Սամվել Սարիբեկյաններ և Քնարիկ Աղազարյան, Մանվել Սարիբեկյան և Քնարիկ Աղազարյան ընդդեմ Վոլոդյա և Միշա Նիկողոսյաններ՝ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը և սեփականության իրավունքի վկայականը մասնակի անվավեր ճանաչելու պահանջի մասին թիվ 3-1435/ՎԴ քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 10.10.2007 թվականի որոշումը):

Սույն քաղաքացիական գործի փաստերի համաձայն՝ Երևան քաղաքի Օրջոնիկիձեի շրջանի ժողդատարանի օրինական ուժի մեջ մտած 02.03.1987 թվականի վճռով վեճի առարկա գույքի նկատմամբ ճանաչվել է Ռիմա Վարդանյանի **օգտագործման իրավունքը**:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ռիմա Վարդանյանի կողմից վեճի առարկա գույքի տիրապետումը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ - հոդվածի իմաստով չի կարող դիտվել բարեխիղճ, քանի որ Երևան քաղաքի Օրջոնիկիձեի շրջանի ժողդատարանի վճռի հիման վրա Ռիմա Վարդանյանը ձեռք է բերել վեճի առարկա գույքի օգտագործման իրավունք և բավարար հիմքեր չէր կարող ունենալ ենթադրելու, որ նա այդ գույքը իր տիրապետմանն անցնելու պահից տիրապետելու է որպես սեփականը: Հետևաբար Ռիմա Վարդանյանը բարեխիղճորեն չի տիրապետել վեճի առարկա անշարժ գույքը:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ սույն քաղաքացիական գործով բացակայում է ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռք բերման հիմքերից մեկը՝ բարեխիղճությունը, Վճռաբեկ դատարանն այն դիտում է բավարար հիմք արձանագրելու համար, որ Ռիմա Վարդանյանը վեճի առարկա գույքի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի ուժով ձեռք չի բերել սեփականության իրավունք:

*2) բողոքն երկրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ*

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին (տես օրինակ՝ «Քնար-88» ՍՊԸ ընդդեմ ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության, 21.12.2006թ. Քաղ. գործ թիվ 3-2504/ՏԴ/ՏԴ, (գումար բռնագանձելու պահանջով)):

Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ վճռի թե՛ փաստական, և թե՛ իրավական հիմնավորումը: Ըստ Վճռաբեկ դատարանի վերոհիշյալ որոշման, վճռի իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ նյութական իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանն եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Վճռում ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Վճռի իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա վճռի իրավակիրառ գործառույթը, ընդգծում դատական գործունեության և դատական վճռի օրինականությունը:

Մինչդեռ, սույն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանը կիրառելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածը, գնահատման առարկա չի դարձրել սույն քաղաքացիական գործով Ռ-իմա Վարդանյանի կողմից վեճի առարկա գույքի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռք բերման հիմքերը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքերի հիմնավոր լինելը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարություն օրենսգրքի 227-րդ և 228-րդ - հոդվածների ուժով վերանայվող դատական ակտը բեկանելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բնակելի տարածության նկատմամբ գրանցված անհատույց օգտագործման իրավունքը դադարելու վերաբերյալ համաձայնության բացակայության դեպքում այդ իրավունքը կարող է սեփականատիրոջ պահանջով դադարեցվել դատական կարգով՝ սեփականատիրոջ կողմից փոխհատուցում տրամադրելու միջոցով: «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-188-Ն) 32-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե անձը մինչև 1999 թվականի հունվարի 1-ը սահմանված կարգով հաշվառված (գրանցված) է եղել բնակելի տարածությունում և մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահը մշտապես կամ առավելապես բնակվել է այդ բնակարանում, ապա մինչև 2006 թվականի դեկտեմբերի 31-ը սեփականատիրոջ կողմից բնակության իրավունքը դադարեցնելու հայցադիմում մերկայացնելու դեպքում փոխհատուցումը կատարվում է սույն օրենքի 11-րդ հոդվածով սահմանված կարգով: Եթե սեփականատիրոջ կողմից բնակության իրավունքը դադարեցնելու հայցադիմումը մերկայացվում է դատարան 2007 թվականի հունվարի 1-ից հետո, ապա սույն կետով սահմանված պաշտպանությունից օգտվում են միայն այն անձիք, որոնց բնակելի տարածության նկատմամբ օգտագործման իրավունքը գրանցված է սահմանված կարգով: Նկատի ունենալով, որ վիճելի գույքի նկատմամբ օգտագործման իրավունքի դադարեցման պահանջը սույն քաղաքացիական գործով մերկայացվել է 21.08.2007 թվականին, իսկ օգտագործման իրավունքը սահմանված կարգով գրանցված չէ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վիճելի գույքի նկատմամբ Ռ.-Վարդանյանի օգտագործման իրավունքներն օրինական է դադարեցման առանց փոխհատուցման:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

---

---

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.12.2007 թվականի վճիռը և օրինական ուժ տալ Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 24.09.2007 թվականի վճռին:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի վճիռ

Քաղաքացիական գործ թիվ 07-1742, 07-2354

Նախագահող դատավոր՝ Տ.Սահակյան  
Դատավորներ՝ Ն.Հովսեփյան  
Մ.Ասատրյան

Քաղաքացիական գործ թիվ 3-151(ՎԳ)  
2008թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Հ.ՍԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի մարտի 27-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Հակոբ, Դավիթ, Մելանյա, Սրբուհի Ասատրյանների, Անթառամ Ավդալյանի վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.09.2007 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի Ռոմելա Մողոյանի ընդդեմ Հակոբ, Դավիթ, Մելանյա, Սրբուհի Ասատրյանների, Անթառամ Ավդալյանի՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքը ճանաչելու պահանջի մասին, և ըստ հայցի Ռոմելա Մողոյանի, Նարեկ և Նարինե Ասատրյանների ընդդեմ Հակոբ, Դավիթ, Մելանյա, Սրբուհի, Կարապետ Ասատրյանների, Անթառամ Ավդալյանի, երրորդ անձինք Երևանի քաղաքապետարանի, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Էրեբունի տարածքային ստորաբաժանման՝ Երևանի քաղաքապետի որոշումը, դրանից ծագող իրավունքի պետական գրանցումը մասնակի անվավեր ճանաչելու, համասեփականատեր ճանաչելու և հաշվառելու պահանջի մասին,

Պ Ա Ր Ձ Ե Ց

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Ռոմելա Մողոյանը պահանջել է ճանաչել իր, Նարեկ և Նարինե Ասատրյանների օգտագործման իրավունքը Երևանի Չեխովի 54 շենքի թիվ 23 բնակարանի նկատմամբ:

Երևանի Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանի 15.03.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Ռոմելա Մողոյանը, Նարեկ և Նարինե Ասատրյանները, դիմելով դատարան, պահանջել են մասնակիորեն անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետի որոշումը, դրանից ծագող իրավունքի պետական գրանցումը և ճանաչել համասեփականության իրավունքը Երևանի Չեխովի 54 շենքի թիվ 23 բնակարանի նկատմամբ:

---

---

Երևանի Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանի 14.05.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 20.06.2007 թվականի որոշմամբ քաղաքացիական գործերը միացվել են մեկ վարույթում:

Վերաքննիչ դատարանի 25.09.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Հակոբ, Գավիթ, Մելանյա, Սրբուհի Ասատրյանները և Անթառամ Ավրալյանը:

Վճռաբեկ բողոքին պատասխան է ներկայացրել Ռոմելա Սողոյանը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով:

*Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «ՀՀ պետական, հանրային և համայնքային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը և խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի պահանջները:*

*Բողոք բերած անձիք նշված պնդումը պատճառաբանել են հետևյալ փաստարկներով.*

«ՀՀ պետական, հանրային և համայնքային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ սեփականաշնորհման սուբյեկտ են հանդիսանում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, տվյալ բնակատարածությունում գրանցում ունեցող, ինչպես նաև օրենքով սահմանված դեպքերում բնակատարածության նկատմամբ իրավունքը պահպանած քաղաքացիները: Հայցվորները սեփականաշնորհման ժամանակ վիճելի բնակարանում գրանցված չեն եղել: Հետևաբար նշված հոդվածի հիմքով չէին կարող սեփականաշնորհման սուբյեկտ հանդիսանալ: Ռոմելա Սողոյանը բնակատարածության օգտագործման իրավունք է ունեցել Մարտունու շրջանի Ձորագյուղ գյուղի հայրական տան նկատմամբ, և որպես ծխի անդամ, մասնակցել սեփականաշնորհմանը: Իր երեխաների հետ հետագայում կազմել է առանձին ծուխ և ստացել 0,12 հա տնամերձ հողամաս, որի նկատմամբ իրավունքները գրանցել է միայն 2007 թվականին:

Վերաքննիչ դատարանը չի կատարել գործում առկա ապացույցների օբյեկտիվ հետազոտություն, քանի որ դրանք թերևս հաստատում են վիճելի բնակարանում հայցվորների բացառապես բնակվելու, այլ ոչ թե հաշվառված կամ գրանցված լինելու հանգամանքը, այսինքն՝ դատարանի կողմից խախտվել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի պահանջները:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձիք պահանջել են հայցի բավարարված մասով բեկանել Վերաքննիչ դատարանի 25.09.2007 թվականի վճիռը և գործն այդ մասով ուղարկել նոր քննության:

### **2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմքերը, փաստարկները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքի դեմ ներկայացված պատասխանով Ռոմելա Սողոյանը պահանջել է վճռաբեկ բողոքը վերադարձնել հետևյալ պատճառաբանությամբ.

«ՀՀ պետական, հանրային և համայնքային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի սխալ մեկնաբանման մասին բողոքի պատճառաբանություններն անհիմն են, քանի որ Ռոմելա Սողոյանը 1991 թվականից ամուսնանալով Կարապետ Ասատրյանի հետ, մշտապես բնակվել է վիճելի բնակարանում և անկախ այդ բնակարանում գրանցված լինելու կամ չլինելու հանգամանքից հանդիսացել է սեփականաշնորհման սուբյեկտ՝ որպես ընտանիքի լիիրավ անդամ: Իսկ Մարտունու

Շարքանի Ձորագյուղ գյուղում սեփականաշնորհմանը մասնակցելը չի բացառում վիճելի բնակարանի նկատմամբ սեփականաշնորհման սուբյեկտ հանդիսանալու հանգամանքը:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունի հետևյալ փաստը՝

1) Շենգավիթ համայնքի «Գավառ» համատիրության տեղեկանքի համաձայն՝ Երևանի Չեխովի փողոցի թիվ 54 շենքի թիվ 23 բնակարանում Ռոմելա Սողոյանը, Նարեկ և Նարինե Ասատրյանները գրանցված չեն (հատոր 2, գ.թ.21):

2) Գեղարքունիքի մարզի Ձորագյուղի գյուղապետարանի տեղեկանքի համաձայն՝ Ռոմելա Սողոյանը, Նարեկ և Նարինե Ասատրյանները հաշվառված են Ձորագյուղ համայնքում (հատոր 2, գ.թ.18):

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝ վճռաբեկ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

«ՀՀ պետական, հանրային և համայնքային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ սեփականաշնորհման սուբյեկտ են հանդիսանում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, տվյալ բնակտարածությունում գրանցում ունեցող, ինչպես նաև օրենքով սահմանված դեպքերում բնակտարածության նկատմամբ իրավունքը պահպանած քաղաքացիները:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման ընթացքում սեփականաշնորհվող բնակտարածության նկատմամբ անձը կարող է սեփականության իրավունք ձեռք բերել, եթե գրանցված է այդ բնակտարածությունում:

Սույն քաղաքացիական գործով, Երևանի Չեխովի փողոցի 54 շենքի թիվ 23 բնակարանի սեփականաշնորհման պահին՝ 10.11.1997 թվականին, գրանցված էին միայն Հակոբ, Մելանյա, Կարապետ, Սրբուհի, Գավիթ Ասատրյանները և Անթառա Ավդալյանը:

Հիմք ընդունելով վերոնշյալը Վճռաբեկ դատարանը արձանագրում է, որ վեճի առարկա գույքում գրանցում չունենալը հիմք է Ռոմելա Սողոյանի, Նարեկ և Նարինե Ասատրյանների սեփականաշնորհման սուբյեկտ չլինելու փաստը հաստատված համարելու համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ: Մինչդեռ, սույն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանը չի գնահատել գործում առկա Շենգավիթ համայնքի «Գավառ» համատիրության տեղեկանքը, որի համաձայն՝ Երևանի Չեխովի փողոցի թիվ 54 շենքի թիվ 23 բնակարանում Ռոմելա Սողոյանը, Նարեկ և Նարինե Ասատրյանները գրանցված չեն, ինչպես նաև ՀՀ Գեղարքունիքի մարզի Ձորագյուղի գյուղապետարանի տեղեկանքը, ըստ որի՝ Ռոմելա Սողոյանը, Նարեկ և Նարինե Ասատրյանները հաշվառված են Ձորագյուղ համայնքում:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարություն օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով վերանայվող դատական ակտը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դա-

---

---

տարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.09.2007 թվականի վճռի՝ հայցը բավարարելու մասը և այն փոփոխել:

Երևանի քաղաքապետի որոշումը, դրանից ծագած իրավունքների պետական գրանցումը մասնակիորեն անվավեր ճանաչելու, համասեփականատեր ճանաչելու և հաշվառելու պահանջի մասին հայցը մերժել:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒՐՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի վճիռ

Քաղաքացիական գործ թիվ 3-174(ՎԳ)  
2008թ.

Քաղաքացիական գործ թիվ 07-3850  
Նախագահող դատավոր՝ Վ.Ավանեսյան  
Դատավորներ՝ Գ.Մատինյան  
Դ.Խաչատրյան

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Հ.ՍԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորների* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ԳՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի մարտի 27-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Սոֆիա Սուքիասյանի, Գագիկ, Նաիրա, Մարինե և Ռուզաննա Եղիազարյանների վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.11.2007 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի Սվետլանա Պետրոսյանի ընդդեմ Սոֆիա Սուքիասյանի, Գագիկ, Նաիրա, Մարինե և Ռուզաննա Եղիազարյանների՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքում բնակարանի օժանդակ մակերեսներն առանձնացնելու պահանջի մասին և Սոֆիա Սուքիասյանի, Գագիկ, Նաիրա, Մարինե և Ռուզաննա Եղիազարյանների հակընդդեմ հայցի ընդդեմ Սվետլանա Պետրոսյանի՝ օժանդակ մակերեսները կողմերի միջև հավասար կիսելու, իսկ անհամաչափ կիսելու դեպքում անհամաչափություն կազմող տարածքի դիմաց վճարելու պահանջների մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Սվետլանա Պետրոսյանը պահանջել է առանձնացնել Երևանի Նալբանդյան փողոցի 17 շենքի թիվ 16 բնակարանի օժանդակ մակերեսները՝ կողմերի փաստացի տիրապետմանը և օգտագործմանը համապատասխան:

Դիմելով դատարան՝ Սոֆիա Սուքիասյանը և Գագիկ, Նաիրա, Մարինե և Ռուզաննա Եղիազարյանները պահանջել են վերոհիշյալ բնակարանի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող օժանդակ մակերեսները հավասար բաժանել կողմերի միջև, իսկ անհամաչափ բաժանելու դեպքում պարտավորեցնել Սոֆիա Պետրոսյանին վճարելու դրամական փոխհատուցում՝ անհամաչափություն կազմող տարածքի համար:

Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 08.08.2007 թվականի վճռով հայրը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայրը բավարարվել է մասնակիորեն:

---

---

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 23.11.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը բավարարվել է մասնակիորեն:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Սոֆիա Սուքիասյանը և Գագիկ Նաիրա, Մարինե և Ռուզաննա Եղիազարյանները:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

### **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 190-րդ հոդվածը, որը չպետք է կիրառեր, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 199-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել գործում առկա ապացույցները, բողոք բերած անձանց բացատրություններն այն մասին, որ վեճի առարկա տարածքը առանձնացնելու վերաբերյալ կողմերի միջև որևէ համաձայնություն չի եղել:

Վերոհիշյալ բնակարանի կոմունալ և օժանդակ հարմարությունները կողմերի ընդհանուր սեփականությունն են և կողմերի միջև առկա չէ որևէ համաձայնություն ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող գույքում կոմունալ և օժանդակ հարմարությունների յուրաքանչյուրի բաժինը որոշելու հարցում:

Վերաքննիչ դատարանի սույն վճռով ընդհանուր սեփականությունից Սվետլանա Պետրոսյանին սեփականության իրավունքով թողնվել է 32,2քմ մակերես, իսկ բողոք բերած անձանց՝ 6,5քմ մակերես:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ընդհանուր սեփականության մասնակցի բաժինը բնեղենով առանձնացնելու անհնարինության դեպքում այդ մակերեսի անհամաչափ բաժնի դիմաց վճարվում է դրամական փոխհատուցում:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են բեկանել Վերաքննիչ դատարանի 23.11.2007 թվականի վճիռը և փոփոխել այն՝ հայցը մերժել, իսկ հակընդդեմ հայցը բավարարել:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

1) Երևանի Նալբանդյան փողոցի 17 շենքի թիվ 16 չորսսենյականոց բնակարանի 25,8քմ մակերեսով 2 սենյակների սեփականատերն է Սվետլանա Պետրոսյանը, իսկ 32,76քմ մակերեսով մյուս 2 սենյակների սեփականատերերն են Սոֆիա Սուքիասյանը, Գագիկ Նաիրա, Մարինե և Ռուզաննա Եղիազարյանները: Նշված բնակարանի կոմունալ հարմարությունները և օժանդակ տարածքը կազմող 46,4քմ մակերեսը բոլոր սեփականատերերի ընդհանուր սեփականությունն է:

2) Սույն քաղաքացիական գործի տվյալների համաձայն՝ ընդհանուր սեփականությունում կողմերի բաժինները հավասար են:

### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 190-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ բաժինները համարվում են հավասար, եթե բաժնային սեփականության մասնակիցների բաժին-

ները չեն կարող որոշվել օրենքի հիման վրա կամ սահմանված չեն բոլոր մասնակիցների համաձայնությամբ:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ եթե բաժնային սեփականության մասնակիցների բաժինները չեն կարող որոշվել օրենքի հիման վրա կամ սահմանված չեն բոլոր մասնակիցների համաձայնությամբ, հետևաբար դրանք համարվում են հավասար:

Սույն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանը վեճի առարկա տարածքը հավասար բաժիններով առանձնացնելու հայցապահանջը մերժելու հիմքում դրել է այն հանգամանքը, որ վեճի առարկա գույքում սեփականատերերի բաժիններն արդեն իսկ որոշվել են նրանց համաձայնությամբ: Նման եզրահանգման համար Վերաքննիչ դատարանը հիմք է ընդունել ընդհանուր սեփականության ներքո գտնվող տարածքից օգտվելու կարգ սահմանելու վերաբերյալ սեփականատերի համաձայնությունը:

Սինչդեռ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ընդհանուր սեփականության ներքո գտնվող տարածքից օգտվելու կարգ սահմանելու վերաբերյալ սեփականատերերի համաձայնությունը չի կարող որակվել որպես բաժինները որոշելու համաձայնություն, քանի որ այդ համաձայնությամբ կողմերը որոշել են վեճի առարկա գույքի օգտագործման և ոչ թե բաժինները որոշելու (փոփոխելու) կարգ, որը պետք է դրսևորվի սեփականատիրոջ կողմից անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի հրաժարման և այլ անձի կողմից այդ իրավունքի ձեռք բերման ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կանոններով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բաժնային սեփականության մասնակիցների միջև ընդհանուր գույքը բաժանելու կամ դրանից նրանցից մեկի բաժինն առանձնացնելու եղանակի և պայմանների մասին համաձայնության բացակայության դեպքում՝ բաժնային սեփականության մասնակիցն իրավունք ունի դատական կարգով պահանջել ընդհանուր գույքից բնեղենով առանձնացնելու իր բաժինը:

Եթե բաժինը բնեղենով առանձնացնելը չի թույլատրվում օրենքով կամ դա անհնար է առանց ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքին անհամաչափ վնաս պատճառելու, առանձնացող սեփականատերը բաժնային սեփականության մյուս մասնակիցներից կարող է պահանջել վճարելու իր բաժնի արժեքը:

Սույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ բաժնային սեփականության մասնակցին բնեղենով առանձնացվող գույքի անհամաչափությունը բաժնային սեփականության իրավունքում նրա բաժնին վերացվում է նրան համապատասխան դրամական գումար վճարելով կամ այլ փոխհատուցումով:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանը նախ պետք է անդրադառնար և գնահատման առարկա դարձներ վեճի առարկա գույքը հավասար բաժիններով առանձնացնելու հնարավորության հարցը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ անհամաչափ առանձնացվող գույքի անհամաչափությունը պետք է վերացվեր համապատասխան դրամական գումար վճարելով կամ այլ փոխհատուցումով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի համաձայն, Վերաքննիչ դատարանի վճիռը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

---

---

## ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի 23.11.2007 թվականի վճիռը և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԳԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒՐՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի վճիռ  
Քաղաքացիական գործ թիվ 07-3819  
Նախագահող դատավոր՝ Տ.Սահակյան  
Դատավորներ՝ Կ.Հակոբյան  
Տ.Նազարյան

Քաղաքացիական գործ թիվ **3-342(ՎԴ)**  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ վճռաբեկ  
դատարան)

*նախագահությամբ* Հ.ՍԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի մայիսի 23-ին,

դռնբաց դատական նիստում, քննելով Լենա Աբգարյանի վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.01.2008 թվականի վճռի դեմ՝ ըստ Լենա Աբգարյանի հայցի ընդդեմ Սկրտիչ Համբարձումյանի և Գրիգոր Գորոյանի՝ ձեռքբերման վաղեմության ուժով գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու և ըստ Սկրտիչ Համբարձումյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Լենա Աբգարյանի, Անահիտ Գևորգյանի և Գոռ Մահտեսյանի՝ ապօրինի զբաղեցրած տարածքից վտարելու և հաշվառումից հանելու պահանջների մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Լենա Աբգարյանը պահանջել է ձեռքբերման վաղեմության ուժով ճանաչել սեփականության իրավունքն Երևանի Գուլակյան փողոցի թիվ 71 տան նկուղային հարկի, օժանդակ կառույցների և այդ կառույցներով զբաղեցրած հողատարածքի նկատմամբ:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Սկրտիչ Համբարձումյանը պահանջել է հաշվառումից հանել և վտարել Լենա Աբգարյանին, Անահիտ Գևորգյանին և Գոռ Մահտեսյանին սեփականության իրավունքով իրեն պատկանող Երևանի Գուլակյան փողոցի թիվ 71 հասցեում գտնվող տանից:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 10.09.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն, հակընդդեմ հայցի հաշվառումից հանելու պահանջի մասը կարճվել է, իսկ մնացած մասը՝ մերժվել:

---

---

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 23.01.2008 թվականի վճռով հայցը մերժվել է, հակընդդեմ հայցի հաշվառումից հանելու պահանջի մասը կարճվել է, իսկ մնացած մասը՝ մերժվել:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Լենա Աբգարյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Սկրտիչ Համբարձումյանը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) *Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածով մոխսատեսված՝ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռքբերման հիմքերը, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել գործում առկա ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Արաբկիրի տարածքային ստրաբաժանման 17.05.2007 թվականի գրությունը, ճիշտ չի գնահատել Հակոբ Այվազյանի և Ստեփան Գևորգյանի միջև 24.10.1971 թվականին կնքված պայմանագիրը:

Ավելին, Վերաքննիչ դատարանը, վերլուծելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածը, նշել է, որ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռքբերման համար անհրաժեշտ են մի շարք վավերապայմանների միաժամանակյա առկայությունը և մատնանշել չորս վավերապայմաններ, որոնք ևս վկայում են, որ Լենա Աբգարյանը հանդիսանում է գույքը բարեխիղճ ձեռք բերող անձ: Չնայած դրան, Վերաքննիչ դատարանն այն մեկնաբանել է ի վնաս հայցվորի:

2) *Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը վճիռ կայացնելիս վճռի պատճառաբանական մասում չի նշել դատարանի կողմից պարզված հանգամանքները, ապացույցները, որոնց վրա հիմնված են դատարանի հետևությունները, այս կամ այն ապացույցները մերժելու փաստարկները:

Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը վճռի պատճառաբանական մասում նշել է, որ հայցվորն որևէ ապացույցով չի հիմնավորել, որ 24.10.1971 թվականին կնքված պայմանագիրն ստորագրվել է Հակոբ Այվազյանի և Ստեփան Գևորգյանի կողմից: Վերաքննիչ դատարանը մնան եզրահանգման գալով հաշվի չի առել, որ դատաքննության ընթացքում կողմերն ընդունել են, որ նշված պայմանագիրն ստորագրել են Հակոբ Այվազյանը և Ստեփան Գևորգյանը և այդ մասին դատաքննության ընթացքում որևէ վեճ առկա չէ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 23.01.2008 թվականի վճիռը և օրինական ուժ տալ Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի 10.09.2007 թվականի վճռին:

### **2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները.**

Սկրտիչ Համբարձումյանն երբևէ չի հրաժարվել վիճելի մակերեսների նկատմամբ իր սեփականության իրավունքից: Այդ ամբողջ տարիների ընթացքում նա կատարել է սեփական գույքը պահպանելու բոլոր գործողությունները, մասնավորապես, մշտապես վճարել է հողի հարկը և գույքահարկը, համապատասխան մարմնում գրանցել սեփականության իրավունքն Երևանի Գույակյան փողոցի թիվ 71 հասցեի իրեն պատկանող մակերեսների, այդ թվում՝ հայցվորի զբաղեցրած մակերեսների նկատմամբ:

Բացի այդ, վեճի առարկա տարածքը հայցվորը զբաղեցրել է սեփականատիրոջ համաձայնությամբ:

**3. Վճռարեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռարեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. 24.11.1971 թվականին կնքված պայմանագրի 2-րդ պարբերության համաձայն՝ Հակոբ Այվազյանը՝ կնոջ և տղայի համաձայնությամբ, սեփական տան նկուղային հարկի երկու սենյակներն իրենց նախասենյակով վաճառել է Ստեփան Գևորգյանին չորս հազար հինգ հարյուր ռուբլով:

2. Նույն պայմանագրի 4-րդ պարբերության համաձայն՝ Հակոբ Այվազյանը թույլատրել է Ստեփան Գևորգյանին իրեն գնած նկուղային հարկի դիմաց, բակի մեջ կառուցել խոհանոց ջրի ծորակով և այլ օժանդակ հարմարություններով:

3. Ստեփան Գևորգյանը Լենա Աբգարյանի նախկին ամուսինն է:

4. ՀՀ ԿԱ ԱԳ Գ ՊԿ Արաբկիրի տարածքային ստորբաժանման 17.05.2007 թվականի գրությամբ Լենա Աբգարյանն օգտագործում է Երևանի Գուլակյան փողոցի թիվ 71 հասցեում գտնվող տան 49.7 քմ նկուղային հարկը և 14.4 քմ օժանդակ կառույցները:

5. Լենա Աբգարյանը 1973 թվականից հաշվառված է Երևանի Գուլակյան փողոցի թիվ 71 հասցեում գտնվող տանը:

6. Երևանի Գուլակյան փողոցի բնակիչների 23.07.2007 թվականի վկայությունների համաձայն՝ Լենա Աբգարյանը 1973 թվականից անընդմեջ բնակվում է Երևանի Գուլակյան փողոցի թիվ 71 տանը:

7. 30.08.1985 թվականի կտակի համաձայն՝ Հակոբ Այվազյանն իր գույքը կտակել է Սլյուտիչ Համբարձումյանին:

**4. Վճռարեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.**

Քննելով վճռարեկ բողոքը վերը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռարեկ դատարանը գտնում է, որ

*1) Վճռարեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 172-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ նույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով՝ անձը կարող է սեփականության իրավունք ձեռք բերել այն գույքի նկատմամբ որից սեփականատերը հրաժարվել է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացին կամ իրավաբանական անձը, որն անշարժ գույքի սեփականատերը չէ, սակայն այն տասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ տիրապետում է որպես սեփական գույք, այդ գույքի նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրավունք (ձեռքբերման վաղեմություն):

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ ձեռքբերման վաղեմությունն իրենից ներկայացնում է օրենքով նախատեսված որոշակի ժամկետի լրանալու և որոշակի պայմանների վրա հասնելու ուժով **մեկ անձի կողմից սեփականության իրավունքի ձեռքբերման**, իսկ մյուսի կողմից **այդ իրավունքի դադարման** միջոց:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից հետևում է, որ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռքբերման համար անհրաժեշտ է մի շարք վավերապայմանների միաժամանակյա առկայությունը: Մասնավորապես դրանք են՝

1. տիրապետումը պետք է լինի բարեխիղճ: Տիրապետման բարեխղճությունը գնահատվում է գույքն անձի փաստացի տիրապետմանն անցնելիս: Տիրապետողի մոտ պետք է առկա լինի այն համոզմունքը, որ նա գույքը ձեռք է բերում օրինական հիմքերով: **Տիրապետումը պետք է հիմնված լինի այնպիսի փաստի վրա, որը տիրապետողին կարող է տալ**

---

---

**բավարար հիմքեր ենթադրելու, որ նա այդ գույքը տիրապետելու է որպես սեփականություն,**

2. փաստացի տիրապետողը գույքը պետք է տիրապետի որպես սեփականը, այսինքն՝ գույքը փաստացի տիրապետողը պետք է մասնակցի գույքի կառավարմանը, հոգ տանի դրա պահպանման համար, ինչպես իր սեփական գույքի դեպքում: Անձը պետք է գույքը տիրապետի ինչպես սեփականը նաև երրորդ անձանց հետ հարաբերություններում,

3. տիրապետումը պետք է լինի 10 տարի և անընդմեջ: Այսինքն՝ 10 տարվա ընթացքում գույքի տիրապետումը չպետք է ընդհատվի: Տիրապետումը կարող է ընդհատվել կամ տիրապետողի կամքով, երբ նա հրաժարվում է գույքի հետագա տիրապետումից (գույքը դուրս է գալիս նրա տիրապետումից), կամ գույքի սեփականատիրոջ կամ այլ անձանց գործողություններով, որոնք ուղղված են գույքը վերադարձնելուն,

4. տիրապետումը պետք է լինի բացահայտ, այսինքն՝ փաստացի տիրապետողը գույքը չպետք է տիրապետի երրորդ անձանցից գաղտնի եղանակով (տես օրինակ՝ Վոլոդյա և Միշա Նիկողոսյաններ ընդդեմ Մանվել, Սոֆիկ, Մելանյա, Մամվել Սարիբեկյաններ և Քնարիկ Աղազարյան, Մամվել Սարիբեկյան և Քնարիկ Աղազարյան ընդդեմ Վոլոդյա և Միշա Նիկողոսյաններ՝ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը և սեփականության իրավունքի վկայականը մասնակի անվավեր ճանաչելու պահանջի մասին թիվ 3-1435/ՎԴ քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 10.10.2007 թվականի որոշումը):

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի Գույական փողոցի թիվ 71 տան հասցեում գտնվող վեճի առարկա անշարժ գույքը Լենա Աբգարյանի տիրապետմանն անցման հիմք է 24.11.1971 թվականի նոտարական կարգով չվավերացված առուվաճառքի պայմանագիրը, որի համաձայն՝ Հակոբ Այվազյանը՝ կնոջ և տղայի համաձայնությամբ, սեփական տան նկուղային հարկի երկու սենյակներն իրենց նախասենյակով վաճառել է Լենա Աբգարյանի ամուսնուն՝ Ստեփան Գևորգյանին, չորս հազար հինգ հարյուր ռուբլով: Նույն պայմանագրի 4-րդ պարբերության համաձայն՝ Հակոբ Այվազյանը թույլատրել է Ստեփան Գևորգյանին իրեն գնած նկուղային հարկի դիմաց, բակի մեջ կառուցել խոհանոց ջրի ծորակով և այլ օժանդակ հարմարություններով: Բացի այդ, Լենա Աբգարյանը 1973 թվականից հաշվառված է և 1973 թվականից ամբողջությամբ բնակվում է Երևանի Գույական փողոցի թիվ 71 հասցեում գտնվող տանը: Վերջինս օգտագործում է Երևանի Գույական փողոցի թիվ 71 հասցեում գտնվող տան 49.7 քմ նկուղային հարկը և 14.4 քմ օժանդակ կառույցները:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Հակոբ Այվազյանն Երևանի Գույական փողոցի թիվ 71 հասցեում գտնվող վեճի առարկա անշարժ գույքը վաճառելով Ստեփան Գևորգյանին հրաժարվել է **իրեն պատկանող վեճի առարկա գույքի** սեփականության իրավունքից: Հետևաբար, Լենա Աբգարյանի կողմից վեճի առարկա անշարժ գույքի տիրապետումը հիմնված է այնպիսի փաստի վրա, որը տիրապետողին կարող էր տալ բավարար հիմքեր ենթադրելու, որ նա այդ գույքն իր տիրապետմանն անցնելու պահից տիրապետել է որպես սեփականը, այսինքն՝ գույքի փաստացի տիրապետող Լենա Աբգարյանը 10 տարի բարեխղճորեն, բացահայտ, անընդմեջ, որպես սեփական գույք տիրապետելով վեճի առարկա անշարժ գույքը, դրա նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի ուժով ձեռք է բերել սեփականության իրավունք:

Սինչեռ, սույն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանը, վկայակոչելով ՀՀ Վճռաբեկ դատարանի 10.10.2007 թվականի թիվ 3-1435 (ՎԴ) որոշումը և մատնանշելով ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ճանաչման համար չորս անհրաժեշտ վավերապայմանների առկայությունը, անհիմն կերպով մերժել է վեճի առարկա գույքի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ճանաչումը:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն հետևությանը, որ Սկրտիչ Համբարձումյանն երբևէ չի հրաժարվել իր սեփական գույքից՝ վճարելով գույքահարկը և հողի հարկերը, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն վիճելի անշարժ գույքի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով Լենա Աբգարյանի սեփականության իրավունքի ճանաչումը մերժելու հիմք չէ, հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն քաղաքացիական գործի փաստերի համաձայն՝ 30.08.1985 թվականի կտակի համաձայն՝ Հակոբ Այվազյանն իր գույքը կտակել է Սկրտիչ Համբարձումյանին:

Հետևաբար, 30.08.1985 թվականի կտակով Սկրտիչ Համբարձումյանին փոխանցվել է միայն Երևանի Գուլակյան փողոցի թիվ 71 տան այն մասը, որը ժառանգության բացման պահին պատկանել է Հակոբ Այվազյանին:

Սինչդեռ, սույն քաղաքացիական գործով Հակոբ Այվազյանը հրաժարվել է վեճի առարկա անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքից:

*2) Վճռաբեկ բողոքն երկրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ - պարբերության համաձայն՝ վճռի պատճառաբանական մասում պետք է նշվեն դատարանի կողմից պարզված գործի հանգամանքները, ապացույցները, որոնց վրա հիմնված են դատարանի հետևությունները, այս կամ այն ապացույցները մերժելու փաստարկները, ինչպես նաև այն օրենքները, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով դատարանը ղեկավարվել է վճիռ կայացնելիս:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ վճռի թե՛ փաստական և թե՛ իրավական հիմնավորումները:

Վճռի իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ նյութական իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանն եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Վճռում ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Վճռի իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա վճռի իրավակիրառ գործառույթը, ընդգծում դատական գործունեության և դատական վճռի օրինականությունը (տե՛ս ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն ընդդեմ «Քնար-88» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, քաղ. գործ թիվ 3-2504/ՏԳ(ՏԳ) (գումար բռնագանձելու պահանջով)):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածից բխում է, որ դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վճիռ կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին (տե՛ս Ամժեղա Ղազարյան, Վերփիկ և Արմինե Գասպարյանների՝ ժառանգական գույքը ժառանգների միջև բաժանելու պահանջի մասին, քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.12.2007 թվականի որոշումը, թիվ 3-1843(ՎԳ)): Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից գործի քննության ընթացքում պետք է ուսումնասիրվելին գործում առկա բոլոր ապացույցները, վերլուծության ենթարկվելին կողմերի ներկայացրած և դատաքննությամբ հետազոտված ապացույցները, դրանցով համապատասխան հանգամանքները հիմնավորված կամ անհիմն համարելու համար:

Սինչդեռ, սույն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանը կասկածի տակ դնելով կողմերի կնքած 24.10.1971 թվականի պայմանագիրը, չի հիմնավորել իր այդ եզրահանգումը:

---

---

Բացի այդ, սույն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանը, գնահատման առարկա չի դարձրել ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Արաբկիրի տարածքային ստորբաժանման 17.05.2007 թվականի գրությունը, Երևանի Գուլակյան փողոցի բնակիչների 23.07.2007 թվականի վկայությունները, ինչպես նաև չի նշել այդ ապացույցների մերժման հիմնավորումները:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ Վերաքննիչ դատարանի վճիռը զուրկ է իրավական հիմնավորումից, և այս առումով այն չի կարող լինել օրինական, համոզիչ, ինչպես նաև հեղինակավոր:

Այսպիսով, վերը նշված հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար ՀՀ քաղաքացիական դատավարություն օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով՝ Վերաքննիչ դատարանի վճիռը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործն ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.01.2008 թվականի վճիռը և օրինական ուժ տալ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 10.09.2007 թվականի վճռին:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒՐՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի վճիռ

Քաղաքացիական գործ թիվ 3-422/ՎԳ-  
2008թ.

Քաղաքացիական գործ թիվ 07-4178/2008թ.  
Նախագահող դատավոր՝ Դ. Խաչատրյան  
Դատավորներ՝ Վ. Ավանեսյան  
Գ. Մատինյան

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Հ.ՍԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի հունիսի 20-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Անդրե Ջելոյանի վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ 18.01.2007 թվականի վճիռը՝ ըստ հայցի Ռուզաննա Խաչիկյանի ընդդեմ Անդրե Ջելոյանի՝ համատեղ սեփականատեր ճանաչելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ հայցվորը պահանջել է ճանաչել Երևանի, Բաղրամյան պողոտայի, 2-րդ փակուղի, 10-րդ շենքի, թիվ 10 բնակարանի համատեղ սեփականատեր:

Արաբկիր և Քանաքեռ-Ջեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 15.10.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 18.01.2008 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Անդրե Ջելոյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ռուզաննա Խաչիկյանը:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 4-րդ մասը, որը չպետք է կիրառեր, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև 53-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:*

---

---

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Գործով դատաքննության ժամանակ չեն հաստատվել հայցվորի անձնական միջոցների հաշվին վերանորոգում կատարելու, ինչպես նաև *վերանորոգման հետևանքով* բնակարանի արժեքը նշանակալի չափով ավելանալու փաստերը: Գործում առկա ապացույցներից հետևում է, որ վերանորոգման գումարները հայցվորը ստացել է պատասխանողի անձնական միջոցներից, իսկ բնակարանի գնի աճի՝ մոտ 4 անգամ բարձր լինելը ոչ թե վերանորոգման, այլ անշարժ գույքի ընդհանուր շուկայական արժեքի աճի հետևանք է:

Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը չի գնահատել «Հողշինմոնիթորինգ» ՊՈԱԿ-ի 2007 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 04/01-383 գրությունը, որով հաստատվում է այն փաստը, որ 2002 թվականի հունվարից 2007 թվականի օգոստոս ամիսն ընկած ժամանակահատվածում Արաբկիր համայնքում բնակարանների 1 քմ-ի արժեքի բնականոն աճի գործակիցն աճել է 4.89 անգամ:

Վերաքննիչ դատարանը չի գնահատել «Պեի Դե Լա Լուարի Խնայբանկ»-ի 24.10.2007 թվականի տեղեկանքը և քաղվածքները, որոնցով հաստատվում է այն փաստը, որ պատասխանողը Ռուզաննա Խաչիկյանի հաշվեհամարին է փոխանցել 10.700 եվրոյի չափով գումար:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.01.2007 թվականի վճիռը և գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:

### **2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները.**

Բողոք բերած անձի պնդումն այն մասին, որ 2002-2007 թվականների ընթացքում անշարժ գույքի 1 քմ-ի արժեքի բնականոն աճի գործակիցն աճել է 4.89 անգամ, դեռևս հիմք չէ հաստատված համարելու համար այն հանգամանքը, որ վեճի առարկա գույքի արժեքը բարձրացել է ոչ թե վերանորոգման, այլ շուկայական գների բարձրացման հետևանքով, քանի որ վերոնշյալ ցուցանիշը ստացվել է հազարավոր գույքի գնահատման արդյունքում, որոնց ամենաբարձր և ամենացածր արժեքների հարաբերությունը կարող է տարբեր լինել:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Անդրե Ջելոյանը 02.05.2000 թվականին 6.360.000 ՀՀ դրամով գնել է Երևանի, Բաղրամյան պողոտայի, 2-րդ փակուղի, 10-րդ շենքի, թիվ 10 բնակարանը:

2. Անդրե Ջելոյանը և Ռուզաննա Խաչիկյանն ամուսնացել և իրենց ամուսնությունը գրանցել են Ֆրանսիայի Հանրապետությունում 15.07.2003 թվականին:

3. Բնակարանը վերանորոգվել է 2005 թվականի ապրիլ-հուլիս ամիսներին:

4. Բնակարանի շուկայական արժեքը 28.09.2007 թվականի դրությամբ 25.500.000 ՀՀ դրամ է:

5. «Հողշինմոնիթորինգ» ՊՈԱԿ-ի կողմից 19.10.2007 թվականին տրված գրության համաձայն՝ 2002 թվականի հունվարից մինչև 2007 թվականի օգոստոս ամիսն ընկած ժամանակահատվածում Արաբկիր համայնքում գտնվող բազմաբնակարան շենքերի բնակարանների 1քմ-ի արժեքի բնականոն աճի ինդեքսը աճել է 4,89 անգամ, որպիսի աճն ուղղակիորեն տարածվել է նաև բնակարանի շուկայական արժեքի աճի վրա:

### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ *բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ամուսիններից յուրաքանչյուրի գույքը կարող է ճանաչվել նրանց համատեղ սեփականություն, եթե պարզվի, որ ամուսնության ընթացքում ամուսինների ընդհանուր գույքի կամ մյուս ամուսնու անձնական գույքի հաշվին կատարվել են ներդրումներ, որոնք **նշանակալի չափով** ավելացրել են այդ գույքի արժեքը (հիմնական վերանորոգում, վերակառուցում, վերասարքավորում և այլն), եթե այլ բան նախատեսված չէ ամուսինների միջև կնքված պայմանագրով:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ ամուսնության ընթացքում ամուսիններից մեկին սեփականության իրավունքով պատկանող գույքը կարող է ճանաչվել ամուսինների համատեղ սեփականության իրավունքը հետևյալ վավերապայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

- ամուսնության ընթացքում ամուսինների ընդհանուր գույքի կամ մյուս ամուսնու անձնական գույքի հաշվին ներդրումներ կատարելը;
- գույքի արժեքի **նշանակալի չափով** ավելանալը;
- կատարված ներդրման և արժեքի ավելացման միջև պատճառահետևանքային կապի առկայությունը:

Հիմք ընդունելով վերոգրյալը Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործի լուծման համար անհրաժեշտ է անդրադառնալ և գնահատման առարկա դարձնել հետևյալ հարցերը.

- բնակարանի վերանորոգման պահին՝ 2005 թվականին ի՞նչ արժեք ուներ բնակարանը:
- արդյո՞ք բնակարանի վերանորոգման հետևանքով դրա արժեքը ավելացել է նշանակալի չափով:
- առկա է արդյո՞ք կատարված վերանորոգման և արժեքի նշանակալի չափով ավելացման միջև պատճառահետևանքային կապ:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին (տես օրինակ՝ «Բնար-88» ՍՊԸ ընդդեմ ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության, 21.12.2006թ. Քաղ. գործ թիվ 3-2504/ՏԳ/ՏԳ, (գումար բռնագանձելու պահանջով)):

Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ վճռի թե՛ փաստական, և թե՛ իրավական հիմնավորումը: Ըստ Վճռաբեկ դատարանի վերոհիշյալ որոշման, վճռի իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ նյութական իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանն եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածից հետևում է, որ դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և արդյունքում վճիռ կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին (տես, Անժելա Դազարյանը, Արփիկ և Արմինե Գասպարյաններն ընդդեմ Շուշանիկ Սարգսյանի, Ռսկեհատ, Նունե, Հրանուշ Գասպարյանների՝ ժառանգական գույքը ժառանգների միջև բաժանելու պահանջի մասին, ՀՀ վճռաբեկ դատարանի 12.12.2007 թվականի որոշում, քաղաքացիական գործ թիվ 3-1843/ՎԳ):

Մինչդեռ, սույն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանը, հայցի բավարարման հիմքում դնելով այն հանգամանքը, որ վեճի առարկա գույքում Ռուզաննա Խաչիկյանի կողմից կատարվել է 15.000 ԱՄՆ դոլլար ներդրում, և որ գույքի գինը 6.360.000 ՀՀ դրամից բարձրացել է 25.000.000 ՀՀ դրամ, պատշաճ գնահատման առարկա չի դարձրել

---

---

Անդրե Զելոյանին սեփականության իրավունքով պատկանող վեճի առարկա բնակարանում Ռուզաննա Խաչիկյանի կողմից ներդրման չափը (ներդրված գումարը Ռուզաննա Խաչիկյանի և Անդրե Զելոյանի համատեղ սեփականությունը, թե Ռուզաննա Խաչիկյանի անձնական միջոցներ լինելու հանգամանքը), և չի հիմնավորել այդ ներդրման հետևանքով վեճի առարկա գույքի արժեքի **նշանակալի չափով** ավելանալու հանգամանքը: Վերաքննիչ դատարանը հաստատված համարելով վեճի առարկա գույքի արժեքի ավելացման փաստը՝ չի հիմնավորել նաև այդ ավելացման և Ռուզաննա Խաչիկյանի կողմից կատարված ներդրման պատճառահետևանքային կապը:

Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը գնահատման առարկա չի դարձրել սույն քաղաքացիական գործում առկա «Հողշինմունիթորինգ» ՊՈԱԿ-ի կողմից 19.10.2007 թվականին արված գրությունը, համաձայն որի՝ 2002 թվականի հունվարից մինչև 2007 թվականի օգոստոս ամիսն ընկած ժամանակահատվածում Արաբկիր համայնքում գտնվող բազմաբնակարան շենքերի բնակարանների 1քմ-ի արժեքի բնականոն աճի ինդեքսը աճել է 4,89 անգամ, ինչի հետևանքով ավելացել է նաև բնակարանի շուկայական արժեքը և չի նշել տվյալ ապացույցը մերժելու փաստարկները: Մինչդեռ, վերոնշյալ գրությամբ հիմնավորվում է այն հանգամանքը, որ վեճի առարկա գույքի արժեքը բարձրացել է ոչ թե վերանորոգման, այլ շուկայական գների բարձրացման հետևանքով:

Բացի այդ, 2005 թվականին կատարված ներդրման հետևանքով բնակարանի արժեքի աճը հաստատված համարելիս Վերաքննիչ դատարանը հիմք է ընդունել 2000 թվականից մինչև 2007 թվականը բնակարանի արժեքի փոփոխությունը: Այնինչ, Վերաքննիչ դատարանը պետք է նախ՝ հիմք ընդուներ մինչև ներդրումը՝ 2005 թվականի դրությամբ բնակարանի արժեքը և դրանից անմիջապես հետո արձանագրված գնի ավելացումը, որն ուղղակի պատճառահետևանքային կապի մեջ է գտնվում կատարված ներդրման հետ և այնուհետև գնահատման առարկա դարձնել գույքի արժեքի **նշանակալի չափով** ավելանալու փաստը:

Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկներն հերքվում են վերոնշյալ պատճառաբանություններով:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարություն օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով վերանայվող դատական ակտը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.01.2007 թվականի վճիռը և այն ուղարկել Արաբկիր և Զանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի վճիռ  
Քաղաքացիական գործ թիվ 07-4587/2008թ.  
Նախագահող դատավոր՝ Ա.Խառատյան  
Դատավորներ՝ Վ.Ավանեսյան  
Կ.Չիլինգարյան

Քաղաքացիական գործ թիվ **3-436(ՎԳ)**  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ վճռաբեկ  
դատարան)

*Նախագահությամբ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի հուլիսի 20-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Մարտին Գասպարյանի վճռաբեկ բողոքը Վե-  
րաքննիչ քաղաքացիական դատարանի 30.01.2008 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի Գ-ո-  
հար և Գ-այանե Թումանյանների ընդդեմ Սոնա, Գոհար, Գևորգ և Մարտին Գասպար-  
յանների, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմի-  
տեի Արաբկիրի տարածքային ստորաբաժանման (այսուհետ՝ Կադաստր)՝ ժառանգույթ-  
յան իրավունքի վկայականը գրանցելու, ընդհանուր համատեղ սեփականության ներքո  
գտնվող հողամասից բաժինն առանձնացնելու պահանջների մասին, և ըստ հակընդդեմ  
հայցի Սոնա, Գևորգ և Մարտին Գասպարյանների ընդդեմ Գոհար և Գայանե Թուման-  
յանների՝ ձեռքբերման վաղեմության ուժով հողատարածքի նկատմամբ սեփականության  
իրավունքը ճանաչելու և այն առանձնացնելու պահանջների մասին:

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ հայցվորը պահանջել է պարտավորեցնել Կադաստրին կատա-  
րել ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի կողմից 2003 թվականի նոյեմբերի 4-ին տրված  
ըստ օրենքի ժառանգության և սեփականության իրավունքի վկայականներից ծագող ի-  
րավունքների պետական գրանցում՝ տրամադրելով Երևանի Փափագյան 2-րդ նրբանցքի  
թիվ 123 տան սեփականության իրավունքի վկայական, առանձնացնել վերոհիշյալ հաս-  
ցեից հայցվորներին հասանելիք 1/2-րդ բաժին հողամասը՝ համաձայն ՀՀ ԳԱԱ «Փոր-  
ձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի թիվ 07-0155 փորձագիտական եզրակա-  
ցության:

---

---

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Սոնա, Գևորգ և Մարտին Գասպարյանները պահանջել են ձեռքբերման վաղեմության ուժով ճանաչել իրենց իրավունքը 316քմ հողատարածքի նկատմամբ և առանձնացնել այն փաստացի օգտագործվող չափերով:

Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 12.07.2007 թվականի վճռով հայցը մերժվել է, հակընդդեմ հայցը՝ բավարարվել:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 29.11.2007 թվականի վճռով հակընդդեմ հայցը թողնվել է առանց քննության:

Վերաքննիչ դատարանի 30.01.2008 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Մարտին Գասպարյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 199-րդ հոդվածի 2-րդ մասը, չի կիրառել 29.01.1991 թվականին ընդունված ՀՀ հողային օրենսգրքի 9-րդ հոդվածը, որը պետք է կիրառել:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը, գնահատման առարկա չի դարձրել այն հանգամանքը, որ կողմերն արդեն իսկ փաստացի բաժանել են ընդհանուր գույքը: Մասնավորապես, կողմերի միջև հասարակ գրավոր ձևով կնքված առուվաճառքի պայմանագրի 2-րդ կետին համապատասխան բետոնե ցանկապատի միջոցով առանձնացվել է իրենց կողմից փաստացի օգտագործվող հողամասը:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2008 թվականի հունվարի 30-ի վճիռը և փոփոխել:

## **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստը՝

1) 25.11.1969 թվականին հասարակ գրավոր ձևով կնքված առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ Ռուբեն Սուրենի Թումանյանը գնել է Մուշեղ Գասպարյանից Երևան, Փափագյան թիվ 123 տան մի մասը:

2) Երևան, Փափագյան 2-րդ նրբ թիվ 123 տան 464 քմ հողամասը փաստացի առանձնացված է: Սեփականատերերի մուտքերը դեպի իրենց կողմից օգտագործվող տները և հողմասերը նույնպես առանձնացված են:

## **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

29.01.1991 թվականին ընդունված ՀՀ հողային օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տնամերձ հողամասերը, ինչպես նաև այգեգործության (ամառանոցի) և բնակելի տան շինարարության ու դրա սպասարկման համար Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ունեցած հողամասերն անհատույց կարգով թողնվում են նրանց որպես սեփականություն:

Հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ 1991 թվականի դրությամբ վեճի առարկա հողամասն արդեն իսկ առանձնացված է եղել Գասպարյանների ու Թումանյանների միջև՝ ուստի 29.01.1991 թվականի ՀՀ հողային օրենսգրքի 9-րդ - հոդվածի ուժով վերջիններս դարձել են իրենց կողմից փաստացի զբաղեցրած հողամասի սեփականատեր:

Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը, վեճը լուծելիս անտեսել է այն հանգամանքը, որ 1991 թվականի դրությամբ տնամերձ հողամասն արդեն իսկ փաստացի առանձնացված էր Գասպարյանների ու Թումանյանների միջև:

Վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է վերոնշյալ իրավական խնդրին (տե՛ս Համեստ Վիրաբյան ընդդեմ Լիլյա Սահրադյան՝ հողամասն առանձնացնելու, սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին, Լիլյա Սահրադյան ընդդեմ Համեստ Վիրաբյան, Լիլյա Սկրտչյան՝ հողամասն առանձնացնելու, սեփականության իրավունքը ճանաչելու պահանջների մասին քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.02.2006 թվականի որոշումը, թիվ 3-204(ՎԳ)):

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով, Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար Վերաքննիչ դատարանի վճիռը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.01.2008 թվականի վճիռը և գործն ուղարկել Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **3-454(ՎԴ)**  
**2008թ.**

Քաղաքացիական գործ թիվ 08-1031

Նախագահող դատավոր՝ Գ.Մատինյան  
Դատավորներ՝ Լ.Գրիգորյան  
Ե.Խունդկարյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ  
դատարան)

*նախագահությամբ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի հուլիսի 25-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Երանիկ Հայրիյանի վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.03.2008 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Արամ Սանասարյանի ընդդեմ Գուրգեն Սկրտչյանի, Երանիկ, Էռնեստ և Էռնա Հայրիյանների, երրորդ անձ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Կենտրոն տարածքային ստորաբաժանման (այսուհետ՝ Կադաստր)՝ փաստացի զբաղեցրած հողամասի նկատմամբ պետական գրանցում կատարելու պահանջի մասին և ըստ հակընդդեմ հայցի Երանիկ և Էռնա Հայրիյանների ընդդեմ Արամ Սանասարյանի, երրորդ անձ Կադաստրի՝ ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքից բաժինն առանձնացնելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Արամ Սանասարյանը պահանջել է պարտավորեցնել Կադաստրին կատարելու իր կողմից զբաղեցրած Երևանի Չկալովի թիվ 35 հասցեի հողամասի նկատմամբ պետական գրանցում:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Երանիկ և Էռնա Հայրիյանները պահանջել են առանձնացնել սեփականության իրավունքով իրենց պատկանող Երևանի Չկալովի թիվ 35 հասցեի 1167քմ մակերեսով հողամասի 27/80-րդ մասը:

Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 27.06.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժվել:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 11.03.2008 թվականի որոշմամբ Երանիկ Հայրիյանի և Կադաստրի վերաքննիչ բողոքները մերժվել են:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Երանիկ Հայրիյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Արամ Սանասարյանը:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*1) Վերաքննիչ դատարանը չի կիրառել 1991 թվականի ՀՀ հողային օրենսգրքի 9-րդ - հոդվածը, որը պետք է կիրառել:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Գատարանը հայցի բավարարման և հակընդդեմ հայցի մերժման հիմքում դրել է այն հանգամանքը, որ Սլավիկ Հայրիյանը նոտարական կարգով վավերացված 29.04.1989 թվականի «Բնակելի տան մասի» առուվաճառքի պայմանագրով Երևանի Չկալովի փողոցի թիվ 35 տան նախկին սեփականատեր Սկրտիչ Չեքիշյանից գնել է տան 27/80 մասը, որը գտնվում է նշված տան երկրորդ հարկում և ձեղնահարկում (ունի առանձնացված մուտք), այլ ոչ թե հողամաս (այդ մասին պայմանագրում նշում չկա):

Մինչդեռ Վերաքննիչ դատարանը գնահատման առարկա չի դարձրել այն հանգամանքը, որ վեճի առարկա հողամասի նկատմամբ Հայրիյանների սեփականության իրավունքը ծագել է 1991 թվականի ՀՀ հողային օրենսգրքի ուժով:

*2) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածը, կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ հոդվածի առաջին մասը, որը չպետք է կիրառել:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը գործը քննել է գործին մասնակցող անձանցից սկզբնական հայցով պատասխանող Գուրգեն Սկրտչյանի բացակայությամբ, ով պատշաճ ձևով չի տեղեկացվել նիստի ժամանակի և վայրի մասին: Վերաքննիչ դատարանի կողմից պարզվել է, որ Գուրգեն Սկրտչյանը ներկայումս Երևան քաղաքի Չկալովի փողոցի թիվ 35 տան սեփականության իրավունքով իրեն պատկանող 17քմ մակերեսով սենյակում չի բնակվում և հայցվորի հավաստմամբ գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանը հաստատապես իմացել է, որ Գուրգեն Սկրտչյանը պատշաճ կերպով չի ծանուցվել դատական նիստի ժամանակի և վայրի մասին:

Առաջին ատյանի դատարանը սկզբնական հայցը քննելիս անդրադարձել է ներկայացված պահանջներից միայն մեկին՝ Արամ Սանասարյանի իրավունքի պետական գրանցմանը և բավարարելով հայցը՝ պարտավորեցրել է Կադաստրին 486,4քմ մակերեսով հողամասի նկատմամբ գրանցել Արամ Սանասարյանի իրավունքը: Այսինքն՝ առաջին ատյանի դատարանը քննել է սկզբնական հայցով ներկայացված պահանջներից միայն մեկը, իսկ մնացած մասով ընդհանրապես դատական ակտ չի կայացրել: Բացի այդ, Վերաքննիչ դատարանը Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի վճռի դեմ բերված երկու բողոքներից քննել է միայն մեկը՝ պատասխանողների բողոքը, իսկ երրորդ անձի վերաքննիչ բողոքին ընդհանրապես չի անդրադարձել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 11.03.2008 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

---

---

### **2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները**

Դատատեխնիկական փորձաքննությունների եզրակացություններով, ինչպես նաև դատարանի կողմից կատարված տեղատեսությամբ հիմնավորվել է, որ Հայրիյանների կողմից գնված տան մասը վեճի առարկա հողամասի հետ առնչություն չունի, ինչպես նաև այն, որ տնամերձ հողամասն օգտագործվել է միայն Արամ Սանասարյանի կողմից: Բացի այդ, քաղաքացիական գործում առկա են թաղապետարանի կողմից հաստատված հարևանների հայտարարությունները՝ հողամասն ի սկզբանե Արամ Սանասարյանի կողմից օգտագործելու մասին:

Ինչ վերաբերում է Գուրգեն Սկրտչյանին պատշաճ ձևով չձանուցելուն, ապա Արամ Սանասարյանը դատարանում հրաժարվել է Գուրգեն Սկրտչյանի նկատմամբ ներկայացված հայցից:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Երևանի Չկալովի թիվ 35 հասցեում գտնվող բնակելի տան համասեփականատերեր են հանդիսացել Սկրտիչ Չեբիշյանը և Վահրամ Սանասարյանը:

2) 29.05.1989 թվականի բնակելի տան առուվաճառքի պայմանագրով Սկրտիչ Չեբիշյանը վաճառել է Սլավիկ Հայրիյանին Երևանի Չկալովի թիվ 35 տան իրեն պատկանող 27/80 մասը: Պայմանագիրը վավերացվել է նոտարական կարգով:

3) Վահրամ Սանասարյանի մահից հետո նրան պատկանող գույքը տիրապետել և օգտագործել է նրա որդի Արամ Սանասարյանը:

4) Սլավիկ Հայրիյանը իր ընտանիքի անդամների՝ Երանիկ, Էռնեստ և Էռնա Հայրիյանների հետ միասին Երևանի Չկալովի թիվ 35 տան իրեն պատկանող 27/80 մասը գնելու պահից հաշվառվել և բնակվել է նշված տանը:

### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

*1) վճռաբեկ բողոքը առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ:*

1971 թվականի Հայկական ԽՍՀ հողային օրենսգրքի 84-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքների հողերում շենքի սեփականության իրավունքն անցնելիս անցնում է նաև հողամասի կամ նրա մի մասի օգտագործման իրավունքը: Եթե շենքի սեփականության իրավունքն անցնում է մի քանի սեփականատերերի, ինչպես նաև, եթե շենքի մի մասի նկատմամբ անցնում է սեփականության իրավունքը, ապա հողամասն անցնում է սեփականատերերի ընդհանուր օգտագործմանը:

1991 թվականի ՀՀ հողային օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տնամերձ հողամասերը, ինչպես նաև այգեգործական (ամառանոցի) և բնակելի տան շինարարության ու դրա սպասարկման համար Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ունեցած հողամասերը անհատույց կարգով թողնվում են նրանց որպես սեփականություն:

Հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն քաղաքացիական գործով Սլավիկ Հայրիյանի և Սկրտիչ Չեբիշյանի միջև կնքվել է Երևանի Չկալովի թիվ 35 հասցեում գտնվող տան 27/80 մասի առուվաճառքի պայմանագիր, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերոնշյալ հոդվածների ուժով հողամասի սեփականատերեր են դարձել Արամ Սանասարյանը և Սլավիկ Հայրիյանը՝ որպես դրա վրա գտնվող շենքի համասեփականատերեր: Հետևաբար, վեճի առարկա ամբողջ հողամասի նկատմամբ Արամ Սանասարյանի սեփականության իրավունքի ճանաչման հայցապահանջը ենթակա է մերժման:

Ինչ վերաբերում է հակընդդեմ հայցին, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հակընդդեմ հայցի բավարարման կամ մերժման հարցը լուծելիս դատարանն առաջին հերթին պետք է պարզի կողմերի ընդհանուր սեփականության ներքո գտնվող հողամասի չափը:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ փորձագիտական եզրակացությամբ հաստատվել է 486,2քմ մակերեսով հողամասից 27/80 մասի առանձնացման անհնարիության հայցը, մինչդեռ պահանջը վերաբերել է 1167քմ մակերեսով հողամասի 27/80 մասն առանձնացնելուն:

2) բողոքի երկրորդ հիմքն այն մասին, որ *Վերաքննիչ դատարանը գործի քննության ժամանակի և վայրի մասին պատշաճ ձևով չի ծանուցել Գուրգեն Մկրտչյանին, Վճռաբեկ դատարանը քննության չի առնում, քանի որ բողոք բերած անձը՝ Երանիկ Հայրիյանը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 42-րդ հոդվածի պահանջին համապատասխան, լիազորված չէ վճռաբեկ բողոք ներկայացնել Գուրգեն Մկրտչյանի անունից:*

*Վճռաբեկ դատարանը չի քննարկում նաև բողոքի մյուս մասերը, քանի որ դրանք վերաբերում են Արամ Սանասարյանի և Կադաստրի իրավունքներին:*

Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները հերքվում են վերոնշյալ պատճառաբանություններով:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի առաջին հիմքի առկայությունը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով, Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.03.2008 թվականի որոշումը և գործն ուղարկել Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վերաքննիչ քաղաքացիական

դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ 08-510

Նախագահող դատավոր՝ Վ.Ավանեսյան

դատավորներ՝ Ա.Խառատյան

Կ.Չիլինգարյան

Քաղաքացիական գործ թիվ **3-433(ՎԳ)**

**2008թ.**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Հ.ՍԱՆՈՒԿՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՍԿՐՏՈՒՄՅԱՆԻ

Վ.ԱԲԵԼՅԱՆԻ

Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ

Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի հուլիսի 25-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Կարինե Գալստյանի վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.03.2008 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Քնքուշ Գալստյանի ընդդեմ Կարինե Գալստյանի՝ նվիրատության պայմանագիրը, դրա հիման վրա անշարժ գույքի նկատմամբ կատարված պետական գրանցումն անվավեր ճանաչելու և ձեռքբերման վաղեմության ուժով Երևանի Մոլդովական փողոցի 60 շենքի թիվ 56 բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջների մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Քնքուշ Գալստյանը պահանջել է անվավեր ճանաչել նվիրատության պայմանագիրը, անշարժ գույքի նկատմամբ կատարված պետական գրանցումը և ձեռքբերման վաղեմության ուժով ճանաչել սեփականության իրավունքը Երևանի Մոլդովական փողոցի 60 շենքի թիվ 56 բնակարանի նկատմամբ:

Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի 27.12.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 27.03.2008 թվականի որոշմամբ Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի 27.12.2007 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կարինե Գալստյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Քնքուշ Գալստյանը:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով:

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի պահանջները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Քննուշ Գալստյանի և Կարինե Գալստյանի միջև 01.08.1996 թվականին կնքված անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով Քննուշ Գալստյանն անհատույց Կարինե Գալստյանի սեփականությանն է հանձնել վեճի առարկա Երևանի Մոլլովական փողոցի 60 շենքի թիվ 56 բնակարանը: Պայմանագրից ծագած Կարինե Գալստյանի իրավունքները ենթարկվել են պետական գրանցման, որից հետո Կարինե Գալստյանի համաձայնությամբ բնակարանում Քննուշ Գալստյանը բնակվել է օգտագործման իրավունքով: Այսօր 01.08.1996 թվականի նվիրատվության պայմանագրով Քննուշ Գալստյանի սեփականության իրավունքը դադարել է բնակարանի նկատմամբ: Հետևաբար վերջինս չէր կարող այն տիրապետել որպես սեփական գույք: Փաստորեն, տվյալ դեպքում բացակայում է գույքը բարեխիղճ տիրապետելու հանգամանքը, ուստի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածը կիրառելի չէ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 27.03.2008 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել:

**2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմքերը և փաստարկները.**

Քննուշ Գալստյանը 1996 թվականից հետո տասնմեկ տարվա ընթացքում բարեխնդրեն, բացահայտ և անընդմեջ տիրապետում է վիճելի բնակարանը, որպիսի հանգամանքը հիմնավորվել է գործում առկա ապացույցներով, հետևաբար դատարանը իրավացիորեն կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածը:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Քննուշ Գալստյանի և Կարինե Գալստյանի միջև կնքված և նոտարական կարգով վավերացված անշարժ գույքի նվիրատվության 01.08.1996 թվականի պայմանագրի համաձայն՝ Քննուշ Գալստյանն իր սեփականության ներքո գտնվող Երևանի, Նոր Նորքի 2-րդ միկրոշրջանի թիվ 5 շենքի (ներկայումս՝ Մոլլովական փողոց, թիվ 60 շենք) թիվ 56 բնակարանը նվիրել է Կարինե Գալստյանին:

2) Նվիրատվության պայմանագրից ծագած Կարինե Գալստյանի իրավունքներն ենթարկվել են պետական գրանցման և վերջինիս տրվել է սեփականության իրավունքի գրանցման թիվ 681046 վկայականը:

3) Կարինե Գալստյանը նշված անշարժ գույքն ընդունելուց հետո կատարել է բնակարանի կոմունալ վճարումները:

4) Կարինե Գալստյանի համաձայնությամբ Քննուշ Գալստյանը բնակվել է վեճի առարկա բնակարանում:

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝ վճռաբեկ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 172-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ նույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով՝ անձը կարող է սեփականության իրավունք ձեռք բերել սեփականատեր չունեցող գույքի նկատմամբ, ինչպես նաև այն գույքի, որի սեփականատերն անհայտ է, կամ որից սեփականատերը հրաժարվել է, կամ որի

---

---

նկատմամբ սեփականության իրավունքը նա կորցրել է օրենքով նախատեսված այլ հիմքերով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացին կամ իրավաբանական անձն, որն անշարժ գույքի սեփականատերը չէ, սակայն այն տասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ տիրապետում է որպես սեփական գույք, այդ գույքի նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրավունք (ձեռքբերման վաղեմություն):

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է ձեռք բերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռքբերման հարցին, սահմանելով նշված հիմքով սեփականության իրավունքի ծագման պարտադիր վավերապայմանները (տես օրինակ՝ Վոլոդյա և Միշա Նիկողոսյաններ ընդդեմ Մամվել, Սոֆիկ, Մելանյա, Մամվել Սարիբեկյաններ և Քնարիկ Աղազարյան, Մամվել Սարիբեկյան և Քնարիկ Աղազարյան ընդդեմ Վոլոդյա և Միշա Նիկողոսյաններ՝ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը և սեփականության իրավունքի վկայականը մասնակի անվավեր ճանաչելու պահանջի մասին թիվ 3-1435/ՎԴ քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 10.10.2007 թվականի որոշումը):

Սույն քաղաքացիական գործի փաստերի համաձայն՝ Քնքուշ Գալստյանի և Կարինե Գալստյանի միջև կնքված և նոտարական կարգով վավերացված անշարժ գույքի նվիրատվության 01.08.1996 թվականի պայմանագրով Քնքուշ Գալստյանն իր սեփականության ներքո գտնվող Երևանի, Նոր Նորքի 2-րդ միկրոշրջանի թիվ 5 շենքի (ներկայումս՝ Մոլդովական փողոց, թիվ 60 շենք) թիվ 56 բնակարանը նվիրել է Կարինե Գալստյանին, իսկ նշված բնակարանում Քնքուշ Գալստյանը բնակվել է Կարինե Գալստյանի համաձայնությամբ: Այսինքն՝ նվիրատվության հիման վրա Քնքուշ Գալստյանի սեփականության իրավունքը վեճի առարկա բնակարանի նկատմամբ դադարել է, հետևաբար բնակարանի հետագա տիրապետման ընթացքում վերջինս գիտակցել է, որ օգտագործում է Կարինե Գալստյանի սեփականության ներքո գտնվող գույքը: Այսինքն՝ բնակարանի տիրապետումը Քնքուշ Գալստյանին չէր կարող բավարար հիմքեր տալ ենթադրելու, որ նա այդ գույքը տիրապետելու է որպես սեփականություն:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Քնքուշ Գալստյանի կողմից վեճի առարկա գույքի տիրապետումը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ - հոդվածի իմաստով չի կարող դիտվել բարեխիղճ, քանի որ վեճի առարկա գույքն այլ անձի սեփականությանը հանձնելուց հետո բնակարանում բնակվելով Քնքուշ Գալստյանը բավարար հիմքեր չէր կարող ունենալ ենթադրելու, որ նա այդ գույքը իր տիրապետմանն անցնելու պահից տիրապետելու է որպես սեփականը: Հետևաբար Քնքուշ Գալստյանը բարեխղճորեն չի տիրապետել վեճի առարկա անշարժ գույքը:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ սույն քաղաքացիական գործով բացակայում է ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռք բերման հիմքերից մեկը՝ բարեխղճությունը, Վճռաբեկ դատարանն այն դիտում է բավարար հիմք արձանագրելու համար, որ Քնքուշ Գալստյանը վեճի առարկա գույքի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի ուժով ձեռք չի բերել սեփականության իրավունք:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքը հիմնավոր համարելով Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով վերանայվող դատական ակտը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.03.2008 թվականի որոշումը և այն փոփոխել՝ Քնքուշ Գալստյանի հայցը մերժել:
2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **3-595(ՎԴ)**  
**2008թ.**

Քաղաքացիական գործ թիվ 08-175

Նախագահող դատավոր՝ Վ. Թորոսյան  
Դատավորներ՝ Ն. Հովսեփյան  
Ռ. Հակոբյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ  
դատարան)

*նախագահությամբ* Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Դ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ. ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի հոկտեմբերի 31-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Համեստ Վիրաբյանի վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 01.04.2008 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Համեստ Վիրաբյանի ընդդեմ Արաբկիրի թաղապետարանի և Լիլիա Սահրադյանի՝ ձեռքբերման վաղեմության ուժով Երևանի Սոսեի 26 տան ամբողջ տանիքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու, նշված տանիքի վրա շինարարություն իրականացնելու վերաբերյալ Արաբկիրի թաղապետարանի 10.10.2007 թվականի թիվ 16 թույլտվությունն անվավեր ճանաչելու և մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելու պահանջների մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Համեստ Վիրաբյանը պահանջել է ձեռքբերման վաղեմության ուժով ճանաչել սեփականության իրավունքը Երևանի Սոսեի 26 տան ամբողջ տանիքի նկատմամբ, անվավեր ճանաչել տանիքում շինարարություն իրականացնելու վերաբերյալ Արաբկիրի թաղապետարանի 10.10.2007 թվականի թիվ 16 թույլտվությունը, ինչպես նաև պարտավորեցնել Լիլիա Սահրադյանին վերականգնել մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը:

Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 28.12.2007 թվականի վճռով հայցը մերժվել է:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 01.04.2008 թվականի որոշմամբ Համեստ Վիրաբյանի վերաքննիչ բողոքը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Համեստ Վիրաբյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) *Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 224-րդ հոդվածը, «Բազմաբնակարան շենքերի կառավարման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը, խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 191-րդ և 192-րդ հոդվածները, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35-րդ և 38-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 224-րդ և «Բազմաբնակարան շենքերի կառավարման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածներից բխում է, որ Երևանի Սոսեի փողոցի 26-րդ - տունը բազմաբնակարան շենք է, և դրա տանիքը Համեստ Վիրաբյանի և Լիլիա Սահրադյանի ընդհանուր բաժնային սեփականությունն է: Հետևաբար, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 191-րդ և 192-րդ հոդվածների համաձայն՝ այն պետք է տնօրինվեր միայն սեփականատերերի ընդհանուր համաձայնությամբ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 21-րդ, 35-րդ և 38-րդ հոդվածների համաձայն՝ Համեստ Վիրաբյանը պետք է ծանուցվեր և լսվեր Արաբկիրի թաղապետարանի կողմից շինարարական թույլտվություն տալուն ուղղված վարչական վարույթին, քանի որ նշված թույլտվությունը ուղղակիորեն վերաբերում է Համեստ Վիրաբյանի իրավունքներին:

2) *Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, որի արդյունքում չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն ապացույցը, որ վերոնշյալ բնակարանի տանիքի 1/5-րդ մասի սեփականատերերը, սկսած 1965 թվականից, իրենց գործողություններով հրաժարվել են իրենց պատկանող գույքից:

Ելնելով դրանից՝ Համեստ Վիրաբյանը հիմք է ունեցել համոզված լինելու, որ միանձնյա տիրապետում է տանիքը Լիլիա Սահրադյանի և նրա իրավահաջորդների համաձայնությամբ: Բացի այդ, հայցվորը միանձնյա մասնակցել է տանիքի կառավարմանը, հոգ տարել դրա սպասարկման համար՝ ինչպես իր սեփականի նկատմամբ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 01.04.2008 թվականի որոշումը և գործն ուղարկել Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Երևանի Սոսեի փողոցի թիվ 26 տան սեփականատերն է Համեստ Վիրաբյանը, իսկ 24-26 տան սեփականատերը՝ Լիլիա Սահրադյանը:

2) Արաբկիրի թաղապետի կողմից Լիլիա Սահրադյանին 10.10.2007 թվականին տրվել է թիվ 16 շինարարական թույլտվությունը մեկ հարկի ավելացման և ներքին վերակառուցման շինարարական աշխատանքներ կատարելու համար:

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

1) Վճռաբեկ բողոքն առաջին հիմքով անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 224-րդ հոդվածի համաձայն՝ բազմաբնակարան շենքի շինությունների սեփականատերերին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանում են շենքը կրող կառուցվածքները, շենքի միջհարկային ծածկերը (առաստաղները, հատակները), նկուղը, ձեղնահարկը, տեխնիկական հարկերը, տանիքը, ինչպես նաև մեկից ավելի շինություններ սպասարկող և բազմաբնակարան շենքի միասնական ամբողջական սպասարկման համար նախատեսված մուտքերը, աստիճանավանդակները, աստիճանները, վերելակները, վերելակային և այլ հորերը, մեխանիկական, էլեկտրական, սանիտարատեխնիկական և այլ սարքավորումներն ու տարածքները, շենքի պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասերը, որոնք չեն հանդիսանում այլ անձանց սեփականություն:

Նույն օրենսգրքի 222-րդ հոդվածի համաձայն՝ բազմաբնակարան շենքն այն շենքն է, որում մեկից ավելի սեփականատերերին սեփականության իրավունքով պատկանում է բնակարան և (կամ) ոչ բնակելի տարածք, և որի կառուցման ու սպասարկման համար հատկացված հողամասը կամ շենքի ընդհանուր գույքը չի կարող առանձնացվել բնակարանների կամ ոչ բնակելի տարածքների սեփականատերերի միջև:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ բազմաբնակարան շենքի պարտադիր վավերապայմաններն են.

1. մեկից ավելի սեփականատերերին սեփականության իրավունքով բնակարան և (կամ) ոչ բնակելի տարածք պատկանելը,

2. շենքի կառուցման և սպասարկման համար հատկացված հողամասը կամ շենքի ընդհանուր գույքը սեփականատերերի միջև բնակարանների կամ ոչ բնակելի տարածքների առանձնացնելու անհնարիությունը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործով կողմերին սեփականության իրավունքով պատկանող շինությունը առանձնատուն է, որի մոտ բացակայում է բազմաբնակարան շենքի համար օրենքով նախատեսված պարտադիր վավերապայմանները, այն է՝ առանձնացման ոչ ենթակա ընդհանուր գույքը (մասնավորապես բացակայում է բազմաբնակարան շենքի միասնական ամբողջական սպասարկման համար նախատեսված տարածքը): Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 222-րդ և 224-րդ հոդվածները սույն գործով կիրառելի չեն:

*2) Վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացին կամ իրավաբանական անձը, որն անշարժ գույքի սեփականատեր չէ, սակայն այն տասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ տիրապետում է որպես սեփական գույք, այդ գույքի նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրավունք (ձեռքբերման վաղեմություն):

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռքբերման հարցին՝ սահմանելով նշված հիմքով սեփականության իրավունքի ծագման պարտադիր վավերապայմանները (տես օրինակ՝ Վոլոդյա և Միշա Նիկողոսյաններ ընդդեմ Մանվել, Մոֆիկ, Մելանյա, Մամվել Սարիբեկյաններ և Քնարիկ Աղազարյան, Մանվել Սարիբեկյան և Քնարիկ Աղազարյան ընդդեմ Վոլոդյա և Միշա Նիկողոսյաններ՝ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը և սեփականության իրավունքի վկայականը մասնակի անվավեր ճանաչելու պահանջի մասին թիվ 3-1435/ՎԳ- քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 10.10.2007 թվականի որոշումը): Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ ձեռքբերման վաղեմության հիմքով սեփականության իրավունքի ծագման պարտադիր վավերապայմաններից է գույքը տիրապետելու բարեխղճությունը, համաձայն որի տիրապետողի մոտ պետք է առկա լինի այն համոզմունքը, որ նա գույքը ձեռք է բերում օրինական հիմքերով: Տիրապետումը

պետք է հիմնված լինի այնպիսի փաստի վրա, որը տիրապետողին կարող է տալ բավարար հիմքեր ենթադրելու, որ նա այդ գույքը տիրապետելու է որպես սեփականություն:

Մինչդեռ սույն գործում բացակայում են այնպիսի ապացույցներ, որոնք կհիմնավորեն Համեստ Վիրաբյանի կողմից գույքի բարեխիղճ տիրապետման փաստը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 01.04.2008 թվականի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **3-594(ՎԳ)**  
**2008թ.**

Քաղաքացիական գործ թիվ 08-829

Նախագահող դատավոր՝ Ն. Հովսեփյան  
Դատավորներ՝ Վ. Թորոսյան  
Ռ. Հակոբյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ  
դատարան)

*նախագահությամբ* Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի հոկտեմբերի 31-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 26.03.2008 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Լիլիա Գրիգորյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության և «ԳԱՊ բնակչին» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն)՝ անհիմն հարստացման գումարները վճարելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Լիլիա Գրիգորյանը պահանջել է բռնագանձել 6.753.000,42 ՀՀ դրամ, որից 4.500.000 ՀՀ դրամը՝ որպես բնակտարածությունը պետության կարիքների համար վերցնելու կապակցությամբ անհիմն խնայած 2.000.000 ՀՀ դրամ աջակցության և 2.500.000 ՀՀ դրամ խրախուսման գումարների հանրագումար, 1.203.042 ՀՀ դրամը՝ որպես անհիմն խնայած գումարի վրա հաշվեգրված տոկոսներ՝ տոկոսների հաշվարկը շարունակելով մինչև մայր գումարի փաստացի վճարման օրը և 1.050.000 ՀՀ դրամ՝ պատճառված վնասի հատուցում:

Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 22.11.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 26.03.2008 թվականի որոշմամբ Ընկերության բողոքը մերժվել է, իսկ Լիլիա Գրիգորյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

---

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածը, 1092-րդ հոդվածի 1-ին մասը, 1097-րդ հոդվածի 2-րդ մասը, որոնք չպետք է կիրառեր, ինչպես նաև խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածը:*

*Բողոքը բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հաստատված է համարել այն հանգամանքը, որ Երևանի Ա-րամի փողոցի թիվ 76 հասցեի տան սեփականատերը գնային առաջարկը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում տվել է իր համաձայնությունը մեկամսյա ժամկետում պայմանագիր կնքելու համար և պայմանագրով սահմանված ժամկետում տարածքն ազատել է: Մինչդեռ գործում բացակայում է ապացույց այն մասին, որ հայցվորը ՀՀ կառավարության 19.05.2005 թվականի թիվ 759-Ն որոշման համաձայն գնային առաջարկ ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում տվել է համաձայնություն մեկամսյա ժամկետում կնքելու պայմանագիր և պայմանագրով սահմանված ժամկետում քանդման նպատակով տարածքն ազատելու մասին:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 26.03.2008 թվականի որոշումը՝ խրախուսման միջոցներ բռնագանձելու պահանջի մասով և օրինական ուժ տալ Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 22.11.2007 թվականի վճռին:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Հայաստանի Հանրապետության, ի դեմս Երևանի քաղաքապետի, Ընկերության և Անահիտ Բաղդյանի միջև 09.08.2005 թվականին կնքված թիվ 145 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 2.1-րդ կետի համաձայն՝ սեփականատերը պարտավոր է պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 10 օրվա ընթացքում շինությունն ազատել երրորդ անձանց իրավաբանորեն և փաստացի տնօրինումից, տիրապետումից, օգտագործումից, բնակեցումից, հաշվառումից և գույքից ազատ վիճակում, առանց դրանում փոփոխություններ կատարելու, Ընկերությանը հանձնել՝ կողմերի կազմած, նրանց ստորագրություններով կնիքներով վավերացված հանձնման-ընդունման ակտին համապատասխան:

Վերոնշյալ պայմանագիրն ուժի մեջ է մտել 09.08.2005 թվականին:

2) ՀՀ ռստիկանության Երևան քաղաքի վարչության կենտրոնական բաժնի 19.10.2007 թվականի գրության համաձայն՝ Լիլիա Գրիգորյանը հաշվառված է եղել Երևանի Արամի փողոցի 76-րդ տուն հասցեում 18.06.2004 թվականից և տարածքն իրացնելու կապակցությամբ դուրս է գրվել նշված հասցեի հաշվառումից 17.05.2006 թվականին:

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ կառավարության 19.05.2005 թվականի թիվ 759 որոշման հավելվածով սահմանված Երևան քաղաքի օտարման գոտիներում գտնվող հողամասերն ու անշարժ գույքը վերցնելու, փոխհատուցելու, գնային առաջարկը ձևավորելու և իրացնելու կարգի 7-րդ կետի 2-րդ պարբերության համաձայն՝ անշարժ գույքի իրացման աշխատանքները սեղմ ժամկետներում կատարելու նպատակով կիրառվում են ֆինանսական խրախուսումներ՝ պայմանով, որ սեփականատերերը գնային առաջարկ ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում կտան համաձայնություն մեկամսյա ժամկետում կնքելու պայմանագիր և պայմանագրով սահմանված ժամկետում քանդման նպատակով տարածքն ազատելու մասին:

---

---

Սույն քաղաքացիական գործի փաստերի համաձայն՝ 09.08.2005 թվականին Հայաստանի Հանրապետության, ի դեմս Երևանի քաղաքապետի, Ընկերության և Անահիտ Բարոյանի միջև կնքվել է պայմանագիր, որի 2.1-րդ կետով սեփականատերը պարտավորվել է պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 10 օրվա ընթացքում շինությունն ազատել երրորդ անձանց իրավաբանորեն և փաստացի տնօրինումից, տիրապետումից, օգտագործումից, բնակեցումից, հաշվառումից և գույքից ազատ վիճակում, առանց դրանում փոփոխություններ կատարելու Ընկերությանը հանձնել՝ կողմերի կազմած, նրանց ստորագրություններով ու կնիքներով վավերացված հանձնման-ընդունման ակտին համապատասխան: Պայմանագիրն ուժի մեջ է մտել 09.08.2005 թվականին:

Վերոնշյալից հետևում է, որ ՀՀ կառավարության թիվ 759 որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետով նախատեսված խրախուսումները կիրառելի են այն դեպքում, եթե համապատասխան շինության սեփականատերը Հայաստանի Հանրապետության հետ կնքված պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո 10 օրվա ընթացքում ազատի շինությունը երրորդ անձանց **իրավաբանորեն** և փաստացի տնօրինումից, տիրապետումից, օգտագործումից, բնակեցումից և հաշվառումից և այն սահմանված կարգով հանձնի Ընկերությանը:

Սինչեռ սույն քաղաքացիական գործում առկա ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության կենտրոնական բաժնի կողմից տրված 19.10.2007 թվականի գրության համաձայն՝ Լիլիա Գրիգորյանը տարածքն իրացնելու կապակցությամբ դուրս է գրվել Երևանի Արամի փողոցի 76-րդ տուն հասցեից 17.05.2006 թվականին՝ Պայմանագրի 2.1-րդ կետով սահմանված 10-օրյա ժամկետի ավարտից հետո:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքը հիմնավոր համարելով՝ Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով վերանայվող դատական ակտը մասնակիորեն բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 26.03.2008 թվականի որոշման՝ խրախուսման միջոցներ բռնագանձելու պահանջի մա-

**ՎՃՌՎԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ**

սը և այդ մասով օրինական ուժ տալ Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 22.11.2007 թվականի վճռին:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒՐՆԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի վճիռ

Քաղաքացիական գործ թիվ **3-85(ՎԳ)**  
**2008թ.**

Քաղաքացիական գործ թիվ 07-1951/2007թ.  
Նախագահող դատավոր՝ Լ.Գորգորյան  
Դատավորներ՝ Կ.Հակոբյան  
Ա.Խառատյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի փետրվարի 01-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Գագիկ Ղազարյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.06.2007 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի Արթուր Հովհաննիսյանի ընդդեմ Վանաձորի քաղաքապետարանի և երրորդ անձ Գագիկ Ղազարյանի՝ Վանաձորի քաղաքապետի 15.08.2003 թվականի թիվ 670 որոշումն անվավեր ճանաչելու և ապօրինի կառույցը քանդելուն պարտավորեցնելու պահանջների մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Արթուր Հովհաննիսյանը պահանջել է անվավեր ճանաչել Վանաձորի քաղաքապետի 15.08.2003 թվականի թիվ 670 որոշումը Գագիկ Ղազարյանին ավտոմատների պահեստ-տաղավար տեղադրելու համար 5 տարի ժամկետով 20 քմ հողատարածք վարձակալությամբ տրամադրելու մասին և պարտավորեցնել Գագիկ Ղազարյանին իր հաշվին քանդել Գեղեցիկ Մերոբյանին հատկացված և Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտայի 40 շենքի հարավային մասում տեղադրված, Գագիկ Ղազարյանի կողմից վերակառուցված և օգտագործվող ավտոտնակը՝ որպես ինքնակամ շինություն:

ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի 23.03.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ վերաքննիչ դատարան) 15.06.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն. անվավեր է ճանաչվել Վանաձորի քաղաքապետի 15.08.2003 թվականի թիվ 670 որոշումը, Գագիկ Ղազարյանը պարտավորեցվել է քանդել Վանաձոր, Տիգրան Մեծի պողոտայի 40 շենքի հարավային

մասում տեղադրված իր կողմից օգտագործվող ավտոտնակի ինքնակամ կառուցված 12 քմ մակերեսով մասը, հայցի մնացած մասը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Գագիկ Ղազարյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 68-րդ - հոդվածի 2-րդ մասի պահանջը՝ բողոք բերող անձի համար սահմանելով օրենքով չնախատեսված պարտականություն:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վանաձորի քաղաքապետի 09.04.2007 թվականի որոշմամբ և այդ որոշման հիման վրա 12.04.2007 թվականին տրված սեփականության իրավունքի վկայականով հիմնավորվում է այն հանգամանքը, որ վիճելի ավտոտնակով զբաղեցված հողամասի 12 քմ - մակերեսը Վանաձոր համայնքի սեփականությունն է:

Վերաքննիչ դատարանը Գագիկ Ղազարյանին պարտավորեցրել է քանդել վերջինիս կողմից կառուցված ավտոտնակի՝ Վանաձոր համայնքին սեփականության իրավունքով պատկանող 12 քմ հողամասի վրա կառուցված մասը: Մինչդեռ, միայն Վանաձորի համայնքը՝ որպես տվյալ գույքի սեփականատեր, իրավունք ունի քանդել իրեն սեփականության իրավունքով պատկանող հողամասի վրա կառուցված ավտոտնակը:

Վերաքննիչ դատարանի կայացրած վճիռը Գագիկ Ղազարյանի վրա դնում է օրենքով չնախատեսված պարտականություն:

Վերագրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է բեկանել ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի 15.06.2007 թվականի վճիռը և գործի վարույթը կարճել:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունի հետևյալ փաստը.

Սույն քաղաքացիական գործով պարզված չէ Վանաձոր, Տիգրան Մեծի պողոտայի թիվ 40 շենքի հարավային մասում տեղադրված ավտոտնակի 12 քմ մասով զբաղեցված հողամասի սեփականատերը:

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ *այն հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի առաջին պարբերության համաձայն՝ ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ **ինքնակամ կառույցը կարող է քանդվել հողամասի սեփականատիրոջ կողմից:**

Ինքնակամ կառույցը պետության, համայնքի կամ այլ շահագրգիռ անձի հայցով, որի իրավունքները և օրենքով պահպանվող շահերը խախտվել են, ենթակա է քանդման, իսկ հողամասը՝ նախկին վիճակի վերականգման՝ **հողամասի սեփականատիրոջ հաշվին:**

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ ինքնակամ կառույցը քանդելու պարտականությունը օրենքով դրված է համապատասխան հողամասի սեփականատիրոջ վրա:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին (տես օրինակ՝ «Քննար-88» ՍՊԸ ընդդեմ ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության, 21.12.2006թ. Քաղ. գործ թիվ 3-2504/ՏԳ/ՏԳ, (գումար բռնագանձելու պահանջով)): ԻՎճռաբեկ դատարանը նշել է, որ յու-

---

---

րաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ վճռի թե՛ փաստական, և թե՛ իրավական հիմնավորումը:

Մինչդեռ, սույն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանը վճռել է Գագիկ Գազարյանին պարտավորեցնել քանդելու Վանաձորի, Տիգրան Մեծի պողոտայի թիվ 40 շենքի հարավային մասում տեղադրված ավտոտնակի ինքնակամ կառուցված 12 քմ - մասն՝ առանց պարզելու վերոնշյալ գույքով ծանրաբեռնված հողամասի սեփականատեր լինելու հանգամանքը:

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքի այն փաստարկին, որ Վանաձորի քաղաքապետի 09.04.2007 թվականի որոշմամբ և այդ որոշման հիման վրա 12.04.2007 թվականին տրված սեփականության իրավունքի վկայականով հիմնավորվում է այն հանգամանքը, որ վիճելի ավտոտնակով զբաղեցված հողամասի 12 քմ մակերեսը Վանաձոր համայնքի սեփականությունն է, ապա Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում տվյալ փաստարկներին, քանի որ վերոնշյալ ապացույցները ո՛չ առաջին ատյանի դատարանում, և ո՛չ էլ վերաքննիչ դատարանում գործի քննության ընթացքում չեն ներկայացվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.06.2007 թվականի վճիռը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԳԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՈՒՐՆԵՐ ԴԱՏԱՐԱՆ**

Տնտեսական դատարանի վճիռ  
Քաղաքացիական գործ թիվ Տ2-134/2007թ.  
Նախագահող դատավոր՝ Վ.Ասլանյան

Քաղաքացիական գործ թիվ **3-63(ՏԳ)**  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Հ.ՍԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի մարտի 27-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Վանաձորի շուկա» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) վճռաբեկ բողոքը Տնտեսական դատարանի 16.07.2007 թվականի վճիռի դեմ՝ ըստ հայցի անհատ ձեռնարկատեր Շահեն Վարդանյանի ընդդեմ Ընկերության՝ սեփականության իրավունքի խախտումները վերացնելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Շահեն Վարդանյանը պահանջել է պարտավորեցնել Ընկերությանը քանդելու Վանաձորի Գ.ր. Լուսավորչի 50 հասցեում գտնվող հարթակը և հողի մակերեսը բերելու նախկին վիճակին:

Տնտեսական դատարանի 16.07.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Շահեն Վարդանյանը:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) *Տնտեսական դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը, կիրառել է «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի առաջին մասը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ և 277-րդ հոդվածները, որոնք չպետք է կիրառել:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Տնտեսական դատարանը, փաստելով վիճելի շինությունը (հարթակը) դրա համար չնախատեսված վայրում կառուցված լինելը, չի հիմնավորել իր այդ պնդումը:

Բացի այդ, Տնտեսական դատարանը չի հիմնավորել մաս իր իսկ կողմից հաստատված այն հանգամանքը, որ հարթակի կառուցման արդյունքում մարդկանց մուտքը Շահեն

---

---

Վարդանյանին պատկանող տարածք դարձել է դժվարին և ոչ մատչելի, ավտոմեքենաների մուտքը՝ անհնարին, անձրևաջրերը սկսել են հոսել դեպի Շահեն Վարդանյանին պատկանող առևտրի իրականացման տարածք: Մասնավորապես՝ Տնտեսական դատարանը չի հիմնավորել վերոհիշյալ հարթակի կառուցման և տվյալ հանգամանքների ի հայտ գալու միջև պատճառահետևանքային կապը:

2) Առկա է սույն գործի համար էական նշանակություն ունեցող նոր երևան եկած հանգամանք:

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Վանաձորի քաղաքապետարանի 17.10.2007 թվականի N123 շինարարության շահագործման փաստագրման ակտը, ինչպես նաև կառուցված շինության՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքով և հաստատված նախագծով սահմանված պահանջներին համապատասխանության վերաբերյալ «Տեղեկանք»-ը սույն գործի համար էական նշանակություն ունեցող նոր երևան եկած հանգամանքներ են, քանի որ այդ փաստաթղթերով հիմնավորվում է, որ կառուցված հարթակը հանդիսանում է նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության մաս, դրա վերաբերյալ տրված նախագծային փաստաթղթերը համապատասխանում են գործող օրենսդրությանը, իսկ իրականացված շինարարությունը համապատասխանում է նախագծային փաստաթղթերին:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Տնտեսական դատարանի 16.07.2007 թվականի վճիռը և գործն ուղարկել նոր քննության:

### **2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմքերը և փաստարկները.**

Անհիմն է վճռաբեկ բողոքի պնդումն այն մասին, որ Տնտեսական դատարանը փաստելով վիճելի շինությունը (հարթակը) դրա համար չնախատեսված վայրում կառուցված լինելը, չի հիմնավորել իր այդ պնդումը, քանի որ Տնտեսական դատարանը վեճի առարկա հարթակը ինքնակամ է համարել ոչ թե շինարարական փաստաթղթերով չհատկացված վայրում կառուցված լինելու հիմքով, այլ առանց թույլտվության կառուցված լինելու հիմքով:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Ընկերությանը 07.04.2006 թվականին Վանաձորի քաղաքապետարանի կողմից տրվել է թիվ 44 ճարտարապետահատակագծային առաջադրանքը:

2. Ընկերությանը 19.04.2006 թվականին Վանաձորի քաղաքապետարանի կողմից տրվել է թիվ 39 շինարարության թույլտվությունը:

3. Վանաձորի Գր. Լուսավորչի 50 հասցեում գտնվող, Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող 0.8811քմ հողամասում կառուցվել է հարթակ:

4. Կառուցված հարթակը գտնվում է Շահեն Վարդանյանին պատկանող առևտրի օբյեկտի հարևանությամբ:

### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

1) բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 277-րդ հոդվածի համաձայն՝ սեփականատերն իրավունք ունի պահանջել վերացնելու իր իրավունքների ամեն մի խախտում, թեկուզև այդ խախտումները զուգորդված չեն եղել տիրապետումից զրկելու հետ:

Սույն օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ինքնակամ կառույցը չի կարող ճանաչվել օրինական, եթե կառույցը պահպանելը խախտում է այլ անձանց իրա-

վունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ է սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

Սույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ չօրինականացված ինքնակամ կառույցը պետության, համայնքի կամ այլ շահագրգիռ անձի հայցով, որի իրավունքները և օրենքով պահպանվող շահերը խախտվել են, ենթակա է քանդման, իսկ հողամասը՝ նախկին վիճակի վերականգնման՝ հողամասի սեփականատիրոջ հաշվին:

*Սույն քաղաքացիական գործով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցապահանջի հիմնավորվածությունը որոշելու համար, Տնտեսական դատարանը պետք է անդրադառնար և գնահատման առարկա դարձներ հետևյալ իրավական հարցերը.*

1. Արդյո՞ք վեճի առարկա հարթակը կառուցվել է օրենքով սահմանված կարգով տրված ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերին և շինարարական թույլտվությանը համապատասխան, և եթե ոչ, ապա

2. Արդյո՞ք վեճի առարկա կառույցը խախտում է սեփական գույքը անարգել օգտագործելու հայցվորի իրավունքը.

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին (տե՛ս օրինակ՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն ընդդեմ «Քնար-88» ՍՊԸ՝ գումարի բռնագանձման պահանջի մասին թիվ 3-2504/ՏԳ քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 21.12.2006 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ վճռի թե՛ փաստական, և թե՛ իրավական հիմնավորումը: Ըստ Վճռաբեկ դատարանի վերոհիշյալ որոշման, վճռի իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ նյութական իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանն եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Վճռում ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Վճռի իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա վճռի իրավակիրառ գործառույթը, ընդգծում դատական գործունեության և դատական վճռի օրինականությունը:

Սինդեռ, սույն քաղաքացիական գործով Տնտեսական դատարանը հաստատված համարելով, այն հանգամանքը, որ վեճի առարկա հարթակը կառուցվել է նախագծային փաստաթղթերին ոչ համապատասխան չի հիմնավորվել իր այդ եզրահանգումը:

Ինչ վերաբերում է իրավական հարցադրմանն այն մասին, թե արդյո՞ք վեճի առարկա կառույցը խախտում է սեփական գույքը անարգել օգտագործելու հայցվորի իրավունքը, ապա այդ հարցին պատասխանելու համար Տնտեսական դատարանը պետք է անդրադառնար և գնահատման առարկա դարձներ Ընկերության կողմից հարթակի կառուցման հետևանքով հայցվորին պատկանող գույքին հասցված վնասի առկայության հարցը, իսկ այդ վնասի առկայության դեպքում՝ վնասի և կառուցված հարթակի միջև պատճառահետևանքային կապի առկայությունը:

Սինդեռ, Տնտեսական դատարանը հաստատված համարելով այն հանգամանքը, որ հարթակի կառուցման արդյունքում մարդկանց մուտքը Շահեն Վարդանյանին պատկանող տարածք դարձել է դժվարին և ոչ մատչելի, ավտոմեքենաների մուտքը՝ անհնարին, անձրևաջրերը սկսել են հոսել դեպի Շահեն Վարդանյանին պատկանող տարածք, չի նշել այդ հանգամանքների առաջացման, ինչպես նաև դրանց և հարթակի կառուցման միջև պատճառահետևանքային կապի առկայությունը հիմնավորող որևէ ապացույց:

---

---

Հիմք ընդունելով վերոնշյալը, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ Տնտեսական դատարանի վճիռը գուրկ է իրավական հիմնավորումից, և այս առումով այն չի կարող լինել օրինական, համոզիչ, ինչպես նաև հեղինակավոր:

2) բողոքի երրորդ հիմքին Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.9-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ դատական ակտը նոր երևան եկած հանգամանքներով վերանայում է համապատասխան ակտը կայացրած առաջին ատյանի դատարանը՝ գործին մասնակցող անձանց դիմումների հիման վրա:

Վերոգրյալից հետևում է, որ նոր երևան եկած հանգամանքների հիմքով բողոքի փաստարկը Վճռաբեկ դատարանի քննության առարկա չի կարող դառնալ:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի առաջին հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարություն օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով վերանայվող դատական ակտը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Տնտեսական դատարանի 16.07.2007 թվականի վճիռը և գործն ուղարկել Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒՐՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/0785/02/08**  
**2008թ.**

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0785/02/08  
Նախագահող դատավոր՝ Վ. Թորոսյան  
Դատավորներ՝ Ն. Հովսեփյան  
Գ. Խաչատրյան

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի դեկտեմբերի 26-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.07.2008 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Վրեժ Կնյազյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Քաղաքապետարան)՝ Երևանի քաղաքապետի 14.11.2007 թվականի թիվ Վ19/3 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Վրեժ Կնյազյանը պահանջել է անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետի 14.11.2007 թվականի թիվ Վ19/3 որոշումը:

Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 15.04.2008 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 29.07.2008 թվականի որոշմամբ Երևանի քաղաքապետի վերաքննիչ բողոքը մերժվել է՝ Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 15.04.2008 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Վրեժ Կնյազյանը:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

---

---

*Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ հողային օրենսգրքի 118-րդ հոդվածի 4-րդ մասը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 207-րդ հոդվածը, որոնք չպետք է կիրառեն, չի կիրառել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերությունը, որը պետք է կիրառեն, խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 23-րդ և 24-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Սերժեյով վերաքննիչ բողոքը՝ Վերաքննիչ դատարանը հիմք է ընդունել Երևան քաղաքի շրջխորհրդի գործկոմի 20.08.1992 թվականի թիվ 18/24 որոշումը, որով Նորքի 7-րդ - միկրոշրջանի 34-րդ և 38-րդ շենքի բնակիչներին թույլատրվել է կոոպերատիվ հիմունքներով կառուցել ստորգետնյա կառույցներ՝ անտեսելով, որ Վրեժ Կնյազյանը վարչական պատասխանատվության է ենթարկվել շենքին հարող տարածքում հողազավթմամբ վերգետնյա քարե շինություն կառուցելու համար:

Իսկ Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությունը, որ «Ավտոտնակ-7» կոոպերատիվը (այսուհետ՝ Կոոպերատիվ), ՀՀ հողային օրենսգրքի 118-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, ձեռք է բերել վարձակալության իրավունք և հողհատկացման մասին Երևանի քաղխորհրդի գործկոմի 25.12.1991 թվականի որոշման հիման վրա օրենքի ուժով դարձել է հողամասի վարձակալը, վերաքննիչ բողոքը մերժելու հիմք չէ, քանի որ այդ որոշումից հետևում է, որ ստորգետնյա ավտոտնակներ կառուցելու համար հողամասը հատկացվել է Կոոպերատիվին, այլ ոչ թե Վրեժ Կնյազյանին:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 29.07.2008 թվականի որոշումը և փոփոխել՝ Վրեժ Կնյազյանի հայցը մերժել:

### **2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմքերը, հիմնավորումները**

Վրեժ Կնյազյանի ավտոտնակը գտնվում է 32 ավտոտնակների կենտրոնում, որոնց մեծամասնությունը կառուցված են, իսկ մի քանիսը գտնվում են կիսակառույց վիճակում:

Վրեժ Կնյազյանի ավտոտնակի վերևի մասի քարերը տարիների ընթացքում քանոց և անձրևից փլվել են, իսկ Վրեժ Կնյազյանն ընդամենն ամրացրել է դրանք:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Երևանի շրջխորհրդի գործկոմի 25.12.1991 թվականի որոշմամբ Նորքի 7-րդ, 8-րդ և 9-րդ միկրոշրջաններում կոոպերատիվ հիմունքներով ստորգետնյա ավտոտնակների շինարարության համար հատկացվել են հողամասեր:

2) Երևանի շրջխորհրդի գործկոմի 20.08.1992 թվականի որոշմամբ թույլատրվել է Նորքի 7-րդ միկրոշրջանի 34-38-րդ շենքերի բնակիչներին կոոպերատիվ հիմունքներով կառուցել գետնափոր ավտոտնակներ, գրանցել կոոպերատիվի կանոնադրությունը և այն անվանել «Ավտոտնակ-7»:

3) Երևանի Նոր Նորքի թաղապետարանի և Վրեժ Կնյազյանի միջև 05.12.2003 թվականին կնքվել է Նոր Նորքի 7-րդ փողոցի 38-րդ շենքի 4-րդ բնակարանի հասցեում գտնվող, Վրեժ Կնյազյանի կողմից որպես ավտոտնակ օգտագործվող 18քմ հողամասի ժամանակավոր հողօգտագործման վարձավճարի պայմանագիր: Պայմանագրի ժամկետ է սահմանվել 01.01.2003 թվականից մինչև 01.01.2004 թվականը:

4) Գործում առկա վարչական իրավախախտումների գործերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքներ իրականացնող հանձնաժողովի 14.11.2007 թվականի թիվ Վ-19/3 արձանագրության համաձայն՝ Վրեժ Կնյազյանը բացատրություն է տվել այն մասին, որ 30քմ մակերեսով քարե շինության շինարարական աշխատանքներն իրականացվել են նրա կողմից:

5) Երևանի քաղաքապետի 14.11.2007 թվականի թիվ Վ-19/3 որոշմամբ Վրեժ Կնյազյանը պատասխանատվության է ենթարկվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանք կատարելու, այն է՝ Նոր Նորքի 7-րդ զանգվածի 38-րդ շենքին հարող տարածքում պետությանը սեփականության իրավունքով պատկանող հողամասում մոտ 30քմ մակերեսով քարե շինություն կառուցելու համար:

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ *այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերության համաձայն՝ հողօգտագործման իրավունք չունեցող անձանց կողմից պետությանը և համայնքներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերության կիրառման պարտադիր վավերապայմաններն են՝ անձի մոտ հողօգտագործման իրավունքի բացակայությունը, ինչպես նաև շենքեր կամ շինություններ ինքնակամ կառուցելու փաստի առկայությունը:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, հիմք ընդունելով վերոգրյալ օրենսդրական նորմերը, ինչպես նաև Երևանի շրջխորհրդի գործկոմի 20.08.1992 թվականի որոշումը, գտել է, որ հողամասը, որի վրա կառուցվել է վիճարկվող ավտոտնակը, վարձակալության իրավունքով պատկանում է Վրեժ Կնյազյանին և վերջինիս կողմից իրականացված շինարարական աշխատանքներն օրինական են: Բացի այդ, Վերաքննիչ դատարանը նշել է, որ գործի դատաքննությամբ պատասխանողը, կրելով ակտի հիմքում ընկած հանգամանքների ապացուցման պարտականությունը, չի ապացուցել հայցվորի՝ հողօգտագործման իրավունք չունենալու, ապօրինի հողազավթում, նշված հողամասի վրա ինքնակամ շինություն իրականացնելու հանգամանքները, որոնք սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեն:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի շրջխորհրդի գործկոմի 20.08.1992 թվականի որոշմամբ թույլատրվել է Նոր Նորքի 7-րդ միկրոշրջանի 34-38-րդ շենքերի բնակիչներին կոոպերատիվ հիմունքներով կառուցել **գետնափոր ավտոտնակներ**, գրանցել կոոպերատիվի կանոնադրությունը և այն անվանել «Ավտոտնակ-7», իսկ Երևանի շրջխորհրդի գործկոմի 25.12.1991 թվականի որոշմամբ Նոր Նորքի 7-րդ, 8-րդ և 9-րդ միկրոշրջաններում կոոպերատիվ հիմունքներով **ստորգետնյա ավտոտնակների շինարարության համար** հատկացվել են հողամասեր: Բացի այդ, վարչական վարույթի շրջանակներում Վրեժ Կնյազյանը բացատրություն է տվել այն մասին, որ իրականացրել է 30քմ մակերեսով քարե շինության շինարարական աշխատանքները:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Երևանի շրջխորհրդի գործկոմի 25.12.1991 և 20.08.1992 թվականների որոշումներով Վրեժ Կնյազյանին վերգետնյա ավտոտնակ կառուցելու թույլտվություն չի տրվել: Այդ թույլտվությունը տրվել է ստորգետնյա ավտոտնակներ կառուցելու համար: Ավելին, ստորգետնյա ավտոտնակներ կառուցելու համար անհրաժեշտ է համարվել կոոպերատիվ հիմունքներով դրանց կառուցումը:

Մինչդեռ Վրեժ Կնյազյանը, խախտելով վերոգրյալ որոշման՝ ավտոտնակը **գետնափոր** կառուցելու պայմանը, և չունենալով հողամասի վրա վերգետնյա շինարարություն իրականացնելու համապատասխան շինարարական թույլտվություն, կառուցել է ապօրինի շինություն:

---

---

Ինչ վերաբերում է հողամասի՝ պետական սեփականություն լինելու կանխավարկածի վերաբերյալ բողոքի հիմնավորումներին, ապա Վճռաբեկ դատարանը դրանք նույնպես հիմնավոր է համարում հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 168-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քաղաքացիներին, իրավաբանական անձանց կամ համայնքներին չպատկանող հողը և բնական այլ պաշարները պետական սեփականություն են:

Վճռաբեկ դատարանի նախկինում կայացված որոշումներում արձանագրվել է, որ գոյություն ունի հողի նկատմամբ պետական սեփականության կանխավարկածի սկզբունք, որի բովանդակությունը կայանում է նրանում, որ սեփականատեր չունեցող բոլոր հողերը համարվում են պետության սեփականությունը (Տե՛ս Գ-ոհար Հակոբյանն ընդդեմ Հրաժին Վարդանյանի՝ ուրիշի ապօրինի տիրապետումից գույքը հետ պահանջելու պահանջի մասին ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ 3-410(ՎԳ) գործով 18.05.2007 թվականի որոշումը):

Հիմք ընդունելով վերեգրյալ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործում հողամասի նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունքի առկայության վերաբերյալ ապացույցի բացակայության դեպքում նույնպես պետք է գործի այդ հողամասի պետական սեփականություն լինելու կանխավարկածը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների համաձայն, Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու ՀՀ վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի վերը նշված հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից: Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.07.2008 թվականի որոշումը և այն փոփոխել. Վրեժ Կնյազյանի հայցը մերժել:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ քաղաքացիական վերաքննիչ  
դատարանի վճիռ  
Քաղաքացիական գործ թիվ 07-3695  
Նախագահող դատավոր՝ Տ.Սահակյան  
Դատավորներ՝ Ն.Հովսեփյան  
Մ.Ասատրյան

Քաղաքացիական գործ թիվ **3-35 (ՎԴ)**  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Հ.ՍԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի փետրվարի 01-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Գևորգ Բաուերի վճռաբեկ բողոքը ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի 30.11.2007 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի թամարա Բաուերի ընդդեմ Գևորգ Բաուերի և Երևանի «Կենտրոն» տարածքային նոտարական գրասենյակի՝ նվիրատվության պայմանագիրն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջների մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ հայցվորը խնդրել է անվավեր ճանաչել իր և Գևորգ Բաուերի միջև 17.07.2006 թվականին կնքված Երևանի Գյուլբենկյան փողոցի 39ա շենքի թիվ 53 բնակարանի 3/4 մասի նվիրատվության պայմանագիրը և բնակարանի 3/4-րդ մասի նկատմամբ Գևորգ Բաուերի անվամբ սեփականության իրավունքի գրանցումը:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 07.09.2007 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 30.11.2007 թվականի վճռով հայցը բավարարել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Գևորգ Բաուերը:

Վճռաբեկ բողոքին պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

---

1) *Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ, 48-րդ, 51-րդ և 53-րդ հոդվածները, 130-րդ հոդվածի 3-րդ մասի, 218-րդ - հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի պահանջները որի արդյունքում սխալ է մեկնաբանել ՀՀ - քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածը:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել գործում առկա ապացույցները և անտեսել, որ գործում առկա չեն հայցվորի պահանջը բավարարելու համար օրենսդրությամբ սահմանված թույլատրելի և վերաբերելի ապացույցներ, իսկ հայցվորի՝ առանց որևէ ապացույցների, պնդումը, որ իրականում չի ցանկացել բնակարանի նվիրատվություն կատարել, հայցը բավարարելու հիմք չէ:

Վերաքննիչ դատարանը հաստատված համարելով, որ բնակարանի նվիրատվության պայմանագիրը կնքվել է գույքահարկի և կոմունալ վճարումների վճարման նպատակահարմարության պատրվակով, և որ պայմանագիրը կնքելիս հայցվորի կամահայտնությունը վիճելի բնակարանի իր բաժինը պատասխանողին նվիրելը չի եղել, վճռում չի նշել այն ապացույցները, որոնց վրա հիմնված են Վերաքննիչ դատարանի հետևություններն այդ հանգամանքների մասին:

Վերաքննիչ դատարանը պատճառաբանել է, որ կողմերի միջև կնքված գործարքն առչինչ է և դրա նկատմամբ պետք է կիրառվեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված անվավերության հետևանքներ, որը հաստատելու համար վկայակոչել է Վճռաբեկ դատարանի 05.09.2007 թվականի թիվ 3-1258(ՏԳ) որոշումը: Սակայն Վերաքննիչ դատարանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի իմաստով սխալ է մեկնաբանել Վճռաբեկ դատարանի նշված որոշումը, քանի որ այդ որոշմամբ ամրագրված է գործարքը կնքած երկու կողմերի կամքի արտահայտության առկայությունը կնքված գործարքը շինծու դիտելու համար: Մինչդեռ, սույն գործում Գևորգ Բաուերը ցանկացել և ընդունել է նվիրատվության գույքը, այն գրանցել է իր անվամբ, մուծել գույքահարկ, գործարքի նկատմամբ նրա կամքը խաթարված չէ: Շինծու գործարքի մեկնաբանությանը Վճռաբեկ դատարանն առավել հանգամանալի անդրադարձ է կատարել 18.05.2007 թվականի թիվ 3-793(ՎԳ) որոշմամբ:

2) *Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածը, կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 600-րդ հոդվածը, որը չպետք է կիրառվեր, որի արդյունքում խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածը, 87-րդ, 131-րդ և 215-րդ հոդվածները, ինչպես նաև 32-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 600-րդ հոդվածի դրույթները սույն գործի նկատմամբ կիրառելի չեն, քանի որ վեճի առարկա բնակարանի մասը նվիրատվության պայմանագրով դեռևս 17.07.2006 թվականին նվեր է տրվել, որից հետո Գևորգ Բաուերն այն օրենքով սահմանված կարգով 19.07.2006 թվականին գրանցել և ստացել է սեփականության իրավունքի վկայական: Հետևաբար, կողմերի միջև վեճ չկա ապագայում որևէ գույք նվեր տալու խստումից հրաժարվելու խնդրի վերաբերյալ:

Բացի այդ, Թամարա Բաուերը հայցը հիմնավորելու համար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 600-րդ հոդվածի 1-ին կետի դրույթները չի վկայակոչել: Հետևաբար, Վերաքննիչ դատարանը, խախտելով օրենսդրության պահանջները, հայցի հիմքը մասնակի փոխել է, որի իրավունքը չունի:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 30.11.2007 թվականի վճիռը և օրինական ուժ տալ Երևանի Արաբկիր և Բանաբեռ-Ձեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 07.09.2007 թվականի վճիռին:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Նոտարական կարգով վավերացված 17.07.2006 թվականի պայմանագրով Թամարա Բաուերը Երևանի Գյուլբենկյան փողոցի 39ա շենքի թիվ 53 բնակարանի իրեն պատկանող 3/4 մասը նվիրել է որդուն՝ Գևորգ Բաուերին:

2) Նվիրատվության պայմանագիրը գրանցվել է պետական մարմնում և 19.07.2006 թվականին Գևորգ Բաուերին տրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2184599 վկայականը:

**4. ՀՀ վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

*1) բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ շինծու գործարքը, այսինքն՝ մեկ այլ գործարքի բողոքկման նպատակով կնքված գործարքն առաջինն է:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ գրավոր գործարքների նկատմամբ շինծու լինելու հիմքով առաջինն գործարքի անվավերության հետևանքների կիրառման համար անհրաժեշտ է ապացուցել, որ՝

1. գործարքն իրականում կնքվել է ոչ այն ստորագրած անձանց միջև, կամ

2. այն ստորագրած անձանց կամքը չի համապատասխանում պայմանագրում շարադրվածին: (տես օրինակ՝ Հասմիկ Բլուրցյան, երրորդ անձինք Տիգրան Թերզյան և Գոհար Գզողյան ընդդեմ Շահեն Բաբայանի՝ Վահե Այվազյանի, Գառնիկ և Գոհար Փանոսյանների, 18.05.2007 Քաղ. գործ թիվ 3-793(ՎԳ), (անշարժ գույքի առուվաճառքի գործարքն անվավեր ճանաչելու և բնակարանից վտարելու պահանջով))

Այսինքն, շինծու գործարքն առկա է այն դեպքում, երբ կողմերի միջև իրականում ծագում են իրավահարաբերություններ, սակայն դրանք իրենց բնույթով այլ են, քան այն իրավահարաբերությունները, որոնք կողմերը ցանկանում են ներկայացնել երրորդ անձանց:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին (տես օրինակ՝ «Քնար-88» ՍՊԸ ընդդեմ ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության, 21.12.2006թ. Քաղ. գործ թիվ 3-2504/ՏԳ/ՏԳ, (գումար բռնագանձելու պահանջով)):

Սակայն կարևորելով սույն բողոքի հիմքում ընկած իրավական հարցադրումը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում կրկին անդրադառնալ նշված հարցին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն վճռի պատճառաբանական մասում պետք է նշվեն դատարանի կողմից պարզված գործի հանգամանքները, ապացույցները, որոնց վրա հիմնված են դատարանի հետևությունները, այս կամ այն ապացույցները մերժելու փաստարկները, ինչպես նաև այն օրենքները և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է դատարանը վճռի կայացնելիս:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ վճռի թե՛ փաստական և թե՛ իրավական հիմնավորումը:

Վճռի իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ նյութական իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատա-

---

---

րանն եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Վճռում ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Սույն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանը հաստատված է համարել վեճի առարկա նվիրատվության պայմանագրի շինծու լինելու հանգամանքը, վճռի հիմքում դնելով այն հանգամանքը, պայմանագիրը կնքվել է գույքահարկի և կոմունալ այլ վճարումների վճարման նպատակահարմարության պատրվակով:

Հիմք ընդունելով վերոնշյալը Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ հանգամանքը նվիրատվության պայմանագիրը շինծու ճանաչելու հիմք չէ, քանի որ տվյալ դեպքում խոսքը գնում է ոչ թե այլ գործարք բողարկելու մասին, այլ պարտավորությունների կատարման (գույքահարկի և կոմունալ այլ վճարումների վճարում) նպատակահարմարության մասին, ինչն իրականացվել է կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ Վերաքննիչ դատարանի վճիռը գուրկ է իրավական հիմնավորումից, և այս առումով այն չի կարող լինել օրինական, համոզիչ, ինչպես նաև հեղինակավոր:

*2) բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը քաղաքացիական գործը հարուցում է միայն հայցի կամ դիմումի հիման վրա: Սույն քաղաքացիական գործի քննության ժամանակ գործող սույն օրենսգրքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցվորն իրավունք ունի մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը փոխել հայցի հիմքը կամ առարկան, ավելացնել կամ նվազեցնել հայցային պահանջների չափը կամ հրաժարվել հայցից: Սույն քաղաքացիական գործի քննության ժամանակ գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 215-րդ հոդվածի համաձայն՝ վերաքննիչ դատարանում գործը քննվում է առաջին ատյանի դատարանում գործի քննության կանոններով, բացառությամբ նաև հայցի հիմքը կամ առարկան փոխելու, հայցային պահանջների չափը փոփոխելու մասին կանոնների:

Վերաքննիչ դատարանը, անտեսելով վերը նշված օրինադրույթների պահանջները, կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 600-րդ հոդվածը, որը վերաբերում է ապագայում նվիրառուին գույք կամ իրավունք փոխանցելու կամ նվիրառուին գույքային պարտականությունից ազատելու խոստում պարունակող պայմանագիրը կատարելուց հրաժարվելու նվիրատուի իրավունքին: Մինչդեռ, սույն վեճը վերաբերում է նոտարական կարգով վավերացված 17.07.2006 թվականի նվիրատվության պայմանագիրն անվավեր ճանաչելուն և անվավերության հետևանքներ կիրառելուն:

Հիմք ընդունելով վերոնշյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 600-րդ հոդվածի դրույթները սույն գործով կիրառելի չեն:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների համաձայն, Վերաքննիչ դատարանի վճիռը բեկանելու համար:

Միաժամանակ, ՀՀ վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: ՀՀ վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների

պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի վերը նշված հոդվածներով ամրագրված անձի արդար դատաքնության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ ՀՀ վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի 30.11.2007 թվականի վճիռը և օրինական ուժ տալ Երևանի Աջափնյակ և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին առյանի դատարանի 07.09.2007 թվականի վճռին:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՈՒՐՆԵՎ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ տնտեսական դատարանի վճիռ  
Քաղաքացիական գործ թիվ S-2414/2007թ.  
Նախագահող դատավոր՝ Ե.Խունդկարյան

Քաղաքացիական գործ թիվ **3-89(ՏԳ)**  
**2008թ.**

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

#### ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Հ.ՍԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՍԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի փետրվարի 01-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Սերգեյ Գաբրիելյանի վճռաբեկ բողոքը ՀՀ տնտեսական դատարանի 26.11.2007 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի «ԱՎԱ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ անհատ ձեռնարկատեր Սերգեյ Գաբրիելյանի և Վիոլետա Գաբրիելյանի՝ Ընկերության և Սերգեյ Գաբրիելյանի միջև կնքված անշարժ գույքի անհատույց օգտագործման 03.03.2005 թվականի պայմանագիրը (այսուհետ՝ Օգտագործման պայմանագիր) վաղաժամկետ լուծելու, Սերգեյ և Վիոլետա Գաբրիելյաններին տարածքից փտարելու պահանջների մասին, և ըստ Սերգեյ Գաբրիելյանի հակընդդեմ հայցի՝ Օգտագործման պայմանագիրը շինծու գործարք ճանաչելու և որպես շինծու գործարքի հետևանք ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրին վերաբերող կանոնները կիրառելու պահանջների մասին,

### Պ Ա Ր Ձ Ե Ց

#### 1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է վաղաժամկետ լուծել Օգտագործման պայմանագիրը, Սերգեյ և Վիոլետա Գաբրիելյաններին փտարել Ընկերության սեփականությունը հանդիսացող՝ Երևանի, Կոմիտաս 22 հասցեում գտնվող խանութի 75,0 քմ մակերեսով տարածքից (այսուհետ՝ Խանութ):

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Սերգեյ Գաբրիելյանը պահանջել է Օգտագործման պայմանագիրը ճանաչել շինծու գործարք և հիմք ընդունելով Սերգեյ Գաբրիելյանի, Վիոլետա Գաբրիելյանի ու Ընկերության միջև 15.03.2005 թվականին կնքված տարածքի վարձակալության ներքին պայմանագիրը (այսուհետ՝ Վարձակալության պայմանագիր) և կիրառելով այդ գործարքի նկատմամբ ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրին վերաբերող կանոնները՝ համարել, որ կողմերի միջև իրականում կնքվել է վարձակալության պայմանագիր, ինչպես նաև մերժել Ընկերության հայցը:

ՀՀ տնտեսական դատարանի (այսուհետ՝ Տնտեսական դատարան) 26.11.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն: Վճռվել է վաղաժամկետ լուծել Պայմանագիրը, Սերգեյ Գաբրիելյանին վտարել Խանութի տարածքից, իսկ Վիոլետա Գաբրիելյանին Խանութի տարածքից վտարելու մասով հայցը մերժվել է: Հակընդդեմ հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Սերգեյ Գաբրիելյանը:  
Վճռաբեկ բողոքին պատասխան է ներկայացրել Ընկերությունը:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Տնտեսական դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, արդյունքում չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ և 447-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառել:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Տնտեսական դատարանը հիմնավորված չհամարելով այն հանգամանքը, որ Վարձակալության պայմանագրում և Օգտագործման պայմանագրում խոսքը գնում է նույն անշարժ գույքի մասին, բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել պայմանագրերը և այն հանգամանքը, որ դրանք երկուսն էլ ստորագրված են Ընկերության տնօրենի կողմից:

Ավելին, դատաքննության ընթացքում անգամ Ընկերության տնօրենը չի հերքել, որ երկու պայմանագրերում խոսքը գնում է նույն անշարժ գույքի, այն է՝ Խանութի մասին:

Ինչ վերաբերում է Տնտեսական դատարանի այն հետևությանը, թե Վարձակալության պայմանագիրն առաջինը գործարք է, քանի որ դրանից ծագող իրավունքները չեն ենթարկվել պետական գրանցման, ապա տվյալ դեպքում նման հետևություն անելու կարիքը չկար, քանի որ սույն գործով չի վիճարկվում Վարձակալության պայմանագրի վավերականությունը: Տվյալ պայմանագրով Սերգեյ Գաբրիելյանը փորձել է ընդամենը ապացուցել Պայմանագիրը շինծու գործարք լինելու և դրա նկատմամբ առաջինը գործարքի հետևանքներ կիրառելի լինելու հանգամանքը:

Գործում առկա երկու պայմանագրերի վերլուծությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Վարձակալության պայմանագիրը կնքվել է գույքի անհատույց օգտագործման պայմանագրից հետո, վկայում են այն մասին, որ կողմերը իրականում ցանկացել են հաստատել վարձակալական իրավահարաբերություններ, սակայն վարձատուն հարկային պարտավորություններից խուսափելու նպատակով չի ցանկացել այդ հարաբերությունները գրանցել օրենքով սահմանված կարգով:

Պայմանագրի՝ շինծու գործարք լինելու մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ Ընկերությունը, լինելով առևտրային իրավաբանական անձ, կնքել է գույքի անհատույց օգտագործման պայմանագիր, այն պայմաններում, երբ վերջինս կարող էր անհատույց հանձնված գույքի վարձակալությունից շահույթ ստանալ:

Ելնելով վերոգրյալից, բողոք բերած անձը պահանջել է բեկանել Տնտեսական դատարանի 26.11.2007 թվականի վճիռը և փոփոխել: Պայմանագրի նկատմամբ կիրառել գործարքի առաջնության հետևանքներ, Վարձակալության պայմանագրի պայմաններին համապատասխան հաստատված համարել կողմերի միջև վարձակալական հարաբերությունների առկայությունը, ինչպես նաև Պայմանագիրը վաղաժամկետ լուծելու պահանջը մերժել:

**2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանում քերված փաստարկները.**

03.03.2005 թվականին կնքված անհատույց օգտագործման պայմանագիրը կնքելուց հետո կողմերը որոշել են կնքել վարձակալության պայմանագիր, նախապես կնքելով ներքին վարձակալության պայմանագիր: Բայց, քանի որ Սերգեյ Գաբրիելյանը չի կատարել

---

---

իր պարտավորությունը, այսինքն՝ գումար չի վճարել և այն նոտարական վավերացման չի ենթարկվել, հետևաբար չի կարող որևէ իրավական հետևանքներ առաջացնել:

### **3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 12.04.2002 թվականին տրված թիվ 495681 անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի համաձայն՝ Ընկերությունը Երևանի, Կոմիտաս 22 հասցեում գտնվող խանութի սեփականատերն է:

2) Ընկերության՝ ի դեմս Վիլեն Առաքելյանի և Սերգեյ Գաբրիելյանի միջև 03.03.2005 թվականին կնքվել է անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագիր: Պայմանագիրը վավերացվել է Կենտրոն տարածքի նոտարական գրասենյակում, դրանից ծագած իրավունքները գրանցվել են ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արաբկիրի տարածքային ստորաբաժանման կողմից:

3) 15.03.2005 թվականին Վիլեն Առաքելյանի և Սերգեյ Գաբրիելյանի միջև կնքվել է վարձակալության պայմանագիր, ըստ որի՝ Վիլեն Առաքելյանը 5 տարի ժամկետով Սերգեյ Գաբրիելյանի վարձակալությանն է հանձնել իր խանութի տարածքը, որը կազմում է 75 քմ:

Նշված պայմանագիրը չի ենթարկվել նոտարական վավերացման, և պայմանագրից ծագող իրավունքները չեն ստացել պետական գրանցում:

4) 10.04.2007 թվականին Վիլեն Առաքելյանը գրությամբ Սերգեյ Գաբրիելյանից պահանջել է մինչև 15.04.2007 թվականը ազատել Խանութի տարածքը:

### **4. Վճարել դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.**

Քննելով վճարել բողոքը նշված հիմքի սահմաններում՝ վճարել դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ շինծու գործարքը, այսինքն՝ մեկ այլ գործարքի քողարկման նպատակով կնքված գործարքն առաջինն է:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ գրավոր գործարքների նկատմամբ շինծու լինելու հիմքով առաջինն գործարքի անվավերության հետևանքների կիրառման համար անհրաժեշտ է ապացուցել, որ՝

1. գործարքն իրականում կնքվել է ոչ այն ստորագրած անձանց միջև, կամ

2. այն ստորագրած անձանց կամքը չի համապատասխանում պայմանագրում շարադրվածին: Այսինքն, շինծու գործարքն առկա է այն դեպքում, երբ կողմերի միջև իրականում ծագում են իրավահարաբերություններ, սակայն դրանք իրենց բնույթով այլ են, քան այն իրավահարաբերությունները, որոնք կողմերը ցանկանում են ներկայացնել երրորդ անձանց:

Սույն գործի փաստերի առանձնահատկությունների հաշվառմամբ վճարել դատարանը գտնում է, որ սույն գործով պարզման ենթակա է այն իրավական հարցադրումը, թե արդյո՞ք Վիլեն Առաքելյանի և Սերգեյ Գաբրիելյանի միջև կնքված գույքի անհատույց օգտագործման պայմանագիրն նպատակ է հետապնդել քողարկել վարձակալության պայմանագրի առկայությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վճարել դատարանը փաստում է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բեր-

ված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը:

Սույն քաղաքացիական գործով անհատույց օգտագործման և վարձակալության պայմանագրերի համեմատական վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ իրականում կողմերի միջև կնքվել է գույքի վարձակալության պայմանագիր և անհատույց օգտագործման պայմանագրով քողարկվել է կողմերի միջև իրականում ծագած վարձակալական իրավահարաբերությունը:

Վճռաբեկ դատարանը նման եզրահանգման համար հիմք է ընդունում հետևյալ հանգամանքները.

1. Ընկերության՝ ի դեմս Վիլեն Առաքելյանի և Սերգեյ Գաբրիելյանի միջև 03.03.2005 թվականին կնքվել է անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագիր: 15.03.2005 թվականին Վիլեն Առաքելյանի և Սերգեյ Գաբրիելյանի միջև կնքվել է վարձակալության պայմանագիր, որը սակայն չի ենթարկվել նոտարական վավերացման, և պայմանագրից ծագող իրավունքները չեն ստացել պետական գրանցում:

Այսինքն՝ Վարձակալության պայմանագիրը առոչինչ է, սակայն այդ պայմանագրի վերլուծությունը հնարավորություն է տալիս փաստելու, որ իրականում կողմերը ցանկացել են, որպեսզի իրենց միջև առաջանան վարձակալական հարաբերություններ: Մինչդեռ, Տնտեսական դատարանը, առոչինչ համարելով կողմերի միջև կնքված վարձակալության պայմանագիրը, այն բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի ուսումնասիրել որպես կողմերի իրական կամքի արտահայտման ապացույց:

2. Թե գույքի անհատույց օգտագործման պայմանագիրը և թե վարձակալության պայմանագիրը կնքվել են նույն անձանց միջև, պայմանագրերում հիշատակվող անշարժ գույքի մակերեսը նույնն է՝ 75 քմ:

3. Անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագրով վեճի առարկա գույքը անհատույց օգտագործման է հանձնվել Ընկերության կողմից, որը սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն է և հետապնդում է շահույթ ստանալու նպատակ: Այսինքն, այն հանգամանքը, որ Ընկերությունը, որի գործունեության նպատակը շահույթ ստանալն է իրեն սեփականության իրավունքով պատկանող գույքը հանձնում է անհատույց օգտագործման, Վճռաբեկ դատարանը համարում է անիրատեսական և փաստում այդ պայմանագրով մեկ այլ պայմանագրի քողարկման հանգամանքը:

Հիմք ընդունելով վերոնշյալ հանգամանքները, Վճռաբեկ դատարանը դրանք դիտում է բավարար փաստելու համար, որ անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագիրը ստորագրած անձանց կամքը չի համապատասխանում պայմանագրում շարադրվածին և նպատակ է հետապնդել քողարկելու վարձակալության պայմանագրի առկայությունը:

Հետևաբար, 03.03.2005 թվականի անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագրի նկատմամբ անհրաժեշտ է կիրառել անշարժ գույքի վարձակալության ժամկետային պայմանագրին վերաբերող կանոններ՝ 15.03.2005 թվականին Վիլեն Առաքելյանի և Սերգեյ Գաբրիելյանի միջև կնքված վարձակալության պայմանագրով սահմանված պայմաններով:

Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները հերքվում են վերոնշյալ պատճառաբանություններով:

Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ: «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոմիտեի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշա-

---

---

նակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: ՀՀ տնտեսական դատարանի 26.11.2007 թվականի վճռը բեկանել և փոփոխել:

2. «ԱՎԱ» ՍՊԸ-ի հայցը մերժել:

3. Սերգեյ Գաբրիելյանի հակընդդեմ հայցը բավարարել: «ԱՎԱ» ՍՊԸ-ի և Սերգեյ Գաբրիելյանի միջև 03.03.2005 թվականին կնքված գույքի անհատույց օգտագործման պայմանագրի նկատմամբ կիրառել գործարքի անվավերության հետևանքներ և դրա նկատմամբ կիրառել անշարժ գույքի վարձակալության ժամկետային պայմանագրին վերաբերող կանոններ՝ 15.03.2005 թվականին Վիլեն Առաքելյանի և Սերգեյ Գաբրիելյանի միջև կնքված վարձակալության պայմանագրով սահմանված պայմաններով:

4. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒՐՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի վճիռ

Քաղաքացիական գործ թիվ **3-161(ՎԳ)**  
**2008թ.**

Քաղաքացիական գործ թիվ 07-4293

Նախագահող դատավոր՝ Գ.Խաչատրյան  
Դատավորներ՝ Վ.Ավանեսյան  
Գ.Մատինյան

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ  
դատարան)

*նախագահությամբ* Հ.ՍԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ԳՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի փետրվարի 29-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Արմեն Մահտեսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վե-  
րաքննիչ քաղաքացիական դատարանի 28.12.2007 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի Ար-  
մեն Մահտեսյանի ընդդեմ Մայիս Մեհրաբյանի և Գայանե Թադևոսյանի՝ բնակելի տա-  
րածության օգտագործման իրավունքը դադարեցնելու և բնակարանից վտարելու պա-  
հանջների մասին և ըստ հակընդդեմ հայցի Մայիս Մեհրաբյանի և Գայանե Թադևոսյանի՝  
Մայիս Մեհրաբյանի և Արմեն Մահտեսյանի միջև կնքված առուվաճառքի պայմանագիրն  
անվավեր ճանաչելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ հայցվորը պահանջել է Մայիս Մեհրաբյանի և Գայանե Թադ-  
ևոսյանի բնակելի տարածության օգտագործման իրավունքը Երևան քաղաքի Մեքաս-  
տիայի փողոցի 24/2 շենքի թիվ 3 բնակարանի նկատմամբ ճանաչել դադարեցված և վեր-  
ջիններիս վտարել նշված բնակարանից:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Մայիս Մեհրաբյանը և Գայանե Թադևոսյա-  
նը պահանջել են անվավեր ճանաչել Մայիս Մեհրաբյանի և Արմեն Մահտեսյանի միջև  
04.12.1999 թվականին կնքված վերոնշյալ բնակարանի առուվաճառքի պայմանագիրը  
(այսուհետ՝ Պայմանագիր):

Երևանի Մալաթիա-Մեքաստիա համայնքի առաջին ատյանի դատարանի 09.11.2007  
թվականի վճռով հայցը բավարարվել է, հակընդդեմ հայցը՝ մերժվել:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)  
28.12.2007 թվականի վճռով հայցը մերժվել է, հակընդդեմ հայցը՝ բավարարվել:

---

---

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Արմեն Մահտեսյան:  
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*1. Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 176-րդ հոդվածի 1-ին մասը, որը չպետք է կիրառել, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ, 317-րդ հոդվածները, ինչպես նաև 12-րդ հոդվածի առաջին մասը, որը պետք է կիրառել, խախտել է ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի առաջին արձանագրության առաջին հոդվածը,:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը կիրառելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 176-րդ հոդվածի 1-ին մասը, որը սեփականության իրավունքի ծագման պահի վերաբերյալ ընդհանուր դրույթ է սահմանում և չի կիրառել նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված հատուկ նորմը, համաձայն որի՝ այն դեպքերում, երբ գույքի նկատմամբ իրավունքը ենթակա է պետական գրանցման, ձեռք բերողի սեփականության իրավունքը ծագում է դրա գրանցման պահից:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը վիճելի գույքը վաճառքի պահին առկա շուկայական գնից էժան վաճառված լինելը դիտել է որպես գործարքի շինծու լինելը հիմնավորող ապացույց՝ անտեսելով այն հանգամանքը, որ գույքի սեփականատերն է որոշում իրեն պատկանող գույքի վաճառքի գինը:

*2. Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 317-րդ հոդվածը, որը պետք է կիրառել:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև այն հանգամանքը, որ հակըդդեն հայցով դատարան դիմելու պահին լրացած է եղել իրավունքի պաշտպանության հայցային վաղեմության ժամկետը: Այսպես, պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջ ներկայացվել է 2007 թվականին, մինչդեռ վիճելի պայմանագիրը կնքվել է 1999 թվականին: Հետևաբար, հակըդդեն հայցով պահանջը ենթակա էր մերժման նաև հայցային վաղեմության ժամկետը լրացված լինելու հիմքով:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 28.12.2007 թվականի վճիռը:

## **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Մայիս Մեիրաբյանի և Արմեն Մահտեսյանի միջև 04.12.1999 թվականին կնքվել է Երևան քաղաքի Մեբաստիայի փողոցի 24/2 շենքի թիվ 3 բնակարանի առուվաճառքի պայմանագիր:

Պայմանագրից ծագած իրավունքները ենթարկվել են պետական գրանցման:

2) Քաղաքացիական գործում բացակայում է իրավունքի պաշտպանության հայցային վաղեմության ժամկետը լրացած լինելու հիմքով հակըդդեն հայցը մերժելու մասին միջնորդություն:

## **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ.

*1) բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ շինծու գործարքը, այսինքն՝ մեկ այլ գործարքի բողոքկման նպատակով կնքված գործարքն առաջինն է:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ գրավոր գործարքների նկատմամբ շինծու լինելու հիմքով առաջինն գործարքի անվավերության հետևանքների կիրառման համար անհրաժեշտ է ապացուցել, որ՝

1. գործարքն իրականում կնքվել է ոչ այն ստորագրած անձանց միջև, կամ

2. այն ստորագրած անձանց կամքը չի համապատասխանում պայմանագրում շարադրվածին: Այսինքն, շինծու գործարքն առկա է այն դեպքում, երբ կողմերի միջև իրականում ծագում են իրավահարաբերություններ, սակայն դրանք իրենց բնույթով այլ են, քան այն իրավահարաբերությունները, որոնք կողմերը ցանկանում են ներկայացնել երրորդ անձանց (տես օրինակ՝ «ԱՎԱ» ՍՊԸ ընդդեմ անհատ ձեռնարկատեր Սերգեյ Գաբրիելյանի և Վիդեա Գաբրիելյանի, 01.02.2008թ. Քաղ. գործ թիվ 3-89/ՏԴ, (Ընկերության և Սերգեյ Գաբրիելյանի միջև կնքված անշարժ գույքի անհատույց օգտագործման 03.03.2005 թվականի պայմանագիրը (այսուհետ՝ Օգտագործման պայմանագիր) վաղաժամկետ լուծելու և ըստ հակընդդեմ հայցի՝ Օգտագործման պայմանագիրը շինծու գործարք ճանաչելու պահանջով):

Այսինքն, շինծու գործարքի առկայությունը փաստելու համար, Վերաքննիչ դատարանը պետք է գնահատման առարկա դարձներ և հիմնավորեր վերոնշյալ փաստերից որևիցե մեկի առկայությունը:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին (տես օրինակ՝ ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչությունն ընդդեմ «Քնար-88» ՍՊԸ, 21.12.2006թ. քաղ. գործ թիվ 3-2504/ՏԴ/ՏԴ, (գումար բռնագանձելու պահանջով):

Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ վճռի թե՛ փաստական, և թե՛ իրավական հիմնավորումը: Ըստ Վճռաբեկ դատարանի վերոհիշյալ որոշման, վճռի իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ նյութական իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանն եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Վճռում ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Վճռի իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա վճռի իրավակիրառ գործառույթը, ընդգծում դատական գործունեության և դատական վճռի օրինականությունը:

Սինչդեռ, սույն քաղաքացիական գործով, Վերաքննիչ դատարանի պատշաճ կերպով չի պատճառաբանել Պայմանագրի շինծու լինելու մասին հետևությունը:

Հիմնավոր է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 176-րդ հոդվածի 1-ին մասը կիրառելի չլինելու վերաբերյալ վճռաբեկ բողոք բերած անձի փաստարկն, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 176-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ պայմանագրով գույքը ձեռք բերողի սեփականության իրավունքը ծագում է գույքը հանձնելու պահից, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այն դեպքերում, երբ գույքի նկատմամբ իրավունքը ենթակա է պետական գրանցման, ձեռք բերողի սեփականության իրավունքը ծագում է դրա գրանցման պահից:

---

---

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը և այլ գույքային իրավունքները, այդ իրավունքների սահմանափակումները, դրանց ծագումը, փոխանցումն ու դադարումը ենթակա են պետական գրանցման:

Հիմք ընդունելով վերոնշյալը, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ սույն քաղաքացիական գործով վեճի առարկա անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը գնորդի մոտ ծագել է այդ իրավունքի պետական գրանցման, այլ ոչ թե գույքը գնորդին հանձնելու պահից:

Այսինքն, Վերաքննիչ դատարանը անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման պահը որոշելիս կիրառել է շարժական գույքի նկատմամբ իրավունքների ծագման համար օրենքով սահմանված կանոնը:

*2) բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը հայցային վաղեմությունը կիրառում է միայն վիճող կողմի դիմումով, որը պետք է տրվի մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը:

Մինչդեռ սույն քաղաքացիացիական գործով բերված վճռաբեկ բողոքում չհիմնավորվեց գործի դատաքննության ընթացքում Արմեն Մահտեսյանի կողմից հայցային վաղեմության կիրառման վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու հանգամանքը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով, Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար Վերաքննիչ դատարանի վճիռը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 28.12.2007 թվականի վճիռը և գործն ուղարկել Երևանի Մալաթիա-Մեքաստիա համայնքի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԳԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՈՒՐՄԱՆ ԴԱՏԱՐԱՆ**

Քաղաքացիական գործերով  
վերաքննիչ դատարանի վճիռ  
Քաղաքացիական գործ թիվ 07-2112/2007թ.  
Նախագահող դատավոր՝ Ն. Հովսեփյան  
Դատավորներ՝ Տ. Սահակյան  
Ա. Թումանյան

Քաղաքացիական գործ թիվ **3-192(ՎԳ)**  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Հ.ՍԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՍԿԻՐՈՒՄՅԱՆԻ  
Վ.ԱՔԵԼՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ԳՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի մարտի 27-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը Քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 21.06.2007 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ընդդեմ Հենրիկ Սիմոնյանի՝ պահանջի իրավունքի զիջման պայմանագիրն անվավեր ճանաչելու մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը պահանջել է անվավեր ճանաչել «Հիդրոմասնագետչին» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) լուծարային հանձնաժողովի նախագահ Հենրիկ Սիմոնյանի և քաղաքացի Հենրիկ Սիմոնյանի միջև 20.09.2005 թվականին կնքված պահանջի իրավունքի զիջման պայմանագիրը:

Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 06.04.2007 թվականի վճռով քաղաքացիական գործի վարույթը կարճվել է:

Քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 21.06.2007 թվականի վճռով հայցը մերժել է:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 318 հոդվածի 3-րդ մասը:*

Վերաքննիչ դատարանը գնահատման առարկա չի դարձրել այն հանգամանքը, որ Ընկերության լուծարային հանձնաժողովի նախագահ Հենրիկ Սիմոնյանը Ընկերության

---

---

պահանջի իրավունքը զիջել է Ընկերության բաժնետեր Հենրիկ Սիմոնյանին, որը նույն ֆիզիկական անձն է, այսինքն՝ ներկայացուցիչը ներկայացվողի անունից գործարք է կնքել անձամբ իր նկատմամբ:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը 26.10.2006 թվականի թիվ 3-2091/ՏԳ որոշմամբ արտահայտել է իր դիրքորոշումը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 318 հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջը խախտված լինելու հանգամանքի կապակցությամբ:

Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 21.06.2007 թվականի վճիռը և հայցը բավարարել:

### **2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմքերը և փաստարկները.**

Պահանջի իրավունքի զիջման 20.09.2005 թվականի պայմանագրով Հենրիկ Սիմոնյանը որպես Ընկերության լուծարային հանձնաժողովի ներկայացուցիչ հանդես չի եկել:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունի հետևյալ փաստը՝

Ընկերության լուծարային հանձնաժողովն (ի դեմս հանձնաժողովի նախագահ Հ.Սիմոնյանի) Ընկերության պահանջի իրավունքը 20.09.2005 թվականի պայմանագրով զիջել է Ընկերության բաժնետեր Հ.Սիմոնյանին:

### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 318 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ներկայացուցիչը չի կարող ներկայացվողի անունից գործարք կնքել անձամբ իր նկատմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացված իր որոշմամբ անդրադարձել է Ընկերության լուծարային հանձնաժողովի նախագահ Հենրիկ Սիմոնյանի և Ընկերության բաժնետեր Հենրիկ Սիմոնյանի միջև 20.09.2005 թվականին կնքված պայմանագրին (տես՝ Հենրիկ Սիմոնյան ընդդեմ ՀՀ քաղաքաշինության նախարարության, ՀՀ քաղաքաշինության նախարարության «Հիդրոտեխնիկական կառույցներ» պետական հիմնարկ՝ 5.215.000 ՀՀ դրամ գումար բռնագանձելու պահանջի մասին թիվ 3-2091/ՏԳ քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 26.10.2006 թվականի որոշումը):

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ընկերության լուծարային հանձնաժողովի նախագահ Հ.Սիմոնյանը Ընկերության պահանջի իրավունքը 20.09.2005 թվականի պայմանագրով զիջել է Ընկերության բաժնետեր Հ.Սիմոնյանին, որը նույն անձն է, գտել է, որ տվյալ դեպքում առկա է դեպք, երբ ներկայացուցիչը ներկայացվողի անունից գործարք է կնքել անձամբ իր նկատմամբ, ինչը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 318-րդ հոդվածի 3-րդ մասի խախտում է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ օրենքին հակասող գործարքներն անվավեր են, եթե օրենքը չի սահմանում, որ մնան գործարքն առոչինչ է, կամ չի նախատեսում խախտման այլ հետևանքներ:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերության լուծարային հանձնաժողովի և Ընկերության բաժնետեր Հենրիկ Սիմոնյանի միջև 20.09.2005 թվականին կնքված պահանջի իրավունքի զիջման պայմանագիրը անվավեր է:

Վճռաբեկ բողոքի պատասխանում ներկայացված փաստարկները հերքվում են վերոնշյալ պատճառաբանություններով:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի առաջին հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարություն օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով վերանայվող դատական ակտը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Քաղաքացիական գործով վերաքննիչ դատարանի 21.06.2007 թվականի վճիռը և այն փոփոխել. ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հայցը բավարարել՝ անվավեր ճանաչել 20.09.2005 թվականի պահանջի իրավունքի զիջման պայմանագիրը:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՈՒՐՆԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի վճիռ  
Քաղաքացիական գործ թիվ 07-3316  
Նախագահող դատավոր՝ Կ. Հակոբյան  
դատավորներ՝ Լ. Գրիգորյան  
Լ. Սոսյան

Քաղաքացիական գործ թիվ **3-163(ՎԳ)**  
**2008թ.**

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

#### ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Հ.ՍԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՍԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի ապրիլի 23-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Մարիամ Ազիզյանի վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.10.2007 թվականի վճռի դեմ՝ ըստ Օքսաննա Մեյթարջյանի հայցի ընդդեմ Մարիամ, Աշոտ և Քնարիկ Ազիզյանների՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքը փոխհատուցմամբ դադարեցնելու և վտարելու, ինչպես նաև ըստ Մարիամ և Աշոտ Ազիզյանների հակընդդեմ հայցի ընդդեմ Օքսաննա Մեյթարջյանի և Աշոտ Գունաշյանի՝ առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու, անվավերության հետևանքները կիրառելու, շինարարական աշխատանքների գումարի բռնագանձման պահանջների մասին,

### Պ Ա Ր Ձ Ե Ց

#### 1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Օքսաննա Մեյթարջյանը պահանջել է փոխհատուցմամբ դադարեցնել Մարիամ, Աշոտ և Քնարիկ Ազիզյանների բնակելի տարածության օգտագործման իրավունքը և վտարել նրանց Աշտարակի, Իսակյան 31 հասցեում գտնվող բնակելի տանից և հողամասից:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Մարիամ և Աշոտ Ազիզյանները պահանջել են անվավեր ճանաչել Մարիամ Ազիզյանի և Օքսաննա Մեյթարջյանի միջև 22.04.1997 թվականին կնքած առուվաճառքի պայմանագիրը, կիրառել գործարքի անվավերության հետևանքներ և բռնագանձել շինարարական աշխատանքների գումարը:

Արագաձոտնի մարզի առաջին ատյանի դատարանի 02.08.2007 թվականի վճռով Օքսաննա Մեյթարջյանի հայցը բավարարվել է, իսկ Մարիամ և Աշոտ Ազիզյանների հակընդդեմ հայցը մերժվել:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 05.10.2007 թվականի վճռով Օքսաննա Մեյթարջյանի հայրը բավարարվել է, իսկ Մարիամ և Աշոտ Ազիզյանների հակընդդեմ հայրը մերժվել:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Մարիամ Ազիզյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Օքսաննա Մեյթարջյանը:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի 2-րդ մասը, որը պետք է կիրառեր:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն ապացույցները գնահատելիս ընդհանրապես չի անդրադարձել գործում առկա ստացականին, որով հիմնավորվում է, որ գործարքի իրական կողմը՝ գնորդ Աշոտ Գունաշյանն է, որն ամբողջությամբ չի կատարել գույքի դիմաց վճարման իր պարտականությունը: Վերաքննիչ դատարանի կողմից ստացականին իրավական գնահատական չտալու պարագայում, Մարիամ Ազիզյանը գրկվել է իր կողմից վաճառվող բնակելի տան արժեքի մասը պահանջելու իրավունքից, քանի որ Օքսաննա Մեյթարջյանի հետ կնքած բնակելի տան առուվաճառքի շինծու պայմանագրի համաձայն՝ «նա արդեն ստացել է այդ գումարը»:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը չի գնահատել գործով հարցաքննված վկաների ցուցմունքները՝ գործարքի կողմերի և դրա պայմանների վերաբերյալ, որոնք նույնպես վկայում են պայմանագրի՝ շինծու գործարք լինելու մասին:

Տվյալ պարագայում, Վերաքննիչ դատարանը պետք է կիրառեր շինծու գործարքին վերաբերող օրենքի նորմերը և դրա անվավերության հետևանքները, որը չի կիրառել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 05.10.2007 թվականի վճիռը:

**2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները.**

Օքսաննա Մեյթարջյանը գործարքի կնքումից հետո գրանցել է սեփականության իրավունքը: Վերաքննիչ դատարանի վճռով նախատեսված գումարը՝ 300.024 ՀՀ դրամը, Աշոտ Ազիզյանը և Քնարիկ Ազիզյանը 12.12.2007 թվականին ստացել են Արագածոտնի մարզի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով (դրամարկղային օրդեր 208 և 196):

Տունը գնելուց հետո Օքսաննա Մեյթարջյանն աշխատանքի բերումով գտնվել է Մոսկվա քաղաքում, որի հետևանքով նրա և պատասխանողի միջև եղել է բանավոր պայմանավորվածություն նրանց կողմից գույքը զբաղեցնելու և օգտագործելու վերաբերյալ, մինչև նրա Հայաստան վերադառնալը:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Մարիամ Ազիզյանն Աշտարակի, Իսակյան 31 հասցեում գտնվող բնակելի տան և հողամասի սեփականատերն է:

2) 22.04.1997 թվականին Մարիամ Ազիզյանի և Օքսաննա Մեյթարջյանի միջև կնքած բնակելի տան առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ Մարիամ Ազիզյանն Օքսաննա Մեյթարջյանին վաճառել է քաղաք Աշտարակ, Իսահակյան 31 հասցեում գտնվող բնակելի տունը և հողամասը: Պայմանագիրը վավերացվել է նոտարական կարգով, դրանից ծա-

---

---

գաձ իրավունքները գրանցվել են Աշտարակի գույքագրման տեղամասում 06.05.1997 թվականին:

3) 02.05.1997 թվականին Աշոտ Գունաշյանի կողմից տրված ստացականի համաձայն՝ Աշոտ Գունաշյանը գնել է Աշտարակ քաղաքի բնակիչ Մարիամ Ազիզյանից բնակելի տուն, որի արժեքն ամբողջությամբ չի վճարել՝ պարտավորվելով արժեքի մյուս մասը վճարել մեկ տարվա ընթացքում:

4) 14.09.2006 թվականի Մարուսյա Սողոմոնյանի հայտարարության համաձայն՝ 1997 թվականին Մարուսյա Սողոմոնյանի բարեկամ Աշոտ Գունաշյանն իր հարևան Մարիամ Ազիզյանից գնել է բնակելի տուն Աշտարակի, Իսակյան 31 հասցեում և իր ներկայությամբ վճարել դրա արժեքի մի մասը, գումարի մնացած մասը՝ պարտավորվելով վճարել մեկ տարվա ընթացքում: Աշոտ Գունաշյանը տունը ձևակերպել է իր քրոջ՝ Օքսաննա (Գունաշյանի) Մեյթարջյանի անունով:

#### **4. Վճարել դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.**

Քննելով վճարել բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճարել դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ շինծու գործարքը, այսինքն՝ մեկ այլ գործարքի բողոքկման նպատակով կնքված գործարքն առաջինն է:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ գրավոր գործարքների նկատմամբ շինծու լինելու հիմքով առաջինն գործարքի անվավերության հետևանքների կիրառման համար անհրաժեշտ է ապացուցել, որ՝

1. գործարքն իրականում կնքվել է ոչ այն ստորագրած անձանց միջև, կամ

2. այն ստորագրած անձանց կամքը չի համապատասխանում պայմանագրում շարադրվածին: Այսինքն, շինծու գործարքն առկա է այն դեպքում, երբ կողմերի միջև իրականում ծագում են իրավահարաբերություններ, սակայն դրանք իրենց բնույթով այլ են, քան այն իրավահարաբերությունները, որոնք կողմերը ցանկանում են ներկայացնել երրորդ անձանց (տե՛ս օրինակ՝ «ԱՎԱ» ՍՊԸ ընդդեմ Մերգեյ Գաբրիելյան և Վիոլետա Գաբրիելյան՝ պայմանագիրը վաղաժամկետ լուծելու, Մերգեյ և Վիոլետա Գաբրիելյանների տարածքից վտարելու պահանջների մասին թիվ 3-89(ՏԳ) քաղաքացիական գործով Վճարել դատարանի 01.02.2008 թվականի որոշումը):

Սույն քաղաքացիական գործի փաստերի առանձնահատկությունների հաշվառմամբ Վճարել դատարանը գտնում է, որ սույն գործով պարզման ենթակա է այն իրավական հարցադրումը, թե արդյո՞ք Աշտարակի, Իսակյան 31 հասցեում գտնվող բնակելի տան և հողամասի առուվաճառքի պայմանագիրն իրականում կնքվել է Մարիամ Ազիզյանի և Օքսաննա Մեյթարջյանի միջև:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վճարել դատարանը փաստում է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը:

Սույն քաղաքացիական գործում առկա 22.04.1997 թվականին կնքած առուվաճառքի պայմանագրի և 02.05.1997 թվականին տրված ստացականի համեմատական վերլուծության արդյունքում Վճարել դատարանը գտնում է, որ իրականում գործարքը կնքվել է ոչ

այն ստորագրած անձանց միջև, որի արդյունքում քողարկվել է գործարքի իրական կողմ հանդիսացող անձանց միջև կնքած գործարքը:

Վճռաբեկ դատարանը նման եզրահանգման համար հիմք է ընդունում հետևյալ հանգամանքները.

22.04.1997 թվականին Մարիամ Ազիզյանի և Օքսաննա Մեյթարջյանի միջև կնքած բնակելի տան առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ Մարիամ Ազիզյանը վաճառել է քաղաք Աշտարակ, Իսակյան 31 հասցեում գտնող բնակելի տունը և հողամասը: Առուվաճառքի պայմանագրի ստորագրումից հետո՝ 02.05.1997 թվականին, Աշոտ Գունաշյանի կողմից Մարիամ Ազիզյանին տրվել է ստացական, որի համաձայն՝ Աշոտ Գունաշյանը գնել է Աշտարակ քաղաքի բնակիչ Մարիամ Ազիզյանից բնակելի տուն, որի արժեքը վճարել մասամբ՝ պարտավորվելով իր կողմից գնված անշարժ գույքի արժեքի մնացած մասը վճարել մեկ տարվա ընթացքում: Գործում առկա 14.09.2006 թվականի Մարուսյա Մողոմոնյանի հայտարարության համաձայն՝ 1997 թվականին Մարուսյա Մողոմոնյանի բարեկամ Աշոտ Գունաշյանն իր հարևան Մարիամ Ազիզյանից գնել է բնակելի տուն քաղաք Աշտարակ, Իսակյան 31 հասցեում և իր ներկայությամբ վճարել դրա արժեքի մի մասը, գումարի մնացած մասը՝ պարտավորվելով վճարել մեկ տարվա ընթացքում: Աշոտ Գունաշյանը տունը ձևակերպել է իր քրոջ՝ Օքսաննա (Գունաշյանի) Մեյթարջյանի անունով:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վաճառող՝ Մարիամ Ազիզյանի, կողմից կնքած վեճի առարկա անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի իրական կողմը՝ գնորդ Աշոտ Գունաշյանն է, այլ ոչ՝ նրա քույր՝ Օքսաննա Մեյթարջյանը: Հետևաբար, գործարքը կնքվել է ոչ այն ստորագրած անձանց միջև, որի արդյունքում քողարկվել է գործարքի իրական կողմերի՝ վաճառող Մարիամ Ազիզյանի և գնորդ՝ Աշոտ Գունաշյանի, միջև կնքած վիճելի անշարժ գույքի առուվաճառքի գործարքը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար չ՛լ քաղաքացիական դատավարություն օրենսգրքի 227-րդ և 228-րդ - հոդվածների ուժով վերանայվող դատական ակտը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով չ՛լ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.10.2007 թվականի վճիռը և գործն ուղարկել Հյուսիսային քաղաքացիական դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում  
քաղաքացիական գործ թիվ 08-414  
Նախագահող դատավոր՝ Կ. Չիլինգարյան  
Դատավորներ Լ. Գրիգորյան  
Լ. Սոսյան

Քաղաքացիական գործ թիվ **3-417(ՎԳ)**  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ  
դատարան)

*նախագահությամբ* Հ. ՍԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա. ԱՐՏՈՒՄՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Դ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ. ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի հուլիսի 25-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Ավետիս Սորսումատյանի վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.03.2008 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ավետիս Սորսումատյանի ընդդեմ Ռ-ինա Կարապետյանի և Վալերի Հովսեփյանի՝ առուվաճառքի պայմանագիրը վավեր ճանաչելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան հասցվորը պահանջել է վավեր ճանաչել իր և Ռ-ինա Կարապետյանի ու Վալերի Հովսեփյանի միջև կնքված՝ Սարկավագի 147/1 փողոցի թիվ 12 բնակարանի առուվաճառքի գործարքը:

Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ Դատարան) 14.12.2007 թվականի վճռով հայցը բավարարել է:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 19.03.2008 թվականի որոշմամբ բեկանվել է վերոհիշյալ վճիռը և գործն ուղարկվել է Երևանի քաղաքացիական դատարան՝ նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ավետիս Սորսումատյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորմամբ.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 298-րդ, 300-րդ, 447-րդ հոդվածները, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածը և 53-րդ հոդվածի 1-ին մասը:

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Սույն քաղաքացիական գործում առկա «Ստացական» վերնագրված երկու փաստաթղթով հնարավոր է պարզել անշարժ գույքի առուվաճառքի անհրաժեշտ և բավարար երեք տարրերը՝ կողմերը, առարկան և գինը: Ստացականների վերլուծությունից հատակ երևում է որ գործարքի կողմեր են Ավետիս Պետրոսի Սորսումատյանը (գնորդ) և Ռիմա Կարապետանն ու Վալերի Հովսեփյանը (վաճառողներ): Գործարքի առարկան է Սարկավագի փողոց 147/1 համար 12 բնակարանը: Պայմանագրի գինը կազմել է 40.000 ԱՄՆ դոլար: Այդ մասին կարելի է եզրակացնել վերջին «ստացականում» նշված հետևյալ տեքստից. «Ընդհանուր Ավետիս Սորսումատյանից ստացա 23 000 ԱՄՆ դոլար \$ (քսան երեք հազար ԱՄՆ դոլար): Մնացած 17 000 \$ (տասնյոթ հազար ԱՄՆ դոլարը) առք ու վաճառքից հետո: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությամբ չի գնահատել վերոհիշյալ ապացույցները:

«Ստացական» վերնագրված փաստաթղթերի «Սարկավագի փողոց 147/1 բն. 12, տուն վաճառելու համար ստացա կանխավճար» ձևակերպումը չի կարող մեկնաբանվել այլ կերպ, քան որպես հիշատակված հասցեի անշարժ գույքը վաճառելու՝ կողմի կամքը հիմնավորող ձևակերպում:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև կողմերի հետագա գործողությունները, մասնավորապես այն հանգամանքը, որ Ռիմա Կարապետյանը և Վալերի Հովսեփյանը 02.05.2007 թվականին մարել են «Արֆին» վարկային կազմակերպության հանդեպ ունեցած 4.213.811 ՀՀ դրամ գումարի պարտքը և նույն օրը վերոհիշյալ բնակարանը գրավից հանելու մասին վերցվել է թիվ 184 տեղեկանքը: Նշված երկու փաստաթղթերի ամսաթվերն ու գումարի չափը, վկայում են այն մասին, որ նախատեսված էր վաճառելու վեճի առարկա բնակարանը և կանխավճարն էլ վերցվել է հենց այդ բնակարանի համար, այն չափով, որպեսզի հնարավոր լինի մարել տվյալ բնակարանի գրավով ապահովված պարտքը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.03.2008 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 14.12.2007 թվականի վճռին:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. 02.05.2007 թվականին Ռիմա Կարապետյանը ստորագրել է «Ստացական» վերնագրված փաստաթուղթ, հետևյալ բովանդակությամբ. «Ես՝ Ռիմա Հակոբի Կարապետյանս անձնագիր AF0244875 տրված 019 կողմից, բնակվող Սարկավագի փողոց 147/1 բն. 12 տուն վաճառելու համար ստացա կանխավճար 1 000 \$ (հազար ԱՄՆ դոլար): Ստացա Ավետիս Պետրոսի Սորսումատյանից, որի համար ստորագրում եմ»:

2. 03.05.2007 թվականին Ռիմա Կարապետյանը ստորագրել է «Ստացական» վերնագրված փաստաթուղթ, հետևյալ բովանդակությամբ. «Ես՝ Ռիմա Հակոբի Կարապետյանս անձնագիր AF0244875 տրված 019 կողմից, բնակվող Սարկավագի փողոց 147/1 բն. 12, տուն վաճառելու համար ստացա կանխավճար 22 000 \$ (քսան երկու հազար ԱՄՆ դոլար): Ստացա Ավետիս Պետրոսի Սորսումատյանից, որի համար ստորագրում եմ:

Ընդհանուր Ավետիս Սորսումատյանից ստացա 23 000 ԱՄՆ դոլար \$ (քսան երեք հազար ԱՄՆ դոլար): Մնացած 17 000 \$ (տասնյոթ հազար ԱՄՆ դոլարը) առք ու վաճառքից հետո: Ստորագրություն, Կարապետյան»:

---

---

3. Ռիմա Կարապետյանը և Վալերի Հովսեփյանը 03.05.2007 թվականին մարել են «Արֆին» վարկային կազմակերպության հանդեպ ունեցած 4.213.811 ՀՀ դրամ գումարի պարտքը և նույն օրը ք.Երևան, Մարկավազի փողոց 147/1 բնակարան համար 12 (այսուհետ՝ Բնակարան) գրավից հանելու մասին վերցրել թիվ 184 տեղեկանքը:

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գրավոր գործարքը պետք է կնքվի փաստաթուղթ կազմելու միջոցով, որն արտահայտում է գործարքի բովանդակությունը և ստորագրված է գործարք կնքող անձի կամ անձանց կամ նրանց կողմից պատշաճ ձևով լիազորված անձանց կողմից:

Նույն օրենսգրքի 298-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ գործարքի հասարակ գրավոր ձևը չպահպանելը վեճի դեպքում կողմերին զրկում է ի հաստատումն գործարքի ու նրա պայմանների՝ վկաների ցուցմունքներ վկայակոչելու, **սակայն նրանց չի զրկում գրավոր և այլ ապացույցներ ներկայացնելու իրավունքից:**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 300-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե կողմերից մեկը լրիվ կամ մասնակի կատարել է նոտարական վավերացում պահանջող գործարքը, իսկ մյուս կողմը խուսափում է գործարքի նոտարական վավերացումից, դատարանն իրավունք ունի, գործարքը կատարած կողմի պահանջով, այն վավեր ճանաչել: Այդ դեպքում գործարքի հետագա նոտարական վավերացում չի պահանջվում:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին (տես օրինակ՝ «Ընար-88» ՍՊԸ ընդդեմ ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության, 21.12.2006թ. Քաղ. գործ թիվ 3-2504/ՏՂ/ՏԳ, (գումար բռնագանձելու պահանջով)):

Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ վճռի թե՛ փաստական, և թե՛ իրավական հիմնավորումը: Ըստ Վճռաբեկ դատարանի վերոհիշյալ որոշման, վճռի իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ նյութական իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանն եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածից հետևում է, որ դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և արդյունքում վճիռ կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին (տես, Անժելա Ղազարյանը, Արֆիկ և Արմինե Գասպարյաններն ընդդեմ Շուշանիկ Մարգարյանի, Ոսկեհատ, Նունե, Հրանուշ Գասպարյանների՝ ժառանգական գույքը ժառանգների միջև բաժանելու պահանջի մասին, ՀՀ վճռաբեկ դատարանի 12.12.2007 թվականի որոշում, քաղաքացիական գործ թիվ 3-1843(ՎԳ)):

Մինչդեռ, սույն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանը պատշաճ գնահատման առարկա չի դարձրել «Ստացական» վերնագրված երկու գրավոր փաստաթղթերը, ինչպես նաև այն հանգամանքը, որ այդ փաստաթղթերը ստորագրելուց հետո Ռիմա Կարապետյանը և Վալերի Հովսեփյանը 03.05.2007 թվականին մարել են «Արֆին» վարկային կազմակերպության հանդեպ ունեցած 4.213.811 ՀՀ դրամ գումարի պարտքը:

Մասնավորապես, «Ստացական» վերնագրված երկու գրավոր փաստաթղթերում նշված են գործարքի առարկան՝ բնակարանը, կողմերը, գործարքի գինը և վճարման կարգը: Բացի այդ վաճառողները նույն օրը գործողություններ են կատարել բնակարանը գրա-

վից հանելու համար, սակայն հետագայում խուսափել են առուվաճառքի գործարքն ավարտին հասցնելուց, այն դեպքում երբ գնորդը իր կողմից կատարել է մինչ այդ պահը գործարքն ավարտին հասցնելու բոլոր հնարավոր գործողությունները:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ավետիս Սորսունյանի կողմից լիով կատարվել է նոտարական վավերացում պահանջող գործարքը, իսկ վաճառողները՝ սույն գործով պատասխանողները խուսափել են գործարքի նոտարական վավերացումից, հետևաբար, առուվաճառքի գործարքը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 300-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներին համապատասխան, ենթակա է վավեր ճանաչման:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմնավոր լինելը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարություն օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով վերանայվող դատական ակտը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.03.2008 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 14.12.2007 թվականի վճռին:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՈՒՐՆԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում  
Քաղաքացիական գործ թիվ 08-607  
Նախագահող դատավոր՝ Գ.Խաչատրյան  
Դատավորներ՝ Ս.Սիբայելյան  
Ն.Տավարացյան

Քաղաքացիական գործ թիվ **3-425(ՎԴ)**  
**2008թ.**

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

#### Հ Ա Ն ՈՒ Ն Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի հուլիսի 25-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Արփենիկ Մուխայելյանի, Գոհար Անտոնյանի և Վերոնիկա Շահինյանի վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.03.2008 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Արփենիկ Մուխայելյանի, Գոհար Անտոնյանի, Վերոնիկա Շահինյանի ընդդեմ Նաիրա Անտոնյանի, երրորդ անձ Շիրակ Գևորգյանի, Նոր Նորք նոտարական տարածքի նոտար Օսան Հակոբյանի՝ գործարքն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

### Պ Ա Ր Զ Ե Ց

#### 1. Գործի դատավարական նախապատմությունը

Գիմելով դատարան՝ հայցվորները պահանջել են անվավեր ճանաչել Շիրակ Գևորգյանի, Արմեն Շահինյանի և Նաիրա Անտոնյանի միջև 28.04.2003 թվականին կնքված Երևանի Նոր Նորքի 4-րդ զանգվածի 2-րդ հատվածի 33ա շենքի թիվ 25 բնակարանի նվիրատվության պայմանագիրը, ինչպես նաև դրա հիման վրա Նաիրա Անտոնյանի, Գարեգին և Տաթևիկ Ավետիսյանների անվամբ 02.05.2003 թվականին տրված թիվ 1025938 սեփականության իրավունքի գրանցման վկայականը:

Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի 30.11.2007 թվականի վճռով հայցը մերժվել է:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 13.03.2008 թվականի որոշմամբ Արփենիկ Մուխայելյանի, Գոհար Անտոնյանի և Վերոնիկա Շահինյանի վերաքննիչ բողոքը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Արփենիկ Մուխայելյանը, Գոհար Անտոնյանը և Վերոնիկա Շահինյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) *Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասը, 306-րդ հոդվածի 2-րդ մասը, որոնք պետք է կիրառեր:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

28.04.2003 թվականին Շիրակ Գևորգյանն իրեն լիազորող հայցվորների անունից Արմեն Շահինյանի հետ միասին Նաիրա Անտոնյանի հետ կնքել են նվիրատվության պայմանագիր, սակայն պայմանագրի կողմերը պայմանավորվել են ոչ թե իրենց գույքը նվիրել Նաիրա Անտոնյանին, այլ ցանկացել են վերջինիս իրավունք վերապահել զբաղվելու բնակարանի վաճառքով և վաճառքից առաջացած գումարը բաժանել երեք մասի:

Նաիրա Անտոնյանի կողմից դատարան ներկայացված բնակարանի համասեփակա-նատեր Արմեն Շահինյանի ձեռքով գրված ստացականի համաձայն՝ վերջինս իր բաժնի դիմաց պատասխանող Նաիրա Անտոնյանից ստացել է 830 ԱՄՆ դոլար: Նշվածից հետևում է, որ Արմեն Շահինյանի բաժինը փոխհատուցվել է դրամական ձևով, իսկ հայցվորներին չի փոխհատուցվել: Հետևաբար, կողմերի միջև առկա է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հանդիպական պարտավորություն, որի պատճառով էլ 28.04.2003 թվականի պայմանագիրը նվիրատվության պայմանագիր չի կարող համարվել: Այդպիսի պայմանագրի նկատմամբ կիրառվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կանոնները:

2) *Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 317-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Հայցվորները բաց չեն թողել հայցային վաղեմության ժամկետը, քանի որ նրանք իրենց իրավունքների խախտման մասին տեղեկացել են 27.07.2007 թվականին և դիմել են ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչություն, իսկ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Նոր Նորքի տարածքային ստորաբաժանման 02.08.2007 թվականի թիվ Կ/Մ-5240ա գրությունից տեղեկացել են գործարքի մասին և 07.09.2007 թվականին դիմել են դատարան: Այս դեպքում նույնպես հայցվորները բաց չեն թողել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 317-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հայցային վաղեմության մեկ տարվա ժամկետը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են բեկանել Վերաքննիչ դատարանի 13.03.2008 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստե-րը՝

1) Երևանի Նոր Նորքի 4-րդ զանգվածի 2-րդ հատվածի 33ա շենքի թիվ 25 բնակա-րանն ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանել է Արփենիկ Մուխայեյանին, Նաիրա և Գոհար Անտոնյաններին, Գարեգին և Տաթևիկ Ավետիսյաններին, Վերոնիկա և Արմեն Շահինյաններին:

2) 25.04.2003 թվականին Արփենիկ Մուխայեյանը, Գոհար Անտոնյանը և Վերոնիկա Շահինյանը նոտարական կարգով վավերացված լիազորագրով լիազորել են Շիրակ Գևորգյանին Երևանի Նոր Նորքի 4-րդ զանգվածի 2-րդ հատվածի 33ա շենքի թիվ 25 բնակարանի իրենց պատկանող բաժինները նվիրել Նաիրա Անտոնյանին:

3) 28.04.2003 թվականին Շիրակ Գևորգյանի՝ որպես Արփենիկ Մուխայեյանի, Գոհար Անտոնյանի և Վերոնիկա Շահինյանի լիազորված ներկայացուցչի, Արմեն Շահինյանի և Նաիրա Անտոնյանի միջև կնքվել է բնակարանի բաժինների նվիրատվության պայմանագիր: Պայմանագիրը վավերացվել է նոտարական կարգով և դրա հիման վրա կատարվել է Նաիրա Անտոնյանի սեփականության իրավունքի պետական գրանցում:

4) 29.09.2003 թվականի ստացականի համաձայն՝ Արմեն Շահինյանը Երևանի Նոր Նորքի 4-րդ զանգվածի 2-րդ հատվածի 33ա շենքի թիվ 25 բնակարանի իր մասնաբաժինը նվիրել է Նաիրա Անտոնյանին, որի դիմաց ստացել է 830 (ութ հարյուր երեսուն) ԱՄՆ դոլար:

6) Նաիրա Անտոնյանի 07.08.2007 թվականին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության հետաքննչին տրված բացատրության համաձայն՝ ինքը Արսենիկ Մուխայեյանի ու Գոհար Մուխայեյանի հետ պայմանավորվել է, որ իրենց բաժինները նվիրատվության պայմանագրով նվիրեն իրեն, որպեսզի կարողանա այն վաճառել և ստացված գումարը բաժանել:

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

*1) վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք կամ իրեն կամ երրորդ անձին ուղղված գույքային իրավունք (պահանջ), կամ ազատում է կամ պարտավորվում է նրան ազատել իր կամ երրորդ անձի հանդեպ ունեցած գույքային պարտավորությունից: *Գույքի կամ իրավունքի հանդիսական հանձնման կամ հանդիսական պարտավորության առկայության դեպքում պայմանագիրը նվիրատվություն չի համարվում: Այդպիսի պայմանագրի նկատմամբ կիրառվում են նույն օրենսգրքի 306-րդ հոդվածի 2-րդ - մասով նախատեսված կանոնները:*

Նույն օրենսգրքի 306-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ շինծու գործարքը, այսինքն՝ մեկ այլ գործարքի քողարկման նպատակով կնքված գործարքը, առչկինչ է:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ գրավոր գործարքների նկատմամբ շինծու լինելու հիմքով առչկինչ գործարքի անվավերության հետևանքների կիրառման համար անհրաժեշտ է ապացուցել, որ՝

1. գործարքն իրականում կնքվել է ոչ այն ստորագրած անձանց միջև, կամ

2. այն ստորագրած անձանց կամքը չի համապատասխանում պայմանագրում շարադրվածին: Այսինքն, շինծու գործարքն առկա է այն դեպքում, երբ կողմերի միջև իրականում ծագում են իրավահարաբերություններ, սակայն դրանք իրենց բնույթով այլ են, քան այն իրավահարաբերությունները, որոնք կողմերը ցանկանում են ներկայացնել երրորդ անձանց (տե՛ս օրինակ՝ «ԱՎԱ» ՍՊԸ ընդդեմ Սերգեյ Գաբրիելյան և Վիոլետա Գաբրիելյան՝ պայմանագիրը վաղաժամկետ լուծելու, Սերգեյ և Վիոլետա Գաբրիելյաններին տարածքից վտարելու պահանջների մասին թիվ 3-89(ՏԳ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 01.02.2008 թվականի որոշումը):

Սույն գործի փաստերի առանձնահատկությունների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով պարզաբանման է ենթակա այն իրավական հարցադրումը, թե արդյո՞ք վեճի առարկա բնակարանի բաժինների նվիրատվության պայմանագիրը նպատակ է հետապնդել քողարկել առուվաճառքի պայմանագրի առկայությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական

հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը:

Սույն քաղաքացիական գործում առկա Նաիրա Անտոնյանի 07.08.2007 թվականի բացատրության, ինչպես նաև Երևանի Նոր Նորքի 4-րդ զանգվածի 2-րդ հատվածի 33ա շենքի թիվ 25 բնակարանի համասեփականատեր Արմեն Շահինյանի կողմից իր բաժնի նվիրատվության դիմաց դրամական փոխհատուցում ստացած լինելու փաստի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ իրականում կողմերի միջև կնքվել է բաժնի առուվաճառքի պայմանագիր, իսկ նվիրատվության պայմանագրով քողարկվել է կողմերի միջև իրականում ծագած առուվաճառքի իրավահարաբերությունը:

Այդ ապացույցները վկայում են նվիրատվության պայմանագրի հատուցելի լինելու, գույքի հանդիպական հանձնման մասին, որի պայմաններում Վերաքննիչ դատարանը պետք է կիրառեր ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունը:

*2) վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին (տես օրինակ՝ «Բնար-88» ՍՊԸ ընդդեմ ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության, 21.12.2006թ. Քաղ. գործ թիվ 3-2504/ՏԴ(գումար բռնագանձելու պահանջով)):

Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ վճռի թե՛ փաստական և թե՛ իրավական հիմնավորումը: Ըստ Վճռաբեկ դատարանի վերոհիշյալ որոշման՝ վճռի իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ նյութական իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, նվիրատվության գործարքն անվավեր ճանաչելու պահանջի նկատմամբ կիրառելով վիճահարույց գործարքների համար կիրառելի հայցային վաղեմության ժամկետի կանոնները, չի հիմնավորել նման գործարքի վիճահարույց լինելու հանգամանքը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 317-րդ հոդվածի համաձայն՝ առոչինչ գործարքի անվավերության հետևանքների կիրառման մասին հայցը կարող է ներկայացվել դրա կատարման օրվանից տասը տարվա ընթացքում: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործարքների անվավերության պահանջներով կիրառելի հայցային վաղեմության կանոնը ընտրելիս դատարանը նախ և առաջ պետք է գնահատման առարկա դարձնի հայցապահանջի հիմքը:

Մինչդեռ սույն քաղաքացիական գործով դատարանը, գնահատման առարկա չդարձնելով այն հանգամանքը, որ վեճի առարկա գործարքի անվավեր ճանաչման հայցապահանջի հիմքում դրվել է դրա շինծու լինելու հանգամանքը, դրա նկատմամբ կիրառել է վիճահարույց գործարքների համար կիրառելի հայցային վաղեմության ժամկետի կանոնները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար ՀՀ քաղաքացիական դատավարություն օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով վերանայվող դատական ակտը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

---

---

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.03.2008 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի քաղաքացիական դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՈՒՐՆԵՐ ԴԱՏԱՐԱՆ**

Վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի վճիռ

Քաղաքացիական գործ թիվ **3-439(ՎԴ)**  
**2008թ.**

Քաղաքացիական գործ թիվ 07-2640/2008թ.  
Նախագահող դատավոր՝ Ն.Հովսեփյան  
Դատավորներ՝ Վ.Թորոսյան  
Ռ.Հակոբյան

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Մասնակցությամբ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի հուլիսի 25-ին

քննարկելով Ռոբերտ Ամիրյանի վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.02.2008 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի Ռոբերտ Ամիրյանի, Իռա Ամիրյանի ընդդեմ Ավետիք Ամիրյանի՝ տան առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական մախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ հայցվորները խնդրել են անվավեր ճանաչել Ռոբերտ Ամիրյանի և Ավետիք Ամիրյանի միջև 19.06.2003 թվականին կնքված Երևանի Նորք-Մարաշ թիվ 115 տան առուվաճառքի պայմանագիրը և վերադարձնել գործարքով ստացածը:

Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 27.03.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 06.02.2008 թվականի վճռով հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ռոբերտ Ամիրյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

---

---

Վերաքննիչ դատարանը գնահատման առարկա չի դարձրել վեճի առարկա պայմանագիրը և դրա կնքումից հետո կողմերի միջև ծագած հարաբերությունները: Մասնավորապես, գնահատման առարկա չի դարձրել Ավետիք Ամիրյանի կողմից 20.06.2003 թվականին տրված պարտավորագիրը, որից հետևում է, որ կողմերի միջև իրականում կնքվել է ոչ թե առուվաճառքի, այլ փոխառության պայմանագիր, իսկ առուվաճառքի պայմանագիրը կնքվել է փոխառությամբ տրված գումարի վերադարձելիություն ապահովելու համար:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.02.2008 թվականի վճիռը և գործն ուղարկել նոր քննության:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

1. Ռոբերտ Ամիրյանի և Ավետիք Ամիրյանի միջև 19.06.2003 թվականին կնքվել է Երևանի Նորք-Մարաշի թիվ 115 տան վերաբերյալ առուվաճառքի պայմանագիր:

2. Պարտավորագրով Ավետիք Ամիրյանը պարտավորվել է վեց ամսվա ընթացքում Նորք-Մարաշի 115 տան հետ ոչ մի գործարք չկատարել, Ավետիք Ամիրյանի կողմից տրված պարտքը մարելուց հետո բնակարանը անվանափոխել Ռոբերտ Ամիրյանի անունով:

### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ *այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ շինծու գործարքը, այսինքն՝ մեկ այլ գործարքի բողոքկման նպատակով կնքված գործարքն առաջինն է:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ գրավոր գործարքների նկատմամբ շինծու լինելու հիմքով առաջինն գործարքի անվավերության հետևանքների կիրառման համար անհրաժեշտ է ապացուցել, որ՝

1. գործարքն իրականում կնքվել է ոչ այն ստորագրած անձանց միջև, կամ

2. այն ստորագրած անձանց կամքը չի համապատասխանում պայմանագրում շարադրվածին: Այսինքն՝ շինծու գործարքն առկա է այն դեպքում, երբ կողմերի միջև իրականում ծագում են իրավահարաբերություններ, սակայն դրանք իրենց բնույթով այլ են, քան այն իրավահարաբերությունները, որոնք կողմերը ցանկանում են ներկայացնել երրորդ անձանց: Շինծու գործարքի նկատմամբ, հաշվի առնելով դրա էությունը, կիրառվում են այն գործարքին վերաբերող կանոնները, որը կողմերն իրականում նկատի են ունեցել շինծու գործարքը կնքելիս:

(տե՛ս՝ Ա.Եփրեմյան ընդդեմ Ն.Մանվելյանի՝ անհիմն հարստացման գումարները վերադարձնելու պահանջի մասին թիվ 3-132/ՎԳ- քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին (տես օրինակ՝ «Քնար- 88» ՄՊԸ ընդդեմ ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության, 21.12.2006թ. Քաղ. գործ թիվ 3-2504/ՏԳ/ՏԳ, (գումար բռնագանձելու պահանջով):

Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ վճռի թե՛ փաստական, և թե՛ իրավական հիմնավորումը: Ըստ Վճռաբեկ դատարանի վերոհիշյալ որոշման՝ վճռի իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ նյութական իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանն եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածից հետևում է, որ դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և արդյունքում վճիռ կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին (տես, Անժելա Դազարյանը, Արփիկ և Արմինե Գասպարյաններն ընդդեմ Շուշանիկ Սարգսյանի, Ոսկեհատ, Նունե, Հրանուշ Գասպարյանների՝ ժառանգական գույքը ժառանգների միջև բաժանելու պահանջի մասին, ՀՀ վճռաբեկ դատարանի 12.12.2007 թվականի որոշում, քաղաքացիական գործ թիվ 3-1843/ՎԳ):

Մինչդեռ, սույն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանը, հայցի բավարարման հիմքում դնելով այն հանգամանքը, որ չկան հիմքեր Ռոբերտ Ամիրյանի և Ավետիք Ամիրյանի միջև 19.06.2003 թվականին կնքված առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու համար, պատշաճ գնահատման առարկա չի դարձրել Ավետիք Ամիրյանի կողմից 20.06.2003 թվականի տրված գրավոր պարտավորագիրը: Մասնավորապես, պարտավորագրով Ավետիք Ամիրյանը պարտավորվում է վեց ամսվա ընթացքում Նորք-Մարաշի 115 տան հետ ոչ մի գործարք չկատարել, իսկ Ավետիք Ամիրյանի կողմից տրված պարտքը մարելուց հետո բնակարանը անվանավորիս Ռոբերտ Ամիրյանի անունով:

Վերոնշյալ պարտավորագրից հետևում է, որ Ռոբերտ Ամիրյանի և Ավետիք Ամիրյանի միջև կնքված առուվաճառքի պայմանագրով նրանց միջև իրականում ծագել են այլ իրավահարաբերություններ, քան այն հարաբերությունները, որոնք կողմերը երրորդ անձանց ներկայացրել են առուվաճառքի պայմանագիրը կնքելիս: Մասնավորապես, առուվաճառքի պայմանագիրը Ավետիք Ամիրյանի համար հանդիսացել է երաշխիք հետագայում Ռոբերտ Ամիրյանին փոխառությամբ տրված գումարը հետ ստանալու համար, իսկ պարտավորագիրը վերջինիս համար հանդիսացել է երաշխիք հետագայում իրեն պատկանող տունը հետ վերադարձնելու համար:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի համաձայն, Վերաքննիչ դատարանի վճիռը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.02.2008 թվականի վճիռը և գործն ուղարկել Երևանի քաղաքացիական դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում  
Քաղաքացիական գործ թիվ 08-1541/2008թ.  
Նախագահող դատավոր՝ Տ.Սահակյան  
Դատավորներ՝ Կ.Հակոբյան  
Տ.Նազարյան

Քաղաքացիական գործ թիվ 3-539(ՎԳ)  
2008թ.

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի սեպտեմբերի 26-ին

քննարկելով Գագիկ Հարությունյանի վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.04.2008 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Սեյրան Խաչատրյանի ընդդեմ ՀՀ Սյունիքի մարզի Գորիս նոտարական տարածքի նոտար Լենա Գյուլնազարյանի, Հայկուշ Խաչատրյանի, Գագիկ Հարությունյանի՝ անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործով դատավարական նախապատմությունը.**

Գիմելով դատարան՝ հայցվորը խնդրել է անվավեր ճանաչել Գորիս քաղաքի Անկախության 7 հասցեով տարածքի նկատմամբ 27.06.2006 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը և սեփականության իրավունքի վկայականը:

Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ Դատարան) 26.10.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է: Սեփականության իրավունքի գրանցման վկայականն անվավեր ճանաչելու մասով քաղաքացիական գործի վարույթը կարճվել է:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 10.04.2007 թվականի որոշմամբ բողոքը մերժվել է, Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 26.10.2007 թվականի վճիռը թողել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Գագիկ Հարությունյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ - հոդվածի պահանջները, սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ - հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Դատարանը լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտության չի ենթարկել վիճելի գույքը ամուսինների ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսանալու փաստը հիմնավորող ապացույցները, և անտեսել է, որ Հայկուշ Խաչատրյանը վաճառել է իր սեփականությունը հանդիսացող տարածքի 1/2-րդ մասը և բնականաբար այս տեսակետից սխալ է անվավեր ճանաչել առուվաճառքի պայմանագիրը ամբողջությամբ, քանի որ բացակայում է անվավերության իրավական հիմքը: Գագիկ Հարությունյանը չգիտեր և չէր էլ կարող իմանալ, որ Սեյրան Խաչատրյանը համաձայնություն չէր տվել գույքը վաճառելու համար:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 10.04.2008 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Անկախության 7 հասցեով տարածքը համատեղ սեփականության իրավունքով պատկանել է ամուսիններ՝ Սեյրան և Հայկուշ Խաչատրյաններին:

2) Սեյրան Խաչատրյանի կինը՝ Հայկուշ Խաչատրյանը 27.05.2006 թվականին առուվաճառքի պայմանագրով տարածքը վաճառել է Գագիկ Հարությունյանին 20 միլիոն ՀՀ դրամով:

3) Վերոհիշյալ պայմանագիրը կնքելիս և նոտարական գրասենյակում վավերացնելիս Սեյրան Խաչատրյանի անունից լիազորագրով հանդես է եկել Հայկուշ Խաչատրյանը:

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքը հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի համաձայն՝ ամուսնության ընթացքում ամուսինների ձեռք բերած գույքը նրանց համատեղ սեփականությունն է, եթե այլ բան նախատեսված չէ նրանց միջև կնքված պայմանագրով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ համատեղ սեփականության մասնակիցներից յուրաքանչյուրն իրավունք ունի կնքել ընդհանուր գույքը տնօրինելու գործարքներ, եթե այլ բան նախատեսված չէ նրանց համաձայնությամբ: Համատեղ սեփականության մասնակիցներից մեկի կողմից կնքված՝ ընդհանուր սեփականության տնօրինման գործարքը կարող է անվավեր ճանաչվել մնացած մասնակիցների պահանջով՝ գործարք կնքող մասնակցի մոտ անհրաժեշտ լիազորությունների բացակայության դեպքում, եթե ապացուցվի, որ գործարքի մյուս կողմն իմացել է կամ ակնհայտորեն պետք է իմանար այդ մասին:

Նույն օրենսգրքի 319-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ այլ անձի անունից գործելու լիազորության բացակայությամբ կամ նման լիազորությունների սահմանազանցմամբ գործարքը կնքված է համարվում այն կնքած անձի անունից և ի շահ նրա, եթե մյուս անձը (ներկայացվողը) հետագայում ուղղակի հավանություն չի տալիս տվյալ գործարքին:

Վերը հիշատակված նորմերի վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք սերտորեն փոխկապակցված են և իրավակիրառական պրակտիկայում դրանցից յուրաքանչյուրը պետք է մեկնաբանվի մյուսների բովանդակության և տրամաբանության տիրույթում (տես օրինակ՝ 30.03.2007թ. Քաղ. գործ թիվ 3-459/ՏԳ, (բաժնե-

---

---

տոմսերի առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի մասին)):

Սույն գործի փաստերի համաձայն՝ ամուսիններ Սեյրան և Հայկուշ Խաչատրյանների միջև այլ բան նախատեսող համաձայնություն չի եղել: Այսինքն, Հայկուշ Խաչատրյանը՝ որպես համատեղ սեփականության մասնակից, ունեցել է համատեղ սեփականություն հանդիսացող գույքը տնօրինելու իրավունք: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Սեյրան Խաչատրյանի կողմից գույքի առուվաճառքի գործարքը անվավեր ճանաչելու պահանջը դատարանի կողմից կարող էր բավարարվել միայն Հայկուշ Խաչատրյանի մոտ վիճելի գործարքը կնքելու համար անհրաժեշտ լիազորությունների բացակայության և դրա մասին գործարքի մյուս կողմի՝ գնորդ Գագիկ Հարությունյանի կողմից իմանալու կամ դրա մասին ողջամտորեն ենթադրելու ակնհայտ հնարավորության առկայության փաստը ապացուցված համարելու դեպքում:

Դատարանը հաստատված է համարել, որ Գագիկ Հարությունյանը իմացել է կամ ակնհայտորեն պետք է իմանար գործարք կնքող մասնակցի մոտ անհրաժեշտ լիազորությունների բացակայության մասին, հիմք ընդունելով համատեղ սեփականության մասնակիցների (Հայկուշ Խաչատրյանի և Սեյրան Խաչատրյանի) ամուսիններ հանդիսանալու, ինչպես նաև լիազորագիրը տալու պահին Սեյրան Խաչատրյանի՝ կալանքի տակ գտնվելու մասին գնորդի (Գագիկ Հարությունյանի) տեղեկացված լինելը: Մինչդեռ, Դատարանի վճռում բացակայում են վերոնշյալ եզրահանգումները հիմնավորող որևէ ապացույց:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին (իրավական հիմնավորումները տես օրինակ՝ «Քնար-88» ՄՊԸ ընդդեմ ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության, 21.12.2006թ. Քաղ. գործ թիվ 3-2504/ՏԳ/ՏԳ, (գումար բռնագանձելու պահանջով)):

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործի դատաքննությամբ չի հիմնավորվել այն հանգամանքը, որ Գագիկ Հարությունյանը իմացել է կամ ակնհայտորեն պետք է իմանար համասեփականատերերի միջև համաձայնության բացակայության մասին:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի համաձայն, Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ, 240-241<sup>1</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.04.2008 թվականի որոշումը և գործն ուղարկել Հարավային քաղաքացիական դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒՐՆԵՐ ԴԱՏԱՐԱՆ**

Վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **3-558(ՎԴ)**  
**2008թ.**

Քաղաքացիական գործ թիվ 08-1724  
Նախագահող դատավոր՝ Ն.Հովսեփյան  
Դատավորներ՝ Վ.Թորոսյան  
Ռ.Հակոբյան

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի հոկտեմբերի 31-ին

քննարկելով Շողիկ Գարիբյանի վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.04.2008 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Շողիկ Գարիբյանի ընդդեմ Թամարա Վարդանյանի, Անահիտ Հակոբյանի, Արսեն Մխիթարյանի, երրորդ անձ՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Էրեբունու տարածքային ստորաբաժանման (այսուհետ՝ Կադաստր)՝ անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը, դրա հիման վրա կատարված պետական գրանցումը և տրված սեփականության իրավունքի վկայականն անվավեր ճանաչելու պահանջների մասին և ըստ հայցի Շողիկ Գարիբյանի ընդդեմ Անահիտ Հակոբյանի, երրորդ անձ Արսեն Մխիթարյանի՝ տան առուվաճառքի պայմանագիրը վավեր ճանաչելու և սեփականության իրավունքը ճանաչելու պահանջների մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործով կայացված դատական ակտի էությունը.**

Դիմելով դատարան՝ Շողիկ Գարիբյանը պահանջել է վավեր ճանաչել Անահիտ Հակոբյանի հետ կնքված տան առուվաճառքի պայմանագիրը և ճանաչել սեփականության իրավունքը Երևանի Բայդուկով փողոցի թիվ 17-րդ հասցեի տան նկատմամբ՝ պատասխանողին վճարելով տան արժեքի չվճարված գումարը:

Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանի 11.09.2006 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.01.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Վճռաբեկ դատարանի 06.07.2007 թվականի որոշմամբ վճռաբեկ բողոքը բավարարվել է. Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.01.2007 թվականի վճիռը բեկանվել է և գործն ուղարկվել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության՝ Թամարա Վարդանյանին գործին մասնակից չդարձնելու հիմքով:

---

---

Մեկ այլ հայցով դիմելով դատարան՝ Շողիկ Ղարիբջյանը պահանջել է անվավեր ճանաչել Անահիտ Հակոբյանի և Թամարա Վարդանյանի միջև 24.07.2006 թվականին կնքված Բայրուկով փողոցի թիվ 17-րդ տան և հողամասի առուվաճառքի պայմանագիրը, դրա հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը, տրված սեփականության իրավունքի վկայականը և Թամարա Վարդանյանին ընտանիքի հետ միասին վտարել Բայրուկով փողոցի թիվ 17-րդ տանից:

Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանի 21.11.2007 թվականի վճռով հայրը մերժվել է:

Վերաքննիչ դատարանի 07.01.2008 թվականի որոշմամբ վերը նշված քաղաքացիական գործերը միացվել են մեկ վարույթում:

Վերաքննիչ դատարանի 11.04.2008 թվականի որոշմամբ Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանի 11.09.2006 թվականի վճիռը բեկանվել և հայրը մերժվել է, իսկ 21.11.2007 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Շողիկ Ղարիբջյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Թամարա Վարդանյանը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի առաջին մասի պահանջը, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 300-րդ, 290-րդ, 296-րդ, 436-րդ, 303-րդ, 304-րդ, 306-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառվեն և կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 563-րդ, 163-ր հոդվածները, որոնք չպետք է կիրառվեն:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Անահիտ Հակոբյանը խուսափել է գործարքի նոտարական վավերացումից:

Վերաքննիչ դատարանի պնդումն այն մասին, որ «Մոնոլիտ Ռիելթի» ՍՊԸ-ի աշխատակից Արսեն Մխիթարյանի կողմից ապօրինություններ թույլ տալու համար ՀՀ Ոստիկանության Շենգավիթ բաժնում նախապատրաստվել են նյութեր, ուստի առուվաճառքի միջնորդական պայմանագիրն անօրինական է և չի կարող առաջացնել իրավական հետևանքներ, անհիմն է, քանի որ վերոհիշյալ պայմանագիրը կողմերի փոխադարձ համաձայնությամբ և օրենքի պահանջներին համապատասխան կնքված պայմանագիր է, դրա օրինականության հարցը երբևէ չի վիճարկվել:

Վերոգրյալի հիման վրա՝ վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 11.04.2008 թվականի որոշումը և փոփոխել այն կամ գործն ուղարկել նոր քննության:

## **2. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմքերը և հիմնավորումները.**

Անահիտ Հակոբյանի և Թամարա Վարդանյանի միջև բնակելի տան և հողամասի առուվաճառքի պայմանագիրը կնքվել է օրենքի պահանջների պահպանմամբ: Հետևաբար, այն անվավեր ճանաչելու հիմքեր չկան: Իսկ պայմանագիրը կնքելիս բնակելի տունը արգելադրված չի եղել:

## **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. 23.05.2006 թվականին հասարակ գրավոր ձևով կնքված պայմանագրի համաձայն՝ Անահիտ Հակոբյանը պարտավորվել է վաճառել, իսկ Շողիկ Ղարիբջյանը պարտավորվել

է 20.000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամով գնել Բայրուկով փողոցի թիվ 17 հասցեի տունը:

2. Շողիկ Ղարիբջանի և Անահիտ Հակոբյանի միջև 24.05.2006 թվականին կնքվել է փոխառության պայմանագիր, որով Անահիտ Հակոբյանին տրվել է 13.500 ԱՄՆ դոլար:

3. 24.07.2006 թվականին Անահիտ Հակոբյանի և Թամարա Վարդանյանի միջև կնքվել է Բայրուկովի փողոցի թիվ 17 բնակելի տան և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 562-րդ հոդվածի համաձայն՝ անշարժ գույքի վաճառքի պայմանագիրը կնքվում է գրավոր՝ կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով (450 հոդվածի 3-րդ կետ): Անշարժ գույքի վաճառքի պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 300-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե կողմերից մեկը լրիվ կամ մասնակի կատարել է նոտարական վավերացում պահանջող գործարքը, իսկ մյուս կողմը խուսափում է գործարքի նոտարական վավերացումից, դատարանն իրավունք ունի, գործարքը կատարած կողմի պահանջով, այն վավեր ճանաչել: Այդ դեպքում գործարքի հետագա նոտարական վավերացում չի պահանջվում:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին:

Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ վճռի թե՛ փաստական, և թե՛ իրավական հիմնավորումը: Ըստ Վճռաբեկ դատարանի վերոհիշյալ որոշման, վճռի իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ նյութական իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանն եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածից հետևում է, որ դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և արդյունքում վճիռ կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին (տես, Անժելա Ղազարյանը, Արփիկ և Արմինե Գասպարյաններն ընդդեմ Շուշանիկ Սարգսյանի, Ոսկեհատ, Նունե, Հրանուշ Գասպարյանների՝ ժառանգական գույքը ժառանգների միջև բաժանելու պահանջի մասին, ՀՀ վճռաբեկ դատարանի 12.12.2007 թվականի որոշում, քաղաքացիական գործ թիվ 3-1843(ՎԳ)):

Մինչդեռ, սույն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանը մերժելով գործարքը վավեր ճանաչելու մասին հայցապահանջը, պատշաճ գնահատման առարկա չի դարձրել Անահիտ Հակոբյանի և Շողիկ Ղարիբջանի միջև 23.05.2006 թվականին հասարակ գրավոր ձևով կնքված պայմանագիրը, ինչպես նաև Շողիկ Ղարիբջանի և Անահիտ Հակոբյանի միջև 24.05.2006 թվականին կնքված փոխառության պայմանագիրը, որով Անահիտ Հակոբյանին տրվել է 13.500 ԱՄՆ դոլար:

Մասնավորապես՝ վերոնշյալ պայմանագրերը վկայում են կողմերի միջև տան առուվաճառքի վերաբերյալ գործարքի առկայության, ինչպես նաև այն մասամբ կատարված լինելու՝ որոշակի գումար վճարված լինելու մասին: Մինչդեռ, հետագայում Աբահիտ Հակոբյանը խուսափել է առուվաճառքի գործարքն ավարտին հասցնելուց:

Հիմք ընդունելով վերոգյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Շողիկ Ղարիբջանի կողմից մասամբ կատարվել է նոտարական վավերացում պահանջող գործարքը, իսկ Ա-

---

---

նահիտ Հակոբյանը խուսափել է գործարքի նոտարական վավերացումից, հետևաբար, առուվաճառքի գործարքը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 300-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներին համապատասխան, ենթակա է վավեր ճանաչման:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի համաձայն, Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-240<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.04.2008 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի քաղաքացիական դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒՐՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում  
Քաղաքացիական գործ թիվ 08-805  
Նախագահող դատավոր՝ Լ.Գրիգորյան  
Դատավորներ՝ Գ.Մատինյան  
Ե.Խունդկարյան

Քաղաքացիական գործ թիվ **3-560(ՎԳ)**  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի հոկտեմբերի 31-ին

քննարկելով Գրիշա Երվանդյանի վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.04.2008 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Անահիտ Գևորգյանի ընդդեմ Գրիշա Երվանդյանի և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ կադաստր)՝ առուվաճառքի գործարքն վավեր ճանաչելու, այն կադաստրում գրանցելու, բնակարանի նկատմամբ պատասխանողների սեփականության իրավունքը դադարեցնելու, իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին և Գրիշա Երվանդյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Անահիտ Գևորգյանի և կադաստրի՝ սեփականության իրավունքի գրանցումը մասնակի անվավեր ճանաչելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործով կայացված դատական ակտի էությունը.**

Դիմելով դատարան՝ Անահիտ Գևորգյանը խնդրել է վավեր ճանաչել Սևան քաղաքի Նաիրյան 141/30 բնակարանի առուվաճառքի գործարքը, դադարեցնել պատասխանողների սեփականության իրավունքը բնակարանի նկատմամբ և անվավեր ճանաչել պատասխանողների սեփականության իրավունքի գրանցումը:

Դիմելով դատարան՝ Գրիշա Երվանդյանը խնդրել է անվավեր ճանաչել Անահիտ Գևորգյանի՝ վերոնշյալ բնակարանի 1/5-րդ մասի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցումը:

Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ Դատարան) 02.11.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժվել:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 04.04.2008 թվականի որոշմամբ Դատարանի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Գրիշա Երվանդյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

---

---

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի առաջին մասը, 47-րդ հոդվածի առաջին մասը, կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 297-րդ հոդվածը, որը չպետք է կիրառել, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 192-րդ հոդվածը, որը պետք է կիրառել:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը գործում առկա «ստացական» վերնագրված փաստաթուղթը չի հետազոտել բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Այսպես, վերոնշյալ փաստաթղթում արտացոլված այն փաստը, որ Նինա Վարդանյանը Անահիտ Գևորգյանի ամուսնուց ստացել է 2500 ԱՄՆ դոլար և ոչ մի պարտք ու պահանջ չունեն իրար նկատմամբ, չէր կարող հիմք հանդիսանալ հաստատված համարելու այն հանգամանքը, որ Նինա Վարդանյանը վերոնշյալ գումարը ստացել է որպես վիճելի բնակարանի վաճառքի գումար:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 04.04.2008 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

## **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունի հետևյալ փաստը՝

12.07.2000 թվականին կազմված «ՍՏԱՅԱԿԱՆ» վերնագրված փաստաթղթի համաձայն՝ «Ես Նինա Գևորգյանն ստացել եմ Հենրիկ Վաչագանի Ավետիսյանից երկու հազար հինգ հարյուր Ամերիկյան դոլար և ոչ մի պարտք ու պահանջ չունենք, որի համար ստորագրում եմ»:

## **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 300-րդ հոդվածի համաձայն՝ եթե կողմերից մեկը լրիվ կամ մասնակի կատարել է նոտարական վավերացում պահանջող գործարքը, իսկ մյուս կողմը խուսափում է գործարքի նոտարական վավերացումից, դատարանն իրավունք ունի, գործարքը կատարած կողմի պահանջով, այն վավեր ճանաչել: Այդ դեպքում գործարքի հետագա նոտարական վավերացում չի պահանջվում:

Ելնելով սույն նորմի բովանդակությունից՝ գործարքը վավերական ճանաչելու համար անհրաժեշտ է հաստատել հետևյալ 2 փաստերի միաժամանակյա առկայությունը՝

1. գործարքը լրիվ կամ մասնակի կատարված լինելը,

2. կողմի խուսափելը գործարքի վավերացումից:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին (իրավական հիմնավորումները տես օրինակ՝ «Քնար-88» ՍՊԸ ընդդեմ ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության, 21.12.2006թ. Քաղ. գործ թիվ 3-2504/ՏԳ/ՏԳ, (գումար բռնագանձելու պահանջով)):

Սինչդեռ, սույն քաղաքացիական գործով, Վերաքննիչ դատարանը գործարքը վավեր ճանաչելու հիմքում դնելով Նինա Գևորգյանի և Հենրիկ Ավետիսյանի կողմից ստորագրված «ստացական» վերնագրված փաստաթուղթը հաշվի չի առել, որ նրանում ոչ մի խոսք չկա անշարժ գույքի առուվաճառքի վերաբերյալ: Ինչ վերաբերում է Անահիտ Գևորգյանի՝ վիճելի բնակարանում հաշվառված լինելուն, ինչպես նաև՝ իր անվամբ վեճի առարկա բնակարանի մի մասի նկատմամբ սեփականության իրավունքի վկայական ձեռք բերե-

լուն, ապա նշված հանգամանքները չեն կարող վկայել ամբողջ բնակարանի առուվաճառքի գործարքի գոյության մասին:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ Վերաքննիչ դատարանի որոշումը գուրկ է իրավական հիմնավորումից, և այս առումով այն չի կարող լինել օրինական, համոզիչ, ինչպես նաև հեղինակավոր:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի համաձայն, Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-240<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.04.2008 թվականի որոշումը և գործն ուղարկել Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՈՒԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի վճիռ  
քաղաքացիական գործ թիվ 08-1551  
Նախագահող դատավոր՝ Ա.Խառատյան  
Դատավորներ Վ.Ավանեսյան  
Կ.Չիլինգարյան

Քաղաքացիական գործ **թիվ 3-486(ՎԴ)**  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ  
դատարան)

*նախագահությամբ* Հ.ՍԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՍԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի սեպտեմբերի 26-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.02.2008 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի Գայանե Հովհաննիսյանի, Դավիթ Բալասանյանի ընդդեմ Աջափնյակ և Դավթաշեն համայնքների դատախազության, երրորդ անձ Գևորգ Բալասանյանի՝ գույքն արգելանքից հանելու պահանջի մասին, և ըստ հակընդդեմ հայցի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների դատախազության (այսուհետ՝ դատախազություն) ընդդեմ Գևորգ Բալասանյանի, Գայանե Հովհաննիսյանի, Դավիթ Բալասանյանի, Հրայր Բալասանյանի՝ բնակարանի բաժինն առանձնացնելու և բռնագանձում տարածելու պահանջների մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան հացվորները պահանջել են հանել գույքն արգելանքից:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան դատախազությունը պահանջել է բնակարանի բաժինն առանձնացնել և բռնագանձում տարածել:

Աջափնյակ և Դավթաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ Դատարան) 30.05.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժվել:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 12.02.2008 թվականի վճռով հայցը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժվել:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել Գայանե Հովհաննիսյանը և Դավիթ Բալասանյանը:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորմամբ.

*Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ, 332-րդ, 337-րդ հոդվածները, որոնք չպետք է կիրառվեն:*

*Բողոքը բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանի կողմից կիրառված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի նորմերը վերաբերում են իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածին և դրա բաց թողման հետևանքներին: Մինչդեռ, տվյալ դեպքում վեճը վերաբերել է դատական ակտի կատարմանը, որի դեպքում հայցային վաղեմություն չի կարող կիրառվել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.02.2008 թվականի վճիռը և գործն ուղարկել նոր քննության:

**2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմքերը և փաստարկները.**

Առկա է դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտ, որով որևէ գումար ենթակա չէ բռնագանձման Գևորգ Բալասանյանից, ինչը նշանակում է, որ որևէ գումարի բռնագանձում չպետք է իրականացվի:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Աջափնյակ և Դավթաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 24.06.1999 թվականի դատավճռով Գևորգ Բալասանյանը դատապարտվել է ազատազրկման: Նույն դատավճռով որոշվել է Գևորգ Բալասանյանի տնտեսությունից հոգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 5.250 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ՝ որպես անհիմն շահառության ստացված գումար:

2. ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման Աջափնյակ և Դավթաշեն համայնքների բաժանմունքի հարկադիր կատարողի 11.12.2003 թվականի որոշմամբ Աջափնյակ և Դավթաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 24.06.1999 թվականի դատավճռի հիման վրա հարուցված կատարողական վարույթն ավարտվել է՝ Գևորգ Բալասանյանի տնտեսությունում գույք չհայտնաբերվելու պատճառաբանությամբ: Միաժամանակ, նույն որոշմամբ նշվել է, որ **արգելանք է դրվել համասեփականությանը Գևորգ Բալասանյանին պատկանող բնակելի տան վրա:** Որոշմանը պահանջատերը տեղեկացված է եղել:

3. Ընդհանուր գույքից Գևորգ Բալասանյանի բաժինն առանձնացնելու և դրա վրա բռնագանձում տարածելու վերաբերյալ պահանջ ներկայացվել է 21.03.2007թվականին:

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բաժնային կամ համատեղ սեփականության մասնակցի մոտ այլ գույքի անբավարարության դեպքում նրա պարտատերն իրավունք ունի ընդհանուր գույքից պարտապանի բաժինն առանձնացնելու պահանջ ներկայացնել՝ դրա վրա բռնագանձում տարածելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմություն է համարվում իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածը: Համաձայն նույն օրենսգրքի 332-րդ հոդվածի՝ հայցային վաղեմության ընդհանուր ժամկետը երեք տարի է: Նույն օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին մա-

---

---

սի համաձայն՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցային վաղեմության ժամկետի լրանալը, որի կիրառման մասին դիմել է վիճող կողմը, հիմք է դատարանի կողմից հայցը մերժելու մասին վճիռ կայացնելու համար:

Սույն քաղաքացիական գործի փաստերի համաձայն՝ հարկադիր կատարողի 11.12.2003 թվականի որոշմամբ պահանջատերը տեղեկացվել է իր իրավունքների չվերականգնման և դրանց վերականգնման նոր հնարավորության մասին, որ պահից և սկսվել է ընդհանուր գույքից պարտապանի բաժինն առանձնացնելու և դրա վրա բռնագանձում տարածելու պահանջով հայցային վաղեմության ժամկետի ընթացքը: Փաստորեն, 11.12.2003 թվականից պահանջատերը հնարավորություն է ունեցել ձեռնամուխ լինել իրականացնելու իր խախտված իրավունքների պաշտպանությունը, մինչդեռ, հայցով դատարան է դիմել միայն 21.03.2007 թվականին՝ հայցային վաղեմության ժամկետը լրանալուց հետո:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր չեն Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ, 332-րդ, 335-րդ և 337-րդ հոդվածները սխալ կիրառելու մասին բողոքում նշված պատճառաբանությունները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.02.2008 թվականի վճիռը թողնել օրինական ուժի մեջ:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Հայաստանի Հանրապետության  
վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի վճիռ  
Քաղաքացիական գործ թիվ 07-3212  
Նախագահող դատավոր՝ Ն.Հովսեփյան  
դատավորներ՝ Տ.Սահակյան  
Մ.Ասատրյան

Քաղաքացիական գործ թիվ **3-117 (ՎԳ)**  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

*նախագահությամ* Հ.ՍԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի փետրվարի 29-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Վասիլ և Վարդան Նիկողոսյանների վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.10.2007 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի Ալվարդ Դուկեյանի ընդդեմ Վասիլ և Վարդան Նիկողոսյանների՝ դրամական պարտավորությունները կետանցով կատարելու համար վնասի հատուցման պահանջի մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Ալվարդ Դուկեյանը պահանջել է Վասիլ և Վարդան Նիկողոսյաններից բռնագանձել 11.000.000 ՀՀ դրամը կետանցով վերադարձնելու համար հաշվարկված 8.866.000 ՀՀ դրամ վնասի գումար:

ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանի 02.08.2007 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 11.10.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Վասիլ և Վարդան Նիկողոսյանները: Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով:

---

---

1) *Դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածը, որը չպետք է կիրառեր:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

23.12.2000 թվականի և 10.04.2001 թվականի փոխառության պայմանագրերը կնքվել են Ալվարդ Դուկեյանի և Վարդան Նիկողոսյանի միջև: Այսինքն՝ Վասիլ Նիկողոսյանը այդ փոխառության պայմանագրերով կողմ չի հանդիսացել: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ կետանցով պարտավորության կատարման համար վնասը պետք է բռնագանձել նաև Վասիլ Նիկողոսյանից: Վասիլ Նիկողոսյանը միայն պարտավորագիր է գրել, որով պարտավորվել է իր սեփականության ներքո գտնվող Եղվարդի Սպանդարյան 19 հասցեի գույքը ձևակերպել Ալվարդ Դուկեյանի անվամբ, եթե Վարդան Նիկողոսյանը մինչև 31.12.2003 թվականը Ալվարդ Դուկեյանին չվերադարձնի փախառությամբ վերցրած գումարը, ինչը չի նշանակում, որ Վասիլ Նիկողոսյանը որևէ դրամական պարտավորություն է ստանձնել Ալվարդ Դուկեյանի նկատմամբ: Նշվածի հիման վրա պետք է եզրակացնել, որ Վերաքննիչ դատարանը չի կատարել գործում առկա ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն՝ խախտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի պահանջները:

2) *Դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ, 337-րդ, հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Փոխառության գումարի վերադարձման Վարդան Նիկողոսյանի պարտավորությունը պետք է կատարվեր 10.04.2002 թվականի դրությամբ: Ալվարդ Դուկեյանը հայցադիմում է ներկայացրել դատարան 06.06.2007 թվականին, այսինքն՝ բաց է թողել հայցային վաղեմության ժամկետը, որի կիրառման և հայցն այդ հիմքով մերժելու վերաբերյալ պատասխանողների կողմից դատարանին ներկայացվել է դիմում: Վերաքննիչ դատարանը պատճառաբանել է, որ Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով Վարդան Նիկողոսյանից փոխառության գումարը բռնագանձվել է 09.01.2006 թվականին, ուստի հայցային վաղեմության ժամկետը պետք է հաշվարկել այդ ժամանակահատվածից: Մինչդեռ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի հիմքով տվյալ դեպքում պարտավորության կատարման ժամկետի սկիզբ է համարվում 10.04.2002 թվականը, այլ ոչ թե Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանի վճռի կայացման օրը:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 11.10.2007 թվականի վճիռը և օրինական ուժ տալ ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանի 02.08.2007 թվականի վճռին:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 10.04.2001 թվականին Ալվարդ Դուկեյանի (փոխատու) և Վարդան Նիկողոսյանի (փոխառու) միջև կնքվել է փոխառության պայմանագիր, համաձայն որի՝ փոխատուի կողմից փոխառուին մեկ տարի ժամկետով տրամադրվել է 13.750.000 ՀՀ դրամ գումար:

2) 24.04.2003 թվականի պարտավորագրով Վասիլ Նիկողոսյանը պարտավորվել է Վարդան Նիկողոսյանի կողմից Ալվարդ Դուկեյանից նախկինում վերցված փոխառության գումարը մինչև 31.12.2003 թվականը չվերադարձվելու դեպքում՝ իր սեփականության ներքո գտնվող Եղվարդի Սպանդարյան 19 հասցեի տունը ձևակերպել Ալվարդ Դուկեյանի անվամբ:

3) ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանի օրինական ուժի մեջ մտած 09.01.2006 թվականի վճռով որոշվել է Վարդան Նիկողոսյանից բռնագանձել 11.000.000

դրամ, բռնագանձումը տարածելով Վարդան Նիկողոսյանի գույքի և Վասիլ Նիկողոսյանի սեփականության ներքո գտնվող Եղվարդի Սպանդարյան 19 հասցեի գույքի վրա:

4) Ալվարդ Դուլեյանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսների բռնագանձման պահանջը դատարան է ներկայացրել 06.06.2007 թվականին:

5) պատասխանողը առաջին ատյանի դատարանում գործի քննության ընթացքում միջնորդել էր կիրառել հայցային վաղեմություն:

**4. Վճռարեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռարեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռարեկ դատարանը գտնում է, որ՝

*1) բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Սույն քաղաքացիական գործով Վարդան Նիկողոսյանի և Ալվարդ Դուլեյանի միջև կնքված 23.12.2000 թվականի, 04.10.2001 թվականի փոխառության պայմանագրերի, ինչպես նաև Վասիլ Նիկողոսյանի կողմից տրված 24.04.2003 թվականի պարտավորագրի վերլուծությունից հետևում է, որ Ալվարդ Դուլեյանի հանդեպ գումար վճարելու պարտավորությունը կրում է Վարդան Նիկողոսյանը, իսկ Վասիլ Նիկողոսյանը կրում է միայն սահմանված ժամկետում այդ գումարը չվերադարձվելու դեպքում գույք հանձնելու պարտավորություն: Այսինքն՝ Վասիլ Նիկողոսյանը իր սեփականության ներքո գտնվող գույքով փոխառության գումարի վերադարձման կապակցությամբ որոշակի ապահովվածություն է երաշխավորել Ալվարդ Դուլեյանին, որպիսի պայմաններում փոխառության գումարի վերադարձման կետանցի դեպքում Վասիլ Նիկողոսյանը չի կարող կրել այդ գումարին հաշվարկված տոկոսների վճարման պարտավորություն:

Վերաքննիչ դատարանի եզրահանգումն այն մասին, որ կետանցով վճարված գումարներին հաշվեգրված տոկոսների վճարման պարտավորությունը կրում է նաև Վասիլ Նիկողոսյանը, քանի որ ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանի 09.01.2006 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով գումարի բռնագանձումը տարածվել է նաև Վասիլ Նիկողոսյանի սեփականության ներքո գտնվող գույքի վրա, հիմնավոր չէ, քանի որ նշված վճռով որոշվել է փոխառության գումարը բռնագանձել միայն Վարդան Նիկողոսյանից՝ Վասիլ Նիկողոսյանի կողմից տրված պարտավորագրի հիմքով բռնագանձումը տարածելով նաև վերջինիս սեփականության ներքո գտնվող Եղվարդի Սպանդարյան 19 հասցեի գույքի վրա, ինչը նույնպես չի նշանակում, որ Վասիլ Նիկողոսյանը կրում է Վարդան Նիկողոսյանին փոխառությամբ տրված գումարի վերադարձման պարտավորություն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ: Վճռարեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը օբյեկտիվորեն չի գնահատել գործով ձեռք բերված ապացույցները, մասնավորապես՝ ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանի 09.01.2006 թվականի օրինական ուժի մեջ մտած վճիռը, ինչպես նաև Վասիլ Նիկողոսյանի կողմից տրված 24.04.2003 թվականի պարտավորագիրը:

*2) բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ:*

---

---

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելու, դրանք վերադարձնելուց խուսափելու, վճարման այլ կետանցով դրանք օգտագործելու, կամ այլ անձի հաշվին անհիմն ստանալու կամ խնայելու դեպքերում այդ գումարին վճարվում են տոկոսներ: Տոկոսները հաշվարկվում են կետանցի օրվանից մինչև պարտավորության դադարման օրը՝ ըստ համապատասխան ժամանակահատվածների համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքների:

Նույն օրենսգրքի 337-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին: Այդ կանոնից բացառությունները սահմանվում են սույն օրենսգրքով եւ այլ օրենքներով:

Ալվարդ Ղուկեյանի և Վարդան Նիկողոսյանի միջև 10.04.2001 թվականին կնքված փոխառության պայմանագրով գումարը Վարդան Նիկողոսյանին է տրամադրվել մեկ տարի ժամկետով: Այսպիսով, Ալվարդ Ղուկեյանին վերադարձման ենթակա դրամական միջոցները Վարդան Նիկողոսյանի կողմից առանց իրավական հիմքի պահվել են 11.04.2002 թվականից սկսած, հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները պահանջելու իրավունքը Ալվարդ Ղուկեյանի մոտ ծագել է հենց այդ պահից:

Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ալվարդ Ղուկեյանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսների բռնագանձման պահանջը դատարան է ներկայացրել 06.06.2007 թվականին, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցային վաղեմությունը պետք էր հաշվարկել սկսած 11.04.2002 թվականից: Հետևաբար, հայցվորը Վարդան Նիկողոսյանից կարող է պահանջել վճարելու ՀՀ - քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները սկսած 06.06.2004 թվականից մինչև պարտավորության կատարման պահը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով, Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար Վերաքննիչ դատարանի վճիռը բեկանելու համար:

Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ վճռաբեկ բողոքի համար սահմանված պետական տուրքի վճարումը հետաձգվել է, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ հարցին պետք է անդրադառնալ գործի նոր քննության ժամանակ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.10.2007 թվականի վճիռը և ուղարկել Հյուսիսային քաղաքացիական դատարան՝ նոր քննության:

2. Վճռաբեկ բողոքի համար սահմանված պետական տուրքի հարցին անդրադառնալ գործի նոր քննության ժամանակ:

3. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ տնտեսական դատարանի վճիռ  
Քաղաքացիական գործ թիվ Տ-2666/2007թ.  
Դատավոր՝ Ե.Խունդկարյան

Քաղաքացիական գործ թիվ **3-27(ՏԳ)**  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Հ.ՍԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՍԿԻՏՈՒՄՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՂԱՆՅԱՆԻ

2008 թվականի փետրվարի 29-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Թամամ» արտադրական կոդպերատիվի (այսուհետ՝ Կազմակերպություն) վճռաբեկ բողոքը ՀՀ տնտեսական դատարանի 09.11.2007 թվականի վճռի դեմ՝ ըստ Կազմակերպության հայցի ընդդեմ «ԱՍ-ԿԱ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն)՝ 22.533.430 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Կազմակերպությունը պահանջել է Ընկերությունից բռնագանձել 22.533.430 ՀՀ դրամ, որից 9.557.614 ՀՀ դրամը՝ մատակարարված դիզելային վառելիքի և բենզինի դիմաց չվճարված գումար, 12.975.816 ՀՀ դրամը՝ մատակարարման պայմանագրով նախատեսված տուգանքի գումար, ինչպես նաև այդ գումարի նկատմամբ հաշվարկել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսներ:

ՀՀ տնտեսական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 09.11.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ 9.557.614 ՀՀ դրամ պարտավորության և 2.389.404 ՀՀ դրամ տուգանքի մատով, իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի հիմքով տոկոսների բռնագանձման պահանջի մատով մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կազմակերպությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) Դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդվածը, որը չպետք է կիրառել, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ հոդվածը, որը պետք է կիրառել:

---

---

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Դատարանը, կիրառելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդվածը, հաստատված է համարել, որ պայմանագրով նախատեսված և հայցվորի կողմից պահանջվող գումարը ակնհայտորեն անհամաչափ է 9.557.614 ՀՀ դրամ պարտավորության չվճարման հետևանքների և որպես համաչափ տուգանքի չափ սահմանել է հայցվող գումարի 25%-ը՝ 2.389.404 ՀՀ դրամը:

Մինչդեռ դատարանը չի հիմնավորել իր վերոնշյալ եզրահանգումը:

Բացի այդ, անհիմն է դատարանի եզրահանգումն այն մասին, որ մատակարարը անբարեխիղճ ձևով է իրականացրել իր քաղաքացիական իրավունքները, քանի որ պարտապանից ավելի վաղ չէր պահանջել պարտավորության կատարումը: Մասնավորապես դատարանը անտեսել է այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն՝ Կազմակերպությունը իր քաղաքացիական իրավունքները իրականացնում է իր հայեցողությամբ:

2) *Դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր:*

Գործում եղած ապացույցներով և Դատարանի վճռով միանշանակ հաստատվել է, որ Ընկերությունը թույլ է տվել դրամական պարտավորությունների կետանց: Հայցադիմումին կից ներկայացված տուգանքի հաշվարկներում Կազմակերպությունը ճշգրիտ և բավարար տեղեկություններ է ներկայացրել յուրաքանչյուր օրվա համար Ընկերության կողմից չկատարված դրամական պարտավորությունների գումարների մասին: Ինչ վերաբերում է բանկային տոկոսի՝ համապատասխան ժամանակահատվածների համար սահմանված դրույքաչափերի վերաբերյալ Կազմակերպության կողմից որևէ ապացույց չներկայացնելու դատարանի պատճառաբանությանը, ապա այն հիմնավոր չէ, քանի որ նշված դրույքաչափերը սահմանվել են ՀՀ կենտրոնական բանկի համապատասխան իրավական ակտերով, հրապարակվել են օրենքով նախատեսված կարգով և դրանք պետք է հայտնի լինեին Դատարանին:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Դատարանի 09.11.2007 թվականի վճիռը հայցապահանջների մերժված մասով և գործն ուղարկել նոր քննության կամ այդ մասով փոփոխել Դատարանի վճիռը և հայցապահանջները բավարարել:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

1) 01.10.2005 թվականի թիվ 19 պայմանագրի համաձայն՝ Կազմակերպությունը պարտավորվել է Ընկերությանը մատակարարել հաշիվ-ապրանքագրով դուրս գրված հեղուկ վառելիքի, քսայուղերի կամ այլ ապրանքների համապատասխան քանակությունը՝ ամբողջությամբ կամ մաս-մաս, իսկ Ընկերությունը պարտավորվել է 10 օրվա ընթացքում վճարել Կազմակերպությանը, վճարումն ուշացնելու դեպքում յուրաքանչյուր ուշացած օրվա համար վճարել 0,15 տոկոսի չափով տուգանք:

2) 2005 թվականի դեկտեմբերից մինչև 2006 թվականի օգոստոս ամիսների ընթացքում Կազմակերպության կողմից մատակարարված ապրանքների դիմաց դրամական պարտավորությունները պատշաճ չկատարելու հետևանքով Ընկերությունը պարտք է մնացել 9.557.614 ՀՀ դրամ:

### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

1) *բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 369-րդ հոդվածի համաձայն՝ տուժանք (տուգանք, տույժ) է համարվում օրենքով կամ պայմանագրով որոշված այն դրամական գումարը, ո-

րը պարտապանը պարտավոր է վճարել պարտատիրոջը՝ պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում՝ ներառյալ կատարման կետանցի դեպքում: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդվածի համաձայն՝ եթե վճարման ենթակա տուժանքն ակնհայտորեն անհամաչափ է պարտավորության խախտման հետևանքներին, դատարանն իրավունք ունի պակասեցնել այն:

Վերոնշյալից հետևում է, որ տուժանքը պարտավորությունների կատարումն ապահովող երաշխիք է: Այն նպատակաուղղված է ապահովելու պարտապանի կողմից պարտավորության կատարումը, իսկ դրա չկատարման կամ անպատշաճ կատարման դեպքում նրա համար նախատեսել գույքային անբարենպաստ հետևանքներ՝ դրամական պատասխանատվություն, իսկ դատարանը կոչված է ապահովելու սահմանված տուժանքի չափի և պարտավորության խախտման հետևանքների ողջամիտ հարաբերակցությունը: Տուժանքը պակասեցնելու դատարանի իրավունքը կոչված է կանխելու անձի կողմից իր քաղաքացիական իրավունքների իրականացման չարաշահումը:

Յուրաքանչյուր դեպքում տուժանքը պակասեցնելիս դատարանը առաջին հերթին պետք է գնահատման առարկա դարձնի այն հարցը, թե պայմանագրով նախատեսված տուժանքը որքանով է անհամաչափ պարտավորության խախտման հետևանքներին:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին (տես օրինակ՝ «Քնար-88» ՍՊԸ ընդդեմ ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության, 21.12.2006թ. Քաղ. գործ թիվ 3-2504/ՏԳ/ՏԳ, (գումար բռնագանձելու պահանջով)):

Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ վճռի թե՛ փաստական և թե՛ իրավական հիմնավորումը: Ըստ Վճռաբեկ դատարանի վերոհիշյալ որոշման՝ վճռի իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ նյութական իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Վճռում ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Վճռի իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա վճռի իրավակիրառ գործառույթը, ընդգծում դատական գործունեության և դատական վճռի օրինականությունը:

Մինչդեռ սույն քաղաքացիական գործով Դատարանը, հաստատված համարելով, որ պայմանագրով նախատեսված և հայցվորի կողմից պահանջվող գումարի չափը ակնհայտորեն անհամաչափ է պարտավորության չկատարման հետևանքներին, չի նշել այդ եզրահանգումը հիմնավորող որևէ հանգամանք:

Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում նաև Դատարանի եզրահանգումն այն մասին, որ մատակարարը անբարեխիղճ ձևով է իրականացրել իր քաղաքացիական իրավունքները, քանի որ պարտապանից ավելի վաղ չէր պահանջել պարտավորության կատարումը:

Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պայմանների ու պահանջների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան:

Նույն օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք իրենց պատկանող քաղաքացիական իրավունքները՝ ներառյալ դրանց պաշտպանության իրավունքը, իրականացնում են իրենց հայեցողությամբ:

---

---

Վերոնշյալից հետևում է, որ անձը ազատ է որոշելու իր քաղաքացիական իրավունքների իրականացման պահը, ինչը չի կարող մեկնաբանվել ի վնաս վերջինիս և գնահատվել որպես իր իրավունքների անբարեխիղջ իրականացում: Դեռ ավելին, կետանցող պարտապանն է խախտում պարտատիրոջ իրավունքները և կրում այդ խախտման բացասական հետևանքների ռիսկը:

2) բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի համաձայն՝ ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելու կամ այլ անձի հաշվին անհիմն ստանալու կամ խնայելու դեպքերում այդ գումարին վճարվում են տոկոսներ: Տոկոսները հաշվարկվում են կետանցի օրվանից մինչև պարտավորության դադարման օրը՝ ըստ համապատասխան ժամանակահատվածների համար ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքների: Սույն կետով նախատեսված կարգը գործում է, եթե վնասի հատուցման կամ տոկոսի այլ չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Եթե օրենքով կամ պայմանագրով վնասի հատուցման կամ տոկոսի այլ չափ է նախատեսված որոշակի ժամանակահատվածի համար, ապա սույն կետով նախատեսված կարգը չի գործում միայն տվյալ ժամանակահատվածում:

Սույն քաղաքացիական գործով դատարանը մերժել է հայցապահանջի՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի հիմքով տոկոսների բռնագանձման պահանջը՝ վճռի հիմքում դնելով այն հանգամանքը, որ հայցվորի կողմից չներկայացվեց ոչ պահանջվող բանկային տոկոսների վերաբերյալ հաշվարկ և ոչ էլ տոկոսի՝ համապատասխան ժամանակահատվածների համար սահմանված դրույքաչափի վերաբերյալ որևէ ապացույց:

Դատարանի վճռի հիմքում դրված վերոնշյալ պատճառաբանությունը Վճռաբեկ դատարանը գտնում է անհիմն, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված բանկային տոկոսների դրույքաչափերը սահմանվում են ՀՀ կենտրոնական բանկի իրավական ակտերով և հրապարակվում են օրենքով սահմանված կարգով: Հետևաբար, դրանք հայցվորի կողմից ներկայացնելու անհրաժեշտությունը բացակայում է:

Իսկ ինչ վերաբերում է բանկային տոկոսների վերաբերյալ հաշվարկ չներկայացնելու վերաբերյալ Դատարանի պատճառաբանությանը, ապա այն նույնպես անհիմն է, քանի որ դրա չափը կախվածության մեջ է դրվում պարտավորության դադարման օրվանից, այսինքն պարտավորության կատարման պահից: Հետևաբար դրանք հայցվորի կողմից ներկայացնելու անհրաժեշտությունը նույնպես բացակայում է:

Սինդեռ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածից հետևում է, որ վնասի հատուցման կամ պայմանագրային պարտավորությունները չկատարելու կետանցի համար սահմանված պատասխանատվության այլ կարգի առկայության դեպքում կամ եթե տոկոսի (տուժանքի) այլ չափ նախատեսված է պայմանագրով, ապա նույն հոդվածի 1-ին մասով սահմանված կարգը չի գործում: Օրենսդրության մնան ձևակերպումը կոչված է ապահովելու կրկնակի պատասխանատվության անթույլատրելիության սկզբունքը: ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում ընդունված որոշումներով արդեն ընդգծել է, որ այդ սկզբունքը բխում է ՀՀ Սահմանադրությունից և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի դրույքներից և այն պետք է պահպանվի բոլոր պետական մարմինների կողմից (տես Աշխեն Ենգոյանն ընդդեմ Երևանի քաղաքապետի՝ Երևանի քաղաքապետի վարչական իրավախախտումների գործերով հանձնաժողովի 15.09.2006 թվականի որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին ՀՀ վճռաբեկ դատարանի 09.11.2007 թվականի որոշումը քաղաքացիական գործով թիվ 3-1670(ՎԴ)): Սույն գործով հաստատված է, որ Կազմակերպության և Ընկերության միջև 01.10.2005 թվականին կնքված թիվ 19 պայմանագրով ապրանքի դիմաց վճարումն ուշացնելու համար սահմանված է տուգանք 0,15 տոկոսի չափով: Հետևաբար Ընկերու-

յան կողմից դրամական պարտավորությունները պատշաճ չկատարելու համար պայմանագրով արդեն նախատեսված է պատասխանատվություն: Ուստի վերջինիցս պայմանագրով նախատեսված տոկոսով տուգանքից բացի պայմանագրային պարտավորությունների կետանցի համար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսներ գանձվել չեն կարող:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի առաջին հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար ՀՀ քաղաքացիական դատավարություն օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով վերանայվող դատական ակտըն բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ տնտեսական դատարանի 09.11.2007 թվականի վճիռը՝ պայմանագրային տուգանք 12.975.816 ՀՀ դրամ բռնագանձելու հայցը մերժելու մասով և գործն այդ մասով ուղարկել ՀՀ Հարավային քաղաքացիական դատարան՝ նոր քննության: Վճիռը մնացած մասով թողնել օրինական ուժի մեջ:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում  
Քաղաքացիական գործ թիվ 08-981  
Նախագահող դատավոր՝ Գ. Մատինյան  
Դատավորներ՝ Լ. Գրիգորյան  
Ե. Խունդկարյան

Քաղաքացիական գործ թիվ **3-338(ՎԳ)**  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ  
դատարան)

*նախագահությամբ* Հ.ՍԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի մայիսի 23-ին,

դռնբաց դատական նիստում, քննելով Ռուբիկ Թադևոսյանի վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.02.2008 թվականի որոշման դեմ՝ ըստ Նշան Չուքիյանի հայցի ընդդեմ «Կապիտալ Ս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) և Ռուբիկ Թադևոսյանի՝ գումարը, տոկոսները բռնագանձելու և վնասը հատուցելու պահանջների մասին,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Գիմելով դատարան՝ Նշան Չուքիյանը պահանջել է Ընկերությունից և Ռուբիկ Թադևոսյանից բռնագանձել 31.299 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ և 1.030.410 ՀՀ դրամ՝ որից 15.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամն որպես վճարված նախավճարի գումար և 15.000 ԱՄՆ դոլարի համարժեք ՀՀ դրամը՝ պայմանագրով նախատեսված նախավճարի կրկնապատիկի գումար, 226.410 ՀՀ դրամը՝ որպես վճարված պետական տուրքի գումար, իսկ 804.000 ՀՀ դրամը՝ որպես խախտված իրավունքի վերականգման համար կատարած ծախսի հատուցում:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 08.11.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 27.02.2008 թվականի որոշմամբ Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 08.11.2007 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ռուբիկ Թադևոսյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Նշան Չուֆիլյանը:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասը, կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ և 421-րդ հոդվածները, որոնք չպետք է կիրառեր և չի կիրառել նույն օրենսգրքի 300-րդ, 304-րդ և 445-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել գործում առկա 15.01.2007 թվականի երաշխավորության պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր): Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ վերոնշյալ պայմանագիրը վերաբերում է անշարժ գույքի սեփականաշնորհմանը, ինչպես նաև այդ գույքի վաճառքին: Հետևաբար, այն իրենից ներկայացնում է խառը պայմանագիր, որում առկա են նաև նախնական պայմանագրի կնքման համար նախատեսված պայմաններ: Նշված պայմանագրի կնքման կարգը սահմանված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 445-րդ - հոդվածով, որն էլ կողմերը չեն պահպանել: Այն կնքման պահից առաջին էր, քանի որ անշարժ գույքի վերաբերյալ ցանկացած պայմանագիր ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրա բացակայության դեպքում այն առաջին է գործարք է:

Այսինքն, տվյալ պարագայում, Ռուբիկ Թադևոսյանը պարտավոր է Նշան Չուֆիլյանին վերադարձնել միայն այն գումարը, որն ստացել է, այլ ոչ թե՝ վճարված գումարի կրկնապատիկը և տույնները:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 27.02.2008 թվականի որոշումը և գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:

**2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները.**

Կողմերի միջև կնքած 15.01.2007 թվականի երաշխավորության պայմանագիրն որպես իրավական հետևանք չի նախատեսում հետագայում պայմանագրի 1.2 կետով նախատեսված հողատարածքի և նշված պայմանագրի առուվաճառքի պարտադիր կնքում, հետևաբար, այս պայմանագիրը չի կարող դիտվել որպես անշարժ գույքի առուվաճառքի նախնական պայմանագիր: Վիճարկվող պայմանագրով գույքը հանձնելու ժամանակի և պայմանների վերաբերյալ որևէ հիշատակում չկա, ինչը պարտադիր պայման է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը կնքելիս, ինչպես նաև նախնական պայմանագիրը կնքելիս:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Պայմանագրի 1.2. կետի համաձայն՝ Ռուբիկ Թադևոսյանը պարտավորվում է սեփականաշնորհել 02.10.2003 թվականի թիվ 0049138 վարձակալության վկայականով իրեն մինչև 2013 թվականը վարձակալության տրամադրված 0,25 հա մակերեսով հողատարածքը և այն վաճառել Նշան Չուֆիլյանին 1 (մեկ) քառակուսի մետրը՝ 72 ԱՄՆ դոլարին համարժեք հաշվարկով, որի համար Ռուբիկ Թադևոսյանն ստանում է 15000 (տասնհինգ հազար) ԱՄՆ դոլարին համարժեք դրամ նախավճար:

2. Պայմանագրի 1.3 կետի համաձայն՝ Ռուբիկ Թադևոսյանը պարտավորվում է սույն պայմանագրի 1.2. կետում նշված իր պարտավորությունը կատարել մինչև 2007 թվականի մարտի 30-ը և Նշան Չուֆիլյանի հարցումներով պետք է տրամադրի բանավոր կամ գրավոր տեղեկատվություն դրա ընթացքի վերաբերյալ:

---

---

3. Պայմանագրի 1.4 կետի համաձայն՝ Ռուբիկ Թադևոսյանն իր կողմից սույն պայմանագրի 1.2. կետով ստանձնած պարտավորության չկատարման դեպքում պարտավորվում է Նշան Չուֆիլյանին վերադարձնել վճարված նախավճարի կրկնապատիկը:

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.**

Քննելով վճռաբեկ բողոքը վերը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն *հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կողմերը կարող են կնքել օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված մի քանի պայմանագրերի տարրեր պարունակող պայմանագիր (խառը պայմանագիր): Խառը պայմանագրի կողմերի հարաբերությունների նկատմամբ համապատասխան մասերով կիրառվում են այն պայմանագրերի մասին կանոնները, որոնց տարրերը պարունակվում են խառը պայմանագրում, եթե այլ բան չի բխում կողմերի համաձայնությունից կամ խառը պայմանագրի էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նախնական պայմանագրով կողմերը պարտավորվում են ապագայում կնքել գույք հանձնելու, աշխատանքներ կատարելու կամ ծառայություններ մատուցելու մասին պայմանագիր (հիմնական պայմանագիր)՝ նախնական պայմանագրով նախատեսված պայմաններով:

Սույն օրենսգրքի 395-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նախավճար է համարվում այն դրամական գումարը, որ պայմանավորվող կողմերից մեկը պայմանագրով հասանելիք վճարների հաշվին տալիս է մյուս կողմին՝ իբրև պայմանագրի կնքման ապացույց և դրա կատարման ապահովում:

Սույն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանն Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 08.11.2007 թվականի վճիռը թողնելով օրինական ուժի մեջ, որոշման պատճառաբանական հիմքում դրել է այն հանգամանքը, որ կողմերի միջև իրականում կնքվել է երաշխավորության պայմանագիր:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը պատշաճ գնահատման առարկա չի դարձրել Նշան Չուֆիլյանի և Ռուբիկ Թադևոսյանի միջև կնքված պայմանագիրը: Իրականում կողմերի միջև իրականում կնքվել է խառը պայմանագիր, որը պարունակում է անշարժ գույքի առուվաճառքի նախնական պայմանագրի և նախավճարի տարրեր:

Վճռաբեկ դատարանի նման եզրահանգման համար հիմք է հանդիսանում այն հանգամանքը, որ պայմանագրի 1.2. կետը պարունակում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 445-րդ հոդվածով նախատեսված նախնական պայմանագրի բոլոր պարտադիր վավերապայմանները: Ադալտիք են՝ ապագայում հիմնական առուվաճառքի պայմանագրի կնքման վերաբերյալ համաձայնություն, հիմնական պայմանագրի առարկան (***0,25 հա մակերեսով հողատարածքը***), ինչպես նաև հիմնական պայմանագրով հանձնման ենթակա անշարժ գույքի գինը (***1 (մեկ) քառակուսի մետրը՝ 72 ԱՄՆ դոլարին համարժեք հաշվարկով***): Պայմանագրի 1.3. կետով նախատեսվել է այն ժամկետը, որի ընթացքում կողմերը պարտավորվել են կնքել հիմնական պայմանագիրը:

Բացի այդ, պայմանագրի 1.4-րդ կետով նախատեսվում է պայմանագրի կնքման ապահովում՝ նախավճարի տեսքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 445-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նախնական պայմանագիրը կնքվում է հիմնական պայմանագրի համար սահմանված ձևով, իսկ եթե

հիմնական պայմանագրի ձևը սահմանված չէ՝ գրավոր: Նախնական պայմանագրի ձևի մասին կանոնները չպահպանելն այն դարձնում է առոչինչ:

Սույն օրենսգրքի 562-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անշարժ գույքի վաճառքի պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կողմերի միջև 15.01.2007 թվականին կնքված գործարքի առուվաճառքի նախնական պայմանագրի վերաբերյալ պայմանն առոչինչ է և չի կարող հանգեցնել իրավաբանական հետևանքների:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 338-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հիմնական պարտավորության անվավերությունը հանգեցնում է այն ապահովող պարտավորության անվավերության, եթե այլ բան սահմանված չէ օրենքով:

Հիմնական պայմանագրի անվավերության դեպքում նախավճարի պայմանագրի անվավերության վերաբերյալ օրենքով այլ բան նախատեսված չլինելու պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անվավեր է նաև Պայմանագրի 1.4. կետով սահմանված հիմնական պայմանագրի պարտավորության կատարարումն ապահովված նախավճար վճարելու պարտավորության պայմանը:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Նշան Չուֆիլյանի և Ռուբիկ Թադևոսյանի միջև կնքված պայմանագրի առոչինչ լինելու փաստով կողմերի միջև չեն կարող առաջանալ նաև տոկոսների և նախավճարի վճարման հետ կապված լրացուցիչ պարտավորական իրավահարաբերություններ:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար ՀՀ քաղաքացիական դատավարություն օրենսգրքի 227-րդ և 228-րդ - հոդվածների ուժով վերանայվող դատական ակտը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.02.2008 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի քաղաքացիական դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒՐՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի վճիռ  
Քաղաքացիական գործ թիվ 3940/2007թ.  
Նախագահող դատավոր՝ Ն.Հովսեփյան  
Դատավորներ՝ Տ.Սահակյան  
Դ.Խաչատրյան

Քաղաքացիական գործ թիվ **3-356(ՎԴ)**  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Հ.ՍԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի մայիսի 23-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Գրանդ» ապահովագրական ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.12.2007 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի Դավիթ Դավթյանի, Ալիսա Ջոբաբուրյանի ընդդեմ Ընկերության՝ առանց որևէ նախապայմանի 20.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ վճարելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ հայցվորները պահանջել են ճանաչել Ընկերությունից առանց նախապայմանի 20.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ ստանալու իրավունքը:

Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 16.05.2007 թվականի վճռով հայցը մերժվել է:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 19.12.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 218-րդ հոդվածը, 53-րդ հոդվածի 1-ին մասը, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 985-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությամբ չի գնահատել Ընկերության և «Արմավիա» Ավիաընկերություն ՍՊԸ-ի (Կազմակերպության) միջև 26.12.2005 թվականին կնքված ապահովագրական վկայագիրը, ինչով հավաստվում է, որ տվյալ պայմանագրով շահառու հանդիսացել է Կազմակերպությունը, այլ ոչ թե Արման Դավթյանը կամ նրա ժառանգները, և տվյալ պայմանագրերով ապահովագրվել են Կազմակերպության գույքային շահերը՝ կապված անձնակազմի կյանքին և առողջությանը հասցված վնասի հետ:

Վերաքննիչ դատարանը խախտել է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ ապացույցների թույլատրելիության կանոնը, այն է՝ անձնական ապահովագրության պայմանագրի բացակայության պայմաններում հիմնավոր է համարել այդպիսի պայմանագրի առկայությունը:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 19.12.2007 թվականի վճիռը և օրինական ուժ տալ Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին տայանի դատարանի 16.05.2007 թվականի վճռին:

### **2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները.**

Հայցվորները ավիավթարից տուժված Արման Դավթյանի ծնողներն են, որոնք «Գրանդ» ապահովագրական ՍՊԸ-ի և Կազմակերպության միջև կնքված՝ վթարված օդաչուների կյանքի ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրական գումարի պահանջի իրավունք ունեն:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Կազմակերպությանը պատկանող ինքնաթիռը ենթարկվել է ավիավթարի, որի արդյունքում գոհվել է անձնակազմի անդամ Արման Դավթյանը:

2. 26.12.2005 թվականին Ընկերության և Կազմակերպության միջև կնքված թիվ CW000001 ապահովագրության վկայագրի համաձայն (այսուհետ՝ Պայմանագիր)՝ ապահովագրվել են թռիչքային առաջադրանքի ընթացքում ինքնաթիռի թռիչքային և աշխատանքային պարտականություններ կատարելու ժամանակ ինժեներատեխնիկական անձնակազմերի կյանքին և առողջությանը հասցված վնասի հետ կապված **Կազմակերպության գույքային շահերը:**

3. Պայմանագրով շահառու է հանդիսացել Ընկերությունը:

### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն քաղաքացիական գործի քննության ժամանակ գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 218-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ վճռի մեջ պետք է նշվեն վերաքննիչ դատարանի կողմից պարզված գործի հանգամանքները, ապացույցները, որոնց վրա հիմնված են վերաքննիչ դատարանի հետևություններն այդ հանգամանքների մասին, և փաստարկները, որոնցով վերաքննիչ դատարանը մերժում է այս կամ այն ապացույցները, ինչպես նաև այն օրենքները, ՀՀ միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է վերաքննիչ դատարանը վճիռ կայացնելիս:

---

---

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ վճռի թե՛ փաստական և թե՛ իրավական հիմնավորումները:

Վճռի իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ նյութական իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Վճռում ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Վճռի իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա վճռի իրավակիրառ գործառույթը, ընդգծում դատական գործունեության և դատական վճռի օրինականությունը (տե՛ս ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն ընդդեմ «Քնար-88» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, քաղ. գործ թիվ 3-2504/ՏԴ(ՏԴ) (գումար բռնագանձելու պահանջի մասին)):

Մինչդեռ, սույն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանը հայցապահանջի բավարարման հիմքում դնելով այն հանգամանքը, որ Ընկերության և Կազմակերպության միջև կնքված պայմանագրով շահառու է հանդիսանում օդաչու Արման Դավթյանը, իսկ ապահովագրության օբյեկտը վերջինիս կյանքն է, չի հիմնավորել այդ եզրահանգումը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պարտավորությունները ծագում են պայմանագրից, վնաս պատճառելու հետևանքով, և ՀՀ քաղաքացիական օրենսգրքում նշված այլ հիմքերից:

Սույն քաղաքացիական գործով Ընկերության և Կազմակերպության միջև կնքված Պայմանագրի համաձայն՝ ապահովագրվել է թռիչքային առաջադրանքի ընթացքում ինքնաթիռի թռիչքային և աշխատանքային պարտականություններ կատարելու ժամանակ ինժեներատեխնիկական անձնակազմերի կյանքին և առողջությանը հասցված վնասի հետ կապված **Կազմակերպության գույքային շահերը**: Պայմանագրով շահառու է հանդիսացել Կազմակերպությունը:

Վերոնշյալ Պայմանագրից հետևում է, որ ապահովագրության օբյեկտ են ոչ թե Կազմակերպությանը պատկանող ինքնաթիռի անձնակազմի կյանքը կամ առողջությունը, այլ անձնակազմին հասցված վնասի հետ կապված **Կազմակերպության գույքային շահերը**: Իսկ Պայմանագրով շահառուն Ընկերությունն է:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն քաղաքացիական գործով Ընկերության և Արման Դավթյանի, ինչպես նաև նրա ժառանգների միջև որևէ պարտավորաիրավական հարաբերություններ առկա չեն:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարություն օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով վերանայվող դատական ակտը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի ան-

հարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև՝ գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.12.2007 թվականի վճիռը և օրինական ուժ տալ Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 16.05.2007 թվականի վճռին:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի վճիռ

Քաղաքացիական գործ թիվ **3-280(ՎԳ)**  
**2008թ.**

Քաղաքացիական գործ թիվ 07-3620

Նախագահող դատավոր՝ Վ.Ավանեսյան  
Դատավորներ՝ Գ.Մատինյան  
Լ.Գրիգորյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի հունիսի 20-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեզիստրի գործակալության (այսուհետ՝ Գործակալություն) վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.11.2007 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի Գործակալության ընդդեմ Աշոտ Ջանջուղազյանի՝ 313.625 դրամ բռնագանձելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Գործակալությունը պահանջել է բռնագանձել Աշոտ Ջանջուղազյանից 313.625 ՀՀ դրամ:

Լռու մարզի առաջին ատյանի դատարանի 14.08.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 05.11.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Գործակալությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով:

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդվածը, ինչպես նաև «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 34-րդ և 35-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հայցը բավարարելով, հաշվարկված տույժի գումարը պակասեցրել է մինչև 157.000 դրամ՝ չպատճառաբանելով, թե ինչով է պայմանավորված տուժանքի գումարի մասն նվազեցումը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 05.11.2007 թվականի վճիռը և գործ ուղարկել նոր քննության:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունի հետևյալ փաստերը՝

1) ՀՀ արդարադատության նախարարության կողմից 16.10.2002 թվականին Աշոտ Ջանջուղազյանին տրվել է անվճարունակության գործերով կառավարչի գործունեության իրականացման թիվ 00166 լիցենզիան:

2) Լիցենզիայի համար առաջին անգամ պետական տուրքը վճարվել է 31.10.2002 թվականին:

3) 2004-2007 թվականների համար հերթական տարեկան պետական տուրքի վճարումներ Աշոտ Ջանջուղազյանի կողմից չեն կատարվել:

4) ՀՀ արդարադատության նախարարին հասցեագրված 09.07.2007 թվականի դիմումով Աշոտ Ջանջուղազյանը հրաժարվել է լիցենզիայից և այն վերադարձրել է:

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝ վճռաբեկ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդվածի համաձայն՝ եթե վճարման ենթակա տուժանքն ակնհայտորեն անհամաչափ է պարտավորության խախտման հետևանքներին, դատարանն իրավունք ունի պակասեցնել այն:

Սույն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանը հայցը մասնակիորեն բավարարելիս պակասեցրել է Աշոտ Ջանջուղազյանի կողմից անվճարունակության գործերով կառավարչի գործունեության լիցենզիայի համար նախատեսված տարեկան պետական տուրքի չվճարման դիմաց հաշվարկված տույժը՝ կիրառելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդվածը:

Սինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն վեճի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի նորմերը կիրառելի չեն հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մեկ կողմի՝ մյուսի վարչական կամ այլ իշխանական ենթակայության վրա հիմնված գույքային՝ ներառյալ հարկային, ֆինանսական ու վարչական հարաբերությունների նկատմամբ քաղաքացիական օրենսդրությունը և այլ իրավական ակտերը չեն կիրառվում, եթե այլ բան նախատեսված չէ օրենսդրությամբ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ - հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմիններ են Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական և տարածքային կառավարման, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինները: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչարարությունը վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեություն է, որը եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ, ինչպես նաև այդ մարմինների գործողությունը կամ անգործությունը, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ:

ՀՀ կառավարության 28.11.2002 թվականի թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված Գործակալության կանոնադրության 1-ին կետի համաձայն՝ Գործակալությունը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կազմում գործող Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որն օրենքով, իսկ առանձին դեպքերում՝ նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

---

---

նախատեսված դեպքերում, մատուցում է ծառայություններ իրավաբանական անձանց պետական գրանցման բնագավառում՝ հանդես գալով Հայաստանի Հանրապետության անունից: Կանոնադրության 8-րդ կետի «գ» ենթակետի համաձայն՝ Գործակալության նպատակները և խնդիրներն են՝ անվճարունակության գործերով կառավարիչների լիցենզավորման և լիցենզիայի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման ապահովումը:

Վերոգրյալից հետևում է, որ Գործակալությունը հանդիսանում է վարչական մարմին, որը բացի կանոնադրության իրեն վերապահված այլ գործառնություններից, վարչարարություն է իրականացնում մաս անվճարունակության գործերով կառավարիչների լիցենզավորման և լիցենզիայի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման նկատմամբ:

Սույն քաղաքացիական գործով վեճը ծագել է ֆիզիկական անձի կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե մուծվող օրենքով սահմանված պարտադիր վճարի չվճարման կապակցությամբ վարչական ենթակառուցվածքային վրա հիմնված իրավահարաբերություններից:

Հետևաբար, հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 6-րդ մասով Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ որ սույն վեճի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի նորմերը կիրառելի չեն: Այսինքն՝ հիմնավոր չէ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդվածի կիրառմամբ Աշոտ Ջանջուզյանի նկատմամբ հաշվարկված տույժի գումարի պակասեցումը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարություն օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով վերանայվող դատական ակտը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես մաս գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.11.2007 թվականի վճիռը և այն փոփոխել.

ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության հայցը բավարարել՝

Աշոտ Ջանջուղազյանից բռնագանձել 313.625 դրամ, այդ թվում՝ 75.000 ՀՀ դրամ պետական տուրք և 238.625 ՀՀ դրամ տույժ:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի վճիռ  
Քաղաքացիական գործ թիվ 07-3309  
Նախագահող դատավոր՝ Ա.Խառատյան  
դատավորներ՝ Վ.Ավանեսյան  
Կ.Չիլինգարյան

Քաղաքացիական գործ թիվ **3-328(ՎԴ)**  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Հ.ՍԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՍԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի հուլիսի 25-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.02.2008 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի Երևան քաղաքի դատախազության ընդդեմ Միսակ Ավետիսյանի՝ 242.906 դրամ բռնագանձելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Երևան քաղաքի դատախազությունը պահանջել է բռնագանձել Մ.Ավետիսյանից 242.906 դրամ:

Կենտրոն և Նորք Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 31.07.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 05.02.2008 թվականի վճռով հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:  
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով:

*Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ, 1072-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Հայցը մերժելիս՝ Վերաքննիչ դատարանը պատճառաբանել է, որ իրականացված բուժումը չի հիմնավորում պետության կողմից քաղաքացու առողջությունը վերականգնելու համար ծախսված հավելյալ գումարներ տրամադրելու փաստը: Վերաքննիչ դատարանի նման պատճառաբանությունը հիմնավոր չէ, քանի որ տվյալ դեպքում պետական բյուջեից համապատասխան գումարը ծախսվել է Մ.Ավետիսյանի հանցավոր արարքի հետևանքով քաղաքացու առողջությանը պատճառված վնասը վերականգնելու համար՝ անհետաձգելի բժշկական օգնություն ցույց տալու ձևով: Մինչդեռ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ և 1072-րդ հոդվածների հիման վրա այդ վնասը պետք է հատուցվեր Մ.Ավետիսյանի կողմից: Հետևաբար Մ.Ավետիսյանը պարտավոր էր հատուցել իր կողմից հանցագործության հետևանքով պատճառված վնասի համար ՀՀ պետական միջոցներից ծախսված գումարները:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 05.02.2008 թվականի վճիռը և գործն ուղարկել նոր քննության:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) ՀՀ ռստիկանության Երևան քաղաքի քննչական վարչության ՃՏՀ քննության բաժնի 15.05.2007 թվականի որոշմամբ Մ.Ավետիսյանի կողմից Գ.Մարտիրոսյանին վրաներքի ենթարկելու փաստի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա հարուցված քրեական գործի վարույթը կարճվել է՝ տուժողի հետ հաշտվելու հիմքով:

2) Գ.Մարտիրոսյանին պետական պատվերի շրջանակներում ցուցաբերվել է անհետաձգելի բուժօգնություն, որի ընդհանուր ծախսը կազմել է 242.906 դրամ:

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝ վճռաբեկ բողոքը անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքի հիմքում բարձրացված իրավական հարցին պատասխանելու համար վճռաբեկ բողոքի շրջանակներում պետք է քննարկման առարկա դարձվի հետևյալ հարցադրումը.

*Արդյո՞ք պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության շրջանակներում կատարված ծախսերը ենթակա են փոխհատուցման պետությանը:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1048-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ առանց շահագրգիռ անձի հանձնարարության, նրա այլ ցուցումի կամ նախապես տրված համաձայնության, գործողությունները, որոնք նպատակ են հետապնդել կանխել այդ անձին կամ նրա գույքին պատճառվելիք վնասը, կատարել նրա պարտավորությունները կամ պաշտպանել նրա այլ օրինաչափ շահերը (ի շահ ուրիշի գործողություններ), պետք է կատարվեն գործի հանգամանքների համար անհրաժեշտ հոգատարությամբ և շրջահայացությամբ՝ ելնելով շահագրգիռ անձի ակնհայտ օգուտից կամ շահից ու նրա իրական կամ հավանական մտադրություններից: Նույն օրենսգրքի 1052-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ նույն գլխով նախատեսված կանոններին համապատասխան ի շահ ուրիշի գործած անձի կատարած անհրաժեշտ ծախսերը և կրած իրական վնասը հատուցվում է շահագրգիռ անձի կողմից: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1048-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առանց հանձնարարության, ի շահ ուրիշի գործողությունների վերաբերյալ կանոնները չեն կիրառվում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների՝ ի շահ ուրիշ անձանց կատարած գործողությունների նկատմամբ, որոնց համար նման գործողություններ կատարելն իրենց գործունեության նպատակներից մեկն է:

Այսպիսով, ի շահ ուրիշի գործած անձի կատարած անհրաժեշտ ծախսերը և կրած իրական վնասը ենթակա են հատուցման, բացի այն ծախսերից, որոնք առաջացել են պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից իրենց գծունեությամբ:

---

---

յան նպատակներից ելնելով ի շահ այլ անձի կատարված նույնատիպ գործողություններից:

ՀՀ սահմանադրության 38-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անվճար հիմնական բժշկական ծառայություններ ստանալու իրավունք:

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ բժշկական օգնության և սպասարկման հիմնական տեսակ է առաջնային բժշկական օգնությունը՝ որպես յուրաքանչյուր մարդու համար անվճար, առավել մատչելի մեթոդների եւ տեխնոլոգիաների վրա հիմնված բժշկական օգնության եւ սպասարկման տեսակ, որը երաշխավորվում է պետության կողմից:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ պետական պատվերի շրջանակներում անվճար բժշկական օգնության տրամադրումը իրենից ներկայացնում է պետական մարմինների կողմից իրենց սահմանադրական առաքելության շրջանակներում ի շահ ուրիշի կատարված գործողություն, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նման բժշկական օգնության շրջանակներում տրամադրվող գումարները պետությանը վերադարձման ենթակա չեն:

Հետևաբար, հաշվի առնելով այն հնագամանքը, որ Մ.Ավետիսյանի կողմից Գ.Մարտիրոսյանին վրատքի ենթարկելու արդյունքում պետությունը որևէ վնաս չի կրել, Վճռաբեկ դատարանը արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ և 1072-րդ հոդվածները սույն քաղաքացիական գործով կիրառելի չեն:

Ինչ վերաբերում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1074-րդ հոդվածին, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն սույն քաղաքացիական գործով կիրառելի չէ հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1074 հոդվածի համաձայն՝ այլ անձի (աշխատողի՝ ծառայողական, պաշտոնեական կամ այլ աշխատանքային պարտականությունները կատարելիս, տրանսպորտային միջոցներ վարելիս եւ այլն) պատճառած վնասը հատուցած անձը հետադարձ պահանջի (ռեգրեսի) իրավունք ունի այդ անձի նկատմամբ՝ իր վճարած հատուցման չափով, եթե այլ չափ սահմանված չէ օրենքով:

Այսպիսով, անձը ստանում է ռեգրեսի իրավունք այն դեպքերում, երբ նա աշխատանքային կամ այլ իրավահարաբերությունների (աշխատանքային, հանձնարարության կամ այլ պամանագրի) ուժով պարտավորություն է կրում վնասը հասցրած անձի գործողությունների համար: Մինչդեռ, սույն քաղաքացիական գործով պետության կողմից անհետաձգելի բժշկական օգնության ցուցաբերումը պայմանավորվում է ոչ թե վնաս հասցրած անձի հետ աշխատանքային կամ այլ իրավահարաբերությունների առկայությամբ, այլև նման օգնության ցուցաբերումը սոցիալական և առողջապահական քաղաքականության բնագավառում պետության սահմանադրական պարտականությունն է: Այսինքն, պետական պատվերի շրջանակներում կատարված ծախսերը փոխհատուցելու ռեգրեսի իրավունք պետության մոտ չի կարող ծագել:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջով, որի համաձայն այն դեպքում, երբ դատարանի կայացրած գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի պատճառաբանված է, ապա Վճռաբեկ դատարանը պատճառաբանում է անփոփոխ թողնված դատական ակտը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի վճիռը պետք է թողնել օրինական ուժի մեջ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճուարեկ բողոքը մերժել: Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.02.2008 թվականի վճիռը թողնել օրինական ուժի մեջ:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **3-502(ՎԴ)**  
**2008թ.**

Քաղաքացիական գործ թիվ 08-557  
Նախագահող դատավոր՝ Գ.Մատինյան  
Դատավորներ՝ Լ.Գրիգորյան  
Ս.Միքայելյան

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ  
դատարան)

*նախագահությամբ* Հ.ՍԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի սեպտեմբերի 26-ին,

դռնբաց դատական նիստում, քննելով Վիլեն Հայրապետյանի վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 07.03.2008 թվականի որոշման դեմ՝ ըստ Արամ Հայրապետյանի հայցի ընդդեմ Նորիկ Գզիրյանի, Լիլյա և Վիլեն Հայրապետյանների՝ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու և բնակարանը հրապարակային սակարկություններով վաճառելու, ինչպես նաև ըստ Վիլեն Հայրապետյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Արամ Հայրապետյանի՝ գումարի բռնագանձելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Արամ Հայրապետյանը պահանջել է ճանաչել Երևանի Ավան Քուչակ թաղամասի 18 շենքի թիվ 10 բնակարանի բաժնի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ, բնակարանը հրապարակային սակարկություններով վաճառել և ստացված գումարը բաշխել կողմերից յուրաքանչյուրի բաժնին համաչափ:

Դիմելով դատարան՝ Վիլեն Հայրապետյանը պահանջել է բռնագանձել հաշտության համաձայնագրով վճարված 1.020.000 ՀՀ դրամ գումարը և այդ գումարին հաշվարկվող տոկոսները:

Ավան և Նոր-Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ Դատարան) 30.11.2007 թվականի վճռով հայցը և հակընդդեմ հայցը բավարարվել են մասնակիորեն:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 07.03.2008 թվականի որոշմամբ Դատարանի վճիռը՝ բնակարանը հրապարակային սակարկություններով վաճառելու և ստացված գումարը կողմերից յուրաքանչյուրի բաժնին համաչափ բաշխելու պահանջով Արամ Հայրապետյանի հայցի մասը բեկանվել է և գործն

այդ մասով ուղարկվել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության, դատական ակտի մնացած մասը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Վիլեն Հայրապետյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) *Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասը, սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածը, 1226-րդ հոդվածի 3-րդ մասը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել գործում առկա ապացույցները և հաշվի չի առել, որ Արամ Հայրապետյանը ժառանգատու Օնիկ Հայրապետյանի ժառանգությունն ընդունելու համգամանքը հավաստող որևէ ապացույց չի ներկայացրել: Ավելին, Վերաքննիչ դատարանն անդրադառնալով «Ավան-4» համատիրության կողմից տրված 19.05.2007 թվականի տեղեկանքին, որի համաձայն՝ Արամ Հայրապետյանը 1989 թվականից չի բնակվում Երևանի Ավան Քուչակ թաղամասի 18 շենքի թիվ 10 հասցեում գտնվող բնակարանում, հաստատված է համարել, որ Արամ Հայրապետյանը, որպես վիճելի բնակարանի համասեփականատեր, փաստացի տիրապետման հիմքով ընդունել է ժառանգությունը:

2) *Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 6-րդ կետը, որը չպետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել նույն օրենսգրքի 197-րդ հոդվածի 3-5-րդ կետերը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Արամ Հայրապետյանը դատաքննության ընթացքում չի հիմնավորել վեճի առարկա բնակարանից իր բաժինը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 3-5-րդ կետերում սահմանված կանոններով առանձնացնելու ակնհայտ անպատակահարմարությունը:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Արամ Հայրապետյանը վերաքննիչ բողոքին կից նոր ապացույց ներկայացնելով «Էքսպերտ Լաբորատորիա» ապրանքագիտական փորձաքննության բյուրո ՍՊԸ-ի 13.12.2007 թվականի եզրակացությունը, չի հիմնավորել այն առաջին ատյանի դատարանում իր կամքից անկախ պատճառներով չներկայացնելու հանգամանքները:

3) *Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկով.*

Արամ Հայրապետյանի, Վիլեն և Լիլյա Հայրապետյանների միջև 09.07.2007 թվականին կնքված հաշտության համաձայնությամբ Վիլեն Հայրապետյանը 16.07.2007 թվականին 9000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ գումարից Արամ Հայրապետյանին վճարել է 1020000 ՀՀ դրամ գումար, որպես Երևանի Ավան Քուչակ թաղամասի 18 շենքի թիվ 10 հասցեում գտնվող բնակարանի Արամ Հայրապետյանի բաժնի դիմաց փոխհատուցում:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ առաջին ատյանի դատարանի կողմից կողմերի միջև կնքած հաշտության համաձայնությունը չհաստատելու պահից, Արամ Հայրապետյանը պետք է հետ վերադարձներ վերը նշված գումարը, որը սակայն չի արել, դրանով իսկ ուրիշի դրամական միջոցները պահել է ապօրինի:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 07.03.2008 թվականի որոշումը մասնակիորեն և դատական ակտը փոփոխել՝ Արամ Հայրապետյանի հայցը ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու մասով՝ մեր-

---

---

Ժել, Վիլեն Հայրապետյանի հակընդդեմ հայցը բռնագանձվող գումարին հաշվարկվող տոկոսներ բռնագանձելու մասով՝ բավարարել:

**3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ Կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Նոր-Նորք տարածքային ստորաբաժանման (այսուհետ՝ Կադաստր) 02.02.2007 թվականի գրությամբ Երևանի Ավան Քուչակ թաղամասի 18 շենքի թիվ 10 բնակարանը ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով գրանցված է Նորիկ Գվիրյանի, Օնիկ, Արամ, Լիլյա և Վիլեն Հայրապետյանների անվամբ:

2. Օնիկ Հայրապետյանը մահացել է 17.02.1999 թվականին:

3. Նորիկ Գվիրյանը, Արամ, Լիլյա և Վիլեն Հայրապետյանները Օնիկ Հայրապետյանի ըստ օրենքի առաջին հերթի ժառանգներն են:

4. Ավան համայնքի «Ավան-4» համատիրության 19.05.2007 թվականի տեղեկանքի համաձայն՝ Արամ Հայրապետյանը 1989 թվականից Երևանի Ավան Քուչակ թաղամասի 18 շենքի թիվ 10 հասցեում գտնվող բնակարանում չի բնակվում:

5. 09.07.2007 թվականի հաշտության համաձայնությամբ Վիլեն և Լիլյա Հայրապետյանները պարտավորվել են Արամ Հայրապետյանին վճարել 9000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ գումար, որպես Երևանի Ավան Քուչակ թաղամասի 18 շենքի թիվ 10 հասցեում գտնվող բնակարանի Արամ Հայրապետյանի բաժնի դիմաց փոխհատուցում:

4. 16.07.2007 թվականի ստացականի համաձայն՝ Արամ Հայրապետյանը Վիլեն Հայրապետյանից ստացել է 1.020.000 ՀՀ դրամ գումար, որպես 09.07.2007 թվականի հաշտության համաձայնագրով սահմանված գումարի առաջին վճարում:

5. Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանը մերժել է հաշտության համաձայնության հաստատման միջնորդությունը:

6. «Էքսպերտ Լաբորատորիա» ՍՊԸ-ի 30.04.2007 թվականի գրությամբ՝ Երևանի Ավան Քուչակ թաղամասի 18 շենքի թիվ 10 բնակարանի դուռը մշտապես չի բացվել և փորձագետին հնարավորություն չի ընձեռվել կատարել տեղագնություն՝ արդյունքում վերոհիշյալ փորձաքննությունը, կապված բաժնի առանձնացման հետ, չի կատարվել՝ բնակարանում տեղագնություն չկատարելու հետևանքով:

7. «Էքսպերտ Լաբորատորիա» ապրանքագիտական բյուրո ՍՊԸ-ի 13.12.2007 թվականի թիվ 12-07 փորձագետի եզրակացության (այսուհետ՝ Փորձագիտական եզրակացություն) համաձայն՝ Երևանի Ավան Քուչակ թաղամասի 18 շենքի թիվ 10 հասցեում գտնվող բնակարանի մակերեսից համասեփականատեր Արամ Հայրապետյանի բաժինը բնեղենով առանձնացնել՝ ստեղծելով առանձին կոմունալ հարմարություններ, հնարավոր չէ:

**4. Վճարել դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.**

Քննելով վճարել բողոքը վերը նշված հիմքերի սահմաններում՝ Վճարել դատարանը գտնում է, որ

1) *Վճարել բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգությունը ձեռք բերելու համար ժառանգը պետք է այն ընդունի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, եթե այլ բան ապացուցված չէ, ապա ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել կամ կառավարել ժառանգված գույքը՝ ներառյալ, երբ ժառանգը միջոցներ է ձեռնարկել գույքը պահպանելու և այն երրորդ անձանց ոտնձգություններից կամ հավակնություններից պաշտպանելու համար, իր հաշվին կա-

տարել է գույքը պահպանելու ծախսերը, իր հաշվից վճարել է ժառանգատուի պարտքերը կամ երրորդ անձանցից ստացել է ժառանգատուին հասանելիք գումարները:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ ժառանգության փաստացի տիրապետումը կամ կառավարումը, որպես ժառանգության ընդունման եղանակ, կարող է դրսևորվել ժառանգի կողմից ժառանգական գույքը պահպանելով՝ այն երրորդ անձանց ուսնձգություններից կամ հավակնություններից պաշտպանելու համար, ժառանգական գույքի պահպանման ծախսերը կատարելով, իր հաշվից ժառանգատուի պարտքերը վճարելով կամ ժառանգատուին հասանելիք գումարներն երրորդ անձանցից ստանալով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Մինչդեռ, սույն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությամբ չի գնահատել քննվող քաղաքացիական գործում առկա բոլոր ապացույցները: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել Ավան համայնքի «Ավան-4» համատիրության 19.05.2007 թվականի տեղեկանքը, համաձայն որի Արամ Հայրապետյանը 1989 թվականից Երևանի Ավան Քուչակ թաղամասի 18 շենքի թիվ 10 հասցեում գտնվող բնակարանում չի բնակվում:

Բացի այդ, գործում առկա չէ որևէ ապացույց, որով կհիմնավորվեր Արամ Հայրապետյանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված որևէ եղանակով ժառանգությունն ընդունելու հանգամանքը:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր չէ Վերաքննիչ դատարանի եզրահանգումն այն մասին, որ Արամ Հայրապետյանը փաստացի տիրապետման հիմքով ընդունել է ժառանգությունը:

*2) Վճռաբեկ բողոքն երկրորդ հիմքով հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ՝*

Սույն քաղաքացիական գործի փաստերի համաձայն՝ Երևանի Ավան Քուչակ թաղամասի 18 շենքի թիվ 10 բնակարանի դուռը մշտապես չի բացվել և փորձագետին հնարավորություն չի ընձեռնվել կատարել տեղագնություն՝ արդյունքում վերոհիշյալ փորձաքննությունը, կապված բաժնեմասի առանձնացման հետ, չի կատարվել՝ բնակարանում տեղագնություն չկատարելու հետևանքով:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առկա է Արամ Հայրապետյանի կողմից իրենից անկախ պատճառներով 13.12.2007 թվականի փորձագիտական եզրակացությունը առաջին ատյանի դատարանում չներկայացնելու հանգամանքը:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ Վերաքննիչ դատարանը գնահատման առարկա դարձնելով 13.12.2007 թվականի փորձագիտական եզրակացությունը չէր կարող հաստատված համարել ընդհանուր գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ - հոդվածի 6-րդ կետով սահմանված նախապայմանների առկայության կամ բացակայության հարցը, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

Սույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանն իրավունք չունի նոր ապացույց ընդունելու և բողոքը քննելիս հիմնվում է **միայն** այն ապացույցների վրա, որոնք ներկայացվել են առաջին ատյանի դատարանին: Եթե առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ ապացույցը չի ներկայացվել կողմերի կամքից անկախ հանգամանքներով, ապա վերաքննիչ դատարանը բեկանում է գործը և այն ուղարկում համապատասխան առաջին ատյանի դատարան՝ նոր քննության, եթե գտնում է, որ ապացույցն էական նշանակություն ունի գործի լուծման համար:

---

---

Վերը նշված հոդվածից հետևում է, որ Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը պետք է քննի **միայն** հիմնվելով գործում առկա ապացույցների վրա, իսկ նոր ապացույց ներկայացվելու դեպքում, գտնելով, որ ապացույցն էական նշանակություն ունի գործի լուծման համար և այն չի ներկայացվել առաջին ատյանի դատարան կողմերից անկախ պատճառներով, դատական ակտը պետք է բեկանի և գործն ուղարկի համապատասխան առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը, Արամ Հայրապետյանի կողմից ներկայացված 13.12.2007 թվականի փորձագիտական եզրակացությունը դիտելով գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացույց, հաստատված համարելով կողմերի կամքից անկախ առաջին ատյանի դատարանում այն չներկայացնելու հանգամանքը և մասնակիորեն բեկանելով դատական ակտը, հաստատված է համարել նաև, որ առկա են ՀՀ - քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված նախապայմանները՝ ընդհանուր գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու համար:

*3) Վճարել բողոքն երրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ՝*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելու**, դրանք վերադարձնելուց խուսափելու, վճարման այլ կետանցով դրանք օգտագործելու, կամ այլ անձի հաշվին անհիմն ստանալու կամ խնայելու դեպքերում այդ գումարին վճարվում են տոկոսներ: Տոկոսները հաշվարկվում են կետանցի օրվանից մինչև պարտավորության դադարման օրը՝ ըստ համապատասխան ժամանակահատվածների համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքների:

Վերև նշված հոդվածից հետևում է, որ դրամական պարտավորության չկատարման համար գումարին տոկոսներ վճարելու պարտավորության ծագման հիմք է **ուրիշի դրամական միջոցները ապօրինի պահելը**:

Սույն գործի փաստերի համաձայն՝ 09.07.2007 թվականի հաշտության համաձայնությամբ Վիլեն և Լիլյա Հայրապետյանները պարտավորվել են Արամ Հայրապետյանին վճարել 9000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ գումար, որպես վիճելի բնակարանի Արամ Հայրապետյանի բաժնի դիմաց փոխհատուցում և 16.07.2007 թվականի ստացականի համաձայն՝ Արամ Հայրապետյանը Վիլեն Հայրապետյանից ստացել է 1.020.000 ՀՀ դրամ գումար, որպես 09.07.2007 թվականի հաշտության համաձայնագրով սահմանված գումարի առաջին վճարում: Մինչդեռ, Դատարանի կողմից հաշտության համաձայնության հաստատման միջնորդությունը մերժվել է:

Հետևաբար, Վճարել դատարանը գտնում է, որ հաշտության համաձայնության հաստատման միջնորդությունը մերժվելու պահից, Արամ Հայրապետյանը պետք է վերադարձներ Վիլեն Հայրապետյանին 1.020.000 ՀՀ դրամ գումարը, որի չկատարման պարագայում այն պահել է ապօրինի:

Այսպիսով, սույն վճարելի բողոքի վերը նշված հիմքերի առկայությունը Վճարել դատարանը դիտում է բավարար ՀՀ քաղաքացիական դատավարություն օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով՝ Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճարել դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 07.03.2008 թվականի որոշումը և գործն ուղարկել Ավան և Նոր Նորք համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ տնտեսական դատարանի վճիռ  
Քաղաքացիական գործ թիվ S-2191  
Նախագահող դատավոր՝ Ե. Սողոմոնյան

Քաղաքացիական գործ թիվ **3-119 (ՏԳ)**  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ  
դատարան),

*նախագահությամբ* Հ.ՍԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՍԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի փետրվարի 29-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Արթիկի «Ստեկլոմաշ» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) վճռաբեկ բողոքը ՀՀ տնտեսական դատարանի 01.11.2007 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի Ընկերության ընդդեմ «Ռեյլ Էքսպրես» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) և «Հայկական երկաթուղի» ՓԲԸ-ի՝ 4.960.632 ՀՀ դրամ և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսներ բռնագանձելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է Կազմակերպությունից և «Հայկական երկաթուղի» ՓԲԸ-ից բռնագանձել՝ 4.960.632 ՀՀ դրամ և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսներ:

ՀՀ տնտեսական դատարանի (այսուհետ՝ Տնտեսական դատարան) 01.11.2007 թվականի վճռով հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով:

Տնտեսական դատարանը սխալ է մեկնաբանել կողմերի միջև կնքված պայմանագիրը, որի արդյունքում եկել է այն եզրահանգման որ Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում փոխադրվող բեռը հասցեատիրոջը հասցնելու համար:

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Դատարանը, մեկնաբանելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 855-րդ և 871-րդ հոդվածները, գտել է, որ սույն քաղաքացիական գործով Ընկերության և Կազմակերպության միջև կնքվել է տրանսպորտային առաքման, այլ ոչ թե՛ փոխադրման պայմանագիր, որի դեպքում պատասխանատվության հարցը որոշվում է Օրենսգրքի 26-րդ գլխի կանոններով: Այդ հիմքով Տնտեսական դատարանը հղում կատարելով Օրենսգրքի 408-րդ, 417-րդ հոդվածներին, հանգել է այն եզրահանգման, որ վերջինս պատասխանատվություն չի կարող կրել բեռի կորստի համար և հաստատված է համարել, որ Կազմակերպության մեղքը դատաքննությամբ չի ապացուցվել:

Մինչդեռ, Ընկերության և «Ռեյլ Էքսպրես» ՍՊԸ-ի միջև հարաբերություններում բացակայում է Օրենսգրքի 871-րդ հոդվածով նախատեսված տրանսպորտային առաքման պայմանագրի բնույթ տվող տարրը, քանի որ ըստ պայմանագրի՝ Ընկերությունը պետք է վճարեր բեռի յուրաքանչյուր խմբաքանակի համար, իսկ Կազմակերպությունը փոխարենը պետք է իրականացներ բեռի փոխադրումը: Այսինքն՝ Կողմերի միջև առկա են փոխադրման իրավահարաբերություններ:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է բեկանել ՀՀ տնտեսական դատարանի 01.11.2007 թվականի վճիռը:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերով՝

1) Կազմակերպության և Ընկերության միջև կնքված «Տրանսպորտային առաքման» 20.01.2007 թվականի պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) Կազմակերպությունը պարտավորվել է իրականացնել երկաթուղային վազոնների (բեռի) փոխադրում:

2) Պայմանագրի 2.1.1. կետի համաձայն՝ Կազմակերպությունը պարտավորվել է Ընկերության անունից և հանձնարարությամբ իրականացնել գործողություններ և աշխատանքներ, որոնք կապված են Պայմանագրով սահմանված բեռան տրանսպորտային առաքման հետ:

3) Պայմանագրի 2.1.3. կետի համաձայն՝ Կազմակերպությունը պարտավորվել է ապահովել ընդունված բեռան պահպանումն ու ամբողջականությունը, իսկ նրա կորստի և/կամ վնասի դեպքում մեկամսյա ժամանակահատվածում իր ակտիվների հաշվին ամբողջովին վերականգնել կորցված (չառաքված) բեռը:

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կողմերը կարող են կնքել օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված մի քանի պայմանագրերի տարրեր պարունակող պայմանագիր (խառը պայմանագիր): Խառը պայմանագրի կողմերի հարաբերությունների նկատմամբ համապատասխան մասերով կիրառվում են այն պայմանագրերի մասին կանոնները, որոնց տարրերը պարունակվում են խառը պայմանագրում, եթե այլ բան չի բխում կողմերի համաձայնությունից կամ խառը պայմանագրի էությունից:

Սույն օրենսգրքի 447-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի պայմանները մեկնաբանելիս՝ դատարանը պետք է ելնի նրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից:

Սույն քաղաքացիական գործով Կազմակերպության և Ընկերության միջև 20.01.2007 թվականին կնքված Պայմանագրի վերոնշյալ 2.1.3. և 2.1.1. կետերի տառացի նշանակությունից հետևում է, որ Ընկերության և Կազմակերպության միջև կնքվել է տրանսպորտային առաքման և բեռնափոխադրման պայմանագրերի տարրեր պարունակող խառը պայմանագիր:

---

---

Պայմանագրում Կազմակերպության պատասխանատվությունը առաքվող բեռի համար սահմանվել է բեռնափոխադրման պայմանագրերի համար սահմանված կարգով, որին համապատասխան էլ պետք է կարգավորվեն առաքվող գույքի կորստի հետ կապված իրավահարաբերությունները:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհիմն է Վերաքննիչ դատարանի եզրահանգումն այն մասին, որ կողմերի միջև կնքվել է տրասպորտային առաքման պայմանագիր և որ Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում փոխադրվող բեռը հասցեատիրոջը հասցնելու համար: Վճռաբեկ դատարանը, բազմիցս անդրադարձել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ և 218-րդ հոդվածների ճիշտ և միատեսակ կիրառման խնդրին (տե՛ս, օրինակ՝ "Քնար-88" ՍՊԸ ընդդեմ ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչություն, 21.12.2006 թ., քաղաքացիական գործ թիվ 3-2504/ՏԳ-գործով, գումար բռնագանձելու պահանջով Վճռաբեկ դատարանի որոշումը), որի պատճառով սույն քաղաքացիական գործով նպատակահարմար չի գտնում կրկին անդրադառնալ այդ հարցի մեկնաբանմանը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի առաջին հիմքի առկայությունը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով, Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար Վերաքննիչ դատարանի վճիռը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ, 241-րդ, 241.1-րդ և 241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ տնտեսական դատարանի 01.11.2007 թվականի վճիռը և գործն ուղարկել Երևանի քաղաքացիական դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒՐՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի վճիռ  
Քաղաքացիական գործ թիվ 07-3368  
Նախագահող դատավոր՝ Կ.Հակոբյան  
Դատավորներ՝ Լ.Գրիգորյան  
Լ.Սոսյան

Քաղաքացիական գործ թիվ **3-241(ՎԳ)**  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ  
դատարան)

*նախագահությամբ* Հ.ՍԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՍԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի մարտի 27-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Ֆինքա» բարեգործական հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.12.2007 թվականի վճռի դեմ՝ ըստ Հիմնադրամի հայցի ընդդեմ Արմեն Գրիգորյանի, Կարապետ և Հռիփսիկ Վարդանյանների՝ գումարի բռնագանձման պահանջի մասին,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Գիմնելով դատարան՝ Հիմնադրամը պահանջել է Արմեն Գրիգորյանից և Կարապետ Վարդանյանից համապարտությամբ բռնագանձել 7210,12 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ բռնագանձումը տարածելով Արմեն Գրիգորյանի և Հռիփսիկ Վարդանյանի կողմից գրավ դրված և անձնական գույքի վրա:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 14.06.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 03.12.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Հիմնադրամը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

---

---

*Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ, 411-րդ, 879-րդ և 881-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով:

Փոխառության պայմանագրի 5.2 կետով նախատեսվել է, որ պայմանագրի կետանցի դեպքում փոխառուն փոխատուին վճարում է տույժ՝ կետանցված յուրաքանչյուր օրվա համար վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 2 տոկոսի չափով: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը ոչ թե պակասեցրել է տուժանքի գումարը՝ պարզաբանելով այդ գումարի անհամաչափությունը, այլ առանց հիմնավորումների, հաշվարկված տույժի ամբողջ գումարն ընդհանրապես չի բռնագանձել պատասխանողներից:

Վերաքննիչ դատարանը, խախտելով վերոնշյալ դատավարական նորմերը, պատասխանողներից չի պահանջել իրենց կողմից նշված գումարի չափը հիմնավորող մանրամասն հաշվարկ, իսկ հայցվորի ներկայացրած գրավոր մանրամասն հաշվարկը հիմք չի ընդունել: Վերաքննիչ դատարանը չի իրականացրել գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսներ բռնագանձելու Հիմնադրամի պահանջին և այդ գումարի բռնագանձման հարցը չի լուծել, որը պարտավոր էր, քանի որ այդպիսի պահանջ Հիմնադրամը ներկայացրել էր:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 03.12.2007 թվականի վճիռը և օրինական ուժ տալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 14.06.2007 թվականի վճիռն:

### **3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 11.11.2005 թվականին կնքված նպատակային փոխառության թիվ 119/05 պայմանագրով Հիմնադրամն Արմեն Գրիգորյանին տրամադրել է 8.000 (ութ հազար) ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, ամսական 1,84 տոկոս տոկոսադրույքով, մինչև 14.05.2007 թվականը մարելու պայմանով:

Որպես պարտավորության տարածամկետ կատարման ապահովման միջոց պայմանագրի Հավելված 1-ում նշված մարման գրաֆիկով նախատեսված վճարումներից որևէ մեկի չկատարման դեպքում պայմանագրի 5.2 կետով նախատեսվել է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 2 տոկոսի չափով:

2) Արմեն Գրիգորյանի կողմից փոխառության պարտավորությունը լրիվ և ժամանակին չի կատարվել:

3) Հիմնադրամի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ փոխատվությունների համակարգչային ծրագրում տեղի է ունեցել խափանում, որի պատճառով համակարգչում սխալ տվյալներ են ֆիքսվել: Մասնավորապես, 22.09.2006 թվականի գումարը (260.40 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ) լիովին չի բավարարել տվյալ պահին կուտակված տույժերը մարելու համար, որոնք կազմել են 286,60 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Համակարգչային ծրագիրը ցույց է տվել 42,09 ԱՄՆ դոլար տույժ՝ 286,60 ԱՄՆ դոլարի փոխարեն:

### **4. Վճարել դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճարել բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճարել դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի համաձայն՝ ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելու, դրանք վերադարձնելուց խուսափելու, վճարման այլ կետան-

ցով դրանք օգտագործելու, կամ այլ անձի հաշվին անհիմն ստանալու կամ խնայելու դեպքերում այդ գումարին վճարվում են տոկոսներ: Տոկոսները հաշվարկվում են կետանցի օրվանից մինչև պարտավորության դադարման օրը՝ ըստ համապատասխան ժամանակահատվածների համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքների:

Նույն օրենսգրքի 417-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

*Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի հիմքի հիմնավորվածությունը որոշելու համար բողոքի սահմաններում պետք է քննարկման առարկա դարձնի հետևյալ իրավական հարցը.*

• *արդյո՞ք Արմեն Գրիգորյանը կարող էր կամ պարտավոր էր գիտակցել փոխառության պայմանագրով նախատեսված պարտավորության կատարման կետանցի հետևանքով լրացուցիչ պարտավորություն առաջանալու հանգամանքը:*

Սույն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանը, հայցապահանջի մերժման հիմքում դնելով այն հանգամանքը, որ համակարգչային ծրագրում տեղի ունեցած սխալի պատճառով Հիմնադրամի կողմից տուժանքի գումարն իրականում եղածից այլ է ցույց տրվել, եկել է այն եզրահանգման, որ տուժանքի պարտավորության առաջացման հարցում Արմեն Գրիգորյանի մեղքը բացակայում է:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին (տես օրինակ՝ «Քնար-88» ՍՊԸ ընդդեմ ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության, 21.12.2006թ. Քադ. գործ թիվ 3-2504/ՏԳ(-գումար բռնագանձելու պահանջով)):

Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ վճռի թե՛ փաստական և թե՛ իրավական հիմնավորումը: Ըստ Վճռաբեկ դատարանի վերոհիշյալ որոշման՝ վճռի իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ նյութական իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Վճռում ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Վճռի իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա վճռի իրավակիրառ գործառույթը, ընդգծում դատական գործունեության և դատական վճռի օրինակականությունը:

Սինդեռ տվյալ դեպքում վճռում չի հիմնավորվել այն հանգամանքը, որ Արմեն Գրիգորյանը չէր կարող և տվյալ պայմաններում պարտավոր չէր գիտակցել, որ իր կողմից կնքված փոխառության պայմանագրով նախատեսված գումարի վճարման կետանցի դեպքում իր նկատմամբ հաշվարկվելու է լրացուցիչ պարտավորություն:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ համակարգչային ծրագրում տեղի ունեցած սխալը չի կարող Արմեն Գրիգորյանի մեղքը բացառող հանգամանք հանդիսանալ, քանի որ վերջինս կարող էր և պարտավոր էր գիտակցել, որ փոխառության պայմանագրով իր պարտավորությունների կետանցի դեպքում ապօրինի պահվող գումարի նկատմամբ ՀՀ - քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված կարգով ենթակա են հաշվեգրման տոկոսներ:

---

---

Ինչ վերաբերում է փոխառության պայմանագրի 5.2-րդ կետով նախատեսված տույժի բռնագանձման ենթակա լինելու վերաբերյալ վճռաբեկ բողոքի փաստարկներին, ապա Վճռաբեկ դատարանը դրանք անհիմն է համարում հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 881-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ եթե փոխառուն սահմանված ժամկետում չի վերադարձնում փոխառության գումարը, ապա փոխառության պայմանագրով նախատեսված տոկոսները դադարում են, իսկ այդ գումարին ենթակա են վճարման միայն սույն օրենսգրքի 411 հոդվածի 1-ին կետով նախատեսված չափով տոկոսներ, սկսած այն օրվանից, երբ գումարը պետք է վերադարձվեր մինչև գումարը փոխատուին վերադարձնելու օրը:

**Փոխառության պայմանագրում այլ պայմաններով տոկոսներ վճարելու վերաբերյալ համաձայնությունն առաջին է:**

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ փոխառության պայմանագրի 5.2-րդ կետով նախատեսված տույժ վճարելու վերաբերյալ համաձայնությունն առաջին է: Հետևաբար, Արմեն Գրիգորյանի կողմից փոխառության գումարի վճարման կետանցի դեպքում այդ գումարին ենթակա են վճարման միայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված չափով տոկոսներ:

Այսպիսով, վերոնշյալը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի համաձայն, Վերաքննիչ դատարանի վճիռը մասնակիորեն բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի 29.10.2007 թվականի վճռի հայցապահանջի մերժման մասը և այդ մասով գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒՐԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Քաղաքացիական գործերով  
վերաքննիչ դատարանի վճիռ  
Քաղաքացիական գործ թիվ 3519, 3753/2007թ.  
Նախագահող դատավոր՝ Վ.Ավանեսյան  
Դատավորներ՝ Գ.Մատինյան  
Դ.Խաչատրյան

Քաղաքացիական գործ թիվ **3-243(ՎԳ)**  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Հ.ՍԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՍԿԻՏՈՒՄՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ԳՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի ապրիլի 23-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Արմեն Ստեփանյանի վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.12.2007 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի Արմեն Ստեփանյանի ընդդեմ Արամ, Ֆլորա, Հասմիկ, Գոռ Ստեփանյանների և Գայանե Գևորգյանի՝ բնակելի տարածության նկատմամբ բնակության իրավունքը փոխհատուցմամբ դադարեցնելու, հաշվառումից հանելու և վտարելու պահանջների մասին, ըստ հակընդդեմ հայցի Արամ Ստեփանյանի ընդդեմ Արմեն Ստեփանյանի՝ Արմեն Ստեփանյանին տրված անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայականը մասնակի անվավեր ճանաչելու, պայաի ունեցած բաժնի և իր կողմից կատարված շինարարական ավելացումների նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջների մասին, և ըստ հայցի Հրանուշ Թարխանյանի ընդդեմ Արմեն Ստեփանյանի՝ բնակելի տան և հողամասի նվիրատվության պայմանագիրն անվավեր ճանաչելու և նվիրատվությունը վերացնելու պահանջի մասին

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Արմեն Ստեփանյանը պահանջել է փոխհատուցմամբ դադարեցնել Գայանե Գևորգյանի, Ֆլորա և Հասմիկ Ստեփանյանների օգտագործման իրավունքը Արմավիրի մարզի Մրգաշատ գյուղում գտնվող բնակելի տան նկատմամբ, նրանց հանել հաշվառումից և վտարել այդ տանից:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Արամ Ստեփանյանը պահանջել է մասնակի անվավեր ճանաչել Արմեն Ստեփանյանին տրված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականը, պայաի ունեցած բաժնի և իր կողմից կատարված շինարարական ավելացումների նկատմամբ ճանաչել սեփականության իրավունքը:

---

---

Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի 22.08.2007 թվականի վճռով Արմեն Ստեփանյանի հայցը բավարարվել է, իսկ Արամ Ստեփանյանի հակընդդեմ հայցը՝ մերժվել:

Գիմեով դատարան՝ Հրանուշ Թարխանյանը պահանջել է անվավեր ճանաչել և վերացնել իր և Արմեն Ստեփանյանի միջև 14.07.2006 թվականին կնքված բնակելի տան և հողամասի նվիրատվության պայմանագիրը:

Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի 24.09.2007 թվականի վճռով Հրանուշ Թարխանյանի հայցը մերժվել է:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 02.11.2007 թվականի որոշմամբ վերոնշյալ քաղաքացիական գործերը միացվել են մեկ վարույթում:

Վերաքննիչ դատարանի 29.12.2007 թվականի վճռով Արմեն Ստեփանյանի և Արամ Ստեփանյանի հայցերը մերժվել են, իսկ Հրանուշ Թարխանյանի հայցը՝ բավարարվել:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Արմեն Ստեփանյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Հրանուշ Թարխանյանը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

1. Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 600-րդ հոդվածը, որը չպետք է կիրառել, և չի կիրառել նույն օրենսգրքի 594-րդ հոդվածը և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածը, որոնք պետք է կիրառել:

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Հայցվորը չի հիմնավորել հայցապահանջի հիմքում դրված այն հանգամանքները, որ նվիրատվության պայմանագիր կնքելուց հետո նվիրատուի գույքային, ընտանեկան կամ առողջական վիճակը վատթարացել է, և պայմանագրի կատարումը կհանգեցնի նրա կենսամակարդակի էական իջեցման:

Կողմերի միջև իրականում կնքվել է նվիրատվության պայմանագիր, հետևաբար, այն պայմանով լինել չէր կարող և չէր վավերացվի նոտարի կողմից որպես նվիրատվություն:

2. Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 601-րդ հոդվածը, որը չպետք է կիրառել:

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Հայցվորը չի հիմնավորել նվիրատուի կողմից նվիրատուի կամ նրա ընտանիքի անդամներից որևէ մեկի կյանքի դեմ ոտնձգություն կատարելու փաստը:

3. Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածը, որը պետք է կիրառել:

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Պատասխանողներից որևէ մեկն Արմեն Ստեփանյանի հետ չի կնքել նոտարական կարգով վավերացված գրավոր պայմանագիր, և տեղի չի ունեցել օգտագործման իրավունքի պետական գրանցում, հետևաբար, պատասխանողները ձեռք չեն բերել օգտագործման իրավունք, և դրա իրականացման պայմանները չեն սահմանվել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.12.2007 թվականի վճիռը՝ Հրանուշ Թարխանյանի հայցը բավարարելու և Արմեն Ստեփանյանի հայցը մերժելու մասերով, և օրինական ուժ տալ Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի 22.08.2007 թվականի և 24.09.2007 թվականի վճիռներին:

**2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները.**

Սույն քաղաքացիական գործով կիրառելի են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 600-րդ և 601-րդ հոդվածները: Վեճի առարկա նվիրատվության պայմանագիրը ենթակա է անվավեր ճանաչման, քանի որ նվիրառուն ոտնձգություն է կատարել նվիրատուի կյանքի դեմ: Բացի այդ նվիրատվության պայմանագիրը կնքելուց հետո վատթարացել է նվիրատուի գույքային և ընտանեկան դրությունը:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. 14.07.2006 թվականին Հրանուշ Թարխանյանի և Արմեն Ստեփանյանի միջև կնքվել է նվիրատվության պայմանագիր, որի համաձայն՝ Հրանուշ Թարխանյանն իրեն պատկանող անշարժ գույքը նվիրել է Արմեն Ստեփանյանին: Պայմանագրի պայմանները կատարվել են. Արմեն Ստեփանյանը ընդունել է նվիրատվությունը և 08.08.2006 թվականին անշարժ գույքի նկատմամբ ձեռք է բերել սեփականության իրավունք:

2. Ստելա Արևշատյանը 2006 թվականի հուլիս ամսին Հրանուշ Թարխանյանին հասցրել է մարմնական վնասվածքներ:

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ.

*1) բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործարքն անվավեր է՝ նույն օրենսգրքով սահմանված հիմքերով դատարանի կողմից այն այդպիսին ճանաչելու ուժով (վիճահարույց գործարք) կամ անկախ այդպիսի ճանաչումից (առաջին չ գործարք):

Գործարքների անվավերության հիմքերը սահմանված են օրենսգրքի 305-315-րդ հոդվածներով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 600-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նվիրատուն իրավունք ունի հրաժարվել ապագայում նվիրառուին գույք կամ իրավունք փոխանցելու կամ նվիրառուին գույքային պարտականությունից ազատելու խոստում պարունակող պայմանագիրը կատարելուց, եթե պայմանագիրը կնքելուց հետո նվիրատուի գույքային կամ ընտանեկան դրությունը կամ առողջական վիճակն այնքան է վատթարացել, որ նոր պայմաններում պայմանագրի կատարումը կառաջացնի նրա կենսամակարդակի էական իջեցում:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ.

1. մի շարք վավերապայմանների առկայության դեպքում նվիրատուն հնարավորություն է ստանում **հրաժարվելու պայմանագրի կատարումից**: Այսինքն, հոդվածով նվիրատուի համար նախատեսվում է կնքված պայմանագրի կատարումից հրաժարում և չի կարող արդեն իսկ կատարված պայմանագրի անվավեր ճանաչման հիմք հանդիսանալ:

2. նվիրատվության պայմանագրի կատարումից հրաժարման պարտադիր վավերապայման է նվիրատուի գույքային, ընտանեկան կամ առողջական դրության այնպիսի վատթարացումը, որի պայմաններում պայմանագրի կատարումը կառաջացնի նրա կենսամակարդակի էական իջեցում:

Այսինքն, նվիրատուի գույքային, ընտանեկան կամ առողջական դրության վատթարացումն ոչ թե պայմանագրի կատարման հետևանք է, այլ պայմանագրի առարկայի օտարման հետ առնչություն չունեցող այլ գործոնների՝ վրա հասնելու արդյունք, որոնց առաջացումը նվիրատուն չէր կարող գիտակցել պայմանագիրը կնքելիս:

---

---

Նման եզրահանգման համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում այն հանգամանքը, որ նվիրատվության պայմանագիր կնքելիս նվիրատուն պարտավոր է գիտակցել պայմանագրի առարկա հանդիսացող գույքի օտարման հնարավոր հետևանքները:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին (տե՛ս օրինակ՝ «Քնար-88» ՍՊԸ ընդդեմ ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության, 21.12.2006թ. քաղ. գործ թիվ 3-2504/ՏԳ/ՏԳ, (գումար բռնագանձելու պահանջով)):

Սակայն կարևորելով սույն բողոքի հիմքում ընկած իրավական հարցադրումը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում կրկին անդրադառնալ նշված հարցին:

Սույն քաղաքացիական գործի քննության ժամանակ գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 218-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ վճռի մեջ պետք է նշվեն վերաքննիչ դատարանի կողմից պարզված գործի հանգամանքները, ապացույցները, որոնց վրա հիմնված են վերաքննիչ դատարանի հետևություններն այդ հանգամանքների մասին, և փաստարկները, որոնցով վերաքննիչ դատարանը մերժում է այս կամ այն ապացույցները, ինչպես նաև այն օրենքները, ՀՀ միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է վերաքննիչ դատարանը վճիռ կայացնելիս:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ վճռի թե՛ փաստական և թե՛ իրավական հիմնավորումները:

Վճռի իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ նյութական իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Վճռում ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Վճռի իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա վճռի իրավակիրառ գործառույթը, ընդգծում դատական գործունեության և դատական վճռի օրինականությունը (տե՛ս ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն ընդդեմ «Քնար-88» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, քաղ. գործ թիվ 3-2504/ՏԳ(գումար բռնագանձելու պահանջով)):

Սույն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանը նվիրատվության պայմանագիրն անվավեր ճանաչելու մասին հայցի բավարարման հիմքում դրել է այն հանգամանքը, որ այն կնքելուց հետո վատթարացել է նվիրատուի գույքային դրությունը, քանի որ նվիրատուն զրկվում է իր միակ ապրուստի միջոց հանդիսացող տնամերձ հողամասը օգտագործելու և տնօրինելու իրավունքից:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհիմն է Վերաքննիչ դատարանի կողմից նվիրատվության պայմանագրի անվավեր ճանաչումը, քանի որ նվիրատուի գույքային դրության վատթարացումը ոչ թե պայմանագիրն անվավեր ճանաչելու, այլ դեռևս չկատարված պայմանագրի կատարումից հրաժարվելու հիմք է:

Բացի այդ, վճռում չեն նշվել Հրանուշ Թարխանյանի և Արմեն Ստեփանյանի միջև կնքված նվիրատվության պայմանագրի առարկա հանդիսացող գույքի օտարման հետ առնչություն չունեցող այն գործոնները, որոնք հանգեցրել են նվիրատուի գույքային դրության վատթարացմանը:

*2) բողոքն երկրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 601-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նվիրատուն իրավունք ունի վերացնել նվիրատվությունը, եթե նվիրառուն ոտնձգություն է կատարել

նրա, նրա ընտանիքի անդամներից կամ մերձավոր ազգականներից որևէ մեկի կյանքի դեմ կամ նվիրատուին դիտավորյալ պատճառել է մարմնական վնասվածքներ:

Սույն քաղաքացիական գործի փաստերի համաձայն՝ նվիրատուի նկատմամբ ոտնձգությունը կատարվել է ոչ թե Արմեն Ստեփանյանի, այլ Ստելա Արեշատյանի կողմից, ինչը չի կարող հիմք հանդիսանալ Արմեն Ստեփանյանի հետ կնքված նվիրատվության պայմանագրի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 601-րդ հոդվածի կիրառման համար:

3) Վճռաբեկ բողոքի երրորդ հիմքին Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում, քանի որ այն Վերաքննիչ դատարանի կողմից գնահատման առարկա չի դարձվել:

Վճռաբեկ բողոքի պատասխանում ներկայացված փաստարկները հերքվում են վերոնշյալ պատճառաբանություններով:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի առաջին և երկրորդ հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարություն օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով վերանայվող դատական ակտը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Հրանուշ Թարխանյանի հայցի մասով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը մասնակիորեն փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով Հրանուշ Թարխանյանի հայցի մասով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը մասնակիորեն փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.12.2007 թվականի վճռի՝ Հրանուշ Թարխանյանի հայցը բավարարելու և Արմեն Ստեփանյանի հայցը մերժելու մասերը:

2. Հրանուշ Թարխանյանի հայցի մասով վճիռը փոփոխել՝ Հրանուշ Թարխանյանի հայցը մերժել:

3. Արմեն Ստեփանյանի հայցի մասով գործն ուղարկել Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

4. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի վճիռ

Քաղաքացիական գործ թիվ **3-506(ՎԴ)**  
**2008թ.**

Քաղաքացիական գործ թիվ 07-4063  
Նախագահող դատավոր՝ Տ.Սահակյան  
Դատավորներ՝ Կ.Հակոբյան  
Տ.Նազարյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ  
դատարան)

*նախագահությամբ* Հ.ՍԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՍԿԻՏՈՒՄՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի սեպտեմբերի 26-ին

դռնբաց դատական նիստում, քննելով երրորդ անձ Ռոզա Մխիթարյանի վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 24.01.2008 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի Ջուլիետա Ղազարյանի ընդդեմ Արմավիրի գյուղապետարանի, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանման (այսուհետ՝ Կադաստր)՝ փաստաթղթում ուղղում կատարելու և գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման պահանջների մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Ջուլիետա Ղազարյանը պահանջել է Արմավիրի մարզի Արմավիր գյուղում գտնվող Աշոտ Եղիազարյանի անվամբ տրված սեփականության իրավունքի վկայականում նշված տան կիսանկուղը ճանաչել որպես առաջին հարկ, իսկ առաջին հարկը որպես երկրորդ հարկ և պարտավորեցնել Արմավիրի գյուղապետարանին տնտեսական գրքում և տնտեսական գրքի 9/850 քաղվածքի հիման վրա տրված 19.05.2000 թվականի տեղեկանքում կատարել ուղղում և ավելացնել իր անունը, իսկ Կադաստրին պարտավորեցնել Արմավիր գյուղում գտնվող տան չվաճառված մասի նկատմամբ գրանցել իր սեփականության իրավունքը:

Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի 25.07.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 24.01.2008 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ռոզա Մխիթարյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ջուլիետա Ղազարյանը:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) *Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 09.02.07 թվականին թիվ 07-1017 գործով կայացված վճռով Ջուլիետա Ղազարյանի և Արտաշես Եղիազարյանի հայցն ընդդեմ Աշոտ Եղիազարյանի, Ռոզա Մխիթարյանի, նոտար Ա. Յակոբյանի և երրորդ անձ Կադաստրի՝ սեփականության իրավունքի վկայականն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքները կիրառելու պահանջների մասին՝ մերժվել է: Վերաքննիչ դատարանը, խախտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածը, գործի քննությունը կարճելու փոխարեն ըստ էության այն քննության առնելով՝ հայցը բավարարել է:

2) *Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածը, ՀԽՍՀ քաղաքացիական օրենսգրքի 133-րդ հոդվածը, ՀԽՍՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 344-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր և կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածը, որը չպետք է կիրառեր:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Կադաստրը վրիպակ է թույլ տվել, քանի որ Ռոզա Մխիթարյանի և Ռոբերտ Անտոնյանի անվամբ տրված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի սխեմատիկ հատակագծում նախանշված են ինչպես նկուղային, այնպես էլ բնակելի և օժանդակ մասերը և պատշգամբները: Հետևաբար, Ռոզա Մխիթարյանի և Ռոբերտ Անտոնյանի սեփականության իրավունքը գրանցվել է և նկուղային, և բնակելի, և օժանդակ մասերի նկատմամբ, սակայն թվաբանական սխալի պատճառով մակերեսը պակաս է արձանագրվել:

Բացի այդ, Ռոզա Մխիթարյանը ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 09.02.2007 թվականի վճռով վեճի առարկա բնակելի տան և տնամերձ հողամասի նկատմամբ ճանաչվել է բարեխիղճ ձեռքբերող:

Վերաքննիչ դատարանը հիմք ընդունելով Հոկտեմբերյանի ժողատարանի 23.12.1983 թվականի վճիռն և վիճելի տունը դիտելով, որպես ամուսինների գույք, սխալ է մեկնաբանել նշված վճիռը, քանի որ վճռով վիճելի անշարժ գույքը որպես ամուսինների գույք չի ճանաչվել, այլ դիտվել է որպես ծխապատկան գույք և այդ իրավահարաբերությունները կարգավորվել են նախկին ՀԽՍՀ քաղաքացիական օրենսգրքի 127-133-րդ հոդվածներով: Նշված վճռով գույքը, որպես ծխապատկան գույք բաժանվել է ոչ թե ամուսինների, այլ ծխի անդամների միջև, հետևաբար տվյալ դեպքում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի դրույթները կիրառելի չեն: Ավելին, տվյալ ժամանակաշրջանում գործող կարգին համապատասխան հայցվորը վերը նշված վճիռը չի ներկայացրել կատարման՝ համապատասխան գյուղական կամ շրջանային գործկոմներին գրանցման և ձևակերպման համար:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է մասնակիորեն բեկանել Վերաքննիչ դատարանի 24.01.2008 թվականի վճիռը և դատական ակտը փոփոխել՝ Ջուլիետա Ղազարյանի հայցը՝ Արմավիրի մարզի Արմավիրի համայնքում գտնվող Աշոտ Եղիազարյանի անվամբ տրված տան կիսանկուղային հարկի և ըստ հատակագծի 1-ին հարկի 78,7 և 10,9 քմ պատշգամբների նկատմամբ սեփականատեր ճանաչելու և իրավունքը գրանցելու մասով՝ մերժել:

---

---

## **2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները.**

Երրորդ անձ Ռոզա Մխիթարյանն իր բողոքի հիմքում դրել է այնպիսի փաստեր, որոնք միմյանց հակասում են և չեն համապատասխանում իրականությանը, քանի որ Հոկտեմբերյանի ժողդատարանի 23.12.1983 թվականի վճռով վճռվել է վիճելի բնակարանի 1-ին հարկի 34 քմ և 18,45 քմ սենյակները սեփականության իրավունքով հատկացնել Ջուլիետա Ղազարյանին՝ երկու որդիների հետ մեկտեղ:

Ջուլիետա Ղազարյանի սեփականության իրավունքը հիշյալ տան նկատմամբ ավելի շուտ է գրանցվել, քան Աշոտ Եղիազարյանինը, քանի որ տնտեսական գրքում Ջուլիետա Ղազարյանը հաշվառված է 722 համարի տակ, իսկ Աշոտ Եղիազարյանը՝ 850 համարի տակ:

Վեճի առարկա հանդիսացող տունը Աշոտ Եղիազարյանը ձեռք է բերել ամուսնության ընթացքում և այն նրանց ընդհանուր համատեղ սեփականությունն է, հետևաբար Աշոտ Եղիազարյանը իրավունք չունի այդ տունը վաճառել առանց Ջուլիետա Ղազարյանի և Արտաշես Եղիազարյանի համաձայնության:

Վեճը դատարանում քննելու ժամանակ սեփականության իրավունքի վկայականում շտկված չի եղել վրիպակ կոչվածը, քանի որ դատական միտոի ժամանակ չի ներկայացրել ուղղված վկայականը:

## **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Աշոտ Եղիազարյանին 22.05.2000 թվականին տրված սեփականության իրավունքի վկայականում բնակելի տան հատակագծի մեջ նշված են նաև կիսանկողային հարկի և 1-ին հարկի պատշգամբները:

2) 26.09.2006 թվականին Աշոտ Եղիազարյանը և Ռոզա Մխիթարյանի միջև կնքված բնակելի տան և տնամերձ հողամասի առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ վաճառողը վաճառում է, իսկ գնորդը ձեռք է բերում բնակելի տուն իր տնամերձ հողամասով, որը կազմում է 0,20 հա: Ամբողջ տունն ունի 85,2 քմ բնակելի մակերես, 106,3 քմ մակերեսով օժանդակ շինություն:

3) Ռոզա Մխիթարյանին և Ռոբերտ Անտոնյանին 03.10.2006 թվականին տրված թիվ 2225406 սեփականության իրավունքի վկայականում բնակելի տան հատակագծում նշված են նաև կիսանկողի և 1-ին հարկի պատշգամբները:

4) 09.02.2007 թվականին ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի կողմից քննված գործով ներկայացված հայցապահանջը վերաբերել է սեփականության իրավունքի գրանցումն անվավեր ճանաչելուն, դրա հիման վրա կնքված գործարքն անվավեր ճանաչելուն և անվավերության հետևանքները կիրառելուն:

## **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

*1) Վճռաբեկ բողոքն առաջին հիմքով անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը կարճում է գործի վարույթը, եթե նույն անձանց միջև, նույն առարկայի մասին միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ, բացառությամբ սույն օրենսգրքի 110-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի:

Սույն գործի փաստերի համաձայն՝ 09.02.2007 թվականին ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի կողմից քննված գործով ներկայացված հայցապահանջը վերաբերել է սեփականության իրավունքի գրանցումն անվավեր ճանաչելուն, դրա հիման

վրա կնքված գործարքն անվավեր ճանաչելուն և անվավերության հետևանքները կիրառելուն: Որպես հայցի հիմք ներկայացվել է այն հանգամանքը, որ խախտվել է հայցվորների սեփականության իրավունքը, քանի որ վիճելի բնակելի տան նկատմամբ նրանք հանդիսանում են համասեփականատեր: Մինչդեռ, սույն քաղաքացիական գործով նեկայացված հայցապահանջը վերաբերում է Կադաստրի փաստաթղթերում ուղղում կատարելուն և չվաճառված գույքի նկատմամբ հայցվորի սեփականության իրավունքի պետական գրանցմանը:

Հիմք ընդունելով վերագրյալը, Վճռաբեկ դատարանը արձանագրում է, որ սույն քաղաքացիական գործով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի կիրառման հիմքը բացակայում է, քանի որ սույն քաղաքացիական գործի և նախկինում Վերաքննիչ դատարանի կողմից քննված գործի հիմքը և առարկան տարբեր են:

2) Վճռաբեկ բողոքն երկրորդ հիմքով հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառարանությամբ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործի լուծման համար կարևոր է Աշոտ Եղիազարյանի և Ռոզա Մխիթարյանի միջև կնքված առուվաճառքի պայմանագրի առարկան որոշելը: Առուվաճառքի պայմանագրի առարկան որոշելու համար Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ պայմանագրի մեկնաբանմանը:

Սույն քաղաքացիական գործով 26.09.2006 թվականի բնակելի տան և տնամերձ հողամասի առուվաճառքի պայմանագրում նշվել է, որ վաճառողը վաճառում է, իսկ գնորդը ձեռք է բերում *բնակելի տուն իր տնամերձ հողամասով*, որը կազմում է 0,20 հա: Ամբողջ տունն ունի 85,2 քմ բնակելի մակերես, 106,3 քմ մակերեսով օժանդակ շինություն:

Վերաքննիչ դատարանը վճիռ կայացնելիս եկել է այն եզրահանգման, որ իրականում առուվաճառքի պայմանագրի առարկա են հանդիսանում միայն այդ տարածքները, իսկ նույն տան կիսանկուղը և պատշգամբները պայմանագրի առարկան չեն կազմում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի պայմանները մեկնաբանելիս դատարանը պետք է ելնի նրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից:

Հիմք ընդունելով պայմանագրում պարունակող բառերի տառացի նշանակությունը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն պայմանագրի առարկա է հանդիսանում ամբողջ բնակելի տունը՝ որպես մեկ ամբողջական միավոր: Չնայած պայմանագրում նշվել է միայն բնակելի մակերեսը և օժանդակ շինությունները, սակայն դա չի նշանակում, որ կիսանկուղը և պատշգամբները, որոնք պայմանագրում հատուկ նշված չեն, չեն վաճառվել:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի 2-րդ հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով՝ Վերաքննիչ դատարանի վճիռը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործն ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ

---

---

սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 24.01.2008 թվականի վճռի՝ հայցը բավարարելու մասը և այն փոփոխել. Ջուլիետա Գազարյանի հայցը՝ Արմավիրի մարզի Արմավիրի համայնքում գտնվող Աշոտ Եղիազարյանի անվամբ տրված տան կիսանկուղային հարկի և ըստ հատակագծի 1-ին հարկի 78,7 և 10,9 քմ պատշգամբների նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու և գրանցելու մասով, մերժել: Վճռի մնացած մասը թողնել օրինական ուժի մեջ:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՈՒՐՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **3-377(ՎԳ)**  
**2008թ.**

Քաղաքացիական գործ թիվ 07-4107

Նախագահող դատավոր՝ **Տ.Սահակյան**

Դատավորներ՝ **Կ.Հակոբյան**

**Տ.Նազարյան**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ **Վճռաբեկ  
դատարան**)

*նախագահությամբ* **Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ**  
*մասնակցությամբ դատավորներ* **Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ**  
**Վ.ԱԲԵԼՅԱՆԻ**  
**Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ**  
**Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ**  
**Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ**  
**Ս.ՕՀԱՆՅԱՆԻ**

2008 թվականի հունիսի 20-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «ԱրմենՏել» ՓԲԸ-ի (այսուհետ՝ **Ընկերություն**) վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.02.2008 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Արա Խաչատրյանի ընդդեմ Ընկերության՝ խաղի հաղթող ճանաչելու և շահումը վճարելու պահանջների մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Արա Խաչատրյանը պահանջել է ճանաչել 2006 թվականի դեկտեմբերին Ընկերության կողմից հայտարարված «Գանձեր որոնողները» խաղի շրջանակներում անցկացվող «Շրջադարձ աճուրդ» խաղի հաղթող և պարտավորեցնել Ընկերությանը վճարելու նշված խաղի 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ շահումը:

Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 19.10.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ **Վերաքննիչ դատարան**) 15.02.2008 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի, 52-րդ հոդվածի 2-րդ մասի, 53-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 2-րդ մասը որը պետք է կիրառեր:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը Արա Խաչատրյանի պահանջը դիտել է հիմնավոր՝ առանց հաշվի առնելու այն հանգամանքը, որ նշված խաղի երրորդ կարևորագույն պայմանը՝ Արա Խաչատրյանի կողմից ուղարկված թվերը չկրկնվելու վերաբերյալ, նախորդ դատական ակտով չեն հաստատվել: Այդ հանգամանքը չի հաստատվել նաև սույն գործի քննության ընթացքում: Նման պարագայում որևէ կերպ չի հիմնավորված հանգամանքը Վերաքննիչ դատարանը դիտել է որպես հաստատված հանգամանք:

Ընկերությունը բաժանորդներին օրենքով սահմանված կարգով տեղեկացրել է խաղի պայմանների և իր պատասխանատվության սահմանափակումների մասին: Հետևաբար, անգամ ծրագրային սխալների, խափանումների կամ հայտարարության պայմաններում նախատեսված այլ հիմքերով Ընկերության կողմից պարտավորությունները խախտելու դեպքում, եթե նույնիսկ հաղթող է ճանաչվել մեկ այլ թիվ ուղարկած բաժանորդ, միևնույն է, մինչև խաղն սկսվելը տրված տեղեկատվությամբ Ընկերության և բաժանորդների միջև դրա վերաբերյալ համաձայնություն ձեռք բերված լինելու հանգամանքի հիման վրա Ընկերությունը պատասխանատվություն կրել չի կարող: Բացի այդ, քանի որ խաղի համար ստեղծված «սպասարկող ծրագիրը» նախատեսված է եղել ստանալու բացառապես ամբողջ թվեր, ուստի Արա Խաչատրյանին հատկացված հեռախոսահամարից ուղարկված կոտորակային թվերը չեն մշակվել, ծրագիրը չի արձագանքել, ինչի մասին բոլոր բաժանորդները, այդ թվում՝ հայցվորը, նախապես՝ խաղն սկսելուց առաջ, տեղեկացվել են:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 15.02.2008 թվականի որոշումը և գործն ուղարկել՝ նոր քննության:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 2006 թվականի դեկտեմբերին հայտարարված «Գանձեր որոնողները» գովազդային խաղի շրջանակներում անց է կացվել «Շրջադարձ անորդ» խաղը:

2) Ընկերության կողմից 31.01.2007 թվականին տրված թիվ 1-230/2 գրության համաձայն՝ խաղի հաղթող է ճանաչվել 091411117 հեռախոսահամարը, որից ուղարկվել է ամենափոքր չկրկնվող թիվը՝ «565»-ը:

3) Սույն քաղաքացիական գործով Արա Խաչատրյանը վիճարկում է խաղի կանոններին համապատասխան հաղթող ճանաչվելու հարցը:

### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1039-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց պահանջները՝ կապված ռիսկի վրա հիմնված խաղեր և գրազ (մոլեխաղեր) կազմակերպելու կամ դրանց մասնակցելու հետ, ենթակա չեն դատական պաշտպանության, բացառությամբ այն անձանց պահանջների, ովքեր խաղերին կամ գրազին մասնակցել են խաբեության, բռնության, սպառնալիքի կամ իրենց ներկայացուցչի՝ խաղերի կամ գրազի կազմակերպչի հետ չարամիտ համաձայնության ազդեցության ներքո, ինչպես նաև նույն օրենսգրքի 1040 հոդվածի 5-րդ կետում նշված պահանջների:

Նույն օրենսգրքի 1040-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ վիճակխաղ, տոտալիզատոր կամ այլ խաղեր անցկացնելու կանոններին համապատասխան խաղի կազմակերպիչը շահած անձանց պետք է վճարի նրանց շահումը՝ խաղեր անցկացնելու կանոններով նախատեսված չափով, ձևով (դրամով կամ քննդեմով) և ժամկետում, իսկ եթե այդ

կանոններում ժամկետը նշված չէ, ապա խաղերի արդյունքները որոշելու պահից ոչ ուշ, քան տասն օրում:

Վերոնշյալ հոդվածների համադրումից հետևում է, որ ռիսկի վրա հիմնված խաղեր և գրազ (մոլեխաղեր) կազմակերպելու կամ դրանց մասնակցելու հետ կապված պահանջները ենթակա չեն դատարանում քննության և միայն բացառիկ դեպքերում դատարանը կարող է քննել այս ոլորտում ծագող վեճերը: Մասնավորապես, դատարանում քննության ենթակա են այն անձանց պահանջները, ովքեր խաղերին կամ գրազին մասնակցել են խաբեության, բռնության, սպառնալիքի կամ իրենց ներկայացուցչի՝ խաղերի կամ գրազի կազմակերպչի հետ չարամիտ համաձայնության ազդեցության ներքո: Բացի այդ, դատարանին են ենթակա խաղի կազմակերպչի կողմից շահումը վճարելուց խուսափելու հետ կապված վեճերը:

Այսպիսով, խաղի հաղթող ճանաչելու հետ կապված վեճերը, այդ թվում խաղի կանոններին համապատասխան դրանց անցկացված լինելու հարցերը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1039-րդ և 1040-րդ հոդվածների ուժով դատարանի իրավասությունից դուրս են, իսկ դրանք կազմակերպող և դրանց մասնակցող անձանց պահանջները՝ դատական պաշտպանության ոչ ենթակա:

Հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն քաղաքացիական գործով վիճարկվում է Արա Խաչատրյանի «Շրջադարձ աճուրդ» խաղի հաղթող ճանաչվելու հարցը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ պահանջը ենթակա չէ դատարանում քննության:

Ինչ վերաբերում է ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի 10.08.2007 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռին, որով դատարանը գտել է, որ Արա Խաչատրյանի պահանջը բխում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1040-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներից և այն ենթակա է դատական պաշտպանության, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարանի այդ եզրահանգումը սույն քաղաքացիական գործով նախատեսելի նշանակություն չի կարող ունենալ հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է վերոնշյալ իրավական խնդրին (տե՛ս՝ Ա.Եփրեմյան ընդդեմ Ն.Մանվելյանի՝ անհիմն հարստացման գումարները վերադարձնելու պահանջի մասին թիվ 3-132(ՎԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի որոշումը): Մասնավորապես, վերոնշյալ որոշմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենքի մեկնաբանության մասին դատարանի իրավական դիրքորոշումը չի ընդգրկվում դատական ակտի պրեյուդիցիալ կապի (նախադատելիության) օբյեկտիվ սահմաններում, այսինքն չունի նախադատելի նշանակություն:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի 10.08.2007 թվականի վճռով արտահայտված իրավական եզրահանգումները ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառման հիմք չեն:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարություն օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով վերանայվող դատական ակտը բեկանելու համար:

Միաժամանակ, վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործի վարույթը ենթակա է կարճման, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ դատարանը կարճում է գործի վարույթը, եթե վեճը ենթակա չէ դատարանում քննության, իսկ 236-րդ հոդվածի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքով Վճռաբեկ դատարանը՝ ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և կարճում է գործի վարույթն ամբողջովին կամ դրա մի մասը:

---

---

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.02.2008 թվականի որոշումը և գործի վարույթը կարճել:
2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՈՒՐՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ քաղաքացիական գործերով  
վերաքննիչ դատարանի վճիռ  
Քաղաքացիական գործ թիվ 06-3883  
Նախագահող դատավոր՝ Վ.Ավանեսյան  
Դատավորներ՝ Գ.Խաչատրյան  
Գ.Մատինյան

Քաղաքացիական գործ թիվ **3-38(ՎԳ)**  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Հ.ՍԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի փետրվարի 29-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Ֆրունզիկ Ադամյանի և Ֆելիքս Շմավոնյանի վճռաբեկ բողոքը ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 11.12.2006 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի Գագիկ Ճուղուրյանի ընդդեմ Ֆելիքս Շմավոնյանի, Յոլակ Բաբայանի, երրորդ անձ Ֆելիքս (իրականում՝ Ֆրունզիկ) Ադամյանի՝ գույքին պատճառով ավանսի փոխհատուցման պահանջի մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Գագիկ Ճուղուրյանը պահանջել է Ֆելիքս Շմավոնյանից և Յոլակ Բաբայանից համապարտության կարգով բռնագանձել 1.700.000 ՀՀ դրամ՝ որպես գույքին պատճառով ավանս, ինչպես նաև վճարված 34.000 ՀՀ դրամ պետական տուրքի գումարը:

ՀՀ Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 27.09.2006 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 11.12.2006 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն: Վճռվել է Ֆելիքս Շմավոնյանից և Յոլակ Բաբայանից համապարտության կարգով հոգուտ Գագիկ Ճուղուրյանի բռնագանձել 1.133.333 ՀՀ դրամ՝ որպես պատճառով ավանս և 22.670 ՀՀ դրամ՝ որպես վճարված պետական տուրքի գումար:

---

---

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Ֆելիքս Շամպոնյանը և երրորդ անձ Ֆրունզիկ Ադամյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով՝

*Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1076-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ պարբերությունները, որոնք պետք է կիրառեր:*

Վերաքննիչ դատարանը, հասցված վնասը համարելով պատահարի բոլոր երեք մասնակիցների կողմից պատճառված, հաշվի չի առել, որ վնասի առաջացումը տեղի է ունեցել վթարի հետևանքով վնասված «Գ.Ա.Չ 32213» մակնիշի ավտոմեքենայի վարորդ, քրեական գործով տուժող ճանաչված Արսեն Կուրելյանի կոպիտ անզգուշության՝ ճանապարհային երթևեկության կանոնների խախտման հետևանքով և նա, ունենալով տեխնիկական հնարավորություն, համապատասխան միջոցներ չի ձեռնարկել վթարից խուսափելու համար, ինչի արդյունքում Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1076-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ պարբերությունները:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Գագիկ Ճուղուրյանը «Գ.Ա.Չ 32213» մակնիշի ավտոմեքենայի սեփականատեր Իշխան Օհանյանի անունից դատարանում հանդես գալու պատշաճ լիազորություն չի ունեցել: Այսպես, որպես «Գ.Ա.Չ 32213» մակնիշի ավտոմեքենայի նկատմամբ վերջինիս իրավունքները հավաստող դատարան ներկայացված 28.12.2004 թվականի «Պայմանագիր» և 29.12.04 և 29.05.2006 թվականների «Հայտարարագիր» վերնագրված փաստաթղթերը սակասում են միմյանց, դրանցում Իշխան Օհանյանի ստորագրությունները տարբեր են, այդ իսկ պատճառով պատշաճ չեն (շինձու են և կեղծ), իսկ «Պայմանագիր»-ը չի համապատասխանում քաղաքացիական օրենսգրքի՝ այդպիսի պայմանագիր կնքելու պահանջներին, դրանում բացակայում է այն կազմելու վայրը, ավտոմեքենայի վաճառքի գինը, ինչպես նաև չկա ապացույց՝ այն Իշխան Օհանյանի կողմից ստորագրված լինելու մասին:

«Հայտարարագիր» վերնագրված մյուս երկու փաստաթղթերում Իշխան Օհանյանի անվան դիմաց ստորագրությունները տարբերվում են միմյանցից, իսկ բովանդակությունից բխում է, որ Իշխան Օհանյանի և Գագիկ Ճուղուրյանի միջև ավտոմեքենայի առուվաճառք տեղի չի ունեցել, այլ ընդամենը Իշխան Օհանյանն իր պահանջի իրավունքը զիջել է Գագիկ Ճուղուրյանին, որը ստացվելիք գումարը պետք է տնօրիներ իր հայեցողությամբ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են բեկանել Վերաքննիչ դատարանի 11.12.2006 թվականի վճռի՝ հայցը մասնակիորեն բավարարելու մասը և գործն այդ մասով ուղարկել նոր քննության:

## **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 28.12.2004 թվականին կազմված «Պայմանագիր» վերնագրված փաստաթղթի համաձայն (այսուհետ՝ Պայմանագիր)՝ Իշխան Օհանյանն իրեն պատկանող «Գագ 32213» մակնիշի ավտոմեքենան վաճառել է Իջևանի Աբովյան 22/25 բնակիչ Գագիկ Ճուղուրյանին:

2) ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի՝ 24.05.2006 թվականի օրինական ուժի մեջ մտած դատավճռի համաձայն՝ Ֆրունզիկ Ադամյանի «Վ.Ա.Չ 2121» մակնիշի ավտոմեքենան և Հովհաննես Շահնազարյանի «ՁԻԼ 157» մակնիշի ավտոմեքենան 31.05.2005 թվականին ստեղծել են վթարային իրավիճակ, որի հետևանքով

տեղի է ունեցել նշված ավտոմեքենաների և Արսեն Կուրեխյանի կողմից վարվող «ԳԱՉ 32213» մակնիշի ավտոմեքենայի բախում:

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ *այն հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1072-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ իրավաբանական անձինք և քաղաքացիները, որոնց գործունեությունը կապված է շրջապատի համար առավել վտանգի աղբյուրի հետ (տրանսպորտային միջոցների, մեխանիզմների, բարձր լարվածության էներգիայի, ատոմային էներգիայի, պայթուցիկ նյութերի, ուժեղ ներգործող թույների և այլնի օգտագործում, շինարարական և դրա հետ կապված այլ գործունեության իրականացում), պարտավոր են հատուցել առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասը, եթե չեն ապացուցում, որ վնասը ծագել է անհաղթահարելի ուժի կամ տուժողի դիտավորության հետևանքով: Առավել վտանգի աղբյուրի տիրոջը դատարանը կարող է նաև լրիվ կամ մասնակիորեն ազատել պատասխանատվությունից՝ նույն օրենսգրքի 1076 հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված հիմքերով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1076-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե տուժողի **կոպիտ անզգուշությունը** նպաստել է վնասի առաջացմանը կամ մեծացմանը, հատուցման չափը պետք է նվազեցվի՝ կախված տուժողի և վնաս պատճառողի մեղքի աստիճանից:

Տուժողի **կոպիտ անզգուշության** առկայության և **վնաս պատճառողի մեղքի բացակայության** այն դեպքերում, երբ պատասխանատվությունը վրա է հասնում մեղքից անկախ, հատուցման չափը կարող է նվազեցվել կամ վնասի հատուցումը կարող է մերժվել, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:

Սույն գործով ներկայացված հայցապահանջով պայմանավորված՝ ապացուցման առարկան են կազմում հետևյալ հանգամանքները՝

1. գործով պատասխանողներին սեփականության իրավունքով պատկանող առավել վտանգի աղբյուրի շահագործման արդյունքում հայցվորին վնաս պատճառված լինելու փաստը,

2. հայցվորի մոտ գործողություններում կոպիտ անզգուշության առկայության կամ բացակայության փաստը, իսկ համապատասխան փաստի առկայություն դեպքում նաև՝

3. պատասխանողների մոտ մեղքի ցանկացած ձևի առկայության կամ բացակայության փաստը:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին (տես օրինակ՝ «Քնար-88» ՍՊԸ ընդդեմ ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության, 21.12.2006թ. Քաղ. գործ թիվ 3-2504/ՏԴ/ՏԴ, (զումար բռնագանձելու պահանջով)):

Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ վճռի թե՛ փաստական և թե՛ իրավական հիմնավորումը: Ըստ Վճռաբեկ դատարանի վերոհիշյալ որոշման՝ վճռի իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ նյութական իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Վճռում ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Վճռի իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա վճռի իրավակիրառ գործառույթը, ընդգծում դատական գործունեության և դատական վճռի օրինականությունը:

---

---

Մինչդեռ սույն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանն առանց անդրադառնալու և գնահատման առարկա դարձնելու հայցվորի մոտ կոպիտ անգոյություն առկայության, ինչպես նաև պատասխանողի մոտ մեղքի առկայության կամ բացակայության հանգամանքը, հաստատված է համարել միայն Արսեն Կուրեխյանի կողմից ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու փաստը և հայցապահանջը բավարարել է մասնակիորեն՝ 2/3-րդ մասով:

Այսինքն՝ Վերաքննիչ դատարանը չի պարզել հասցված վնասում հայցվորի մեղքի աստիճանը, պատասխանողների մեղքի առկայության հանգամանքը, որը վերջիններիս պատասխանատվության ենթարկելու (և դրա չափը որոշելու) միակ նախապայմանն է:

Ինչ վերաբերում է Պայմանագիրն ու Հայտարարագիրը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չգնահատելու վճռաբեկ բողոքի փաստարկներին, ապա Վճռաբեկ դատարանը դրանք գնահատման առարկա չի դարձնում Պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի բացակայության պատճառով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների համաձայն, Վերաքննիչ դատարանի վճիռը մասնակիորեն բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի 11.12.2006 թվականի վճիռը՝ հայցը բավարարելու մասով և գործն այդ մասով ուղարկել Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՈՒՐՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ քաղաքացիական վերաքննիչ  
դատարանի վճիռ  
Քաղաքացիական գործ թիվ 07-3504  
Նախագահող դատավոր՝ Տ.Սահակյան  
Դատավորներ՝ Ն.Հովսեփյան  
Մ.Ասատրյան

Քաղաքացիական գործ թիվ **3-43(ՎԳ)  
2008թ.**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ  
դատարան)

*նախագահությամբ* Հ.ՍԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի փետրվարի 29-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Սուրեն Գալստյանի վճռաբեկ բողոքը ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի 13.11.2007 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի Սուրեն Գալստյանի ընդդեմ Կամո Պետրոսյանի՝ պատճառված վնասի փոխհատուցման պահանջի մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Գիմելով դատարան՝ Սուրեն Գալստյանը խնդրել է Կամո Պետրոսյանից բռնագանձել 341.400 (երեք հարյուր քառասունմեկ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ, այդ թվում՝ 320.000 (երեք հարյուր քսան հազար) ՀՀ դրամ՝ որպես պատճառված վնասի փոխհատուցում, 6.400 (վեց հազար չորս հարյուր) ՀՀ դրամ՝ վճարված պետական տուրքի գումար և 15.000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ փորձագետին վճարված գումար:

ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի 07.08.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 13.11.2007 թվականի վճռով հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Սուրեն Գալստյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

---

---

*Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածը՝ խախտելով պատճառված վնասի հատուցում ստանալու անձի իրավունքը:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը չի հետազոտել և օբյեկտիվ չի գնահատել թիվ 9 թաղամասային հանձնաժողովի 11.04.2007 թվականի ակտը, «Մար-Մոս» ՍՊԸ-ի 13.04.2007 թվականի գնահատման եզրակացությունը, «Լոռի ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի ներկայացուցչի և կողմերի մասնակցությամբ կատարված տեղատեսության արդյունքները, գործով վկաներ Ս.Սահակյանի, Ա.Բեգլարյանի, Լ.Բոշյանի ցուցմունքները:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ վերոնշյալ ապացույցներով հիմնավորվում է, որ 05.04.2007 թվականին մեկ հարկ վերև բնակվող Կամո Պետրոսյանի անուշադրության պատճառով ջուր է լցվել Սուրեն Գալստյանի բնակարան, որի հետևանքով վերջինս կրել է վնասներ: Կատարված տեղատեսությամբ արձանագրվել է հաստատվել է, որ Վանաձոր քաղաքի Խորենացու փողոցի 6-րդ շենքի թիվ 2 բնակարանի միջանցքի, խոհանոցի, բաղնիքի և սանհանգույցի առաստաղին, խոհանոցի և ննջասենյակի պատերին առկա են ջրից առաջացած հետքեր, իսկ հանդերձարանի պատը խոնավ է եղել: Միջանցքի առաստաղը վնասված էր մուտքի դռնից մոտ 1,5-2 մետր տարածքի վրա, սվաղը թափված էր: Միաժամանակ հաստատվել է, որ Վանաձոր քաղաքի Խորենացու փողոցի 6-րդ շենքի թիվ 5 բնակարանի ջրահեռացման համակարգը ռետինե խողովակով խոհանոցից միացված է լոգարանի տակ գտնվող ջրահեռացման զծին, բացակայում են կոմունալ հարմարությունները: Թիվ 2 բնակարանին պատճառված վնասն առաջացել է թիվ 5 բնակարանում ջրամատակարարման ինժեներական կոմունիկացիայի սխալ տեղադրման հետևանքով: Կամո Պետրոսյանի բնակարանում կատարված միացումը հակասում է թույլատրված նորմերին և նման միացման հետևանքով ջուրը կարող է լցվել առաջին հարկի բնակարան՝ որևէ հետք անգամ չթողնելով թիվ 5 բնակարանում: Միաժամանակ բացառվել է, որ առաջին հարկում գտնվող բնակարանին հասցված վնասը կարող էր առաջացած լինել անձրևաջրերի հետևանքով:

«Մար-Մոս» ՍՊԸ-ի 13.04.2007 թվականի գնահատման եզրակացության համաձայն՝ Վանաձոր քաղաքի Խորենացու փողոցի 6-րդ շենքի թիվ 2 բնակարանին ջրի հետևանքով պատճառված վնասների վերացման աշխատանքների գումարի չափը կազմում է 320.000 (երեք հարյուր քսան հազար) ՀՀ դրամ: Տվյալ դեպքում հայցվորը կրել է իրական վնաս, որպիսի հանգամանքը Վերաքննիչ դատարանի կողմից ապացույցները սխալ գնահատելու հետևանքով հաշվի չի առնվել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 13.11.2007 թվականի վճիռը և օրինական ուժ տալ ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի 07.08.2007 թվականի վճիռն:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Սուրեն Գալստյանը Վանաձոր քաղաքի Խորենացու փողոցի 6-րդ շենքի թիվ 2 բնակարանի սեփականատերն է, իսկ Կամո Պետրոսյանը՝ նույն շենքի թիվ 5 բնակարանի սեփականատերը:

2) Վանաձոր քաղաքի թիվ 9 թաղամասային հիմնարկության աշխատակիցների կողմից 11.04.2007 թվականին կազմված ակտի համաձայն՝ Վանաձորի Խորենացու փողոցի 6-րդ շենքի թիվ 2 բնակարանի սեփականատերը կրել է վնասներ:

3) «Մար-Մոս» ՍՊԸ-ի 13.04.2007 թվականի գնահատման եզրակացության համաձայն՝ ջրի հոսքի հետևանքով Վանաձորի Խորենացու փողոցի 6-րդ շենքի թիվ 2 բնակարանին պատճառված վնասների վերացման աշխատանքների գումարի չափը կազմում է 320.000 (երեք հարյուր քսան հազար) ՀՀ դրամ:

4) ՀՀ Լոռու մարզի «Լոռի ջրնուղկոյուղի» ՓԲԸ-ի ներկայացուցչի և կողմերի մասնակցությամբ կատարված տեղատեսությամբ արձանագրվել է, որ Վանաձորի Խորենացու փողոցի 6-րդ շենքի թիվ 2 բնակարանի միջանցքի, խոհանոցի, բաղնիքի և սանհանգույցի առաստաղին, խոհանոցի և ննջասենյակի պատերի որոշ մասերին առկա են ջրից առաջացած հետքեր, միջանցքի առաստաղը վնասված է մուտքի դռնից մոտ 1,5-2 մետր տարածքի վրա: Կամո Պետրոսյանի բնակարանում կատարված միացումը հակասում է թույլատրված նորմերին և նման միացման հետևանքով ջուրը կարող է լցվել առաջին հարկի բնակարան՝ որևէ հետք անգամ չթողնելով թիվ 5 բնակարանում: Միաժամանակ բացառվել է, որ առաջին հարկում գտնվող բնակարանին հասցված վնասը կարող էր առաջացած լինել անձրևաջրերի հետևանքով:

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ

*բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Սույն քաղաքացիական գործի քննության ժամանակ գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 218-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ վճռի մեջ պետք է նշվեն վերաքննիչ դատարանի կողմից պարզված գործի հանգամանքները, ապացույցները, որոնց վրա հիմնված են վերաքննիչ դատարանի հետևություններն այդ հանգամանքների մասին, և փաստարկները, որոնցով վերաքննիչ դատարանը մերժում է այս կամ այն ապացույցները, ինչպես նաև այն օրենքները, ՀՀ միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով դեկավարվել է վերաքննիչ դատարանը վճիռ կայացնելիս:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ վճռի թե՛ փաստական և թե՛ իրավական հիմնավորումը:

Վճռի իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ նյութական իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացնում է վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Վճռում ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Վճռի իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ դատարանի վճռի իրավակիրառ գործառնությւը, ընդգծում դատական գործունեության և դատական վճռի օրինակաւնությունը (տես ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունն ընդդեմ «Քնար-88» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության» գումար բռնագանձելու պահանջի մասին, քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 21.12.2006 թվականի որոշում, թիվ 3-2504/ՏԳ(ՏԳ)):

Սույն քաղաքացիական գործի քննության ժամանակ գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 218-րդ հոդվածից բխում է, որ Վերաքննիչ դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վճիռ կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման պատճառաբանության առկայությունը կարող է վկայել դատական ակտի հիմնավորվածության մասին (տես՝ս Անժելա Ղազարյանը, Արփիկ և Արմինե Գասպարյաններն ընդդեմ Շուշանիկ Սարգսյանի, Ոսկեհատ, Նունե, Հրանուշ Գասպարյանների՝ ժառանգական գույքը ժառանգների միջև բաժանելու պահանջի մասին, քաղա-

---

---

քացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.12.2007 թվականի որոշումը, թիվ 3-1843(ՎԳ):

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից գործի քննության ընթացքում պետք է ուսումնասիրվեին գործում առկա բոլոր ապացույցները, վերլուծության ենթարկվեին կողմերի ներկայացրած և դատաքննությամբ հետազոտված ապացույցները՝ դրանցով արդեն համապատասխան փաստերի առկայությունը կամ բացակայությունը որոշելու համար:

Սինդեռ սույն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանը, հայցապահանջի մերժման հիմքում դնելով հայցվորի կողմից կրած վնասը պատասխանողի կողմից պատճառված լինելն ապացուցված չլինելու հանգամանքը, չի նշել քաղաքացիական գործում առկա մի շարք ապացույցների (Վանաձոր քաղաքի թիվ 9 թաղամասային հիմնարկության աշխատակիցների կողմից 11.04.2007 թվականին կազմված ակտը, «Մար-Մոս» ՍՊԸ-ի 13.04.2007 թվականի գնահատման եզրակացությունը, ինչպես նաև ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի նախաձեռնությամբ «Լոռի ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի ներկայացուցչի և կողմերի մասնակցությամբ կատարված տեղատեսության արձանագրությունը) մերժման պատճառները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից, իսկ 2-րդ մասի համաձայն՝ վնաս պատճառած անձն ազատվում է այն հատուցելուց, եթե ապացուցում է, որ վնասն իր մեղքով չի պատճառվել: Օրենսգրքով կարող է նախատեսվել վնասի հատուցում վնաս պատճառողի մեղքի բացակայությամբ:

«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝ շինության սեփականատերը շինության կամ ընդհանուր բաժնային սեփականության պարտադիր նորմերը խախտելու համար կրում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

Շինության սեփականատիրոջ կողմից անձամբ կամ նրա հետ համատեղ ապրող անձանց կողմից այլ շինություններին կամ ընդհանուր բաժնային սեփականությանը վնաս պատճառելու դեպքում շինության սեփականատերը պարտավոր է իր հաշվին վերացնել հասցված վնասը: Վնաս կրած շինության սեփականատերն օրենքով սահմանված կարգով վնասի հատուցման պահանջի իրավունք ունի:

Հիմք ընդունելով վերոնշյալը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն քաղաքացիական գործում առկա ապացույցներով հիմնավորվում է այն փաստը, որ Սուրեն Գալստյանին վնասը հասցվել է Վանաձորի Խորենացու փողոցի 6-րդ շենքի թիվ 5 բնակարանում կատարված խողովակները թույլատրված նորմերի խախտումով միացված լինելու պատճառով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Սուրեն Գալստյանի գույքին պատճառված վնասը պետք է հատուցվի այդ բնակարանի սեփականատեր Կամո Պետրոսյանի կողմից:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: ՀՀ վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի վերը նշված հոդվածներով ամ-

րագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Սույն քաղաքացիական գործով հաստատված փաստական հանգամանքները Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի 07.08.2007 թվականի վճռին օրինական ուժ տալու համար, որը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի 13.11.2007 թվականի վճիռը և օրինական ուժ տալ ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի 07.08.2007 թվականի վճռին:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում  
քաղաքացիական գործ թիվ 08-1217  
Նախագահող դատավոր՝ Տ.Սահակյան  
Դատավորներ՝ Կ.Հակոբյան  
Տ.Նազարյան

Քաղաքացիական գործ **թիվ 3-533(ՎԳ)**  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի սեպտեմբերի 26-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Հրաչյա Մանուչարյանի վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.04.2008 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Հրաչյա Մանուչարյանի ընդդեմ «ՍՏԱՖ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն), Նորայր Գրիգորյանի՝ վնասի հատուցման պահանջի մասին,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Հրաչյա Մանուչարյանը պահանջել է պատասխանողներից բռնագանձել 1.642.000 ՀՀ դրամ՝ որպես առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի հատուցում:

Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ Դատարան) 13.11.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 03.04.2008 թվականի որոշմամբ Դատարանի 13.11.2007 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ Հրաչյա Մանուչարյանի հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Հրաչյա Մանուչարյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորմամբ.

*Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ, 1072-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառել և սխալ է մեկնաբանել նույն օրենսգրքի 417-րդ - հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պատճառված վնասը հասցվել է առավել վտանգի աղբյուրի շահագործման արդյունքում, ուտի սույն քաղաքացիական գործով ներկայացված հայցապահանջով պայմանավորված ապացուցման առարկան պետք է կազմեր միայն առավել վտանգի աղբյուրի շահագործման արդյունքում վնաս պատճառելու փաստը:

Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը, հիմնվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ - հոդվածի առաջին մասին՝ մերժել է հայցը՝ դա հիմնավորելով վնաս պատճառողի գործողություններում մեղքի բացակայությամբ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.04.2008 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի 13.11.2007 թվականի վճռին:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունի հետևյալ փաստը՝ 03.05.2006 թվականին Երևանի Մյասնիկյանի պողոտայում Ընկերությանը պատկանող «Գազել» մակնիշի ավտոմեքենան հարվածել է իր առջևից ընթացող Հրաչյա Մանուչարյանին պատկանող «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենային՝ պատճառելով նյութական վնաս:

Վթարի պահին «Գազել» մակնիշի ավտոմեքենան վարել է Նորայր Գրիգորյանը:

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

Իրավահարաբերության պահին գործող ՀՀ կառավարության 23.05.2002 թվականի թիվ 924-Ն որոշմամբ հաստատված «Ճանապարհային երթևեկության կանոնների» (այսուհետ՝ Կանոններ) 9.1 կետի համաձայն՝ եթևեկության համար վտանգ առաջանալու դեպքում, որը վարորդն ի վիճակի էր հայտնաբերել, նա պետք է միջոցներ ձեռնարկի արագությունն իջեցնելու, իսկ անհրաժեշտության դեպքում՝ ընդհուպ մինչև տրանսպորտային միջոցը կանգնեցնելու համար:

Կանոնների 8.8 կետի համաձայն՝ վարորդը պետք է իր և առջևից ընթացող տրանսպորտային միջոցի միջև պահպանի այնպիսի տարածություն, իսկ կողքով ընթացողներից՝ այնպիսի կողային միջտարածություն, որպեսզի հնարավորություն ունենա խուսափել դրանց հետ բախումից: Նկատի ունենալով, որ «Գազել» մակնիշի ավտոմեքենան ընթացել է «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայից հետո, ապա ըստ Կանոնների 8.8 կետի պահանջների՝ «Գազել» մակնիշի ավտոմեքենայի վարորդ Նորայր Գրիգորյանը պարտավոր էր իր և առջևից ընթացող «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայի միջև պահպանել անհրաժեշտ տարածություն, որպեսզի հնարավորություն ունենար կանխելու բախումը: Մինչդեռ, նույնիսկ արգելակման պայմաններում վերջինս չի կարողացել խուսափել «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայի հետ բախումից:

Այսպիսով, Նորայր Գրիգորյանն իրեն վստահված «Գազել» մակնիշի ավտոմեքենայով բախվել է Հրաչյա Մանուչարյանին պատկանող «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենային՝ Հրաչյա Մանուչարյանի գույքին պատճառելով վնաս:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածով սահմանված են վնասի հատուցման համար պատասխանատվության ընդհանուր հիմքերը, մասնավորապես՝ նշված հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից:

Վնասի հատուցման պատասխանատվության և դրանից ազատվելու հնարավորության ընդհանուր հիմունքները՝ կախված վնաս պատճառելու եղանակից, ձևից, միջոցից և այլն, սահմանված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1060-1073 հոդվածներում, մասնա-

---

---

վորապետ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1072-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավաբանական անձինք և քաղաքացիները, որոնց գործունեությունը կապված է շրջապատի համար առավել վտանգի աղբյուրի հետ (**տրանսպորտային միջոցների**, մեխանիզմների, բարձր լարվածության էներգիայի, ատոմային էներգիայի, պայթուցիկ նյութերի, ուժեղ ներգործող թույների և այլնի օգտագործում, շինարարական և դրա հետ կապված այլ գործունեության իրականացում), պարտավոր են հատուցել առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասը, եթե չեն ապացուցում, որ վնասը ծագել է անհաղթահարելի ուժի կամ տուժողի դիտավորության հետևանքով:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ սույն քաղաքացիական գործով ներկայացված հայցապահանջի շրջանակներում ապացուցման առարկա միակ փաստը դա պատասխանողի՝ շրջապատի համար առավել վտանգի աղբյուրի հետ կապված գործունեությամբ հայցվորին նյութական վնաս պատճառելն է: Իսկ վնաս պատճառած անձը կարող է ազատվել հասցված վնասը հատուցելու պարտականությունից միայն այն դեպքում, եթե ապացուցի, որ վնասը ծագել է անհաղթահարելի ուժի կամ տուժողի դիտավորության հետևանքով:

Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը, հայցապահանջի մերժման հիմքում դնելով այն հանգամանքը, որ հասցված վնասի մեջ պատասխանողի մեղքի առկայությունը օրենքով թույլատրելի ոչ մի ապացույցով չի ապացուցվում, ոչ միայն ընդդայնել է առավել վտանգի աղբյուրով հասցված վնասի հատուցման պարտավորության բացակայության օրենքով սպառնիչ կերպով սահմանված դեպքերը, այլ նաև պատասխանողի մեղքի առկայության ապացուցման պարտականությունը դրել է հայվորի վրա:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմնավոր լինելը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարություն օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով վերանայվող դատական ակտը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահեփից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.04.2008 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի 13.11.2007 թվականի վճռին:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի վճիռ

Քաղաքացիական գործ թիվ **3-29(ՎԳ)**  
**2008թ.**

Քաղաքացիական գործ թիվ 07-3307

Նախագահող դատավոր՝ Տ.Սահակյան  
Դատավորներ՝ Լ.Գրիգորյան  
Մ.Ասատրյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Հ.ՍԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի փետրվարի 29-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Արմենուհի Խաչատրյանի վճռաբեկ բողոքը ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի 31.10.2007 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի Նշան Ղազարյանի ընդդեմ Արմենուհի Խաչատրյանի, Երևանի առաջին նոտարական գրասենյակի նոտար Ե.Սարգսյանի, երրորդ անձինք Աշոտ Խաչատրյանի, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Դավթաշենի տարածքային ստորաբաժանման՝ կտակը, ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրը, դրա հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու և տիրապետման փաստով ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջների մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Նշան Ղազարյանը պահանջել է անվավեր ճանաչել Հակոբ Ղազարյանի 27.08.2002 թվականի կտակը, ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրը, դրա հիման վրա՝ Երևանի Դավթաշեն 7-րդ փողոցի թիվ 9<sup>ա</sup> հասցեի նկատմամբ Արմենուհի Խաչատրյանի անվամբ սեփականության իրավունքի պետական գրանցումը և տիրապետման փաստով իրեն ճանաչել նշված հասցեի Արմենուհի Խաչատրյանին պատկանող մասի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ:

Երևանի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 08.08.2007 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 31.10.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Արմենուհի Խաչատրյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Նշան Ղազարյանը:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) *Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին և 4-րդ կետերը, 304-րդ և 311-րդ հոդվածները, 1203-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 1204-րդ հոդվածը, 1205-րդ հոդվածի 2-րդ կետը, որոնք չպետք է կիրառեր, չի կիրառել 1211-րդ հոդվածի 4-րդ կետը, որը պետք է կիրառեր:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Սույն քաղաքացիական գործով կտակը կազմվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին և 4-րդ կետերի, 1203-րդ հոդվածի 1-ին մասի, 1204-րդ հոդվածի և 1205-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջների պահպանմամբ՝ այն կազմվել է գրավոր, կտակալուծ նշվել են այն կազմելու վայրը և ժամանակը, կտակն ստորագրել են անձամբ կտակարարը և վկան, այն վավերացված է նոտարի կողմից: Բացի այդ, գործում առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ կտակը կազմելիս կտակարարը չի հասկացել իր գործողությունների նշանակությունը և ղեկավարել դրանք:

Նոտարը կտակը վավերացնելիս ստուգել է կտակարարի և վկայի ինքնությունը, գործունակությունը, հաստատել է ստորագրության իսկությունը: Թեև կտակում վկայի բնակության հասցեն չի նշել, սակայն կտակին կցել է նրա անձնագրի՝ բնակության հասցեի նշումով պատճենը: Տվյալ դեպքում վկայի հասցեն չնշելը պետք է դիտել կտակը կազմելու կարգի աննշան խախտում, որը չի ազդել կտակարարի կամքի արտահայտության ըմբռնման վրա և կտակն անվավեր ճանաչելու հիմք չէ:

2) *Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, որի արդյունքում կիրառել է նույն օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերը, որոնք չպետք է կիրառեր:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել գործում առկա բոլոր ապացույցները, որի արդյունքում անտեսել է այն հանգամանքը, որ վիճելի տան ժառանգատուին պատկանող 1/2-րդ մասը և նրա կնոջը՝ Մարգարիտ Ղազարյանին պատկանող տան մյուս մասը փաստացի տիրապետել և կառավարել են Արմենուհի Խաչատրյանը և երրորդ անձ Աշոտ Խաչատրյանը, կատարել են տան պահպանման և այլ ծախսերը, դիմել են նոտարական գրասենյակ, ստացել սեփականության իրավունքի վկայականներ:

Սույն գործով կտակարարը հայցվորին վտարել էր վիճելի տանից և դատարանի վճռով է ճանաչվել հայցվորի՝ նշված տան նկատմամբ բնակելի տարածության օգտագործման իրավունքը, իսկ այդ տան միայն մեկ սենյակում հայցվորը փաստացի բնակվել է միայն կտակարարի մահից հետո, կտակառու Ա.Խաչատրյանի հետ կնքված հաշտության համաձայնությամբ:

3) *Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 332-րդ և 335-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Դեռևս 2002 թվականին կտակարարի մահից հետո Արմենուհի Խաչատրյանի հետ հաշտության համաձայնություն կնքելիս Նշան Ղազարյանը գիտեր կտակի առկայության մասին, սակայն դատական պաշտպանության է դիմել միայն 2007 թվականին, որով բաց է թողել օրենքով նախատեսված հայցային վաղեմության ժամկետը, որը հայցը մերժելու հիմք է:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 31.10.2007 թվականի վճիռը, կիրառել հայցային վաղեմություն, հայ-

ցը մերժել և օրինական ուժ տալ Երևանի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 08.08.2007 թվականի վճռին:

### **2.1. Վճռարեկ բողոքի պատասխանը.**

Կտակարարը կտակը կազմելով՝ առանց պատճառների և բացատրության, ըստ օրենքի ժառանգներին գրել է ժառանգությունից: Կտակը կազմվել է կտակարարի բնակության վայրում, կտակը կազմելիս օգտագործվել է համակարգիչ, այն դեպքում, երբ նշված հասցեում համակարգիչ չի եղել: Հակոբ Ղազարյանը կտակն անձամբ իր ձեռքով չի գրել, այն նրա բառերով նոտարը գրի չի առել, կտակը համակարգչով կազմվել է անհայտ վայրում և նոտարը վավերացրել է ընդամենը տպագրված տեքստը: Կտակում չի նշվել և առկա չէ որևէ ապացույց, որ կտակարարը անձամբ ընթերցել է կտակի բովանդակությունը, կամ նրա համար այն ընթերցվել է նոտարի կողմից: Կտակում առկա չէ նաև կտակը ստորագրած վկայի անձնագրային տվյալները և բնակության վայրը: Կտակում առկա խախտումները չեն կարող աննշան դիտվել և գործով ապացուցված չէ, որ այդ խախտումները չէին կարող ազդել կտակարարի կամքի արտահայտության վրա:

Արմենուհի Խաչատրյանի կողմից առաջին ատյանի դատարանում բանավոր միջնորդություն է արվել հայցային վաղեմություն կիրառելու մասին՝ պարտավորվելով այն ներկայացնել գրավոր, սակայն այդպես էլ գրավոր հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդություն ոչ առաջին ատյանի և ոչ էլ Վերաքննիչ դատարաններում չեն ներկայացվել:

### **3. Վճռարեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

1) ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության 18.03.2002 թվականի արձանագրության համաձայն՝ դատարանի վճռի հիման վրա Նշան Ղազարյանին և նրա ընտանիքի անդամներին Երևանի Դավթաշեն 7-րդ փողոցի թիվ 9<sup>ա</sup> տան սեփականատեր Հակոբ Ղազարյանի ընտանիքի անդամ ճանաչելու, այդ բնակարանից օգտվելու նրանց իրավունքը ճանաչելու և նրանց այդտեղ բնակեցնելու ՀՀ ԱՆ ԴԱՀԿԱ ծառայության աշխատակիցների գործողության ժամանակ Հակոբ Ղազարյանը խոչընդոտել է, որդուն սպառնացել, արգելել է նրանց իր տանը բնակեցնելուն:

2) 27.08.2002 թվականին նոտարական կարգով վավերացված կտակով Հակոբ Ղազարյանը իրեն պատկանող ամբողջ գույքը, այդ թվում Երևանի Դավթաշեն 7-րդ փողոցի թիվ 9<sup>ա</sup> հասցեում գտնվող, անձնական սեփականության իրավունքով իրեն պատկանող բնակելի տունը կից հողամասի հետ միասին ամբողջությամբ կտակել է Արմենուհի Խաչատրյանին: Կտակարար Հակոբ Ղազարյանի հիվանդության պատճառով կտակը վավերացվել է տանը: Կտակը ստորագրված է Համլետ Ստեփանյանի կողմից, սակայն կտակում վկայի բնակության վայրը չի նշվել: Նոտարի կողմից արձանագրվել է, որ Համլետ Ստեփանյանը «ստորագրել է Հակոբ Ղազարյանի հանձնարարությամբ, ձեռքի թուլության պատճառով»: (գ.թ.5)

3) Հակոբ Ղազարյանի կտակը վավերացնելիս նոտարական գործին կցվել է ինչպես Հակոբ Ղազարյանի, այնպես էլ վկա Համլետ Ստեփանյանի անձնագրերի՝ բնակության վայրի նշումով պատճենները:

4) 03.09.2002 թվականին Հակոբ Ղազարյանը մահացել է:

5) 12.03.2003 թվականի ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագրի, Երևանի քաղաքապետի 09.07.2004 թվականի թիվ 1245-Ա որոշման և 19.01.2005 թվականի անշարժ գույքի մասի միլիտատության պայմանագրի հիման վրա՝ Երևանի Դավթաշեն 7-րդ փողոցի թիվ 9<sup>ա</sup> հասցեի 1/2-ական մասերի նկատմամբ գրանցվել է Արմենուհի Խաչատրյանի և Աշոտ Խաչատրյանի սեփականության իրավունքը (գ.թ.6,18-21):

6) Թիվ 20 պոլիլիմիկայի 09.04.2007 թվականի գրության համաձայն՝ Հակոբ Ղազարյանը 2002 թվականի ընթացքում տնային կանչով և ակտիվ այցերի ձևով դիմել է թաղամասային քերականոսին, որոնց արդյունքում սխառոտ շվե է սիրտ-թոքային անբավարար

րարություն, արժեքները, խրոնիկ բրոնխիտ և նշանակվել է համապատասխան բուժում:

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

*1) բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1203-րդ հոդվածի համաձայն՝ կտակը պետք է կազմվի գրավոր՝ նշելով այն կազմելու վայրը և ժամանակը, անձամբ ստորագրվի կտակարարի և վավերացվի նոտարի կողմից: Նշված կանոնները չպահպանելը հանգեցնում է կտակի անվավերության: Նույն օրենսգրքի 1204-րդ հոդվածի համաձայն՝ եթե կտակարարը ֆիզիկական թերությունների, հիվանդության կամ անգրագիտության պատճառով չի կարող անձամբ ստորագրել կտակը, ապա նրա խնդրանքով, նոտարի կամ օրենքին համապատասխան կտակը վավերացնող այլ անձի ներկայությամբ, կտակը կարող է ստորագրվել այլ քաղաքացու կողմից՝ կտակում նշելով այն պատճառները, որոնց ուժով կտակարարը չի կարողացել անձամբ ստորագրել կտակը: Կտակում պետք է նշվեն այդ քաղաքացու անունը եւ նրա բնակության վայրը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1205-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ նոտարի վավերացրած կտակը պետք է գրած լինի կտակարարը կամ կտակարարի բառերով գրի առնի նոտարը: Կտակ գրելիս կամ գրի առնելիս կարող են օգտագործվել տեխնիկական միջոցներ (համակարգիչ, գրամեքենա և այլն): Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ կտակը կազմելիս և նոտարի կողմից վավերացնելիս կտակարարի ցանկությամբ կարող է ներկա գտնվել վկա: Եթե կտակարարն ի վիճակի չէ անձամբ կարդալ կտակը, վկայի ներկայությունը պարտադիր է: Եթե կտակը կազմվում և վավերացվում է վկայի ներկայությամբ, ապա այն պետք է ստորագրի վկան: Կտակում պետք է նշվեն վկայի անունն ու նրա բնակության վայրը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ 27.08.2002 թվականին Հակոբ Ղազարյանի կտակը կազմվել է գրավոր, Հ.Ղազարյանը կտակով արտահայտել է գործարքի բովանդակությունը՝ կտակել է իր գույքը, հիվանդության պատճառով կտակարարի հանձնարարությամբ այն ստորագրել է վկան՝ Համլետ Ստեփանյանը և, այն վավերացվել է նրա տանը: Կտակում նշվել է այն կազմելու վայրը և ժամանակը: Նոտարի կողմից գործարքը վավերացնելիս նշվել է վկայի անունը, հայրանունը և ազգանունը, այն, որ նա ստորագրել է կտակարար Հակոբ Ղազարյանի հանձնարարությամբ: Կտակը վավերացնելիս նոտարի կողմից ստուգվել է վկայի և կտակարարի ինքնությունը և գործունակությունը, որից հետո վավերացվել է վկայի ստորագրության իսկությունը:

Հիմք ընդունելով վերոնշյալը Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհիմն են Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններն այն մասին, որ կտակը կազմվել է ՀՀ - քաղաքացիական օրենսգրքի 296-րդ, 304-րդ, 311-րդ, 1203-րդ, 1204-րդ և 1205-րդ հոդվածների խախտմամբ:

Բացի այդ անհիմն է Վերաքննիչ դատարանի եզրահանգումն այն մասին, որ կտակը կազմելու կամ նոտարի կողմից վավերացնելու ժամանակ Հակոբ Ղազարյանն ընդունակ չի եղել հասկանալու իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարելու դրանք, քանի որ գործում բացակայում է այդ հանգամանքը հիմնավորող որևէ ապացույց: Ավելին, Թիվ 20 պոլիկլինիկայի 09.04.2007 թվականի գրությամբ ախտորոշված հիվանդությունների առկայությունն ինքնին բավարար չէ փաստելու համար անձի կողմից իր գործողությունների նշանակությունը հասկանալու կամ ղեկավարելու անհնարինությունը:

Ինչ վերաբերում է այն հարցին, որ կտակում վկայի բնակության վայրը նշված չէ, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կտակում վկայի բնակության վայրի չնշելը սույն քաղաքացիական գործով կտակը կազմելու աննշան խախտում է և չէր կարող ազդել կտակարարի կամքի արտահայտության վրա: Վճռաբեկ դատարանը նման եզրահանգ-

---

---

ման համար հիմք է ընդունում այն հանգամանքը, որ նոտարական գործում առկա է վկայի անձնագրի պատճենը, որը հնարավորություն է տալիս պարզելու վկայի բնակության վայրի հասցեն: Հետևաբար, կտակում վկայի բնակության վայրի մասին նշում չկատարելը կտակն անվավեր ճանաչելու հիմք չէ:

*2) բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերի համաձայն՝ ժառանգությունը ձեռք բերելու համար ժառանգը պետք է այն ընդունի: Ժառանգի կողմից ժառանգության մի մասի ընդունումը նշանակում է իրեն հասանելիք ամբողջ ժառանգության ընդունում, անկախ այն բանից, թե ինչ է այն իրենից ներկայացնում և որտեղ է գտնվում: Նույն օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ եթե այլ բան ապացուցված չէ, ապա ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել կամ կառավարել ժառանգված գույքը՝ ներառյալ, երբ ժառանգը միջոցներ է ձեռնարկել գույքը պահպանելու և այն երրորդ անձանց ունձագրություններից կամ հավակնություններից պաշտպանելու համար, իր հաշվին կատարել է գույքը պահպանելու ծախսեր, իր հաշվից վճարել է ժառանգատուի պարտքերը կամ երրորդ անձանցից ստացել է ժառանգատուին հասանելիք գումարները:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Նշան Ղազարյանը և նրա ընտանիքի անդամները Հակոբ Ղազարյանին սեփականության իրավունքով պատկանող Երևանի Դավթաշեն 7-րդ փողոցի թիվ 9<sup>ա</sup> հասցեի տանը բնակեցվել են դատարանի վճռի հիման վրա՝ 2001 թվականի նոյեմբերին, սակայն նույն օրը Հակոբ Ղազարյանը նրանց դուրս է հանել տանից: 18.03.2002 թվականի արձանագրության համաձայն՝ դատարանի վճռի հիման վրա Նշան Ղազարյանին և նրա ընտանիքի անդամներին Երևանի Դավթաշեն 7-րդ փողոցի թիվ 9<sup>ա</sup> տան սեփականատեր Հակոբ Ղազարյանի ընտանիքի անդամ ճանաչելու, այդ բնակարանից օգտվելու նրանց իրավունքը ճանաչելու և նրանց այդտեղ բնակեցնելու ՀՀ ԱՆ ԴԱՀԿԱ ծառայության աշխատակիցների գործողության ժամանակ Հակոբ Ղազարյանը խոչընդոտել է, որդուն սպառնացել, արգելել է նրանց իր տանը բնակեցնելուն (գ.թ.8-9):

Հիմք ընդունելով վերոնշյալը վճռաբեկ դատարանը արձանագրում է, որ գործում առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ Հակոբ Ղազարյանի մահից հետո նրա գույքը փաստացի տիրապետել կամ կառավարել է Նշան Ղազարյանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին (տես օրինակ՝ «Քնար-88» ՍՊԸ ընդդեմ ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության, 21.12.2006թ. Քաղ. գործ թիվ 3-2504/ՏՂ/ՏԳ, (գումար բռնագանձելու պահանջով)):

Սակայն կարևորելով սույն բողոքի հիմքում ընկած իրավական հարցադրումը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում կրկին անդրադառնալ նշված հարցին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի գործի քննության ժամանակ գործող 218-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ վճռում պետք է նշվեն վերաքննիչ դատարանի կողմից պարզված գործի հանգամանքները, ապացույցները, որոնց վրա հիմնված են վերաքննիչ դատարանի հետևություններն այդ հանգամանքների մասին, և փաստարկները, որոնցով վերաքննիչ դատարանը մերժում է այս կամ այն ապացույցները, ինչպես նաև այն օրենքները, ՀՀ միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է վերաքննիչ դատարանը վճիռ կայացնելիս:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ վճռի թե՛ փաստական և թե՛ իրավական հիմնավորումը:

Վճռի իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահա-

րաբերությունների նկատմամբ նյութական իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանն եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Վճռում ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Սույն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանը հաստատված է համարել որ Հակոբ Ղազարյանի մահից հետո Երևանի Գավթաշեն 7-րդ փողոցի թիվ 9<sup>ա</sup> հասցեի Հ.Ղազարյանին պատկանող 1/2-րդ մասում բնակվել է Նշան Ղազարյանը և փաստացի տիրապետմամբ ընդունել է հոր ժառանգությունը, առանց այդ հանգամանքը հիմնավորող որևէ ապացույց նշելու:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ Վերաքննիչ դատարանի վճիռը գուրկ է իրավական հիմնավորումից, և այս առումով այն չի կարող լինել օրինական, համոզիչ, ինչպես նաև հեղինակավոր:

*3) բողոքը երրորդ հիմքով անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 332-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմության ժամկետը երեք տարի է, իսկ նույն օրենսգրքի 335-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատարանը հայցային վաղեմությունը կիրառում է միայն վիճող կողմի դիմումով, որը պետք է տրվի մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը: Հայցային վաղեմության ժամկետի լրանալը, որի կիրառման մասին դիմել է վիճող կողմը, հիմք է դատարանի կողմից հայցը մերժելու մասին վճիռ կայացնելու համար:

Մինչդեռ սույն գործով Վերաքննիչ դատարանում դատաքննության ընթացքում Արմենուհի Խաչատրյանի կամ նրա ներկայացուցչի կողմից հայցային վաղեմություն կիրառելու և այդ հիմքով հայցը մերժելու վերաբերյալ միջնորդություն չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի պատասխանում առկա փաստարկները մասնակիորեն հերքվում են վերոնշյալ պատճառաբանություններով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի առաջին և երկրորդ հիմքերի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների համաձայն, Վերաքննիչ դատարանի վճիռը բեկանելու համար:

Միաժամանակ, ՀՀ վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու ՀՀ վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր որ ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: ՀՀ վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի վերը նշված հոդվածներով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Սույն քաղաքացիական գործով հաստատված փաստական հանգամանքները Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար Երևանի Աջափնյակ և Գավթաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 08.08.2007 թվականի թիվ 2-813 վճիռն օրինական ուժ տալու համար, որը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

---

---

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի 31.10.2007 թվականի վճիռը և օրինական ուժ տալ Երևանի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 08.08.2007 թվականի թիվ 2-813 վճռին:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի վճիռ  
Քաղաքացիական գործ թիվ 07-3273  
Նախագահող դատավոր՝ Տ. Սահակյան  
Դատավորներ՝ Ն. Հովսեփյան  
Մ. Ասատրյան

Քաղաքացիական գործ թիվ **3-183(ՎԳ)**  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ վճռաբեկ  
դատարան)

*նախագահությամբ* Հ. ՍԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Դ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ. ԳՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի մարտի 27-ին,

դռնբաց դատական նիստում, քննելով Կարինե Սերոպյանի վճռաբեկ բողոքը Վե-  
րաքննիչ քաղաքացիական դատարանի 19.10.2007 թվականի վճռի դեմ՝ ըստ Վլադիմիր  
Բալասանյանի հայցի ընդդեմ Կարինե Սերոպյանի, ՀՀ Կենտրոն նոտարական տարած-  
քի նոտարի, երրորդ անձ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պե-  
տական կոմիտեի՝ ժառանգության իրավունքի վկայագիրը և դրա հիման վրա տրված ան-  
շարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականներն անվավեր ճանաչե-  
լու և սեփականության իրավունքի վկայականը համապատասխան բաժիններով տրա-  
մադրելու, Սերոպյան Բալասանյանի 01.02.1994 թվականի կտակը մասնակիորեն անվա-  
վեր ճանաչելու, Թամարա Բալասանյանի մահից հետո փաստացի տիրապետման հիմ-  
քով ժառանգությունն ընդունած միակ ժառանգ ճանաչելու և Այգեստան 10-րդ փողոցի 2-  
րդ շենքի թիվ 58-րդ բնակարանի և ավտոտնակի նկատմամբ Կարինե Սերոպյանի սեփա-  
կանության իրավունքը փոխհատուցմամբ դադարեցնելու, ինչպես նաև ըստ Կարինե Սե-  
րոպյանի հայցի ընդդեմ Վլադիմիր Բալասանյանի՝ բնակարանը հրապարակային սա-  
կարկություններով վաճառելու և ստացված գումարը կողմերից յուրաքանչյուրի բաժնին  
համաչափ բաշխելու կամ ըստ սեփականության վկայականի 1/2 բաժնի դիմաց փոխհա-  
տուցելու պահանջների մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Վլադիմիր Բալասանյանը պահանջել է անվավեր ճանաչել ըստ  
կտակի ժառանգության իրավունքի վկայականը և դրա հիման վրա տրված սեփականու-  
թյան իրավունքի գրանցման վկայականները, մասնակիորեն անվավեր ճանաչել Սերոպյան

---

---

Բալասանյանի 01.02.1994 թվականի կտակը, ճանաչել Թամարա Բալասանյանի մահից հետո փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունն ընդունած միակ ժառանգ, ինչպես նաև փոխհատուցմամբ դադարեցնել Կարինե Սերոպյանի սեփականության իրավունքն Այգեստան 10-րդ փողոցի 2-րդ շենքի թիվ 58-րդ բնակարանի և ավտոտնակի նկատմամբ:

Գիմնելով դատարան՝ Կարինե Սերոպյանը պահանջել է Այգեստան 10-րդ փողոցի 2-րդ շենքի թիվ 58-րդ բնակարանը վաճառել հրապարակային սակարկություններով և ստացված գումարը բաշխել կողմերից յուրաքանչյուրի բաժնին համաչափ կամ ըստ սեփականության վկայականի 1/2 բաժնի դիմաց փոխհատուցել:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 20.07.2006 թվականի որոշմամբ վերը նշված քաղաքացիական գործերը միացվել են մեկ վարույթում:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 04.07.2007 թվականի վճռով Վլադիմիր Բալասանյանի և Կարինե Սերոպյանի հայցերը բավարարվել են մասնակիորեն:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 19.10.2007 թվականի վճռով Վլադիմիր Բալասանյանի հայցը բավարարվել է, իսկ Կարինե Սերոպյանի հայցը՝ բավարարվել մասնակիորեն:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կարինե Սերոպյանը:

Վճռաբեկ բողոքին պատասխան է ներկայացրել Վլադիմիր Բալասանյանը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*1) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի, 53-րդ հոդվածի 1-ին մասը, սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել գործում առկա գրավոր ապացույցները, որն էլ հանգեցրել է գործի սխալ լուծման: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել Երևանի պետական համալսարանի կողմից տրված թիվ 194 արխիվային տեղեկանքը, Երևանի պետական համալսարանի թիվ 18 տեղեկանքը, «Արմենիա Տելեֆոն Կոմպանի» ՓԲ ընկերության 26.09.2003 թվականի և 06.10.2006 թվականի գրությունները, «Էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից տրված թիվ ԿԳԼ-81 տեղեկանքը:

Վլադիմիր Բալասանյանը չի ներկայացրել որևէ ապացույց, որպես Թամարա Բալասանյանի մահից հետո փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունն ընդունած միակ ժառանգ:

Վերը նշված ապացույցներն անտեսելու արդյունքում Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները, դրանց կիրառմամբ Թամարա Բալասանյանի ժառանգությունը փաստացի ընդունած ժառանգ Սերյոժա Բալասանյանի փոխարեն ճանաչելով Վլադիմիր Բալասանյանին:

*2) Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերը, որոնք չպետք է կիրառեր, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 6-րդ կետը, որը պետք է կիրառեր:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Կարինե Սերոպյանը պնդել է բնակարանը հրապարակային սակարկություններով վաճառելու իր պահանջը և նշել, որ չի ցանկանում ստանալ որևէ փոխհատուցում Վլադիմիր Բալասանյանից:

3) *Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 218-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը:*

Կտակը մասնակիորեն անվավեր ճանաչելով, Վերաքննիչ դատարանը չի վկայակոչել որևէ իրավական նորմ, որով խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 218-րդ հոդվածի 2-րդ մասի 4-կետի պահանջը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 19.10.2007 թվականի վճիռը և գործն ուղարկել նոր քննության:

### **2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները.**

Անհիմն են վճռաբեկ բողոքում նշված նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումները, քանի որ Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությամբ գնահատել է բոլոր ներկայացված ապացույցների, որի արդյունքում ճիշտ են մեկնաբանվել նյութական իրավունքի նորմերը և կայացվել է արդարացի վճիռ:

*Բողոքի պատասխան ներկայացրած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Սերյոժա Բալասանյանը չի ընդունել Թամարա Բալասանյանի մահից հետո թողնված ժառանգությունը, քանի որ 1996 թվականից գրանցված է ք. Սոսկվա, Սվետլագորսկիյ նրբանցք, տուն 5, բնակարան 53 հասցեում:

Սերյոժա Բալասանյանը մահացել է 2003 թվականին և չէր կարող 2004 թվականին «Էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի բաժանորդ լինել: Հետևաբար, անհիմն է բողոք բերած անձի այն պատճառաբանությունը, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասը և դրա արդյունքում սխալ մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Անհիմն է նաև այն պնդումը, որ Վլադիմիր Բալասանյանի կողմից որևէ ապացույց չի ներկայացվել Երևանի, Այգեստան 10-րդ փողոց, 2-րդ շենքի 58-րդ բնակարանը փաստացի տիրապետելու վերաբերյալ, քանի որ գործում առկա է տեղեկանք «Կենտրոն» համատիրության կողմից, որի համաձայն՝ Վլադիմիր Բալասանյանը բնակվել է այդ բնակարանում:

Վերոգրյալի հիման վրա խնդրել է մերժել Կարինե Սերոպյանի կողմից բերված վճռաբեկ բողոքը՝ Վերաքննիչ դատարանի 19.10.2007 թվականի վճիռը թողնելով օրինական ուժի մեջ:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի, Այգեստան 10-րդ փողոցի, 2-րդ շենքի, 58-րդ բնակարանի և 19.84 քմ ավտոտնակի սեփականատերը Սերյոժա Իշխանի Բալասանյանն է (գ.թ. 7, 9, 10): Թամարա (մահացած 01.05.1999 թվականին (գ.թ. 18)) և Սերյոժա (մահացած 03.10.2003 թվականին (գ.թ. 104)) Բալասանյաններն օրինական ամուսնության մեջ գտնվող անձինք են (գ.թ. 8):

2. 01.02.1994 թվականի կտակի համաձայն Սերյոժա Բալասանյանն իր գույքը հավասար բաժիններով կտակել է որդուն՝ Վլադիմիր Բալասանյանին և դստերը՝ Կարինե Սերոպյանին (գ.թ. 11):

3. 01.12.1994 թվականի նվիրատվության պայմանագրով Սերյոժա Բալասանյանը նվիրել է Վլադիմիր Բալասանյանին Երևանի, Այգեստան 10-րդ փողոցի, 2-րդ շենքի 58-րդ բնակարանի 15.5 քմ բնակելի սենյակը և 4.42 քմ օժանդակ տարածքը, որի համար Թամարա Բալասանյանը 26.11.1994 թվականին տվել է գրավոր համաձայնություն (գ.թ. 12-13, 132): 15.12.1994 թվականին Վլադիմիր Բալասանյանն ստացել է սեփականության իրավունքի վկայական (գ.թ. 13):

4. Մոսկվայի թիվ 3 թաղային համայնքի 18.03.2004 թվականի տեղեկանքի համաձայն՝ Սերյոժա Իշխանի Բալասանյանը մինչև մահը՝ 03.10.2003 թվականը, ապրել և հաշվառված էր Մոսկվա, Սվետլագորսկիյ նրբանցք, տուն 5, բնակարան 53 հասցեում (գ.թ. 123):

5. Երևանի «Կենտրոն» թաղային համայնք «Կենտրոն» համատիրության 01.09.2006 թվականի տեղեկանքի համաձայն՝ Վլադիմիր Բալասանյանի հայրը՝ Սերյոժա Բալասանյանը, մինչև մահը բնակվել է Երևանի, Այգեստան 10-րդ փողոցի, 2-րդ շենքի, 58-րդ բնակարանում (գ.թ. 88) և նույն մարմնի 05.03.2007 թվականի տեղեկանքի համաձայն՝ Սերյոժա Բալասանյանը չի բնակվել է Երևանի, Այգեստան 10-րդ փողոցի, 2-րդ շենքի, 58-րդ բնակարանում (գ.թ. 192):

6. Երևանի պետական համալսարանի 28.08.2006 թվականի թիվ 18 տեղեկանքի համաձայն՝ Սերյոժա Բալասանյանն աշխատել է Երևանի պետական համալսարանում 1953 թվականից մինչև 2003 թվականի հոկտեմբեր ամիսը, որպես ամբիոնի պատվավոր վարիչ (գ.թ. 89, 92):

7. «Արմենիա Տելեֆոն Կոմպանի» ՓԲԸ-ի 26.09.2006 թվականի թիվ 09/173 գրության համաձայն՝ «մինչև 20.07.2004 թվական Այգեստան 10-րդ փողոց 2-րդ շենքի 58 բնակարան հասցեում գործող 556817 հեռախոսահամարի բաժանորդ է հանդիսացել Սերյոժա Բալասանյանը» (գ.թ. 190) և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 12.09.2006 թվականի տեղեկանքի համաձայն՝ «բաժանորդական N9802058-ով 15.07.1998 թվականից մինչև 01.07.2004 թվականը էլեկտրոցանցի բաժանորդ է հանդիսացել Սերգեյ Բալասանյանը, իսկ 01.07.2004 թվականից առ այսօր՝ Վլադիմիր Բալասանյանը» (գ.թ. 193):

8. Երևանի «Կենտրոն» թաղային համայնք «Կենտրոն» համատիրության 05.03.2007 թվականի տեղեկանքի համաձայն՝ Վլադիմիր Բալասանյանը բնակվել է Երևանի, Այգեստան 10-րդ փողոցի, 2-րդ շենքի, 58-րդ բնակարանում (գ.թ. 192):

9. ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի Մարաշ տարածքային ստորաբաժանման 15.05.2006 թվականի գրության համաձայն՝ վիճելի բնակարանը հավասար բաժիններով հնարավոր չէ բաժանել երկուսի միջև, քանի որ բնակելի սենյակներն անհամաչափ են դասավորված, իսկ կոմունալ և օժանդակ մակերեսները, ինչպես նաև մուտքը տեխնիկապես անբաժանելի են (գ.թ. 53):

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.**

Քննելով վճռաբեկ բողոքը վերը նշված հիմքերի սահմաններում՝ վճռաբեկ դատարանը գտնում է, որ

1) *Վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ.*

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքի հիմքում բարձրացված իրավական հարցին պատասխանելու համար վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի հիմքի շրջանակներում պետք է քննարկման առարկա դարձնի հետևյալ իրավական հարցը.

*Արդյո՞ք Սերյոժա Բալասանյանը փաստացի տիրապետման հիմքով ընդունել է Թամարա Բալասանյանի ժառանգությունը:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերի համաձայն՝ ժառանգությունը ձեռք բերելու համար ժառանգը պետք է այն ընդունի: Ժառանգի կողմից ժառանգության մի մասի ընդունումը նշանակում է իրեն հասանելիք ամբողջ ժառանգության ընդունում, անկախ այն բանից, թե ինչ է այն իրենից ներկայացնում և որտեղ է գտնվում: Նույն օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ եթե այլ բան ապացուցված չէ, ապա ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել կամ կառավարել ժառանգված գույքը՝ ներառյալ, երբ ժառանգը միջոցներ է ձեռնարկել գույքը պահպանելու և այն երրորդ անձանց ոտնձգություններից կամ հավակնություններից պաշտպանելու համար, իր հաշվին կատարել է գույ-

քը պահպանելու ծախսեր, իր հաշվից վճարել է ժառանգատուի պարտքերը կամ երրորդ անձանցից ստացել է ժառանգատուին հասանելիք գումարները:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Սերյոժա Իշխանի Բալասանյանը դեռևս 03.05.1996 թվականից դուրս է գրվել Երևանի, Այգեստան 10-րդ փողոցի, 2-րդ շենքի, 58-րդ բնակարանի հասցեից և հաշվառվել Մոսկվա, Սվետլագորսկիյ նրբանցք, տուն 5, բնակարան 53 հասցեում: Գործում առկա 18.03.2004 թվականի տեղեկանքով հաստատվել է, որ Թամարա Բալասանյանի մահից հետո Սերյոժա Բալասանյանը չի բնակվել Երևանի, Այգեստան 10-րդ փողոց, 2-րդ շենք, թիվ 58-րդ հասցեում գտնվող բնակարանում, որը վկայում է, որ նա փաստացի չի տիրապետել կամ կառավարել ժառանգական գույքը, հետևաբար, այն չի ընդունել:

Ինչ վերաբերում է «Արմենիա Տելեֆոն Կոմպանի» ՓԲԸ-ի 26.09.2006 թվականի թիվ 09/173 գրությանը և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 12.09.2006 թվականի տեղեկանքին, որոնք վկայում են Սերյոժա Բալասանյանի բաժանորդ լինելու մասին, ինչպես նաև Երևանի պետական համալսարանում աշխատելու վերաբերյալ տեղեկանքներին, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանցով չի կարող հիմնավորվել Սերյոժա Բալասանյանի կողմից վեճի առարկա գույքը փաստացի տիրապետելու փաստը:

Իսկ ինչ վերաբերում է Երևանի «Կենտրոն» թաղային համայնք «Կենտրոն» համատիրության 01.09.2006 թվականի տեղեկանքին, ապա այն հերքվում է նույն մարմնի կողմից տրված մեկ այլ 05.03.2007 թվականի տեղեկանքով, հետևաբար, Վճռաբեկ դատարանն այն չի համարում Սերյոժա Բալասանյանի կողմից փաստացի տիրապետման ուժով ժառանգության ընդունումը հիմնավորող ապացույց:

Սույն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանը հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Վլադիմիր Բալասանյանը հաշվառված լինելով շարունակել է բնակվել Երևանի, Այգեստան 10-րդ փողոց, 2-րդ շենք, թիվ 58-րդ հասցեում գտնվող բնակարանում, հաստատված է համարել, որ Վլադիմիր Բալասանյանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով՝ փաստացի տիրապետման եղանակով ընդունել է ժառանգությունը:

*2) Վճռաբեկ բողոքն երկրորդ հիմքով հիմնավոր չէ հետևյալ պատճառարանությամբ.*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ ընդհանուր գույքը բաժանելու կամ դրանից սույն հոդվածի 3-5-րդ կետերում սահմանված կանոններով բաժինն առանձնացնելու ակնհայտ աննպատակահարմարության դեպքում դատարանն իրավունք ունի վճիռ կայացնել գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու մասին՝ ստացված գումարը հետագայում բաշխելով ընդհանուր սեփականության մասնակիցների միջև՝ նրանց բաժիններին համաչափ:

Վերոնշյալ հոդվածով ընդհանուր գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու համար սահմանվել է պարտադիր նախապայմաններ, այն է՝ ընդհանուր գույքը բաժանելու, կամ նույն հոդվածի 3-5-րդ կետերում սահմանված կանոններով բաժինն առանձնացնելու ակնհայտ աննպատակահարմարությունը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու դատարանի իրավունքը կարող է կիրառվել միայն բացառիկ, այսինքն՝ վերը նշված պարտադիր պայմանների առկայության դեպքում:

Սույն քաղաքացիական գործի փաստերի հաշվառմամբ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատաքննության ընթացքում չի հիմնավորվել վեճի առարկա բնակարանից Կարինե Սերոբյանի բաժինը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 3-5-րդ կետերում սահմանված կանոններով առանձնացնելու ակնհայտ աննպատակահարմարությունը:

---

---

Հիմք ընդունելով վերոնշյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհիմն են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 6-րդ կետի կիրառելիության վերաբերյալ վճռաբեկ բողոքի հիմնավորումները:

3) *Վճռաբեկ բողոքն երրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1211-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կտակն անվավեր է ճանաչվում կտակի ձևի մասին կանոնները և գործարքների անվավերության մասին՝ սույն օրենսգրքի այլ դրույթները խախտելու հետևանքով:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին (տես օրինակ՝ «Բնար-88» ՍՊԸ ընդդեմ ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության, 21.12.2006թ. Քաղ. գործ թիվ 3-2504/ՏՂ-ՏՂ, (գումար բռնագանձելու պահանջով)):

Սակայն կարևորելով սույն բողոքի հիմքում ընկած իրավական հարցադրումը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում կրկին անդրադառնալ նշված հարցին:

Վերաքննիչ դատարանում գործի քննության ժամանակ գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 218-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետ համաձայն՝ վճռի մեջ պետք է նշվեն վերաքննիչ դատարանի կողմից պարզված հանգամանքները, ապացույցները, որոնց վրա հիմնված են վերաքննիչ դատարանի հետևություններն այդ հանգամանքների մասին, և փաստարկները, որոնցով վերաքննիչ դատարանը մերժում է այս կամ այն ապացույցները, ինչպես նաև այն օրենքները, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է դատարանը վճիռ կայացնելիս:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ վճռի թե՛ փաստական և թե՛ իրավական հիմնավորումը:

Վճռի իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ նյութական իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանն եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Վճռում ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Սույն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանը մասնակիորեն անվավեր ճանաչելով կտակը չի նշել ոչ մի օրենք կամ այլ իրավական ակտ, որոնցով ղեկավարվել է դատարանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1186-րդ հոդվածի 1-ին մասի ժառանգության զանգվածի մեջ է մտնում ժառանգության բացման օրը ժառանգատուին պատկանող գույքը՝ ներառյալ դրամը, արժեթղթերը, գույքային իրավունքները և պարտականությունները:

Սույն քաղաքացիական գործի փաստերի համաձայն՝ վեճի առարկա տունը և ավտոտնակը Սերյոժա և Թամարա Բալասանյանները ձեռք են բերել համատեղ կյանքի ընթացքում: Բացի այդ, Սերյոժա Բալասանյանը 01.02.1994 թվականի կտակը կազմելուց հետո՝ 01.12.1994 թվականի նվիրատվության պայմանագրով, իր գույքը՝ Երևանի, Այգեստան 10-րդ փողոցի, 2-րդ շենքի 58-րդ բնակարանի 15.5 քմ բնակելի սենյակը և 4.42 քմ օժանդակ տարածքը, նվիրել է Վլադիմիր Բալասանյանին: Հետևաբար, ժառանգության բացման օրն այն չի պատկանել Սերյոժա Բալասանյանին և չի մտել ժառանգության զանգվածի մեջ:

Հիմք ընդունելով վերոնշյալը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ վիճելի անշարժ գույքի մի մասը ժառանգության բացման ժամանակ չի մտել ժառանգության զանգվածի մեջ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կտակն անվավեր ճանաչելու հիմքերը սույն քաղաքացիական գործով բացակայում են:

---

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի 3-րդ հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար չ՛լքաղաքացիական դատավարություն օրենսգրքի 228-րդ հոդվածի 1-րդ կետի համաձայն՝ Վերաքննիչ դատարանի վճիռը մասնակիորեն բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում 01.02.1994 թվականի կազմած կտակը մասնակիորեն անվավեր ճանաչելու հայցի մասով անհրաժեշտ է կիրառել չ՛լքաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործն ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը մասնակիորեն փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով չ՛լքաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Մասնակիորեն բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.10.2007 թվականի վճիռը և այն փոփոխել՝ Վլադիմիր Բալասանյանի հայցը բավարարել մասնակիորեն: Սերյոժա Բալասանյանի կողմից 01.02.1994 թվականին կազմված կտակն անվավեր ճանաչելու պահանջի մասով հայցը՝ մերժել:

2. Վճիռն մնացած մասով թողնել օրինական ուժի մեջ:

3. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վերաքննիչ քաղաքացիական

դատարանի վճիռ

Քաղաքացիական գործ թիվ 07-4291

Նախագահող դատավոր՝ Կ.Հակոբյան

դատավորներ՝ Ս.Սահակյան

Տ.Նազարյան

Քաղաքացիական գործ թիվ **3-446(ՎԴ)**

**2008թ.**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Հ.ՍԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՍԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի հուլիսի 25-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Երևանի «Կենտրոն» և «Արաբկիր» թաղային համայնքների ներկայացուցչի վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 31.01.2008 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի Իրինա Շահումյանի ընդդեմ Երևանի Կենտրոն և Արաբկիր թաղային համայնքների՝ գումարի բռնագանձման պահանջի մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Իրինա Շահումյանը պահանջել է բռնագանձել պատասխանողներից 5.180 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված բանկային տոկոսները:

Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 01.11.2007 թվականի վճռով հայցը մերժվել է:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 31.01.2008 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Երևանի Կենտրոն և Արաբկիր թաղային համայնքները:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Իրինա Շահումյանը:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով:

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ, հողվածների պահանջները, կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1242-րդ, 1243-րդ և 1244-րդ հոդվածները, որոնք չպետք է կիրառեր:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությամբ չի գնահատել գործում եղած բոլոր ապացույցները, մասնավորապես՝ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.12.2006 թվականի թիվ 06-941, 06-2576/2006թ. վճիռը, որով դատարանը հաստատված համարելով, որ «Կ.Քարամյանը չունի ժառանգներ, վերջինիս մահից հետո նրա գույքի նկատմամբ չի բացվել ոչ ըստ օրենքի և ոչ էլ ըստ կտակի ժառանգություն և վեճի առակա բնակարանը առանց որևէ հիմքի զբաղեցվել էր պատասխանող Պավել Մովսեսի Մովսիսյանի կողմից», վճռել է «Հանգուցյալ Կարինե Քարամյանին սեփականությամբ պատկանող՝ ք. Երևան, Պարոնյան փողոցի 28 շենքի 65 բնակարանը ճանաչել անժառանգ գույք և դրա նկատմամբ ճանաչել Կենտրոն թաղային համայնքի սեփականության իրավունքը»:

Թաղապետարանը ժառանգ չի կարող լինել, հետևաբար չի կարող կրել այնպիսի պատասխանատվություն, որպիսին ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանվել է բացառապես ժառանգների համար:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 31.01.2008 թվականի վճիռը և օրինական ուժ տալ Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 01.11.2007 թվականի թիվ 2-473/2007թ. վճռին:

### **2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմքերը և փաստարկները.**

Վճռաբեկ բողոքի դեմ ներկայացված պատասխանում պատճառաբանվել է, որ թաղապետարանները հանդիսանում են ըստ օրենքի ժառանգներ համաձայն՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 72-րդ գլխի կանոնների, այսինքն՝ տվյալ դեպքում տեղի է ունեցել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1244-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված ժառանգության իրավունքի փոխանցում:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունի հետևյալ փաստերը՝

1) Կարինե Քարամյանին սեփականության իրավունքով պատկանել են Երևանի Պարոնյան փողոցի 28 շենքի թիվ 65 և Գրիբեյդոզի փողոցի 44 շենքի թիվ 28 բնակարանները:

2) Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.12.2006 թվականի վճռով հաստատված է համարվել, որ Կ.Քարամյանը չունի ժառանգներ, վերջինիս մահից հետո գույքի նկատմամբ չի բացվել ոչ ըստ օրենքի և ոչ էլ ըստ կտակի ժառանգություն, որի արդյունքում դատարանը Երևանի Պարոնյան փողոցի 28 շենքի թիվ 65 բնակարանը ճանաչել է անժառանգ գույք և դրա նկատմամբ ճանաչել Կենտրոն թաղային համայնքի սեփականությունը:

### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝ վճռաբեկ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1215-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ըստ օրենքի ժառանգները ժառանգման են հրավիրվում սույն օրենսգրքի 1216-1219 հոդվածներով սահմանված հերթականությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1227րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ ժառանգությունը կարող է ընդունվել ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում:

---

---

Նույն օրենսգրքի 1243-րդ հոդվածի համաձայն՝ պարտատերերն իրավունք ունեն ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում ներկայացնել իրենց պահանջները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1224-րդ հոդվածի համաձայն՝ եթե չկան ոչ ըստ կտակի և ոչ էլ ըստ օրենքի ժառանգներ կամ դրանք հրաժարվել կամ մեկուսացվել են ժառանգությունից, ապա ժառանգվող գույքը ճանաչվում է անժառանգ: Անժառանգ գույքն անցնում է ժառանգության բացման վայրի համայնքի սեփականությանը:

Վերոգրյալ հոդվածներից հետևում է, որ օրենսդիրը սահմանելով ժառանգների ցանկը, որոնք իրավունք ունեն օրենքով սահմանված կարգով և ժամկետներում ընդունել ժառանգությունը, միաժամանակ նույն ժամկետը նախատեսել է ժառանգատուի պարտատերերի կողմից իրենց պահանջների ներկայացման համար: Իսկ բոլոր այն դեպքերում, երբ ժառանգներ չկան կամ նրանք հրաժարվել են ժառանգությունից, ժառանգության ընդունման կամ պարտատերերի կողմից իրենց պահանջների ներկայացման համար օրենքով նախատեսված ժամկետի լրացման փաստի ուժով ժառանգական գույքը ձեռք է բերում մի կարգավիճակ, որով փաստորեն համարվում է որևէ մեկի իրավունքով չձանրաբեռնված գույք՝ անժառանգ գույք:

Այսինքն համայնքը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1224-րդ հոդվածի ուժով ոչ թե ձեռք է բերում ժառանգի կարգավիճակ, այլ ժառանգների բացակայության, ինչպես նաև ժառանգատուի պարտատերերի կողմից օրենքով սահմանված ժամկետում որևէ պահանջ չներկայացնելու ուժով ձեռք է բերում սեփականության իրավունք ժառանգական զանգվածի նկատմամբ:

Սույն քաղաքացիական գործի փաստերի համաձայն՝ հանգուցյալ Կարինե Քարամյանին սեփականության իրավունքով պատկանել են Երևանի Պարոնյան փողոցի 28 շենքի թիվ 65 և Գրիբոյեդովի փողոցի 44 շենքի թիվ 28 բնակարանները: Վերաքննիչ քաղաքացիական դատարանի օրինական ուժի մեջ մտած 05.12.2006 թվականի վճռով հաստատվել է այն հանգամանքը, որ Կարինե Քարամյանը ժառանգներ չունի և վերջինիս մահից հետո ժառանգական գույքի՝ Երևանի Պարոնյան փողոցի 28 շենքի թիվ 65 բնակարանի նկատմամբ սահմանված ժամկետում ժառանգություն չի բացվել: Նշվածի հիման վրա հանգուցյալ Կ.Քարամյանի գույքը համարվել է անժառանգ գույք և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1224-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, անցել է ժառանգության բացման վայրի համայնքի սեփականությանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ի.Շահումյանը օրենքով սահմանված կարգով և ժամկետում Կարինե Քարամյանի նկատմամբ ունեցած իր պահանջը չի ներկայացրել ժառանգության բացման վայրի նոտարին, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կարինե Քարամյանի ամբողջ գույքը ճանաչվել է անժառանգ գույք և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1224-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներին համապատասխան, անցել է ժառանգության բացման վայրի թաղային համայնքների սեփականությանը:

Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում նաև վճռաբեկ բողոքի պատճառաբանությունը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1244-րդ հոդվածի խախտման մասին, քանի որ նշված հոդվածը վերաբերում է **ժառանգների** պատասխանատվությանը, մինչդեռ սույն դեպքում վերը նշված հիմնավորումներով արդեն իսկ հերքվել է թաղապետարանների՝ ժառանգ հանդիսանալու փաստը:

Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված հիմնավորումները հերքվում են վերոգրյալ պատճառաբանություններով:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքը հիմնավոր համարելով Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով վերանայվող դատական ակտը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի

6-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 31.01.2008 թվականի վճիռը և օրինական ուժ տալ Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 01.11.2007 թվականի վճռին:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ՝ ս տ ո ղ ա գ ղ ո թ յ ո լ ն  
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր՝ ս տ ո ղ ա գ ղ ո թ յ ո լ ն ն եր*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում  
Քաղաքացիական գործ թիվ 08-621  
Նախագահող դատավոր՝ Դ.Խաչատրյան  
Դատավորներ՝ Ս.Սիբայելյան  
Ն.Տավարացյան

Քաղաքացիական գործ թիվ **3-509(ՎԴ)**  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ  
դատարան)

*Նախագահությամբ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի հոկտեմբերի 31-ին,

դռնբաց դատական նիստում, քննելով Ռ-ոզա Գրիգորյանի վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.02.2008 թվականի որոշման դեմ՝ ըստ Սամվել, Դոլորես և Դեզի Հովհաննիսյանների հայցի ընդդեմ Ռ-ոզա Գրիգորյանի, Նիկոլայ և Հասմիկ Սողոմոնյանների՝ իրավունք սահմանող փաստաթղթերի պատկանելության և ժառանգությունն ընդունելու փաստերը հաստատելու պահանջների մասին, և ըստ Ռ-ոզա Գրիգորյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Սամվել, Դոլորես և Դեզի Հովհաննիսյանների՝ սեփականության իրավունքի գրանցումը մասնակի անվավեր ճանաչելու և բնակելի տան ու հողամասի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականատեր ճանաչելու պահանջների մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Սամվել, Դոլորես և Դեզի Հովհաննիսյանները պահանջել են ճանաչել Երևանի Քանաքեռ 13 փողոցի թիվ 49 բնակելի տան նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգներ և հաստատել իրավաբանական նշանակություն ունեցող այն փաստերը, որ Երևանի Քանաքեռ 13 փողոցի թիվ 49 բնակելի տան 25.04.1996 թվականի սեփականության իրավունքի վկայականում, Նիկոլայ Հովհաննիսյանի մահվան վկայականում, Սամվել, Դոլորես և Դեզի Հովհաննիսյանների, Առնոլդ Սողոմոնյանի ծննդյան վկայականների “Օրեւ” կամ «Հայրը» տողում կատարված նշումները վերաբերում են միևնույն անձին՝ Նիկոլայ Հովհաննիսյանին, իսկ Ադունիկ Դանիելյանի մահվան վկայականում, Առնոլդ Սողոմոնյանի, Սամվել, Դոլորես և Դեզի Հովհաննիսյանների ծննդյան

վկայականների “МСТБ” կամ «Մայրը» տողում կատարված նշումները վերաբերվում են միևնույն անձին՝ Ադունիկ Դանիելյանին:

Դիմելով դատարան՝ Ռոզա Գրիգորյանը պահանջել է անվավեր ճանաչել Երևանի Քանաքեռ 13 փողոցի թիվ 49 բնակելի տան սեփականության իրավունքի գրանցումը և նշված հասցեի բնակելի տան և հողամասի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով ճանաչել իր և Վալերի Սողոմոնյանի սեփականության իրավունքը:

Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 12.12.2007 թվականի վճռով Սամվել, Դոլորես և Դեզի Հովհաննիսյանների հայցը և Ռոզա Գրիգորյանի հակընդդեմ հայցը բավարարվել են մասնակիորեն:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 27.02.2008 թվականի որոշմամբ բեկանվել է Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 12.12.2007 թվականի վճռի՝ Ռոզա Գրիգորյանի հակընդդեմ հայցի մասը, և այն փոփոխվել է՝ հակընդդեմ հայցը մերժվել է, դատական ակտը մնացած մասով թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ռոզա Գրիգորյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել Սամվել, Դոլորես և Դեզի Հովհաննիսյանները:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*1) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածը, 1226-րդ հոդվածի 3-րդ մասը, որոնք պետք է կիրառեր:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Դեզի և Սամվել Հովհաննիսյանները մինչև իրենց հոր՝ ժառանգատու Նիկոլայ Հովհաննիսյանի մահը, այնպես էլ նրա մահից հետո բնակվել են իրենց մոր՝ Ադունիկ Դանիելյանի հետ և ժառանգական գույք կազմող՝ Երևանի Քանաքեռ 13 փողոցի թիվ 49 բնակելի տունը փաստացի տիրապետման հիմքով չեն ընդունել:

Վերաքննիչ դատարանը հաստատված համարելով Երևանի Քանաքեռ 13 փողոցի թիվ 49 բնակելի տան նկատմամբ փաստացի տիրապետման հիմքով Սամվել և Դեզի Հովհաննիսյանների ժառանգություն ընդունելու հանգամանքը՝ որոշման մեջ չի նշել գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, ինչպես նաև այն օրենքը, որոնցով ղեկավարվել է որոշում կայացնելիս:

*2) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 172-րդ, 280-րդ, 187-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել գործում առկա պատգամավորների Երևան քաղաքի խորհրդային շրջխորհրդի գործադիր կոմիտեի նախագահի 29.02.1991 թվականի գրությունը, համաձայն որի՝ Երևանի Քանաքեռ 13 փողոցի թիվ 49 հասցեում 299,27 քմ մակերեսով կառույցը կառուցվել է 1989 թվականին, պատկանում է Վալերի Սողոմոնյանին, որտեղ բնակվում են 4 անձ, Քանաքեռ-Զեյթուն համայնքների քաղաքացետարանի կողմից հաստատված Վալերի Սողոմոնյանի հարևանների 15.10.2007 թվականի հայտարարությունը, համաձայն որի՝ Երևանի Քանաքեռ 19 փողոցի թիվ 49 բնակելի տան բնակիչ հանգուցյալ Վալերի Սողոմոնյանը վերը նշված հասցեում գտնվող մեկ հարկանի խարխլված վթարային վիճակում գտնվող տունը 1988-1989 թվականներին քանդել է և փոխարենն իր միջոցներով վերակառուցել է երկհարկանի բնակելի տուն:

---

---

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ սույն քաղաքացիական գործում առկա է միայն վիճելի տան նկատմամբ Կոլյա Հովհաննիսյանի անվամբ տրված 25.04.1996 թվականի սեփականության վկայականը, իսկ 1955 թվականի գույքաթերթը և հատակագիծը գործում առկա չեն, հետևաբար Վերաքննիչ դատարանը չէր կարող հաստատված համարել, որ վերը նշված փաստաթղթերում առկա մակերեսները համընկնում են:

Ռոզա Գրիգորյանը իր ամուսնու հետ միասին բնակվելով վիճելի հասցեում 1988-1989 թվականներին քանդել են տարիների ընթացքում խարխլված և վթարային վիճակում գտնվող Նիկոլայ Հովհաննիսյանի մեկհարկանի տունը և բոլոր հարևանների, հարազատների, այդ թվում՝ հայցվորների գիտությանը կառուցել նոր երկհարկանի բնակելի տուն, որը վկայում է, որ վիճելի անշարժ գույքը Ռոզա Գրիգորյանը ավելի քան տասը տարի բացահայտ, բարեխիղճ և անընդմեջ փաստացի տիրապետում է որպես սեփական գույք:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 27.02.2008 թվականի որոշումը մասնակիորեն և դատական ակտը փոփոխել՝ Սամվել և Դեզի Հովհաննիսյանների հայցը՝ ժառանգությունն ընդունած ժառանգներ ճանաչելու մասով մերժել, Ռոզա Գրիգորյանի հակընդդեմ հայցը՝ սեփականության իրավունքի գրանցումը անվավեր ճանաչելու և բնակելի տան ու հողամասի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականատեր ճանաչելու պահանջների մասով՝ բավարարել:

### **2.1. Սամվել, Դոլորես և Դեզի Հովհաննիսյանների վճարել պատասխաններում բերված փաստարկերը**

Վճարել բողոքում նշված այն փաստարկը, որ Սամվել, Դոլորես և Դեզի Հովհաննիսյանները փաստացի տիրապետման հիմքով չեն ընդունել իրենց հոր՝ Նիկոլայ Հովհաննիսյանի ժառանգությունը, հիմնավոր չէ, քանի որ իրենց հոր մահվան ժամանակ՝ 1968 թվականին, հայցվորները անչափահաս էին և մինչև հոր մահը, այնպես էլ մահվանից հետո բնակվել և շարունակել են բնակվել իրենց հայրական տանը, որը գտնվում է Երևանի Քանաքեռ 19 փողոցի թիվ 49 վիճելի հասցեում: Նշված հանգամանքը վկայում է, որ փաստացի տիրապետման հիմքով հայցվորները ընդունել են իրենց հասանելիք ժառանգությունը:

Ինչ վերաբերում է վիճելի անշարժ գույքը ամբողջովին քանդելուն և նոր բնակելի տուն կառուցելուն, ապա այն չի համապատասխանում իրականությանը, քանի որ դատաքննության ընթացքում կադաստրային գործի ուսումնասիրությունից և հատակագծերի համադրումից պարզվեց, որ Նիկոլայ Հովհաննիսյանի օրոք առկա և նրա անվամբ 1996 թվականին տրված սեփականության վկայականում նշված տարածքների մակերեսները համընկնում են: Հայրական տունը հիմնովին երբևէ չի քանդվել, այլ Երևանի Քանաքեռ 19 փողոցի թիվ 49ա հասցեում գտնվող մյուս տան շինարարական աշխատանքներից հետո ավելացված շինանյութի հաշվին 1990-ական թվականների սկզբներին կառուցվել է ընդամենը 2-րդ հարկ, որն այս պահին ինքնակամ շինություն է: Այդ հանգամանքը հիմնավորվում է շինարարական աշխատանքները կատարած վարպետի՝ Աշոտ Մխիթարյանի հայտարարությամբ:

### **3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. 25.06.1996 թվականին տրված սեփականության իրավունքի վկայականի համաձայն՝ Երևանի Քանաքեռ 13 փող. 49 հասցեում գտնվող 127, 9 քմ տան և 500 քմ մակերեսով հողամասի սեփականատերն է Կոլյա Հովհաննիսյանը: Սեփականության վկայականում առկա մնացած շինություններն անօրինական կառույցներ են:

2. Նիկոլայ Հովհաննիսյանը մահացել է 30.12.1968 թվականին:

3. Վալերի Սողոմոնյանը, Սամվել և Դեզի Հովհաննիսյանները Նիկոլայ Հովհաննիսյանի ըստ օրենքի առաջին հերթի ժառանգներն են:

4. Քանաքեռ-Զեյթուն թաղապետարանի բնակ. կոմունալ տնտեսության և բարեկարգման բաժնի թիվ 8 լիազոր ներկայացուցչի 26.09.2007 թվականի տեղեկանքի համաձայն՝ Դեզի Հովհաննիսյանն ամուսնացել է 1975 թվականին և մինչ տեղեկանքի տրման օրը Քանաքեռ 13 փող. 49 տան հասցեում չի բնակվում, Սամվել Հովհաննիսյանը 1989 թվականից դուրս է եկել վերը նշված հասցեից և մինչ տեղեկանքի տրման օրը այնտեղ չի բնակվում:

5. Վալերի Սողոմոնյանը մահացել է 19.10.2005 թվականին:

6. ՀՀ պատգամավորների Երևան քաղաքի խորհրդային շրջխորհրդի գործադիր կոմիտեի 29.02.1996 թվականի գրության համաձայն՝ Քանաքեռ 13 փող. 49 հասցեում գտնվող 299,27 քմ մակերեսով կառույցը և 493,7 քմ հողատարածությունը սեփականության իրավունքով կամ որպես ինքնակամ շինություն գրանցելու մասին գործադիր կոմիտեի նախագահը հայտնել է, որ այն կառուցվել է 1989 թվականին ու պատկանում է Վալերի Սողոմոնյանին, որտեղ բնակվում են 4 անձ:

7. ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Զեյթուն տարածքային ստորաբաժանման ղեկավար Յու. Հայրապետյանի 26.11.2007 թվականի գրության համաձայն՝ Քանաքեռ 13 փող. 49 տան կադաստրային գործի նյութերի համաձայն՝ հատկացված հողամասի մակերեսը կազմում է 500,0 քմ, բնակելի տան ներքին մակերեսը՝ 127,9 քմ, որից բնակելին 59,9 քմ:

**4. Վճռարեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.**

Քննելով վճռարեկ բողոքը վերը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռարեկ դատարանը գտնում է, որ՝

1) *Վճռարեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.*

Վճռարեկ դատարանը գտնում է, որ բողոքի հիմքում բարձրացված իրավական հարցին պատասխանելու համար վճռարեկ բողոքի հիմքի շրջանակներում պետք է քննարկման առարկա դարձվեն հետևյալ հարցադրումները.

1. *Արդյո՞ք Վալերի Սողոմոնյանը, Սամվել և Դեզի Հովհաննիսյանները փաստացի տիրապետման հիմքով ընդունել են իրենց հոր՝ Նիկոլայ Հովհաննիսյանի ժառանգությունը:*

2. *Երևանի Քանաքեռ 13 փող. 49 հասցեում գտնվող շինություններից որո՞նք են մտնում Նիկոլայ Հովհաննիսյանի ժառանգության զանգվածի մեջ:*

Նիկոլայ Հովհաննիսյանի ժառանգության բացման ժամանակ գործող՝ ՀՍՍՀ քաղաքացիական օրենսգրքի 549-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգությունը ձեռք բերելու համար ժառանգը պետք է ընդունի այն, իսկ նույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա փաստորեն սկսում է տիրապետել կամ կառավարել ժառանգական գույքը, կամ երբ նա ժառանգության բացման վայրի նոտարական մարմնին հայտարարել է ժառանգությունն ընդունելու մասին: Այս հոդվածում նշված գործողությունները պետք է կատարվեն ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում:

Սույն քաղաքացիական գործի փաստերի վերլուծության արդյունքում Վճռարեկ դատարանն արձանագրում է, որ Նիկոլայ Հովհաննիսյանի ժառանգության զանգվածը կազմել է Երևանի Քանաքեռ 13 փող. 49 հասցեում գտնվող 127, 9 քմ մակերեսով տունը, որտեղ բնակվել են Դեզի Հովհաննիսյանը իր հոր՝ Նիկոլայ Հովհաննիսյանի մահից հետո մինչև 1975 թվականը, Սամվել Հովհաննիսյանը՝ մինչև 1989 թվականը, իսկ Վալերի Սողոմոնյանը՝ մինչև 2005 թվականը : Հետևաբար, ժառանգության բացման ժամանակ գործող՝ ՀՍՍՀ քաղաքացիական օրենսգրքի 549-րդ հոդվածի ուժով Դեզի և Սամվել Հովհաննիսյանը

---

---

յանները, ինչպես նաև Վալերի Սողոմոնյանը տիրապետման ուժով ընդունել են իրենց հասանելի ժառանգությունը:

Ինչ վերաբերում է 1989 թվականին Վալերի Սողոմոնյանի կողմից Երևանի Քանաքեռ 13 փողոցի թիվ 49 հասցեում գտնվող տանը կատարված շինարարական աշխատանքներին, որի արդյունքում Երևանի Քանաքեռ 13 փողոցի թիվ 49 հասցեում գտնվող գույքի մակերեսը զգալիորեն ավելացել է, ապա այդ շինությունների կարգավիճակը պարզված չէ, հետևաբար դրանք ժառանգության գազվածի մաս չեն կարող կազմել:

Սինչդեռ Վերաբննիչ դատարանը, հաստատված համարելով Երևանի Քանաքեռ 13 փող. 49 հասցեում գտնվող ամբողջ տան նկատմամբ Սամվել և Դեզի Հովհաննիսյանների փաստացի տիրապետման հիմքով ժառանգություն ընդունելու փաստը և հաշվի չառնելով սույն գործում առկա ապացույցները, ճանաչել է նրանց ժառանգման իրավունքը նաև իրավական կարգավիճակը չպարզված շինությունների նկատմամբ:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ Նիկոլայ Հովհաննիսյանի ժառանգության բացման ժամանակ ժառանգության զանգվածը **Երևանի Քանաքեռ 13 փողոցի թիվ 49 հասցեում գտնվող 127, 9 քմ մակերեսով տունն է, որը փաստացի տիրապետման հիմքով ընդունել են Դեզի Հովհաննիսյանը, Սամվել Հովհաննիսյանը և Վալերի Սողոմոնյանը՝ յուրաքանչյուրը 1/3 մասով**: Իսկ Ռոզա Գրիգորյանը, որպես Վալերի Սողոմոնյանի ըստ օրենքի առաջին հերթի ժառանգ, փաստացի տիրապետման հիմքով ընդունելով իր ամուսնու բաժնի, այն է՝ Երևանի Քանաքեռ 13 փող. թիվ 49 հասցեում գտնվող 127, 9 քմ մակերեսի բնակելի տան 1/3-րդ մասը, ձեռք է բերել այդ բաժնի նկատմամբ սեփականության իրավունք:

2) *Վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառարանությամբ.*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 172-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով անձը կարող է սեփականության իրավունք ձեռք բերել սեփականատեր չունեցող գույքի նկատմամբ, ինչպես նաև այն գույքի, որի սեփականատերն անհայտ է, կամ որից սեփականատերը հրաժարվել է, կամ որի նկատմամբ սեփականության իրավունքը նա կորցրել է օրենքով նախատեսված այլ հիմքերով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 280-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացին կամ իրավաբանական անձը կարող է **հրաժարվել իրեն պատկանող գույքի սեփականության իրավունքից**՝ այդ մասին գրավոր հայտարարելով կամ այնպիսի գործողություններ կատարելով, որոնք ակնհայտ վկայում են գույքի տիրապետումից, օգտագործումից եւ տնօրինումից նրա մեկուսացման մասին՝ առանց այդ գույքի նկատմամբ որեւէ իրավունք պահպանելու մտադրության:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացին կամ իրավաբանական անձը, որն անշարժ գույքի սեփականատերը չէ, սակայն այն տասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ տիրապետում է որպես սեփական գույք, այդ գույքի նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրավունք (ձեռքբերման վաղեմություն):

Վերոնշյալ հոդվածների համադրումից հետևում է, որ ձեռքբերման վաղեմությունն իրենից ներկայացնում է օրենքով նախատեսված որոշակի ժամկետի լրանալու և որոշակի պայմանների վրա հասնելու ուժով **մեկ անձի կողմից սեփականության իրավունքի ձեռքբերման**, իսկ մյուսի կողմից **այդ իրավունքի դադարման** միջոց:

Բացի այդ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից հետևում է, որ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռքբերման համար անհրաժեշտ է մի շարք վավերապայմանների միաժամանակյա առկայությունը: Մասնավորապես դրանք են՝

1. Տիրապետումը պետք է լինի բարեխիղճ: Տիրապետման բարեխղճությունը գնահատվում է գույքն անձի փաստացի տիրապետմանն անցնելիս: Տիրապետողի մոտ պետք է առկա լինի այն համոզմունքը, որ նա գույքը ձեռք է բերում օրինական հիմքերով: **Տիրապետումը պետք է հիմնված լինի այնպիսի փաստի վրա, որը տիրապետողին կարող է տալ բավարար հիմքեր ենթադրելու, որ նա այդ գույքը տիրապետելու է որպես սեփականություն:**

2. Փաստացի տիրապետողը գույքը պետք է տիրապետի որպես սեփականը, այսինքն՝ գույքը փաստացի տիրապետողը պետք է մասնակցի գույքի կառավարմանը, հոգ տանի դրա պահպանման համար, ինչպես իր սեփական գույքի դեպքում: Անձը պետք է գույքը տիրապետի ինչպես սեփականը նաև երրորդ անձանց հետ հարաբերություններում:

3. Տիրապետումը պետք է լինի 10 տարի և անընդմեջ: Այսինքն՝ 10 տարվա ընթացքում գույքի տիրապետումը չպետք է ընդհատվի: Տիրապետումը կարող է ընդհատվել կամ տիրապետողի կամքով, երբ նա հրաժարվում է գույքի հետագա տիրապետումից (գույքը դուրս է գալիս նրա տիրապետումից), կամ գույքի սեփականատիրոջ կամ այլ անձանց գործողություններով, որոնք ուղղված են գույքը վերադարձնելուն:

4. Տիրապետումը պետք է լինի բացահայտ, այսինքն՝ փաստացի տիրապետողը գույքը չպետք է տիրապետի երրորդ անձանցից գաղտնի եղանակով (տես օրինակ՝ Վոլոդյա և Միշա Նիկողոսյաններ ընդդեմ Մանվել, Սոֆիկ, Մելանյա, Մանվել Սարիբեկյաններ և Քնարիկ Աղազարյան, Մանվել Սարիբեկյան և Քնարիկ Աղազարյան ընդդեմ Վոլոդյա և Միշա Նիկողոսյաններ՝ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը և սեփականության իրավունքի վկայականը մասնակի անվավեր ճանաչելու պահանջի մասին թիվ 3-1435/ՎԳ քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 10.10.2007 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործում առկա չէ Ռոզա Գրիգորյանի կողմից վիճելի գույքի նկատմամբ **տիրապետման քարեխղճությունը** հիմնավորող որևէ ապացույց, հետևաբար, հիմնավոր է Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությունը, որ Ռոզա Գրիգորյանը չունի բավարար հիմքեր ենթադրելու, որ ինքն այդ գույքը տիրապետելու է որպես սեփականություն:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով, այն հանգամանքը, որ Երևանի Քննաքնն 13 փող. թիվ 49 հասցեում առկա են նաև կարգավիճակը չորոշված (ինքնակամ կառույցներ) շինություններ, հարկ է համարում արձանագրել, որ անհայտ կարգավիճակ ունեցող կառույցների (ինքնակամ կառույցի) նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունք չի կարող ճանաչվել, իսկ նման շինությունների նկատմամբ ձեռք բերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ճանաչման վերաբերյալ վեճը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի ուժով ենթակա չէ դատարանում քննության:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարություն օրենսգրքի 227-րդ և 228-րդ - հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործն ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևա-

---

---

բար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.02.2008 թվականի որոշումը բեկանել մասնակիորեն և այն փոփոխել՝ հայցը և հակընդդեմ հայցը բավարարել մասնակի՝ ճանաչել Դեզի և Սամվել Հովհաննիսյանների, ինչպես նաև Ռոզա Գրիգորյանի սեփականության իրավունքը Երևանի Քանաքեռ 13 փողոցի թիվ 49 հասցեում գտնվող 127,9քմ մակերեսով բնակելի տան նկատմամբ՝ յուրաքանչյուրին 1/3-րդ մասով:

Ինքնակամ կառուցված շինությունների նկատմամբ Դեզի և Սամվել Հովհաննիսյաններին ժառանգությունն ընդունած ժառանգներ ճանաչելու հայցի և այդ կառույցների նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով Ռոզա Գրիգորյանին սեփականատեր ճանաչելու հակընդդեմ հայցի մասով քաղաքացիական գործի վարույթը կարճել:

2. Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.02.2008 թվականի որոշումը մնացած մասով թողնել օրինական ուժի մեջ:

3. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի վճիռ  
Քաղաքացիական գործ թիվ 07-3549  
Նախագահող դատավոր՝ Կ.Հակոբյան  
Դատավորներ՝ Ն.Հովսեփյան  
Լ.Գրիգորյան

Քաղաքացիական գործ թիվ **3-237 (ՎԳ)**  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Հ.ՍԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՍԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի մարտի 27-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Արման Միքայելյանի վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 24.12.2007 թվականի վճռի դեմ՝ ըստ Արման Միքայելյանի հայցի ընդդեմ Հայարվի Կարապետյանի, Արագածոտնի մարզպետարանի խնամակալության և հոգաբարձության մարմնի՝ երեխաների տեսակցության կարգ սահմանելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Արման Միքայելյանը պահանջել է սահմանել երեխաների տեսակցության կարգ՝ շաբաթվա ընթացքում չորս օր:

Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի 26.07.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 24.12.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Արման Միքայելյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Հայարվի Կարապետյանը:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով:

*Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ ընտանեկան օրենսգրքի 49-րդ, 51-րդ, 53-րդ - հոդվածները և խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ, 218-րդ հոդվածները:*

---

---

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 49-րդ, 51-րդ, 53-րդ հոդվածների համաձայն՝ երկու ծնողներն էլ հավասար իրավունքներ ունեն երեխաների նկատմամբ և կրում են հավասար պարտականություններ նրանց դաստիարակության հարցում: Ծնողները պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների առողջության, ֆիզիկական, հոգեկան, հոգևոր և քարոջական զարգացման մասին: Սույն գործով հիմնավորվել է, որ հայցվորը ևս ունի բոլոր հնարավորությունները վերը նշված հոդվածներով սահմանված իր պարտականությունները կատարելու համար: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը սահմանափակել է Արման Միքայելյանի իրավունքների և պարտականությունների կատարման հնարավորությունները՝ հայցվորի համար սահմանելով շաբաթվա ընթացքում ընդամենը մի քանի ժամ տեսակցություն:

Վերաքննիչ դատարանը խախտել է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի պահանջները՝ չկատարելով գործի ապացույցների օբյեկտիվ հետազոտություն և վերլուծություն: Վերաքննիչ դատարանը ընդհանրապես չի անդրադարձել այն հարցին, թե ինչու գործում առկա մի քանի եզրակացություններից վճռի հիմքում դրել է միայն Արմավիրի քաղաքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի եզրակացությունը: Բացի այդ, Վերաքննիչ դատարանը չի տվել վճռի փաստական և իրավական հիմնավորումը:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 24.12.2007 թվականի վճիռը և օրինական ուժ տալ Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի 26.07.2007 թվականի վճռին:

### **2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմքերը և փաստարկները.**

Հայարփի Կարապետյանն ունի երեխաների կենսական անհրաժեշտությունները հոգալու բոլոր պայմանները, ինչպես նաև անհրաժեշտ և բավարար ժամանակ նրանց դաստիարակությամբ զբաղվելու համար: Մինչդեռ, Արման Միքայելյանի աշխատանքի վայրը գտնվում է Երևանի Արաբկիր համայնքում, հետևաբար չի հիմնավորվում Արման Միքայելյանի փաստարկը, որ վերջինս կարող է կազմակերպել երեխաների անհրաժեշտ դաստիարակությունը, թեկուզ ժամանակի անբավարարության պատճառով: Այսինքն՝ Արման Միքայելյանի կողմից երեխաների տեսակությունը չէր կարող հավասարապես սահմանվել Հայարփի Կարապետյանի հետ, ինչը և Վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից իրականացվել է՝ սահմանելով Արման Միքայելյանի կողմից երեխաներին տեսակցության շաբաթական երկու օր՝ որոշակի ժամանակահատվածներով:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Արման Միքայելյանը և Հայարփի Կարապետյանը 27.07.2001 թվականից գտնվում են գրանցված ամուսնության մեջ, ունեցել են երկու երեխա՝ 26.07.2001 թվականին ծնված Անահիտ Միքայելյանը և 14.10.2004 թվականին ծնված Սերգո Միքայելյանը:

2) Ըստ քննվող քաղաքացիական գործի տվյալների՝ Արման Միքայելյանը և Հայարփի Կարապետյանն ապրում են միմյանցից առանձին, ընդ որում՝ Արման Միքայելյանն ապրում է Թալին քաղաքում, իսկ Հայարփի Կարապետյանը՝ Արմավիր քաղաքում:

3) Երեխաները ներկայումս ապրում են մոր՝ Հայարփի Միքայելյանի հետ:

4) Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի երեխաների պաշտպանության բաժնի եզրակացությունների համաձայն՝ Արման Միքայելյանի և Հայարփի Կարապետյանի կողմից երեխաների դաստիարակությամբ հավասարաչափ զբաղվելը, ինչպես նաև նրանց հավասարաչափ տեսակցելը և խնամելը բխում է երեխաների շահերից:

5) Արմավիրի քաղաքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի եզրակացության համաձայն՝ Արման Միքայելյանի տեսակցությունը երեխաների հետ նպատակահարմար է շաբաթը մեկ անգամ՝ առավոտից մինչև երեկո, պարտադիր վերադարձման պայմանով:

6) 09.10.2004 թվականին ծնված Սերգո Միքայելյանը հաճախում է մանկապարտեզ, որտեղ նախադպրոցական տարիքի երեխաներին կրթելու համար սահմանված ուսումնական շաբաթն ավարտվում է ուրբաթ օրը, ժամը 16:00-17:00-ի սահմաններում: 26.07.2001 թվականին ծնված Անահիտ Միքայելյանը հաճախում է դպրոց, որտեղ ուսումնական շաբաթն ավարտվում է շաբաթ օրը, ժամը 13:00-14:00-ի սահմաններում:

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծնողներն ունեն հավասար իրավունքներ և կրում են հավասար պարտականություններ իրենց երեխաների նկատմամբ (ծնողական իրավունքներ): Նույն օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են դաստիարակելու իրենց երեխաներին, ծնողները պատասխանատվություն են կրում իրենց երեխաների դաստիարակության և զարգացման համար: Նրանք պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների առողջության, ֆիզիկական, հոգեկան, հոգևոր և բարոյական զարգացման մասին:

Նշված հոդվածներից հետևում է, որ ծնողների վրա է դրված երեխաների դաստիարակության, այդ թվում՝ առողջության, ֆիզիկական, հոգեկան, հոգևոր և բարոյական զարգացման հարցերի լուծման պարտականությունները, ընդ որում՝ նշված պարտականությունները ծնողների միջև բաշխված են հավասարապես, ծնողներն ունեն **հավասար** իրավունքներ և կրում են **հավասար** պարտականություններ՝ իհարկե հաշվի առնելով երեխաների շահերը:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 54-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ երեխայից առանձին ապրող ծնողը իրավունք ունի երեխայի հետ շփվելու, նրա դաստիարակությանը մասնակցելու, երեխայի կրթություն ստանալու հարցերը լուծելու: Ծնողը, որի հետ ապրում է երեխան, չպետք է խոչընդոտի մյուս ծնողի հետ երեխայի շփմանը, եթե նման շփումը վնաս չի պատճառում երեխայի ֆիզիկական ու հոգեկան առողջությանը, նրա բարոյական զարգացմանը:

Մինչդեռ, սույն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանը Արման Միքայելյանի համար սահմանելով տեսակցության կարգ, ըստ էության հաշվի չի առել այն հանգամանքը, որ շաբաթ և կիրակի օրերին (ընդամենը 9 ժամ) երեխաներին տեսակցելու համար յուրաքանչյուր անգամ այլ քաղաք գնալը, ինչպես նաև տեսակցությունը Հայաստանի Կարապետյանի տանն իրականացնելն անհարկի սահմանափակում է Արման Միքայելյանի՝ երեխաների խնամքով ու դաստիարակությամբ զբաղվելու իրավունքը, ինչպես նաև չի բխում երեխաների շահերից:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի հիմնավոր լինելը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարություն օրենսգրքի 227-րդ և 228-րդ - հոդվածների ուժով վերանայվող դատական ակտը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

---

---

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 24.12.2007 թվականի վճիռը և գործն ուղարկել Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒՐՆԵՐ ԴԱՏԱՐԱՆ**

Վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի վճիռ

Քաղաքացիական գործ թիվ **3-222(ՎԳ)**  
**2008թ.**

Քաղաքացիական գործ թիվ 07-3096  
Նախագահող դատավոր՝ Տ.Սահակյան  
Դատավորներ՝ Ն.Հովսեփյան  
Մ.Ասատրյան

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ  
դատարան)

*նախագահությամբ* Հ.ՍԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ԳՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի մարտի 27-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Նիկողոս Դաբաղյանի վճռաբեկ բողոքը Վե-  
րաքննիչ քաղաքացիական դատարանի 29.10.2007 թվականի վճռի դեմ՝ ըստ Նիկողոս  
Դաբաղյանի հայցի ընդդեմ Մարի, Նշան և Տաթևիկ Դաբաղյանների՝ բնակելի տնից  
վտարելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Նիկողոս Դաբաղյանը պահանջել է սեփականության իրավուն-  
քով պատկանող Երևանի Ա.Խաչատրյան փողոցի թիվ 15 բնակելի տնից վտարել Մարի,  
Նշան և Տաթևիկ Դաբաղյաններին:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի  
10.07.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)  
29.10.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ Նշան և Մարի Դաբաղ-  
յանների մատով:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Նիկողոս Դաբաղյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմ-  
նավորումներով.

---

---

*Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ, 225-րդ - հոդվածները, սխալ է մեկնաբանել «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 16-րդ - հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով:*

Վերաքննիչ դատարանը, Տաթևիկ Դաբաղյանին վեճի առարկա բնակարանից չվտարելով, խախտել է Նիկողոս Դաբաղյանի սեփականության իրավունքը՝ նրան գրկելով սեփականությունը տիրապետելու և օգտագործելու հնարավորությունից:

Վերաքննիչ դատարանը, սխալ մեկնաբանելով «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածը, անտեսել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ Տաթևիկ Դաբաղյանի համար նույնպես անհրաժեշտ էր, որ նա (օրինական ներկայացուցիչը) սեփականատիրոջ՝ Նիկողոս Դաբաղյանի հետ կնքեր համապատասխան պայմանագիր, ինչը կոնկրետ դեպքում չի արվել: Բացի այդ, Տաթևիկ Դաբաղյանի խնամքը հանձնվել է մորը՝ Մարի Դաբաղյանին, այսինքն՝ Տաթևիկ Դաբաղյանի խնամքով, այդ թվում՝ բնակարանային ապահովությամբ, պետք է հոգ տանի մայրը, քանի որ նա հանդիսանում է նրա ընտանիքի անդամը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 29.10.2007 թվականի վճիռը՝ Տաթևիկ Դաբաղյանի մասով և այդ մասով օրինական ուժ տալ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 10.07.2007 թվականի վճռին:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Երևանի Ա.Խաչատրյան փողոցի թիվ 15 բնակելի տունը սեփականության իրավունքով պատկանում է Նիկողոս Դաբաղյանին:

2) 15.06.1990 թվականին ծնված Տաթևիկ Դաբաղյանը Նիկողոս Դաբաղյանի դուստրն է:

3) ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած 13.12.2002 թվականի վճռով փոխհատուցմամբ դադարեցվել է Մարի Դաբաղյանի բնակտարածության օգտագործման իրավունքը վիճելի տան նկատմամբ: Վերջինս վտարվել է այդ բնակարանից:

4) ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած 25.03.2004 թվականի վճռով Տաթևիկ Դաբաղյանի խնամքն ու դաստիարակությունը հանձնվել է մորը՝ Մարի Դաբաղյանին:

### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ *բողոքն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի համաձայն՝ սեփականության իրավունքը սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը: Տնօրինման իրավունքը գույքի ճակատագիրը որոշելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածի համաձայն՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքը ուրիշի սեփականություն հանդիսացող բնակելի տարածությունում *բնակվելու իրավունքն է:* Բնակելի տարածության օգտագործման իրավունքի ծագումը, իրականացման պայմանները և դադարումը սահմանվում են սեփականատիրոջ հետ նոտարական կարգով վավերացված գրավոր պայմանագրով: Բնակելի տարածու-

յան օգտագործման իրավունքը ծագում է գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին օրենքով սահմանված կարգով այդ իրավունքի գրանցման պահից:

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ յուրաքանչյուր երեխա ունի ծնողների **հետ համատեղ ապրելու իրավունք**՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այն դեպքերի, երբ դատարանի որոշմամբ ծնողներից կամ ծնողից երեխայի բաժանումը համարվում է անհրաժեշտություն՝ ելնելով երեխայի շահերից:

Նույն օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝ բնակելի տարածության վարձակալի կամ սեփականատիրոջ ընտանիքի անդամ հանդիսացող երեխան ունի այդ վարձակալի կամ սեփականատիրոջ զբաղեցրած բնակելի տարածությունում **ապրելու իրավունք՝ անկախ իր բնակության վայրից**:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ ընտանիքի անդամներ են նաև երեխաները: Նույն օրենսգրքի 49-րդ հոդվածի համաձայն՝ ծնողներն ունեն հավասար իրավունքներ և կրում են հավասար պարտականություններ իրենց երեխաների նկատմամբ (ծնողական իրավունքներ):

Վերոգրյալ հոդվածներից հետևում է, որ երեխան ունի ծնողներից յուրաքանչյուրի հետ ապրելու իրավունք:

Ծնողների զբաղեցրած բնակարանում երեխայի ապրելու իրավունքի ապահովումը միաժամանակ ծնողների պարտականությունն է, նրանք հավասարապես պարտավոր են երեխային ապահովել բնակելի տարածությունում ապրելու իրավունքով:

Ծնողի հետ ապրելու երեխայի իրավունքը չի կարող նույնացվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածով նախատեսված բնակելի տարածության օգտագործման իրավունքի հետ, քանի որ ապրելու իրավունքը ամմիջականորեն կապված է ծնողի անձի հետ, այլ ոչ թե ծնողի սեփականության կամ վարձակալության իրավունքով պատկանող գույքի հետ: Ծնողի զբաղեցրած բնակարանում երեխայի ապրելու իրավունքը ծագում է օրենքի ուժով և պահպանվում է մինչև երեխայի 18 տարին լրանալը: Այսինքն՝ ծնողի հետ ապրելու իրավունքը երեխայի մոտ ծագում է ծնող-երեխա ազգակցական կապի ուժով:

Ավելին, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ծնողներից յուրաքանչյուրի հետ ապրելու երեխայի իրավունքը պահպանվում է նույնիսկ այն դեպքում, երբ նրա խնամքը հանձնված է ծնողներից մեկին, այսինքն՝ անգամ ամուսնալուծված ծնողը պարտավոր է թույլատրել երեխային բնակվել իր կողմից զբաղեցրած բնակարանում:

Սույն քաղաքացիական գործի փաստերի համաձայն՝ Նիկողոս Դաբաղյանը վիճելի բնակարանի սեփականատերն է, իսկ անչափահաս Տաթևիկ Դաբաղյանը՝ նրա դուստրը:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անչափահաս Տաթևիկ Դաբաղյանն օրենքի ուժով ապրելու իրավունք ունի Նիկողոս Դաբաղյանի սեփականության ներքո գտնվող բնակարանում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.10.2007 թվականի վճիռը թողնել օրինական ուժի մեջ:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒՐՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **3-699(ՎԳ)**  
**2008թ.**

Քաղաքացիական գործ թիվ 08-1690  
Նախագահող դատավոր՝ Ս. Միքայելյան  
Դատավորներ՝ Ն. Տավարացյան  
Դ. Խաչատրյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ  
դատարան)

*նախագահությամբ* Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Դ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ. ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի դեկտեմբերի 26-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Վալերի Աշխեն Գուրգենի Գործունյան Ա-սատրյանի վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.08.2008 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Վազգեն Ասատրյանի ընդդեմ Վալերի Աշխեն Գուրգենի Գործունյան Ասատրյանի, «Փարիզյան Սուրճ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն), երրորդ անձ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի «Կենտրոն» տարածքային ստորաբաժանման (այսուհետ՝ Կադաստր)՝ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Վազգեն Ասատրյանը պահանջել է ճանաչել սեփականության իրավունքն Ընկերության 50 տոկոս բաժնեմասի նկատմամբ և գրանցել սեփականության իրավունքը Երևանի Կենտրոն համայնքի Արովյան փողոցի 23 շենքի թիվ 1 հասցեի տարածքի 1/2-րդ մասի նկատմամբ:

Կենտրոն և Նորք Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 11.12.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 27.08.2008 թվականի որոշմամբ Վալերի Աշխեն Գուրգենի Գործունյան Ասատրյանի վերաքննիչ բողոքը մերժվել է՝ Կենտրոն և Նորք Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 11.12.2007 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Վալերի Աշխեն Գուրգենի Գործունյան Ասատրյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Վազգեն Ասատրյանը:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Վազգեն Ասատրյանի և Վալերի Գործունյանի միջև կնքված ամուսնության պայմանագրի դրույթների չկիրառումը Վերաքննիչ դատարանը պատճառաբանել է նրանով, որ ամուսնության պայմանագիրը կողմերի միջև կնքվել է 05.04.1995 թվականին, մինչդեռ կողմերի ամուսնությունը Ֆրանսիայում գրանցվել է 21.04.1995 թվականին: Ամուսնական պայմանագիրը կնքելու պահին կողմերն ամուսիններ չեն եղել, ուստի այդ պայմանագրի դրույթները կիրառելի չեն:

Մինչդեռ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածը չի պարունակում որևէ նորմ այն մասին, թե պայմանագիրը պետք է կնքվի ամուսնանալու պահին, թե դրանից հետո, ինչպես նաև չի սահմանում դրա վերաբերյալ արգելք: Հետևաբար ամուսնական պայմանագիրը կարող է կնքվել ինչպես մինչև ամուսնությունը, այնպես էլ ամուսնության պահին կամ դրանից հետո:

Բացի այդ, Վալերի Գործունյանի կողմից առուվաճառքի պայմանագրով Վազգեն Ասատրյանից գնված Ընկերության 50 տոկոս բաժնեմասը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածով չէր կարող դիտվել որպես համատեղ ամուսնության ընթացքում ձեռք բերված ոչ միայն վերոնշյալ պատճառաբանությամբ, այլև այն հիմքով, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածը վերաբերում է ամուսինների կողմից ամուսնության ընթացքում համատեղ ձեռք բերած գույքին, որի դեպքում այն պետք է ձեռք բերված լինի երրորդ անձից:

Երևանի Կենտրոն համայնքի Աբովյան փողոցի 23 շենքի թիվ 13 բնակարանի 1/2-րդ մասի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու մասով հայցը բավարարելիս Վերաքննիչ դատարանը, հաստատված համարելով վեճի առարկա գույքի արժեքի ավելացման փաստը, չի հիմնավորել նաև այդ ավելացման և Վազգեն Ասատրյանի կողմից ներդրման պատճառահետևանքային կապը:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանի որոշումը հակասում է ՀՀ վճռաբեկ դատարանի 20.06.2008 թվականի թիվ 3-422(ՎԴ) գործով կայացրած որոշմանը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 27.08.2008 թվականի որոշումը:

**2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները**

ՀՀ վճռաբեկ դատարանի 20.06.2008 թվականի թիվ 3-422(ՎԴ) գործի փաստական հանգամանքները և սույն գործի փաստերը միմյանց հետ ընդհանրապես չեն համընկնում, ուստի այդ որոշումը սույն գործով կիրառելի չէ:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Վազգեն Ասատրյանի և Վալերի Գործունյանի միջև Ֆրանսիայի Ուդան քաղաքում 05.04.1995 թվականին կնքված ամուսնության պայմանագրի համաձայն՝ Վազգեն Ա-

սատրյանը և Վալերի Գործունյանը պայմանագիրը կնքում են ամուսնության նպատակով, որը տեղի է ունենալու 21.04.1995 թվականին Փարիզ 17-ի քաղաքապետարանում:

«Ապագա ամուսինները հայտարարում են, որ որպես իրենց միության հիմք ընդունում են Գույքի Առանձին ռեժիմը, որը նախատեսված է» **Ֆրանսիայի «քաղաքացիական օրենսգրքի 1536-1543 հոդվածներով**: Հետևաբար, ամուսիններից յուրաքանչյուրը կպահպանի այն անշարժ և շարժական գույքի սեփականությունը, կառավարումը, տիրապետումն ու ազատ տնօրինումը, որ ներկայումս պատկանում է իրեն կամ կարող է պատկանել հետագայում ցանկացած հիմքով»:

2) Վազգեն Ասատրյանի և Վալերի Աշխեն Գուրգենի Գործունյան Ասատրյանի ամուսնությունը տեղի է ունեցել և վկայականը տրվել է 21.04.1995 թվականին: Ամուսնության վկայականի համաձայն՝ «...ապագա ամուսինները հայտարարեցին, որ ամուսնական պայմանագիրը կնքվել է 1995 թվականի ապրիլի 5-ին...»:

3) 17.09.1999 թվականի թիվ 0097718 սեփականության իրավունքի վկայականի համաձայն՝ Երևանի Կենտրոն համայնքի Աբովյան փողոցի 23 շենքի թիվ 1 բնակարանի սեփականատերն է Վալերի Աշխեն Գործունյանը:

4) 13.08.2004 թվականի թիվ 1463900 սեփականության իրավունքի վկայականի համաձայն՝ Երևանի Կենտրոն համայնքի Աբովյան փողոցի 23 շենքի թիվ 13 բնակարանի սեփականատերն է Վալերի Գործունյանը:

5) Ընկերության 50 տոկոս բաժնեմասը պատկանում է Վալերի Աշխեն Գործունյանին, իսկ մյուս 50 տոկոսը՝ Վազգեն Ասատրյանին:

6) 26.01.2006 թվականի թիվ 2044232 սեփականության իրավունքի վկայականի համաձայն՝ Երևանի Կենտրոն համայնքի Աբովյան փողոցի 23 շենքի թիվ 1 տարածքի սեփականատերն է Վալերի Աշխեն Գործունյանը:

7) 22.01.2007 թվականի բաժնեմասի առուվաճառքի թիվ 01 պայմանագրի համաձայն՝ Վազգեն Ասատրյանը վաճառել, իսկ Վալերի Աշխեն Գուրգենի Գործունյան Ասատրյանը գնել է Ընկերության կանոնադրական կապիտալում Վազգեն Ասատրյանին սեփականության իրավունքով պատկանող 5.026 հատ բաժնեմասը (որը մասնակիցների ընդհանուր ժողովում ապահովում է 50 տոկոս ձայնի իրավունք):

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ *այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ*.

Վճռաբեկ բողոքի սահմաններում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում գնահատման առարկա դարձնել հետևյալ իրավական հարցադրումը. *արդյո՞ք սույն գործով կիրառելի են Վազգեն Ասատրյանի և Վալերի Գործունյանի միջև Ֆրանսիայի Ուղան քաղաքում 05.04.1995 թվականին կնքված ամուսնության պայմանագրի դրույթները*:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի համաձայն՝ ամուսնության ընթացքում ամուսինների ձեռք բերած գույքը նրանց համատեղ սեփականությունն է, **եթե այլ բան նախատեսված չէ նրանց միջև կնքված պայմանագրով**: Մինչև ամուսնությունն ամուսիններից յուրաքանչյուրի գույքը, ինչպես նաև ամուսնության ընթացքում ամուսիններից մեկի նվեր կամ ժառանգություն ստացած գույքը նրա սեփականությունն է: Ամուսիններից յուրաքանչյուրի գույքը կարող է ճանաչվել նրանց համատեղ սեփականություն, եթե պարզվի, որ ամուսնության ընթացքում ամուսինների ընդհանուր գույքի կամ մյուս ամուսնու անձնական գույքի հաշվին կատարվել են ներդրումներ, որոնք նշանակալի չափով ավելացրել են այդ գույքի արժեքը (հիմնական վերանորոգում, վերակառուցում, վերասարքավորում), եթե այլ բան նախատեսված չէ ամուսինների միջև կնքված պայմանագրով:

Վերաքննիչ բողոքի մերժման հիմքում Վերաքննիչ դատարանը դրել է այն փաստարկը, որ կողմերի միջև 05.04.1995 թվականին կնքված ամուսնության պայմանագրով սահմանված կանոնները կիրառելի չեն, քանի որ այն կնքվել է ամուսնությունից առաջ, այ-

սինքն՝ այն ժամանակաշրջանում, երբ կողմերը դեռևս ամուսիններ չեն եղել: Բացի այդ, իրավահարաբերությունների ծագման ժամանակաշրջանում գործել է ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգիրքը, որը չի նախատեսել ամուսնության պայմանագրի իրավական կարգավորումը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությունը, որ ամուսնական պայմանագիրը կիրառելի չէ, քանի որ այն կնքվել է ամուսնությունից առաջ, հիմնավոր չէ, քանի որ Ֆրանսիայի քաղաքացիական օրենսգրքի 1395-րդ հոդվածը հստակ նշում է, որ ամուսնական պայմանագրերը պետք է կազմվեն ամուսնության կնքումից առաջ և ուժի մեջ են մտնում ամուսնության կնքման օրվանից:

Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությունը, որ ամուսնական պայմանագրի դրույթները չեն կարող կիրառվել, քանի որ դրա կնքման պահին գործող ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգիրքը չի նախատեսել ամուսնության պայմանագրի իրավական կարգավորումը, Վճռաբեկ դատարանը նույնպես հիմնավոր չի համարում հետևյալ պատճառաբանությամբ.

«ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ մինչև 01.01.1999 թվականը ծագած պայմանագրային և այլ քաղաքացիական իրավահարաբերությունների նկատմամբ **օրենսգիրքը կիրառվում է այն իրավունքների ու պարտականությունների մասով, որոնք կծագեն օրենսգիրքը գործողության մեջ դրվելուց հետո:**

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ ամուսնական պայմանագրի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը կիրառելի է, քանի որ վեճի առարկա գույքի նկատմամբ իրավունքները ծագել են 01.01.1999 թվականից հետո՝ 26.01.2006 և 22.01.2007 թվականներին:

Բացի այդ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1285-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կիրառվելիք իրավունքի վերաբերյալ կողմերի համաձայնության բացակայության դեպքում նույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերում չթվարկված պայմանագրերի նկատմամբ կիրառվում է այն պետության իրավունքը, որտեղ հիմնադրվել է, բնակության վայր կամ գործունեության հիմնական վայր ունի այն կողմը, որը կատարում է նման պայմանագրի բովանդակության համար վճռական նշանակություն ունեցող պայմանը: Պայմանագրի բովանդակության համար վճռական նշանակություն ունեցող պայմանը որոշելու անհնարինության դեպքում կիրառվում է այն պետության իրավունքը, որի հետ առավել սերտ է կապված տվյալ պայմանագիրը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով պայմանագրի կնքման պահի դրությամբ ամուսիններից մեկի՝ Վալերի Գործունյանի, Ֆրանսիայի քաղաքացի լինելու, ամուսինների Ֆրանսիայում բնակվելու փաստերը, ինչպես նաև այն հանգամանքը, որ կողմերը ամուսնության պայմանագրով որպես միության հիմք ընդունել են Ֆրանսիայի օրենսդրությամբ (Ֆրանսիայի քաղաքացիական օրենսգրքի 1536-1543-րդ հոդվածներ) նախատեսված իրավական ռեժիմը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վազգեն Ասատրյանի և Վալերի Գործունյանի միջև կնքված ամուսնական պայմանագրի նկատմամբ կիրառելի է Ֆրանսիայի օրենսդրությունը:

Ինչ վերաբերում է Ընկերության 50 տոկոս բաժնեմասի օտարմանը, ապա դրա նկատմամբ նույնպես կիրառելի են Վազգեն Ասատրյանի և Վալերի Գործունյանի միջև կնքված ամուսնական պայմանագրի նորմերը: Հետևաբար նրանց կողմից միմյանց օտարված գույքը նույնպես ձեռքբերողի անձնական սեփականությունն է:

Ինչ վերաբերում է Երևանի Կենտրոն համայնքի Աբովյան փողոցի 23-րդ շենքի թիվ 1 տարածքի նկատմամբ կատարված բարելավումներին, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ հանգամանքը սույն գործի քննության համար էական նշանակություն չունի, քանի որ շինարարության իրականացումից հետո դրա նկատմամբ ամուսնական պայմանագրի ուժով ծագել է Վալերի Գործունյանի սեփականության իրավունքը:

---

---

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի համաձայն, Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառարարությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.08.2008 թվականի որոշումը և այն փոփոխել. Վազգեն Ասատրյանի հայցը մերժել:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒՐՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԿԳ-03/0026/02/08

Քաղաքացիական գործ թիվ ԿԳ-03/0026/02/08

Նախագահող դատավոր՝ Դ.Խաչատրյան

Դատավորներ՝ Ն.Տավարացյան

Ս.Սիքայեյան

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ  
դատարան)

*նախագահությամբ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ

Վ.ԱԲԵԼՅԱՆԻ

Ե.ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ

Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի դեկտեմբերի 26-ին

դռնբաց դատական նիստում քննելով Ալվարդ Խաչատրյանի օրինական ներկայացուցիչ Թեհմինե Խաչատրյանի վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.06.2008 թվականի որոշման դեմ՝ ըստ Ալվարդ Խաչատրյանի օրինական ներկայացուցիչ Թեհմինե Խաչատրյանի հայցի ընդդեմ Արմեն, Անահիտ Խաչատրյանների, Քանաքեռավանի գյուղապետարանի, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Եղվարդի տարածքային ստորաբաժանման՝ Քանաքեռավանի շրջխորհրդի գործկոմի 31.01.1995 թվականի թիվ 1 որոշումը, սեփականության իրավունքի պետական գրանցումը, գրանցման վկայականը մասնակիորեն անվավեր ճանաչելու և համասեփականատեր ճանաչելու պահանջների մասին, և Արմեն Խաչատրյանի հակընդդեմ հայցն ընդդեմ Թեհմինե Խաչատրյանի՝ բնակության իրավունքը դադարեցնելու և բնակելի տարածությունից վտարելու պահանջների մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Ալվարդ Խաչատրյանի օրինական ներկայացուցիչ Թեհմինե Խաչատրյանը պահանջել է Քանաքեռավանի շրջխորհրդի գործկոմի 31.01.1995 թվականի թիվ 1 որոշումը, սեփականության իրավունքի պետական գրանցումը, գրանցման վկայականը մասնակիորեն անվավեր ճանաչել և Ալվարդ Խաչատրյանին ճանաչել համասեփականատեր:

Հակընդդեմ հայցով Արմեն Խաչատրյանը պահանջել է առանց փոխհատուցման դադարեցնել Թեհմինե, Ալվարդ և Էմմա Խաչատրյանների բնակության իրավունքը և բնակելի տարածությունից վտարել:

---

---

Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 04.03.2008 թվականի վճռով հայցը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժվել:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 06.06.2008 թվականի որոշմամբ Դատարանի 04.03.2008 թվականի վճիռը բեկանվել է փոփոխվել է՝ հայցը մերժվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ բավարարվել:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Թեհմինե Խաչատրյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, չի կիրառել «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածը, որը պետք է կիրառել, սխալ է մեկնաբանել «ՀՀ պետական և հանրային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Ավարդ Խաչատրյանն Արմեն Խաչատրյանի դուստրն է, ընտանիքի անդամը, որի ուժով համարվել է սեփականաշնորհման սուբյեկտ և պետք է օգտվեր բնակարանի սեփականաշնորհումից բխող բոլոր իրավունքներից:

Վերաքննիչ դատարանի կողմից յուրաքանչյուր ապացույց չի գնահատվել գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ, մասնավորապես, Քանաքեռավանի գյուղապետարանի կողմից տրված տեղեկանքը, Ավարդ Խաչատրյանի համար 1994 թվականին բացված բժշկական ամբուլատոր քարտը, որոնց համաձայն՝ Թեհմինե Խաչատրյանի երեխաներ Ավարդ և Էմմա Խաչատրյանները ծննդյան օրվանից մշտապես բնակվել են վեճի առարկա տանը, որից հետևում է, որ Ավարդ Խաչատրյանը սեփականաշնորհման սուբյեկտ է:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը, վտարելով Ավարդ և Էմմա Խաչատրյաններին Քանաքեռավան գյուղի 11 փողոցի 21/4 բնակելի տանից, խախտել է «Երեխաների իրավունքների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածը, որը երաշխավորում է ծնողներից յուրաքանչյուրի բնակելի տարածությունում երեխայի ապրելու իրավունքը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 06.06.2008 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 04.03.2008 թվականի վճիռն:

## **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Թեհմինե և Արմեն Խաչատրյանները գտնվել են փաստական, իսկ 06.12.1995 թվականից՝ գրանցված ամուսնության մեջ: Համատեղ կյանքում ունեցել են 2 երեխա, Ավարդ Խաչատրյանը՝ ծնված 08.06.1994 թվականին և Էմմա Խաչատրյանը՝ ծնված 04.05.1998 թվականին:

2. Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանի 15.11.2007 թվականի վճռով լուծվել է Թեհմինե և Արմեն Խաչատրյանների ամուսնությունը:

3. Վեճի առարկա հասցեով Ավարդ Խաչատրյանի համար 1994 թվականից բացվել է բժշկական ամբուլատոր քարտ:

4. Քանաքեռավանի գյուղապետարանի կողմից տրված 12.11.2007 թվականի տեղեկանքի համաձայն՝ Ավարդ և Էմմա Խաչատրյանները ծննդյան օրվանից մշտապես բնակվել են Քանաքեռավան գյուղի 11 փողոցի 21/4 հասցեում (նախկին 1 փողոց թիվ 19/2):

5. Քանաքեռավանի շրջխորհրդի գործկոմի 31.01.1995 թվականի թիվ 1 որոշմամբ վեճի առարկա տուճը սեփականաշնորհվել է:

6. Թեհմինե Խաչատրյանը 09.08.2001թվականին հաշվառվել է Քանաքեռավան գյուղի 11 փողոցի 21/4 տանը:

7. 13.02.1996 թվականի սեփականության վկայագրի համաձայն՝ վեճի առարկա բնակելի տան նկատմամբ գրանցված է Պարույր, Արմեն և Ալիսա Խաչատրյանների սեփականության իրավունքը:

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

29.06.1993 թվականին ընդունված և 01.09.1993 թվականին ուժի մեջ մտած «Պետական և հանրային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ սեփականաշնորհման սուբյեկտ են հանդիսանում **Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, տվյալ բնակտարածությունում գրանցում ունեցող**, ինչպես նաև օրենքով սահմանված դեպքերում բնակտարածության նկատմամբ իրավունքը պահպանած քաղաքացիները:

Նույն օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ բնակարանային ֆոնդի բնակարանների սեփականաշնորհումն ընտանիքի չափահաս անդամների համաձայնության դեպքում ձևակերպվում է տվյալ բնակարանի վարձակալի անունով, կամ նրա ընտանիքի որևէ չափահաս անդամի անունով՝ **որպես ընտանիքի բոլոր անդամների ընդհանուր համատեղ, կամ ընդհանուր բաժնային սեփականություն**: Վարձակալի ընտանիքի այն անդամները, որոնք բնակվում են նրա հետ համատեղ, Հայաստանի Հանրապետության բնակարանային օրենսգրքի համաձայն՝ վարձակալի հետ համահավասար օգտվում են բնակտարածության վարձակալության պայմանագրից բխող բոլոր իրավունքներից և կրում բոլոր պարտականությունները, ինչպես նաև օգտվում են բնակարանների սեփականաշնորհումից բխող իրավունքներից:

Վերոնշյալ հոդվածներից հետևում է, որ բնակարանի վարձակալ չհանդիսացող անձը սեփականաշնորհման արդյունքում կարող է ձեռք բերել սեփականության իրավունք 3 պարտադիր վավերապայմանների **միաժամանակյա առկայության դեպքում**: Այդպիսիք են՝ Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվելը, տվյալ բնակտարածությունում գրանցում ունենալը, ինչպես նաև բնակարանի վարձակալի ընտանիքի անդամ լինելը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Արմեն Խաչատրյանի **դուստր Ալվարդ Խաչատրյանը** ծննդյան օրվանից **մշտապես բնակվել է** Քանաքեռավան գյուղի 11 փողոցի 21/4 հասցեում: «Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրությունը, Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի նկարագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 11.09.1992 թվականի թիվ 473 որոշման 22-րդ կետի համաձայն՝ ծնողների (խնամակալների, հոգաբարձուների) հետ բնակվող 16 տարին չլրացած քաղաքացիների հաշվառումը կատարվում է ծնողներից մեկի (խնամակալի, հոգաբարձուի) հաշվառման փաստաթղթերում նրանց մասին տվյալները գրառելու միջոցով:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ 16 տարին չլրացած քաղաքացիների գրանցումը հաստատված համարելու համար առանձին հաշվառման փաստաթղթի առկայությունը պարտադիր չէ, քանի որ այն պարտադիր կերպով կատարվում է իրենց ծնողի հաշվառման փաստաթղթերում գրառում կատարելու միջոցով:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բնակելի տան սեփականաշնորհման արդյունքում Ալվարդ Խաչատրյանը նույնպես ձեռք է բերել սեփականության իրավունք:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին:

---

---

Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ որոշման իրավական հիմնավորումը:

Որոշման իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանն եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Որոշման մեջ ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածից հետևում է, որ դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է որոշում կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն մասն հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին (տես, Անժելա Ղազարյանը, Արփիկ և Արմինե Գասպարյաններն ընդդեմ Շուշանիկ Սարգսյանի, Ոսկեհատ, Նունե, Հրանուշ Գասպարյանների՝ ժառանգական գույքը ժառանգների միջև բաժանելու պահանջի մասին, ՀՀ վճռաբեկ դատարանի 12.12.2007 թվականի որոշում, քաղաքացիական գործ թիվ 3-1843(ՎԳ)):

Մինչդեռ, սույն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանը գալով այն եզրահանգման, որ Ալվարդ Խաչատրյանը սեփականաշնորհման սուբյեկտ չէ, պատշաճ գնահատման առարկա չի դարձրել Ալվարդ Խաչատրյանի համար 1994 թվականից բացված բժշկական ամբուլատոր քարտը և Քանաքեռավանի գյուղապետարանի կողմից տրված 12.11.2007 թվականի տեղեկանքը, որոնցով հիմնավորվում է, որ Ալվարդ Խաչատրյանը ծննդյան օրվանից մշտապես բնակվել է Քանաքեռավան գյուղի 11 փողոցի 21/4 բնակելի տանը՝ Արմեն Խաչատրյանի հետ համատեղ, հետևաբար, վարձակալի հետ համահավասար օգտվում է բնակելի տարածության սեփականաշնորհումից բխող իրավունքներից:

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ յուրաքանչյուր երեխա ունի ծնողների **հետ համատեղ ապրելու իրավունք**՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այն դեպքերի, երբ դատարանի որոշմամբ ծնողներից կամ ծնողից երեխայի բաժանումը համարվում է անհրաժեշտություն՝ ելնելով երեխայի շահերից:

Նույն օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝ բնակելի տարածության վարձակալի կամ սեփականատիրոջ ընտանիքի անդամ հանդիսացող երեխան ունի այդ վարձակալի կամ սեփականատիրոջ զբաղեցրած բնակելի տարածությունում **ապրելու իրավունք՝ անկախ իր բնակության վայրից**:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ ընտանիքի անդամներ են մաս երեխաները: Նույն օրենսգրքի 49-րդ հոդվածի համաձայն՝ ծնողներն ունեն հավասար իրավունքներ և կրում են հավասար պարտականություններ իրենց երեխաների նկատմամբ (ծնողական իրավունքներ):

Վերոգրյալ հոդվածներից հետևում է, որ երեխան ունի ծնողներից յուրաքանչյուրի հետ ապրելու իրավունք:

Ծնողների զբաղեցրած բնակարանում երեխայի ապրելու իրավունքի ապահովումը միաժամանակ ծնողների պարտականությունն է, նրանք հավասարապես պարտավոր են երեխային ապահովել բնակելի տարածությունում ապրելու իրավունքով:

Ծնողի հետ ապրելու երեխայի իրավունքն անմիջականորեն կապված է ծնողի անձի հետ, այլ ոչ թե ծնողի սեփականության կամ վարձակալության իրավունքով պատկանող գույքի հետ: Ծնողի զբաղեցրած բնակարանում երեխայի ապրելու իրավունքը ծագում է օրենքի ուժով և պահպանվում է մինչև երեխայի 18 տարին լրանալը: Այսինքն՝ ծնողի հետ ապրելու իրավունքը երեխայի մոտ ծագում է ծնող-երեխա ազգակցական կապի ուժով:

Ավելին, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ծնողներից յուրաքանչյուրի հետ ապրելու երեխայի իրավունքը պահպանվում է նույնիսկ այն դեպքում, երբ նրա խնամքը հանձնված է ծնողներից մեկին, այսինքն՝ անգամ ամուսնալուծված ծնողը պարտավոր է թույլատրել երեխային բնակվել իր կողմից զբաղեցրած բնակարանում (տես, Նիկողոս Դաբաղյանն ընդդեմ Մարի, Նշան և Տաթևիկ Դաբաղյանների՝ բնակելի տնից վտարելու պահանջի մասին, ՀՀ վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի որոշում, քաղաքացիական գործ թիվ 3-222(ՎԳ)):

Սույն քաղաքացիական գործի փաստերի համաձայն՝ Արմեն Խաչատրյանը վեճի առարկա տան համասեփականատեր է, իսկ անչափահաս Էմմա Խաչատրյանը՝ նրա դուստրը:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անչափահաս Էմմա Խաչատրյանն օրենքի ուժով ապրելու իրավունք ունի Արմեն Խաչատրյանի համասեփականության ներքո գտնվող բնակելի տանը:

Ինչ վերաբերում է բնակելի տնից Թեհմինե Խաչատրյանին վտարելու պահանջին, ապա այն հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ համատեղ սեփականության **մասնակիցները միասին տիրապետում և օգտագործում են** ընդհանուր գույքը, եթե այլ բան նախատեսված չէ նրանց համաձայնությամբ: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը **տնօրինվում է բոլոր մասնակիցների համաձայնությամբ**, անկախ այն բանից, թե մասնակիցներից ով է կնքում գույքը տնօրինելու գործարքը:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Թեհմինե Խաչատրյանին վտարելու պահանջն ենթակա է մերժման, քանի որ այն ներկայացվել է միայն մեկ սեփականատիրոջ կողմից:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քաղաքացիական գործի վարույթը Արմեն, Պարույր, Ալիսա Խաչատրյանների անվամբ տրված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականն անվավեր ճանաչելու պահանջի մատով ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ դատարանը կարճում է գործի վարույթը, եթե վեճը ենթակա չէ դատարանում քննության: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքում Վճռաբեկ դատարանը կարճում է գործի վարույթն ամբողջովին կամ դրա մի մասը:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է այն հարցին, որ սեփականության իրավունքի գրանցման վկայականը հանդիսանում է սեփականության իրավունքի գրանցման մասին տեղեկություններ պարունակող փաստաթուղթ, և այդ փաստաթղթի անվավեր ճանաչելը չի հանգեցնում իրավական հետևանքների, քանի որ ուժի մեջ է մնում վարչական ակտը՝ անշարժ գույքի գրանցման մատյանի գրանցումը (իրավական հիմնավորումը տես՝ Սիսիանի քաղաքապետարան ընդդեմ Շահեն Սարգսյան, երրորդ անձինք ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Սիսիանի ստորաբաժանում, Կորյուն Օհանյան, 26.10.2006 թվական, քաղաքացիական գործ թիվ 3-1920/ՎԳ (2002 թվականի օգոստոսի 26-ին կնքված պայմանագիրը լուծելու, Շահեն Սարգսյանի և Կորյուն Օհանյանի միջև 11.09.2002 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը, ինչպես նաև Կորյուն Օհանյանին տրված սեփականության իրավունքի վկայականն անվավեր ճանաչելու պահանջներով)):

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների համաձայն, Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

---

---

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.06.2008 թվականի որոշումը և այն փոփոխել. Թեհմինե Խաչատրյանի հայցը բավարարել մասնակիորեն. Ալվարդ Խաչատրյանին ճանաչել Քանաքեռավան գյուղի 11 փողոցի 21/4 բնակելի տան 1/4 մասի սեփականատեր և այդ մասով անվավեր ճանաչել Քանաքեռավանի շրջխորհրդի գործկոմի 31.01.1995 թվականի թիվ 1 որոշումը և Արմեն, Պարույր, Ալիսա Խաչատրյանների սեփականության իրավունքի պետական գրանցումը: Արմեն, Պարույր, Ալիսա Խաչատրյանների անվամբ տրված սեփականության իրավունքի վկայականը մասնակիորեն անվավեր ճանաչելու պահանջի մասով քաղաքացիական գործի վարույթը կարճել:

Արմեն Խաչատրյանի հակընդդեմ հայցը մերժել:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒՐՆԵՐ ԴԱՏԱՐԱՆ**

Վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի վճիռ  
Քաղաքացիական գործ թիվ 07-4149/2007թ.  
Նախագահող դատավոր՝ Տ.Սահակյան  
Դատավորներ՝ Կ.Հակոբյան  
Տ.Նազարյան

Քաղաքացիական գործ թիվ **3-321(ՎԳ)**  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Հ.ՍԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՍԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի մայիսի 23-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Սուրեն Սկրտումյանի վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.02.2008 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի Սուրեն Սկրտումյանի ընդդեմ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն)՝ աշխատանքային պայմանագրի մասը և ազատման հրամանը անվավեր ճանաչելու, աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդի գումարը բռնագանձելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ հայցվորը պահանջել է անվավեր ճանաչել Ընկերության հետ կնքված 04.08.2006 թվականի թիվ 147 աշխատանքային պայմանագրի 1.3 կետը և 02.08.2007 թվականի թիվ 802-Կ հրամանը, վերականգնել նախկին աշխատանքում և բռնագանձել հարկադիր պարապուրդի գումարը:

Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 29.10.2007 թվականի վճռով հայցը մերժվել է:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 06.02.2008 թվականի վճռով հայցը կրկին մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Սուրեն Սկրտումյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

---

---

*Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ աշխատանքային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 95-րդ հոդվածի 1-ին մասը, 94-րդ հոդվածի 1-ին կետը, «Եվրոպական սոցիալական խարտիայի» 24-րդ հոդվածի 1-ին կետը, որոնք պետք է կիրառել:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ ոչ ժամանակավոր (նշտական) բնույթի աշխատանքի կատարման պայմաններում ժամանակավոր աշխատանքային պայմանագրի կնքումն արգելվում է:

Այսինքն, վեճի առարկա աշխատանքային պայմանագիրը հակասում է օրենքին, վատթարացնում է աշխատողի դրությունը, հետևաբար, աշխատանքային պայմանագրի ժամկետ սահմանող կետն անվավեր է:

Վերոգրյալի հիման վրա վճարել բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 06.02.2008 թվականի վճիռը և գործն ուղարկել նոր քննության:

### **2.1 Վճարել բողոքի պատասխանում բերված փաստարկները.**

Սուրեն Սկրտումյանի աշխատանքային պայմանագիրը լուծվել է օրինական հիմքերով: Ընկերությունը գտել է, որ Սուրեն Սկրտումյանի կողմից կատարվող աշխատանքի բնույթը ժամկետային է, հետևաբար, կնքել է ժամկետային պայմանագիր: Ժամկետային պայմանագիրը կնքվել է Սուրեն Սկրտումյանի համաձայնությամբ:

### **3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. 04.08.2006 թվականին Ընկերության և Սուրեն Սկրտումյանի միջև կնքվել է թիվ 147 ժամկետային աշխատանքային պայմանագիրը, մինչև 04.11.2006 թվականը, որով Սուրեն Սկրտումյանը նշանակվել է աշխատանքի Ընկերության Գործառնական վարչության Հաճախորդների սպասարկման բաժնում՝ որպես գլխավոր մասնագետ:

2. Լրացուցիչ համաձայնագրերով վերոնշյալ պայմանագրի ժամկետը երկարաձգվել է մինչև 05.08.2007 թվականը:

3. Ընկերության՝ 02.08.2007 թվականի թիվ 802-Կ հրամանի հիման վրա Սուրեն Սկրտումյանը 06.08.2007 թվականից աշխատանքային պայմանագրի ժամկետը լրացած լինելու հիմքով ազատվել է աշխատանքից:

4. Թիվ 147 պայմանագրի 05.05.2007 թվականի հավելվածի համաձայն՝ վերոնշյալ պաշտոնում աշխատողի պաշտոնեական պարտականություններն են.

ա. վարկային հաշիվների բացումը, սպասարկումը.

բ. երաշխիքների ձևակերպումը.

գ. ՀՀ ԿԲ ուղարկվող ամենօրյա հաշվետվության կազմումը.

դ. իրավաբանական վարչության կողմից ուղարկվող հարցումների պատասխանումը.

ե. վարկերի ծանուցումների պատրաստումը և տրամադրումը վարկային բաժին.

զ. կատարված փոխանցումների առաջին հաստատումը.

է. ճանապարհային և բանկային չեկերի վաճառքի և հետգնման ձևակերպումը

### **4. Վճարել դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճարել բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճարել դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենսգրքի 94-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային պայմանագիրը կնքվում է՝

1. անորոշ ժամկետով, եթե աշխատանքային պայմանագրում դրա գործողության ժամկետը նշված չէ.

2. որոշակի ժամկետով, եթե աշխատանքային պայմանագրում դրա գործողության ժամկետը նշված է:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով անհրաժեշտ է պատասխանել հետևյալ իրավական հարցերին.

1) *արդյո՞ք կարող է կնքվել որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր՝ անկախ կատարվելիք աշխատանքի բնույթից կամ կատարման պայմաններից:*

2) *որո՞նք են որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր կնքելու համար նախատեսված պայմանների բացակայությամբ կնքված պայմանագրի իրավական հետևանքները:*

1) *Որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագրի կնքման օրինականության մասին:*

Օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության համաձայն՝ որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր է կնքվում, եթե աշխատանքային հարաբերությունները չեն կարող որոշվել անորոշ ժամկետով՝ հաշվի առնելով կատարվելիք աշխատանքի բնույթը կամ կատարման պայմանները, եթե Օրենսգրքով կամ օրենքով այլ բան նախատեսված չէ: Նույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ ընտրովի պաշտոններում աշխատողների հետ աշխատանքային պայմանագիրը կնքվում է ընտրված ժամանակահատվածով. աշխատանքային պայմանագիրը որոշակի ժամկետով կարող է կնքվել նաև, եթե աշխատողը գործատուին մատուցում է անձնական բնույթի ծառայություններ, աշխատանքը կատարում են տնաշխատները, կատարվում է համատեղությամբ աշխատանք, կատարվում են սեզոնային աշխատանքներ, կատարվում է ժամանակավոր (մինչև երկու ամիս ժամկետով) աշխատանք:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիրը հանդիսանում է **բացառություն ընդհանուր կանոնից**, այսինքն, **որպես կանոն, աշխատանքային հարաբերությունները պետք է կարգավորվեն անորոշ ժամկետով պայմանագրով և միայն բացառիկ դեպքերում է թույլատրելի որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագրի կնքումը**: Այսինքն, որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր կարող է կնքվել միայն այն դեպքերում, երբ կատարվելիք աշխատանքը կամ կատարման պայմանները կրում է ոչ մշտական բնույթ կամ առկա են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված նախապայմանները:

Սինչդեռ, Վերաքննիչ դատարանը, առանց անդրադառնալու և գնահատման առարկա դարձնելու սույն քաղաքացիական գործով առկա աշխատանքային իրավահարաբերության բնույթը և նման իրավահարաբերության առկայության պայմաններում՝ ժամկետային աշխատանքային պայմանագրի կնքման օրինաչափության հարցը, հայցի մերժման հիմքում դրել է այն հանգամանքը, որ Սուրեն Սկրտումյանի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածի պահանջներին համապատասխան (որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրի լուծումը նրա գործողության ժամկետը լրանալու պատճառով)՝ գնահատելով հայցվորին աշխատանքից ազատելու գործընթացի իրավաչափության հարցը:

Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը գնահատման առարկա չի դարձրել հայցվորի կողմից ներկայացված ապացույցը հայցվորի և Ընկերության միջև 04.08.2006 թվականին կնքված թիվ 147 պայմանագրի 05.05.2007 թվականի հավելվածով սահմանված՝ աշխատողի պաշտոնեական պարտականությունների ցանկը, որով հիմնավորվում է, որ հայցվորի աշխատանքն կրել է մշտական բնույթ:

2) *Որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր կնքելու համար նախատեսված պայմանների բացակայությամբ կնքված պայմանագրի իրավական հետևանքների մասին:*

«Եվրոպական սոցիալական խարտիայի» 24-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ աշխատանքից ազատվելու դեպքերում աշխատողների պաշտպանվածության իրավունքի արդյունավետ կիրառումն ապահովելու նպատակով Կողմերը պարտավորվում են ճանաչել՝ աշխատանքից միայն այնպիսի հիմնավոր պատճառներով ազատվելու աշխատողի

---

---

իրավունքը, որոնք կապված են նրա ընդունակությունների կամ վարքի հետ կամ հիմնված են ձեռնարկության, հաստատության կամ ծառայության գործնական պահանջների վրա:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային պայմանագիրը լուծվում է՝ 1) կողմերի համաձայնությամբ, 2) պայմանագրի գործողության ժամկետը լրանալու դեպքում, 3) աշխատողի նախաձեռնությամբ, 4) գործատուի նախաձեռնությամբ, 5) նույն օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում:

Սույն քաղաքացիական գործի փաստերի համաձայն՝ Սուրեն Սկրտունյանի և Ընկերության միջև կնքված աշխատանքային պայմանագիրը լուծվել է գործատուի նախաձեռնությամբ՝ հայցվորի ընդունակության կամ վարքի, ինչպես նաև ձեռնարկության, հաստատության կամ ծառայության գործնական պահանջների հետ առնչություն չունեցող հիմքով:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության համաձայն՝ կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերը չեն կարող բովանդակել այնպիսի պայմաններ, որոնք աշխատանքային օրենսդրությամբ, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված աշխատանքային պայմանների համեմատ վատթարացնում են աշխատողի դրությունը: Եթե կոլեկտիվ կամ աշխատանքային պայմանագրերով սահմանված պայմանները հակասում են նույն օրենսգրքին, օրենքներին, այլ նորմատիվ իրավական ակտերին, ապա այդ պայմաններն իրավաբանական ուժ չունեն:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ հիմքերի բացակայության պայմաններում կնքված պայմանագիրը առաջացնում է գործատուի կողմից աշխատողի աշխատանքային իրավունքների և երաշխիքների սահմանափակում, հետևաբար, նման պայմանագիրը պետք է համարվի անորոշ ժամկետով կնքված և դրա նկատմամբ պետք է կիրառվեն անորոշ ժամկետով պայմանագրի նկատմամբ կիրառելի նորմերը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարություն օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով վերանայվող դատական ակտը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.02.2008 թվականի վճիռը և գործն ուղարկել Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒՐՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի վճիռ  
Քաղաքացիական գործ թիվ 07-3531  
Նախագահող դատավոր՝ Կ.Հակոբյան  
Դատավորներ՝ Լ.Գրիգորյան  
Լ.Սոսյան

Քաղաքացիական գործ թիվ **3-357(ՎԳ)**  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ վճռաբեկ  
դատարան)

*նախագահությամբ* Հ.ՍԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի մայիսի 23-ին,

դռնբաց դատական նիստում, քննելով Մանյա Գալուստյանի վճռաբեկ բողոքը Վե-  
րաքննիչ քաղաքացիական դատարանի 12.12.2007 թվականի վճռի դեմ՝ ըստ Մանյա Գա-  
լուստյանի հայցի ընդդեմ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ՝  
Ընկերություն)՝ կարգապահական տույժն անվավեր ճանաչելու, աշխատանքում վերա-  
կանգնելու, հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի և անաշխատունա-  
կության ողջ ժամանակաշրջանի համար վճարելու պահանջների մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Մանյա Գալուստյանը պահանջել է անվավեր ճանաչել Ընկե-  
րության գլխավոր տնօրենի 21.05.2007 թվականի թիվ 76/Կ կետ 4 և 30.05.2007 թվականի  
թիվ 82/Կ հրամանները, վերականգնել նախկին աշխատանքում որպես իրավապայմա-  
նագրային բաժնի գլխավոր իրավախորհրդատու՝ վճարելով հարկադիր պարապուրդի  
համար միջին աշխատավարձը, մինչև աշխատանքում փաստացի վերականգնելու օրը:

Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի 29.08.2007 թվականի վճռով հայցը  
բավարարվել է:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)  
12.12.2007 թվականի վճռով հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Մանյա Գալուստյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ընկերությունը:

---

---

## **2. Վճարեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճարեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) *Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասը, չի կիրառել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 117-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել գործում առկա «Պրոմեթեյ բժշկական կենտրոն» ՍՊԸ-ի կողմից տրված տեղեկանքը, 22.05.2007 թվականին Ընկերությանը ներկայացված Մանյա Գալուստյանի դիմումը, ինչը հանգեցրել է գործի սխալ լուծման:

Այսպես, 22.05.2007 թվականին հերթական արձակուրդ տրամադրելու խնդրանքով Մանյա Գալուստյանը դիմել է Ընկերությանը և դիմումին կից ներկայացրել է «Պրոմեթեյ բժշկական կենտրոն» ՍՊԸ-ի կողմից տրված տեղեկանքը, որի համաձայն՝ Մանյա Գալուստյանի մոտ առկա է եղել 23 շաբաթական հոլիդայն: Մինչդեռ, գործատուն, հաշվի չառնելով նշված հանգամանքը, 30.05.2007 թվականին Մանյա Գալուստյանի հետ լուծել է աշխատանքային պայմանագիրը:

2) *Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 121-րդ հոդվածի 3-րդ մասը, 221-րդ, 224-րդ և 226-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Մանյա Գալուստյանին կարգահական պատասխանատվության ենթարկելիս և նրա հետ աշխատանքային պայմանագիրը լուծելիս, գործատուն չի պահպանել կարգապահական պատասխանատվության կիրառման կարգը, այն է՝ մինչև 21.05.2007 թվականի թիվ 76/Կ հրամանով կարգապահական տույժի կիրառումը հայցվորից չի պահանջել խախտման մասին գրավոր բացատրություն:

3) *Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկով.*

Վերաքննիչ դատարանը փաստել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված մեկամսյա ժամկետի խախտում, մինչդեռ, նման խախտում առկա չէ:

Մասնավորապես, աշխատանքային պայմանագիրը լուծելու վերաբերյալ Ընկերության հրամանը հայցվորն ստացել է 06.06.2007 թվականին և հայցադիմում է ներկայացրել 03.07.2007 թվականին:

4) *Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածը:*

Վերաքննիչ դատարանը, 26.11.2007 թվականին նշանակված քաղաքացիական գործի քննությունը հետաձգելով, պատշաճ ձևով չի ծանուցել հայցվորին դատական նիստի ժամանակի և վայրի մասին՝ դրանով իսկ խախտելով Մանյա Գալուստյանի դատական պաշտպանության իրավունքը, իրավահավասարության և մրցակցության սկզբունքները:

5) *Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 3-րդ մասը և 213-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետերը, որոնք պետք է կիրառեր:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ բողոքը բերվել է նման լիազորություններ չունեցող անձի կողմից և ըստ էության անձը, որն ստորագրել է վերաքննիչ բողոքը գլխավոր տնօրենի փոխարեն, չունի դատական ակտը բողոքարկելու իրավունք, քանի որ գործի նյութերում բացակայում է բողոք բերողի լիազորությունները հավաստող որևէ ասպացույց:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 12.12.2007 թվականի վճիռը և օրինական ուժ տալ Արմավիրի մարզի առաջին ատյանի 29.08.2007 թվականի վճիռն:

**2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները.**

«Պրոմեթեյ բժշկական կենտրոն» ՍՊԸ-ի կողմից տրված տեղեկանքն անօրինական է, իրավական հետևանքներ չի կարող առաջացնել, քանի որ այն հակասում է ՀՀ առողջապահության նախարարի 03.08.2006 թվականի թիվ 879-Ն և ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնդրամի 08.08.2006 թվականի թիվ 116-Ն համատեղ հրամանի պահանջներին: Ինչ վերաբերվում է հայցվորի ֆիզիոլոգիական վիճակին, ապա այդ վիճակը հիմնավորող որևէ փաստաթուղթ նրա կողմից չի ներկայացվել և Ընկերությունը չի խախտել օրենքը:

27.02.2006 թվականի «ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը վերաբերվում է այն հղի կնոջը, որը բարեխղճորեն կատարում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի պահանջները և իր վրա դրված պարտականությունները: Հայցվորն աշխատանքային կարգապահությունը կուպիտ կերպով խախտել է դեռևս 2006 թվականի նոյեմբեր ամսից, ողջ հղիության ընթացքում աշխատանքի չի ներկայացել, բուժման մեջ գտնվելու և հղիությունը պահպանելու վերաբերյալ անաշխատունակության թերթիկ չի ներկայացրել:

Բացի այդ, Մանյա Գալուստյանը դատական պաշտպանության իրավունքից օգտվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածով նախատեսված մեկամսյա ժամկետի ավարտից հետո:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Մանյա Գալուստյանը 22.05.2007 թվականին դիմել է Ընկերությանը՝ իրեն հերքական արձակուրդ տրամադրելու մասին: Դիմումին կցվել է «Պրոմեթեյ բժշկական կենտրոն» ՍՊԸ-ի 17.05.2007 թվականի թիվ 23 տեղեկանքը, որի համաձայն՝ Մանյա Գալուստյանի մոտ առկա է 23 շաբաթական հղիություն:

2. Ընկերության գլխավոր տնօրեն Գ. Մարկոսյանի 30.05.2007 թվականի թիվ 82/Կ հրամանի համաձայն՝ Մանյա Գալուստյանի և Ընկերության միջև կնքված աշխատանքային պայմանագիրը լուծվել է:

3. Ընկերության գլխավոր տնօրեն Գ. Մարկոսյանի 21.05.2007 թվականի թիվ 76/Կ հրամանի համաձայն՝ Մանյա Գալուստյանին աշխատանքային կարգապահությունը խախտելու համար հայտարարվել է խիստ նկատողություն:

4. Վերաքննիչ դատարանը Մանյա Գալուստյանին պատշաճ ձևով տեղեկացրել է 26.11.2007 թվականի դատական նիստի ժամանակի և վայրի մասին:

5. Մանյա Գալուստյանը 26.11.2007 թվականին ներկայացրել է միջնորդություն գործն իր բացակայությամբ քննելու մասին:

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.**

Քննելով վճռաբեկ բողոքը վերը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ

1) *Վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 117-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային պայմանագիրը չի կարող լուծվել հղի կնոջ հետ հղիության ամբողջ ժամանակահատվածում (անհրաժեշտության դեպքում՝ բժշկական եզրակացության առկայության դեպքում), ծննդաբերության արձակուրդի և դրան հաջորդող ամսվա ընթացքում, ինչպես նաև մինչև մեկ տարեկան երեխա խնամող աշխատողի հետ:

---

---

Սույն քաղաքացիական գործի քննության ժամանակ գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 218-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ վճռի մեջ պետք է նշվեն վերաքննիչ դատարանի կողմից պարզված գործի հանգամանքները, ապացույցները, որոնց վրա հիմնված են վերաքննիչ դատարանի հետևություններն այդ հանգամանքների մասին, և փաստարկները, որոնցով վերաքննիչ դատարանը մերժում է այս կամ այն ապացույցները, ինչպես նաև այն օրենքները, ՀՀ միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով դեկլարվել է վերաքննիչ դատարանը վճիռ կայացնելիս:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ վճռի թե՛ փաստական և թե՛ իրավական հիմնավորումները:

Վճռի իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ նյութական իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանն եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Վճռում ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Վճռի իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա վճռի իրավակիրառ գործառույթը, ընդգծում դատական գործունեության և դատական վճռի օրինականությունը (տե՛ս ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն ընդդեմ «Քնար-88» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, քաղ. գործ թիվ 3-2504/ՏԳ(ՏԳ) (գումար բռնագանձելու պահանջով)):

Սույն քաղաքացիական գործի քննության ժամանակ գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 218-րդ հոդվածից բխում է, որ դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վճիռ կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն մնան հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին (տե՛ս Անժելա Ղազարյան, Արփիկ և Արմինե Գասպարյաններ ընդդեմ Շուշանիկ Սարգսյանի, Ոսկեհատ, Նունե, Հրանուշ Գասպարյանների՝ ժառանգական գույքը ժառանգների միջև բաժանելու պահանջի մասին, քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.12.2007 թվականի որոշումը, թիվ 3-1843(ՎԳ)): Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից գործի քննության ընթացքում պետք է ուսումնասիրվեին գործում առկա բոլոր ապացույցները, վերլուծության ենթարկվեին կողմերի ներկայացրած և դատաքննությամբ հետազոտված ապացույցները, դրանցով համապատասխան հանգամանքները հիմնավորված կամ անհիմն համարելու համար:

Մինչդեռ, սույն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանը, հայցապահանջը մերժելիս գնահատման առարկա չի դարձրել «Պրոմեթեյ բժշկական կենտրոն» ՍՊԸ-ի 17.05.2007 թվականի թիվ 23 տեղեկանքը, որով հիմնավորվում է, որ աշխատանքային պայմանագիրը լուծվել է Մանյա Գալուստյանի հղիության ժամանակաշրջանում, և չի նշել այդ ապացույցի մերժման պատճառները:

2) *Վճռաբեկ բողոքն երկրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ՝*

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 121-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն նույն հոդվածին համապատասխան՝ աշխատանքային պայմանագիրը լուծելիս գործատուն պարտավոր է պահպանել կարգապահական պատասխանատվության կիրառման կանոնները:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 226-րդ հոդվածի համաձայն՝ մինչև կարգապահական տույժի կիրառումը գործատուն պետք է աշխատողից պահանջի խախտման մասին գրավոր բացատրություն: Եթե գործատուի սահմանած ողջամիտ ժամկետում աշխատողն

առանց հարգելի պատճառների չի ներկայացնում բացատրություն, ապա կարգապահական տույժը կարող է կիրառվել առանց բացատրության:

Նշված հոդվածից հետևում է, որ գործատուն աշխատանքային կարգապահության խախտման մասին գրավոր բացատրությունը պետք է աշխատողից պահանջի ***մինչև կարգապահական տույժի կիրառումը***՝ սահմանելով այդ բացատրությունը տալու համար ողջամիտ ժամկետ:

Մինչդեռ, սույն քաղաքացիական գործով Ընկերության գլխավոր տնօրեն Գ. Մարկոսյանի 21.05.2007 թվականի թիվ 76/Կ հրամանի 4-րդ կետի համաձայն՝ Մանյա Գալուստյանին աշխատանքային կարգապահությունը խախտելու համար հայտարարվել է խիստ նկատողություն և պահանջվել բացատրագիր աշխատողից:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ գործատուն Մանյա Գալուստյանից աշխատանքային կարգապահության խախտման մասին գրավոր բացատրությունը պահանջել է 21.05.2007 թվականի թիվ 76/Կ հրամանով՝ կարգապահական տույժ կիրառելիս, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ընկերության կողմից չի պահպանվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 121-րդ հոդվածի 3-րդ մասի և 226-րդ հոդվածի ուժով կարգապահական պատասխանատվության կիրառման կանոնները:

***3) Վճռաբեկ բողոքն երրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ՝***

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքի պայմանների փոփոխման, գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը դադարեցնելու կամ աշխատանքային պայմանագիրը լուծելու հետ համաձայն չլինելու դեպքում աշխատողը համապատասխան հրամանն ստանալու օրվանից հետո՝ մեկ ամսվա ընթացքում իրավունք ունի դիմելու դատարան:

Սույն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանը, հաստատված համարելով այն հանգամանքը, որ հայցվորը բաց է թողել մեկամսյա ժամկետում դատարան դիմելու իրավունքը չի հիմնավորել իր այդ պնդումը:

Ստանավորապես, դատարանի կողմից պատշաճ գնահատման առարկա չի դարձվել և չի որոշվել այդ ժամկետի հաշվարկման սկիզբը՝ աշխատանքային պայմանագիրը լուծելու վերաբերյալ Ընկերության հրամանը Մանյա Գալուստյանի կողմից ստանալու օրը:

***4) Վճռաբեկ բողոքը չորրորդ հիմքով հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ.***

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող անձինք դատական ծանուցագրերով տեղեկացվում են դատական նիստի կամ առանձին դատավարական գործողություններ կատարելու ժամանակի և վայրի մասին, իսկ 2-րդ մասի համաձայն՝ ծանուցագիրն ուղարկվում է պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ կամ հաղորդագրության ձևակերպումն ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ կամ հանձնվում է ստացականով:

Սույն քաղաքացիական գործով 26.11.2007 թվականի դատական նիստի մասին Մանյա Գալուստյանին պատշաճ ձևով ծանուցելու փաստը հաստատվում է քննվող քաղաքացիական գործում առկա ծանուցագրով, ինչպես նաև գործն իր բացակայությամբ քննելու մասին Մանյա Գալուստյանի կողմից ներկայացված միջնորդությանմբ:

Հիմք ընդունելով վերոնշյալը, Վճռաբեկ դատարանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի խախտման վերաբերյալ բողոք բերած անձի փաստարկը գտնում է անհիմն:

***5) Վճռաբեկ բողոքը հինգերորդ հիմքով հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ.***

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ բողոքն ստորագրում է բողոք բերող անձը կամ նրա ներկայացուցիչը: Ներկայացուցչի լիազորությունները հավաստվում են սույն օրենսգրքով սահմանված կարգով:

Սույն քաղաքացիական գործով վերաքննիչ բողոքը բերվել է Ընկերության տնօրենի կողմից, իսկ վերջինիս մոտ նման լիազորության առկայությունը չի վիճարկվել:

---

---

Հետևաբար, անհիմն է վճռաբեկ բողոքի հիմքն այն մասին, որ վերաքննիչ բողոքը բերվել է նման լիազորություններ չունեցող անձի կողմից:

Վճռաբեկ բողոքի պատասխանում ներկայացված փաստարկները մասնակիորեն հերքվում են վերոնշյալ պատճառաբանություններով:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի 1-ին, 2-րդ և 3-րդ հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար ՀՀ քաղաքացիական դատավարություն օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով՝ Վերաքննիչ դատարանի վճիռը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործն ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.12.2007 թվականի վճիռը և օրինական ուժ տալ Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի 29.08.2007 թվականի վճիռն:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՈՒՐՆԵՐ ԴԱՏԱՐԱՆ**

Վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի վճիռ  
Քաղաքացիական գործ թիվ 4522/2008թ.  
Նախագահող դատավոր՝ Վ.Ավանեսյան  
Դատավորներ՝ Ա.Խառատյան  
Կ.Չիլինգարյան

Քաղաքացիական գործ թիվ **3-456(ՎԴ)**  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի հուլիսի 25-ին

քննարկելով «Ղ-Տեյեկոմ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 01.02.2008 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի Սուսաննա Կարապետյանի ընդդեմ Ընկերության՝ աշխատանքում վերականգնելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործով կայացված դատական ակտի էությունը.**

Դիմելով դատարան՝ Սուսաննա Կարապետյանը պահանջել է վերականգնել իրեն նախկին աշխատանքում՝ վճարելով հարկադիր պարապուրդի համար:

Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ Դատարան) 27.11.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 01.02.2008 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) Վերաքննիչ դատարանն խախտել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 93-րդ հոդվածի առաջին մասի, 113-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետի պահանջները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Պայմանագրի լուծմամբ հայցվորի աշխատանքային կամ որևէ այլ իրավունք չի խախտվել, քանի որ վերջինս տեղեկացված է եղել իր համար սահմանված փորձաշրջանի և փորձաշրջանի ընթացքում պայմանագրի լուծման հնարավորության մասին:

---

---

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետն ուղղակիորեն ամրագրում է փորձաշրջանի արդյունքներով աշխատանքային պայմանագիրը լուծելու գործատուի իրավունքը, որի իրականացումը պայմանավորված է մեկ հանգամանքով՝ փորձաշրջանի անբավարար արդյունքով:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 93-րդ հոդվածի 1-ին մասը չի սահմանում փորձաշրջանի ընթացիկ արդյունքների որոշման որևէ այլ պայման:

2) *Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանի վճռով որոշվել է հայցվորին վերականգնել նախկին աշխատանքում՝ գնահատման առարկա չդարձնելով այն հանգամանքը, որ վճռի կայացման օրվա դրությամբ պատասխանողի մոտ բացակայել է հայցվորին նախկին աշխատանքում վերականգնելու հնարավորությունը՝ այդ պաշտոնում այլ աշխատողի ընդունած լինելու, հայցվորի կողմից դատական վեճի ընթացքում թույլ տրված հայտարարությունների հետևանքով կոլեկտիվի այլ անդամների հետ ստեղծված լարված հարաբերությունների պատճառով:

Վերոգրյալի հիման վրա՝ վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 01.02.2008 թվականի վճիռը և գործն ուղարկել նոր քննության:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. 09.07.2007 թվականին Սուսաննա Կարապետյանի և Ընկերության միջև կնքվել է աշխատանքային պայմանագիր, որով սահմանվել է 3 ամիս փորձաշրջան:

2. Ընկերության բաժանորդի սպասարկման բաժնի ավագ համակարգող Տիգրան Սիմոնյանի 30.08.2007 թվականի գրության համաձայն՝ Սուսաննա Կարապետյանը չունի հաճախորդների հետ աշխատելու որևէ ձիրք և նրա վարքը չի համապատասխանել կազմակերպության չափանիշներին ու տվյալ աշխատանքի պահանջներին:

3. 11.09.2007 թվականի ծանուցագրով Սուսաննա Կարապետյանը տեղեկացվել է այն մասին, որ փորձաշրջանի անբավարար արդյունքի պատճառով Ընկերությունը վերջինիս հետ լուծելու է աշխատանքային պայմանագիրը:

4. 11.09.2007 թվականին Սուսաննա Կարապետյանն ազատվել է աշխատանքից:

### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

1) բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 93-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ եթե գործատուն գտնում է, որ նախատեսված աշխատանքում աշխատողի համար սահմանված փորձաշրջանի ընթացիկ արդյունքներով աշխատողը չի համապատասխանում առաջադրված պահանջներին, ապա կարող է մինչև փորձաշրջանի ժամկետը լրանալը աշխատողին ազատել աշխատանքից **այդ մասին 3 օր առաջ գրավոր ձևով ծանուցելով նրան:**

Նույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ի մասի 5-րդ կետի համաձայն՝ գործատուն իրավունք ունի լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը՝ փորձաշրջանի անբավարար արդյունքի պատճառով:

Վերոնշյալ հոդվածներից հետևում է, որ աշխատողին առաջադրված պահանջներին համապատասխանության հարցը որոշվում է փորձաշրջանի ընթացիկ արդյունքներով: Օրենքը չի սահմանում փորձաշրջանի ընթացիկ արդյունքների ամփոփման որևէ կարգ,

պայման կամ չափանիշ: Այսինքն՝ յուրաքանչյուր գործատու ազատ է սահմանելու այն անհրաժեշտ գիտելիքները, ունակությունները և վարքը, որն աշխատողը պարտավոր է ունենալ համապատասխան պաշտոնը զբաղեցնելու համար:

Սինչդեռ, սույն քաղաքացիական գործով Դատարանը հայցի բավարարման հիմքում դրել է այն հանգամանքը, որ աշխատանքային պայմանագիրը լուծվել է առանց փորձաշրջանի ընթացիկ արդյունքների ամփոփման՝ գնահատման առարկա չդարձնելով այն հանգամանքը, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքով փորձաշրջանի ընթացիկ արդյունքների ամփոփման հատուկ կարգ կամ չափանիշ նախատեսված չէ:

Ընկերության և Սուսաննա Կարապետյանի միջև կնքված աշխատանքային պայմանագրի 6.4 կետի համաձայն՝ փորձաշրջանի ընթացքում յուրաքանչյուր կողմ իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին առնվազն երեք օր առաջ գրավոր ծանուցելով մյուս կողմին: Նույն պայմանագրի 1.4 կետի համաձայն՝ աշխատողը պարտավոր է լինել բարեհամբույր և քաղաքավարի իր աշխատակիցների և գործատուի հաճախորդների նկատմամբ:

Հիմք ընդունելով իր կողմից սահմանված վերոգրյալ չափանիշները, Ընկերությունը Սուսաննա Կարապետյանի փորձաքննության արդյունքը գնահատել է անբավարար: Մասնավորապես, Սուսաննա Կարապետյան հետ աշխատանքային պայմանագիրը լուծելու համար հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ նա չի ունեցել հաճախորդների հետ աշխատելու որևէ ձիրք և նրա վարքը չի համապատասխանել կազմակերպության չափանիշներին ու տվյալ աշխատանքի պահանջներին, որպիսի փաստը արձանագրվել է Ընկերության բաժանորդի սպասարկման բաժնի ավագ համակարգող Տիգրան Սիմոնյանի կողմից:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերության կողմից Սուսաննա Կարապետյանի աշխատանքային պայմանագիրը լուծվել է օրենքով սահմանված կարգին համապատասխան:

2) բողոքի երկրորդ հիմքը Վճռաբեկ դատարանի կողմից չի քննարկվում, քանի որ Դատարանում սույն քաղաքացիական գործի քննության ընթացքում նշված հիմքը քննության առարկա չի դարձվել:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի առաջին հիմքի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի համաձայն Վերաքննիչ դատարանի վճիռը բեկանելու համար:

Սիստեմային, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

---

---

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-240<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 01.02.2008 թվականի վճիռը և այն փոփոխել. Սուսաննա Կարապետյանի հայցը մերժել:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒՐՆԵՐ ԴԱՏԱՐԱՆ**

Վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում  
Քաղաքացիական գործ թիվ 08-1596  
Նախագահող դատավոր՝ Ս. Միքայելյան  
Դատավորներ՝ Ն. Տավարացյան  
Գ. Խաչատրյան

Քաղաքացիական գործ թիվ **3-678(ՎԳ)**  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Ա. ԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ. ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի դեկտեմբերի 26-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Արդշինիմվեստբանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.05.2008 թվականի որոշման դեմ՝ ըստ Ընկերության հայցի ընդդեմ Սպարտակ, Էդգար, Էրիկ, Նավասարդ Սկրտչյանների, Նաիրա Արուստամյանի՝ վարկային պայմանագրով պարտքը բռնագանձելու, բռնագանձումը գրավի առարկայի և այլ գույքի վրա տարածելու, վարկային պայմանագրով նախատեսված տոկոսները հաշվեգրելու պահանջների մասին,

**Պ Ա Ր Չ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է Սպարտակ, Էդգար, Էրիկ, Նավասարդ Սկրտչյաններից, Նաիրա Արուստամյանից համապարտությամբ բռնագանձել 3.135.042,65 ՀՀ դրամ և 62.700,90 ՀՀ դրամ վճարված պետական տուրքը, գումարի բռնագանձումը տարածել գրավի առարկայի՝ Երևանի Վ.Շենգավիթ 10 փողոցի 19ա շենքի թիվ 17 բնակարանի, ինչպես նաև պատասխանողներին սեփականության իրավունքով պատկանող այլ գույքի վրա, 2.801.000 ՀՀ դրամ հիմնական վարկի գումարին հաշվեգրել տոկոսներ 30.11.2007 թվականից սկսած մինչև պարտավորության փաստացի կատարման օրը, ներառյալ թիվ 01 վարկային պայմանագրի 18-րդ կետով նախատեսված տարեկան 25,2 տոկոս տոկոսադրույքով:

Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 18.01.2008 թվականի վճռով հայցը մերժվել է:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 04.05.2008 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, Շենգավիթ

---

---

համայնքի ընդհանուր իրավասության դատարանի 18.01.2008 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:  
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

### **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածը, խախտել է ՀՀ Սահմանադրության 18-րդ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն իրավացիորեն հաստատված է համարել Սպարտակ Սկրտչյանի կողմից վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտման փաստը և գտել է, որ Ընկերությունը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ - հոդվածի հիման վրա, իրավունք ունի առանց դատարան դիմելու բռնազանձում տարածել գրավի առարկայի վրա և իրացնել այն: Նշված հոդվածում օգտագործվող «իրավունք ունի» արտահայտության Վերաքննիչ դատարանի կողմից տրված մեկնաբանությունը վկայում է, որ ըստ դատարանի այն դեպքում, երբ սահմանված է նման իրավունք, գրավառուն պարտավոր է օգտվել այդ իրավունքից, այսինքն՝ Վերաքննիչ դատարանն այդ իրավունքը մեկնաբանել է որպես այդ իրավունքից օգտվելու պարտականություն:

Մինչդեռ պայմանագրով Ընկերությանը տրված այդ իրավունքը երբեք չի կարող մեկնաբանվել որպես դատական կարգով պաշտպանության սահմանափակում, քանի որ իրավունքը վարքագծի կանոնը կիրառելու հնարավորությունն է և ոչ թե պարտականությունը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 04.05.2008 թվականի որոշումը և հայցն ամբողջությամբ բավարարել:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 01.02.2007 թվականին Ընկերության և անհատ ձեռնարկատեր Սպարտակ Սկրտչյանի միջև կնքվել է թիվ 01 վարկային պայմանագիրը:

2) 01.02.2007 թվականին Ընկերության և Սպարտակ, Էդգար, Էրիկ, Նավասարդ Սկրտչյանների, Նաիրա Արուստամյանի միջև կնքվել է թիվ 01 անշարժ գույքի գրավի (հիփոթեքի) պայմանագիրը, որով վերջիններս գրավ են դրել Երևանի Վ.Շենգավիթ 10 փողոցի 19ա շենքի 17-րդ բնակարանը՝ 01.02.2007 թվականի թիվ 01 վարկային պայմանագրով Սպարտակ Սկրտչյանի ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովելու համար:

Պայմանագրի 8.3 կետի համաձայն՝ գրավառուն իրավունք ունի պարտապանի կողմից վարկային պարտավորության ցանկացած խախտման դեպքում պայմանագրով նախատեսված կարգով առանց դատարան դիմելու բռնազանձում տարածել և իրացնել գրավի առարկան, եթե պարտապանը և/կամ գրավատուն վարկային պարտավորությունը վաղաժամկետ չկատարեն:

Գրավի պայմանագրից ծագած իրավունքները ենթարկվել են պետական գրանցման:

3) Սպարտակ Սկրտչյանը խախտել է 01.02.2007 թվականի վարկային պայմանագրից բխող պարտավորությունները:

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի համաձայն՝ գրավառուն իր պահանջի բավարարման նպատակով իրավունք ունի առանց դատարան դիմելու գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու և իրացնելու այն, այդ թվում՝ գրավ դրված գույքը հիմնական պարտավորության համապատասխան չափի դիմաց գրավառուին կամ գրավառուի նշած երրորդ անձին ի սեփականություն հանձնելու, եթե դա նախատեսված է գրավի պայմանագրով:

Սույն գործով կողմերի միջև կնքված գրավի պայմանագրի 8.3 կետի համաձայն՝ գրավառուն իրավունք ունի պարտապանի կողմից վարկային պարտավորության ցանկացած խախտման դեպքում պայմանագրով նախատեսված կարգով առանց դատարան դիմելու բռնագանձում տարածել և իրացնել գրավի առարկան, եթե պարտապանը և/կամ գրավատուն վարկային պարտավորությունը վաղաժամկետ չկատարեն:

Դատարանի կողմից հայցի մերժման հիմքում դրվել է այն հանգամանքը, որ Ընկերությունն իրավունք ունի առանց դատարան դիմելու բռնագանձում տարածել գրավի առարկայի վրա և իրացնել այն:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցը վերոնշյալ հիմքով մերժելով, Դատարանը խախտել է անձի՝ արդար դատաքննության իրավունքի տարր հանդիսացող՝ դատարանի մատչելիության իրավունքը, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ շահագրգիռ անձն իրավունք ունի սույն օրենսգրքով սահմանված կարգով դիմել դատարան՝ ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի առաջին մասը յուրաքանչյուր անձի համար սահմանում է արդար դատաքննության իրավունք, որի բաղկացուցիչ մասն է հանդիսանում անձի դատական պաշտպանության իրավունքը:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի առաջին մասը յուրաքանչյուր անձի համար երաշխավորում է իր քաղաքացիական իրավունքներին և պարտականություններին առնչվող հայցով դատարան դիմելու իրավունք (Տե՛ս Կրեուզն ընդդեմ Լեհաստանի գործով Եվրոպական դատարանի 19.06.2001 թվականի վճիռը, կետ 52):

Քաղաքացիական հայցով դատարան դիմելու իրավունքն իրենից ներկայացնում է դատական պաշտպանության իրավունքի բաղկացուցիչ մասը (Տե՛ս Աքսոյն ընդդեմ Թուրքիայի գործով Եվրոպական դատարանի 18.12.1996 թվականի վճիռը, կետ 92, «Սուրբ Եկեղեցիներն» ընդդեմ Հունաստանի գործով Եվրոպական դատարանի 09.12.1994 թվականի վճիռը, կետ 80):

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի առաջին մասը յուրաքանչյուրի համար ապահովում է իր քաղաքացիական իրավունքներին և պարտականություններին վերաբերող **ցանկացած վեճը** դատարանին ներկայացնելու իրավունք, (Տե՛ս Գոլդերն ընդդեմ Մեծ Բրիտանիայի գործով Եվրոպական դատարանի 21.02.1975 թվականի վճիռը, կետեր 34-36):

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից խախտվել է անձի՝ ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ և Կոնվենցիայի 6-րդ հոդվածներով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի տարր հանդիսացող դատարանի մատչելիության իրավունքը:

---

---

Ինչ վերաբերում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածը սխալ մեկնաբանելու մասին բողոքի փաստարկներին, ապա Վճռաբեկ դատարանը դրանք հիմնավոր է համարում հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք իրենց պատկանող քաղաքացիական իրավունքները՝ ներառյալ **դրանց պաշտպանության իրավունքը, իրականացնում են իրենց հայեցողությամբ:**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 13-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված գործերի ենթակայությանը համապատասխան, իրականացնում է դատարանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի համաձայն՝ գրավառուն իր պահանջի բավարարման նպատակով իրավունք ունի առանց դատարան դիմելու գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու և իրացնելու այն, այդ թվում՝ գրավ դրված գույքը հիմնական պարտավորության համապատասխան չափի դիմաց գրավատուին կամ գրավառուի նշած երրորդ անձին ի սեփականություն հանձնելու, եթե դա նախատեսված է գրավի պայմանագրով:

Վերոնշյալ հոդվածներից հետևում է, որ նույնիսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածով Ընկերությանն իր իրավունքների պաշտպանության լրացուցիչ եղանակ ընձեռելու պայմաններում վերջինս իր հայեցողությամբ է իրականացնում իր իրավունքների պաշտպանությունը: Ուստի նյութական իրավունքի որևէ նորմ (այդ թվում՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածը) չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ, իրավական այլ ակտերով և միջազգային պայմանագրերով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը սահմանափակող դրույթ:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի համաձայն, Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.05.2008 թվականի որոշումը և գործն ուղարկել Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒՐՆԵՐ ԴԱՏԱՐԱՆ**

Վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի վճիռ  
Քաղաքացիական գործ թիվ 07-4007  
Նախագահող դատավոր՝ Տ.Սահակյան  
Դատավորներ՝ Կ.Հակոբյան  
Տ.Նազարյան

Քաղաքացիական գործ թիվ **3-444(ՎԳ)**  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Հ.ՍԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՍԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի հունիսի 20-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Էդուարդ Սարգսյանի վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.01.2008 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի Ջոն Սարգսյանի ընդդեմ Էդուարդ Սարգսյանի և Կարինե Սարգսյանի՝ ժառանգության ընդունման բաց թողնված ժամկետը հարգելի համարելու և ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջների մասին և ըստ հայցի Կարինե Սարգսյանի ընդդեմ Էդուարդ Սարգսյանի՝ սեփականության իրավունքի վկայականն անվավեր ճանաչելու և ընդհանուր բաժնային սեփականության մեջ բաժինը որոշելու պահանջների մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Ջոն Սարգսյանը պահանջել է ժառանգության ընդունման բաց թողնված ժամկետը համարել հարգելի և ճանաչել հոր՝ 26.11.1997 թվականին մահացած Սարգիս Սարգսյանի ժառանգությունն ընդունած ժառանգ:

Դիմելով դատարան՝ Կարինե Սարգսյանը պահանջել է անվավեր ճանաչել Երևանի Տերյան փողոցի 42 շենքի թիվ 34 բնակարանի նկատմամբ Էդուարդ Սարգսյանի սեփականության իրավունքի գրանցումը և սեփականության իրավունքի վկայականը, որոշել նշված բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքում բաժնի չափը և բնակեցնել այդ բնակարանում:

Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 07.09.2007 թվականի վճռով Ջոն Սարգսյանի և Կարինե Սարգսյանի հայցերը բավարարվել են:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 29.01.2008 թվականի վճռով Ջոն Սարգսյանի հայցը մերժվել է, իսկ Կարինե Սարգսյանի

---

---

հայրը՝ բավարարվել: Քաղաքացիական գործի վարույթը՝ թիվ 0245539 սեփականության իրավունքի վկայականն անվավեր ճանաչելու մասով, կարծվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Էդուարդ Սարգսյանը:  
Վճռաբեկ բողոքի պատասխանն չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) *Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածը, ինչպես նաև ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Սույն գործով նախագահող դատավոր Տ.Սահակյանը ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի 27.10.2006 թվականի վճռով Կարինե Սարգսյանի և Էդուարդ Սարգսյանի միջև քննվող սեկս ալ գործով գործի քննությանը մասնակցել է որպես դատավոր, իսկ սույն գործով նախագահող դատավոր է:

Էդուարդ Սարգսյանը միջնորդել է գործի քննությունը հետաձգել, սակայն Վերաքննիչ դատարանը թույլ չի տվել միջնորդությունը լիարժեք ներկայացնել, որի արդյունքում այն մերժվել է:

2) *Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածը, չի կիրառել «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասը և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածը, որոնք պետք է կիրառեր:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հայցապահանջի շրջանակներից դուրս է եկել: Հայցվոր Կարինե Սարգսյանը հայցապահանջի չափը փոփոխելու մասին դիմումով հայտնել է, որ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի համաձայն՝ համարվում է 26.11.1997 թվականին մահացած հոր՝ Սարգիս Սարգսյանի ժառանգությունն ընդունած ժառանգ և հետևաբար, անկախ իր սեփականության իրավունքի պետական գրանցումից, Երևանի Տերյան փողոցի 42 շենքի թիվ 34 բնակարանը հանդիսանում է իր և պատասխանողի ընդհանուր բաժնային սեփականությունը:

Կարինե Սարգսյանը պահանջել է վիճելի բնակարանի 1/2-րդ մասն առանձնացնել սեփականության իրավունքով և հատկացնել իրեն: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը ճանաչել է վերջինիս սեփականության իրավունքը բնակարանի 1/4-րդ մասի նկատմամբ: Միաժամանակ Վերաքննիչ դատարանն ամբողջությամբ անվավեր է ճանաչել Էդուարդ Սարգսյանի սեփականության իրավունքի գրանցումը վիճելի բնակարանի նկատմամբ, որի հետևանքով վերջինս գրկվել է այդ բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքից:

Սեփականության իրավունքի գրանցման վկայականը հանդիսանում է սեփականության իրավունքի գրանցման մասին տեղեկություններ պարունակող փաստաթուղթ և այդ փաստաթղթի անվավեր ճանաչելը չի հանգեցնում իրավական հետևանքների, քանի որ ուժի մեջ է մտնում վարչական ակտը՝ անշարժ գույքի գրանցման մատյանի գրանցումը:

3) *Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 279-րդ հոդվածի 2-րդ մասը, 1226-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը, Կարինե Սարգսյանին ճանաչելով Երևանի Տերյան փողոցի 42 շենքի թիվ 34 բնակարանի 1/4-րդ մասի ժառանգ, ամբողջությամբ անվավեր է ճանաչել Էդուարդ Սարգսյանի սեփականության իրավունքի գրանցումը: Մինչդեռ Վերաքննիչ դատարանն իրավունք ուներ մասնակի՝ վիճելի բնակարանի 1/4-րդի մասով, անվավեր ճանաչել Էդուարդ Սարգսյանի սեփականության իրավունքի գրանցումը: Անվավերությունը

պետք է համաչափ լինի կողմին սեփականության իրավունքով հատկացված բաժնի չափին: Նման խախտման արդյունքում Էդուարդ Սարգսյանը զրկվում է սեփականության իրավունքի գրանցումից և վիճելի տան նկատմամբ սեփականության իրավունքից, որը զուգորդվել է տիրապետումից զրկելու հետ:

26.11.1997 թվականին մահացած Ս.Սարգսյանի գույքը փաստացի տիրապետմամբ ժառանգել է Էդուարդ Սարգսյանը, իսկ Կարինե Սարգսյանը գիտեր հոր մահվան մասին, և նրա համար ակնհայտ էր ժառանգական գույքի գոյությունը: Սակայն Վերաքննիչ դատարանն անտեսել է նշված հանգամանքը, որի արդյունքում խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է մասնակիորեն՝ Կարինե Սարգսյանի հայցի մասով, բեկանել Վերաքննիչ դատարանի 29.01.2008 թվականի վճիռը և փոփոխել՝ Կարինե Սարգսյանի հայցը մերժել:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Սպանդարյան շրջխորհրդի գործկոմի 14.09.1995 թվականի թիվ 33/86 որոշմամբ Երևանի Տերյան փողոցի 42 շենքի թիվ 34 բնակարանը սեփականաշնորհվել է Սարգիս Սարգսյանի, Թամարա Պապովայի և Էդուարդ Սարգսյանի անվամբ որպես ընդհանուր սեփականություն հավասար բաժիններով:

2) Թամարա Պապովան մահացել է 1995 թվականին:

3) Թամարա Պապովայի մահից հետո նշված բնակարանի նրա բաժինը փաստացի տիրապետման հիմքով որպես ժառանգություն ընդունել են Սարգիս Սարգսյանը և Էդուարդ Սարգսյանը:

4) Սարգիս Սարգսյանը մահացել է 26.11.1997 թվականին:

5) Սույն գործով հայցվոր Կարինե Սարգսյանը Սարգիս Սարգսյանի դուստրն է:

6) ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած 27.10.2006 թվականի վճռով Կարինե Սարգսյանի ժառանգության ընդունման բաց թողնված ժամկետը համարվել է հարգելի, և վերջինս ճանաչվել է Սարգիս Սարգսյանի ժառանգությունն ընդունած ժառանգ:

7) Վերաքննիչ դատարանում սույն գործի քննությունը հետաձգելու վերաբերյալ միջնորդություն Էդուարդ Սարգսյանի կողմից չի ներկայացվել:

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

1) *վճռաբեկ բողոքն առաջին հիմքով անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի համաձայն՝ դատավորը պարտավոր է ինքնաբացարկ հայտնել, եթե նա տեղյակ է այնպիսի փաստերի կամ հանգամանքների, որոնք կարող են ողջամիտ կասկած հարուցել տվյալ գործով նրա անկողմնականակալության մեջ: Ինքնաբացարկի հիմքերը ներառում են ի թիվս այլոց այն դեպքերը, երբ դատավորը կամ նրա ամուսինը կամ նրանց հետ արյունակցական՝ մինչև 3-րդ աստիճանի կապի մեջ գտնվող անձը ողջամտորեն կհանդիսանա (հիմքեր ունի կարծելու, որ նա կհանդիսանա) գործին մասնակցող անձ կամ մասնակցել է տվյալ գործի քննությանը ստորին ատյանում՝ որպես դատավոր կամ գործին մասնակցող անձ:

ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածից հետևում է, որ դատավորի ինքնաբացարկի հիմքերը սպառնիչ չեն, և այդպիսին կարող է որակվել ցանկացած հանգամանք, որը կարող է ողջամիտ կասկած հարուցել տվյալ գործով նրա անկողմնականակալության մեջ:

---

---

Սույն քաղաքացիական գործով որպես դատավորի ինքնաբացարկի հիմք նշվել է այն հանգամանքը, որ նա նույն անձանց միջև քննված մեկ այլ քաղաքացիական գործի քննությանը մասնակցել է որպես դատավոր:

ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածում նշված հիմքերից քննարկման առարկա կարող է դառնալ միայն օրենսգրքի այն դրույթը, որը նախատեսում է, որ ինքնաբացարկի հիմք կարող է հանդիսանալ այն, որ դատավորը մասնակցել է տվյալ գործի քննությանը ստորին ատյանում՝ որպես դատավոր կամ գործին մասնակցող անձ: Նման դրույթն օրենսդրի կողմից դիտարկվել է ինքնաբացարկի հիմք այն պարզ պատճառաբանությամբ, որ ստորին ատյանում գործի քննությանը որպես դատավոր մասնակցած լինելու դեպքում դատավորը վերադաս դատական ատյանում ըստ էության վերանայում է իր իսկ կայացրած ակտի օրինականությունը: Մինչդեռ զուտ այն հանգամանքը, որ դատավորը մասնակցել է նույն անձանց միջև քննված մեկ այլ քաղաքացիական գործին որպես դատավոր, նրա անաչառության վերաբերյալ կասկածի և ինքնաբացարկը բավարարելու հիմք հանդիսանալ չի կարող: Բացի այդ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ինքնաբացարկի հիմք է դատավորի անաչառությունը կասկածի տակ դնող հանգամանք կարող է հանդիսանալ դատավորի ներքին կողմնակալ վերաբերմունքի հանգեցնող ցանկացած փաստ, որը կարող է ազդել թե՛ դատավորի կողմից գործը լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննելու և թե՛ գործի քննության արդյունքում դատավորի մոտ այնպիսի ներքին համոզմունքի ձևավորման վրա, որը չի բխում օրենսդրության նորմերից և գործում հետազոտված փաստերից, այլ հիմնվում է դրանցից դուրս գտնվող այլ հանգամանքի վրա: Մինչդեռ սույն գործում Էդուարդ Սարգսյանի կողմից վերը նշված հանգամանքների մասին վկայող որևէ ապացույց չի ներկայացվել:

Ինչ վերաբերում է Էդուարդ Սարգսյանի կողմից գործի քննությունը հետաձգելու վերաբերյալ միջնորդությանը, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նման միջնորդություն Էդուարդ Սարգսյանի կողմից Վերաքննիչ դատարանում գործի քննության ընթացքում չի ներկայացվել:

*2) վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 217-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանում գործերի քննությունն իրականացվում է վճռաբեկ դատարանում գործի քննության կանոններով, եթե սույն բաժնով այլ կանոններ նախատեսված չեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

Հայցապահանջի չափը փոփոխելու մասին Կարինե Սարգսյանի դիմումի համաձայն՝ վերջինս խնդրել է Երևանի Տերյան փողոցի 42 շենքի թիվ 34 բնակարանի նկատմամբ Էդուարդ Սարգսյանի անվամբ տրված սեփականության իրավունքի վկայականը ճանաչել անվավեր, որոշել նշված բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքով իրեն պատկանող բաժնեմասի չափը և բնակեցնել այդ բնակարանում:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած 27.10.2006 թվականի վճռով Կարինե Սարգսյանի ժառանգության ընդունման բաց թողնված ժամկետը համարվել է հարգելի, և վերջինս ճանաչվել է Սարգիս Սարգսյանի ժառանգությունն ընդունած ժառանգ: Սարգիս Սարգսյանի ժառանգությունն ընդունած ժառանգներ են Էդուարդ Սարգսյանը և Կարինե Սարգսյանը, այսինքն՝ Կարինե Սարգսյանը ժառանգել է նշված բնակարանի 1/4-րդ բաժինը: Վերաքննիչ դատարանը Կարինե Սարգսյանի հայցապահանջը բավարարել է մասնակիորեն: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը դուրս չի եկել ներկայացված հայցապահանջի շրջանակներից:

Ինչ վերաբերում է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի կիրառելիության վերաբերյալ վճռաբեկ բողոքի պատճառաբանությանը, ապա Վճռաբեկ դատարանն այն գտնում է անհիմն, քանի որ Վերաքննիչ դատարանը կիրառել է վերոնշյալ հոդվածները և փաստելով, որ սեփականության կամ օգտագործման իրավունքի գրանցման վկայականն իրավունք առաջացնող վարչական ակտ չէ, և այն անվավեր ճանաչելու պահանջը ենթակա չէ դատարանում քննության, այդ մասով կարճել է գործի վարույթը:

*3) վճռաբեկ բողոքը երրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1125-րդ հոդվածի համաձայն՝ ժառանգությունը ձեռք բերելու համար ժառանգը պետք է այն ընդունի: Ընդունված ժառանգությունը ժառանգության բացման ժամանակից համարվում է ժառանգին պատկանող, անկախ այդ գույքի նկատմամբ ժառանգի իրավունքի պետական գրանցումից, եթե նման իրավունքը ենթակա է պետական գրանցման:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ ժառանգությունն ընդունած ժառանգը օրենքի ուժով այդ գույքի սեփականատերն է:

Նույն օրենսգրքի 279-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ չի թույլատրվում սեփականատիրոջ գույքը հարկադրաբար վերցնել կամ առգրավել, բացի օրենքով նախատեսված դեպքերից:

Սույն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանը, ճանաչելով Կարինե Սարգսյանի սեփականության իրավունքը վեճի առարկա տան 1/4 մասի նկատմամբ, այդ մասով Էդուարդ Սարգսյանի անվամբ սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու փոխարեն այն անվավեր է ճանաչել ամբողջությամբ՝ խախտելով Էդուարդ Սարգսյանի սեփականության իրավունքը նշված բնակարանի 3/4 մասի նկատմամբ: Հիմք ընդունելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի սույն հիմքը գտնում է հիմնավոր:

Ինչ վերաբերում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի խախտման վերաբերյալ վճռաբեկ բողոքի պատճառաբանությանը, ապա Վճռաբեկ դատարանն այն գնահատման առարկա չի դարձնում, քանի որ այդ հարցն իր լուծումն է ստացել ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած 27.10.2006 թվականի վճռով:

Սիաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Երևանի Տերյան փողոցի 42 շենքի թիվ 34 բնակարանի նկատմամբ Էդուարդ Սարգսյանի սեփականության իրավունքի գրանցումն անվավեր ճանաչելու հայցի մասով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը մասնակիորեն փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

---

---

Դատական ակտը մասնակիորեն փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.01.2008 թվականի վճռի՝ Կարինե Սարգսյանի հայցի մասը և այն փոփոխել. Կարինե Սարգսյանի հայցը բավարարել մասնակիորեն՝ 1/4-րդ մասով անվավեր ճանաչել Երևանի Տերյան փողոցի 42 շենքի թիվ 34 բնակարանի նկատմամբ Էդուարդ Սարգսյանի սեփականության իրավունքի գրանցումը: Երևանի Տերյան փողոցի 42 շենքի թիվ 34 բնակարանի 1/4-րդ մասի սեփականատեր ճանաչել Կարինե Սարգսյանին, իսկ 3/4 մասի սեփականատեր՝ Էդուարդ Սարգսյանին:

2. Վճռի մնացած մասը թողնել օրինական ուժի մեջ:

3. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՈՒՐՆԵՐ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ տնտեսական դատարանի վճիռ  
Քաղաքացիական գործ թիվ S-2843/2007թ.  
Նախագահող դատավոր՝ Ռ.Սարգսյան

Քաղաքացիական գործ թիվ **3-59(ՏԳ)**  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Հ.ՍԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՍԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի փետրվարի 01-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «ԴՎԻՆ կոնցեռն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) վճռաբեկ բողոքը ՀՀ տնտեսական դատարանի 16.11.2007 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի «Իավիթ առևտրի տուն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) ընդդեմ Ընկերության՝ 26.031.400 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Կազմակերպությունը պահանջել է բռնագանձել Ընկերությունից 26.031.400 ՀՀ դրամ, այդ թվում՝ 17.000.000 ՀՀ դրամ որպես պայմանագրային հիմնական պարտավորության կատարում և 9.031.400 ՀՀ դրամ որպես վնասների փոխհատուցում:

ՀՀ տնտեսական դատարանի (այսուհետ՝ Տնտեսական դատարան) 16.11.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:

Վճռաբեկ բողոքին պատասխան է ներկայացրել Կազմակերպությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխանին լրացուցիչ վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) *Դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ, 20-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

31.10.2007 թվականի դատական նիստի ընթացքում Կազմակերպությունը, ներկայացնելով վնասի հատուցման պահանջ, կատարել է հայցապահանջի էական փոփոխություն:

---

---

Այդ կապակցությամբ Տնտեսական դատարանը հետաձգել է գործի քննությունը մինչև 08.11.2007 թվականը:

Գատարանում Ընկերության շահերի պատշաճ ներկայացում ապահովելու նպատակով 08.11.2007 թվականին Ընկերությունը դիմել է Գատարան՝ խնդրելով գործի քննությունը նշանակել երկու օր հետո՝ նիստին իրավաբան-ներկայացուցչի ներկայությունն ապահովելու համար:

Մինչդեռ, Տնտեսական դատարանը, առանց դիմումի քննարկման արդյունքների մասին Ընկերությանը իրազեկելու, նույն օրը՝ 08.11.2007 թվականին, ավարտել է գործի քննությունը:

2) *Գատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, որի արդյունքում չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Տնտեսական դատարանը լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ չի հետազոտել Ընկերության և Կազմակերպության միջև 17.05.2006 թվականին կնքված իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), ինչի արդյունքում Ընկերության նկատմամբ հաշվարկվել է 9.031.400 ՀՀ դրամ լրացուցիչ պարտավորություն՝ որպես հիմնական պարտավորությունը չկատարելու հետևանքով պատճառված վնասի փոխհատուցում:

Մինչդեռ, Տնտեսական դատարանը սխալ է հաշվարկել գանձվելիք գումարը: Այսպես, Պայմանագրի 3.3 կետով սահմանված է, որ Կազմակերպությունը Պայմանագրով ծառայության համար վճարում է գանձվող գումարից: Այսինքն, անգամ հայցվող ամբողջ 17.000.000 ՀՀ դրամ գումարի բռնագանձման դեպքում Պայմանագրով ծառայությունների մատուցման գումարը կկազմեր ընդամենը 2.888.308 ՀՀ դրամ:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Տնտեսական դատարանի 16.11.2007 թվականի վճիռը և գործն ուղարկել նոր քննության:

### **2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները.**

Անհիմն է բողոք բերած անձի պատճառաբանությունը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի, ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ, 20-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտման մասով, քանի որ բողոք բերած անձը տեղեկացված է եղել դատական նիստի մասին, սակայն չի ներկայացել, ինչից հետո հետաձգվել է դատական նիստը, նշանակվել է նիստի նոր օր, որին էլ նույնպես Ընկերությունը չի ներկայացել՝ փոխարենը ներկայացրել է դատական նիստը ևս երկու օրով հետաձգելու միջնորդություն:

### **2.2. Պատասխանին վճռաբեկ բողոքի լրացմամբ բերված փաստարկները.**

01.01.2008 թվականին ուժի մեջ մտած «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախս է համարվում նաև փաստաբանի **խելամիտ** վարձատրությունը: Մինչդեռ, տվյալ դեպքում փաստաբանի վարձատրությունը կազմում է հայցվող հիմնական գումարի 53 տոկոսը, ինչը վերոհիշյալ նորմի իմաստով չի կարող խելամիտ համարվել:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Տնտեսական դատարանի 11.10.2007 թվականի որոշմամբ հայցադիմումը ընդունվել է վարույթ: Գործի քննությունը նշանակվել է 31.10.2007 թվականին:

2) 31.10.2007 թվականի դատական նիստի ժամանակ հայցվորը ներկայացրել է հայցային պահանջների չափն ավելացնելու մասին դիմում, որի պատճառով գործի քննությունը հետաձգվել է մինչև 08.11.2007 թվականը:

3) 08.11.2007 թվականին Ընկերությունը միջնորդություն է ներկայացրել Տնտեսական դատարան դատական նիստը հետաձգելու և այն 10.11.2007 թվականից հետո նշանակելու մասին:

4) Տնտեսական դատարանը 08.11.2007 թվականին քննել է գործը և հայտարարել վճռի հրապարակման օրը:

5) 08.11.2007 թվականին քաղաքացիական գործը քննվել և վճիռ է կայացվել Ընկերության բացակայությամբ:

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

*1) բողոքն առաջին հիմքով հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.*

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իր որոշմամբ արդեն անդրադարձել է նշված իրավական հարցի գնահատականին (ՀՀ ԿԱ ՀՊԾ ընդդեմ Արմեն Խուդինյանի, քաղաքացիական գործ թիվ 3-1822/ՏԳ- (գումարի բռնագանձման պահանջով)):

Սակայն, կարևորելով սույն բողոքի հիմքում ընկած իրավական հարցադրումը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործի փաստերը տարբեր են վկայակոչված փաստերից, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում կրկին անդրադառնալ նշված իրավական հարցին:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված է հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից անձի ողջամիտ ժամկետում գործի հրապարակային քննության իրավունքը:

Ի սպառնալիս նշված նորմերի իրացվելիության՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի առաջին և երրորդ կետերով սահմանված է, որ գործին մասնակցող անձինք իրավունք ունեն ծանոթանալ գործի նյութերին, քաղվածքներ անել, ստանալ դրանց պատճենները, ինչպես նաև ներկայացնել ապացույցներ և մասնակցել դրանց հետազոտմանը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) քաղաքացիական իրավունքների և պարտականությունների առնչությամբ ծագած վեճերով արդար դատաքննության իրավունքի սպառնալիս տեսանկյունից իր նախադեպային իրավունքում առանձնացնում և պարզաբանում է այդ իրավունքի կարևոր բաղադրիչների՝ կողմերի հավասարության և մրցակցային դատավարության պահանջների էությունը: Այսպես, Եվրոպական դատարանը (Ռաֆիներիս Գրեյ Ստրան է Ստրատիս Անդրեադիսը ընդդեմ Հունաստանի, 09.12.1994) գործով նշել է, որ դատական քննության ընթացքում կողմերի հավասարությունը նշանակում է, որ դատավարության յուրաքանչյուր կողմի պետք է ընձեռնվի պատշաճ հնարավորություն ներկայացնելու իր գործը (ներառյալ՝ ապացույցները) այնպիսի պայմաններում, որոնք նրա համար մյուս կողմի համեմատությամբ չեն ստեղծի անբարենպաստ վիճակ:

---

---

Եվրոպական դատարանն իր պրակտիկայում արձանագրել է նաև, որ Կոնվենցիան կոչված է ապահովելու ոչ թե իրավունքի տեսական առկայությունը, այլ դրա պրակտիկ կիրառությունը և արդյունավետությունը (Իմբրիոսիան ընդդեմ Շվեյցարիայի, գործ N13972/88, 24.11.1993 թվական):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատարանն իրավունք ունի հետաձգել գործի քննությունը, եթե դա թելադրված է լրացուցիչ ապացույցներ ներկայացնելու անհրաժեշտությամբ: Այս հիմքով դատարանի կողմից գործի քննությունը հետաձգելը դատարանի իրավունքն է և ոչ պարտականությունը, և դատարանն իր այդ իրավունքն իրականացնում է հայեցողական իրավագործությամբ՝ ելնելով կոնկրետ գործի հանգամանքներից (տես՝ ՀՀ ԿԱ ՀՊԾ ընդդեմ Արմեն Խուրիյանի, քաղաքացիական գործ թիվ 3-1822/ՏՂ (գումարի բռնագանձման պահանջով)):

Հաշվի առնելով Դատարանի կողմից բողոք բերած անձին ապացույցների ներկայացման և իրավական պաշտպանության կազմակերպման համար ողջամիտ ժամկետի տրամադրման անհրաժեշտությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով գործի քննությունը հետաձգելու անհրաժեշտությունն առկա էր:

Փաստորեն, մերժելով գործի քննությունը հետաձգելու վերաբերյալ բողոք բերած անձի միջնորդությունը, Դատարանը խախտել է վերջինիս՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի առաջին մասի 1-ին և 3-րդ կետերով երաշխավորված գործի նյութերին ծանոթանալու, քաղվածքներ անելու, դրանց պատճենները ստանալու, ապացույցներ ներկայացնելու և դրանց հետազոտմանը մասնակցելու իրավունքները, ինչպես նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը:

Ավելին, սույն քաղաքացիական գործի դատական քննության պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի առաջին մասի առաջին պարբերության համաձայն՝ հայցադիմումը ստանալու օրվանից հետո՝ երկշաբաթյա ժամկետում պատասխանողը պարտավոր է դատարան ներկայացնել գրավոր պատասխան հայցադիմումի վերաբերյալ՝ դրան կցելով հայցի դեմ իր առարկությունները հաստատող փաստաթղթեր կամ ներկայացնել հիմնավորված միջնորդություն՝ մինչև երկու շաբաթ տևողությամբ լրացուցիչ ժամկետ խնդրելու վերաբերյալ:

Թեև վերը նշված հոդվածով հայցադիմումի վերաբերյալ պատասխան ներկայացնելը պատասխանողի դատավարական պարտականությունն է, սակայն միաժամանակ դա վերջինիս դատավարական իրավունքն է, քանի որ դատավարական այդ ինստիտուտը պատասխանողի դատավարական պաշտպանության եղանակներից մեկն է: Այդ իսկ պատճառով Վճռաբեկ դատարանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի առաջին մասի առաջին պարբերությամբ սահմանված հայցադիմումին պատասխան ներկայացնելը դիտում է որպես դատավարական կարևոր իրավունք: Վերոգրյալից հետևում է, որ դատարանը պարտավոր է դատավարությունը կազմակերպել այնպես, որպեսզի ապահովվի պատասխանողի այս իրավունքի իրականացումը:

Փաստորեն, Տնտեսական դատարանը, դատական նիստը 31.10.2007 թվականին հետաձգելով և գործի քննությունը 08.11.2007 թվականին նշանակելով, հնարավորություն չի տվել պատասխանողին օգտվելու ոչ միայն օրենքով սահմանված երկշաբաթյա ժամկետում հայցադիմումին պատասխան ներկայացնելու իր իրավունքից, այլև իր գործը և ապացույցները այնպիսի պայմաններում ներկայացնելու իրավունքից, որոնք նրա համար մյուս կողմի համեմատությամբ չեն ստեղծի անբարենպաստ վիճակ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման:

Սույն գործով հաստատված փաստերի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ արդար դատաքննության իրավունքի ամբողջ ծավալով իրականացնելու օբյեկտիվ հնարավորությունների բացակայությունը կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման:

Պատասխանում առկա փաստարկները մասնակիորեն հերքվում են վերոհիշյալ պատճառաբանություններով:

2) վճռաբեկ բողոքի երկրորդ հիմքին Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում, քանի որ կողմի (կողմերի) փաստարկները դատավարության ընթացքում քննության առարկա չեն դարձել՝ կողմի դատավարական իրավունքների սահմանափակման արդյունքում: Հետևաբար, նման իրավիճակում այդ պատճառաբանությունները Վճռաբեկ դատարանում չեն քննարկվում:

Նույն պատճառաբանությամբ Վճռաբեկ դատարանում չեն քննարկվում նաև Պատասխանի և վճռաբեկ բողոքի լրացման՝ նյութական նորմերի խախտման և խախտման բացակայության վերաբերյալ փաստարկները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի առաջին հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարություն օրենսգրքի 228-րդ - հոդվածի ուժով վերանայվող դատական ակտը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ տնտեսական դատարանի 16.11.2007 թվականի վճիռը և գործն ուղարկել Երևանի քաղաքացիական դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒՐՆԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **3-470(ՎԴ)**  
**2008թ.**

Քաղաքացիական գործ թիվ 08-1194/2008թ.  
Նախագահող դատավոր՝ Տ.Սահակյան  
Դատավորներ՝ Կ.Հակոբյան  
Տ.Նազարյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Հ.ՍԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Վ.ԱՔԵԼՅԱՆԻ  
Հ.ԳՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի սեպտեմբերի 26-ին

քննարկելով Հասմիկ Մարտիրոսյանի վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 28.03.2008 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ասյա Մարկոսյանի ընդդեմ Հասմիկ Մարտիրոսյանի և Հայկարամ Հակոբյանի՝ բնակարանից վտարելու պահանջի մասին և ըստ հակընդդեմ հայցի Հասմիկ Մարտիրոսյանի ընդդեմ Ասյա Մարկոսյանի, Շենգավիթի թաղապետարանի, երրորդ անձինք ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Էրեբունու տարածքային ստորաբաժանման և «Շենգավիթ» նոտարական տարածքի նոտար Անահիտ Սիմասյանի՝ բնակարանի նվիրատվության պայմանագիրը, դրա հիման վրա կատարված իրավունքների պետական գրանցումն անվավեր ճանաչելու և որպես միակ փաստացի տիրապետող ժառանգի ժառանգության և սեփականության իրավունքները ճանաչելու պահանջների մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործով դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ հայցվորը պահանջել է Հասմիկ Մարտիրոսյանին, Հայկարամ Հակոբյանին և նրանց ընտանիքի անդամներին վտարել Երևանի Եղբայրության փողոցի 14 շենքի 38 բնակարանից և բնակարանը հանձնել իրեն:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Հասմիկ Մարտիրոսյանը պահանջել է անվավեր ճանաչել Շենգավիթի թաղապետարանի և Ասյա Մարկոսյանի միջև 20.11.2006 թվականին կնքված բնակարանի նվիրատվության պայմանագիրը և դրա հիման վրա կատարված պետական գրանցումը, ինչպես նաև ճանաչել իր ժառանգության և սեփականության իրավունքները բնակարանի նկատմամբ:

Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ Դատարան) 21.11.2007 թվականի վճռով հայցը մերժվել է, հակընդդեմ հայցը՝ բավարարվել:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 28.03.2008 թվականի որոշմամբ բողոքը բավարարվել է. Շենգավիթ համայնքի առաջին

ատյանի դատարանի վճիռը բեկանվել է և գործն ուղարկվել է Երևանի քաղաքացիական դատարան՝ նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Հասմիկ Մարտիրոսյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել Շենգավիթի թաղապետարանը և Ասյա Մարկոսյանը:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածը, որը չպետք է կիրառել, չի կիրառել Նոտարիատի մասին ՀՀ օրենքի 55-րդ հոդվածը, որը պետք է կիրառել:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Վեճի առարկա նվիրատվության պայմանագիրը վավերացրած նոտար Սվետլանա Բաղիրյանը չպետք է մասնակից դարձվեր գործի քննությանը, քանի որ սույն քաղաքացիական գործով դատարանի կողմից քննության առարկա պետք է դարձվի ոչ թե նվիրատվության պայմանագրի վիճահարույց լինելու հարցը, այլ այդ պայմանագրի նկատմամբ գործարքի անվավերության հետևանքների կիրառելիությունը:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 28.03.2008 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանի 21.11.2007 թվականի վճռին:

**2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Գործին որպես երրորդ անձ նոտար Սվետլանա Բաղիրյանի փոխարեն ներգրավվել է Անահիտ Մինասյանը, որը առնչություն չունի վիճարկվող գործարքի հետ:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1.20.11.2006 թվականին կնքված նվիրատվության պայմանագիրը վավերացվել է նոտար Սվետլանա Բաղիրյանի կողմից, որի փոխարեն գործի քննությանը ներգրավվել է Անահիտ Մինոնյանը:

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ *բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը, գործի նախապատրաստման կամ քննության ժամանակ, պարզելով, որ հայցը հարուցվել է ոչ այն անձի կողմից, որին պատկանում է պահանջի իրավունքը, կամ ոչ այն անձի դեմ, ով պետք է պատասխանի այդ հայցով, կարող է հայցվորի համաձայնությամբ թույլ տալ, որ նա կամ պատասխանողը փոխարինվեն պատշաճ հայցվորով կամ պատասխանողով:

Վերաքննիչ դատարանը Դատարանի վճռի բեկանման հիմքում դնելով այն հանգամանքը, որ գործին որպես երրորդ անձ է ներգրավվել ոչ այն նոտարը, որը վավերացրել է վեճի առարկա նվիրատվության պայմանագիրը, կիրառել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածը:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոնշյալ հանգամանքը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի կիրառման հիմք չէ, քանի որ նշված հոդվածը վերաբերում է միայն ոչ պատշաճ հայցվորին կամ պատասխանողին պատշաճ հայցվորով և պատասխանողով փոխարինելուն, այլ ոչ թե երրորդ անձին:

---

---

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը արձանագրում է, որ նվիրատվության պայմանագիրը վավերացրած նոտարին գործի քննությանը մասնակից չդարձնելը Դատարանի վճիռը բեկանելու հիմք չէ, քանի որ այդ հանգամանքը չէր կարող հանգեցնել սույն քաղաքացիական գործի սխալ լուծմանը: Մասնավորապես, սույն քաղաքացիական գործով վիճարկվում է ոչ թե վեճի առարկա նվիրատվության պայմանագրի կնքման պահին նվիրատու Շենգավիթի թաղապետարանի մոտ համապատասխան լիազորությունների առկայության կամ բացակայության հարցը, այլ վերջինիս սեփականության իրավունքը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքում նշված հիմքերի առկայությունը բավարար է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածների համաձայն՝ Վերաքննիչ դատարանի վճիռը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>1</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 28.03.2008 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանի 21.11.2007 թվականի վճիռն:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒՐՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի վճիռ  
Քաղաքացիական գործ թիվ 08-1050  
Նախագահող դատավոր՝ Կ.Հակոբյան  
Դատավորներ՝ Տ.Սահակյան  
Տ.Նազարյան

Քաղաքացիական գործ թիվ **3-650(ՎԳ)**  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ե.ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի դեկտեմբերի 26-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Լ.Գաբրյանի վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.04.2008 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Լ.Գաբրյանի ընդդեմ Գ.յումրու քաղաքապետարանի (այսուհետ՝ Քաղաքապետարան), երրորդ անձինք Գ.Եգանյանի, Գ.Բակմազյանի, Վ.Գասպարյանի, Ա.Համբարձումյանի, Ռ.Գասպարյանի, Գ.Համբարյանի, Կ.Եղիկյանի՝ Լ.Գաբրյանի սեփականության իրավունքի իրականացման խոչընդոտները վերացնելու և այդպիսի խոչընդոտներ առաջացնող որոշումներն անվավեր ճանաչելու պահանջի մասին, և ըստ Քաղաքապետարանի հակընդդեմ հայցի ընդդեմ Լ.Գաբրյանի, երրորդ անձինք Գ.Եգանյանի, Գ.Բակմազյանի, Վ.Գասպարյանի, Ա.Համբարձումյանի, Ռ.Գասպարյանի, Գ.Համբարյանի, Կ.Եղիկյանի՝ «Առևտրի կենտրոն» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) սեփականության իրավունքով պատկանող շինության քանդման թույլտվություն և ճարտարապետահատակագծային առաջադրանք ստանալու համար Քաղաքապետարան դիմելուն պարտավորեցնելու պահանջի մասին

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Լ.Գաբրյանը պահանջել է վերացնել Գ.յումրի քաղաքի Շահումյան փողոցի թիվ 123 հասցեում գտնվող «Առևտրի կենտրոն» շինության նկատմամբ սեփականության իրավունքի իրականացման խոչընդոտները և անվավեր ճանաչել այդպիսի խոչընդոտներ առաջացնող Գ.յումրու քաղաքապետի (այսուհետ՝ Քաղաքապետ)՝ 29.08.2006 թվականի թիվ 1098, 29.08.2006 թիվ 1104, 29.08.2006 թվականի թիվ 1103, 29.08.2006 թվականի թիվ 1101, 05.09.2006 թվականի թիվ 1132 և 29.08.2006 թվականի թիվ 1105 որոշումները:

---

---

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Քաղաքապետարանը պահանջել է պարտավորեցնել Լ.Գաբրյանին քանդման թույլտվություն և ճարտարապետահատակագծային առաջադրանք ստանալու համար դիմել Քաղաքապետարան:

Շիրակի մարզի առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ Դատարան) 10.12.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժվել:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 04.04.2008 թվականի որոշմամբ հայցը մերժել է: Դատարանի վճռի մնացած մասը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Լ.Գաբրյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

### **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ասիմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի պահանջները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Գործում առկա «ՀՀ Հայնախագիծ» ԲԲԸ-ի 06.06.2007 թվականի թիվ 183 գրությամբ, «ՀՀ Փորձագիտական Կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 24.10.2007 թվականի եզրակցությամբ, ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննության 20.12.2004 թվականի եզրակացությամբ հիմնավորվել է, որ Ընկերությանը պատկանող շինությանը հարող օտարված հողամասերում կատարվող շինարարությունը խոչընդոտում է Ընկերության բնականոն գործունեությանը և զրկում նրան սեփականության իրավունքի իրականացմանը: Մասնավորապես, իրականացվող շինարարությունը սպառնում է Ընկերությանը պատկանող շինության հիմքի ամրությանն ու փլուզմանը: Երեք կողմերից շինությանը կից թույլատրվել է կառուցապատման աշխատանքներ կատարել՝ խոչընդոտելով ոչ միայն շենքի բնական լուսավորությանը և մուտքին, այլև հակահրդեհային անվտանգությանը: Շենքը բոլոր կողմերից ունի պատուհաններ, հետնամասում՝ երկու դուռ, և այդպիսի պայմաններում առանց սեփականատիրոջ համաձայնության, հնարավորություն է տրվել կից կառույց կառուցել: Սինչդեռ, վերը նշված ապացույցները Վերաքննիչ դատարանի որևէ գնահատականի չեն արժանացել:

Վերոգրյալի հիման վրա՝ վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 04.04.2008 թվականի որոշումը՝ հայցը մերժելու մասով և գործն այդ մասով ուղարկել համապատասխան ստորադաս դատարան նոր քննության կամ այդ մասով օրինական ուժ տալ Դատարանի 10.12.2007 թվականի վճռին:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Գումրիի Շահումյան փողոցի թիվ 123 հասցեում գտնվող անշարժ գույքը սեփականության իրավունքով պատկանում է Ընկերությանը, որի գլխավոր տնօրենը Լ.Գաբրյանն է:

2) «ՀՀ Փորձագիտական Կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 24.10.2007 թվականի եզրակցության համաձայն՝ հետազոտման առարկա հանդիսացող տարածքը, ըստ ՀՀ Կառավարության 28.03.2005 թվականի թիվ 295-Ն որոշման, պետք է նախագծվի և կառուցվի համալիր, մինչդեռ, տվյալ դեպքում կառուցապատվում է առանձին-առանձին: Իրականացվող կառուցապատումները չեն համապատասխանում ՀՀ քաղաքաշինության բնագավառում գործող բնական լուսավորության և ինտույացիոն նորմաները կարգավորող նորմատիվ ակտերին, ինչպես նաև՝ հակահրդեհային պահանջներին:

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ:

Վերաքննիչ դատարանը, հայցը մերժելիս, պատճառաբանել է, որ «Տվյալ պարագայում սկզբնական հայցի մատով պատշաճ հայցվոր կարող էր հանդիսանալ «Առևտրի կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, այլ ոչ թե վերջինիս տնօրեն Լյովա Գաբոյանը»: Նշվածի հիման վրա, Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ Լ.Գաբոյանի կողմից չի ներկայացվել իր իրավունքի խախտման վերաբերյալ որևէ ապացույց:

Մինչդեռ, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի համաձայն՝ ընկերության գլխավոր տնօրենը համարվում է ընկերության գործադիր մարմին: Նույն հոդվածի 3-րդ մասի «ա» կետի համաձայն՝ ընկերության գործադիր մարմինն առանց լիազորագրի գործում է ընկերության անունից, այդ թվում՝ ներկայացնում է նրա շահերը և կնքում գործարքներ:

Վերոգրյալից բխում է, որ Լ.Գաբոյանը, լինելով ընկերության գլխավոր տնօրեն, կարող է ներկայացնել ընկերության շահերն՝ առանց լիազորագրի: Հետևաբար, հիմնավոր չէ Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությունը, որ պատշաճ հայցվոր կարող էր լինել ընկերությունը, այլ ոչ թե տնօրեն Լ.Գաբոյանը:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին:

Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ որոշման իրավական հիմնավորումը:

Որոշման իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավա-հարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանն եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Որոշման մեջ ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածից հետևում է, որ դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է որոշում կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին (տես, Անժելա Դազարյանը, Արփիկ և Արմինե Գասպարյանների ընդդեմ Շուշանիկ Սարգսյանի, Ոսկեհատ, Նունե, Հրանուշ Գասպարյանների՝ ժառանգական գույքը ժառանգների միջև բաժանելու պահանջի մասին, ՀՀ վճռաբեկ դատարանի 12.12.2007 թվականի որոշում, քաղաքացիական գործ թիվ 3-1843(ՎԴ)):

Մինչդեռ, սույն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանը գտնելով, որ հայցը ներկայացվել է ոչ այն անձի կողմից, ում պատկանում է պահանջի իրավունքը, պատշաճ գնահատման առարկա չի դարձրել ընկերության կողմից ներկայացված ապացույցները, այդ թվում՝ «ՀՀ Փորձագիտական Կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 24.10.2007 թվականի եզրակցությունը:

Մասնավորապես, նշված եզրակացության համաձայն՝ հետազոտման առարկա հանդիսացող տարածքը, ըստ ՀՀ Կառավարության 28.03.2005 թվականի թիվ 295-Ն որոշման, պետք է նախագծվի և կառուցվի համալիր, մինչդեռ, տվյալ դեպքում կառուցապատվում է առանձին-առանձին, իսկ իրականացվող կառուցապատումները չեն համապատասխանում ՀՀ քաղաքաշինության բնագավառում գործող բնական լուսավորության և ինստլյացիոն նորմաները կարգավորող նորմատիվ ակտերին, ինչպես նաև՝ հակահրդեհային պահանջներին:

---

---

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի համաձայն, Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-240<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.04.2008 թվականի որոշումը՝ հայցը մերժելու մասով, և գործն այդ մասով ուղարկել Վարչական դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒՐՆԵՐ ԴԱՏԱՐԱՆ**

Վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի վճիռ

Քաղաքացիական գործ թիվ **3-93(ՎԳ)**  
**2008թ.**

Քաղաքացիական գործ թիվ 3223  
Նախագահող դատավոր՝ Ն.Հովսեփյան  
Դատավորներ՝ Տ.Սահակյան  
Մ.Ասատրյան

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ  
դատարան)

*նախագահությամբ* Հ.ՍԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Վ.ԱՔԵԼՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ԳՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի փետրվարի 29-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Սաթնե» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.11.2007 թվականի վճիռի դեմ՝ ըստ հայցի Ընկերության ընդդեմ Աշոտ և Հենրիկ Այվազյանների՝ հողի վարձակալության իրավունքի առուվաճառքի պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) լուծելու, Ընկերությանը պատկանող և 17.02.2003 թվականին կնքված հողի վարձակալության իրավունքի առուվաճառքի պայմանագրով ձեռք բերված օղակաձև զբոսայգու 5-րդ հատվածում 0,04 հա հողամասի նկատմամբ վարձակալության իրավունքը վերադարձնել պարտավորեցնելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ հայցվորը պահանջել է հողի վարձակալության իրավունքի առուվաճառքի պայմանագիրը լուծել, պարտավորեցնել վերադարձնել Ընկերությանը պատկանող և 17.02.2003 թվականին կնքված հողի վարձակալության իրավունքի առուվաճառքի պայմանագրով ձեռք բերված օղակաձև զբոսայգու 5-րդ հատվածում 0,04 հա հողամասի նկատմամբ վարձակալության իրավունքը:

Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 25.07.2007 թվականի վճռով հայցը մերժվել է:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 08.11.2007 թվականի վճռով հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:

---

---

## **2. Վճարել բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճարել բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1. *Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածը, որը չպետք է կիրառեր:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Վճռում տեղ գտած «և որի համար Աշոտ Այվազյանը հայցվորին վճարել է 40 000 ԱՄՆ դոլար, որը նույնպես դատարանը ապացուցված է համարում» ըստ էության վրիպակ է, քանի որ որևէ դրամական պահանջ հայցվորները չեն ներկայացրել ու ոչ հայցվորները, ոչ պատասխանողներ չեն անդրադարձել 17.02.2003 թվականին կնքված հողի վարձակալության իրավունքի առուվաճառքի պայմանագրի 3-րդ կետով նախատեսված պայմանագրի գնին և առավել ևս, վճարումներից, ինչը տրամաբանական է, քանի որ հայցի հիմքն այլ է եղել:

Նման եզրահանգման համար որևէ փաստական հիմք չի եղել: Դատարանը չի հետազոտել գումարի վճարում հավաստող որևէ փաստաթուղթ:

2. *Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ, 502-րդ և 507-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Կողմերի միջև կնքված պայմանագրով գնորդը պետք է վճարեր 40.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, սակայն գնորդի կողմից վճարումը չի կատարվել, ինչը պայմանագրի էական խախտում է և դրա լուծման հիմք:

Վերոգրյալի հիման վրա վճարել բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 28.12.2007 թվականի վճիռը:

## **3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունի հետևյալ փաստերը՝

1) ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 22.08.2005 թվականի թիվ 05-596 քաղաքացիական գործով (ըստ հայցի Ալբերտ Խոդոյանի, Արայիկ անեսյանի, Նունե Բարսեղյանի, Թամարա Հայրապետյանի և Ընկերության ընդդեմ Հենրիկ և Աշոտ Այվազյանների, Երևանի Կենտրոն նոտարական տարածքի նոտար Է.Շաբոյանի և ՀՀ - կառավարությանն առնթեր անշարժ գույքի կադաստրի կետական կոմիտեի Մարաշ տարածքային ստորաբաժանման) հայցի առարկան է՝ Ընկերության 17.07.2002 թվականի արտահերթ ժողովի արձանագրությունն առաջին ճանաչելը, ինչպես նաև Հ.Այվազյանի անվամբ տրված 13.01.2003 թվականի լիազորագիրը, 17.02.2003 թվականի հողի վարձակալության իրավունքի առուվաճառքի պայմանագիրը և դրա հիման վրա տրված վարձակալության իրավունքի վկայականն անվավեր ճանաչելը:

2) Սույն քաղաքացիական գործով հայցի առարկան է հողի վարձակալության իրավունքի առուվաճառքի պայմանագիրը լուծելը, ինչպես նաև Ընկերությանը պատկանող և 17.02.2003 թվականին կնքված հողի վարձակալության իրավունքի առուվաճառքի պայմանագրով ձեռք բերված օղակաձև զբոսայգու 5-րդ հատվածում 0,04 հա հողամասի նկատմամբ վարձակալության իրավունքը վերադարձնել պարտավորեցնելը:

3) ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 22.08.2005 թվականի վճռով հաստատված է համարվել այն հանգամանքը, որ Աշոտ Այվազյանը «հայցվորին» վճարել է 40.000 ԱՄՆ դոլար:

4) Վերոնշյալ քաղաքացիական գործով բացակայում է որևէ վերաբերելի ապացույց, որը հաստատում է Աշոտ Այվազյանի կողմից «հայցվորին» 40.000 ԱՄՆ դոլար վճարելու փաստը:

5) Աշոտ Այվազյանի կողմից «հայցվորին» 40.000 ԱՄՆ դոլար վճարելու փաստը վերաբերելի չէ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 22.08.2005 թվականի թիվ 05-596 քաղաքացիական գործով հայցի առարկայի նկատմամբ:

6) ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 22.08.2005 թվականի թիվ 05-596 քաղաքացիական գործով կայացված վճիռը մտել է օրինական ուժի մեջ:

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ

*1) բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

*Վճռաբեկ դատարանը, որոշելու համար վճռաբեկ բողոքի հիմքի հիմնավորվածությունը բողոքի սահմաններում պետք է քննարկման առարկա դարձնի հետևյալ իրավական հարցը. արդյո՞ք նախկինում քննված քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված ցանկացած հանգամանք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով ունի նախադատելի նշանակություն քննվող այլ գործի համար, նույնիսկ եթե այդ հաստատված հանգամանքը վերաբերելի չէ նախկինում քննված քաղաքացիական գործով հայցի առարկային (չի դասվում հաստատման ենթակա հանգամանքների շարքը):*

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոհիշյալ իրավական հարցադրմանը պետք է պատասխանել նախադատելիության կամ պրեյուդիցիայի (լատիներեն *praesudicialis*-ից) դատավարական ինստիտուտի, դատական ակտերի պրեյուդիցիալ կապի և նման կապի օբյեկտիվ սահմանների վերլուծության լույսի ներքո:

Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վեճի լուծման պահին գործող խմբագրությամբ 52-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նախկինում քննված քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքները դատարանում այլ գործ քննելիս կրկին չեն ապացուցվում:

Այսինքն, օրինական ուժի մեջ մտած սկզբնական դատական ակտի նախադատելիությունը պայմանավորում է նոր կայացվելիք դատական ակտի բովանդակությունն այն մասով, որը վերաբերում է նախկինում քննված այլ գործով արդեն իսկ հաստատված հանգամանքներին:

Գործին մասնակցող անձանց համար նախադատելիությունը նշանակում է որոշակի սահմաններում ապացուցման պարտականությունից ազատում, ինչպես նաև կրկնակի ապացուցման կամ նման հանգամանքները հետագա դատավարություններում հերքելու արգելք: Նախադատելիությունը դատարանի համար ենթադրում է պարտականություն ներմուծելու նման հանգամանքը նոր կայացվող դատական ակտում: Որպես կանոն դատական ակտերի պրեյուդիցիալ կապը ենթադրում է դատական ակտի նախադատելիության տարածում ամբողջ ծավալով թե գործին մասնակցող անձանց, թե դատարանի վրա (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մաս): Հետևաբար, նախադատելիությունը օրենքի ուժով միանշանակ կանխորոշիչ դերակատարություն է ունենում նոր դատական ակտի համար, իսկ գործին մասնակցող անձանց կամքը և դատական հայեցողությունն այս հարցում ազդեցություն չունեն:

Սակայն դատական ակտի նախադատելիության օբյեկտիվ սահմանները և դրանցից դուրս գալու հնարավորությունը ստեղծում է որոշակի իրավիճակներ, երբ պրեյուդիցիալ կապը դառնում է չկանխորոշող և կախված է լինում գործին մասնակցող անձանց կամքից և դատական հայեցողությունից:

Դատական ակտի պրեյուդիցիալ կապի կամ նախադատելիության օբյեկտիվ սահմանները որոշվում են հանգամանքների այն շրջանակով, որոնք պետք է հաստատված լինեն օրինական ուժի մեջ մտած դատական ակտով և ենթակա չեն կրկին ապացուցման կամ հերքման այլ գործ քննելիս:

---

---

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի առաջին մասի համաձայն. «Գործով ապացույցներ են սույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: Այս օրինադրույթը պարունակում է վերը բարձրացված իրավական խնդրի լուծման տեսանկյունից կարևոր երկու դատավարական կանոն, այն է՝

1) վեճի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը դատարանը պարզում է միայն օրենքով նախատեսված կարգով ձեռք բերված և հետազոտված ապացույցների միջոցով (բացառություն են կազմում միայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածով նախատեսված դեպքերը):

2) դատարանը պարզում է միայն գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը (վեճի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքներ): Այս կանոնը կիրառելիս դատարանը պարտավոր է առաջնորդվել հայցվորի կողմից կանխորոշված հայցի առարկայի և հիմքի սահմաններով, որի փոփոխման բացառիկ իրավունքը պատկանում է հայցվորին (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32-րդ հոդված):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նախադատելիության օբյեկտիվ սահմանների որոշման համար էական նշանակություն ունի վերը հիշատակված երկու դատավարական կանոնների պահպանումը:

Վճռաբեկ դատարանը հատկապես կարևորություն է տալիս ապացուցման առարկայի՝ վեճի լուծման համար **նշանակություն ունեցող** հանգամանքների ճիշտ որոշման հարցին, քանզի դատարանի կողմից ապացուցման առարկայի սահմանների կամայական (առանց դատավարական նախադրյալի՝ հայցվորի կամահայտնության) ընդլայնումը բերում է այդ գործով կայացված դատական ակտով հաստատված որոշակի հանգամանքների նախադատելիության բացառման:

Վերաքննիչ դատարանի 22.08.2005 թվականի վճռով հաստատված հանգամանքը «Աշոտ Այվազյանի կողմից հայցվորին 40.000 ԱՄՆ դոլար վճարած լինելու մասին» չէր մտնում այդ գործով ապացուցման առարկայի սահմանների մեջ, իսկ դատարանի բուն եզրահանգումը այդ փաստի առկայության վերաբերյալ հաստատված չէ ապացուցման ֆորմալ պահանջների պահպանմամբ՝ դատարանն այն հաստատված է համարել առանց վերաբերելի որևէ ապացույցի հետազոտման և գնահատման:

Որևէ հանգամանքի նախադատելիության որոշման համար Վճռաբեկ դատարանը կարևորում է նաև վերը հիշատակված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի առաջին մասում պարունակվող առաջին դատավարական կանոնի ճիշտ կիրառումը: Գործով հաստատված որևէ հանգամանքի նախադատելիությունը պայմանավորվում է այդ հանգամանքի՝ մրցակցային դատավարության կանոններով հաստատված լինելու փաստի հետ: Ահավասիկ, այն դեպքերում, երբ հանգամանքը հաստատվել է առանց ֆորմալ դատավարական կանոնների պահպանման (ապացույցների հավաքման, հետազոտման և գնահատման դատավարական կանոնների **կոսյիտ** խախտմամբ) կամ կողմերից մեկի՝ դատավարական հնարավորությունների սահմանափակվածության պայմաններում (կողմը պատշաճ չձանուցվելու պատճառով չի մասնակցել դատաքննությանը) հաստատված հանգամանքը այլ գործ քննող դատարանը կարող է չճանաչել որպես նախադատելի իր կողմից քննվող գործի համար:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գալիս է եզրահանգման, որ նախկինում քննված քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ

հողվածի 2-րդ մասի իմաստով ունեն նախադատելի նշանակություն քննվող այլ գործի համար, բացառությամբ այն **քաղաքիկ** դեպքերի, երբ՝

ա) այդ հաստատված հանգամանքը վերաբերելի չէ նախկինում քննված քաղաքացիական գործով հայցի առարկային (չի դասվում հաստատման ենթակա հանգամանքների շարքը) և/կամ

բ) այդ հանգամանքը հաստատվել է ֆորմալ դատավարական կանոնների կոպիտ խախտմամբ կամ կողմերից մեկի՝ դատավարական հնարավորությունների սահմանափակվածության պայմաններում:

Վճռաբեկ դատարանը արձանագրում է որ կոնկրետ գործով մանրակրկիտ դատական ստուգման է ենթակա նախադատելիության բացառման յուրաքանչյուր դեպք: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ միայն սույն որոշմամբ սահմանված կանոններով ստուգման արդյունքում դատարանը կարող է հանգել օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված հանգամանքի նախադատելիության բացառման մասին եզրակացության:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի 22.08.2005 թվականի վճռով հաստատված հանգամանքը սույն քաղաքացիական գործի համար նախադատելի նշանակություն չունի:

2) Վճռաբեկ բողոքի երկրորդ հիմքին Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում, քանի որ բողոք բերած անձի իրավական հիմնավորումները չեն հանդիսացել ստորադաս դատարանի քննության առարկա, հետևաբար, դրանք Վճռաբեկ դատարանի կողմից քննարկման ենթակա չեն:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի առաջին հիմքի առկայությունը, չ՛հ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով, Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար Վերաքննիչ դատարանի վճիռը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով չ՛հ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.11.2007 թվականի վճիռը և գործն ուղարկել Երևանի քաղաքացիական դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒՐՆԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Քաղաքացիական վերաքննիչ  
դատարանի վճիռ

Քաղաքացիական գործ թիվ **3-168(ՎԳ)**  
**2008թ**

Քաղաքացիական գործ թիվ 07-3482  
Նախագահող դատավոր՝ Վ.Ավանեսյան  
Դատավորներ՝ Գ.Մատինյան  
Լ.Գրիգորյան

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ  
դատարան)

*նախագահությամբ* Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի ապրիլի 23-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Գևորգ Անտոնյանի վճռաբեկ բողոքը Քաղաքացիական վերաքննիչ դատարանի 05.11.2007 թվականի վճռի դեմ՝ ըստ Օֆեյյա Պետրոսյանի հայցի ընդդեմ Գևորգ Անտոնյանի, Երևանի քաղաքապետարանի, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Նոր Նորքի տարածքային ստորաբաժանման՝ սեփականության իրավունքի խախտումները վերացնելու, Երևանի քաղաքապետի 21.05.2005 թվականի թիվ 885 որոշումն անվավեր ճանաչելու, անհատապես որոշվող գույքն ապօրինի տիրապետումից հետ վերադարձնելու և պատճառված վնասը հատուցելու պահանջների մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Օֆեյյա Պետրոսյանը պահանջել է անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետի 21.05.2005 թվականի թիվ 885-Ա որոշումը, կիրառելով անվավերության հետևանքներ, վերականգնել մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը՝ վերադարձնել Երևանի Գայի պողոտա 57/1 հասցեում գտնվող պարիսպը, քանդել Գևորգ Անտոնյանի կողմից ինքնակամ կառուցված 8,30քմ մակերեսով շինությունը, հեռացնել հողամասով անցնող բարձր հոսանքի էլեկտրական լարերը և հատուցել պատճառված վնասը:

Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի 17.08.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Քաղաքացիական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 05.11.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Գևորգ Անտոնյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Օֆելյա Պետրոսյանը:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) *Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել գործի քննության ժամանակ գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 159-րդ հոդվածը, կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածը, «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասը, որոնք չպետք է կիրառել:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով:

Վերաքննիչ դատարանը, անվավեր ճանաչելով Երևանի քաղաքապետի 21.05.2005 թվականի շուրջ 150 անձանց իրավունքներին վերաբերող թիվ 885-Ա որոշումը, չի պատճառաբանել, թե այդ որոշմամբ պատասխանողի ո՞ր իրավունքն է խախտվել:

Վերաքննիչ դատարանը Երևանի քաղաքապետի որոշումն անվավեր ճանաչելու մասին վճռի հիմքում դրել է Գևորգ Անտոնյանին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին 30.05.2007 թվականի որոշումը և «Փորձագետների եզրակացություն» վերտառությամբ 16.07.2007 թվականի գրությունը: Մինչդեռ դրանք Երևանի քաղաքապետի վերը նշված որոշումն անվավեր ճանաչելու հիմք չեն: Գևորգ Անտոնյանը վարչական պատասխանատվության է ենթարկվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի հիմքով, որը պատասխանատվություն է նախատեսում հողօգտագործման իրավունք չունեցող անձանց կողմից պետությանը և համայնքներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելու համար:

2) *Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ հոդվածը, որը չպետք է կիրառել, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածը, որը պետք է կիրառել:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով:

Օֆելյա Պետրոսյանին պատկանող պարիսպը Գևորգ Անտոնյանի մոտ գտնվելու փաստը Վերաքննիչ դատարանում գործի քննության ժամանակ չի հաստատվել, ուստի Օֆելյա Պետրոսյանը չէր կարող պահանջել Գևորգ Անտոնյանից վերադարձնել այն:

«Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի գրությամբ նշված չեն Օֆելյա Պետրոսյանին պատկանող շինությանը հասցված վնասի պատճառները, ինչպես նաև այն հանգամանքը, որ Գևորգ Անտոնյանի կողմից իրականացված կառույցը կառուցվել է վեճի առարկա պատին կից:

Ավելին, Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ նշված փորձագիտական եզրակացությամբ ուղղակի նշված է, որ Օֆելյա Պետրոսյանին պատկանող «պահակակետ» օժանդակ շինության տանիքի ջրահեռացման համակարգն իրականացված չէ:

3) *Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-62-րդ հոդվածները:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով:

Վերաքննիչ դատարանը, որպես փորձագետի եզրակացություն, գնահատել է «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից տրված «Փորձագետների եզրակացություն» վերտառությամբ գրությունը: Նշված գրությունը չի համապատասխանում ՀՀ - քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-62-րդ հոդվածներով սահմանված փորձագետի եզրակացությանը ներկայացվող պահանջներին, քանի որ որպես այդպիսին դիտվում է բացառապես դատարանի որոշման հիման վրա նշանակված փորձաքննությունը, որի դեպքում փորձագետները նախագրույացվում են կեղծ եզրակացություն տալու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին: Հետևաբար ՀՀ քա-

---

---

ղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի համաձայն՝ այն չի կարող համարվել թույլատրելի ապացույց:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 05.11.2007 թվականի վճիռը և այն փոփոխել՝ հայցը մերժել:

### **2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները**

Օֆելյա Պետրոսյանի իրավունքները խախտվել են ինչպես Երևանի քաղաքապետի 21.05.2005 թվականի թիվ 885-Ա որոշմամբ, այնպես էլ նրա սեփականությունը հանդիսացող պարիսպը որպես սեփական շինության պատ օգտագործելով, սանհանգույցի ինքնակամ կառուցմամբ, ինչպես նաև նրա տարածքում բարձր լարման հոսանքի էլեկտրական լարերի անցկացմամբ:

«Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 16.07.2007 թվականի եզրակացության, ինչպես նաև Նոր Նորքի քաղապետարանի վարչական իրավախախտումների գործերով հանձնաժողովի 22.05.2007 թվականի և 30.05.2007 թվականի նիստերի արձանագրությունների համաձայն՝ Գևորգ Անտոնյանին պատկանող արտադրամասի արտաքին պատը Օֆելյա Պետրոսյանին պատկանող քարե պարիսպն է, Գևորգ Անտոնյանը առանց համապատասխան շինարարական թույլտվության իրականացնում է շինարարություն, որի համար ենթարկվել է վարչական պատասխանատվության:

Վերաքննիչ դատարանը գնահատել է գործում առկա «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 16.07.2007 թվականի եզրակացությունը, որը համապատասխանում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-62-րդ հոդվածների պահանջներին:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) 18.02.2000 թվականի թիվ 4-160 նվիրատվության պայմանագրի հիման վրա՝ Կադաստրի կողմից կատարվել է Օֆելյա Պետրոսյանի սեփականության իրավունքի պետական գրանցում Երևանի Գայի պողոտայի թիվ 57/1 հասցեում գտնվող 0,0978հա հողամասի և 315,4քմ մակերեսով շինության նկատմամբ:

2) Երևանի քաղաքապետի 21.05.2005 թվականի թիվ 885-Ա որոշմամբ Երևանի Գայի պողոտայի 57-րդ շենքի բակում գտնվող 63,5քմ մակերեսով արտադրամասի և 5,7քմ մակերեսով ծածկոցի նկատմամբ ճանաչվել է Գևորգ Անտոնյանի սեփականության իրավունքը, իսկ 69,2քմ հողամասը տրամադրվել է վարձակալությամբ 5 տարի ժամկետով:

3) «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 16.07.2007 թվականի թիվ 06-0050Պ փորձագետների եզրակացության համաձայն՝ Երևանի Գայի պողոտա թիվ 57/1 հասցեում գտնվող վարչական շենքի թիվ 7 սենյակի կախովի առաստաղը, որն իրականացված էր ՊՎԶ նյութով, *հրդեհի հետևանքով* ամբողջովին վնասված և ապամոնտաժված էր:

### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

*1) բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 15-րդ հոդվածով նախատեսված պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի ակտն անվավեր ճանաչելը, որպես քաղաքացիական իրավունքների պաշտպանության միջոց կիրառելի է, եթե այն խախտում է քաղաքացու կամ իրավաբանական անձի քաղաքացիական իրավունքներն ու օրինական շահերը:

Սույն քաղաքացիական գործի քննության ժամանակ գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 159-րդ հոդվածի համաձայն՝ պետական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց՝ օրենքին հակասող ակտերն անվավեր ճանաչելու կամ նրանց գործողությունը (անգործությունը) վիճարկելու համար հիմք են նշված ակտն օրենքին հակասելը և դիմողի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով երաշխավորված իրավունքի և (կամ) ազատության խախտման փաստի առկայությունը:

Նշված նորմը սահմանում է վարչական ակտի՝ դատարանի կողմից անվավեր ճանաչման հնարավորություն՝ բացառապես այն դեպքերում, երբ միաժամանակ առկա են երկու հիմք (պայմաններ): Այդ հիմքերն են՝

1. ակտի հակասելն օրենքին.

2. դիմողի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով երաշխավորված իրավունքի և (կամ) ազատության խախտումը:

Յուրաքանչյուր դեպքում վարչական ակտի իրավաչափությունը վերը նշված հիմքերի սահմաններում որոշելիս դատարանը պետք է ստուգի՝

1. ակտն ընդունած մարմնի (դրա պաշտոնատար անձի) նման ակտ ընդունելու իրավասությունը,

2. տվյալ ակտի նյութական իրավաչափությունը:

Յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ակտի նյութական իրավաչափությունը գնահատելիս դատարանը պետք է ստուգի գործի փաստերը (այդ թվում նաև վարչական ակտն ընդունելու համար հիմք ծառայած փաստերը) և գնահատի յուրաքանչյուր փաստի իրավական հետևանքները (տես՝ օրինակ՝ Ջավադ Ջաֆարիի ընդդեմ ՀՀ ԿԱ մաքսային պետական կոմիտե՝ վարչական տույժ նշանակելու մասին ՀՀ ԿԱ ՄՊԿ հետաքննության և իրավաբանական վարչության պետի 26.04.2006 թվականի որոշումը վերացնելու պահանջի մասին թիվ 3-2133 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.11.2006 թվականի որոշումը):

Սույն քաղաքացիական գործի քննության ժամանակ գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 218-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ վճռի մեջ պետք է նշվեն վերաքննիչ դատարանի կողմից պարզված գործի հանգամանքները, ապացույցները, որոնց վրա հիմնված են վերաքննիչ դատարանի հետևություններն այդ հանգամանքների մասին, և փաստարկները, որոնցով վերաքննիչ դատարանը մերժում է այս կամ այն ապացույցները, ինչպես նաև այն օրենքները, ՀՀ միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է վերաքննիչ դատարանը վճիռ կայացնելիս:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ վճռի թե՛ փաստական և թե՛ իրավական հիմնավորումները:

Վճռի իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ նյութական իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Վճռում ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Վճռի իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա վճռի իրավակիրառ գործառույթը, ընդգծում դատական գործունեության և դատական վճռի օրինականությունը (տես՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն ընդդեմ «Զնար-88» ՍՊԸ-ի, քաղաքացիական գործ թիվ 3-2504/ՏԴ(ՏԴ) (գումար բռնագանձելու պահանջով):

---

---

Սույն քաղաքացիական գործի քննության ժամանակ գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 218-րդ հոդվածից բխում է, որ դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վճիռ կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին (տե՛ս Անժելա Ղազարյան, Արփիկ և Արմինե Գասպարյաններ՝ Ժառանգական գույքը ժառանգների միջև բաժանելու պահանջի մասին քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.12.2007 թվականի թիվ 3-1843(ՎԳ) որոշումը):

Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից գործի քննության ընթացքում պետք է ուսումնասիրվելին գործում առկա բոլոր ապացույցները, վերլուծության ենթարկվելին կողմերի ներկայացրած և դատաքննությամբ հետազոտված ապացույցները՝ դրանցով համապատասխան հանգամանքները հիմնավորված կամ անհիմն համարելու համար:

Մինչդեռ սույն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանը, բավարարելով հայցապահանջը, գնահատման առարկա չի դարձրել այն իրավական հարցը, թե Երևանի քաղաքապետի վիճարկվող որոշումը օրենքի որ նորմին է հակասում: Բացի այդ, սույն քաղաքացիական գործով չի հիմնավորվել Երևանի քաղաքապետի որոշմամբ և վեճի առարկա շինություններով Օֆելյա Պետրոսյանի որևէ իրավունքի խախտման փաստը:

2) բողոքը երրորդ հիմքով հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական աձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից:

Սույն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանը պատասխանողի կողմից հասցված վնասը հատուցելու հայցապահանջի բավարարման հիմքում դրել է «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի փորձագետների եզրակացությունը, որի համաձայն՝ Երևանի Գալի պողոտա թիվ 57/1 հասցեի թիվ 7 սենյակի կախովի առաստաղը, որն իրականացված էր ՊՎԸ նյութով, *հրդեհի հետևանքով* ամբողջովին վնասված և ապամոնտաժված էր:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոնշյալ եզրակացությամբ չի հաստատվում այն հանգամանքը, որ Օֆելյա Պետրոսյանին հասցված վնասը Գ-Լորգ Անտոնյանի կողմից կատարված կառուցապատման պատճառով առաջացած անձրևաջրերի հետևանք է:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը վճռել է վերադարձնել Օֆելյա Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող պարիսպը, առանց հիմնավորելու նշված պարիսպը Գ-Լորգ Անտոնյանի կողմից որպես իր շինության պատ օգտագործելու հանգամանքը:

Նման եզրահանգման համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում նաև «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի փորձագետների թիվ 07-0050Պ եզրակացությունը, որի համաձայն՝ վեճի առարկա պարսպի փոխարեն առկա պատի ուսումնասիրության համար հարկավոր է Գ-Լորգ Անտոնյանի համաձայնությունը, իսկ արտաքին տեսողական զննմամբ անհնար է պարզել, թե Գ-Լորգ Անտոնյանի կողմից պարսպին կից է իրականացվել պատը, թե պարիսպն է օգտագործվում որպես արտադրամասի արտաքին պատ:

3) բողոքը երրորդ հիմքով անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ գործով ապացույցներ են սույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գոր-

ծին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: Այդ տեղեկությունները հաստատվում են՝ փորձագետների եզրակացություններով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի համաձայն՝ գործի քննության ժամանակ ծագող հատուկ գիտելիքներ պարունակող հարցերի պարզաբանման նպատակով՝ **դատարանը կարող է կողմի (կողմերի) միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ փորձաքննություն նշանակել**: Փորձաքննություն նշանակելու մասին դատարանը կայացնում է որոշում, որում սահմանվում են հարցերի ցանկը և բովանդակությունը: **Փորձագետ նշանակելու մասին դատարանը կայացնում է որոշում**:

Վերոնշյալ հոդվածով նախատեսվում է գործի քննության ժամանակ ծագող հատուկ գիտելիքներ պարունակող հարցերի պարզաբանման նպատակով դատարանի կողմից փորձաքննություն նշանակելու հնարավորություն:

Սինչեռ որևէ հոդվածով նախատեսված չէ դատավարության մասնակցի նախաձեռնությամբ անցկացված փորձաքննության անթույլատրելիությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխանում ներկայացված փաստարկները մասնակիորեն հերքվում են վերոնշյալ պատճառաբանություններով:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի առաջին և երկրորդ հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար, ՀՀ քաղաքացիական դատավարություն օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով, վերանայվող դատական ակտը մասնակիորեն քեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Երևանի քաղաքապետի 21.05.2005 թվականի թիվ 885-Ա որոշումն անվավեր ճանաչելու հայցի մասով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը մասնակիորեն փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով Երևանի քաղաքապետի 21.05.2005 թվականի թիվ 885-Ա որոշումն անվավեր ճանաչելու հայցի մասով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը մասնակիորեն փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-2412-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

---

---

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռարեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել Քաղաքացիական վերաքննիչ դատարանի 05.11.2007 թվականի վճռի՝ Երևանի քաղաքապետի 21.05.2005 թվականի թիվ 885-Ա որոշումն անվավեր ճանաչելու, Երևանի Գ-այի պողոտա թիվ 57/1 հասցեում գտնվող շինության պարիսպն օֆեյյա Պետրոսյանին վերադարձնելու և պատճառված վնասը բռնագանձելու մասերը:

2. Վճռի՝ Երևանի քաղաքապետի 21.05.2005 թվականի թիվ 885-Ա որոշումն անվավեր ճանաչելու մասը փոփոխել՝ հայցն այդ մասով մերժել:

3. Վճռի՝ Երևանի Գ-այի պողոտա թիվ 57/1 հասցեում գտնվող շինության պարիսպն օֆեյյա Պետրոսյանին վերադարձնելու և պատճառված վնասը բռնագանձելու մասերով գործն ուղարկել Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

4. Վճռի մնացած մասը թողնել օրինական ուժի մեջ:

5. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒՐՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **3-459 (ՎԳ)**  
**2008**

Քաղաքացիական գործ թիվ 08-1282/2008թ.  
Նախագահող դատավոր՝ Կ.Չիլինգարյան  
Դատավորներ՝ Ա.Խառատյան  
Վ.Ավանեսյան

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ԳՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի հուլիսի 25-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Արշակ Աբրահամյանի և Աստղիկ Սիմոնյանի վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.04.2008 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի «Ի-դի Գ-րուպ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ Արշակ Աբրահամյանի և Աստղիկ Սիմոնյանի՝ վարձակալության պայմանագիրը, վարձակալության իրավունքի պետական գրանցումը մասնակի անվավեր ճանաչելու և հողամասի նկատմամբ վարձակալության իրավունքը ճանաչելու պահանջների մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է Երևանի, Արշակունյաց պողոտայի, թիվ 119 հասցեում գտնվող և Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող 48,2քմ մակերեսով անշարժ գույքի սպասարկման համար անհրաժեշտ 4350քմ հողամասի մասով մասնակի անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետարանի և Արշակ Աբրահամյանի ու Աստղիկ Սիմոնյանի միջև 19.09.2005 թվականին կնքված հողի վարձակալության թիվ 1858/6-ՊՓ պայմանագիրը, այդ պայմանագրից բխող վարձակալության իրավունքի՝ Արշակ Աբրահամյանի և Աստղիկ Սիմոնյանի անվամբ կատարված պետական գրանցումը, Արշակ Աբրահամյանի և Աստղիկ Սիմոնյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը և հողամասի նկատմամբ ճանաչել վարձակալության իրավունքը:

Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ Դատարան) 29.12.2007 թվականի վճռով հայցը մերժվել է:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 11.04.2008 թվականի որոշմամբ Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանի

---

---

29.12.2007 թվականի վճիռը բեկանվել է և գործն ուղարկվել Երևանի քաղաքացիական դատարան՝ նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Արշակ Աբրահամյանը և Աստղիկ Սիմոնյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ընկերությունը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ - հոդվածի և 62-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը պատշաճ գնահատման չի արժանացրել գործում առկա «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի միջնորդությունն ուղղված Երևանի Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանին, որով փորձաքննություն իրականացնելու համար փորձագետը պահանջել է ներկայացնել որոշակի տեղեկություններ: Վերաքննիչ դատարանը գնահատման չի արժանացրել նաև գործում առկա հայցվորի 13.12.2007 թվականի դիմումը, որով վերջինս հայտնել է, որ չունի փորձագետի կողմից պահանջված փաստաթղթերը և չի տիրապետում պահանջված տեղեկություններին ու նյութերին: Հետևաբար, պահանջված փաստաթղթերի և տեղեկությունների բացակայության պայմաններում, փորձաքննության իրականացումն օբյեկտիվորեն անհնար էր, իսկ լրացուցիչ փորձաքննություն նշանակելու մասին հայցվորի միջնորդությունն՝ անհիմն:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 11.04.2008 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանի 29.12.2007 թվականի վճռին:

## **2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վերաքննիչ դատարանն իրավացիորեն պատճառաբանել է, որ վեճի առարկա 48,2քմ մակերեսով շենք-շինության նպատակային օգտագործման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի չափը կարող է որոշվել միայն փորձաքննության միջոցով, և, որ այդ չափի որոշումն էական նշանակություն ունի գործի ճիշտ լուծման համար:

## **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Դատարանում սույն քաղաքացիական գործի քննության ժամանակ Ընկերությունը միջնորդել է նշանակել դատաշինարարատեխնիկական փորձաքննություն:

2. Դատարանը որոշում է կայացրել նշանակել դատաշինարարատեխնիկական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվել է ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի դատաշինարարական փորձագետներին:

3. ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի դատաշինարարական փորձագետները միջնորդել են տրամադրել համապատասխան շինարարական փաստաթղթեր դատաշինարարատեխնիկական փորձաքննություն անցկացնելու համար:

4. Ընկերության 13.12.2007 թվականի դիմումով, վերջինս հայտնել է, որ չունի փորձագետի կողմից պահանջված փաստաթղթերը և չի տիրապետում պահանջված տեղեկություններին ու նյութերին: Պահանջվող փաստաթղթերի բացակայության պատճառով փորձաքննությունն անկատար է մնացել, ինչը ձևակերպվել է համապատասխան եզրակացությամբ:

5. Դատարանում սույն քաղաքացիական գործի քննության ժամանակ Ընկերությունը կրկին անգամ միջնորդություն է ներկայացրել դատաշինարարատեխնիկական փորձաքննություն նշանակելու համար, սակայն Դատարանն այն մերժել է:

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

Դատարանում սույն քաղաքացիական գործի քննության ժամանակ գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը փորձաքննություն նշանակում է կողմի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ: Վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացված որոշումներում արդեն իսկ անդրադարձել է փորձաքննություն նշանակելու միջնորդության քննարկման հարցին և նշել, որ դատարանի նախաձեռնությամբ փորձաքննություն նշանակելու իրավասությունը դատարանն իրականացնում է դատական հայեցողության իրավունքով՝ ելնելով հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակից (տե՛ս՝ Ռազմիկ Սարգսյան և Լիդա Սևոյան ընդդեմ Ռաֆիկ Հախվերդյանի՝ առուվաճառքի պայմանագիրը լուծելու պահանջի մասին քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 02.03.2007 թվականի թիվ 3-259 (ՎԳ) որոշումը):

Չնայած երկրորդ անգամ փորձաքննություն նշանակելու վերաբերյալ Ընկերության միջնորդությունը մերժելու վերաբերյալ Դատարանի որոշումը պատճառաբանված չէ, սակայն Վճռաբեկ դատարանը, սույն քաղաքացիական գործի փաստերի հաշվառմամբ, գտնում է, որ փորձաքննություն նշանակելու մասին Ընկերության միջնորդության մերժումն օրինաչափ է և բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Նման եզրահանգման համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում այն հանգամանքը, որ Դատարանում սույն քաղաքացիական գործի քննության ընթացքում նշանակված փորձաքննության իրականացումը մեկ անգամ արդեն իսկ անկատար է մնացել ներկայացված հարցերին պատասխանելու համար Ընկերության կողմից տրամադրման ենթակա փաստաթղթերի բացակայության պատճառով, իսկ նոր փորձաքննություն նշանակելու միջնորդության ներկայացման ժամանակ Ընկերությունը չի ներկայացրել նախորդ փորձաքննության արդյունքներով անհրաժեշտ համարված փաստաթղթերը: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ փորձաքննության կատարման համար պահանջվող փաստաթղթերի բացակայության պայմաններում կրկին անգամ փորձաքննության անցկացումը անհարկի կձգձգեր գործի քննությունը՝ հակասելով արդարադատության արդյունավետության շահերին:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարություն օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով վերանայվող դատական ակտը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահե-

---

---

րից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.04.2008 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանի 29.12.2007 թվականի վճռին:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՈՒՐՆԵՐ ԴԱՏԱՐԱՆ**

Վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում  
Քաղաքացիական գործ թիվ 08-508  
Նախագահող դատավոր՝ Ս.Սիքայեյան  
Դատավորներ՝ Ն.Տավարացյան  
Դ.Խաչատրյան

Քաղաքացիական գործ թիվ **3-495(ՎԳ)**  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ Հ.ՍԱՆՈՒԿՅԱՆԻ  
մասնակցությամբ դատավորներ ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ*

2008 թվականի սեպտեմբերի 26-ին

քննարկելով «Բալենի» արտադրական կոոպերատիվի (այսուհետ՝ Կոոպերատիվ) վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.05.2008 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ջինա Ալբերտյանի ընդդեմ Կոոպերատիվի, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Էրեբունի տարածքային ստորաբաժանման (այսուհետ՝ Կադաստր) Կոոպերատիվի անվամբ սեփականության իրավունքի գրանցումը մասնակի անվավեր ճանաչելու, շենքի կրող կոնստրուկցիա հիմնապատը վերականգնելու, դեպի նկուղ աջակողմյան աստիճանավանդակի (լուսամուտի տակի) մուտքը փակելու, սեփականատիրոջ իրավունքների իրականացման խոչնդոտները վերացնելու, և ըստ Կոոպերատիվի հակընդդեմ հայցի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, Ջինա Ալբերտյանի, երրորդ անձ Կադաստրի՝ Երևանի քաղաքապետի ճարտարապետահատակագծային առաջադրանքը և շինարարության թույլտվությունը անվավեր ճանաչելու պահանջների մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործով կայացված դատական ակտի էությունը.**

Դիմելով դատարան՝ Ջինա Ալբերտյանը պահանջել է մասնակի անվավեր ճանաչել՝ Կոոպերատիվի անվամբ սեփականության իրավունքի 05.11.2007 թվականի գրանցումը, Կոոպերատիվի նախագահ Աշոտ Մարտիրոսյանին պարտավորեցնել վերականգնել շենքի կրող կոնստրուկցիա հանդիսացող հենապատը, փակել Ջինա Ալբերտյանի պատուհանի տակ գտնվող և դեպի նկուղ տանող աստիճանավանդակի մուտքը:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Կոոպերատիվը պահանջել է անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետի ճարտարապետահատակագծային առաջադրանքը և շինարարության թույլտվությունը:

Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանի 29.12.2007 թվականի վճռով հայցը մերժվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ բավարարվել:

---

---

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 04.05.2008 թվականի որոշմամբ Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանի 29.12.2007 թվականի որոշումը մասնակիորեն բեկանվել է և փոփոխվել. որոշվել է Ջինա Ալբերտյանի հայցապահանջն ընդդեմ Կոոպերատիվի, ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Էրեբունի տ/ս-ի՝ սեփականատիրոջ իրավունքների իրականացման խոչընդոտները վերացնելու մասով, բավարարել, հայցը մնացած մասով մերժելու վերաբերյալ Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանի 29.12.2007 թվականի վճիռը թողնել օրինական ուժի մեջ: Կոոպերատիվի հակընդդեմ հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոոպերատիվը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ջինա Ալբերտյանը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

*1. Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին մասը, 54-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը ապացույցների կազմից հանել է և չի գնահատել ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից 17.12.2007 թվականին տրված մասնագիտական եզրակացությունը՝ գնահատման առարկա չդարձնելով այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի համաձայն այն նույնպես գրավոր ապացույց է:

*2. Վերաքննիչ դատարանը չի կիրառել «Բազմաբնակարան շենքերի կառավարման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասը, որը պետք է կիրառել:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ բնակարանը գտնվում է Բագրատունյաց պաղոտայի վրա, հետևաբար, բնակարանի պատուհանի վերածումը դռան, բնակարանի նպատակային նշանակության փոփոխությունը բնակելիից ոչ բնակելի, ինչպես նաև բնակարանի ներքին կառուցվածքային փոփոխությունները վկայում են այն մասին, որ բնակարանը ոչ բնակելի տարածքի վերածելը հետապնդում է միմիայն առևտրային նպատակ: Հետևաբար, վերոնշյալ շիանարարական աշխատանքները կարող էին իրականացվել միայն շենքի բոլոր սեփականատերերի համաձայնությամբ, որը սույն քաղաքացիական գործում բացակայում է:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 04.05.2008 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանի 29.12.2007 թվականի վճիռ:

### **2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանում ներկայացված փաստարկները:**

Բողոք բերող անձի կողմից հիշատակված՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության մասնագիտական եզրակացությունը չի կարող գնահատվել որպես գրավոր ապացույց, քանի որ նրանում չի նշվել, թե քաղաքաշինության եւ ճարտարապետահատակագծային ո՛ր նորմերին չեն համապատասխանում այն փաստաթղթերը, որոնց հիման վրա տրվել է բնակարանի լուսամուտը դռան վերակառուցելու վերաբերյալ թույլտվությունը, իսկ եզրակացության 4-րդ կետում կատարված եզրակացությունները հիմնավորված չեն համապատասխան հաշվարկներով: Բացի այդ, նշված փոփոխությունների արդյունքում չի նվազել պատասխանողի լուսավորությունը և մուտքի սպասարկման համար չեն ստեղծվել անհարմարություններ:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչության կողմից 17.12.2007 թվականին տրվել է մասնագիտական եզրակացություն՝ Երևանի Բագրատունյաց փողոցի թիվ 14 շենքի թիվ 40 բնակարանից Ջինա Ալբերտյանի կողմից նոր մուտքի կազմակերպման օրինականության մասին, որով հաստատվում է համապատասխան շինարարական աշխատանքների հետևանքով Կոոպերատիվի սեփականության իրավունքի խախտման փաստը:

2. Ջինա Ալբերտյանին պատկանող բնակարանի նախագծային փաստաթղթերում կատարված փոփոխությունների արդյունքում փոխվել է բնակարանի նպատակային նշանակությունը, այն է՝ բնակելի տարածքը վերածվել է ոչ բնակելի տարածքի:

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ.

1) բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի համաձայն՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը, հաստատվում են նաև գրավոր և իրենդեն ապացույցներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ գրավոր ապացույցներ են **գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների մասին տեղեկություններ պարունակող** ակտերը, պայմանագրերը, տեղեկանքները, գործարար թղթակցությունը, այլ **փաստաթղթերը և նյութերը**, այդ թվում՝ էլեկտրոնային կամ կապի այլ միջոցով կամ փաստաթղթերի իսկությունը հաստատելու հնարավորություն ընձեռող այլ եղանակով ստացված ապացույցները:

Սույն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանը որպես ապացույց չի գնահատել ՀՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչության մասնագիտական եզրակացությունը՝ պատճառաբանելով, որ ապացույցի նման տեսակ նախատեսված չէ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածով:

Մինչդեռ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ և 54-րդ հոդվածներից հետևում է, որ գրավոր ապացույցներ կարող են հանդիսանալ համապատասխան քաղաքացիական գործով ապացուցման առարկան կազմող հանգամանքները բացահայտող տեղեկատվություն պարունակող ցանկացած փաստաթուղթ, եթե հնարավոր է հաստատել դրա իսկությունը:

Մասնավորապես, ՀՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչության եզրակացությամբ հաստատվում է Ջինա Ալբերտյանի կողմից իրականացվող շինարարական աշխատանքներով Կոոպերատիվի սեփականության իրավունքի խախտման փաստը, որը հանդիսանում է սույն քաղաքացիական գործի համար էական նշանակություն ունեցող հանգամանք:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհիմն է նշված եզրակացությունը որպես ապացույց չդիտելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունը:

2) բողոքն երկրորդ հիմքով անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

«Բազմաբնակարան շենքերի կառավարման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ - մասի համաձայն՝ շինության սեփականատերն իրավունք ունի առանց մյուս սեփականա-

---

---

տերերի համաձայնության, **ոչ առևտրային նպատակներով**, իր շինության պատերից բացել կամ փակել պատուհաններ, դռներ, մուտքեր, ծխնելույզներ, պատերի այլ բացվածքներ, աստիճանավանդակներ, աստիճաններ, իր շինության ներքին կամ արտաքին պատերի վրա կամ դրանց կից իրականացնել այլ քաղաքաշինական գործունեություն (ներառյալ այն դեպքերը, երբ այդ պատերն ամբողջությամբ կամ մասնակիորեն հանդիսանում են ընդհանուր բաժնային սեփականություն):

Դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Մինչդեռ, սույն քաղաքացիական գործով, Ջինա Ալբերտյանին պակասող բնակարանի նպատակային նշանակության փոփոխումը ոչ բնակելի տարածքի, բավարար հիմք չէ դրա՝ առևտրային նպատակ ունենալու փաստը հաստատված համարելու համար:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի առաջին հիմքի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի համաձայն, Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-240<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.05.2008 թվականի որոշումը և գործն ուղարկել Վարչական դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում  
Քաղաքացիական գործ թիվ 0351/02/08  
Նախագահող դատավոր՝ Տ.Սահակյան  
Դատավորներ՝ Կ.Հակոբյան  
Տ.Նազարյան

Քաղաքացիական գործ թիվ **0351/02/08-(ԸԴ)**  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ վճռաբեկ  
դատարան)

*նախագահությամբ* Ա.ՍԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի հոկտեմբերի 31-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Չապ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.04.2008 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Գյումրու քաղաքապետարանի (այսուհետ՝ Քաղաքապետարան) ընդդեմ Ընկերության՝ սեփականատիրոջ իրավունքների խախտումները վերացնելու պահանջի մասին և ըստ Ընկերության հայցի ընդդեմ Քաղաքապետարանի՝ հարկադիր սերվիտուտ սահմանելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Քաղաքապետարանը պահանջել է Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Վ.Սարգսյան փողոց թիվ 6/1 հասցեում գտնվող հեռուստաաշտարակից ապամոնտաժել Ընկերությանը պատկանող բոլոր սարքավորումները և հեռուստաաշտարակը վերադարձնել:

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է սահմանել հարկադիր սերվիտուտ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Վ. Սարգսյան փողոց թիվ 6/1 հասցեում գտնվող հեռուստաաշտարակի և փաստացի զբաղեցրած 26,04 քմ հողատարածքի օգտագործման համար:

Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 06.02.2008 թվականի որոշմամբ քաղաքացիական գործերը միացվել են մեկ վարույթում:

Դատարանի 29.02.2008 թվականի վճռով Քաղաքապետարանի հայցը բավարարվել է, իսկ Ընկերության հայցը՝ մերժվել:

---

---

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 14.04.2008 թվականի որոշմամբ Դատարանի 29.02.2008 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:  
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածը, 28-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, 60-րդ հոդվածի 1-ին մասը, 119-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, չի կիրառել ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ ընդհանուր իրավասության դատարանում գործի քննության ընթացքում Ընկերության ներկայացուցիչ, փաստաբան Կ. Թումանյանը «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն գրությամբ դիմել էր ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի նախագահ Գ. Ամալյանին՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն, թե արդյո՞ք «ԳԱԼԱ» հեռուստաընկերությունը նույն ծավալով և նույն ծածկույթով կարող է հեռուստահաղորդումների հեռարձակման 33-րդ կապուղին շահագործել այլ կերպ, քան Գյումրի քաղաքի Վ. Մարգարյան փող. 6/1 հասցեում գտնվող հեռուստաաշտարակի վրա համապատասխան սարքավորումներ տեղադրելու միջոցով: Ընկերությունը տվյալ տեղեկատվությունը օրենքով սահմանված ժամկետում չէր ստացել և այն ստանալու համար միջնորդել էր Դատարանին գործի քննությունը հետաձգել՝ հնարավորություն ընձեռելով տվյալ ապացույցը ներկայացնելու: Մակայն Դատարանը միջնորդությունը մերժել էր՝ պատճառաբանելով, որ Ընկերությունը բավարար ժամանակ էր ունեցել տվյալ ապացույցը ներկայացնելու համար:

Բացի այդ, Ընկերությունը միջնորդություն էր ներկայացրել «դատատեխնիկական-չինարարական փորձաքննություն նշանակելու մասին» փորձագետին առաջադրելով համապատասխան հարցեր: Ընկերությունը տվյալ միջնորդությամբ նպատակ էր ունեցել անհարժեշտ մասնագետի միջոցով Դատարան ներկայացնել հատակագիծ ծանրաբեռնված գույքի վերաբերյալ՝ սերվիտուտով ծանրաբեռնված գույքի նշագծումով: Դատարանի կողմից տվյալ միջնորդությունը նույնպես մերժվել էր:

Փաստորեն, վերը նշված նորմերի խախտման արդյունքում Ընկերությունը զրկվել էր դատաքննության ընթացքում հավասար և մրցակցային պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ իր պահանջը հիմնավորելու հնարավորությունից, որի արդյունքում դատավարության մյուս կողմը՝ Քաղաքապետարանը, հայտնվել էր ավելի շահեկան դիրքում:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 14.04.2008 թվականի որոշումը և գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:

## **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի նախագահ Գ. Ամալյանի կողմից 23.02.2005 թվականին տրված թիվ 98 լիցենզիայի համաձայն՝ Ընկերու-

յան գործունեության տեսակն է՝ հեռուստահաղորդումների հեռարձակումը, սփռման տարածքը՝ ք. Գյումրին, հեռուստահաղորդումների հեռարձակման կապուղին՝ 33-րդը, լիցենզիայի գործողության ժամկետը՝ առ 23.02.2012 թվականը:

2. Շիրակի մարզի, Գյումրի քաղաքի, Վ. Սարգսյան փողոց թիվ 6/1 հասցեում գտնվող հեռուստաաշտարակը սեփականության իրավունքով պատկանում է Բաղաքապետարանին:

3. Ընկերությունը 25.02.2008 թվականի գրությամբ՝ ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի նախագահ Գ. Ամալյանից խնդրել է տրամադրել տեղեկատվություն՝ Ընկերությունը նույն ծավալով և նույն ծածկույթով կարող է հեռուստահաղորդումների հեռարձակման 33-րդ կապուղին շահագործել այլ կերպ, քան Գյումրի քաղաքի Վ. Սարգսյան փողոց թիվ 6/1 հասցեում գտնվող հեռուստաաշտարակի վրա համապատասխան արքավորումներ տեղադրելու միջոցով:

4. Ընկերության 25.02.2008 թվականի դատատեխնիկական-շինարարական փորձաքննություն նշանակելու մասին միջնորդության համաձայն՝ Ընկերությունը խնդրել է նշանակել դատատեխնիկական-շինարարական փորձաքննություն՝ փորձագետներին առաջադրելով համատասխան հարցեր: Դատարանի կողմից միջնորդությունը մերժվել է:

5. Ընկերության 26.02.2008 թվականի գործի քննությունը հետաձգելու միջնորդության համաձայն՝ Ընկերությունը խնդրել է հետաձգել գործի քննությունը 25.02.2008 թվականի գրության պատասխանը ներկայացնելու համար: Դատարանի կողմից միջնորդությունը մերժվել է:

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.**

Քննելով վճռաբեկ բողոքը վերը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական դատավարությունն իրականացվում է կողմերի մրցակցության և իրավահավասարության հիման վրա:

Նույն օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ գործին մասնակցող անձինք իրավունք ունեն ներկայացնել ապացույցներ և մասնակցել դրանց հետազոտմանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ դատարանն իրավունք ունի հետաձգել գործի քննությունը, եթե դա թելադրված է լրացուցիչ ապացույցներ ներկայացնելու անհրաժեշտությամբ:

Վերը նշված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ դատարանի գործի քննության հետաձգման հայեցողական իրավունքը, կարող է իրականացվել, եթե դա թելադրված է լրացուցիչ ապացույցներ ներկայացնելու անհրաժեշտությամբ:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է այս կամ այն հայեցողական լիազորությունն իրականացնելու դատարանի իրավունքին (տես՝ Արբերտ Հակոբյանն ընդդեմ «Դավիթ Երթուղային Տաքսի» ՓԲԸ-ի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին թիվ 3-346(ՏԴ) Վճռաբեկ դատարանի 18.05.2007 թվականի որոշումը):

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ այս կամ այն հայեցողական լիազորությունն իրականացնելու դատարանի իրավունքը բացարձակ բնույթ չի կրում, և դրա իրականացման նպատակահարմարության հարցն անհրաժեշտ է որոշել՝ ելնելով դատավարության մրցակցության և կողմերի իրավահավասարության դատավարական սկզբունքների էությունից:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատավարությունում կողմերի իրավահավասարության սկզբունքը՝ կողմերի միջև «արդարացի հավասարակշռության» իմաստով, հանդիսանում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդար դատաքննության հիմնական տարրերից մեկը և պահանջում է, որպեսզի յուրաքանչյուր կողմին տրամադրվի ողջամիտ հնարավորություն՝ ներկայացնելու իր գործը այնպիսի պայմաններ

---

---

րում, այդ թվում՝ ապացույցներ ներկայացնելու, որոնք նրան իր հակառակորդի նկատմամբ չեն դնի էականորեն նվազ բարենպաստ վիճակում (տես՝ Անկերլն ընդդեմ Շվեյցարիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 23.10.1996 թվականի որոշումը):

Սույն գործի փաստերի համաձայն՝ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Վ. Սարգսյան փողոց թիվ 6/1 հասցեում գտնվող հեռուստաաշտարակը սեփականության իրավունքով պատկանում է Քաղաքապետարանին: 23.02.2005 թվականին տրված թիվ 98 լիցենզիայի հիման վրա՝ Ընկերության գործունեության տեսակն է հեռուստահաղորդումների հեռարձակումը, սփռման տարածքը՝ ք. Գյումրին, հեռուստահաղորդումների հեռարձակման կապուղին՝ 33-րդը, լիցենզիայի գործողության ժամկետը՝ մինչև 23.02.2012 թվականը: Ընկերությունը 25.02.2008 թվականին միջնորդություն է ներակայացրել դատատեխնիկական-շինարարական փորձաքննություն նշանակելու մասին՝ փորձագետներին առաջադրելով համատասխան հարցեր, որը Դատարանի կողմից մերժվել է: 25.02.2008 թվականի գրությամբ՝ Ընկերությունը դիմել է ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի նախագահ Գ.Ամալյանին և խնդրել է տրամադրել տեղեկատվություն՝ Ընկերությունը նույն ծավալով և նույն ծածկույթով կարող է հեռուստահաղորդումների հեռարձակման 33-րդ կապուղին շահագործել այլ կերպ, քան Գյումրի քաղաքի Վ. Սարգսյան փողոց թիվ 6/1 հասցեում գտնվող հեռուստաաշտարակի վրա համատասխան սարքավորումներ տեղադրելու միջոցով, այնուհետև 26.02.2008 թվականին միջնորդություն է ներկայացրել գործի քննությունը հետաձգելու մասին՝ 25.02.2008 թվականի գրության պատասխանը ներկայացնելու համար, որը Դատարանի կողմից նույնպես մերժվել է:

Սույն գործի փաստերի համադրության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերության 25.02.2008 թվականի դատատեխնիկական-շինարարական փորձաքննություն նշանակելու մասին, 26.02.2008 թվականի գործի քննությունը հետաձգելու մասին միջնորդությունները Դատարանի կողմից մերժվելիս Ընկերությունը գրկվել է իր գործը Դատարանին արդյունավետ ներկայացնելու հնարավորությունից, որով խախտվել են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածով երաշխավորված կողմերի իրավահավասարության և մրցակցության հիմնարար սկզբունքները:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.04.2008 թվականի որոշումը և գործն ուղարկել Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՈՒՐՆԵՐ ԴԱՏԱՐԱՆ**

Վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **3-710(ՎԳ)**  
**2008թ.**

Քաղաքացիական գործ թիվ 08-1831

Նախագահող դատավոր՝ Տ.Սահակյան  
Դատավորներ՝ Կ.Հակոբյան  
Տ.Նազարյան

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**Հ Ա Ն ՈՒ Ն Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ  
դատարան)

*նախագահությամբ* Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Դ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ. ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի դեկտեմբերի 26-ին,

դռնբաց դատական նիստում, քննելով «Առեքսիմբանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.07.2008 թվականի որոշման դեմ՝ ըստ դիմումի Արթուր Հունանյանի ընդդեմ ՀՀ ԱՆ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևանի ստորաբաժանման (այսուհետ՝ Ծառայություն) հարկադիր կատարողի և Ընկերության՝ Ծառայության ավագ հարկադիր կատարողի 14.01.2004 թվականի որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Արթուր Հունանյանը պահանջել է անվավեր ճանաչել գումար բռնագանձելու վերաբերյալ կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի 14.01.2004 թվականի որոշումը:

Աջափնյակ և Դավթաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 19.01.2005 թվականի վճռով Արթուր Հունանյանի դիմումը բավարարվել է:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 02.07.2008 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, Աջափնյակ և Դավթաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 19.01.2005 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) *Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ, 219-րդ հոդվածների պահանջները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Գործի նյութերում առկա է Վճռաբեկ դատարանի 26.05.2005 թվականի որոշումը, որով հաստատվել է Ընկերության, Արթուր Հունանյանի և Լուսյա Անուշյանի հաշտության համաձայնությունը, որն իր մեջ ներառում է սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքներ: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը, Վճռաբեկ դատարանի որոշումը ոչ միայն բավարար հիմք չի համարել սույն գործի լուծման համար, այլև դատական ակտում ապացուցված հանգամանքները կրկին է քննարկել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 02.07.2008 թվականի որոշումը և գործի վարույթը կարճել:

## **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 29.01.2001 թվականի թիվ 2-197 կատարողական թերթի համաձայն՝ Արթուր Հունանյանից հօգուտ «Առէքսիմբանկ» ՓԲԸ-ի պետք է բռնագանձել 23.963 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ՝ բռնագանձումը տարածելով գրավադրված գույքի՝ ք. Երևան, Վարդանանց փողոցի 7-րդ շենքի թիվ 33 բնակարանի վրա:

2. Գույքը հանձնելու մասին 15.11.2001թ. պայմանագրի համաձայն՝ հարկադիր կատարողը գրավադրված՝ Վարդանանց փողոցի 7-րդ շենքի 33-րդ բնակարանը, կայացած աճուրդի 22.400 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ մեկնարկային գնով, սեփականության իրավունքով հանձնել է պարտատիրոջը, իսկ վերջինս ընդունել է գույքը գրավով ապահովված պահանջի համապատասխան գումարի դիմաց:

3. ՀՀ ԱՆ ԳԱՀԿ ծառայությանը հասցեագրված Ընկերության 12.01.2004թ. թիվ 07/16 գրության համաձայն՝ 10.01.2004 թվականի դրությամբ, Արթուր Հունանյանի պարտքը «Առէքսիմբանկ» ՓԲԸ-ին կազմում է 12.558,41 ԱՄՆ դոլար (այդ թվում՝ գումարի նկատմամբ հաշվարկված բանկային տոկոսները):

4. Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 25.12.2003 թվականի վճռով ճանաչվել է Արթուր Հունանյանի սեփականության իրավունքը ք. Երևան, Վարդանանց փողոց 7-րդ շենք, թիվ 33 բնակարանի վրա կառուցված 148 քմ ընդհանուր մակերեսով վերնահարկի և ձեղնահարկի նկատմամբ:

5. Ընկերության պահանջով ՀՀ ԱՆ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության Երևանի բաժնի ավագ հարկադիր կատարողի 14.01.2004թ. որոշմամբ 29.01.2001թ.-ի թիվ 2-197 կատարողական թերթի հիման վրա հարուցվել է կատարողական վարույթ, որի ընթացքում հարկադիր կատարողի 14.01.2004 թվականի որոշմամբ արգելանք է դրվել ք. Երևան, Վարդանանց 7-րդ շենք, թիվ 33 բնակարանի վրա կառուցված 148 քմ ընդհանուր մակերեսով վերնահարկի և ձեղնահարկի, ինչպես նաև այլ գույքի վրա՝ 12.558,41 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով:

6. Հարկադիր կատարողի 15.09.2004թ. որոշմամբ կարճվել է 14.01.2004 թվականի որոշմամբ հարուցված կատարողական վարույթը՝ կատարողական թերթի պահանջները փաստացի կատարելու հիմքով:

7. Վճռաբեկ դատարանի 26.05.2005թ. թիվ 3-337 (ՎԳ) որոշման համաձայն՝ Վճռաբեկ դատարանը, քննարկելով ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 16.12.2004թ. վճռի դեմ Արթուր Հունանյանի ներկայացուցչի վճռաբեկ բողոքը քաղաքացիական գործով քստ հայցի Արթուր Հունանյանի ընդդեմ ՀՀ ԱՆ դատական ակտերի

հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևանի ստորաբաժանման՝ աճուրդն անվավեր ճանաչելու պահանջի մասին, և ըստ հայցի Լուսյա Անուշյանի ներկայացուցչի ընդդեմ ՀՀ ԱՆ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևանի ստորաբաժանման՝ աճուրդը և աճուրդով գնված բնակարանի առուծախի պայմանագիրն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի մասին, որոշել է հաստատել կողմերի միջև կնքված հաշտության համաձայնությունը և կարճել քաղաքացիական գործի վարույթը:

Հաշտության համաձայնության 2-րդ կետում նշված է, որ Ընկերությունն ընդունում է, որ «Երևանի Վարդանանց փողոց 7-րդ շենք թիվ 33 ա /վերնահարկ և ձեղնահարկ/ բնակարանը վերաձևակերպվի Արթուր Հունանյանի անվամբ կամ գրանցված մնա և տրվի սեփականության իրավունքի վկայական», իսկ 4-րդ կետով սահմանվել է, որ հաշտության համաձայնությունը պալատի կողմից հաստատվելուց հետո կողմերը միմյանց նկատմամբ որևէ պահանջ /բացառությամբ հաշտության համաձայնության պարտավորություններից/ չունեն:

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.**

*Քննելով վճռաբեկ բողոքը վերը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ դատարանն իրավունք չունի նոր ապացույց ընդունելու և բողոքը քննելիս հիմնվում է միայն այն ապացույցների վրա, որոնք ներկայացվել են առաջին ատյանի դատարանին: Եթե առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ ապացույցը չի ներկայացվել կողմերի կամքից անկախ հանգամանքներով, ապա վերաքննիչ դատարանը բեկանում է գործը և այն ուղարկում համապատասխան առաջին ատյանի դատարան՝ նոր քննության, եթե գտնում է, որ ապացույցն էական նշանակություն ունի գործի լուծման համար:

Սույն գործի վերաքննության փուլում Ընկերության կողմից ներկայացվել է Վճռաբեկ դատարանի 26.05.2005թ. թիվ 3-337 (ՎԳ) որոշումը, որը թե հայցվորը և թե պատասխանողը հնարավորություն չեն ունեցել ներկայացնելու ստորադաս դատարան, քանի որ այն Վճռաբեկ դատարանի կողմից հրապարակվել է սույն գործի՝ առաջին ատյանի դատարանում դատաքննության ավարտից հետո: Բացի այդ, վերոնշյալ դատական ակտն էական նշանակություն ունի գործի քննության համար, քանի որ դրանով հաստատվել է կողմերի հաշտության համաձայնությունը:

Այսպիսով, սույն գործի փաստերից հետևում է, որ Վճռաբեկ դատարանի 26.05.2005թ. թիվ 3-337 (ՎԳ) որոշումն առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ չի ներկայացվել կողմերի կամքից անկախ հանգամանքներով, և նշված ապացույցն էական նշանակություն ունի գործի լուծման համար: Հետևաբար, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի հիմքով, պետք է բեկաներ Աջափնյակ և Դավթաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 19.01.2005 թվականի թիվ 2-203 վճիռը և գործն ուղարկեր ստորադաս դատարան՝ նոր քննության:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարություն օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

---

---

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.07.2008 թվականի որոշումը, և գործն ուղարկել Վարչական դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՈՒՐՆԵՐ ԴԱՏԱՐԱՆ**

Վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում  
Քաղաքացիական գործ թիվ 08-1070  
Նախագահող դատավոր՝ Կ.Հակոբյան  
դատավորներ՝ Տ.Սահակյան  
Տ.Նազարյան

Քաղաքացիական գործ թիվ **3-734(ՎԳ)**  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ վճռաբեկ  
դատարան)

*նախագահությամբ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ե.ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ԳՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի նոյեմբերի 28-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Արմենակ և Գուլյա Սահակյանների վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.02.2008 թվականի որոշման մասի դեմ՝ ըստ Արմենակ և Գուլյա Սահակյանների հայցի ընդդեմ ՀՀ կենտրոնական բանկի՝ նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված ավանդի գումարը փոխհատուցելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Գիմելով դատարան՝ Արմենակ և Գուլյա Սահակյանները պահանջել են բռնագանձել ՀՀ կենտրոնական բանկից իրենց կողմից նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում դրամական ավանդ դրված 22.768 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ գումարի կեսը՝ 11.350 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:

Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 09.11.2007 թվականի վճռով հայրը մերժվել է:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 29.02.2008 թվականի որոշմամբ Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 09.11.2007 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ: Միաժամանակ որոշվել է Արմենակ և Գուլյա Սահակյաններից հոգուտ պետական բյուջեի բռնագանձել 340 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես չվճարված պետական տուրքի գումար:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Արմենակ և Գուլյա Սահակյանները:  
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

---

---

## **2. Վճարեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճարեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը չի կիրառել «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 21-րդ - հոդվածի ա) կետը, 31-րդ հոդվածի գ) կետը, որոնք պետք է կիրառեր, և կիրառել է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի դ) կետը, որը չպետք է կիրառեր:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Արմենակ և Գուլյա Սահակյանները, լինելով կենսաթոշակառուներ, 2-րդ խմբի հաշմանդամներ, չունենալով բավարար նյութական միջոցներ և պետական տուրքը որևէ ձևով վճարելու հնարավորություն, վերաքննիչ բողոքին կից ներկայացված 21.11.2007 թվականի դիմումով խնդրել են ազատել իրենց պետական տուրքի վճարումից:

Սինչդեռ Վերաքննիչ դատարանը, անտեսելով 21.11.2007 թվականի դիմում-միջնորդության քննարկման համար էական նշանակություն ունեցող փաստերը, «Պետական տուրքի վճարումը տարաժամկետելու և վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին» 18.12.2007 թվականի որոշմամբ քննարկել և բավարարել է Արմենակ և Գուլյա Սահակյանների՝ «Պետական տուրքի վճարումը տարաժամկետելու մասին» միջնորդությունը, այնինչ այդպիսի միջնորդություն բողոք բերողների կողմից ընդհանրապես չի ներկայացվել:

Ավելին, Վերաքննիչ դատարանը, պետական տուրքի վճարումից ազատելու մասին միջնորդությունը վերածելով պետական տուրքի վճարումը տարաժամկետելու մասին միջնորդության, ըստ էության ինքնուրույն փոփոխել է բուն դիմում-միջնորդության իմաստն ու բովանդակությունը՝ դրանով իսկ դուրս գալով դիմումի շրջանակներից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են մասնակիորեն բեկանել Վերաքննիչ դատարանի 29.02.2008 թվականի որոշումը և այն փոփոխել՝ ազատել իրենց պետական տուրքի վճարումից:

## **3. Վճարեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճարեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Արմենակ և Գուլյա Սահակյանների 21.11.2007 թվականի դիմումի համաձայն՝ Արմենակ և Գուլյա Սահակյանների ընտանիքը ապրում է միայն կենսաթոշակով և գտնվում է ֆինանսական ծանր վիճակում. չեն կարողանում դեղորայք գնել, հնարավորություն չունեն վճարել պետական տուրքը, խնդրել են վերաքննիչ բողոքն ընդունել առանց պետական տուրքի վճարման:

2. Վերաքննիչ դատարանի 18.12.2007 թվականի որոշմամբ Արմենակ և Գուլյա Սահակյանների կողմից ներկայացված վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ, սակայն պետական տուրքի վճարումը տարաժամկետվել է:

3. Արմենակ և Գուլյա Սահակյանները կենսաթոշակառուներ են և երկրորդ խմբի հաշմանդամներ:

## **4. Վճարեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.**

Քննելով վճարեկ բողոքը վերը նշված հիմքի սահմաններում՝ Վճարեկ դատարանը գտնում է, որ վճարեկ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի ա) կետի համաձայն՝ պետական տուրքի գծով կարող են սահմանվել հետևյալ արտոնությունները՝ պետական տուրքի վճարումից ազատում, իսկ նույն հոդվածի դ) կետի համաձայն՝ պետական տուրքի վճարման ժամկետի հետաձգում:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի դ) կետի համաձայն՝ առանձին վճարողների կամ վճարողների խմբերի համար պետական տուրքի գծով արտոնություններ կարող են սահմանել դատարանները կամ դատավորները՝ նույն օրենքի 9 հոդվածում նշված առանձին գործերով՝ **ելնելով կողմերի գույքային դրությունից**:

Վերը նշված հոդվածներից հետևում է, որ դատարաններում պետական տուրքի գծով արտոնություն, **այդ թվում պետական տուրքի վճարումից ազատման տեսքով**, կարող են սահմանել նաև դատարանները կամ դատավորները՝ **հաշվի առնելով կողմերի գույքային դրությունը**, որն ուղղված է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ - Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ յուրաքանչյուր անձի դատական պաշտպանության իրավունքի լիարժեք իրականացմանը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական պաշտպանության իրավունքը կարող է սահմանափակվել, սակայն կիրառվող սահմանափակումները չպետք է լինեն այն աստիճան, որ խաթարեն այդ իրավունքի բուն էությունը: Սահմանափակումը անհամատեղելի կլինի 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի և եթե չլինի ողջամիտ հավասարակշռված կապ գործադրվող միջոցների և հետապնդվող նպատակի միջև (տես՝ Վճռաբեկ դատարանի 14.04.2008 թվականի թիվ 3-365 (ՎԴ) քաղաքացիական գործով որոշումը, «Պայքար և Հաղթանակ ՄՊԸ-ն» ընդդեմ Հայաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 20.12.2007 թվականի թիվ 21638/03 որոշումը, կետ 44):

Սույն գործի փաստերի համաձայն՝ Արմենակ և Գուլյա Սահակյանները կենսաթոշակառուներ ու երկրորդ խմբի հաշմանդամներ են, գտնվում են ֆինանսական ծանր վիճակում, որի հետևանքով հնարավորություն չունենալով վճարելու պետական տուրքը՝ Վերաքննիչ դատարանին խնդրել են վերաքննիչ բողոքն ընդունել պետական տուրքի վճարումից ազատելու պայմանով: Մինչդեռ Վերաքննիչ դատարանի 18.12.2007 թվականի որոշմամբ Արմենակ և Գուլյա Սահակյանների պետական տուրքի վճարումը տարածամկետով է:

Վերը նշված փաստերի համադրության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Արմենակ և Գուլյա Սահակյանները ներկայացրել են **«Պետական տուրքի վճարումից ազատելու մասին» միջնորդություն**, որը թիում էր իրենց գույքային դրությունից և որպես պետական տուրքի գծով արտոնություն կարող էր սահմանվել դատարանի կողմից: Մինչդեռ Վերաքննիչ դատարանի 18.12.2007 թվականի որոշմամբ քննարկվել է **«Պետական տուրքի վճարումը տարածամկետելու մասին» միջնորդություն** այն դեպքում, երբ Արմենակ և Գուլյա Սահակյանների կողմից նման միջնորդություն չի ներկայացվել:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, **ըստ էության, առանց որևէ իրավական հիմքի**, այն է՝ առանց «Պետական տուրքի վճարումը տարածամկետելու մասին» միջնորդության առկայության, Արմենակ և Գուլյա Սահակյանների՝ **«Պետական տուրքի վճարումից ազատելու մասին»** միջնորդությունը դիտել է որպես **«Պետական տուրքի վճարումը տարածամկետելու մասին»** միջնորդություն և Արմենակ ու Գուլյա Սահակյաններին պետական տուրքի վճարումից ազատելու փոխարեն տարածամկետել է պետական տուրքի վճարումը, որով և խախտել է գործին մասնակցող անձանց դատավարական իրավունքների իրականացման տնօրինչականության սկզբունքը:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր է վճռաբեկ բողոքի այն պատճառաբանությունը, որ Վերաքննիչ դատարանն իր նախաձեռնությամբ փոփոխել է կենսաթոշակառուների կողմից ներկայացված միջնորդության իմաստն ու բովանդակությունը՝ դրանով իսկ դուրս գալով միջնորդության շրջանակներից:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար:

---

---

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Մասնակիորեն բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.02.2008 թվականի թիվ 08-1070 որոշումը և այն փոփոխել՝ որոշման եզրափակիչ մասի երրորդ պարբերությունը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Արմենակ և Գուլյա Սահակյաններին ազատել վերաքննիչ բողոքի համար սահմանված պետական տուրքի վճարումից»:

2. «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի ա) կետի և 31-րդ հոդվածի դ) կետի հիմքով Արմենակ և Գուլյա Սահակյաններին ազատել վճռաբեկ բողոքի համար սահմանված պետական տուրքի վճարումից:

3. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒՐՆԵՐ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի վճիռ

Քաղաքացիական գործ թիվ **3-57(ՎԳ)**  
**2008թ.**

Քաղաքացիական գործ թիվ 07-3869/2007թ.  
Նախագահող դատավոր՝ Տ.Սահակյան  
Դատավորներ՝ Ն.Հովսեփյան  
Մ.Ասատրյան

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Հ.ՍԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՍԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի փետրվարի 01-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Վարդիթեր Եղիազարյանի և Ալիսա Շիրինյանի վճռաբեկ բողոքները ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.11.2007 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի «Ուրարտու» արտադրական միավորում մսի կոմբինատ ԲԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) բաժնետեր Ռազմիկ Դարբինյանի, Վրեժ Հարությունյանի և Ընկերության ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության, Վարդիթեր Եղիազարյանի և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի «Մարաշ» տարածքային ստորաբաժանման (այսուհետ՝ Կադաստր)՝ Սասունցի Դավթի փողոց թիվ 13 հասցեում գտնվող «Բիթլիս» ֆիրմային խանութի վերաբերյալ աճուրդն, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության և Վարդիթեր Եղիազարյանի միջև կնքված առուվաճառքի պայմանագիրը և դրա հիման վրա կատարված իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու, Սասունցի Դավթի փողոց թիվ 13 հասցեում գտնվող «Բիթլիս» ֆիրմային խանութի նկատմամբ Ընկերության սեփականության իրավունքը ճանաչելու և վերը նշված անշարժ գույքը Վարդիթեր Եղիազարյանի ապօրինի տիրապետումից հետ պահանջելու, ինչպես նաև ըստ Ընկերության լրացուցիչ հայցի ընդդեմ Վարդիթեր Եղիազարյանի և Ալիսա Շիրինյանի՝ վերջիններիս միջև 10.10.2003 թվականի Երևան քաղաքի Սասունցի Դավթի փողոց թիվ 13 հասցեում գտնվող 84,9 քմ տարածքի թիվ 5802 առուվաճառքի պայմանագիրը և դրա հիման վրա 15.10.2003 թվականին Ալիսա Շիրինյանի անվամբ կատարված թիվ 1736405 իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու և նշված անշարժ գույքը Ալիսա Շիրինյանի ապօրինի տիրապետումից Ընկերությանը վերադարձնելու պահանջի մասին,

## Պ Ա Ր Ձ Ե Ց

### 1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Ռազմիկ Դարբինյանը և Վրեժ Հարությունյանը պահանջել են անվավեր ճանաչել Երևանի Սասունցի Դավթի փողոց թիվ 13 հասցեում գտնվող «Բիթլիս» ֆիրմային խանութի վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության և Վարդիթեր Եզիազարյանի միջև կնքված առուվաճառքի պայմանագիրը և դրա հիման վրա կատարված իրավունքի պետական գրանցումը, ճանաչել Ընկերության սեփականության իրավունքը Երևանի Սասունցի Դավթի փողոց թիվ 13 հասցեի «Բիթլիս» ֆիրմային խանութի նկատմամբ, ինչպես նաև վերոհիշյալ անշարժ գույքը Վարդիթեր Եզիազարյանի ապօրինի տիրապետումից հետ վերադարձնել:

Ընկերությունը, դիմելով դատարան, պահանջել է անվավեր ճանաչել Երևան քաղաքի Սասունցի Դավթի փողոց թիվ 13 հասցեում գտնվող «Բիթլիս» ֆիրմային խանութի վերաբերյալ անցկացված աճուրդը և ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության և Վարդիթեր Եզիազարյանի միջև կնքված առուվաճառքի պայմանագիրը և դրա հիման վրա կատարված իրավունքի պետական գրանցումը: Ծանաչել Ընկերության սեփականության իրավունքը Երևան քաղաքի Սասունցի Դավթի փողոց թիվ 13 հասցեի «Բիթլիս» ֆիրմային խանութի նկատմամբ, ինչպես նաև վերոհիշյալ անշարժ գույքը Վարդիթեր Եզիազարյանի ապօրինի տիրապետումից հետ վերադարձնել:

Լրացուցիչ հայցադիմումով դիմելով դատարան, Ընկերությունը պահանջել է անվավեր ճանաչել Վարդիթեր Եզիազարյանի և Ալիսա Շիրինյանի միջև Երևան քաղաքի Սասունցի Դավթի փողոց թիվ 13 հասցեի շենքի 84,9 քմ տարածքի վերաբերյալ 10.10.2003 թվականին կնքված թիվ 5802 առուվաճառքի պայմանագիրը և դրա հիման վրա 15.10.2003 թվականին կատարված իրավունքի պետական գրանցումը: Ալիսա Շիրինյանի ապօրինի տիրապետումից վերը նշված անշարժ գույքը Ընկերությանը հետ վերադարձնել:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 26.09.2007 թվականի վճռով հայցը և լրացուցիչ հայցը բավարարվել են:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 30.11.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Վարդիթեր Եզիազարյանը և Ալիսա Շիրինյանը:

Վճռաբեկ բողոքներին պատասխան չի ներկայացվել:

### 2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքները քննվում են հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

#### ***Ըստ Ալիսա Շիրինյանի վճռաբեկ բողոքի՝***

1) *Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի 1-ին մասը, ինչպես նաև 227-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված դատաքննությանը մասնակից դարձվելու անձի իրավունքը,*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը գործը քննել է Ալիսա Շիրինյանի բացակայությամբ, առանց վերջինիս դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ ձևով ծանուցելու:

2) *Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 172-րդ հոդվածի 2-րդ մասը, 274-րդ հոդվածը, 275-րդ հոդվածի առաջին մասը, 279-րդ - հոդվածի 2-րդ մասը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 171-րդ հոդվածը և 279-րդ հոդվածի 3-րդ մասը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 279-րդ հոդվածի 2-րդ մասը, 273-րդ և 274-րդ -*

հողվածները, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասը, ՀՀ կառավարության 14.07.1995 թվականի թիվ 340 և 20.06.2001 թվականի թիվ 550 որոշումները, «Գույք օտարելու թույլտվություն տալու և ՀՀ կառավարության 26.12.2002 թվականի թիվ 2178 և 09.01.2003 թվականի թիվ 6 որոշումներում փոփոխություն կատարելու մասին» 20.03.2003 թվականի թիվ 692-Ն որոշման 6.1 կետի և կից ցանկի 20-րդ կետի պահանջները, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 332-րդ հոդվածը, 335-րդ հոդվածի 2-րդ մասը, որոնք պետք է կիրառեր, կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 334-րդ հոդվածի 5-րդ մասը, որը չպետք է կիրառեր, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ և 53-րդ հոդվածի առաջին մասը, 218-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը:

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել 02.10.1996 թվականին թիվ 315-2 սեփականաշնորհման պայմանագիրը, որի համաձայն մասնավորեցվել է «Բիթլիս» ֆիրմային խանութի միայն 41.000 ՀՀ դրամ արժողությամբ հիմնական միջոցները, ինչպես նաև Երևանի քաղաքապետի 06.11.1996 թվականի «Ոչ բնակելի տարածքները վարձակալության հանձնելու մասին» թիվ 776 որոշումը, որով հիմնավորվում է այն հանգամանքը, որ 02.10.1996 թվականի սեփականաշնորհումից հետո Ընկերությունն ազատել է Էրեբունու շրջափոխից նախկինում վարձակալած քաղաք Երևան, Սասունցի Դավթի 13 հասցեում գտնվող տարածքը և «Բիթլիս» ֆիրմային խանութի հիմնական միջոցները տեղափոխել է և վերոհիշյալ հասցեում գտնվող ազատված ոչ բնակելի տարածքը հատկացվել է Վարդիթեր Եզիազարյանին:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ վեճի առարկա գույքի նկատմամբ Ընկերությունը գրանցված սեփականության իրավունք չի ունեցել, հետևաբար սույն քաղաքացիական գործով կիրառելի չէին ՀՀ քաղաքացիական օրենսգրքի սեփականության իրավունքի պաշտպանությանը նվիրված 279-րդ հոդվածի 2-րդ մասը, 273-րդ և 274-րդ հոդվածները:

Անհիմն է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 334-րդ հոդվածի 5-րդ մասի չկիրառումը այն պատճառաբանությամբ, որ հայցային վաղեմությունը չի տարածվում պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրանց պաշտոնատար անձանց այն ակտերն անվավեր ճանաչելու պահանջների վրա, որոնցով խախտվել է անձի սեփականության իրավունքը:

Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 30.11.2007 թվականի վճիռը և գործն ուղարկել նոր քննության:

***Ըստ Վարդիթեր Եզիազարյանի վճռաբեկ բողոքի՝***

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 279-րդ հոդվածի 2-րդ մասը, 273-րդ և 274-րդ հոդվածները, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 171-րդ հոդվածը, 279-րդ հոդվածի 3-րդ մասը, 176-րդ հոդվածի 2-րդ մասը, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գորանցման մասին» ՀՀ օրենքի 14-րդ - հոդվածը, «Պետական գույքի մասնավորեցման (ապապետականացման) մասին» ՀՀ օրենքի 12-րդ և 24.1 հոդվածները, որոնք պետք է կիրառեր, կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 334-րդ հոդվածի 5-րդ մասը, որը չպետք է կիրառեր ինչպես նաև խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 218-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, 53-րդ հոդվածի առաջին մասը:

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը, հաստատված համարելով, որ վեճի առարկա գույքը 02.10.1996 թվականի թիվ 315-2 սեփականաշնորհման պայմանագրի կնքման պահին եղել է Ընկերության գույքի կազմում, անտեսել է այն հանգամանքը, որ այդ գույքը վերոնշյալ պայմանագրի կնքման պահին արդեն իսկ սեփականաշնորհված է եղել:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը Վերաքննիչ դատարանին ներկայացրել է սեփականաշնորհման փաթեթը, որի համաձայն՝

---

---

«Բիթլիս» ֆիրմային խանութի տարածքը երբևէ ընդգրկված չի եղել Ընկերության կազմում և երբևէ վերջինիս չի սեփականաշնորհվել:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել 02.10.1996 թվականին թիվ 315-2 սեփականաշնորհման պայմանագիրը, համաձայն որի մասնավորեցվել է «Բիթլիս» ֆիրմային խանութի միայն 41.000 ՀՀ դրամ արժողությամբ հիմնական միջոցները:

Ավելին, սեփականաշնորհման փաթեթում առկա գնի որոշման վերաբերյալ թիվ 13 եզրափակիչ ակտի համաձայն՝ Ընկերությունը ձեռք է բերել «Բիթլիս» ֆիրմային խանութի հիմնական միջոցները՝ բացառությամբ շենքերի ու շինությունների:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ վեճի առարկա գույքի նկատմամբ Ընկերությունը գրանցված սեփականության իրավունք չի ունեցել, հետևաբար սույն քաղաքացիական գործով կիրառելի չէին ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ սեփականության իրավունքի պաշտպանությանը նվիրված 279-րդ հոդվածի 2-րդ մասը, 273-րդ և 274-րդ հոդվածները:

Անհիմն է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 334-րդ հոդվածի 5-րդ մասի չկիրառումը այն պատճառաբանությամբ, որ հայցային վաղեմությունը չի տարածվում պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրանց պաշտոնատար անձանց այն ակտերն անվավեր ճանաչելու պահանջների վրա, որոնցով խախտվել է անձի սեփականության իրավունքը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 30.11.2007 թվականի վճիռը և գործն ուղարկել նոր քննության:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունի հետևյալ փաստը՝

29.11.2007 թվականի դատական նիստի ժամանակի և վայրի մասին Ալիսա Շիրինյանին պատշաճ ձևով տեղեկացնելու վերաբերյալ գործում որևէ ապացույց առկա չէ: Դատարանը գործը քննել է նրա բացակայությամբ:

### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.**

Քննելով վճռաբեկ բողոքները նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

1) *Ալիսա Շիրինյանի վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող անձինք դատական ծանուցագրերով տեղեկացվում են դատական նիստի կամ առանձին դատավարական գործողություններ կատարելու ժամանակի և վայրի մասին: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ծանուցագիրն ուղարկվում է պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ կամ հաղորդագրության ձևակերպումն ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ կամ հանձնվում է ստացակառավար (այսուհետ՝ պատշաճ ձևով): Սա ենթադրում է գործին մասնակցող անձանց դատական նիստի ժամանակի և վայրի մասին իրազեկելու կապակցությամբ դատարանի ակտիվ գործողություններ, որոնք պետք է իրականացվեն միայն վկայակոչված հոդվածով նախատեսված միջոցների և եղանակների օգտագործմամբ: Ընդ որում, անկախ ծանուցման եղանակից, ծանուցումը պետք է լինի այնպիսին, որով հնարավոր է ապացույցել գործին մասնակցող անձին (անձանց) դատական նիստի մասին տեղեկացնելու փաստը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Վերաքննիչ դատարանը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, Ալիսա Շիրինյանին պատշաճ ձևով չի տեղեկացրել դատական նիստի ժամանակի և վայրի մասին, գործը քննել է նրա բացակայությամբ ու վճիռ կայացրել: Քաղաքացիական գոր-

ծում առկա չէ 29.11.2007 թվականի դատական նիստի ժամանակի և վայրի մասին Ալիսա Շիրինյանին ուղարկված դատական ծանուցագիր, կամ վերջինիս պատշաճ ծանուցելու վերաբերյալ որևէ այլ ապացույց:

Վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում անդրադարձել և գնահատման առարկա է դարձրել այն դեպքերը, երբ դատարանը գործը քննել է գործին մասնակցող անձանցից որևէ մեկի բացակայությամբ: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, արձանագրել է կողմերի իրավահավասարության և մրցակցության դատավարական սկզբունքների խախտում և, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, բեկանել է դատական ակտը (իրավական հիմնավորումները տե՛ս՝ Շենգավիթի թաղապետարան ընդդեմ Ալվինա և Լիանա Կազկոներ, Արամ, Ֆրունզ և Նարեկ Մարկոսյաններ, 21.12.2006թ., քաղաքացիական գործ թիվ 3-2236/Ա (բնակելի տարածության օգտագործման իրավունքը փոխհատուցմամբ դադարեցնելու պահանջով) Վճռաբեկ դատարանի որոշումների ընտրանի, հատոր առաջին, էջ 473-476):

Վերը նշվածի հիման վրա Վճռաբեկ դատարանը նպատակահարմար չի համարում կրկին անդրադառնալ նշված իրավական հարցի գնահատականին:

2) *Վարդիթեր Եղիազարյանի վճռաբեկ բողոքին* և Ալիսա Շիրինյանի բողոքի երկրորդ հիմքին Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում, քանի որ Վերաքննիչ դատարանը գործը քննել և վճիռ է կայացրել Ալիսա Շիրինյանի իրավունքների խախտմամբ, որի հետևանքով բողոք բերած անձի իրավական հիմնավորումները չեն հանդիսացել ստորադաս դատարանի քննության առարկա, հետևաբար, դրանք Վճռաբեկ դատարանի կողմից չեն քննարկվում:

Այսպիսով, Ալիսա Շիրինյանի վճռաբեկ բողոքի առաջին հիմքի առկայությունը բավարար է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն Դատարանի վճիռը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքները բավարարել: Բեկանել ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.11.2007 թվականի վճիռը և գործն ուղարկել Երևանի քաղաքացիական դատարան՝ նոր քննության:

2. Մույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Երևանի Ավան և Նոր-Նորք համայնքների  
առաջին ատյանի դատարանի վճիռ  
Քաղաքացիական գործ թիվ 2-2433  
Նախագահող դատավոր՝ Ա.Դավթյան

Քաղաքացիական գործ թիվ **3-21(Ա)**  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ  
դատարան)

*նախագահությամբ* Հ.ՍԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի փետրվարի 01-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Ռոբերտ Խաչատրյանի վճռաբեկ բողոքն  
Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի 07.09.2007  
թվականի վճռի դեմ՝ ըստ Ծովինար և Տիգրան Աղամյանների ներկայացուցիչ Մարինե Ա-  
ղամյանի հայցի ընդդեմ Ռոբերտ Խաչատրյանի՝ իրավահաջորդներ ճանաչելու և գումար  
բռնագանձելու պահանջների մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Ծովինար և Տիգրան Աղամյանները պահանջել են ճանաչել Ա-  
լեքսանդր Աղամյանի իրավահաջորդներ և բռնագանձել Ռոբերտ Խաչատրյանից 5000  
ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամը և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով  
նախատեսված բանկային տոկոսները:

Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝  
Դատարան) 07.09.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ռոբերտ Խաչատրյանը:

Վճռաբեկ բողոքին պատասխան են ներկայացրել Ծովինար և Մարինե Աղամյաննե-  
րը:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմ-  
նավորումներով.

*Դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիա-  
կան դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար  
ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը,  
ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի 2-րդ -*

*մասի 2-րդ կետով սահմանված՝ անձի դատաքննությանը մասնակից դարձվելու իրավունքը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Դատարանը գործը քննել է Ռոբերտ Խաչատրյանի բացակայությամբ, որը պատշաճ ձևով չի ծանուցվել դատական նիստի ժամանակի և վայրի մասին:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է քեկանել Դատարանի 07.09.2007 թվականի վճիռը և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ նոր քննության:

**2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները.**

Անհիմն են վճռաբեկ բողոքի փաստարկները, քանի որ Ռոբերտ Խաչատրյանն անձամբ հայցվորների ներկայությամբ դատարանի ցրիչից ստացել է դատական ծանուցագիրը, որը կցված է գործին:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունի հետևյալ փաստը՝

Քաղաքացիական գործում առկա է 29.08.2007 թվականի դատական նիստի ժամանակի և վայրի մասին Ռոբերտ Խաչատրյանին հանձնված ծանուցագիրը, որի վրա առկա է Ռոբերտ Խաչատրյանի ստորագրությունը:

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող անձինք դատական ծանուցագրերով տեղեկացվում են դատական նիստի կամ առանձին դատավարական գործողություններ կատարելու ժամանակի և վայրի մասին, իսկ 2-րդ մասի համաձայն՝ ծանուցագիրն ուղարկվում է պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ կամ հաղորդագրության ձևակերպումն ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ կամ հանձնվում է ստացականով: Սա ենթադրում է գործին մասնակցող անձանց դատական նիստի ժամանակի և վայրի մասին իրազեկելու կապակցությամբ դատարանի ակտիվ գործողություններ, որոնք պետք է իրականացվեն միայն վկայակոչված հոդվածով նախատեսված միջոցների և եղանակների օգտագործմամբ: Ընդ որում, անկախ ծանուցման եղանակից, ծանուցումը պետք է լինի այնպիսին, որով հնարավոր է ապացուցել գործին մասնակցող անձին (անձանց) դատական նիստի մասին տեղեկացնելու փաստը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Դատարանը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, Ռոբերտ Խաչատրյանին պատշաճ ձևով տեղեկացրել է 29.08.2007 թվականի դատական նիստի ժամանակի և վայրի մասին, որն էլ հաստատվում է գործում առկա ծանուցագրի վրա առկա Ռոբերտ Խաչատրյանի ստորագրությամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**ՈՐՈՇԵՑ**

1. Ռոբերտ Խաչատրյանի վճռաբեկ բողոքը մերժել:
2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի վճիռ  
Քաղաքացիական գործ թիվ 07-3308  
Նախագահող դատավոր՝ Կ.Հակոբյան  
Դատավորներ՝ Լ.Սոսյան  
Լ.Գրիգորյան

Քաղաքացիական գործ թիվ **3-124 (ՎԳ)**  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ  
դատարան),

*նախագահությամբ* Հ.ՍԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՍԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի փետրվարի 29-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «ԱՎՈ Ֆ.Մ.Հ.» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) վճռաբեկ բողոքը վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.11.2007 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի Կարինե Մարգարյանի ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ Կադաստր) Կենտրոն տարածքային ստորաբաժանման, Ընկերության, «Երևանի կառուցապատման ներդրումային ԾԻԳ» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն), Ռուզաննա Մանիջոյանի՝ անշարժ գույքը պետական կարիքների համար վերցնելու և դրա դիմաց փոխհատուցման գումար վճարելու մասին պայմանագիրը փոփոխելու և պակաս վճարված փոխհատուցման գումարը վճարելուն պարտավորեցնելու պահանջների մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Կարինե Մարգարյանը պահանջել է պարտավորեցնել Ընկերությանը և Կազմակերպությանը փոփոխել անշարժ գույքը պետական կարիքների համար վերցնելու և դրա դիմաց փոխհատուցման գումար վճարելու մասին պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), Ռուզաննա Մանիջոյանին հանել բնակարանի համասեփականատերերի ցուցակից՝ նրան լրացնելով որպես ՀՀ կառավարության 19.05.2005 թվականի թիվ 759-Ն որոշման 8-րդ կետով նախատեսված աջակցության և խրախուսման գումար ստացողի, և Կարինե Մարգարյանին վճարել պակաս վճարված 3.842.774 ՀՀ դրամ փոխհատուցման գումարը՝ սահմանելով դրա վճարման ժամկետը:

ՀՀ Կենտրոն և Նորք Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 11.06.2007 թվականի վճռով հայրը բավարարվել է մասնակիորեն:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 23.11.2007 թվականի վճռով հայրը բավարարվել է մասնակիորեն:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Կարինե Մարգարյանը:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով:

*1) Վերաքննիչ դատարանը, կիրառել է քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածը, որը չպետք է կիրառել:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի օրինական ուժի մեջ մտած 14.04.2006 թվականի վճռով հաստատված՝ Սամվել Մանիջոյանի մասով 13.06.2003 թվականի սեփականության իրավունքի գրանցման վկայականն անվավեր լինելու փաստին սույն գործով նախադատելի փաստի ուժ է տվել ,Ռուզաննա Մանիջոյանի մասով սեփականության իրավունքի գրանցումն անվավեր լինելը փաստելու համար:

Մինչդեռ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի տրամաբանությամբ նշված հանգամանքը կարող էր հաստատվել այդպիսին հիմնավորող որոշակի ապացույցով, որպիսին սակայն, քննվող քաղաքացիական գործում բացակայում են: Հակառակ դրան վիճարկվող Պայմանագրի կնքման ժամանակ սեփականության իրավունքի գրանցման վկայականում որպես համասեփականատերեր նշված են եղել Կարինե Մարգարյանը, Առաքել, Սամվել, Ռուզաննա և Համլետ Մանիջոյանները, և ի տարբերություն Սամվել Մանիջոյանի՝ Ռուզաննա Մանիջոյանի սեփականության իրավունքը երբևէ չի վիճարկվել: Փաստորեն, Վերաքննիչ դատարանը դադարեցրել է Ռուզաննա Մանիջոյանի սեփականության իրավունքը առանց դադարման համապատասխան հիմքի:

*2) Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածը, որը պետք է կիրառել:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը չի գնահատել այն հանքամանքը, որ Ընկերության կողմից Պայմանագրով սահմանված պարտավորություններն ամողջությամբ կատարվել են, հետևաբար եթե Կարինե Մարգարյանը գտել է, որ եթե Ռուզաննա Մանիջոյանը չի հանդիսանում համասեփականատեր, ուստի հայրը պետք է ներկայացներ Ռուզաննա Մանիջոյանի, այլ ոչ թե՝ Ընկերության դեմ: Հետևաբար տվյալ դեպքում պետք է լուծվեր նաև անպատշաճ կողմի փոխարինման հարցը:

*3) Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ կառավարության 19.05.2005 թվականի թիվ 759-Ն որոշման 9-րդ կետը և չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 279-րդ, 280-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառել:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Այսպես, Ռուզաննա Մանիջոյանը 3.842.774 ՀՀ դրամի փոխարեն, իր երեխաների հետ միասին 9.000.000 ՀՀ դրամ ստանալու համար **հրաժարվել է** իր սեփականության իրավունքից հօգուտ Ընկերության, ինչի պայմաններում Վերաքննիչ դատարանը պետք է կիրառեր սեփականության իրավունքից հրաժարվելու հետ կապված իրավահարաբերություններ կարգավորող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 279-րդ, 280-րդ հոդվածները, որոնք չի կիրառել:

Վերագրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 23.11.2007 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության կամ վճիռը փոփոխել:

---

---

## **2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմքերը և հիմնավորումները.**

Վճռաբեկ բողոքի՝ Սամվել Մանիջոյանի սեփականության իրավունքի գրանցման փաստը սույն գործով նախադատելի չլինելու մասին վճռաբեկ բողոքի փաստարկն անհիմն է, քանի որ ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ մտած 14.04.2006 թվականի վճռով անվավեր է ճանաչվել թիվ 1012861 սեփականության իրավունքի գրանցման վկայականը, այն պատճառաբանությամբ, որ Կադաստրի Կենտրոն տարածքային ստորաբաժանումը խախտել է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 22-րդ և 23-րդ հոդվածները և թիվ 1012861 սեփականության իրավունքի վկայականում անհիմն կերպով լրացրել է Առաքել, Սամվել, Ռուզաննա և Համլետ Մանիջոյանների անունները:

Անհիմն է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի խախտման՝ վճռաբեկ բողոքի փաստարկը, քանի որ այդ հոդվածի համաձայն՝ վերաքննիչ վարույթում անպատճառ կողմի փոխարինում չի կարող կատարվել:

Անհիմն է նաև Ռուզաննա Մանիջոյանի կողմից իր սեփականությունից հօգուտ Ընկերության հրաժարված լինելու մասին վճռաբեկ բողոքի փաստարկը, քանի որ վերջինիս կողմից սեփականության իրավունքից հրաժարումը եղել է անօրինական և չէր կարող առաջացնել որևէ իրավական հետևանք:

## **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման 13.06.2003 թվականի վկայականի համաձայն՝ Երևանի Նալբանդյան փողոցի 5-րդ տան թիվ 1 բնակարանը սեփականության իրավունքով պատկանել է Կ.Մարգարյանին, Առաքել, Համլետ, Ռուզաննա և Սամվել Մանիջոյաններին:

2) ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ մտած 14.04.2006 թվականի վճռով Սամվել Մանիջոյանի մատով անվավեր է ճանաչվել 13.06.2003 թվականի սեփականության իրավունքի գրանցման վկայականը (գ.թ.19-23):

3) Պայմանագրով փոխհատուցում են ստացել Կարինե Մարգարյանը, Առաքել, Համլետ, Ռուզաննա Մանիջոյանները (գ.թ.11-12):

4) Երևանի Նալբանդյան փողոցի 5-րդ տան թիվ 1 բնակարանի նկատմամբ Ռուզաննա Մանիջոյանի սեփականության իրավունքը դադարած լինելու վերաբերյալ գործում որևէ ապացույց առկա չէ:

## **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն

*1) բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Սույն քաղաքացիական գործով դատարանը պետք է անդրադառնար և գնահատման առարկա դարձներ հետևյալ հարցադրումը. Արդյո՞ք դադարել է Ռուզաննա Մանիջոյանի սեփականության իրավունքը Երևանի Նալբանդյան փողոցի 5-րդ տան թիվ 1 բնակարանի նկատմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նախկինում քննված քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքները դատարանում այլ գործ քննելիս կրկին չեն ապացուցվում:

Սույն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանը հայցի բավարարման հիմքում դրել է ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ մտած 14.04.2006 թվականի վճռով հաստատված հանգամանքն այն մասին, որ թիվ 1012861 սե-

փականության իրավունքի գրանցման վկայականում Առաքել, Սամվել, Ռուզաննա և Համլետ Մանիջոյանների անունների գրանցումը հիմնավոր չէ:

Սինդեռ Վերաքննիչ դատարանը անտեսել է այն հանգամանքը, որ թե Վերաքննիչ դատարանի վերոնշյալ վճռով և թե սույն քաղաքացիական գործով Երևանի Նալբանդյան փողոցի 5-րդ տան թիվ 1 բնակարանի նկատմամբ Ռուզաննա Մանիջոյանի սեփականության իրավունքի գրանցումն անվավեր ճանաչելու վերաբերյալ պահանջ չի ներկայացվել, հետևաբար Վերաքննիչ դատարանը կիրառելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածը դուրս է եկել հայցապահանջի շրջանակներից:

Հիմք ընդունելով վերոնշյալը Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածը կիրառելի չէ, իսկ հայցապահանջի բավարարումը անհիմն՝ Երևանի Նալբանդյան փողոցի 5-րդ - տան թիվ 1 բնակարանի նկատմամբ Ռուզաննա Մանիջոյանի սեփականության իրավունքը դադարած լինելը ապացուցված չլինելու պայմաններում:

*2) բողոքն երկրորդ հիմքով անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ դատարանը, գործի նախապատրաստման կամ քննության ժամանակ, պարզելով, որ հայցը հարուցվել է ոչ այն անձի կողմից, որին պատկանում է պահանջի իրավունքը կամ ոչ այն անձի դեմ, ով պետք է պատասխանի այդ հայցով, կարող է հայցվորի համաձայնությամբ թույլ տալ, որ նա կամ պատասխանողը փոխարինվեն պատշաճ հայցվորով կամ պատասխանողով:

Սույն քաղաքացիական գործի քննության ժամանակ գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 215-րդ հոդվածի համաձայն՝ վերաքննիչ դատարանում գործը քննվում է առաջին ատյանի դատարանում գործի քննության կանոններով, բացառությամբ **անպատշաճ կողմը փոխարինելու** մասին կանոնների:

Այսպիսով, գործի վերաքննության ժամանակ չի կարող քննարկվել և լուծվել անպատշաճ կողմի փոխարինման հարցը: Հետևաբար անհիմն է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի կիրառելիության վերաբերյալ վճռաբեկ բողոքի պատճառաբանությունը:

*3) բողոքի երրորդ հիմքին Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում* քանի որ վճռաբեկ բողոքի սույն հիմքով բարձացված իրավական հարցադրումը սույն քաղաքացիական գործով հայցի առարկայից դուրս է:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի առաջին հիմքի առկայությունը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով, Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար Վերաքննիչ դատարանի վճիռը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ, 241-րդ, 241.1-րդ և 241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.11.2007 թվականի վճիռը և գործն ուղարկել Երևանի քաղաքացիական դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՈՒՐՆԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵԷԴ/0272/02/08**  
**2008թ.**

Քաղաքացիական գործ թիվ ԵԷԴ/0272/02/08  
Նախագահող դատավոր՝ Վ. Թորոսյան  
Դատավորներ՝ Է. Մուրադյան  
Ն. Հովսեփյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Դ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ. ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի նոյեմբերի 28-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Հենրիկ Հովհաննեսի Հարությունյանի վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 07.05.2008 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Հրիտա Հակոբյանի ընդդեմ Հենրիկ Հովհաննեսի և Սյուզաննա Հովհաննեսի Հարությունյանների, «Կենտրոն» նոտարական տարածքի նոտարի՝ 17.12.2007 թվականի ըստ կտակի ժառանգության իրավունքի թիվ 9038 և 01.12.2007 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 9039 վկայագրերն անվավեր ճանաչելու, ինչպես նաև փաստացի տիրապետման ուժով Հրիտա Հակոբյանին Հենրիկ Համազասպի Հարությունյանի ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու և Հասմիկ Հարությունյանին կտակով ու փաստացի տիրապետման ուժով Հրիտա Հակոբյանի ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջների մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Հրիտա Հակոբյանը պահանջել է անվավեր ճանաչել Երևանի Կենտրոն նոտարական տարածքի նոտարի կողմից Հենրիկ Հովհաննեսի Հարությունյանի անվամբ տրված ըստ կտակի, ինչպես նաև Հենրիկ Հովհաննեսի և Սյուզաննա Հովհաննեսի Հարությունյանների անվամբ տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը:

Ավելացնելով հայցապահանջը՝ Հրիտա Հակոբյանի իրավահաջորդ Հասմիկ Հարությունյանը պահանջել է փաստացի տիրապետման ուժով Հրիտա Հակոբյանին ճանաչել Հենրիկ Համազասպի Հարությունյանի ժառանգությունն ընդունած ժառանգ և Հրիտա Հա-

կորյանի դուստր Հասմիկ Հարությունյանին կտակով և փաստացի տիրապետման հիմքով ճանաչել Հրիտա Հակոբյանի ժառանգությունն ընդունած ժառանգ:

Էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 27.02.2008 թվականի վճռով հայրը բավարարվել է:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 07.05.2008 թվականի որոշմամբ Հենրիկ Հովհաննեսի Հարությունյանի վերաքննիչ բողոքը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Հենրիկ Հովհաննեսի Հարությունյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Հրիտա Հակոբյանի իրավահաջորդ Հասմիկ Հարությունյանը:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածը, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1216-րդ, 1221-րդ և 1225-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը, խախտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի դրույթները, անտեսել է այն հանգամանքը, որ Էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանը Հենրիկ Հովհաննեսի Հարությունյանին գրկել է լրացուցիչ հայցադիմումը ստանալու և դրա վերաբերյալ օրենքով նախատեսված երկշաբաթյա ժամկետում իր պատճառաբանությունները ներկայացնելու իրավունքից:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ եթե նույնիսկ Հենրիկ Հովհաննեսի Հարությունյանը բաց է թողել ըստ կտակի ժառանգությունն ընդունելու ժամկետը, այնուամենայնիվ, ներկայացման իրավունքով փաստացի տիրապետմամբ ինչպես Հենրիկ Հովհաննեսի Հարությունյանը, այնպես էլ Սյուզաննա Հարությունյանն ընդունել են Հենրիկ Համազասպի Հարությունյանի ժառանգությունը:

Ավելին, Հասմիկ Հարությունյանին ճանաչելով ըստ կտակի ժառանգությունն ընդունած ժառանգ՝ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Հրիտա Հակոբյանի կողմից կատարված կտակն իրավական ուժ ունենալ չէր կարող, քանի որ ժառանգության բացման ժամանակ կտակում նշված գույքը չի պատկանել Հրիտա Հակոբյանին:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 07.05.2008 թվականի որոշումը և գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության կամ հայրը մերժել:

**2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները**

Հենրիկ Հովհաննեսի Հարությունյանը ներկայացել է դատական միտին, դատարանին խնդրել է դատական միտը հետաձգել մեկ օրով: Դատարանը բավարարել է միջնորդությունը, և այն հետաձգել է մեկ օրով: Հետևաբար ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի խախտում դատարանի կողմից թույլ չի տրվել:

Հենրիկ Հովհաննեսի և Սյուզաննա Հովհաննեսի Հարությունյանները երբևիցե չեն տիրապետել իրենց հասանելիք ժառանգական գույքը, որի վերաբերյալ գործում առկա են ապացույցներ:

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքում նշված այն դիրքորոշմանը, որ Հրիտա Հակոբյանի ժառանգության բացման պահին վերջինս գույք չի ունեցել, ապա այն անհիմն է, քանի որ ժառանգության բացման ժամանակ Հրիտա Հակոբյանն ունեցել է բնակելի տուն և հողամաս, մինչև մահանալը տիրապետել է Հենրիկ Համազասպի Հարությունյանի ժա-

---

---

ռանգությունը, հետևաբար ժառանգության բացման պահին իր ամուսնուն պատկանող ամբողջ գույքը պատկանել է նրան:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 26.02.2008 թվականի դատական նիստում հայցվորի իրավահաջորդ Հասմիկ Հարությունյանի ներկայացուցիչ Էդգար Բեդեմյանն ավելացրել է հայցապահանջը:

2) Սույն գործով Էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի վճիռը հրապարակվել է 27.02.2008 թվականին:

### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ պատասխանողը պարտավոր է հայցադիմումը վարույթ ընդունելու որոշումը ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, դատարան ուղարկել հայցադիմումի պատասխան: Ելնելով գործի առանձնահատկություններից՝ դատարանը կարող է սահմանել պատասխան ուղարկելու ավելի երկար ժամկետ կամ պատասխանողի միջնորդությամբ երկարաձգել պատասխանը ներկայացնելու ժամկետը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ թեև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածով հայցադիմումի վերաբերյալ պատասխան ներկայացնելը պատասխանողի դատավարական պարտականությունն է, սակայն միաժամանակ դա վերջինիս դատավարական իրավունքն է, քանի որ դատավարական այդ ինստիտուտը պատասխանողի դատավարական պաշտպանության եղանակներից մեկն է: Այդ իսկ պատճառով Վճռաբեկ դատարանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ - հոդվածի առաջին մասով սահմանված հայցադիմումին պատասխան ներկայացնելը դիտում է որպես դատավարական կարևոր իրավունք: Վերոգրյալից հետևում է, որ դատարանը պարտավոր է դատավարությունը կազմակերպել այնպես, որպեսզի ապահովվի պատասխանողի այս իրավունքի իրականացումը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ դատարանը հնարավորություն չի տվել Հենրիկ Հովհաննեսի Հարությունյանին օգտվել օրենքով սահմանված երկշաբաթյա ժամկետում փոփոխված հայցադիմումի վերաբերյալ պատասխան ներկայացնելու իր իրավունքից: Դրա արդյունքում վերջինս գրկվել է ոչ միայն փոփոխված հայցի վերաբերյալ պատասխան ներկայացնելու դատավարական հնարավորությունից, այլև ընդհանրապես դատաքննությանը մասնակցելու և օրենքով սահմանված դատավարական այլ իրավունքներից օգտվելու հնարավորությունից, քանի որ ունենալով փոփոխված հայցադիմումի վերաբերյալ գրավոր պատասխանը երկշաբաթյա ժամկետում դատարան ներկայացնելու իրավական հնարավորություն՝ անձը ողջամտորեն կարող էր դատարանից ակնկալել իր գործի քննության նշանակում առնվազն այդ երկշաբաթյա ժամկետի ավարտից հետո:

Ավելին, նույն հոդվածով սահմանված դրույթն անձին իրավունք է վերապահում ներկայացնել հիմնավորված միջնորդություն՝ մինչև երկու շաբաթ տևողությամբ լրացուցիչ ժամկետ խնդրելու վերաբերյալ: Սա ևս հիմնավորում է այն եզրակացությունը, որ դատարանը պարտավոր է դատական նիստ նշանակել ոչ շուտ, քան այդ երկշաբաթյա ժամկետի լրանալը (տե՛ս, օրինակ՝ «Դավիթ առևտրի տուն» ՓԲԸ-ի ընդդեմ «Դվին կոնցեռն» ՓԲԸ՝ 26.031.400 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ 3-59(ՏԴ) գործով 01.02.2008 թվականի որոշումը):

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները հիմնավոր չեն և Էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանը պարտավոր էր երկշաբաթյա ժամկետ տրամադրել Հենրիկ Հարությունյանին փոփոխված հայցադիմումի վերաբերյալ պատասխան ներկայացնելու համար:

Վճռաբեկ բողոքի մյուս հոդվածների խախտումներին Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում, քանի որ անձին փոփոխված հայցադիմումին պատասխան ներկայացնելու համար օրենքով սահմանված ողջամիտ ժամկետ չտրամադրելը հանգեցրել է անձի արդար դատաքննության իրավունքի խախտման, որի հետևանքով բողոք բերած անձի իրավական փաստարկները պատշաճ կերպով չեն ներկայացվել և չեն հանդիսացել ստորադաս դատարանի քննության առարկա: Հետևաբար դրանք չեն քննարկվում Վճռաբեկ դատարանի կողմից:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի համաձայն, Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 07.05.2008 թվականի որոշումը և գործն ուղարկել Էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների  
առաջին ատյանի դատարանի վճիռ  
Քաղաքացիական գործ թիվ 2-3193  
Նախագահող դատավոր՝ Ս.Ուզունյան

Քաղաքացիական գործ թիվ **3-130 (Ա)**  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Հ.ՍԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՂԱՆՅԱՆԻ

2008 թվականի փետրվարի 01-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Սիխալի Լատիշևիչի վճռաբեկ բողոքը Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի 20.01.2006 թվականի դեմ՝ ըստ հայցի Սիխալի Լատիշևիչի ընդդեմ Օնիկ Հունանյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Սիխալի Լատիշևիչը պահանջել է Օնիկ Հունանյանից բռնագանձել 700 գերմանական մարկին և 24.100 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:

Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ Դատարան) 20.01.2006 թվականի վճռով հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Սիխալի Լատիշևիչը:

Վճռաբեկ բողոքին պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով: Դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ, 53-րդ, 130-րդ, 132-րդ հոդվածները, որի արդյունքում, չի կիրառել ՀՀ - քաղաքացիական օրենսգրքի 345-րդ, 347-րդ 877-րդ, 878-րդ և 880-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր:

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Դատարանը լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտությամբ չի գնահատել քաղաքացիական գործում առկա Օնիկ Հունանյանի կողմից Սիխալի Լատիշևիչին

16.500 և 5.000 ԱՄՆ դոլար գումար վերադարձնելու պարտավորագրերը և հաստատել է միայն օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված հանգամանքը:

Մինչդեռ, դատավճռով հաստատված գումարը վերցնելու հանգամանքը չէր կարող բացառել Օնիկ Հունանյանի և Միխայիլ Լատիշևիչի միջև նաև այլ պարտավորության առկայության փաստը, քանի որ քրեական գործը քննվել և դատավճիռ է կայացվել Օնիկ Հունանյանի կողմից Միխայիլ Լատիշևիչից խաբեությամբ միայն 8.000 ԱՄՆ դոլար հափշտակելու կապակցությամբ, իսկ Օնիկ Հունանյանի կողմից Միխայիլ Լատիշևիչից վերցված և ստացականներով երաշխավորված 16.500 և 5.000 ԱՄՆ դոլար գումարների մասով որևէ հարց չի քննարկվել:

Այսպիսով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 3-րդ - մասը Դատարանի կողմից չէր կարող և չպետք է հիմք ընդունվեր 16500 և 5000 ԱՄՆ դոլար գումարների չափով պարտավորության առկայությունը հաստատելու կամ հերքելու համար:

Դատարանը հաստատված չի համարել կողմերի միջև փոխառության պայմանագրից բխող պարտավորության առկայությունը, ինչի արդյունքում տվյալ իրավահարաբերության նկատմամբ չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի պարտավորական իրավահարաբերությունները կարգավորող ընդհանուր՝ 345-րդ, 347-րդ հոդվածները և փոխառության պայմանագրի բխող իրավահարաբերությունները կարգավորող 877-րդ, 878-րդ և 880-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր:

Բացի այդ, Դատարանի վճռում նշված չէ իրավական այն նորմը, որի համաձայն պարտավորության առկայությունը կարելի է հաստատել միայն օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Դատարանի 20.01.2006 թվականի վճիռը, և այն փոփոխել՝ Միխայիլ Լատիշևիչի հայցը մասնակի՝ 21.500 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի չափով բավարարել:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 25.09.1998 թվականի ստացականի համաձայն՝ Օնիկ Հունանյանի պարտքը Միխայիլ Լատիշևիչին կազմել է 16.500 ԱՄՆ դոլար:

2) 06.02.1999 թվականի պարտավորագրով Օնիկ Հունանյանը պարտավորվել է Միխայիլ Լատիշևիչին վերադարձնել 5.000 ԱՄՆ դոլար:

3) Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի օրինական ուժի մեջ մտած 25.06.2005 թվականի դատավճռով հաստատվել է, որ Օնիկ Հունանյանը Միխայիլ Լատիշևիչից խաբեությամբ հափշտակել է 8.000 ԱՄՆ դոլար, և որոշվել է Օնիկ Հունանյանից հօգուտ Միխայիլ Լատիշևիչի բռնագանձել 8.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն *հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին (տես օրինակ՝ «Քնար-88» ՍՊԸ ընդդեմ ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության, 21.12.2006թ. Քաղ. գործ թիվ 3-2504/ՏԳ/ՏԳ, (գումար բռնագանձելու պահանջով)):

Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ վճռի թե՛ փաստական, և թե՛ իրավական հիմնավորումը: Ըստ Վճռաբեկ դատարանի վերոհիշյալ որոշման, վճռի իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաս-

---

---

տերի և իրավահարաբերությունների նկատմամբ նյութական իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանն եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Վճռում ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Վճռի իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա վճռի իրավակիրառ գործառույթը, ընդգծում դատական գործունեության և դատական վճռի օրինականությունը:

Մինչդեռ, Դատարանի վճռում նշված չեն և ոչ մի օրենք կամ այլ իրավական ակտ, որոնցով ղեկավարվել է դատարանը վեճը լուծելիս:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ Դատարանի վճիռը գուրկ է իրավական հիմնավորումից, և այս առումով այն չի կարող լինել օրինական, համոզիչ, ինչպես նաև հեղինակավոր:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Սույն քաղաքացիական գործով հայցի մերժման հիմքում դրվել է այն հանգամանքը, որ քրեական գործով օրինական ուժի մեջ մտած դատավճռով հիմնավորվել է միայն խաբեության եղանակով 8000 ԱՄՆ դոլար տիրանալու հանգամանքը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քրեական գործով օրինական ուժի մեջ մտած դատավճիռը պարտադիր է դատարանի համար միայն այն փաստերով, ըստ որոնց հաստատված են որոշակի գործողություններ և դրանք կատարած անձինք:

Մինչդեռ, սույն քաղաքացիական գործով Դատարանը ըստ էության կիրառելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածը, անտեսել է այն հանգամանքը, որ քրեական գործով գնահատման առարկա չեն դարձվել սույն հայցապահանջի հիմքում դրված 25.09.1998 թվականի ստացականը և 06.02.1999 թվականի պարտավորագիրը: Բացի այդ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ դատավճռով հաստատված գումարը Օնիկ Հունանյանի կողմից վերցնելու հանգամանքը չէր կարող բացառել Օնիկ Հունանյանի և Միխայիլ Լատիշևիչի միջև նաև այլ պարտավորության առկայության փաստը:

Հետևաբար, սույն քաղաքացիական գործի շրջանակներում դատարանը պետք է որոշեր հայցապահանջի հիմնավորվածության հարցը գնահատման առարկա դարձնելով ներկայացված 25.09.1998 թվականի ստացականը և 06.02.1999 թվականի պարտավորագիրը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի առաջին հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարություն օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով վերանայվող դատական ակտը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործը պետք է ուղարկել նոր քննության՝ հայցապահանջի հիմնավորվածությունը և պարտավորության իրական չափը, պարզելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի 20.01.2006 թվականի վճիռը և գործն ուղարկել Երևանի քաղաքացիական դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ քաղաքացիական վերաքննիչ  
դատարանի վճիռ

Քաղաքացիական գործ թիվ **3-33(ՎԳ)**  
**2008թ.**

Քաղաքացիական գործ թիվ 07-437  
Նախագահող դատավոր՝ Ն.Հովսեփյան  
Դատավորներ՝ Տ.Սահակյան  
Ա.Թումանյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ  
դատարան)

*նախագահությամբ* Հ.ՍԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի փետրվարի 29-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Լևոն Ոսկանյանի վճռաբեկ բողոքը ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի 18.06.2007 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի Լևոն Ոսկանյանի ընդդեմ Կոլյա և Գրիգոր Անտոնյանների՝ երկաթյա դուռը քանդելու՝ մուտքն ազատելու պահանջի մասին և Գրիգոր Անտոնյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Լևոն Ոսկանյանի՝ մուտքի նկատմամբ օգտագործման կարգ սահմանելու և իրենց անհատույց օգտագործման իրավունքը 55քմ մակերեսով հողամասի նկատմամբ ճանաչելու պահանջների մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Լևոն Ոսկանյանը պահանջել է պարտավորեցնել Կոլյա և Գրիգոր Անտոնյաններին քանդելու իր հողամասում նրանց կողմից տեղադրված երկաթյա դուռը՝ հողամասը բերելով նախկին տեսքին:

Դիմելով դատարան՝ Գրիգոր Անտոնյանը պահանջել է մուտքի նկատմամբ սահմանել օգտագործման կարգ և ճանաչել իր ընտանիքի օգտագործման իրավունքը 55քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

Երևանի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 09.11.2006 թվականի վճռով հայցը բավարարվել է, հակընդդեմ հայցը՝ մերժվել:

ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 18.06.2007 թվականի վճռով հայցը և հակընդդեմ հայցը մերժվել են:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Լևոն Ոսկանյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*1) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ և 132-րդ (իրականում՝ բողոքը ներկայացնելու ժամանակ գործող 218-րդ) հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը գործի ապացույցները չի հետազոտել դրանց լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտությամբ, ինչի արդյունքում գտել է, որ Անտոնյանների կողմից փաստացի օգտագործվում է 1470քմ մակերեսով հողամաս, որից 55քմ մակերեսի վրա ամրակալված է 19,4քմ մակերեսով բնակելի շինություն: Մինչդեռ, Անտոնյաններն իրենց հատկացված 1500քմ մակերեսով հողմասից պակաս հողամաս են զբաղեցնում: Վերաքննիչ դատարանը չի իրականացրել ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն, որի արդյունքում պարզ կդառնար, որ Լևոն Ոսկանյանի կողմից Անտոնյանների հողմասից զավթում չի կատարվել:

Վերաքննիչ դատարանը չի գնահատել ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Դավթաշենի տարածքային ստորաբաժանման (այսուհետ՝ Կադաստր) կողմից կազմված հատակագիծը, որի համաձայն՝ Երևանի Դավթաշեն 5-րդ փողոցի թիվ 4 հասցեում Գրիգոր և Կոլյա Անտոնյանների կողմից օգտագործվող փաստացի 1470քմ մակերեսով հողամասից 55քմ մակերեսը և դրա վրա ամրակալված 19,4քմ մակերեսով բնակելի տունն ընկնում են Երևանի Դավթաշեն 5-րդ փողոցի թիվ 2 հասցեի հողամասի վրա: Այս ապացույցի գնահատման դեպքում ակնհայտ է, որ Անտոնյաններն առանց Ոսկանյանի համաձայնության, առանց որևէ իրավական հիմքի փաստացի օգտագործում են հայցվորին սեփականության իրավունքով պատկանող 55քմ մակերեսով հողամասը: Վերաքննիչ դատարանը չի գնահատել այս ապացույցը և սխալ եզրակացության է եկել այդ ապացույցով հաստատվելիք փաստի մասին: Բացի այդ, Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Անտոնյանների հողամասը պակասում է Երևանի Դավթաշեն 5-րդ փողոցի թիվ 6 տան կողմից:

Վերաքննիչ դատարանը որպես ապացույց չի գնահատել նաև Վերաքննիչ դատարանին հասցեագրված Կադաստրի 26.04.2007 թվականի կդ-2967 գրությունը, որի համաձայն՝ Երևանի Դավթաշեն 5-րդ փողոցի թիվ 4 տան նկատմամբ որևէ իրավունք գրանցված չէ:

Փաստորեն Վերաքննիչ դատարանը չի գնահատել վերը նշված ապացույցները և չի պատճառաբանել այդ ապացույցը չգնահատելու պատճառները:

Վերաքննիչ դատարանը, որպես ապացույց ընդունել և գնահատել է Վերաքննիչ դատարանում ներկայացված Երևանի Դավթաշենի թաղապետի գրությունն այն մասին, որ Կոլյա և Գրիգոր Անտոնյանների կողմից վիճելի տարածքն օգտագործվել է դեռևս 1939 թվականից, այն դեպքում, երբ Կոլյա Անտոնյանն այդ ժամանակ եղել է երեք տարեկան, իսկ Գրիգոր Անտոնյանը ծնված չի եղել:

*2) Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ հոդվածը, որի արդյունքում խախտել է իր գույքը ուրիշի սպօրինի տիրապետումից հետ պահանջելու անձի իրավունքը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հայցը մերժելու հիմք է համարել այն, որ Ոսկանյանների տանը կից տարածքը սեպածև մտել է Անտոնյանների հողամասի մեջ: Վերաքննիչ դատարանի նման եզրահանգումից հետևում է, որ օրինական հիմքով հատկացված և սեփականության իրավունքով գրանցված հողամասի սեպածև հատակագիծը հիմք է, որպեսզի

---

---

սեփականատերը չկարողանա օգտագործել և տիրապետել իր հողամասը: Դրանով Վերաքննիչ դատարանը խախտել է Լևոն Ռսկանյանի սեփականության իրավունքը:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 18.06.2007 թվականի վճիռը և օրինական ուժ տալ Աջափնյակ և Դավթաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 09.11.2006 թվականի վճռին:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Երևանի Դավթաշենի 5-րդ փողոցի թիվ 4 և թիվ 2 տները գտնվում են հարևանությամբ:

2) Քննվող քաղաքացիական գործում առկա Կադաստրի Դավթաշենի տարածքային ստորաբաժանման 17.07.2006 թվականի գրության և դրան կից հատակագծի համաձայն՝ վերոհիշյալ երկու տներին կից հողամասերի սահմանները համադրվում են: Համադրվող տարածքում գտնվում է վեճի առարկա անշարժ գույքը:

3) Կադաստրի կողմից կազմված հատակագծի համաձայն՝ Երևանի Դավթաշեն 5-րդ փողոցի թիվ 4 հասցեում Գրիգոր և Կոլյա Անտոնյանների կողմից օգտագործվող փաստացի 1470քմ մակերեսով հողամասից 55 քմ մակերեսը և դրա վրա ամրակալված 19,4 քմ մակերեսով բնակելի տունն ընկնում են Երևանի Դավթաշեն 5-րդ փողոցի թիվ 2 հասցեի հողամասի վրա:

### **4. Վճռաբեկ դատարանի պատճառարանությունները և եզրահանգումները.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ

1) բողոքն առաջին հիմքով հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառարանությամբ.

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ երկաթյա դուռը քանդելու՝ մուտքն ազատելու (այսուհետ՝ մուտքն ազատելու) հայցապահանջը բավարարելու կամ մերժելու համար Վերաքննիչ դատարանը պետք է անդրադառնար և գնահատման առարկա դարձներ վեճի առարկա հողամասի պատկանելության հարցը:

Սույն քաղաքացիական գործի քննության ժամանակ գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 218-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ վճռի մեջ պետք է նշվեն վերաքննիչ դատարանի կողմից պարզված գործի հանգամանքները, ապացույցները, որոնց վրա հիմնված են վերաքննիչ դատարանի հետևություններն այդ հանգամանքների մասին, և փաստարկները, որոնցով վերաքննիչ դատարանը մերժում է այս կամ այն ապացույցները, ինչպես նաև այն օրենքները, ՀՀ միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է վերաքննիչ դատարանը վճիռ կայացնելիս:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին (տես օրինակ՝ «Քննար-88» ՄՊԸ ընդդեմ ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության, 21.12.2006թ. Քաղ. գործ թիվ 3-2504/ՏԴ/ՏԴ, (գումար բռնագանձելու պահանջով)):

Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ վճռի թե՛ փաստական, և թե՛ իրավական հիմնավորումը: Ըստ Վճռաբեկ դատարանի վերոհիշյալ որոշման, վճռի իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ նյութական իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանն եզրակացնում է վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Սույն քաղաքացիական գործի քննության ժամանակ գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 218-րդ հոդվածից հետևում է, որ դատարանը պետք է նշեր ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և արդյունքում վճիռ կայացնելիս, այլև պետք է պատճառաբաներ, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին (տես, Անժելա Դազարյանը, Արփիկ և Արմինե Գասպարյաններն ընդդեմ Շուշանիկ Սարգսյանի, Ոսկեհատ, Նունե, Հրանուշ Գասպարյանների՝ ժառանգական գույքը ժառանգների միջև բաժանելու պահանջի մասին, ՀՀ վճռաբեկ դատարանի 12.12.2007 թվականի որոշում, քաղաքացիական գործ թիվ 3-1843(ՎԳ)):

Մինչդեռ սույն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանի կողմից չեն ուսումնասիրվել և գնահատման առարկա չեն դարձվել Կադաստրի կողմից տրված գրություններն ու կազմված հատակագծերը, որոնց համաձայն՝ Երևանի Դավթաշեն 5-րդ փողոցի թիվ 4 հասցեում Գրիգոր և Կոլյա Անտոնյանների կողմից օգտագործվող փաստացի 1470քմ մակերեսով հողամասից 55քմ մակերեսով հողամասը, իր վրա ամրակայված 19,4քմ բնակելի շինությամբ, ընկնում է Երևանի Դավթաշեն 5-րդ փողոցի թիվ 2 տան հողամասի վրա:

2) Վճռաբեկ բողոքի երկրորդ հիմքին Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում, վեճի առարկա հողամասի պատկանելության հարցը որոշված չլինելու պատճառով: Այս իրավական հարցին հնարավոր է պատասխանել գործի նոր քննության ժամանակ:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի առաջին հիմքի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի համաձայն, Վերաքննիչ դատարանի վճիռը մասնակիորեն բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի 18.06.2007 թվականի վճիռը՝ մուտքն ազատելու հայցապահանջի մասով և գործն այդ մասով ուղարկել Երևանի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒՐՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վերաքննիչ քաղաքացիական

դատարանի վճիռ

Քաղաքացիական գործ թիվ 4230-2007

Նախագահող դատավոր՝ Վ.Ավանեսյան

Դատավորներ՝ Ա.Խառատյան

Կ.Չիլինգարյան

Քաղաքացիական գործ թիվ **3-317 (ՎԳ)**

**2008թ.**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ

Վ.ԱԲԵԼՅԱՆԻ

Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ

Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի մայիսի 23-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Հրաչիկ Թամրազյանի վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.01.2008 թվականի վճռի դեմ՝ ըստ Նատալյա Թամրազյանի դիմումի՝ գույքը տիրագործի ճանաչելու և ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու պահանջների մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Նատալյա Թամրազյանը պահանջել է տիրագործի ճանաչել Տավուշի մարզի Թեղուտ գյուղում գտնվող 2.200 քմ մակերեսով հողամասը և դրանով ծանրաբեռնված շինությունը և ձեռքբերման վաղեմության ուժով ճանաչել սեփականության իրավունքը դրանց նկատմամբ:

Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի 04.09.2007 թվականի վճռով դիմումը մերժվել է:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 29.01.2008 թվականի վճռով դիմումը բավարարվել է մասնակիորեն:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Հրաչիկ Թամրազյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ հողային օրենսգրքի 72-րդ հոդվածը, որը չպետք է կիրառեր և խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի, 103-րդ հոդվածի 4-րդ կետի, 187-րդ հոդվածի պահանջները:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

ՀՀ հողային օրենսգրքի 72-րդ հոդվածով ամրագրվել են պետության կամ համայնքի հողամասերը սեփականության իրավունքով ձեռք բերելու նախապատվության իրավունքն այն անձանց, ովքեր ավելի քան տաս տարի անընդմեջ, բարեխիղճ ու բացահայտ, սակայն առանց իրավաբանական ձևակերպման օգտվում են այդ հողերից:

Սինչոեռ սույն գործով չի հաստատվել Նատալյա Թամրազյանի կողմից վեճի առարկա հողամասից անընդմեջ, բարեխիղճ ու բացահայտ օգտվելու հանգամանքը: Ավելին, հաստատվել է, որ նշված հողամասն օգտագործվել է Հրաչիկ Թամրազյանի կողմից:

Գույքը տիրագուրկ ճանաչելու գործերի վարույթը հատուկ վարույթի գործ է, իսկ հատուկ վարույթի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ իրավունքի մասին վեճ չկա, քանի որ դիմողն ընդդեմ այլ անձանց որևէ նյութաիրավական պահանջ չի ներկայացնում:

Սույն գործով վիճելի է, թե ով է տիրապետում նշված հողամասը, այսինքն՝ սույն գործով չի ապացուցվել նշված հողամասը միայն դիմումատուի կողմից տիրապետվելու փաստը, ինչպես նաև այն, թե այդ հողամասը դիմումատուի, թե Հրաչիկ Թամրազյանի կողմից է տիրապետվել: Այսինքն՝ այդ հողամասը տիրապետելու իրավունքի վերաբերյալ վեճ է ծագել:

Միաժամանակ գործում առկա է համայնքի ավագանու որոշումը՝ համայնքի վարչական տարածքում գտնվող ապօրինի զավթած հողամասերի և ինքնակամ կառույցների նկատմամբ համայնքի սեփականությունը ճանաչելու մասին, որը փաստում է սեփականատիրոջ կողմից իր գույքին հավակնելու և սեփականության իրավունքը պահպանելու մտադրությունը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 29.01.2008 թվականի վճիռը և դիմումը թողնել առանց քննության:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Հրաչիկ Թամրազյանը Նատալյա Թամրազյանի ամուսնու՝ Ռադիկ Թամրազյանի, հայրն է:

2) Տավուշի մարզի Թեղուտի գյուղապետարանի 13.08.2007 թվականի տեղեկանքի համաձայն՝ համայնքի վարչական տարածքում գտնվող 004-003 ծածկագրով 0,0853հա հողամասը կիսակառույց շինությամբ որևէ անձի անվամբ հաշվառված չէ և համարվում է ինքնակամ զբաղեցված:

3) Սույն քաղաքացիական գործով Հրաչիկ Թամրազյանը ներգրավվել է որպես վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձ:

### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ *բողոքը հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ դատարանը հայրը կամ դիմումը թողնում է առանց քննության, եթե իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման մասին դիմումը քննելիս **վեճ է ծագել իրավունքի մասին:**

Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման մասին հատուկ վարույթի կարգով քննվող գործերն այն գործերն են, որտեղ պետք է բացակայի նյութաի-

---

---

րավական վեճը: Հատուկ վարույթի հիմնական տարբերությունը հայցային վարույթից կայանում է հենց իրավունքի մասին վեճի բացակայության մեջ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ յուրաքանչյուր դեպքում **իրավունքի վերաբերյալ վեճի առկայությունն ստուգելիս** դատարանը պարտավոր է պարզել, թե արդյո՞ք գործի փաստերից ելնելով առերևույթ առկա է փոխադարձ կապ քննարկվող փաստի և այլ անձի իրավունքների միջև, և արդյո՞ք նման փաստի հաստատումը կարող է որևէ կերպ ազդել այլ անձի իրավունքների ծավալի վրա:

Նման կապի, ինչպես նաև այդ փաստի և այլ անձի իրավունքների ծավալի փոփոխության միջև պատճառահետևանքային կապի բացակայության դեպքում իրավունքի մասին վեճի վերաբերյալ հայտարարությունն ինքնին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի իմաստով հայցն առանց քննության թողնելու հիմք չէ:

Դատարանը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում վեճի առկայության կամ բացակայության հարցը պետք է պարզի՝ ելնելով տվյալ գործի փաստերից, ինչպես նաև օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջներից (տե՛ս օրինակ՝ «Ֆիրմա ՄՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության դիմումը՝ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին Վճռաբեկ դատարանի թիվ 3-445(Ա) գործով 02.03.2007 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով առկա է վեճ սեփականության իրավունքով նշված հողամասը ձեռք բերելու նախապատվության իրավունքի մասին: Հետևաբար, սույն գործի դատական քննության ժամանակ առկա էր ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված հայցն առանց քննության թողնելու հիմքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.01.2008 թվականի վճռի՝ դիմումը բավարարելու մասը և այն թողնել առանց քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒՐՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում  
Քաղաքացիական գործ թիվ 08-1071Ա  
Նախագահող դատավոր՝ Կ.Հակոբյան  
Դատավորներ՝ Տ.Սահակյան  
Տ.Նազարյան

Քաղաքացիական գործ թիվ **3-590(ՎԳ)**  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Ա.ՍԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի դեկտեմբերի 26-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Անահիտ Անտոնյանի վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 26.03.2008 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Միքայել Մեժումյանի ընդդեմ Ռուդոլֆ, Անդրանիկ, Սահակ, Հրաչիկ Վարդանյանների և Անահիտ Անտոնյանի, երրորդ անձ Գայանե Գալոյանի՝ հողամասի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու և առանձնացնելու պահանջի մասին, Անահիտ Անտոնյանի հայցի ընդդեմ Ռուդոլֆ, Հրաչիկ Վարդանյանների և Միքայել Մեժումյանի, երրորդ անձ Գայանե Գալոյանի՝ բաժինն առանձնացնելու և սեփականության իրավունքի խախտումը վերացնելու պահանջի մասին, Գայանե Գալոյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Միքայել Մեժումյանի, Անահիտ Անտոնյանի՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը, սեփականության իրավունքի վկայականները մասնակի անվավեր ճանաչելու և համասեփականատեր ճանաչելու պահանջի մասին, անհատ ձեռնարկատեր Հրաչիկ Վարդանյանի սնանկության գործով կառավարիչ Արամ Կարապետյանի հայցի ընդդեմ Ռուդոլֆ, Անդրանիկ, Սահակ Վարդանյանների, Միքայել Մեժումյանի, Գայանե Գալոյանի, Անահիտ Անտոնյանի՝ բաժինն առանձնացնելու և տունը հրապարակային սակարկություններով վաճառելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Միքայել Մեժումյանը պահանջել է առանձնացնել իր կողմից փաստացի զբաղեցված Երևանի Պողոտյան Տա հասցեում գտնվող 450 քմ հողամասը և ձեռքբերման վաղեմության ուժով ճանաչել սեփականության իրավունքն այդ հողամասի նկատմամբ:

---

---

Դիմելով դատարան՝ Անահիտ Անտոնյանը պահանջել է Երևանի Պռոշյան 5ա հասցեի Սիքայել Մեծլումյանի հետ համատեղ օգտագործվող հողամասից առանձնացնել իր բաժինը և վերացնել սեփականության իրավունքի խախտումը՝ Սիքայել Մեծլումյանին պարտավորեցնել քանդել ցանկապատը և վերականգնել հողամասի նախկին վիճակը:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Գայանե Գալոյանը պահանջել է մասնակի անվավեր ճանաչել Սիքայել Մեծլումյանին պատկանող անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը, սեփականության իրավունքի վկայականները և Երևանի Պռոշյան 5ա հասցեում 104,7քմ շինությամբ զբաղեցված հողամասի նկատմամբ իրեն ճանաչել համասեփականատեր:

Դիմելով դատարան՝ անհատ ձեռնարկատեր Հրաչիկ Վարդանյանի սնանկության գործերով կառավարիչ Արամ Կարապետյանը պահանջել է առանձնացնել Հրաչիկ Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող վիճելի հողամասի 1/10-րդ մասը և հրապարակային սակարկություններով վաճառել ամբողջ տունը:

Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 15.11.2007 թվականի վճռով Սիքայել Մեծլումյանի և Գայանե Գալոյանի հայցերը մերժվել են, Անահիտ Անտոնյանի հայցը բավարարվել է մասնակիորեն, իսկ Հրաչիկ Վարդանյանի սնանկության գործերով կառավարիչ Արամ Կարապետյանի հայցի մասով գործի վարույթը կարճվել է:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 26.03.2008 թվականի որոշմամբ Գայանե Գալոյանի, Սիքայել Մեծլումյանի և Անահիտ Անտոնյանի վերաքննիչ բողոքները բավարարվել են մասնակիորեն՝ բեկանվել է Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 15.11.2007 թվականի վճիռը և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության: Դատարանի վճիռը մնացած մասով թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Անահիտ Անտոնյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Սիքայել Մեծլումյանը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ և 202-րդ հոդվածները, որի արդյունքում խախտել է ՀՀ Սահմանադրության 8-րդ և 31-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Գործի փաստերի համաձայն՝ համատեղ սեփականության ներքո գտնվող 1303,8քմ - մակերեսով հողամասը համասեփականատերերի փաստացի օգտագործման արդյունքում բաժանվել է երկու՝ 702քմ և 604,7քմ մակերեսներով մասերի: Վեճի առարկա 604,7քմ մակերեսով հողամասը երկու սեփականատերերի՝ Անահիտ Անտոնյանի և Սիքայել Մեծլումյանի միջև առանձնացնելու մասին համաձայնություն առկա չէ, հետևաբար այն պետք է դիտել հավասար:

Անահիտ Անտոնյանը պահանջել է առանձնացնել իր բաժինը Սիքայել Մեծլումյանի հետ համատեղ օգտագործվող հողամասից և պարտավորեցնել քանդել ցանկապատը և վերականգնել հողամասի նախկին վիճակը: Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը հայցը բավարարել է մասնակիորեն՝ պարտավորեցնելով միայն քանդել ցանկապատը և վերականգնել հողամասի նախկին վիճակը: Վերաքննիչ դատարանը բողոքը մասնակիորեն բավարարելով կոնկրետ չի նշել, թե վճռի որ մասն է բեկանվում և որ մասն է թողնվում անփոփոխ, ինչպես նաև չի նշել գործի քննության ծավալը:

Փաստորեն ստորադաս դատարանն Անահիտ Անտոնյանի և Սիքայել Մեծումյանի միջև առկա վեճը, այն է՝ ընդհանուր սեփականության ներքո գտնվող 604,7քմ հողամասից սեփականատերերի բաժիններն առանձնացնելու հարցը չեն լուծել, որի արդյունքում խախտվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ և 199-րդ հոդվածները:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է Անահիտ Անտոնյանի և Սիքայել Մեծումյանի մասերով բեկանել Վերաքննիչ դատարանի 26.03.2008 թվականի որոշումը և դատական ակտը փոփոխել:

**2.1 Սիքայել Մեծումյանի վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները**

1994 թվականի նվիրատվության պայմանագրով Սիքայել Մեծումյանն Անահիտ Անտոնյանին նվիրել է շինություններ, որոնք գտնվել են 1308քմ մակերեսով հողամասի վրա: Մինչդեռ Սիքայել Մեծումյանն Անահիտ Անտոնյանին հողամաս չի նվիրել: Նվիրատվության պայմանագրի առարկա է միայն շինությունը: Հետևաբար Վերաքննիչ դատարանը, չլիքառելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ և 199-րդ հոդվածները, իրավացիորեն նշել է, որ հնարավոր չէ Անահիտ Անտոնյանին հատկացնել հողամաս, որը նրան չի նվիրվել և չի պատկանում:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

1) 10.08.1994 թվականի նվիրատվության պայմանագրով Սիքայել Մեծումյանն Անահիտ Անտոնյանին նվիրել է Երևանի Պռոշյան 5ա հասցեի 136,8քմ մակերեսով բնակելի, 32քմ մակերեսով օժանդակ և 238,9քմ այլ մակերեսներից բաղկացած տնատիրությունը, որը գտնվում է ընդհանուր հողամասի վրա:

2) Կադաստրի Կենտրոն տարածքային ստորաբաժանման 07.08.2007 թվականի թիվ Ել-55602 մասնագիտական եզրակացության համաձայն՝ Երևանի Պռոշյան 5 և Պռոշյան 5ա հասցեների շինությունները գտնվում են 1308քմ մակերեսով հողամասի վրա:

3) Երևանի Պռոշյան 5 և Պռոշյան 5ա հասցեում գտնվող 1308քմ մակերեսով համատեղ սեփականություն հանդիսացող հողամասի վրա առկա են 3 գույքային միավորներ՝ 1. Պռոշյան 5 հասցեում գտնվող շինություններ՝ գրանցված Հրաչիկ, Սահակ, Անդրանիկ և Ռուդոլֆ Սարգսի Վարդանյանների անվամբ (285,5քմ բնակելի տուն, 58,5քմ և 24,05քմ ավտոտնակներ և 52,98քմ օժանդակ մակերես), 2. Պռոշյան 5ա հասցեում գտնվող շինություններ՝ գրանցված Անահիտ Անտոնյանի անվամբ (407,5քմ բնակելի տուն), 3. Պռոշյան 5ա հասցեում գտնվող շինություններ՝ գրանցված Գ-այանե Գ-ալոյանի անվամբ (104,7քմ մակերեսով բնակելի տան 2-րդ հարկ, 96քմ մակերեսով հողամաս և նրա վրա առկա 22,3քմ օժանդակ շինություն) և Սիքայել Մեծումյանի անվամբ (Գ-այանե Գ-ալոյանին պատկանող տան 2-րդ հարկի 82,9քմ մակերեսով մասը և բնակելի տան 1-ին հարկ՝ 84,86քմ մակերեսով և 59,55քմ նկուղային հարկ):

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ վճռաբեկ դատարանը գտնում է, որ *այն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 199-րդ հոդվածի համաձայն՝ համատեղ սեփականության մասնակիցների միջև ընդհանուր գույքը բաժանվում կամ նրանցից մեկի բաժինն առանձնացվում է ընդհանուր գույքի նկատմամբ իրավունքում մասնակիցներից յուրաքանչյուրի բաժինը նախապես որոշելուց հետո, որի հիմքերն ու կարգը սահմանվում են նույն օրենսգրքի 197-րդ հոդվածի կանոններով: Ընդհանուր գույքը բաժանելիս և դրանից բաժին առանձնացնելիս համատեղ սեփականության մասնակիցների բաժինները համարվում են հավասար, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ մասնակիցների համաձայնությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի համաձայն՝ բաժնային սեփականության ներքո գտնվող գույքը կարող է բաժանվել դրա մասնակիցների միջև նրանց հա-

մաճայնությամբ: Բաժնային սեփականության մասնակիցն իրավունք ունի պահանջել առանձնացնելու իր բաժինն ընդհանուր գույքից: Բաժնային սեփականության մասնակիցների միջև ընդհանուր գույքը բաժանելու կամ դրանից նրանցից մեկի բաժինն առանձնացնելու եղանակի և պայմանների մասին համաձայնության բացակայության դեպքում բաժնային սեփականության մասնակիցն իրավունք ունի դատական կարգով պահանջել ընդհանուր գույքից բնեղենով առանձնացնելու իր բաժինը:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով Անահիտ Անտոնյանի և Միքայել Մեժլումյանի վերաքննիչ բողոքներին, գտել է, որ դրանք պետք է բավարարվեն, քանի որ Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը չի հետազոտել և գնահատման առարկա չի դարձրել գործում առկա մի շարք ապացույցներ, մասնավորապես, Կադաստրի Կենտրոն տարածքային ստորաբաժանման 31.05.2006 թվականի թիվ ԵԼ-3392 գրությունը, Երևան քաղաքի 26 Կոմիսարների շրջանի ժողդատարանի 06.06.1986 թվականի վճիռը, Պռոշյան 3, 5, 7, 9<sup>թ</sup> և 1-ին նրբանցքի 30/2 տան բնակիչների հայտարարությունը, 14.09.1994 թվականի բնակելի տան նվիրատվության պայմանագիրը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր է Վերաքննիչ դատարանի եզրահանգումն այն մասին, որ Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը չի հետազոտել և գնահատման առարկա չդարձնելով գործում առկա մի շարք ապացույցներ, չի լուծել Անահիտ Անտոնյանի և Միքայել Մեժլումյանի միջև առկա վեճը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը բողոքը համարում է անհիմն, քանի որ Վերաքննիչ դատարանը, արձանագրելով Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի կողմից թույլ տրված դատավարական իրավունքի նորմերի խախտումները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված լիազորությունների շրջանակներում գործն ուղարկել է նոր քննության:

Հետևաբար առաջին ատյանի դատարանում գործն ըստ էության լուծված չլինելու պայմաններում Վճռաբեկ դատարանը քննարկման առարկա չի դարձնում նյութական իրավունքի նորմերի խախտման վերաբերյալ բողոքի պատճառաբանությունները:

Ինչ վերաբերում է Անահիտ Անտոնյանի պահանջներին առանձին անդրադառնալուն, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Անահիտ Անտոնյանի և Միքայել Մեժլումյանի պահանջների միջև առկա է փոխադարձ կապ ու դրանց համատեղ քննությունը կարող է ապահովել վեճի առավել ճիշտ լուծումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 26.03.2008 թվականի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Հայաստանի Հանրապետության  
վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի վճիռ  
Քաղաքացիական գործ թիվ 07-3076/2007թ.  
Նախագահող դատավոր՝ Վ.Ավանեսյան  
Դատավորներ՝ Գ.Մատինյան  
Դ.Խաչատրյան

Քաղաքացիական գործ թիվ **3-114 (ՎԳ)**  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Հ.ՍԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի փետրվարի 29-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Վասիլ Նիկողոսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.10.2007 թվականի վճռի դեմ՝ ըստ Վասիլ Նիկողոսյանի դիմումի ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության Կոտայքի մարզային բաժնի Եղվարդի բաժանմունքի, երրորդ անձ Ալվարդ Ղուկեյանի՝ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության անգործությունը վիճարկելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Վասիլ Նիկողոսյանը պահանջել է պարտավորեցնել ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման Կոտայքի մարզային բաժնի Եղվարդի բաժանմունքին կարճել թիվ 294 կատարողական վարույթը, և որպես դրա հետևանք, արգելանքից հանել Եղվարդի Սպանդարյան 19 հասցեում գտնվող գույքը:

ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանի 09.07.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 15.10.2007 թվականի վճռով հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Վասիլ Նիկողոսյանը:  
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

---

---

## **2. Վճարեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.**

Սույն վճարեկ բողոքը քննվում է հետյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով:

1) *Դատարանը սխալ է մեկնաբանել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 44.1-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանի թիվ 2-3-34 քաղաքացիական գործով 09.01.2006 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով որոշվել է Վարդան Նիկողոսյանից հոգուտ Ալվարդ Ղուկեյանի բռնագանձել 11.000.000 ՀՀ դրամ՝ բռնագանձումը տարածելով Վարդան Նիկողոսյանի գույքի և Վասիլ Նիկողոսյանի անվամբ հաշվառված Եղվարդի Սպանդարյան 19 հասցեի գույքի վրա: Նույն դատարանի թիվ 2-3-16 քաղաքացիական գործով 09.01.2006 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով որոշվել է Վարդան Նիկողոսյանից հոգուտ Ալվարդ Ղուկեյանի բռնագանձել 4.162.000 ՀՀ դրամ: Վասիլ Նիկողոսյանը թիվ 2-3-16 քաղաքացիական գործով պարտապան չի եղել:

Վասիլ Նիկողոսյանը, նկատի ունենալով, որ Վարդան Նիկողոսյանից 11.000.000 ՀՀ դրամի բռնագանձումը տարածվելու է իր գույքի վրա, Ալվարդ Ղուկեյանին վճարել է 11.434.000 ՀՀ դրամ՝ որպես թիվ 2-3-34 քաղաքացիական գործով որոշված 11.000.000 ՀՀ դրամի պարտավորության մարում:

2) *Դատարանը սխալ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանի վճռի հիմքում դրված պարտավորագիրը իրավական ուժ չունի, քանի որ անշարժ գույքի գրավի պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, գրավի իրավունքը՝ պետական գրանցման, իսկ այդ պարտավորագիրը չի ապահովում նշված պահանջները, հետևաբար առոչինչ է:

Վերոգրյալի հիման վրա վճարեկ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 15.10.2007 թվականի վճիռը և օրինական ուժ տալ ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանի 09.07.2007 թվականի վճռին:

## **3. Վճարեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճարեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանի թիվ 2-3-34 քաղաքացիական գործով կայացված օրինական ուժի մեջ մտած 09.01.2006 թվականի վճռով որոշվել է Վարդան Նիկողոսյանից հոգուտ Ալվարդ Ղուկեյանի բռնագանձել 11.000.000 ՀՀ դրամ՝ բռնագանձումը տարածելով Վարդան Նիկողոսյանի գույքի և Վասիլ Նիկողոսյանի անվամբ հաշվառված Եղվարդի Սպանդարյան փողոցի թիվ 19 հասցեի բնակարանի վրա (գ.թ.11):

2) ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանի թիվ 2-3-16 քաղաքացիական գործով կայացված օրինական ուժի մեջ մտած 09.01.2006 թվականի վճռով որոշվել է Վարդան Նիկողոսյանից հոգուտ Ալվարդ Ղուկեյանի բռնագանձել 4.162.000 ՀՀ դրամ (գ.թ.14):

3) Վասիլ Նիկողոսյանի կողմից Ալվարդ Ղուկեյանին փոխանցվել է 11.434.000 ՀՀ դրամ:

4) ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման Կոտայքի մարզային բաժնի Եղվարդի բաժանմունքի 11.05.2007 թվականի թիվ Եղ 410 գրության համաձայն՝ Ալվարդ Ղուկեյանը ստացել է Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանի կողմից տրված թիվ 2-3-16 կատարողական քերթում նշված՝ Վար-

դան Նիկողոսյանի ունեցած 4.162.000 ՀՀ դրամը, իսկ Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանի կողմից տրված թիվ 2-3-34 կատարողական թերթով նախատեսված 11.000.000 ՀՀ դրամից ստացել է 7.272.628 ՀՀ դրամ:

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ

*1) բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հարկադիր կատարողը կատարողական վարույթը կարճում է, եթե կատարողական թերթը փաստացի կատարվել է: Նույն օրենքի 44.1-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ արգելանքի տակ գտնվող պարտապանի գույքը հարկադիր կատարողի որոշմամբ արգելանքից հանվում է, եթե առկա են նույն օրենքի 42-րդ հոդվածում նշված հիմքերը:

Վասիլ Նիկողոսյանը, թիվ 2-3-34 քաղաքացիական գործով հանդիսանալով պարտապան, Ալվարդ Դուկեյանին վճարել է 11.434.000 դրամ, որպիսի հանգամանքն ընդունվել է Ալվարդ Դուկեյանի կողմից: Այսինքն՝ պարտապանի կողմից կատարողական թերթի պահանջը փաստացի կատարվել է: Հետևաբար, թիվ 2-3-34 քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա հարուցված կատարողական վարույթն ենթակա էր կարճման, իսկ արգելանքի տակ գտնվող Վասիլ Նիկողոսյանին սեփականության իրավունքով պատկանող գույքը հարկադիր կատարողի որոշմամբ պետք է հանվեր արգելանքից:

Ինչ վերաբերում է թիվ 2-3-16 քաղաքացիական գործով կայացված օրինական ուժի մեջ մտած վճռով Վասիլ Նիկողոսյանի համար պարտավորությունների առաջացման հարցին, ապա Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ Վասիլ Նիկողոսյանը պարտապան է միայն թիվ 2-3-34 քաղաքացիական գործով, հետևաբար՝ վերջինս պարտավորություններ է կրում միայն այդ գործով օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա հարուցված կատարողական վարույթի շրջանակներում:

2) Վճռաբեկ բողոքի երկրորդ հիմքին Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում, քանի որ Վասիլ Նիկողոսյանի կողմից տրված պարտավորագրի վավերականությունը թիվ 2-3-16 քաղաքացիական գործով հայցի առարկա չէ և Վերաքննիչ դատարանի կողմից դրանց անդրադառնալը Վճռաբեկ դատարանը գնահատում է որպես հայցի առարկայի սահմանների անցում:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով, Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար Վերաքննիչ դատարանի վճիռը բեկանելու համար:

Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ վճռաբեկ բողոքի համար սահմանված պետական տուրքի վճարումը հետաձգվել է, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ հարցին պետք է անդրադառնալ գործի նոր քննության ժամանակ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 236- 241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակի: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.10.2007 թվականի վճիռը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

---

---

2. Վճռաբեկ բողոքի համար սահմանված պետական տուրքի հարցին անդրադառնալ գործի նոր քննության ժամանակ:

3. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում  
Քաղաքացիական գործ թիվ 08-1735  
Նախագահող դատավոր՝ Գ. Խաչատրյան  
Դատավորներ՝ Ս. Միքայելյան  
Ն. Տավարացյան

Քաղաքացիական գործ թիվ **3-690(ՎԴ)**  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Դ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ. ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի նոյեմբերի 28-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Էմմա Կիրակոսյանի վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.06.2008 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Էմմա Կիրակոսյանի ընդդեմ Օնիկ Գրիգորյանի՝ վճռի կայացման օրվանից մինչև փաստացի կատարման օրը հաշվարկված տոկոսների բռնագանձման պահանջի մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Գիմելով դատարան՝ Էմմա Կիրակոսյանը պահանջել է Օնիկ Գրիգորյանից բռնագանձել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.05.2007 թվականի վճռի կայացման օրվանից մինչև դրանով նախատեսված դրամական պարտավորության փաստացի կատարման օրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսներ:

Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 14.02.2008 թվականի վճռով հայցը մերժվել է:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 05.06.2008 թվականի որոշմամբ Էմմա Կիրակոսյանի վերաքննիչ բողոքը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Էմմա Կիրակոսյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

---

---

*Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածը, չի կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածը: Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանի 02.05.2007 թվականի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով վճռվել է Օնիկ Գրիգորյանից հօգուտ Էմմա Կիրակոսյանի բռնագանձել 2.388.100 ՀՀ դրամ՝ որպես պատճառված վնասի հատուցում: Դատական ակտն ուժի մեջ մտնելուց հետո Օնիկ Գրիգորյանն այն միտումնավոր չի կատարում, ինչի արդյունքում Էմմա Կիրակոսյանի հաշվին խնայում է դրամական միջոցներ:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի պահանջը, ըստ որի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը պարտադիր է բոլոր իրավաբանական անձանց, քաղաքացիների համար և ենթակա է կատարման ՀՀ ամբողջ տարածքում:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 05.06.2008 թվականի որոշումը և հայցը բավարարել:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունի հետևյալ փաստը.

Վերաքննիչ դատարանի 02.05.2007 թվականի վճռով որոշվել է Օնիկ Գրիգորյանից Էմմա Կիրակոսյանի օգտին բռնագանձել 2.388.100 ՀՀ դրամ: Վերը նշված գործով 02.05.2007 թվականին տրվել է կատարողական թերթ: Դրա հիման վրա 07.05.2007 թվականին հարուցվել է կատարողական վարույթ, որն ընթացքի մեջ է:

### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ *այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի համաձայն՝ ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելու, դրանք վերադարձնելուց խուսափելու, վճարման այլ կետանցով դրանք օգտագործելու, կամ այլ անձի հաշվին անհիմն ստանալու կամ խնայելու դեպքերում այդ գումարին վճարվում են տոկոսներ: Տոկոսները հաշվարկվում են կետանցի օրվանից մինչև պարտավորության դադարման օրը՝ ըստ համապատասխան ժամանակահատվածների համար ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքների:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը պարտադիր է բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, իրավաբանական անձանց և քաղաքացիների համար ու ենթակա է կատարման ՀՀ ամբողջ տարածքում:

Վերաքննիչ դատարանի կողմից սույն գործի քննության արդյունքում որպես վերաքննիչ բողոքի մերժման հիմք դրվել է այն փաստարկը, որ գործով ապացուցված չէ Օնիկ Գրիգորյանի կողմից ուրիշի դրամական միջոցների ապօրինի պահելու, դրանք վերադարձնելուց խուսափելու, վճարման այլ կետանցով դրանք օգտագործելու կամ այլ անձի հաշվին անհիմն ստանալու կամ խնայելու դեպքերը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում Վերաքննիչ դատարանի վերը նշված պատճառաբանությունը, քանի որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը պարտադիր կարգով ենթակա է կատարման պարտականի կողմից, իսկ դատական ակտի հարկադիր կատարման փուլում գտնվելը հիմք չէ ակտի պահանջների կատարման պարտականությունից պարտապանին ազատելու համար:

Վերոնշյալ եզրահանգման համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում այն հանգամանքը, որ դատական ակտերի հարկադիր կատարումը դրա կամավոր չկատարման

այլընտրանքային եղանակն է: Այսինքն՝ Օնիկ Գրիգորյանը, ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած 02.05.2007 թվականի վճռով բռնագանձման ենթակա 2.388.100 ՀՀ դրամի վճարման պարտավորությունը չկատարելով, ապօրինի կերպով պահել է այդ դրամական միջոցները:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների համաձայն, Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.06.2008 թվականի որոշումը և գործն ուղարկել Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի վճիռ

Քաղաքացիական գործ թիվ **3-148(ՎԳ)**  
**2008թ.**

Քաղաքացիական գործ թիվ 07-3298/2007թ.  
Նախագահող դատավոր՝ Լ.Գրիգորյան  
Դատավորներ՝ Կ.Հակոբյան  
Լ.Սոսյան

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

#### ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Հ.ՍԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՍԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի փետրվարի 29-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Արմեն Ալլահվերդյանի և Բաբկեն Տեր-Մանվելյանի բերած վճռաբեկ բողոքները Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.10.2007 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի Արմեն Ալլահվերդյանի ընդդեմ Բաբկեն Տեր-Մանվելյանի, «Կենտրոն» նոտարական գրասենյակի՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը մասնակի անվավեր ճանաչելու և ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջների մասին,

### Պ Ա Ր Չ Ե Ց

#### 1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ հայցվորը պահանջել է մասնակի անվավեր ճանաչել Բաբկեն Տեր-Մանվելյանի անվամբ 31.10.2001 թվականին և 10.11.2004 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը և ճանաչել ժառանգությունն ընդունած ժառանգ:

Երևանի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 24.04.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 10.02.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է: Վճռվել է Բաբկեն Տեր-Մանվելյանին 31.10.2001 թվականին և 10.11.2004 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը մասնակիորեն՝ 1/4 մասով, ճանաչել անվավեր և հայցվոր Ալլահվերդյանին ճանաչել իր հոր՝ Նորայր Ալլահվերդյանի ժառանգությունն ընդունած ժառանգ:

Սույն գործով վճռաբեկ բողոքներ են ներկայացրել Բաբկեն Տեր-Մանվելյանը և Արմեն Ալլահվերդյանը:

Վճռաբեկ բողոքների պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքները քննվում են հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Ըստ Բ.Տեր-Մանվելյանի վճռաբեկ բողոքի՝*

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, որի արդյունքում կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1230-րդ հոդվածը, որը չպետք է կիրառեր, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 279-րդ և 280-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածը, ՀՀ Սահմանադրության 8-րդ և 31-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոլենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածը, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 17-րդ հոդվածը,:

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Նորայր Ալլահվերդյանը դիմել է դատարան Բաբկեն Տեր-Մանվելյանին 31.10.2001 թվականին և 10.11.2004 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը մասնակի անվավեր ճանաչելու և իրեն ժառանգական գույքի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջով: Հետագայում հայցից հրաժարվել է:

Վերաքննիչ դատարանը անտեսել է այն հանգամանքը, որ հայցից հրաժարվելու դեպքում կրկին նույն հայցով դատարան դիմելու իրավունքը վերապահված է միայն նույն հայցվորին, այսինքն՝ Նորայր Ալլահվերդյանին այլ ոչ թե Արմեն Ալլահվերդյանին: Բացի այդ, հայցից հրաժարումը նշանակում է ըստ էության հրաժարում ոչ թե ժառանգությունից, այլ արդեն իսկ ընդունված ժառանգական գույքից:

Այսինքն՝ Վերաքննիչ դատարանը չի պարզել, թե արդյո՞ք սույն իրավահարաբերություններում առկա է հայցվորի որևէ սուբյեկտիվ իրավունքի, նյութաիրավական կամ օրինական շահերի պաշտպանության անհրաժեշտություն այն դեպքում, երբ նման իրավունքից օգտվելու ցանկություն չի ունեցել այն անձը, որի իրավունքների պաշտպանությամբ հանդես են գալիս նրա մահվանից հետո:

Վերոգրյալի հիման վրա, վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է բեկանել ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի 02.10.2007 թվականի վճիռը և այն փոփոխել, հայցը մերժել:

*Ըստ Ա.Ալլահվերդյանի վճռաբեկ բողոքի՝*

Դատարանը ճիշտ չի կիրառել քաղաքացիական օրենսգրքի 1186-րդ, 1216-րդ, 1225-րդ, 1226-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաստատված համարելով Ն.Ալլահվերդյանի կողմից ժառանգական գույքի 1/2-րդ մասը ընդունելու փաստը, այնուամենայնիվ Բաբկեն Տեր-Մանվելյանին 31.10.2001 և 10.11.2004 թվականներին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը անվավեր է ճանաչել մասնակի՝ 1/4-ի մասով:

Վերոգրյալի հիման վրա, վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.10.2007 թվականի վճիռը և օրինական ուժ տալ Երևանի Աջափնյակ և Դավիթաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 27.04.2007թվականի վճռին:

---

---

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Նորայր Ալլահվերդյանը ժառանգատուի (Քնարիկ Ալլահվերդյանի) հայրն է, իսկ Բաբկեն Տեր-Մանվելյանը՝ որդին:

2) Արմեն Ալլահվերդյանը Նորայր Ալլահվերդյանի որդին է և առաջին հերթի ժառանգորդ:

3) Քնարիկ Ալլահվերդյանի մահվան պահից Երևանի Ալիխանյան եղբայրներ փողոցի 3-րդ շենքի թիվ 324 բնակարանում մշտապես հաշվառված է եղել և բնակվել Նորայր Ալլահվերդյանը:

4) Բաբկեն Տեր-Մանվելյանը 31.10.2001 թվականին ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայական է ստացել Երևանի Բյուզանդի փողոցի թիվ 38 բնակելի տան, իսկ 10.11.2004 թվականին՝ Ալիխանյան փողոցի 3-րդ շենքի 324-րդ բնակարանի նկատմամբ:

5) Նորայր Ալլահվերդյանը դիմել է դատարան Բաբկեն Տեր-Մանվելյանին 31.10.2001 թվականին և 10.11.2004 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը մասնակի անվավեր ճանաչելու և իրեն ժառանգական գույքի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջով: Հետագայում հայցից հրաժարվել է:

### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.**

Քննելով վճռաբեկ բողոքները նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

*Բաբկեն Տեր-Մանվելյանի վճռաբեկ բողոքն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.*

*Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի հիմքի շրջանակներում պետք է քննարկման առարկա դարձնի հետևյալ իրավական հարցը.*

Արդյո՞ք հայցից հրաժարումը կարող է դիտվել որպես հայցվող գույքի նկատմամբ սեփականության իրավունքից հրաժարում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1230-րդ հոդվածի համաձայն՝ ժառանգն իրավունք ունի հրաժարվել ժառանգությունից ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում՝ ներառյալ այն դեպքում, երբ նա արդեն ընդունել է ժառանգությունը: Ժառանգությունից հրաժարվելն իրականացվում է ժառանգի կողմից ժառանգության բացման վայրի նոտարին դիմում տալու միջոցով:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ ժառանգը կարող է հրաժարվել ժառանգությունից ժառանգության բացման վայրի նոտարին ժառանգությունից հրաժարվելու վերաբերյալ դիմում տալու միջոցով: Մինչդեռ, սույն քաղաքացիական գործով Նորայր Ալլահվերդյանը նման եղանակով իրեն հասանելիք ժառանգությունից չի հրաժարվել:

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքում ներկայացված պատճառաբանությանն այն մասին, որ հայցից հրաժարումը անհրաժեշտ է որակել որպես ժառանգությունից հրաժարում, ապա Վճռաբեկ դատարանը այն անհիմն է համարում, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ հայցվորն իրավունք ունի մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը փոխել հայցի հիմքը կամ առարկան, ավելացնել կամ նվազեցնել հայցային պահանջների չափը կամ հրաժարվել հայցից:

Վերոնշյալից հետևում է, որ հայցից հրաժարումը հայցվորի դատավարական իրավունքն է: Հայցից հրաժարվելով, հայցվորն ըստ էության հրաժարվում է ոչ թե պատասխանողի նկատմամբ ունեցած պահանջից, այլ քաղաքացիական դատավարության կանոններով իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության միջոցից:

Վճռաքել դատարանը նման եզրահանգման համար հիմք է ընդունում նաև դատավարական օրենքի այն կարգավորումը, համաձայն որի հայցից հրաժարումը հայցվորին չի գրկում նույն հայցով կրկին անգամ դատարան դիմելու իրավունքից: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ դատարանը կարճում է գործի վարույթը, եթե հայցվորը հրաժարվել է հայցից: Նույն օրենսգրքի 110-րդ - հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ գործի վարույթի կարճման դեպքում նույն անձանց միջև, նույն առարկայի մասին եւ միեւնույն հիմքերով վեճի վերաբերյալ չի թույլատրվում կրկին դիմել դատարան, բացառությամբ սույն օրենսգրքի 109 հոդվածի 6-րդ կետով նախատեսված դեպքի:

Այսինքն՝ Նորայր Ալլահվերդյանը, հրաժարվելով Բաբկեն Տեր-Մանվելյանի ժառանգության իրավունքի վկայագրերը մասնակի անվավեր ճանաչելու և իրեն ժառանգական գույքի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջով ներկայացված հայցադիմումից, չի գրկվել նույն հայցով կրկին անգամ դատարան դիմելու իրավունքից:

Վճռաքել դատարանն անհիմն է համարում նաև վճռաքել բողոքի այն հիմնավորումը, համաձայն որի Արմեն Ալլահվերդյանը պատշաճ հայցվոր չէ, քանի որ Նորայր Ալլահվերդյանը չի օգտվել իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հնրավորությունից, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1184-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ ժառանգության դեպքում մահացածի գույքը (ժառանգությունը) անփոփոխ վիճակում, որպես միասնական ամբողջություն, անցնում է այլ անձանց (համապարփակ իրավահաջորդություն), եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքի կանոններով:

Նույն օրենսգրքի 1186-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ ժառանգության զանգվածի մեջ է մտնում ժառանգության բացման օրը ժառանգատուին պատկանող գույքը՝ ներառյալ դրամը, արժեթղթերը, գույքային իրավունքները եւ պարտականությունները:

Հիմք ընդունելով վերոնշյալը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արմեն Ալլահվերդյանը Նորայր Ալլահվերդյանի որդին է և առաջին հերթի ժառանգը, հետևաբար Արմեն Ալլահվերդյանին է անցնում Նորայր Ալլահվերդյանին պատկանող գույքային բոլոր իրավունքները, այդ թվում՝ Նորայր Ալլահվերդյանի կողմից արդեն իսկ ընդունած ժառանգական գույքի նկատմամբ իր իրավունքների ճանաչման հայցով դատարան դիմելու իրավունքը:

*Արմեն Ալլահվերդյանի վճռաքել բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի առաջին կետի համաձայն՝ դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի առաջին կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ դատարանը վճիռ կայացնելիս, որոշում է, թե գործի համար նշանակություն ունեցող որ հանգամանքներն են պարզվել և որոնք չեն պարզվել, իսկ նույն կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ դատարանը վճիռ կայացնելիս որոշում է տվյալ գործով կիրառման ենթակա օրենքները և այլ իրավական ակտերը, ինչպես նաև հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ մերժելու հարցը:

Սույն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանը հաստատված համարելով այն հանգամանքը, որ Նորայր Ալլահվերդյանը ընդունել է ժառանգական գույքի 1/2 մասը, այնուհանդերձ վճռել է Բաբկեն Տեր-Մանվելյանին 31.10.2001 և 10.11.2004 թվականներին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը անվավեր ճանաչել 1/4-ի մասով: Այսինքն՝ առկա է անհամապատասխանություն Վերաքննիչ դատարանի վճռի պատճառաբանական և եզրափակիչ մասերում:

---

---

Հիմք ընդունելով վերոնշյալը, Վճռաբեկ դատարանը արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված դատավարական խախտումը հանգեցրել է գործի սխալ լուծման:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Արմեն Ալլահվերդյանի վճռաբեկ բողոքի հիմնավոր լինելը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի 02.10.2007 թվականի վճիռը բեկանելու հիմք է:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Արմեն Ալլահվերդյանի վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.10.2007 թվականի վճիռը և օրինական ուժ տալ Երևանի Աջափնյակ և Դավիթաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 27.04.2007թվականի վճիռն:

2. Բաբկեն Տեր-Մանվելյանի վճռաբեկ բողոքը մերժել:

3. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՈՒՐՆԵՐ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի վճիռ

Քաղաքացիական գործ թիվ **3-23(ՎԳ)**  
**2008թ.**

Քաղաքացիական գործ թիվ 07-3582/3072  
Նախագահող դատավոր՝ Դ.Խաչատրյան  
Դատավորներ՝ Վ.Ավանեսյան  
Գ.Մատինյան

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ  
դատարան)

*նախագահությամբ* Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի փետրվարի 29-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Հասմիկ Ճշմարիտյանի վճռաբեկ բողոքը ՀՀ -  
վերաքննիչ քաղաքացիական դատարանի 07.11.2007 թվականի վճռի դեմ՝ ըստ Սիրանուշ  
և Սաթենիկ Ճշմարիտյանների օրինական ներկայացուցիչ Անահիտ Ալեքսանյանի դիմու-  
մի՝ բաց թողնված ժամկետը հարգելի համարելու և ժառանգությունն ընդունած ժառանգ-  
ներ ճանաչելու, ինչպես նաև ըստ Հասմիկ Ճշմարիտյանի դիմումի՝ բաց թողնված ժամկե-  
տը հարգելի համարելու և ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջների  
մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Անահիտ Ալեքսանյանը պահանջել է հարգելի համարել անչա-  
փահասներ Սիրանուշ և Սաթենիկ Ճշմարիտյանների կողմից Տիգրան Ճշմարիտյանի  
ժառանգությունն ընդունելու բաց թողնված ժամկետը և նրանց ճանաչել Երևանի Սևբարե-  
ցի Սաքոյի փողոցի թիվ 16 տան՝ Սիրանուշ Ղազարյանին պատկանող բաժնի նկատմամբ  
ժառանգությունն ընդունած ժառանգներ:

Դիմելով դատարան՝ Հասմիկ Ճշմարիտյանը պահանջել է հարգելի համարել ժառան-  
գությունն ընդունելու բաց թողնված ժամկետը և ճանաչել Երևանի Սևբարեցի Սաքոյի փո-  
ղոցի թիվ 16 տան՝ Սիրանուշ Ղազարյանին պատկանող բաժնի նկատմամբ ժառանգու-  
թյունն ընդունած ժառանգ:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)  
28.09.2007 թվականի որոշմամբ վերոնշյալ քաղաքացիական գործերը միացվել են մեկ  
վարույթում:

---

---

Վերաքննիչ դատարանի 07.11.2007 թվականի վճռով Անահիտ Ալեքսանյանի դիմումը բավարարվել է, իսկ Հասմիկ Ճշմարիտյանի դիմումը՝ մերժվել:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Հասմիկ Ճշմարիտյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) *Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված՝ ապացույցների գնահատման կանոնները, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1216-րդ, 1226-րդ և 1228-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումները պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությամբ չի գնահատել վիճելի տան միակ բնակիչ Հասմիկ Ճշմարիտյանի կողմից ներկայացված՝ կոմունալ վճարումները հիմնավորող անդորրագրերը, ինչի արդյունքում չի փաստել Հասմիկ Ճշմարիտյանի՝ ժառանգությունն ընդունելու համար օրենքով սահմանված ժամկետում ժառանգական զանգվածի փաստացի տիրապետմանն ու կառավարմանն անցած լինելը:

2) *Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածը, խախտել է 42-րդ հոդվածը:*

Հասմիկ Ճշմարիտյանը լինելով ըստ օրենքի առաջին հերթի ժառանգ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1216-րդ և 1226-րդ հոդվածների ուժով համարվում է ժառանգությունն ընդունած ժառանգ, ինչի պայմաններում ժառանգությունն ընդունելու համար սահմանված ժամկետի բացթողումը հարգելի համարելու պահանջի մատով գործի վարույթն ենթակա էր կարճման:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը խախտել է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 42-րդ հոդվածը, քանի որ Անահիտ Ալեքսանյանը չի ներկայացրել լիազորագիր չափահաս դստեր՝ Սիրանուշ Ճշմարիտյանի անունից՝ դատաքննությանը նրա շահերը ներկայացնելու համար:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 07.11.2007 թվականի վճիռը:

## **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Հասմիկ և Տիգրան Ճշմարիտյանները՝ գրանցված ամուսնության մեջ գտնված Կառլեն Լևոնի Ճշմարիտյանի (մահացած՝ 01.03.2003 թվականին) և Սիրանուշ Մուրադի Ղազարյանի (մահացած՝ 08.12.1994 թվականին) ըստ օրենքի առաջին հերթի ժառանգներն են.

2) Տիգրան Ճշմարիտյանը մահացել է 08.11.2005 թվականին.

3) Սիրանուշ և Սաթենիկ Ճշմարիտյանները Տիգրան Ճշմարիտյանի ըստ օրենքի առաջին հերթի ժառանգներն են.

4) Հասմիկ Ճշմարիտյանը 1976 թվականից հաշվառված է Երևանի Սևքարեցի Սաքոյի փողոցի թիվ 16 փողոցի հասցեում գտնվող տանը.

5) Գործում առկա են Հասմիկ Ճշմարիտյանի կողմից ներկայացված՝ վեճի առարկա տան կոմունալ և այլ անհրաժեշտ վճարումները հավաստող անդորրագրերը:

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.**

*Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ*

*1) վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, եթե այլ բան ապացուցված չէ, ապա ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել կամ կառավարել ժառանգված գույքը՝ ներառյալ, երբ ժառանգը միջոցներ է ձեռնարկել գույքը պահպանելու և այն երրորդ անձանց ուսնագություններից կամ հավակնություններից պաշտպանելու համար, **իր հաշվին կատարել է գույքը պահպանելու ծախսերը**, իր հաշվից վճարել է ժառանգատուի պարտքերը կամ երրորդ անձանցից ստացել է ժառանգատուին հասանելիք գումարները:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ ժառանգության փաստացի տիրապետումը կամ կառավարումը, որպես ժառանգության ընդունման եղանակ, կարող է դրսևորվել ժառանգի կողմից ժառանգական գույքի պահպանման ծախսերը կատարելով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին հանգումով:

Սինդեռ, սույն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությամբ չի գնահատել քննվող քաղաքացիական գործում առկա բոլոր ապացույցները, որի արդյունքում անտեսել է վեճի առարկա տան միակ բնակիչ Հասմիկ Ճշմարիտյանի կողմից ներկայացված՝ ժառանգությունն ընդունելու համար սահմանված ժամկետում կոմունալ և տան տիրապետման և շահագործման համար անհրաժեշտ այլ վճարումներ կատարված լինելու մասին ապացույցները, որոնցով հիմնավորվում է Հասմիկ Ճշմարիտյանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով ժառանգությունը ընդունելու հանգամանքը:

Հիմք ընդունելով վերոնշյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհիմն է Վերաքննիչ դատարանի այն եզրահանգումը, որի համաձայն՝ Հասմիկ Ճշմարիտյանը ժառանգական գույքը փաստացի տիրապետելու վերաբերյալ որևէ հիմնավոր ապացույց դատարանին չի ներկայացրել:

Վճռաբեկ դատարանը բազմիցս անդրադարձել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ և 218-րդ հոդվածների ճիշտ և միատեսակ կիրառման խնդրին (տե՛ս, օրինակ՝ "Քնար-88" ՍՊԸ ընդդեմ ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչություն, 21.12.2006թ., քաղաքացիական գործ թիվ 3-2504/ՏԴ(գումար բռնագանձելու պահանջով)) և սույն քաղաքացիական գործով նպատակահարմար չի գտնում կրկին անդրադառնալ այդ հարցի մեկնաբանմանը:

*2) վճռաբեկ բողոքն երկրորդ հիմքով հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը կարճում է գործի վարույթը, եթե վեճն ենթակա չէ դատարանում քննության:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1228-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողած ժառանգի դիմումի հիման վրա դատարանը կարող է նրան ճանաչել ժառանգությունն ընդունած՝ հարգելի համարելով ժամկետը բաց թողնելու պատճառները:

Հիմք ընդունելով վերոնշյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհիմն է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի խախտման վերաբերյալ վճռաբեկ բողոքի պատճառաբանությունը, քանի որ ժառանգությունն ընդունելու բաց թողած ժամկետը հարգելի համարելու պահանջը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքով, ենթակա է դատարանում քննության:

---

---

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 42-րդ հոդվածի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածների խախտման մասին վճռաբեկ բողոքի պատճառաբանությունը հիմնավոր է, քանի որ գործի քննության ժամանակ 31.07.1989 թվականին ծնված Սիրանուշ Ճշմարիտյանը 31.07.2007 թվականին ձեռք է բերել լրիվ գործունակություն, հետևաբար նրա շահերը դատարանում կարող էին ներկայացվել միայն վերջինիս կողմից տրված համապատասխան լիազորագրի հիման վրա, ինչը սույն քաղաքացիական գործում բացակայում է:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ փաստը Վերաքննիչ դատարանի վճիռը բեկանելու հիմք չէ, քանի որ հայցապահանջի ներկայացման պահին Սիրանուշ Ճշմարիտյանն անչափահաս էր, հետևաբար, Անահիտ Ալեքսանյանն իրավասու էր Սիրանուշ Ճշմարիտյանի անունից ներկայացնելու հայց, իսկ 31.07.2007 թվականին վերջինիս չափահաս դառնալը ինքնին չի կարող խոչընդոտ հանդիսանալ դատարանի կողմից գործի քննությունը շարունակելու և վճիռ կայացնելու համար:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի առաջին հիմքի առկայությունը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով, Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար Վերաքննիչ դատարանի վճիռը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Սույն քաղաքացիական գործով հաստատված փաստական հանգամանքները Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 07.11.2007 թվականի վճիռը փոփոխելու համար, որը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 07.11.2007 թվականի վճիռը և այն փոփոխել:

2. Անահիտ Կամոյի Ալեքսանյանի դիմումը բավարարել մասնակիորեն՝ ժառանգությունն ընդունելու սահմանված ժամկետի բացթողումը համարել հարգելի: Սիրանուշ Տիգրանի և Սաթենիկ Տիգրանի Ճշմարիտյաններին ճանաչել ք. Երևան, Սևքարեցի Սաքոյի փող. թիվ 16 հասցեում գտնվող՝ Սիրանուշ Մուրադի Ղազարյանին պատկանող տան և հողամասի կես մասի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգներ:

3. Հասմիկ Կառլենի Ճշմարիտյանի դիմումը բավարարել մասնակիորեն՝ ժառանգությունն ընդունելու սահմանված ժամկետի բացթողումը համարել հարգելի: Հասմիկ Ճշմարիտյանին ճանաչել ք. Երևան, Սևքարեցի Սաքոյի փող. թիվ 16 հասցեում գտնվող՝

Սիրանուշ Մուրադի Ղազարյանին պատկանող տան և հողամասի կես մասի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ:

4. Մույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Տնտեսական դատարանի վճիռ  
Քաղաքացիական գործ թիվ Տ4-266/2007թ.  
Նախագահող դատավոր՝ Ռ. Հակոբյան

Քաղաքացիական գործ թիվ **3-82(ՏԳ)**  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Հ.ՍԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի մարտի 27-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «ՄԻՄԲԱԲ» ՍՊԸ-ի վճռաբեկ բողոքը Տնտեսական դատարանի 31.10.2007 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի «ԻՓՄԻԼՈՆ» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ «ՄԻՄԲԱԲ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) գումարի բռնագանձման պահանջի մասին և ըստ հակընդդեմ հայցի Կազմակերպության ընդդեմ Ընկերության՝ գումարի բռնագանձման պահանջի մասին

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է Կազմակերպությունից բռնագանձել 31.945 եվրոյին համարժեք ՀՀ դրամ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանափակ՝ 8.807 եվրոյին համարժեք դրամ տոկոսներ, տոկոսների բռնագանձումը շարունակել մինչև վճռի փաստացի կատարումը և վճարված պետական տուրքի գումարը:

Դիմելով դատարան՝ Կազմակերպությունը պահանջել է Ընկերությունից բռնագանձել 18.156.080 ՀՀ դրամ:

Տնտեսական դատարանի 31.10.2007 թվականի վճռով հայրը բավարարվել է, հակընդդեմ հայրը՝ մերժվել:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կազմակերպությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) *Դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1028-րդ, 1031 հոդվածները, որոնք պետք է կիրառեր, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Հակընդդեմ հայցը մերժելիս դատարանը հիմք է ընդունել այն հանգամանքը, որ կողմերի միջև կնքվել է առուվաճառքի պայմանագիր: Մինչդեռ, դատաքննության ընթացքում Ընկերության ներկայացուցիչն ընդունել է, որ կողմերի միջև ձեռք է բերվել պայմանավորվածություն համատեղ գործունեության իրականացման վերաբերյալ:

Դատարանը մերժել է սերմերի որակն անպատշաճ լինելու վերաբերյալ ապացույցները՝ հիմք ընդունելով միայն Ընկերության կողմից ներկայացված բուսաառողջապահության վկայականները, որոնք սերմերի որակի և ծլունակության մասին ոչ մի տեղեկություն չեն պարունակում, այլ վերաբերում են միայն սերմերի՝ մանրէներով վարակված չլինելուն:

*2) Դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 42-րդ հոդվածի, 92-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Հայցադիմումը ստորագրել է Ընկերության ներկայացուցիչ Հայկ Սարգսյանը, որը ներկայացված լիազորագրի համաձայն՝ հայցադիմում ստորագրելու, հայցային պահանջն ավելացնելու վերաբերյալ դիմում ներկայացնելու լիազորություն չունի:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Տնտեսական դատարանի 31.10.2007 թվականի վճիռը և գործն ուղարկել նոր քննության:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Ընկերության և Կազմակերպության միջև ձեռք է բերվել պայմանավորվածություն համատեղ գործունեության վերաբերյալ:

2) 28.03.2005 թվականի, 07.09.2005 թվականի, 07.09.2005 թվականի, 30.09.2005 թվականի, համապատասխանաբար, թիվ 5/05, թիվ 19/05, թիվ 20/05, թիվ 21/05 հաշիվ-ապրանքագրերով Կազմակերպությունն Ընկերությունից ստացել է «MATHIAS», «VANESSA», «TIGRE R2», «PIETRAFITTA R2», «MEXA R2» տեսակի 110.000 կգ գարու եւ կարծր ցորենի տեսականի, որոնց ընդհանուր արժեքը կազմել է 32.945 եվրո:

3) Կազմակերպությունն Ընկերության ներկայացուցչին վերադարձրել է 5.000 կգ ցորեն՝ 1.000 եվրո ընդհանուր արժեքով:

4) Գարու եւ կարծր ցորենի սերմնացուի փոխաբեռնման, փոխադրման և բեռնաթափման, ցանքի, հողի վարձակալության ծախսերը կատարվել են Կազմակերպության կողմից:

5) 16.07.2007 թվականին Հայկ Սարգսյանին տրված լիազորագրով վերջինս Ընկերության կողմից լիազորվել է «հանձնարել փաստաբանական գրասենյակին իր հայեցողությամբ դատական կամ ցանկացած այլ օրինական միջոցով, այն պահանջի վարումը, որն ունի Ընկերությունը «ՄԻՄԲԱԲ» ՍՊԸ-ի հանդեպ, հանդես գալ ՀՀ դատական մարմիններում, օգտվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 42-րդ հոդվածով սահմանված լիազորություններից, ԴԱՀԿ ծառայություններում, Կադաստրի պետական կոմիտեում»:

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

*1) բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1026-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ համատեղ գործունեության պայմանագրով երկու կամ ավելի անձինք /մասնակիցները/ պարտավորվում են միացնել իրենց ավանդները և առանց իրավաբանական անձ կազմավորելու գոր-

---

---

ծել համատեղ՝ շահույթ ստանալու կամ օրենքին չհակասող այլ նպատակի հասնելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1028-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցների ներդրած գույքը, որի նկատմամբ մինչև ներդրումը նրանք ունեին սեփականության իրավունք, ինչպես նաև համատեղ գործունեության արդյունքում արտադրված արտադրանքը եւ այդպիսի գործունեությունից ստացված պտուղներն ու եկամուտները համարվում են նրանց ընդհանուր բաժնային սեփականությունը:

Նույն օրենսգրքի 1027-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մասնակիցների ավանդները, ըստ դրանց արժեքի, ենթադրվում են հավասար, եթե այլ բան չի բխում համատեղ գործունեության պայմանագրից կամ փաստացի հանգամանքներից: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1031-րդ հոդվածի համաձայն՝ մասնակիցների համատեղ գործունեության հետ կապված ծախսերը և վնասները ծածկելու կարգը որոշվում է նրանց համաձայնությամբ: Նման համաձայնության բացակայության դեպքում յուրաքանչյուր մասնակից ծախսերը եւ վնասները կրում է ընդհանուր գործում իր ավանդի արժեքին համամասնորեն:

Հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերության և Կազմակերպության կողմից դատաքննության ընթացքում արված հայտարարություններով հաստատվել է համատեղ գործունեություն իրականացնելու վերաբերյալ պայմանավորվածությունը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ընկերության և Կազմակերպության՝ համատեղ գործունեության մեջ ներդրված գույքը դարձել է նրանց ընդհանուր բաժնային սեփականությունը: Միաժամանակ, ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ կողմերը չեն որոշել իրենցից յուրաքանչյուրի կողմից ներդրման ենթակա գույքային ավանդների չափը և արժեքը, ինչպես նաև համատեղ գործունեության հետ կապված ծախսերը և վնասները ծածկելու կարգը, հետևաբար Ընկերության և Կազմակերպության ավանդները ենթադրվում են հավասար, իսկ համատեղ գործունեության արդյունքում կրած ծախսերը և վնասները նրանցից յուրաքանչյուրը պետք է կրի իր ավանդի արժեքին համամասնորեն (հավասարապես):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռի պատճառաբանական մասում պետք է նշվեն դատարանի կողմից պարզված գործի հանգամանքները, ապացույցները, որոնց վրա հիմնված են դատարանի հետևությունները, այս կամ այն ապացույցները մերժելու փաստարկները, ինչպես նաև այն օրենքները և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է դատարանը վճիռ կայացնելիս:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին (տես օրինակ՝ «Զնար-88» ՍՊԸ ընդդեմ ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության, 21.12.2006թ. Քաղ. գործ թիվ 3-2504/ՏՂ/ՏՂ, (գումար բռնագանձելու պահանջով)):

Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ վճռի թե՛ փաստական, և թե՛ իրավական հիմնավորումը: Ըստ Վճռաբեկ դատարանի վերոհիշյալ որոշման, վճռի իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ նյութական իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանն եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածից հետևում է, որ դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վճիռ կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին (տես, Անժելա Ղազարյանը, Արփիկ և Արմինե Գասպարյան-

ներն ընդդեմ Շուշանիկ Սարգսյանի, Ոսկեհատ, Նունե, Հրանուշ Գասպարյանների՝ ժառանգական գույքը ժառանգների միջև բաժանելու պահանջի մասին, ՀՀ վճռաբեկ դատարանի 12.12.2007 թվականի որոշում, քաղաքացիական գործ թիվ 3-1843(ՎԳ-):

Սինչդեռ, սույն քաղաքացիական գործով, Տնտեսական դատարանը, հայցի բավարարման և հակընդդեմ հայցի մերժման հիմքում դնելով այն հանգամանքը, որ կողմերի միջև կնքվել է ապրանքի առուվաճառքի պայմանագիր, իսկ Կազմակերպությունը չի հիմնավորել անպատշաճ որակի ապրանք մատակարարելու հանգամանքը, չի անդրադարձել և գնահատման առարկա չի դարձրել դատաքննության ընթացքում կողմերի արված հայտարարությունները համատեղ գործունեություն իրականացնելու վերաբերյալ:

2) բողոքն երկրորդ հիմքով անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 42-րդ հոդվածի համաձայն՝ դատարանում գործը վարելու լիազորագիրը ներկայացուցչին իրավունք է տալիս ներկայացվողի անունից կատարելու դատավարական գործողություններ, բացառությամբ՝ 1/ ստորագրելու հայցադիմումը, 2/ գործը հանձնելու արբիտրաժային տրիբունալին, 3/ ամբողջովին կամ մասնակի հրաժարվելու հայցային պահանջներից եւ ընդունելու հայցը, 4/ փոփոխելու հայցի առարկան կամ դրա հիմքը, 5/ փոխելու հայցային պահանջների չափը, 6/ կնքելու հաշտության համաձայնություն, 7/ այլ անձի փոխանցելու լիազորությունները, 8/ բողոքարկելու դատական ակտը, 9/ դիմելու իրավասու անձանց՝ վճռաբեկ բողոք բերելու խնդրանքով: Սույն հոդվածում նշված գործողություններից յուրաքանչյուրի կատարման համար ներկայացվողի տված լիազորագրում պետք է հատուկ նախատեսված լինի ներկայացուցչի այդ լիազորությունը:

Նույն օրենսգրքի 92-րդ հոդվածի հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ դատավորը վերադարձնում է հայցադիմումը, եթե հայցադիմումն ստորագրված չէ կամ ստորագրել է այն ստորագրելու լիազորություն չունեցող անձը կամ այնպիսի անձ, որի պաշտոնական դրությունը նշված չէ:

Վերոնշյալից հետևում է, որ.

1. ներկայացվողն իրավունք ունի ներկայացուցչին լիազորել, կատարելու վերոնշյալ բոլոր դատավարական գործողությունները, կամ դրանց մի մասը.

2. լիազորագրում պետք է հատուկ նշված լինի, որ ներկայացուցչին իրավունք ունի կատարելու վերոնշյալ դատավարական գործողություններից յուրաքանչյուրը:

Սույն քաղաքացիական գործում առկա է 16.07.2007 թվականին Ընկերության կողմից Հայկ Սարգսյանին տրված լիազորագիրը, որում հստակ նշված է Հայկ Սարգսյանի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 42-րդ հոդվածով սահմանված բոլոր լիազորություններից օգտվելու իրավունքը, այսինքն՝ Ընկերությունը Հայկ Սարգսյանին լիազորել է կատարելու 42-րդ հոդվածով սահմանված բոլոր դատավարական գործողությունները:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անհիմն են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 42-րդ հոդվածի խախտման վերաբերյալ վճռաբեկ բողոքի փաստարկները:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի առաջին հիմքի հիմնավոր լինելը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Տնտեսական դատարանի 31.10.2007 թվականի վճիռը բեկանելու հիմք է:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում Կազմակերպությունից 31.945 եվրոյին համարժեք ՀՀ դրամ բռնագանձելու Ընկերության հայցի մասով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ու-

---

---

նի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը մասնակիորեն փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ինչ վերաբերում է հակընդդեմ հայցին, ապա հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Տնտեսական դատարանը չի անդրադարձել ներկայացված հայապահանջի չափի հիմնավորվածության հարցին, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործն այդ մասով ենթակա է նոր քննության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել Տնտեսական դատարանի 31.10.2007 թվականի վճիռը և այն մասնակիորեն փոփոխել:

2. «ԻՓՄԻԼՈՆ» ԲԲԸ-ի հայցը բավարարել մասնակիորեն՝ 15.972,5 եվրոյին համարժեք ՀՀ դրամ չափով:

3. «ՄԻՄԲԱԲ» ՍՊԸ-ի հայցի մասով գործն ուղարկել Հարավային քաղաքացիական դատարան՝ նոր քննության:

4. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի վճիռ

Քաղաքացիական գործ թիվ **3-132 (ՎԳ)**  
**2008թ.**

Քաղաքացիական գործ թիվ 07-3993  
Նախագահող դատավոր՝ Վ.Ավանեսյան  
Դատավորներ՝ Գ.Մատինյան  
Դ.Խաչատրյան

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի մարտի 27-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Ա.Եփրեմյանի վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.11.2007 թվականի վճռի դեմ՝ ըստ Ա.Եփրեմյանի հայցի ընդդեմ Ն.Մանվելյանի՝ անհիմն հարստացման գումարները վերադարձնելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Ա.Եփրեմյանը պահանջել է Ն.Մանվելյանից բռնագանձել 4.042.000 ՀՀ դրամ՝ որպես անհիմն խնայած վարձավճարի գումար և 50.526 ՀՀ դրամ՝ որպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսներ:

Կենտրոն և Նորք Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 15.10.2007 թվականի վճռով հայցը մերժվել է:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 11.30.2007 թվականի վճռով հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ա.Եփրեմյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով:

1) *Դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածը*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

---

---

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի օրինական ուժի մեջ մտած 28.06.2007 թվականի վճռով հաստատվել է, որ Ն.Մանվելյանի կողմից առևտրային տարածքն առանց հայցվորի համաձայնության օգտագործվելու հետևանքով որպես անհիմն խնայված գումար Ն.Մանվելյանը պարտավոր է Ա.Եփրեմյանին վճարել մեկ ամսվա համար 385.000 ՀՀ դրամ, ինչպես նաև տոկոսներ:

Օրինական ուժի մեջ մտած վերոհիշյալ դատական ակտով հաստատված հանգամանքը սույն քաղաքացիական գործը քննելիս չպետք է կրկին անգամ ապացուցվեր:

2) *Դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 218-րդ հոդվածի պահանջները, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092-րդ, 191-րդ, 193-րդ, 197-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառվեն:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Բողոքարկվող վճռում չեն պահպանվել օրենքով վճռին առաջադրված պահանջները և կայացվել է չիմնավորված վճիռ: Վճռում չի տրվել դրա իրավական և փաստական հիմնավորումները:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ տվյալ դեպքում Ն.-Մանվելյանն առանց Ա.Եփրեմյանի համաձայնության է օգտագործել ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքը, որի արդյունքում Ա.Եփրեմյանի հաշվին խնայել է գումարներ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 193-րդ և 197-րդ հոդվածների խախտման վերաբերյալ հիմնավորումները վճռաբեկ բողոքում բացակայում են:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է րեկանել Վերաքննիչ դատարանի 30.11.2007 թվականի վճիռը և այն փոփոխել՝ հայցը բավարարել:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Երևանի Վարդանանց 22 հասցեի տարածքը ընդհանուր սեփականության իրավունքով պատկանում է Ա.Եփրեմյանին և Ն.Մանվելյանին:

2) Վերաքննիչ քաղաքացիական դատարանի օրինական ուժի մեջ մտած 28.06.2007 թվականի վճռով Ա.Եփրեմյանի հայցն ընդդեմ Ն.Մանվելյանի բավարարվել է, կիրառելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092-րդ հոդվածը: Վճռով հաստատված է համարվել որ «Նարինե Մանվելյանը միայնակ շարունակել է գործունեությունը վիճելի տարածքում, ինչի հետևանքով ստացել է եկամուտներ» որի արդյունքում վճռվել է բռնագանձել անհիմն խնայած մեկ ամսվա վարձավճար որպես ուրիշի հաշվին խնայված գույք:

3) Վեճի առարկա տարածքը զբաղեցնում է Ընկերությունը:

### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ.

1) *բողոքն առաջին հիմքով անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.*

*Վճռաբեկ դատարանը, որոշելու համար վճռաբեկ բողոքի հիմքի հիմնավորվածությունը, բողոքի սահմաններում պետք է քննարկման առարկա դարձնի հետևյալ իրավական հարցը.*

*Արդյո՞ք օրենքի մեկնաբանության մասին դատարանի իրավական դիրքորոշումը ընդգրկվում է դատական ակտի պրեյուդիցիալ կապի (նախադատելիության) օբյեկտիվ սահմաններում, այսինքն ունի նախադատելի նշանակություն:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նախկինում քննված քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած

դատարանի վճռով հաստատված հանգամանքները դատարանում այլ գործ քննելիս կրկին չեն ապացուցվում:

Այսինքն՝ օրինական ուժի մեջ մտած սկզբնական դատական ակտի նախադատելիությունը պայմանավորում է նոր կայացվելիք դատական ակտի բովանդակությունն այն մասով, որը վերաբերում է նախկինում քննված այլ գործով արդեն իսկ հաստատված հանգամանքներին:

Գործին մասնակցող անձանց համար նախադատելիությունը նշանակում է որոշակի սահմաններում ապացուցման պարտականությունից ազատում, ինչպես նաև արգելք կրկին ապացուցելու կամ հետագա դատավարություններում հերքելու մնացած հանգամանքները: Նախադատելիությունը դատարանի համար ենթադրում է պարտականություն մերմուծելու մնացած հանգամանքը նոր կայացվող դատական ակտում:

Դատական ակտի պրեյուդիցիալ կապի կամ նախադատելիության օբյեկտիվ սահմանները որոշվում են **հանգամանքների** այն շրջանակով, որոնք պետք է հաստատված լինեն օրինական ուժի մեջ մտած դատական ակտով և ենթակա չեն կրկին ապացուցման կամ հերքման այլ գործ քննելիս: (տե՛ս՝ «Սաթնե» ՍՊԸ ընդդեմ Աշոտ և Հենրիկ Այվազյանների՝ հողի վարձակալության իրավունքի առուվաճառքի պայմանագիրը լուծելու, Ընկերությանը պատկանող և 17.02.2003 թվականին կնքված հողի վարձակալության իրավունքի առուվաճառքի պայմանագրով ձեռք բերված օդակաձև գրոսայգու 5-րդ հատվածում 0,04 հա հողամասի նկատմամբ վարձակալության իրավունքը վերադարձնելուն պարտավորեցնելու պահանջի մասին թիվ 3-93(ՎԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 29.02.2008 թվականի որոշումը)

Սույն քաղաքացիական գործով Ա.Եփրեմյանի և Ն.Մանվելյանի միջև նույնանման փաստական հանգամանքներով այլ քաղաքացիական գործով կայացված Վերաքննիչ քաղաքացիական դատարանի օրինական ուժի մեջ մտած 28.06.2007 թվականի վճռով հաստատվել է, որ «...Նարինե Մանվելյանը միայնակ շարունակել է գործունեությունը վիճելի տարածքում, ինչի հետևանքով ստացել է եկամուտներ»: Վերաքննիչ դատարանը այս վեճի նկատմամբ կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092-րդ հոդվածը՝ պատասխանողից բռնագանձելով «անհիմն խնայած մեկ ամսվա վարձավճար» որպես ուրիշի հաշվին խնայված գույք:

Այսինքն, Վերաքննիչ քաղաքացիական դատարանի օրինական ուժի մեջ մտած 28.06.2007 թվականի վճռով այլ վերաբերելի փաստերի հետ մեկտեղ հաստատված է համարվել Նարինե Մանվելյանի կողմից վեճի առարկա տարածքում ձեռնարկատիրական գործունեության իրականացման փաստը, որի նկատմամբ Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092-րդ հոդվածը և եկել եզրահանգման, որ Նարինե Մանվելյանը անհիմն խնայել է վեճի առարկա տարածքի մեկ ամսվա վարձավճարը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նախկինում քննված գործով նախադատելի փաստ կարող է որակվել Նարինե Մանվելյանի կողմից վեճի առարկա տարածքում միայնակ ձեռնարկատիրական գործունեության իրականացումը, իսկ դրա արդյունքում մեկ ամսվա վարձավճարի անհիմն խնայած լինելը կամ չլինելը դատարանի իրավական որակումն է, որը կատարվել է վերոնշյալ և մի շարք այլ վերաբերելի փաստերի հետագոտություն և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092-րդ հոդվածի մեկնաբանության արդյունքում:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Նարինե Մանվելյանի կողմից գումար խնայած լինելը կամ չլինելը սույն քաղաքացիական գործով նախադատելի հանգամանք չէ և չի կարող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառման հիմք հանդիսանալ:

Վճռաբեկ դատարանը մնացն է եզրահանգման համար հիմք է ընդունում դատավորի անկախության սկզբունքը և որպես այդ սկզբունքի կարևոր դատավարական երաշխիք՝ օրենքի մեկնաբանության և դրա հիման վրա որոշման կայացման լիարժեք անկախությունը:

---

---

Այսպես, ՀՀ Սահմանադրության 97-րդ հոդվածի համաձայն՝ արդարադատություն իրականացնելիս դատավորն անկախ է, ենթարկվում է միայն Սահմանադրությանը և օրենքին: Յուրաքանչյուր կոնկրետ դեպքում դատարանը կիրառում է իրավունքի նորմը՝ ղեկավարվելով դրա բովանդակության սեփական ընկալմամբ: Դատարանի պարտականությունների մեջ է մտնում որոշելը, թե տվյալ գործով ինչ օրենքներ են ենթակա կիրառման և ինչպես պետք է դրանք կիրառվեն: Ընդ որում դատարանները պարտավոր են ղեկավարվել նորմատիվ նյութի սեփական ընկալմամբ (Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 13.10.1994 թվականի թիվ R(94)12 հանձնարարական, 5-րդ սկզբունք), քանի որ գործում է դատարանի կողմից օրենքի պատշաճ իմացության կանխավարկածը (jura novit curia):

Բացի այդ, իրավունքի նորմի բովանդակության կամ դրա մեկնաբանության հարցը գործով ապացուցման առարկայի սահմաններից դուրս է, այն չի հաստատվում ապացույցներով: Իրավունքի նորմի մեկնաբանությունը հատուկ տրամաբանական գործընթաց է, որը նույնական չէ ապացուցման գործընթացին: Կողմերն իրավասու են իրենց իրավական դիրքորոշումներով ազդել դատարանի կարծիքի ձևավորման վրա, սակայն օրենքի կիրառումը, ինչը օրենքի մեկնաբանության հետևանք է, վերջին հաշվով դատարանի մենաշնորհն է:

Ինչ վերաբերում է դատական նախադեպի ինստիտուտին որպես իրավունքի աղբյուր, ապա ինքնին դատական նախադեպը՝ լինելով ինքնուրույն ինստիտուտ, չի կարող ածանցյալ լինել նախադատելիության դատավարական ինստիտուտից: Նախադեպը դա դատական իրավաստեղծության արդյունք է, իսկ նախադատելիությունը՝ դատական ակտի օրնական ուժի և վերջնականության հետևանք: Նախադատելիության սահմանները էապես նեղ են և արտահայտվում են միայն ապացուցման ոլորտում:

Բացի դա, դատական ակտի հիմնավորումների (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունների) պարտադիր բնույթը սահմանված է միայն Վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտերի համար (ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ կետ):

**Այսպիսով, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ դատարանի իրավական դիրքորոշումը նախադատելի հանգամանք չէ: Իրավունքի սեփական ընկալման հիքով դատարանն իրավասու է կատարել որոշակի եզրահանգումներ: Նախադատելի այս դեպքում կարող է լինել հաստատված հանգամանքը, սակայն ոչ դատարանի իրավական դիրքորոշումը:**

*2) բողոքն երկրորդ հիմքով անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ անձը, ով առանց օրենքով, այլ իրավական ակտերով կամ գործարքով սահմանված հիմքերի ուրիշ անձի (տուժողի) հաշվին ձեռք է բերել գույք կամ խնայել է այն (ձեռք բերողը), պարտավոր է տուժողին վերադարձնել անհիմն ձեռք բերած կամ խնայած գույքը (անհիմն հարստացումը), բացառությամբ սույն օրենսգրքի 1099 հոդվածով նախատեսված դեպքերի:

Վերոգրյալ հոդվածից հետևում է, որ անհիմն հարստացման հետևանքով պարտավորության առաջացման համար անհրաժեշտ է երկու վավերապայմանների միաժամանակյա առկայությունը՝

1. որպեսզի անձը ուրիշի հաշվին ձեռք բերի կամ խնայի գույք

2. գույքի ձեռք բերումը կամ խնայումը տեղի ունենա իրավական հիմքի բացակայությամբ:

Հիմք ընդունելով վերոնշյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհիմն է վճռաբեկ բողոքի փաստարկն այն մասին, որ Նարինե Մանվելյանը անհիմն խնայել է վեճի առարկա տարածքի մեկ ամսվա վարձավճարը, քանի որ՝

ա) վեճի առարկա տարածքը օգտագործում է ոչ թե Նարինե Մանվելյանը, այլ Ընկերությունը.

բ) Նարինե Մանվելյանի՝ որպես ֆիզիկական անձի կողմից ուրիշի հաշվին գույք ձեռք բերելու կամ խնայելու փաստը գործով հաստատված չէ:

Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով Նարինե Մանվելյանը պատշաճ պատասխանող չէ, որի հիմքով հայցը ենթակա էր մերժման:

Ինչ վերաբերում է 197-րդ և 193-րդ հոդվածների խախտման մասին վճռաբեկ բողոքի փաստարկներին, Վճռաբեկ դատարանը դրանց չի անդրադառնում, քանի որ վճռաբեկ բողոքում բացակայում են խախտման հիմնավորումները:

Միաժամանակ, հիմք ընդունելով վճռաբեկ բողոքի համար սահմանված պետական տուրքի վճարումը մասնակիորեն հետաձգելու վերաբերյալ Ա.Եփրեմյանի միջնորդությունը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ա.Եփրեմյանից ենթակա է բռնագանձման չվճարված 92.775,78 (իննսուններկու հազար յոթ հարյուր յոթանասունհինգ դրամ յոթանասունութ լումա) ՀՀ դրամ պետական տուրքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.11.2007 թվականի վճիռը թողնել օրինական ուժի մեջ:

2. Ա.Եփրեմյանից բռնագանձել 92.775,78 (իննսուններկու հազար յոթ հարյուր յոթանասունհինգ դրամ յոթանասունութ լումա) ՀՀ դրամ պետական տուրքը:

3. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **3-361(ՎԳ)**  
**2008թ.**

Քաղաքացիական գործ թիվ 08-617

Նախագահող դատավոր՝ Դ. Խաչատրյան  
Դատավորներ՝ Ս. Միքայելյան  
Ն. Տավարացյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ  
դատարան)

*նախագահությամբ* Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի մայիսի 23-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 21.02.2008 թվականի որոշման դեմ՝ ըստ Երևան քաղաքի դատախազության (այսուհետ՝ Դատախազություն) դիմումի՝ գույքը տիրագործի ճանաչելու և այն պետության սեփականությանը հանձնելու պահանջների մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Դատախազությունը պահանջել է ՎԱՁ-2107 մակնիշի առանց պետհամարանիշի ավտոմեքենան ճանաչել տիրագործի և այն, որպես սեփականություն, հանձնել Հայաստանի Հանրապետությանը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 19.11.2007 թվականի վճռով դիմումը մերժվել է:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 21.02.2008 թվականի որոշմամբ Դատախազության վերաքննիչ բողոքը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածը, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ, 172-րդ, 178-րդ, 179-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Սույն քաղաքացիական գործով Հայաստանի Հանրապետության գույքային շահը կայանում է նրանում, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի նորմերին համապատասխան տիրագործի գույքի նկատմամբ ձեռք բերելով սեփականության իրավունք, պետությունն այդ գույքի նկատմամբ կիրականացնի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածով նախատեսված սեփականատիրոջ լիազորությունները: Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածը, որով սահմանափակվել է պետության գույքային շահ հասկացության իմաստը և այն նույնացվել է սոսկ պետությանը պատճառված վնասի (ղեղիկտային պարտավորությունների) հատուցմանն ուղղված հայց հարուցելու պետական մարմնի լիազորությունների հետ: Սույն գործով պետության անունից հանդես է գալիս օրենքով լիազորված մարմինը՝ ի դեմս Դատախազության:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի 21.02.2008 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Դատախազության վարույթում գտնվող թիվ 12211801 քրեական գործի նախաքննության ընթացքում գործով մեղադրյալ Ա.Համբարձումյանի Արմավիրի մարզի Շահումյան գյուղում գտնվող տանը 11.05.2002 թվականին կատարված խուզարկությամբ հայտնաբերվել է «ՎԱԶ-2107» մակնիշի ավտոմեքենա: Վերը նշված ավտոմեքենան տեղափոխվել է Մաշտոցի ներքին գործերի բաժին հետագա ստուգումներ կատարելու համար:

2) 11.05.2002 թվականին կազմված խուզարկության արձանագրության մեջ նշված է, որ գործով մեղադրյալ Արմեն Համբարձումյանի հայր Ժորա Համբարձումյանի հայտարարության համաձայն՝ նշված ավտոմեքենան պատկանում է իր ծանոթ Եմիլին: Վերջինս նշված ավտոմեքենան 15 օր առաջ տվել է իրեն պարտքի դիմաց:

### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.

*1. Գույքը տիրագործի ճանաչելու պահանջ ներկայացնելու Դատախազության իրավունքի մասին.*

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով անհրաժեշտ է պատասխանել հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք Դատախազությունը, ելնելով իր սահմանադրական կարգավիճակից, կարող է գույքը տիրագործի ճանաչելու պահանջ ներկայացնել դատարան:

ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի համաձայն՝ դատախազությունը *օրենքով սահմանված դեպքերում և կարգով* պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի համաձայն՝ դատախազը պետական շահերի պաշտպանության հայց հարուցում է միայն, եթե՝

1. իր լիազորություններն իրականացնելիս հայտնաբերում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը, որին վերապահված է պետական շահերի պաշտ-

---

---

պանությունն առնչվող տվյալ հարցերով հայց ներկայացնելը, իրագել լինելով պետական շահերի խախտման փաստի մասին, ողջամիտ ժամկետում հայց չի ներկայացրել կամ հայց չի ներկայացնում դատախազի կողմից հայց ներկայացնելու առաջարկություն ստանալուց հետո կամ

2. պետական շահերի խախտում է տեղի ունեցել այն հարցերով, որոնցով հայց ներկայացնելը օրենսդրությամբ վերապահված չէ որևէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի, կամ

3. դատախազին հայց հարուցելու միջնորդությամբ դիմել է իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը, կամ

4. հանցագործությամբ ուղղակիորեն պետությանը պատճառված է գույքային վնաս, կամ

5. պետական շահերի պաշտպանության հայցը հարուցվում է այլ երկրների դատաբաններում կամ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս տեղի ունեցող արբիտրաժներում, բացառությամբ այն դեպքերի, երբ Հայաստանի Հանրապետության կառավարությունը լիազորում է այլ պետական մարմնի կամ կազմակերպության:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 179-րդ հոդվածի համաձայն՝ շարժական գույքը, որը սեփականատերը լքել է կամ դրա նկատմամբ սեփականության իրավունքից հրաժարվելու նպատակով թողել է այլ կերպ (դեմ նետված գույք), այլ անձինք կարող են վերածել իրենց սեփականության՝ սույն հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով:

Սույն քաղաքացիական գործով դատարանը դիմումի մերժման հիմքում դրել է այն հանգամանքը, որ Դատախազությունը լիազորված չէ տիրագուրկ ճանաչելու պահանջ ներկայացնել դատարան: Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գույքը տիրագուրկ ճանաչելու պահանջ ներկայացնելը քաղաքացիական իրավունքի յուրաքանչյուր սուբյեկտի իրավունքն է, իսկ դրա իրականացման շրջանակները կարող են տարբեր լինել կախված համապատասխան սուբյեկտի լիազորությունների շրջանակից:

Հիմք ընդունելով դատախազության սահմանադրական կարգավիճակը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատախազությունը լիազորված է ներկայացնելու գույքը տիրագուրկ ճանաչելու պահանջ բողոք այն դեպքերում, երբ դրանով խախտվում են կամ կարող են խախտվել պետության գույքային շահերը:

2. *Սույն քաղաքացիական գործով առգրավված գույքը տիրագուրկ լինելու մասին.*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 178-րդ հոդվածի համաձայն՝ տիրագուրկ է համարվում այն գույքը, որը չունի սեփականատեր, կամ որի սեփականատերն անհայտ է կամ հրաժարվել է դրա նկատմամբ սեփականության իրավունքից:

Սույն օրենսգրքի 179-րդ հոդվածի համաձայն՝ շարժական գույքը, որը սեփականատերը լքել է կամ դրա նկատմամբ սեփականության իրավունքից հրաժարվելու նպատակով թողել է այլ կերպ (դեմ նետված գույք), այլ անձինք կարող են վերածել իրենց սեփականության՝ սույն հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ շարժական գույքը տիրագուրկ ճանաչելու համար դատարանում պետք է հիմնավորվի սեփականատիրոջ կողմից այդ գույքը դեմ նետելը: Մինչդեռ, բողոք բերած անձը չի հիմնավորել վեճի առարկա գույքը սեփականատիրոջ կողմից դեմ նետված լինելու հանգամանքը:

Դեռ ավելին, սույն քաղաքացիական գործի փաստերի համաձայն՝ Ա.Համբարձումյանը վեճի առարկա գույքը ստացել է պարտքի դիմաց, որպիսի հանգամանքը Դատախազության կողմից չի վիճարկվել: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով բացակայում են վեճի առարկա հանդիսացող ավտոմեքենան տիրագուրկ ճանաչելու հիմքերը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված՝ անփոփոխ թողնված դատական ակտը պատճառաբանելու՝ Վճռաբեկ դատարանի լիազոր

րությամբ՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Վերաքննիչ դատարանի որոշմամբ գործն ըստ էության ճիշտ է լուծվել, սակայն այն սխալ է պատճառաբանվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 21.02.2008 թվականի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒՐՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի վճիռ

Քաղաքացիական գործ թիվ **3-480(ՎԳ)**  
**2008թ.**

Քաղաքացիական գործ թիվ 08-1078  
Նախագահող դատավոր՝ Կ.Հակոբյան  
դատավորներ՝ Տ.Սահակյան  
Տ.Նազարյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ  
դատարան)

*նախագահությամբ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի հուլիսի 25-ին,

դռնբաց դատական նիստում, քննելով «Արաբկիր Ալյո Լիկյոր-Օդու գործարան» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.02.2008 թվականի վճռի դեմ՝ ըստ Ընկերության հայցի ընդդեմ Սոս Բաղդասարյանի՝ բնակարանի 1/7 մասի սեփականատեր ճանաչելու և բնակարանի մասի վրա բռնագանձում տարածելու պահանջների մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է ճանաչել Սոս Բաղդասարյանի սեփականության իրավունքն Երևանի, Չ. Սարկավազի փողոցի 126/1 շենքի թիվ 14 բնակարանի 1/7 մասի նկատմամբ և բռնագանձում տարածել բնակարանի այդ մասի վրա:

Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 17.11.2007 թվականի վճռով հայցը մերժվել է:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 08.02.2008 թվականի վճռով հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի 1-ին

պարբերությունը և չի կիրառել նախկին ՀՀ բնակարանային օրենսգրքի 54-րդ հոդվածը, նախկին ԽՍՀՄ մինիստրների խորհրդի և արհեստակցական միությունների հայկական հանրապետական խորհրդի «Պետական և հանրային ֆոնդի տներում բնակարաններն, որպես սեփականություն քաղաքացիներին վաճառելու մասին» 13.06.1989 թվականի թիվ 272-րդ որոշմամբ հաստատված կանոնադրության 20-րդ կետը, 04.03.1991 թվական թիվ 155-րդ որոշման 1-ին և 2-րդ կետերը:

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Երևանի, Ջ.Սարկավազի (նախկին Կամոյի) փողոցի թիվ 126/1 շենքի թիվ 14 բնակարանի վարձակալ Սոսիկ Բաղդասարյանը 1993 թվականին դիմել է Խորհրդային շրջխորհրդի գործկոմին՝ ընտանիքի 7 անձով բնակարանն անհատույց սեփականաշնորհելու համար:

Վերաքննիչ դատարանն ուշադրություն չի դարձրել, որ 20.03.1993 թվականին Սոսիկ Բաղդասարյանի դիմումին կցվել է տեղեկանք անձերի թվի վերաբերյալ, որոնք բնակվում էին տվյալ բնակարանում: Պատասխանող Սոս Աշոտի Բաղդասարյանը վարձակալի թոռն էր և նրա ընտանիքի անդամը, որն այդ ժամանակ անչափահաս էր:

Հետևաբար, լինելով վարձակալի ընտանիքի անդամ նա նույնպես օրենքի ուժով դարձել է Երևանի, Ջ. Սարկավազի (նախկին Կամոյի) փողոցի թիվ 126/1 շենքի թիվ 14 բնակարանի համասեփականատեր:

*2) Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել Ընկերության կողմից որպես իրավական փաստարկ մատնանշված ՀՀ վճռաբեկ դատարանի 30.03.2007թ. թիվ 3-506 (ՎԳ) որոշումը, որում առկա գործի փաստական հանգամանքները նույնանման են սույն գործի փաստական հանգամանքների հետ:

Նշված որոշմամբ Վճռաբեկ դատարանը գտել էր, որ հիշատակված դատական ակտը պետք է մեկնաբանել սեփականաշնորհման ողջ հայեցակարգի լույսի ներքո:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 08.02.2008 թվականի վճիռը և այն փոփոխել՝ հայցը բավարարել:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Ժողովրդական դեպուտատների Երևան քաղաքի Խորհրդային շրջխորհրդի գործադիր կոմիտեի 07.09.1993 թվականի որոշմամբ թույլատրվել է Երևանի, Կամոյի (ներկայիս Ջ.Սարկավազի) փողոցի թիվ 126/1 շենքի թիվ 14 բնակարանը վաճառել Սոսիկ Բաղդասարյանին որպես սեփականություն՝ հաշվի առնելով, որ նա ընտանիքի 7 անձով ներկայացրել է անհրաժեշտ փաստաթղթեր և խնդրել թույլատրել գնելու վերը նշված բնակարանը:

2. Խորհրդային շրջանի 1, 2 և 3 բնակարանային շահագործման տեղամասի 15.03.1993 թվականի տեղեկանքի համաձայն՝ Սոսիկ Բաղդասարյանի ընտանիքը բաղկացած է 7 անձից: Սեփականաշնորհման պահին բնակարանում հաշվառված էր նաև Սոս Աշոտի Բաղդասարյանը :

3. Արաբկիրի և Բանաբեռ-Ջեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի օրինական ուժի մեջ մտած 16.11.2006 թվականի վճռով Սոս Բաղդասարյանից հօգուտ Ընկերության բռնագանձվել է 4.715.050 ՀՀ դրամ:

### **4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.**

Զննելով վճռաբեկ բողոքը վերը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ

---

---

1) *Վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*  
ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը:

ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ոչ ոքի չի կարելի գրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի:

Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդի և Արհեստակցական միությունների հայկական հանրապետական խորհրդի «Պետական ու հանրային բնակարանային ֆոնդի տնօրնում բնակարաններն որպես անձնական սեփականություն քաղաքացիներին վաճառելու մասին» 13.06.1989 թվականի թիվ 272 որոշմամբ հաստատված կանոնադրության 20-րդ - կետի համաձայն՝ պետական և հանրային բնակարանային ֆոնդի տնօրնում բնակարաններն որպես անձնական սեփականություն վաճառվում են տվյալ բնակարանը զբաղեցնող վարձակալին կամ Հայկական ԽՍՀ բնակարանային օրենսգրքի 54-րդ հոդվածում նշված նրանց ընտանիքի անդամներին՝ ընտանիքի բոլոր չափահաս անդամների գրավոր համաձայնության առկայության դեպքում: Նրանց համաձայնությամբ բնակարանը կարող է վաճառվել որպես նրանց ընդհանուր սեփականություն:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ իրավական ակտի հիշատակված դրույթը պետք է մեկնաբանել սեփականաշնորհման ողջ հայեցակարգի լույսի ներքո: Տվյալ դեպքում, պետական և հանրային բնակարանային ֆոնդի տնօրնի սեփականաշնորհման համար ընտրվել էր վաճառքի ձևը, որի հիմնական նպատակը պետական և հանրային բնակարանային ֆոնդից յուրաքանչյուր քաղաքացու որոշակի սեփականության բաժնի հատկացումն էր:

Նշված տրամաբանությունից է ելնում նաև հետագայում՝ 29.06.1993 թվականին ընդունված և 01.09.1993 թվականին ուժի մեջ մտած «Պետական և հանրային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենքը, որի 13-րդ հոդվածի համաձայն՝ բնակարանային ֆոնդի բնակարանների սեփականաշնորհումն ընտանիքի չափահաս անդամների համաձայնության դեպքում ձևակերպվում է տվյալ բնակարանի վարձակալի անունով, կամ նրա ընտանիքի որևէ չափահաս անդամի անունով՝ **որպես ընտանիքի բոլոր անդամների ընդհանուր համատեղ, կամ ընդհանուր բաժնային սեփականություն:** Վարձակալի ընտանիքի այն անդամները, որոնք բնակվում են նրա հետ համատեղ, Հայաստանի Հանրապետության բնակարանային օրենսգրքի համաձայն՝ վարձակալի հետ համահավասար օգտվում են բնակտարածության վարձակալության պայմանագրից բխող բոլոր իրավունքներից և կրում բոլոր պարտականությունները, ինչպես նաև օգտվում են բնակարանների սեփականաշնորհումից բխող իրավունքներից:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ժողովրդական դեպուտատների Երևան քաղաքի Խորհրդային շրջխորհրդի գործադիր կոմիտեի 07.09.1993 թվականի որոշմամբ թույլատրվել է Երևանի, Կամոյի (ներկայիս՝ Չ. Սարկվազի) փողոցի թիվ 126/1 շենքի թիվ 14 բնակարանը վաճառել նշված բնակարանի վարձակալ՝ Սոսիկ Բալաբեկի Բաղդասարյանին, որպես սեփականություն՝ հաշվի առնելով, որ նա **ընտանիքի 7 անձով** ներկայացրել է անհրաժեշտ փաստաթղթեր և խնդրել թույլատրել գնելու վերը նշված բնակարանը: Խորհրդային շրջանի 1, 2, 3 բնակարանային շահագործման տեղամասի 15.03.1993 թվականի տեղեկանքի համաձայն՝ **Սոսիկ Բալաբեկի Բաղդասարյանի ընտանիքը բաղկացած էր 7 անձից: Սեփականաշնորհման պահին բնակարանում հաշվառված էր նաև պատասխանող Սոս Աշոտի Բաղդասարյանը:**

Վերը նշված փաստերի համադրության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Սոսիկ Բալաբեկի Բաղդասարյանի ընտանիքին բնակվելու համար հատկացված Երևանի Չ.Սարկվազի (նախկին՝ Կամոյի) փողոցի թիվ 126/1 շենքի թիվ 14 բնակարանը չէր կարող վաճառվել ընտանիքի մեկ անդամին՝ մյուսներին գրկելով բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքից: Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Երևանի, Չ.Սարկվազի (նախկին՝ Կամոյի) փողոցի թիվ 126/1 շենքի թիվ 14

բնակարանը Սոսիկ Բալաբեկի Բաղդասարյանին վաճառելիս, տվյալ բնակարանի նկատմամբ ծագել է նրա և նրա ընտանիքի բոլոր 6 անդամների՝ այդ թվում նաև պատասխանող Սոս Աշոտի Բաղդասարյանի սեփականության իրավունքը:

Հետևաբար, հիմնավոր չէ Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությունը, որ վիճելի բնակարանն անձնական սեփականության իրավունքով հանձնվել է Սոսիկ Բալաբեկի Բաղդասարյանին և պատասխանողը չի կարող ճանաչվել Երևանի, Չ. Սարկավազի (նախկին՝ Կամոյի) փողոցի թիվ 126/1 շենքի թիվ 14 բնակարանի որևէ մասի սեփականատեր:

2) *Վճռաբեկ բողոքն երկրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքի հիմքում բարձրացված իրավական հարցին պատասխանելու համար վճռաբեկ բողոքի հիմքի շրջանակներում պետք է քննարկման առարկա դարձվի հետևյալ հարցադրումը.

*Արդյո՞ք Ընկերության կողմից վկայակոչված ՀՀ վճռաբեկ դատարանի 30.03.2007թ. թիվ 3-506(ՎԴ) գործի փաստական հանգամանքները նույնանման են սույն գործի փաստական հանգամանքների հետ և դրանում առկա իրավական հիմնավորումները պարտադիր են Վերաքննիչ դատարանի համար:*

ՀՀ Դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իր գործի քննության ժամանակ որպես իրավական փաստարկ իրավունք ունի մատնանշելու նույնանման փաստական հանգամանքներով մեկ այլ գործով Հայաստանի Հանրապետության դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները), իսկ նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով Վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ յուրաքանչյուր գործ իր փաստական հանգամանքներով եզակի է և Վճռաբեկ դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտով տրված իրավական մեկնաբանության՝ համապատասխան գործով կիրառելիության հարցը լուծելիս, դատարանները պետք է համադրեն նախադեպային գործի և քննության առարկա գործի էական նշանակություն ունեցող փաստերը: Այսինքն, դատարանը նախադեպային որոշմամբ տրված օրենքի մեկնաբանության՝ քննվող գործով կիրառելիության հարցը լուծելիս պետք է նախ առանձնացնի այն փաստական հանգամանքները, որոնք էական նշանակություն են ունեցել նախադեպային որոշման կայացման համար և այնուհետև դրանք համադրի քննվող քաղաքացիական գործի փաստական հանգամանքների հետ, որոշելով դրանց նույնական լինել կամ չլինելու հարցը:

Վճռաբեկ դատարանի 30.03.2007թ. թիվ 3-506(ՎԴ) գործի փաստական հանգամանքների համաձայն՝ Ժողովրդական դեպուտատների Երևան քաղաքի խորհրդային շրջխորհրդի գործադիր կոմիտեի 13.05.1993 թվականի թիվ 10/235 որոշմամբ թույլատրվել էր Երևանի, Սայաթ-Նովա թաղամասի 1/2 շենքի թիվ 20 բնակարանը վաճառել բնակարանի վարձակալին որպես սեփականություն՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նա ընտանիքի 5 անձով ներկայացրել էր անհրաժեշտ փաստաթղթեր և խնդրել թույլատրել գնել վերոհիշյալ բնակարանը: Սեփականաշնորհման պահին բնակարանում հաշվառված էին վարձակալի ընտանիքի 5 անդամները: Վերոգրյալի հիման վրա նույն գործով Վճռաբեկ դատարանը գտել էր, որ Երևանի, Սայաթ-Նովա թաղամասի 1/2 շենքի թիվ 20 երկու սենյականոց բնակարանը վարձակալին վաճառելիս տվյալ բնակարանի նկատմամբ ծագել է նրա և նրա ընտանիքի բոլոր 5 անդամների սեփականության իրավունքը:

---

---

Հիմք ընդունելով վերոգրյալը Վճռաբեկ դատարանը գտնում է, որ թե սույն քաղաքացիական գործի և թե Վճռաբեկ դատարանի 30.03.2007թ. թիվ 3-506(ՎԳ) գործի համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները նույնական են: Մասնավորապես, թե սույն քաղաքացիական գործի և թե Վճռաբեկ դատարանի 30.03.2007թ. թիվ 3-506(ՎԳ) գործի համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներն են՝ շրջխորհրդի գործադիր կոմիտեի որոշման առկայությունը, որով թույլատրվել էր բնակարանը վաճառել բնակարանի վարձակալներին, հաշվի առնելով, որ նրանք իրենց ընտանիքի անդամներով ներկայացրել էին անհրաժեշտ փաստաթղթեր և խնդրել թույլատրել գնելու բնակարանը: Երկու գործերում էլ բարձացվում է վարձակալի ընտանիքի անդամի սեփականաշնորհման սուբյեկտ լինելու հարցը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով Վճռաբեկ դատարանի 30.03.2007թ. թիվ 3-506(ՎԳ) գործով կայացված որոշումը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով նույնական փաստական հանգամանքների առկայությունը բավարար հիմք է Սոս Աշոտի Բաղդասարյանի սեփականության իրավունքի ճանաչման մասով Ընկերության հայցը բավարարելու համար:

Այսպիսով, վերը նշված հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար ՀՀ քաղաքացիական դատավարություն օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով՝ Վերաքննիչ դատարանի վճիռը մասնակիորեն բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը մասնակիորեն փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործն ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը մասնակիորեն փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ինչ վերաբերում է բնակարանի՝ Սոս Աշոտի Բաղդասարյանի, բաժնի վրա բռնագանձում տարածելու Ընկերության հայցապահանջին, ապա այն ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բաժնային կամ համատեղ սեփականության մասնակցի մոտ այլ գույքի անբավարարության դեպքում նրա պարտատերն իրավունք ունի ընդհանուր գույքից պարտապանի բաժինն առանձնացնելու պահանջ ներկայացնել՝ դրա վրա բռնագանձում տարածելու համար, իսկ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե բաժինը բնեղենով առանձնացնել անհնար է կամ դրա դեմ առարկում են բաժնային կամ համատեղ սեփականության մնացած մասնակիցները, պարտատերն իրավունք ունի ընդհանուր սեփականության մնացած մասնակիցներից պահանջել շուկայական գնով գնելու պարտապանի բաժինը՝ պարտքը մարելու համար: Ընդհանուր սեփականության մնացած մասնակիցների կողմից պարտա-

պանի բաժինը ձեռք բերելուց հրաժարվելու դեպքում պարտատերն իրավունք ունի պահանջելու բռնագանձումը տարածել ընդհանուր սեփականության իրավունքում պարտապանի բաժնի վրա՝ սույն օրենսգրքի 197-րդ հոդվածին համապատասխան:

Նշված հոդվածից հետևում է, որ պարտատերն իրավունք ունի ընդհանուր գույքից պարտապանի բաժինն առանձնացնելու պահանջ ներկայացնել՝ դրա վրա բռնագանձում տարածելու համար, երբ բաժինը բնեղենով առանձնացնել անհնար է, և երբ ընդհանուր սեփականության մնացած մասնակիցները հրաժարվել են պարտապանի բաժինը ձեռք բերելուց:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ Արաբկիր և Ջանաբեռ-Չեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի օրինական ուժի մեջ մտած 16.11.2006 թվականի վճռով պատասխանող Սոս Աշոտի Բաղդասարյանից հօգուտ Ընկերությունը բռնագանձվել է 4.715.050 ՀՀ դրամ գումար: Մինչդեռ, Ընկերությունը պահանջելով ճանաչել Սոս Բաղդասարյանի սեփականության իրավունքը վիճելի բնակարանի մասի նկատմամբ և բռնագանձումը տարածել բնակարանի այդ մասի վրա, չի ներկայացրել որևէ ապացույց ընդհանուր սեփականության մնացած մասնակիցների կողմից պարտապանի բաժինը ձեռք բերելուց հրաժարվելու մասին:

Հետևաբար, հիմնավոր է Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությունը, որ հայցվորն իր պահանջը պետք է ներկայացներ նաև գործին մասնակից չդարձած և վիճելի բնակարանի սեփականաշնորհմանը մասնակցած Սոս Աշոտի Բաղդասարյանի ընտանիքի բոլոր անդամներին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.02.2008 թվականի վճռի՝ Սոս Բաղդասարյանի սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասը և այն փոփոխել. Ընկերության հայցը բավարարել մասնակիորեն՝ ճանաչել Սոս Բաղդասարյանի սեփականության իրավունքն Երևանի, Չ. Սարկավազի (նախկին՝ Կամոյի) փողոցի թիվ 126/1 շենքի թիվ 14 բնակարանի 1/7 մասի նկատմամբ: Վճռի մնացած մասը թողնել օրինական ուժի մեջ:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

*ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՈՒՐՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ տնտեսական դատարանի վճիռ  
Քաղաքացիական գործ թիվ S-2113  
Դատավոր՝ Գ. Գարիբյան

Քաղաքացիական գործ թիվ **3-28(ՏԳ)**  
**2008թ.**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Հ.ՍԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՍԿԻՐՈՒՄՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ԳՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի փետրվարի 29-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) վճռաբեկ բողոքը ՀՀ տնտեսական դատարանի 27.11.2007 թվականի վճռի դեմ՝ ըստ «ՄԱՎԱ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) դիմումի ընդդեմ Ծառայության՝ օրենքին հակասող ակտը մասնակիորեն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Ձ Ե Ց

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է անվավեր ճանաչել Ծառայության 19.04.2007 թվականի թիվ 1011172 ստուգման ակտը մասնակիորեն՝ ակտի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերի մասով:

ՀՀ տնտեսական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 27.11.2007 թվականի վճռով դիմումը բավարարվել է մասնակիորեն՝ ակտի 1-ին և 2-րդ կետերի մասով:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ծառայությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) *Դատարանը սխալ է մեկնաբանել «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով:*

Տնտեսական դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ հայաստանյան աղբյուրներից ստացված է համարվում՝ ՀՀ տարածքում ոչ ռեզիդենտի իրականացրած ձեռնարկատիրական գործունեությունից ստացած եկամուտները, ՀՀ տարածքում ոչ ռեզիդենտի ստացած այլ եկամուտները:

---

---

Բացի այդ, «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի համաձայն՝ ի թիվս այլ եկամուտների, հայաստանյան աղբյուրներից ստացվող եկամուտներ են նաև բեռների փոխադրման (ֆրախտի) դիմաց ստացվող եկամուտները:

2) Դատարանը սխալ է մեկնաբանել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածը:

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով:*

Դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Ընկերությունը չի պահպանել «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջները, ինչի պատճառով, նույն օրենքի 38-րդ հոդվածի հիման վրա, կիրառվել է տուգանք:

«Եկամտահարկի հաշվարկման և բյուջե վճարման կարգի մասին» հրահանգի 29.1 կետի պահանջն ուժի մեջ է մտել 05.02.2007 թվականին, այսինքն՝ հարկատուի կողմից «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները խախտելուց հետո:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածով սահմանված հետադարձ ուժ տալու կանոնը սույն հրահանգի նկատմամբ կիրառվել չի կարող, քանի որ այդ հրահանգում չկա նորմ, որտեղ սահմանվում է եկամտահարկի գծով հետադարձ ուժ տալու մասին դրույթ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Դատարանի 27.11.2007 թվականի վճիռը՝ դիմումը բավարարելու մասով:

### **3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճարել բողոքի քննության համար եական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 14.07.2006 թվականի թիվ 1011172 հանձնարարագրի հիման վրա Ընկերությունում իրականացվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգում:

2) Ստուգման արդյունքում կազմվել է թիվ 1011172 ստուգման ակտը, որի 1-ին և 2-րդ - կետերով Ընկերությանը շահութահարկի և եկամտահարկի գծով առաջադրվել է լրացուցիչ հարկային պարտավորություն:

3) «Պռոգրուս» ոչ ռեզիդենտ կազմակերպության կողմից Ընկերությանը մատուցվել են ISO9001:2000 սերտիֆիկատացման աուդիտորական ծառայություններ:

4) «Բարիդ Բար Ինտլ Տրանսպորտ» ոչ ռեզիդենտ կազմակերպության և Ընկերության միջև կնքված տեղափոխման պայմանագրով բեռի տեղափոխման երթուղին անցել է ՀՀ տարածքով:

5) Ընկերության կողմից շահութահարկ է հաշվարկվել և վճարվել միայն մատուցված ծառայությունների այն մասով, որոնք փաստացի մատուցվել են Հայաստանի Հանրապետության տարածքում:

6) Ընկերության կողմից ֆիզիկական անձանց վճարված եկամտի գումարների, նրանց բնակության (հաշվառման) վայրի հասցեների և այդ եկամուտներից պահված և բյուջե փոխանցված եկամտահարկի գումարների մասին գրավոր տեղեկություններ Ծառայությանը չեն ներկայացվել:

### **4. Վճարել դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճարել բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճարել դատարանը գտնում է, որ՝

*1) բողոքն առաջին հիմքով անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.*

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ոչ ռեզիդենտի կողմից հայաստանյան աղբյուրներից ստացվող եկամուտների հարկումը կատարում է հարկային գործակալը՝ եկամտի վճարման աղբյուրի մոտ:

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքի իմաստով հայաստանյան աղբյուրից ստացված եկամուտներ են համարվում Հայաստանի Հանրապետության տարածքում ոչ ռեզիդենտի իրականացրած ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտները, ոչ ռեզիդենտի՝ ռեզիդենտից կամ ոչ ռեզիդենտից ստացված պահիվ եկամուտները, Հայաստանի Հանրապետության տարածքում ոչ ռեզիդենտի ստացած այլ եկամուտները: Նույն հոդվածի և 2-րդ մասի «ա» կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներ են համարվում Հայաստանի Հանրապետությունում արտադրանքի, ապրանքների իրացումից և ծառայությունների մատուցումից ստացված եկամուտը՝ անկախ վճարման վայրից:

«Ոչ ռեզիդենտների շահութահարկի հաշվարկման և վճարման կարգի մասին» հրահանգի 2.2.2 կետի համաձայն՝ ոչ ռեզիդենտի կողմից տրանսպորտային ծառայությունների մատուցումից ստացված եկամուտները համարվելու են ստացված հայաստանյան աղբյուրներից այն մասով, որը վերաբերվում է բեռների, փոստի, ուղևորների եւ ուղեբեռների փաստացի փոխադրմանը Հայաստանի Հանրապետության տարածքով:

Վերոնշյալից հետևում է, որ ոչ ռեզիդենտի՝ փոխադրման պայմանագրի հիման վրա ռեզիդենտից ստացված եկամուտից շահութահարկը հարկային գործակալի կողմից պետք է վճարվի միայն մատուցված ծառայությունների այն մասով, որոնք փաստացի մատուցվել են Հայաստանի Հանրապետության տարածքում:

Սույն քաղաքացիական գործով Դատարանը 19.04.2007 թվականի թիվ 1011172 ստուգման ակտի 1-ին կետն անվավեր ճանաչելիս հիմք է ընդունել այն հանգամանքը, որ Ընկերության կողմից վճարվել է Հայաստանի Հանրապետության տարածքով բեռների փոխադրման համար ստացված եկամտից պահված շահութահարկը: Այդ հանգամանքը չի վիճարկվել նաև Ծառայության կողմից:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերության համար Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս մատուցված ծառայության դիմաց տրված եկամուտի համար շահութահարկ պահելու պարտականություն չի կարող դրվել:

Ինչ վերաբերում է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 4-րդ կետի է) ենթակետի կիրառելիության վերաբերյալ վճռաբեկ բողոքի պատճառաբանությանը, ապա այն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 4-րդ կետի է) ենթակետի համաձայն՝ այլ եկամուտներ են համարվում այն եկամուտները, որոնք մասնավորապես ստացված են բեռների փոխադրման (ֆրախտի) դիմաց:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է որ վերոնշյալ հոդվածը սույն քաղաքացիական գործով կիրառելի չէ, քանի որ կողմերի միջև կնքվել է ոչ թե ֆրախտի, այլ բեռների փոխադրման պայմանագիր:

*2) բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

«Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի համաձայն՝ կազմակերպությունները կամ անհատ ձեռնարկատերերը պարտավոր են եռամսյակը մեկ՝ հաջորդ եռամսյակի երկրորդ ամսվա 1-ից ոչ ուշ, իրենց գտնվելու (հաշվառման) վայրի հարկային մարմիններին Հայաստանի Հանրապետության հարկային տեսչության սահմանված ձևով գրավոր տեղեկություններ ներկայացնել անցած եռամսյակում ֆիզիկական անձանց վճարված եկամտի գումարների, նրանց բնակության (հաշվառման) վայրի հասցեների և այդ եկամուտներից պահված և բյուջե փոխանցված եկամտահարկի գումարների մասին:

ՀՀ պետական եկամուտների նախարարության «Եկամտահարկի հաշվարկման բյուջե վճարման կարգի մասին» հրահանգի 29.1 կետի համաձայն՝ կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարներն իրենց կողմից ՀՀ քաղաքացիներին վճարված եկամուտների մասին տեղեկություններ չեն ներկայացնում, եթե սույն հրահանգի դրույթներին համապատասխան իրականացրել են հարկի պահում (զանձում) կամ վճարել են

---

---

սույն հրահանգի 12 և 13-րդ կետերով սահմանված նվազեցվող եկամուտներ, կամ եկամուտները վճարվել են Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած անհատ ձեռնարկատիրոջը (նոտարին):

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ իրավախախտման համար սահմանված պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող կամ իրավախախտում կատարած իրավաբանական և ֆիզիկական անձանց դրությունն այլ կերպ բարելավող իրավական ակտը տարածվում է մինչև դրա ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա, այսինքն՝ ունի հետադարձ ուժ, եթե այդ օրենքով կամ այդ իրավական ակտով այլ բան նախատեսված չէ:

Սույն քաղաքացիական գործով Դատարանը հետադարձ ուժ է տվել ՀՀ պետական եկամուտների նախարարության «Եկամտահարկի հաշվարկման բյուջե վճարման կարգի մասին» հրահանգի 29.1 կետին՝ Ընկերությանը ազատելով «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով նախատեսված տեղեկություններ ներկայացնելու պարտականությունից:

Սինչդեռ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ իրավական ակտերում փոփոխությունները կամ լրացումները կատարում են միայն իրավական ակտն ընդունած մարմինը կամ նրա իրավահաջորդը: Իրավաստեղծ մարմինն իրավական ակտում փոփոխություններ կամ լրացումներ կարող է կատարել **միայն նույն տեսակի** իրավական ակտով:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այլ իրավական ակտով նախատեսված օրենքով սահմանված պարտականությունը վերացնող դրույթը վերոհիշյալ նորմի իմաստով իրավական ուժ ունենալ չի կարող, հետևաբար դրանով սահմանված դրույթին չի կարող տրվել նաև հետադարձ իրավական ուժ:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի՝ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 4-րդ մասի սխալ մեկնաբանման հիմքը բավարար է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածով վճռաբեկ բողոքը բավարարելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ տնտեսական դատարանի 27.11.2007 թվականի վճիռը՝ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության թիվ 1011172 ստուգման ակտի 2-րդ կետն անվավեր ճանաչելու մասով և գործն այդ մասով ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության: Վճիռը մնացած մասով թողնել օրինական ուժի մեջ:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒՐՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ տնտեսական դատարանի վճիռ  
Քաղաքացիական գործ թիվ S-2421/2007թ.  
Նախագահող դատավոր՝ Ռ.Սարգսյան

Քաղաքացիական գործ թիվ **3-31 (ՏԳ)**  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ  
դատարան)

*նախագահությամբ* Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի փետրվարի 29-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պե-  
տական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) վճռաբեկ բողոքը ՀՀ տնտեսական դա-  
տարանի 28.11.2007 թվականի վճռի դեմ՝ ըստ դիմումի «Խասուրո Գրուպ» ՓԲԸ-ի (այսու-  
հետ՝ Ընկերություն) ընդդեմ Ծառայության՝ հաստատագրված վճարի գծով Ընկերության  
անձնական հաշվի քարտում Ծառայության կողմից 13.10.2006 թվականին կատարված  
գրանցումը՝ վերահաշվարկը, օրենքին հակասող ճանաչելու և անձնական հաշվի քարտից  
այդ վերահաշվարկի արդյունքում հաշվեգրված հարկային պարտավորությունները հանել  
պարտավորեցնելու պահանջների մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է օրենքին հակասող ճանաչել հաս-  
տատագրված վճարի գծով 13.10.2006 թվականին կատարված գրանցումը՝ վերահաշվար-  
կը, և Ծառայությանը պարտավորեցնել անձնական հաշվի քարտից հանել վերահաշվար-  
կի արդյունքում հաշվեգրված հարկային պարտավորությունները:

ՀՀ տնտեսական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 28.11.2007 թվականի վճռով  
դիմումը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ծառայությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմ-  
նավորումներով.

*Դատարանը չի կիրառել «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 12-րդ -  
հոդվածի պահանջները, որոնք պետք է կիրառել, սխալ է մեկնաբանել «Հարկերի մասին»*

---

---

ՀՀ օրենքի 18-րդ հոդվածը, Հարկային պետական ծառայության պետի 25.07.2003 թվականի թիվ 03/20-Ն հրամանով հաստատված «Հարկային տեսչություններում հարկ վճարողների անձնական հաշվի քարտի առանձին հարցերի վերաբերյալ» կարգի 2.7 կետի դրույթները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Ընկերությունը Հարկային տեսչություն է ներկայացրել հաստատագրված վճարների ելակետային տվյալներ մի շարք մեքենաների համար, որոնք չեն թարմացվել: Այդ իսկ պատճառով հաշվարկները կատարելիս Ծառայությունը ղեկավարվել է «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով, հիմք է ընդունել նախկին տվյալները և դրանցով հաշվարկել պարտավորությունները: Հաշվարկը ներկայացվել է Դատարանին, որը վերջինիս կողմից հաշվի չի առնվել:

Վերահաշվարկ կատարելիս Ծառայության հարկային տեսչության հաշվառման բաժնի պետի գեկուցագիր չի ներկայացվել և հարկատուն եռօրյա ժամկետում չի տեղեկացվել անձնական հաշվի քարտում կատարված վերահաշվարկի վերաբերյալ:

Դատարանը հաշվի չի առել, որ առկա է Ծառայության հարկային տեսչության պետի հրամանը աշխատանքային խումբ ստեղծելու վերաբերյալ (Ծառայության պետի 27.06.2006 թվականի թիվ 1-06/358-Ա հրաման) և աշխատանքային խմբի գործունեության արդյունքների մասին Ծառայության Ավանի հարկային տեսչության տվյալների մշակման և հաշվառման բաժնի պետը հարկային տեսչության պետին ներկայացրել է գեկուցագիր, որում անդրադարձ կա նաև Ընկերությանը:

Մրանից հետևում է, որ պահպանվել են նշված կարգի պահանջները: Նույնիսկ եթե կարգի պահանջները վերահաշվարկ կատարելիս մասնակիորեն պահպանված չլինեին, այն չի կարող հարկային պարտավորությունների առաջացման օրինականության հարցին առնչվել, քանի որ հաստատագրված վճարների գծով պարտավորությունների առաջացման իրավական հիմքը «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջն է:

Որևէ ձևական նկատառում, որը Դատարանի կողմից հաշվի չի առնվել, չի կարող հանդիսանալ պետական մարմնի գործողությունների վիճարկման և գործողությունների արդյունքի անվավեր՝ օրենքին հակասող, ճանաչելու համար:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Դատարանի 28.11.2007 թվականի վճիռը:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. 27.06.2006 թվականի Ծառայության պետի հրամանի հիման վրա Ավանի հարկային տեսչությունում իրականացվել է անձնական հաշվի քարտերի թրթային և համակարգչային տարբերակների անհամապատասխանությունների ուսումնասիրություն:

2. Ըստ ծառայության տվյալների մշակման և հաշվառման բաժնի պետի կողմից ներկայացված գեկուցագրի՝ ուսումնասիրությունն իրականացվել է որոշակի թվով տնտեսվարող սուբյեկտների, այդ թվում Ընկերության մոտ:

3. Ուսումնասիրության արդյունքում Ընկերության անձնական հաշվի քարտում կատարվել է գրանցում, որի արդյունքում վերջինիս հաստատագրված վճարների գծով առաջադրվել է լրացուցիչ հարկային պարտավորություն:

4. Ուսումնասիրության արդյունքում կազմված արձանագրությունն Ընկերությանը չի տրամադրվել, վերջինս չի ներկայացրել իր համաձայնությունը առաջադրված լրացուցիչ հարկային պարտավորությունների վերաբերյալ:

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ *վճռաբեկ բողոքը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ.*

«Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ հարկային տեսչության մարմին նոր հայտարարություն չներկայացնելու դեպքում յուրաքանչյուր ամսվա համար հաստատագրված վճարի չափը հաշվարկվում է հարկային տեսչության մարմնի կողմից՝ նախորդ ամսվա հաստատագրված վճարի հաշվարկման համար հիմք ընդունված ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների կիրառմամբ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ճշգրտվում է հաստատագրված վճարի չափը, այդ թվում՝ սույն օրենքի 94-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասի 2-րդ, 3-րդ և 4-րդ պարբերությունների համաձայն՝ հարկային մարմինները կարող են անցկացնել տնտեսվարող սուբյեկտի մոտ հարկային մարմին ներկայացված հաշվետվությունների, հաշվարկների, հայտարարագրերի, ելակետային տվյալների վերաբերյալ հայտարարությունների և օրենսդրությամբ սահմանված տեղեկությունների (այսուհետ սույն հոդվածում հաշվետվություններ) կամերալ (գրասենյակային) ուսումնասիրություններ: Կամերալ ուսումնասիրության նպատակն է պարզել հարկերի հաշվարկման ճշտությունը, միևնույն հաշվետվության ցուցանիշների, տվյալների և թվաբանական հաշվարկների ճշտությունը, տարբեր հաշվետվություններում առկա համադրելի ցուցանիշների կամ տեղեկությունների համապատասխանությունը, հաշվետվություններում արտացոլված ցուցանիշների և տեղեկությունների համապատասխանությունը օրենսդրությամբ սահմանված իրավասու պետական մարմիններից ստացված տեղեկությունների հետ: Սույն հոդվածով նախատեսված ուսումնասիրությունն իրականացվում է հարկային մարմնի գրասենյակում՝ առանց տնտեսվարող սուբյեկտին այցելության և լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու պահանջի:

Սույն քաղաքացիական գործով Ընկերության կողմից հաստատագրված վճարների գծով հարկային պարտավորությունների առկայությունը հայտնաբերվել է Ավանի հարկային տեսչությունում հաշվառված հարկ վճարողների անձնական հաշվի քարտերի թղթային և համակարգչային տարբերակների անհամապատասխանությունների վերացման համար իրականացված աշխատանքների արդյունքում, որը «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասի իմաստով հանդիսանում է կամերալ ուսումնասիրություն:

Ծառայության կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքում Ընկերության անձնական քարտի հաշվում կատարվել է վերահաշվարկ՝ վերջինիս առաջադրելով լրացուցիչ հարկային պարտավորություն:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասի 5-րդ և 6-րդ պարբերությունների համաձայն՝ կամերալ ուսումնասիրության արդյունքում հաշվետվություններում խախտումներ, անճշտություններ, *անհամապատասխանություններ* հայտնաբերելու դեպքում դրա վերաբերյալ կազմվում է արձանագրություն (երկու օրինակից), որն ուսումնասիրություն անցկացնող հարկային մարմինը երեք աշխատանքային օրվա ընթացքում փոստով կամ առձեռն տրամադրում է տնտեսվարող սուբյեկտին: Տնտեսվարող սուբյեկտի ղեկավարը (նրան փոխարինող պաշտոնատար անձը) հինգ աշխատանքային օրվա ընթացքում արձանագրված խախտումների հետ համաձայնվելու դեպքում հարկային մարմին է ներկայացնում օրենսդրությամբ սահմանված ճշտված (ճշգրտված) հաշվետվությունը կամ հաշվետվությունները: Արձանագրված խախտումների հետ համաձայն չլինելու դեպքում տնտեսվարող սուբյեկտի ղեկավարը (նրան փոխարինող պաշտոնատար անձը) հարկային մարմին է ներկայացնում իր գրավոր առարկությունները: Նույն հոդվածով նախատեսված ուսումնասիրության ընթացքում լրացուցիչ հարկային պարտավորություններ կարող են առաջանալ միայն տնտեսվարող սուբյեկտի կողմից հարկային մարմնի հայտնաբերած

---

---

խախտումները ընդունելու և ճշգրտված հաշվետվություններ ներկայացնելու արդյունքում:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ կամերալ ուսումնասիրության ընթացքում լրացուցիչ հարկային պարտավորություններ կարող են առաջանալ միայն տնտեսվարող սուբյեկտի կողմից հարկային մարմնի հայտնաբերած խախտումներն ընդունելու և ճշգրտված հաշվետվություններ ներկայացնելու արդյունքում: Մինչդեռ սույն գործում բացակայում է որևէ ապացույց Ընկերությունում կատարված ուսումնասիրության արդյունքում կազմված արձանագրությունը Ընկերության ղեկավարին տրամադրելու, ինչպես նաև Ընկերության կողմից դրանցով արձանագրված խախտումները ընդունելու վերաբերյալ:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ծառայության կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքում Ընկերության անձնական քարտի հաշվում կատարված վերահաշվարկի հիման վրա Ընկերության համար լրացուցիչ հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը մերժել՝ ՀՀ տնտեսական դատարանի 28.11.2007 թվականի վճիռը թողնել օրինական ուժի մեջ:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒՐՄԱՆ ԴԱՏԱՐԱՆ**

Հայաստանի Հանրապետության  
տնտեսական դատարանի վճիռ  
քաղաքացիական գործ թիվ Տ-2949  
Նախագահող դատավոր՝ Ռ.Սարգսյան

Քաղաքացիական գործ թիվ **3-34(ՏԳ)**  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ  
դատարան)

*նախագահությամբ* Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի փետրվարի 29-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պե-  
տական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) վճռաբեկ բողոքը ՀՀ տնտեսական դա-  
տարանի 04.12.2007 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի Ծառայության Խորհրդային հարկա-  
յին տեսչության ընդդեմ անհատ ձեռնարկատեր Գոհարիկ Հովհաննիսյանի (այսուհետ՝  
պատասխանող) 784.100 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ հայցվորը պահանջել է պատասխանողից հոգուտ պետական  
բյուջեի բռնագանձել 784.100 ՀՀ դրամ, որից եկամտահարկի գծով ապառք՝ 90.000 ՀՀ դ-  
րամ, տույժ՝ 49300 ՀՀ դրամ, սոցիալական վճարների գծով ապառք՝ 260000 ՀՀ դրամ,  
տույժ՝ 127000 ՀՀ դրամ և պետական տուրքի գծով ապառք՝ 50000 ՀՀ դրամ, տույժ՝ 207800  
ՀՀ դրամ:

ՀՀ տնտեսական դատարանի (այսուհետ՝ Տնտեսական դատարան) 04.12.2007 թվա-  
կանի վճռով հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ծառայությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմ-  
նավորմամբ.

*Տնտեսական դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 26-րդ հոդվա-  
ծի 2-րդ կետը և «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին և 2-րդ  
մասերը, որոնք պետք է կիրառեն:*

---

---

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Տնտեսական դատարանը գտել է, որ ՀՀ քաղաքաշինության նախարարության 19.04.2002 թվականի թիվ ՔՊԼ 6920 լիցենզիայից բխող իրավահարաբերությունները որևէ կապ չունեն անհատ ձեռնարկատեր Գոհարիկ Հովհաննիսյանի հետ, հետևաբար պետական տուրքի գծով պարտավորությունների չկատարման վերաբերյալ դիմողի պահանջը պատասխանողին ներկայացվել է անհիմն: Նշված եզրահանգումը հիմնավոր չէ, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ կետին և «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին և 2-րդ մասերին համապատասխան, անհատ ձեռնարկատեր կարող է լինել Հայաստանի Հանրապետության կամ օտարերկրյա գործունակ քաղաքացին (ֆիզիկական անձ): Հետևաբար ճիշտ չէ «քաղաքացի» կամ «ֆիզիկական անձ» հասկացությունները տարանջատել «անհատ ձեռնարկատեր» հասկացությունից, քանի որ «քաղաքացի» կամ «ֆիզիկական անձ» հասկացությունները, իրենց մեջ ներառում են «անհատ ձեռնարկատեր» հասկացության բոլոր բովանդակային տարրերը:

Բողոք բերած անձը պահանջել է բեկանել Տնտեսական դատարանի 04.12.2007 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

### **3.Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 04.07.1999 թվականին ՀՀ պետական ռեգիստրը քաղաքացի Գոհարիկ Հովհաննիսյանին տրամադրել է անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման թիվ 01Ա N 055924 վկայական մինչև 16.02.2001 թվականը գործողության ժամկետով:

2) 19.04.2002 թվականին ՀՀ քաղաքաշինության նախարարությունը քաղաքացի Գոհարիկ Հովհաննիսյանին տրամադրել է թիվ ՔՊԼ 6920 պետական լիցենզիան: Լիցենզիայի գործողության ժամկետը նշվել է մինչև 19.04.2005 թվականը:

3) Գոհարիկ Հովհաննիսյանը թիվ ՔՊԼ 6920 լիցենզիայի մասով պետական տուրքի վճարումներ չի կատարել 2003-2004 թվականների համար, որի հետևանքով 13.06.2007 թվականի դրությամբ հայցվորի կողմից հաշվարկվել է 50.000 ՀՀ դրամ ապառք և 207.800 ՀՀ դրամ տույժ:

4) Սույն քաղաքացիական գործով հայցը ներկայացվել է ընդդեմ անհատ ձեռնարկատեր Գոհարիկ Հովհաննիսյանի:

### **4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ *վճռաբեկ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

Վճռաբեկ դատարանը բազմիցս իր որոշումներում անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին (տես օրինակ՝ «Քնար-88» ՍՊԸ ընդդեմ ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության, 21.12.2006թ. Քաղ. գործ թիվ 3-2504/ՏԴ/ՏԴ, (գումար բռնագանձելու պահանջով)):

Սակայն կարևորելով սույն բողոքի հիմքում ընկած իրավական հարցադրումը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում կրկին անդրադառնալ նշված հարցին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վճռի պատճառաբանական մասում պետք է նշվեն դատարանի կողմից պարզված գործի հանգամանքները, ապացույցները, որոնց վրա հիմնված են դատարանի հետևությունները, այս կամ այն ապացույցները մերժելու փաստարկները, ինչպես նաև այն օրենքները և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է դատարանը վճիռ կայացնելիս:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ վճռի թե՛ փաստական և թե՛ իրավական հիմնավորումը:

Վճռի իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ նյութական իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Մինչդեռ սույն քաղաքացիական գործով Տնտեսական դատարանը հայցի մերժման հիմքում դրել է այն հանգամանքը, որ սույն քաղաքացիական գործով հայցը ներկայացվել է ընդդեմ անհատ ձեռնարկատեր Գոհարիկ Հովհաննիսյանի, մինչդեռ 19.04.2002 թվականի թիվ ԲՊՆ 6920 լիցենզիան տրվել է ոչ թե անհատ ձեռնարկատեր Գոհարիկ Հովհաննիսյանին, այլ քաղաքացի Գոհարիկ Հովհաննիսյանին, չի նշել այն իրավական նորմը, որի հիման վրա եկել է այդ հիմքով հայցը մերժման ենթակա լինելու եզրահանգման:

Այսպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացին, որպես անհատ ձեռնարկատեր գրանցվելու պահից, իրավունք ունի, առանց իրավաբանական անձ կազմավորելու, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ:

«Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի առաջին պարբերության համաձայն՝ անհատ ձեռնարկատերն այն **ֆիզիկական անձն է**, որն իրավունք ունի, առանց իրավաբանական անձ կազմավորելու, ինքնուրույն, իր անունից և իր ռիսկով իրականացնել գործունեություն, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ (եկամուտ) ստանալն է:

Սույն օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ անհատ ձեռներեցն իր պարտականությունների և ստանձնած պարտավորությունների համար կրում է պատասխանատվություն իր անձնական այն գույքով, որի վրա բռնագանձում է տարածվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Վերոնշյալ հոդվածներից հետևում է, որ անհատ ձեռնարկատեր գրանցվելու պահից փոփոխվում է ֆիզիկական անձի իրավունակության բովանդակությունը: Այսինքն՝ այդ պահից ֆիզիկական անձը հնարավորություն է ստանում ունենալու այնպիսի իրավունքներ և կրելու այնպիսի պարտականություններ, որոնք ոչ անհատ ձեռնարկատեր քաղաքացին չի կարող ունենալ կամ կրել: Մինչդեռ քաղաքացին և անհատ ձեռնարկատերը պարտավորաիրավական հարաբերություններում հանդես են գալիս որպես նույն սուբյեկտներ:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով 19.04.2002 թվականի թիվ ԲՊՆ 6920 լիցենզիան քաղաքացի Գոհարիկ Հովհաննիսյանին տրված լինելու հանգամանքը չի կարող հիմք հանդիսանալ այդ լիցենզիայի համար նախատեսված պետական տուրքի գումարը անհատ ձեռնարկատեր Գոհարիկ Հովհաննիսյանից գանձելու մասին հայցապահանջը մերժելու համար:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար ՀՀ քաղաքացիական դատավարություն օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով վերանայվող դատական ակտը մասնակիորեն բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ տնտեսական դատարանի 04.12.2007 թվականի վճիռը՝ պետական տուրքի գծով 257.800 ՀՀ դրամ բռնագանձելու հայցը մերժելու մասով և գործն այդ մասով ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության: Վճիռը մնացած մասով թողնել օրինական ուժի մեջ:

---

---

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՈՒՐՆԵՐ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ տնտեսական դատարանի վճիռ  
Քաղաքացիական գործ թիվ S-2777  
Նախագահող դատավոր՝ Ն.Տավարացյան

Քաղաքացիական գործ թիվ **3-37(ՏԳ)**  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*մախագահությամբ* Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի փետրվարի 29-ին

դռնբաց դատական նիստում՝ քննելով ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) վճռաբեկ բողոքը ՀՀ տնտեսական դատարանի 06.12.2007 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի «Քրիդենս Սիսթեմզ Արմենիա» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ Ծառայության՝ Ծառայության եկամտունների հաշվառման, պլանավորման և վերլուծության վարչության 04.07.2007 թվականի թիվ 1700450 ուսումնասիրության արձանագրությունը մասնակի անվավեր ճանաչելու և Ծառայության գանգատարկման հանձնաժողովի 24.08.2007 թվականի թիվ 175/1 որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական մախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Ընկերությունը խնդրել է մասնակիորեն անվավեր ճանաչել Ծառայության եկամտունների հաշվառման, պլանավորման և վերլուծության վարչության կողմից 04.07.2007 թվականին կազմված թիվ 1700450 ուսումնասիրության արձանագրությունը և անվավեր ճանաչել Ծառայության գանգատարկման հանձնաժողովի 24.08.2007 թվականի թիվ 175/1 որոշումը:

ՀՀ տնտեսական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 06.12.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ծառայությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ընկերությունը:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով՝

*Դատարանը չի կիրառել «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածը, 20-րդ հոդվածի գ) կետը, 43.1 հոդվածը, որոնք պետք է կիրառել, կիրառել է ՀՀ կա-*

---

---

ռավարության 25.08.1998 թվականի թիվ 525 որոշման 3-րդ կետը, ՀՀ պետական եկամուտների նախարարի 02.05.2004 թվականի թիվ 02/577 հրամանի 16.1 կետը, որոնք չպետք է կիրառվեն:

*Բողոք բերողը վերոնշյալը հիմնավորում է հետևյալ փաստարկներով.*

Ծառայության կողմից կատարված ուսումնասիրությամբ պարզվել է, որ Ընկերությանը մատակարարված ծառայությունների դիմաց դուրս գրված որոշ հաշիվ-ապրանքագրերում իրավաբանական հասցեի փոխարեն նշված է գործունեության հասցեն, այսինքն՝ դրանք լրացվել են «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի պահանջների խախտմամբ:

Ընկերության կողմից 3.584.000 ՀՀ դրամ դեբետացված Ավելացված արժեքի հարկի գումարի վերաբերյալ տեղեկություններ չեն ներկայացվել, հետևաբար այն որպես գերավճար ենթակա չէ հաշվանցման:

### **2.1. Վճարել բողոքի պատասխանը.**

Ընկերության կողմից դուրս գրված հաշվարկային փաստաթղթերում Ընկերության իրավաբանական հասցեի փոխարեն գործունեության հասցեի գրառումն անհնարին չի դարձնում գործարքի կողմերի, էության կամ գործարքի դիմաց վճարման ենթակա հատուցման գումարի որոշումը, որը պահանջում է ՀՀ կառավարության 02.12.2004 թվականի թիվ 1923 որոշումը: Վերոնշյալ գործարքների վերաբերյալ կողմերի միջև առկա են ՀՀ կառավարության 25.08.1998 թվականի թիվ 525 որոշման պահանջներին համապատասխան կազմված գրավոր պայմանագրեր:

ՀՀ ՊԵՆ նախարարի 02.05.2002 թվականի թիվ 02/577 հրամանի 10.2 հոդվածի համաձայն՝ ևս պարտադիր պայման է հանդիսանում «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի գ) կետով նախատեսված պահանջը, սակայն նույն հրամանի 16.1 հոդվածը հստակ սահմանում է, որ հաշվարկային փաստաթղթերում օրենքով սահմանված տվյալներից մեկի կամ մի քանիսի (բացառությամբ առանձին տողով նշված ավելացված արժեքի հարկի գումարի) բացակայությունը հիմք չէ դուրս գրված հաշվարկային փաստաթուղթը որպես հարկային հաշիվ չդիտարկելու համար:

### **3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

1) Ծառայության պետի 20.06.2007 թվականի թիվ 1700450 հանձնարարագրի համաձայն՝ Ծառայության աշխատակիցների կողմից Ընկերությունում կատարվել է 01.01.2003 թվականից մինչև 31.01.2007 թվականն ընկած ժամանակահատվածում ավելացված արժեքի հարկի գծով առաջացած դեբետային մնացորդի (գերավճարի) ուսումնասիրություն:

2) Ուսումնասիրության արդյունքում 04.07.2007 թվականին կազմվել է թիվ 1700450 ուսումնասիրության արձանագրությունը, որի համաձայն՝ ուսումնասիրվող ժամանակաշրջանում ավելացված արժեքի հարկի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքներից առաջացած դիմումով պահանջված ավելացված արժեքի գերավճարի 65.848.500 ՀՀ դրամ գումարից ենթակա է սահմանված կարգով հաշվանցման 34.576.800 ՀՀ դրամ, ուսումնասիրությամբ չի հաստատվել 31.271.700 ՀՀ դրամը:

3) Ընկերությանը մատակարարված ծառայությունների դիմաց դուրս գրված որոշ հաշիվ-ապրանքագրերում իրավաբանական հասցեի փոխարեն նշված է գործունեության հասցեն:

### **4. Վճարել դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.**

Քննելով վճարել բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճարել դատարանը գտնում է, որ *բողոքն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.*

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝ զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների (գործառնությունների) իրականացման դեպ-

քում ԱԱՀ վճարողների մոտ դրանց հետ կապված ձեռք բերված ապրանքների և մատուցված ծառայությունների գծով մատակարարների կողմից ներկայացված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները ենթակա են վերադարձման (հաշվանցման) սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

Նույն օրենքի 18-րդ հոդվածի համաձայն՝ ավելացված արժեքի հարկ վճարողներն ավելացված արժեքի հարկով ապրանքներ մատակարարելու և ծառայություններ մատուցելու դեպքում պարտավոր են դուրս գրել հարկային հաշիվներ: Հարկային հաշիվ է համարվում ապրանքների մատակարարումը կամ ծառայությունների մատուցումը հաստատող սահմանված կարգի հաշվարկային փաստաթուղթը՝ լրացված սույն օրենքի 20-րդ հոդվածի համաձայն:

Սույն քաղաքացիական գործով Ընկերությունում կատարված ուսումնասիրության արձանագրությունը կազմելու ժամանակ գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ հարկային հաշվի մեջ պարտադիր նշվում են հետևյալ տվյալները և վավերապայմանները՝ ապրանք առաքող կամ ծառայություն մատուցող անձի անվանումը և իրավաբանական հասցեն, ֆիզիկական անձի անունը և ազգանունը, բնակության վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը, ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը՝ ՀՀ կառավարության կողմից այդպիսի կարգ սահմանված լինելու դեպքում, ապրանքներ կամ ծառայություններ ստացող անձի անվանումը կամ իրավաբանական հասցեն, ֆիզիկական անձի անունը և ազգանունը, բնակության վայրը, ապրանքների անվանումը և քանակը, կամ ծառայությունների տեսակը և ծավալը, ապրանքների գինը և ընդհանուր արժեքը կամ մատուցվող ծառայությունների սակագինը և հատուցման ընդհանուր գումարը, հաշվարկված ԱԱՀ-ի գումարը:

ՀՀ կառավարության 25.08.1998 թվականի թիվ 525 որոշմամբ սահմանված կարգի 2-րդ կետի համաձայն՝ հաշվարկային փաստաթուղթը հարկ վճարողի իրականացրած գործարքը հաստատող՝ հարկման հիմք հանդիսացող (ծախսերը հիմնավորող) հաշվարկային փաստաթուղթ է:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճռաքեկ դատարանը գտնում է, որ հարկային հաշիվը հաշվարկային փաստաթուղթ է, որը պետք է բավարար տեղեկություններ պարունակի պարզելու համար գործարքի էությունը (ապրանքների անվանացանկն ու քանակը կամ ծառայության տեսակն ու ծավալը), գործարքի կողմերը, ավելացված արժեքի հարկով հարկվող շրջանառությունը:

Սույն քաղաքացիական գործով Ծառայության աշխատակիցների կողմից հաշվանցում կատարելը մերժելու հիմք է հանդիսացել հարկային հաշիվներում իրավաբանական հասցեի փոխարեն գործունեության հասցեն նշված լինելը:

Սինչեռ, Վճռաքեկ դատարանը գտնում է, որ Ընկերության ներկայացրած հարկային հաշիվներում իրավաբանական հասցեի փոխարեն գործունեության հասցեն նշելը չի կարող խոչընդոտ հանդիսանալ գործարքի կողմերին, ինչպես նաև նրանց միջև կնքված գործարքի էությունը պարզելու համար, հետևաբար հաշվանցում իրականացնելիս չի կարող հիմք հանդիսանալ այդ փաստաթղթերը հարկային հաշիվ չդիտարկելու համար:

Վճռաքեկ դատարանը նման եզրահանգման համար հիմք է ընդունում նաև ՀՀ կառավարության 25.08.1998 թվականի թիվ 525 որոշմամբ սահմանված կարգի 3-րդ կետը, համաձայն որի՝ նույն կարգի 2-րդ կետի բ), գ), դ), ե) ենթակետերի որոշ վավերապայմաններ (այդ թվում՝ ակտիվներ վաճառող (տրամադրող) կամ ծառայություն մատուցող և ստացող իրավաբանական անձի, իրավաբանական անձանց հիմնարկների, իրավաբանական անձի մասնաճյուղի կամ ներկայացուցչության լրիվ անվանումը) հաշվարկային փաստաթղթերում արտացոլված չլինելու դեպքում այդ ենթակետերի պահանջները համարվում են բավարարված, եթե առկա է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կողմերի միջև կնքված գրավոր պայմանագիր, որում արտացոլված են այդ վավերապայմանները, իսկ հաշվարկային փաստաթղթերում առկա է հատուցման ենթակա ընդհանուր գումարը, գործարքն իրականացրած հարկ վճարողների լիազորված ան-

---

---

ձանց պաշտոնը, անունը (անվան սկզբնատառը), ազգանունն ու ստորագրությունը և կատարված է հղում պայմանագրի ամսաթվին:

Սույն քաղաքացիական գործով առկա են ՀՀ կառավարության վերոնշյալ որոշմամբ սահմանված փաստաթղթերը: Մասնավորապես գործում առկա են համապատասխան պայմանագրերը, ինչպես նաև հաշվարկային փաստաթղթեր, որոնցում արտացոլված են ավելացված արժեքի հարկի հաշվանցման համար անհրաժեշտ տվյալները:

Վճռաբեկ բողոքի պատասխանում նշված փաստարկները հերքվում են վերը նշված պտճառաբանություններով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ տնտեսական դատարանի 06.12.2007 թվականի վճիռը թողնել օրինական ուժի մեջ:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ս տ որ ա գր ու թ յ ու ն  
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ս տ որ ա գր ու թ յ ու ն ն եր*



---

---

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Տնտեսական դատարանը չի կիրառել ՀՀ կառավարության 07.07.2000 թվականի «ՀՀ-ում կրթական գործունեության լիցենզավորման, ինչպես նաև միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգերը հաստատելու մասին» համար 372 որոշմամբ հաստատված «ՀՀ-ում միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգը» (այսուհետ՝ Կարգ), որը պետք է կիրառել:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Վերոհիշյալ որոշման համաձայն՝ միայն Նախարարությունն է իրականացնում հավատարմագրման նպատակով շրջանավարտների ամփոփիչ ատեստավորումը:

Մինչդեռ, Տնտեսական դատարանը, անտեսելով Կարգի 7-րդ կետը, որպես վերոհիշյալ մասնագիտությունների համար հավատարմագիր ստանալու իրավունքի առաջացման հիմք է դիտել Ընկերության կողմից 08.11.2006 թվականին անցկացված ատեստավորման քննությունները:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Տնտեսական դատարանի 23.07.2007 թվականի վճիռը:

### **2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմքերը և փաստարկները.**

Վճռաբեկ բողոքի պատասխանում բողոքի հիմքերի և հիմնավորումների վերաբերյալ որևէ փաստարկ առկա չէ:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Ընկերության կողմից 08.11.2006 թվականին կազմակերպվել են 2006 թվականի շրջանավարտների ատեստավորման քննությունները:

2. ՀՀ կրթության և գիտության նախարարի 25.01.2007 թվականի թիվ 20-Ա/Ք հրամանի համաձայն՝ ՀՀ միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների մասնագիտությունների պետական հավատարմագրման նպատակով 29.01.2007 թվականից 08.02.2007 թվականը նախատեսվել է անցկացնել 2006 թվականի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորում:

3. ՀՀ կրթության և գիտության նախարարի 10.04.2007 թվականի հրամանով մերժվել է Ընկերությանը 0406-«Քույրական գործ» և 0402-«Մանկաբարձական գործ» մասնագիտությունների պետական հավատարմագիր տալը:

### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

«Կրթության մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ պետական ուսումնական հաստատությունները եւ դրանց մասնագիտությունները, ինչպես նաև ոչ պետական ուսումնական հաստատությունների բժշկական մասնագիտությունները պարտադիր պետք է անցնեն հավատարմագրման գործընթաց:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հավատարմագրման կարգը, չափանիշները և ժամկետները հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ներկայացմամբ, իսկ 3-րդ մասի համաձայն՝ պետական հավատարմագրումն իրականացնում է կրթության պետական

կառավարման լիազորված մարմինը՝ անկախ ուսումնական հաստատության գերատեսչական ենթակայությունից և կազմակերպական-իրավական ձևից, ուսումնական հաստատության եւ նրա սովորողների ատեստավորման վերաբերյալ եզրակացության հիման վրա:

ՀՀ կառավարության 07.07.2000 թվականի «ՀՀ-ում կրթական գործունեության լիցենզավորման, ինչպես նաև միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգերը հաստատելու մասին» համար 372 որոշմամբ հաստատված «ՀՀ-ում միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգի 6-րդ կետի համաձայն՝ պետական հավատարմագրման նպատակով ուսումնական հաստատությունն իրականացնում է իր գործունեության վերլուծություն:

Ուսումնական հաստատությունը նշված վերլուծության հիման վրա պայմանագրային հիմունքներով դիմում է համապատասխան որակավորում ունեցող և ծառայության կողմից երաշխավորված իրավաբանական անձին, հիմնարկին կամ անհատ ձեռնարկատիրոջը, որը նախարարության սահմանած կարգով իրականացնում է ուսումնական հաստատության ուսումնական գործունեության փորձաքննություն: Ուսումնական հաստատությունը փորձաքննության ավարտից հետո մեկամսյա ժամկետում ծառայություն է ներկայացնում նախարարության սահմանած ձևի փորձագիտական եզրակացությունը եւ վերլուծության մեկ օրինակը:

Նույն կարգի 7-րդ կետի համաձայն՝ դրական փորձագիտական եզրակացության դեպքում նախարարության սահմանած կարգով իրականացվում է 2 տարվա շրջանավարտների ամփոփիչ ստուգում (ատեստավորում):

Մինչդեռ, սույն քաղաքացիական գործով Տնտեսական դատարանը հայցի բավարարման հիմքում դնելով Ընկերության կողմից սեփական նախաձեռնությամբ 2006 թվականի շրջանավարտների ատեստավորման քննությունների արդյունքները չի անդրադարձել և գնահատման առարկա չի դարձրել այդ ատեստավորումը ՀՀ կրթության և գիտության նախարարության սահմանված կարգին համապատասխան անցկացված լինելու հարցը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարություն օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով վերանայվող դատական ակտը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Տնտեսական դատարանի 23.07.2007 թվականի վճիռը և գործն ուղարկել Վարչական դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն  
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*



*նում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին»* ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը և «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասը, որոնք չպետք է կիրառվեն :

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Տնտեսական դատարանը, բավարարել է հայցը հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ընկերության հանրային սննդի կազմակերպման համար նախատեսված տարածքը գործել է սպառողների սահմանափակ քանակական կազմի համար, այսինքն՝ կախված է եղել սպառողների թվից: Մինչդեռ, Տնտեսական դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ հաստատագրված վճարի հաշվարկման համար ելակետային տվյալ է համարվում պատրաստի խոհարարական արտադրանքի իրացման և սպառման կազմակերպման համար նախատեսված ամբողջ տարածքը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Տնտեսական դատարանի վճիռը և գործն ուղարկել նոր քննության:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Ծառայություն ներկայացված Ընկերության 06.06.2007 թվականի ելակետային տվյալների վերաբերյալ հայտարարության համաձայն՝ Ընկերության հանրային սպասարկման համար նախատեսված տարածքը 122քմ է (շինության ներսում 60քմ, և բացօթյա 62քմ), մինչդեռ ներկա պահին օգտագործվում է 12քմ շինության ներսում և 12քմ բացօթյա տարածք:

2) Ծառայության պետի 13.06.2007 թվականի թիվ 2314460 հանձնարարագրի հիման վրա Ընկերությունում կատարվել է հաստատագրված վճարների ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների ճշտության ստուգում:

3) Ծառայության 19.06.2007 թվականի թիվ 2314460 ստուգման ակտով արձանագրվել է, որ Ընկերությունը հանրային սննդի ոլորտում գործունեությունն իրականացնում է շինության ներսում՝ 60 քմ և բացօթյա՝ 62 քմ տարածքի վրա: Վերոհիշյալ ակտով սուբյեկտին առաջադրվել է 1.541.100 ՀՀ դրամ լրացուցիչ հարկային պարտավորություն:

### **4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ.

«Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝ հաստատագրված վճարի հաշվարկման համար ելակետային տվյալ է համարվում հանրային սննդի գործունեության իրականացման վայրի զբաղեցրած սպասարկման սրահի մակերեսը՝ քառակուսի մետրերով: Նույն օրենքի 32-րդ հոդվածի համաձայն՝ հանրային սննդի սպասարկման սրահ է համարվում պատրաստի խոհարարական արտադրանքի իրացման և սպառման կազմակերպման համար նախատեսված տարածքը: Բացօթյա վայրերում հանրային սննդի սպասարկման սրահ է համարվում հանրային սննդի գործունեության իրականացման ընդհանուր մակերեսը:

Տնտեսական դատարանը դիմումի բավարարման հիմքում դնելով այն հանգամանքը, որ Ընկերության կողմից հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնելու համար հաստատագրված վճարի հաշվարկման համար ուղղիչ գործակիցը պայմանավորված է սպառողների թվից և որ Ծառայության կողմից չի ստուգվել թե հաշվետու ժամանակաշրջանում հանրային սննդի համար նախատեսված տարածքը որքան սեղաններով և աթոռներով է կահավորված եղել, եկել է այն եզրահանգման, որ ստուգման ակտով արձանագրված փաստը Ընկերության հանրային սննդի կազմակերպման տարածքը 122քմ - իննելու վերաբերյալ անհիմն է:

Մինչդեռ, «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 32-րդ և 35-րդ հոդվածներից հետևում է, որ հաստատագրված վճարի հաշվարկման համար ելակետային տվյալ է

---

---

համարվում ոչ թե հաշվետու ժամանակաշրջանում Ընկերության կողմից փաստացի օգտագործվող տարածքը, որը կարող է պայմանավորվել սպառողների թվով, այլ հանրային սննդի գործունեության կազմակերպման համար նախատեսված ամբողջ տարածքը: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերության կողմից ներկայացված ելակետային տվյալների ճշտությունը ստուգելիս Ծառայությունը պարտավոր չէ պարզելու հաշվետու ժամանակաշրջանում Ընկերության կողմից փաստացի օգտագործվող տարածքի չափը:

Սույն քաղաքացիական գործի փաստերի համաձայն՝ Ընկերության հանրային սննդի գործունեության կազմակերպման համար նախատեսված ամբողջ տարածքը 122քմ է:

Հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերության կողմից ելակետային տվյալների վերաբերյալ հայտարարությամբ որպես Ընկերության հանրային սննդի գործունեության կազմակերպման մակերես նշվել է 24քմ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր է Ծառայության 19.06.2007 թվականի թիվ 2314460 ստուգման ակտով արձանագրված խախտման փաստը:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել Տնտեսական դատարանի 26.09.2007 թվականի վճիռը և այն փոփոխել. «Հրաշք պարտեզ» ՍՊԸ-ի դիմումը մերժել:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ՝ ստորագրություն  
Գ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր՝ ստորագրություններ*



---

---

յորներ՝ իրատեսական գնահատական տալու համար: Միաժամանակ Գատարանը նշել է, որ հարկային մարմինը գույքի արժեքին ճիշտ գնահատական տալու համար պարտավոր էր հարցում կատարել անշարժ գույքի գնահատմամբ զբաղվող ընկերություններին և, դրանցից ստացված տվյալները համադրելով ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից (այսուհետ՝ Կադաստր) ստացված տվյալների հետ, կատարեր անհրաժեշտ վերլուծություններ:

Մինչդեռ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածում հստակ նշված է, թե որ դեպքերում է հարկային մարմնի կողմից հարկ վճարողի հարկային պարտավորությունները հաշվարկվում, և որևէ նշում չկա այն մասին, որ հարկային մարմինը չի կարող մեկ տվյալի հիման վրա ստացված տեղեկությունն օգտագործել և այդ տվյալների հիման վրա վերլուծություն, գնահատում կամ վերագնահատում կատարել, որը կարող է հիմք հանդիսանալ հարկման օբյեկտի և հարկային պարտավորության ճիշտ հաշվարկման համար: Բացի այդ, Ընկերության կողմից վաճառված շենք-շինությունների կադաստրային արժեքների ճշտման և շուկայում իրացման իրական արժեքի ձևավորման համար Կադաստրից ստացված տեղեկությունը լիովին բավարար է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային մարմնի կողմից հարկային պարտավորությունների հաշվարկման համար: Նշվածից պարզ է դառնում, որ Ընկերությունը շինությունները վաճառել է դրանց իրական արժեքից էականորեն ցածր գներով, որը Գատարանը հաշվի չի առել:

2) Գատարանը կիրառել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ, 55-րդ, 63-րդ հոդվածները, որոնք չպետք է կիրառեր, չի կիրառել նույն օրենքի 2-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր:

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Գատարանը եզրակացրել է, որ վիճարկվող ստուգման ակտում բացակայում է որևէ-ցէ նշում այն բոլոր էական, փաստական և իրավաբանական հանգամանքների վերաբերյալ, որոնք հարկային մարմնին հիմք են տվել ակտը կազմելու համար, մասնավորապես՝ առկա չեն այն փաստական հանգամանքները, որոնց հիման վրա հարկային մարմինը կիրառեր «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի դրույթները: Գատարանի նշված եզրահանգումներն անհիմն են, քանի որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը, սահմանելով օրենքի գործողության ոլորտը, նույն հոդվածի 3-րդ մասով ամրագրել է, որ առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և ՀՀ միջազգային պայմանագրերով:

Հարկային մարմնի կողմից տնտեսվարող սուբյեկտի մոտ ստուգում իրականացնելու հետ կապված վարույթի հարցերը կարգավորվում են «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով, իսկ ստուգման ընթացքում և ստուգման ակտի կազմման ժամանակ նշված օրենքի որևէ դրույթի խախտում չի կատարվել: Բացի այդ, Գատարանի վերը նշված եզրահանգումը գործով առկա որևէ փաստական հանգամանքով չի ապացուցվել:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Գատարանի 28.11.2007 թվականի վճիռը:

### **3.Վճռարեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

1) Ընկերության կողմից 2006 թվականի 3-րդ եռամսյակում իրականացվել են թվով 5 առուվաճառքի գործարքներ, որոնց ընդհանուր արժեքը կազմել է 95.717.600 ՀՀ դրամ:

2) Ծառայության պետի 25.04.2007 թվականի թիվ 1025265 հանձնարարագրի հիման վրա՝ Ընկերությունում 21.05.2007 թվականից իրականացվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում:

3) Ստուգման արդյունքում 20.08.2007 թվականին կազմվել է թիվ 1025265 ակտը, որով Ընկերությանն առաջադրվել են լրացուցիչ հարկային պարտավորություններ, որոնց հաշվարկման հիմք են ծառայել գույքի գործարքային արժեքի և կադաստրային տվյալների միջև առկա տարբերությունները:

4) Ընկերության հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները հաշվարկելու նպատակով Հարկային տեսչության հարցման հիման վրա Կադաստրի կողմից 25.06.2007 թվականին տրամադրվել է տեղեկանք Ընկերության կողմից 2006 թվականի հուլիսին օտարված շենքերի, շինությունների վաճառքի գների և կադաստրային արժեքների վերաբերյալ:

**4.ՎՃՈՒՐՔԵԿ ՂԱՏԱՐԱՆԻ ՊԱՏՈՃԱՊԱՐԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ԵԳՐԱԿԱՆԳՈՒՄԸ.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

1) բողոքն առաջին հիմքով հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ հարկերը ճիշտ հաշվարկելու, ժամանակին վճարելու և հարկային օրենսդրության մյուս պահանջները պահպանելու պատասխանատվությունը, հարկային օրենսդրությամբ այլ բան սահմանված չլինելու դեպքում, կրում են հարկ վճարողները և դրանց (ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պաշտոնատար անձինք: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե հարկ վճարողը ակնհայտ կեղծ տվյալներ է մտցնում հարկային տեսչություն մերկայացրած հաշվետվություններում, հաշվարկներում, հայտարարագրերում և այլ փաստաթղթերում, որի հետևանքով անհնար է դառնում հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկել հարկ վճարողի հարկային պարտավորությունը, ապա հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները հաշվարկում է հարկային տեսչությունը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով, մասնավորապես հիմնվելով հարկ վճարողի ակտիվների, հարկ վճարողի իրացման շրջանառության ծավալների, հարկ վճարողի արտադրության և շրջանառության ծախսերի, գույքագրման և չափագրման տվյալների, օրենքով սահմանված կարգով երրորդ անձանցից ստացված տեղեկությունների, համանման պայմաններում գործող այլ սուբյեկտների միջև կիրառված գների և այլ ցուցանիշների, հասույթի հաշվարկային 25 տոկոս վերադիրի, օրենքով իրականացված հսկիչ գնումների վրա:

Սույն կետով բարձրացված իրավական խնդրի լուծման համար կարևոր է հետևյալ հարցադրումը. արդյոք հարկային մարմնի կողմից հարկ վճարողի հարկային պարտավորությունները հաշվարկելիս առկա է աղբյուրների նվազագույն չափ ելակետային տվյալների իրական չափերը որոշելու համար:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով նախատեսված դեպքերում Հայաստանի Հանրապետության հարկային տեսչության կողմից հարկվող օբյեկտների և հարկային պարտավորությունների հաշվարկման (գնահատման) կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շուկայական (սովորաբար կիրառվող) գները որոշելու մասին» ՀՀ կառավարության 18.09.1998 թվականի թիվ 580 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ կետի համաձայն՝ ելակետային չափերի որոշումը հարկ վճարողի իրականացրած գործունեության արդյունքում ակտիվների (միջոցների) շարժի (օգտագործման) և ակտիվների առաջացման (գոյացման) աղբյուրների իրական չափերի մնացորդների գնահատումն ու որոշումն է: Ելակետային չափերը որոշելու նպատակով կատարվող վերլուծության ժամանակ հարկային տեսչության մարմիններն օգտագործում են սույն բաժնում նշված տվյալների անհրաժեշտ աղբյուրներ՝ ելակետային չափերին առավել ճշգրիտ գնահատական տալու համար: Տվյալների տարբեր աղբյուրների կիրառման ժամանակ իրարից զգալիորեն տարբերվող

---

---

**արդյունքներ ստանալու դեպքում, հարկային տեսչության մարմինը տվյալների այլ աղբյուրների ընդգրկման անհնարինության (բացակայության) դեպքում** իրականացնում է ընտրված աղբյուրներով կատարված վերլուծության մեթոդներից յուրաքանչյուրի գնահատում և ընտրում տվյալ հանգամանքներում առավել իրատեսական գնահատականը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 8-րդ - հոդվածի համաձայն՝ վարչարարությունը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:

Այսինքն՝ յուրաքանչյուր դեպքում հարկային պարտավորությունները հաշվարկող մարմինը պետք է գնահատի, թե ինչքանով է ընտրված աղբյուրը պիտանի հարկման իրական օբյեկտը պարզելու նպատակով ելակետային արժանահավատ չափ ստանալու համար:

Հիմք ընդունելով վերոնշյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հարկային մարմնի կողմից հարկային պարտավորությունները հաշվարկելիս ելակետային չափերը պարզելու համար մի քանի աղբյուրների օգտագործումը օրենքի պարտադիր պահանջ չէ: Հարկային մարմինը յուրաքանչյուր դեպքում պետք է գնահատի վերոնշյալ նորմերով իր առջև դրված նպատակը, օգտագործված աղբյուրի(ների) պիտանելիությունը և բավարարությունը այդ նպատակի կենսագործման համար:

Ինչ վերաբերում է շենքերի, շինությունների իրացման ժամանակ հարկման ավելացված արժեքի հարկի (այսուհետ՝ ԱԱՀ) հաշվարկմանը, ապա «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 9-րդ կետի համաձայն՝ շենքերի, շինությունների օտարման դեպքում ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշվում է սույն հոդվածով սահմանված կարգով, բայց ոչ պակաս՝ գույքահարկով հարկման նպատակով՝ դրանց համար օրենքով սահմանված կարգով որոշվող արժեքից, բացառությամբ սույն կետով նախատեսված դեպքի:

Իսկ «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի համաձայն՝ գույքահարկով հարկման բազա է համարվում հարկվող օբյեկտի արժեքային կամ ֆիզիկական մեծությունը կամ այն բնութագրիչը, որի հիման վրա սույն օրենքով սահմանված դրույքաչափերով և կարգով հաշվարկվում է գույքահարկի գումարը: Ընդ որում շինությունների հարկման բազա է համարվում սույն օրենքի բաղկացուցիչ մասը կազմող հավելվածով սահմանված կարգով գնահատված կադաստրային արժեքը:

Հիմք ընդունելով վերոնշյալը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ շենքերի, շինությունների իրացման ժամանակ ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշելիս որպես նվազագույն արժեք պետք է ընդունվի տվյալ շինության կադաստրային արժեքը:

*2) բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ.*

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ - հոդվածի համաձայն՝ վարչական մարմինները պարտավոր են հետևել օրենքների պահպանմանը: Նույն օրենքի 55-րդ հոդվածի համաձայն՝ գրավոր վարչական ակտն իր բովանդակության մեջ պետք է համապատասխանի դրա ընդունման համար օրենքով սահմանված պահանջներին, նշում պարունակի այն բոլոր էական փաստական և իրավաբանական հանգամանքների վերաբերյալ, որոնք վարչական մարմնին հիմք են տվել ընդունելու համապատասխան որոշում: Նույն օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը նախատեսում է այլ օրենքներով և միջազգային պայմանագրերով առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները: Հետևաբար «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքն առանձին տեսակի վարչական վարույթների նկատմամբ կիրառելի է այնքա-

նով և այն մասով, որքանով և որ մասով առանձին տեսակի հարաբերությունները կարգավորող օրենքներով այլ բան նախատեսված չէ:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի առաջին հիմքի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի համաձայն, Դատարանի վճիռը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Տնտեսական դատարանի 28.11.2007 թվականի վճիռը և գործն ուղարկել Վարչական դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ՝ ստորագրություն  
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր՝ ստորագրություններ*



Դատարանը, գնահատելով «Ինտերկաուչուկ Լիմիթեդ» ընկերության և Ընկերության միջև կնքված պայմանագիրը, նշել է, որ Ընկերությանը մատուցված ծառայությունները հանդիսանում են ոչ թե իրավաբանական, այլ առևտրային գործակալի ծառայություններ: Սակայն կողմերի միջև կնքվել է գործակալության պայմանագիր, որի բնորոշումը տրված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 806-րդ հոդվածում:

Միաժամանակ, Դատարանը գտել է, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով առևտրային գործակալի ծառայությունների համար մատուցման վայրի բնորոշման առանձնահատկություն սահմանված չէ, ուստի «Ինտերկաուչուկ Լիմիթեդ» ընկերության կողմից մատուցված ծառայության վայրը հանդիսանում է այն վայրը, որտեղ ծառայություն մատուցող անձն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն:

Մինչդեռ, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի բովանդակությունից երևում է, որ դրանում նշված այլ ծառայությունների հետ միաժամանակ իրավաբանական ծառայությունների մատուցման համար Հայաստանի Հանրապետությունում գրանցված անձանց կողմից (կամ հակառակը) մատուցման դեպքում ծառայության մատուցման վայր է համարվում այն վայրը, որտեղ ծառայություն ստացող անձն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն կամ ունի մշտական հաստատություն, որին մատուցվում են ծառայություններ: Տվյալ դեպքում, «Ինտերկաուչուկ Լիմիթեդ» ընկերությունը, հանդիսանալով օտարերկրյա կազմակերպություն, իրավաբանական ծառայություն է մատուցել Հայաստանի Հանրապետությունում գրանցված Ընկերությանը, հետևաբար՝ փճելի իրավահարաբերության համար կիրառելի է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վարչական դատարանի 15.05.2008 թվականի վճիռը և գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:

**3. ՎՃՌԱՐԵԿ ԲՈԴՈՐՔԻ քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռարեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Ծառայության պետի 21.06.2007 թվականի թիվ 1700453 հանձնարարականի հիման վրա Ծառայության եկամուտների հաշվառման, պլանավորման և վերլուծության վարչության, հարկային հաշվանցումների հսկողության վարչության 2-րդ բաժնի և խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության վերահսկողության և գանձումների 2-րդ բաժնի աշխատակիցներին հանձնարարվել է Ընկերությունում կատարել 01.03.2005-30.11.2006 թվականներին ընկած ժամանակահատվածում ավելացված արժեքի հարկի գծով առաջացած դեբետային մնացորդի (գերավճարի) ուսումնասիրություն:

2) Ուսումնասիրության արդյունքում 09.07.2007 թվականին կազմվել է որևէ հարկային պարտավորություններից ավելի վճարված գումարների (գերավճարների) հաշվանցման և վերադարձի դեպքում ուսումնասիրության արդյունքների արձանագրություն, որում նշվել է, որ խոշոր հարկ վճարողների Ծառայություն ներկայացված ավելացված արժեքի հարկի հաշվարկների համաձայն՝ ավելացված արժեքի հարկի գումարը նույն ժամանակաշրջանում կազմում է 1.403.073.700 ՀՀ դրամ, սակայն փաստացի այն կազմել է 1.402.690.500 ՀՀ դրամ: Նշված գերավճարի գումարից ենթակա չէ հաշվանցման «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ուսումնասիրվող ժամանակաշրջանում «Ինտերկաուչուկ Լիմիթեդ» ոչ ռեզիդանտ իրավաբանական անձի (այսուհետ՝ կազմակերպություն) հետ կնքած պայմանագրի համաձայն վերջինիս կողմից մատուցված ծառայությունների դիմաց պակաս կրեդիտավորված 187.691.900 ՀՀ դրամ ավելացված արժեքի հարկի գումարը:

3) Ընկերության և «Ինտերկաուչուկ Լիմիթեդ» ընկերության կողմից կնքված գործակալական համաձայնագրի 1.1 կետով սահմանվել է, որ պրինցիպալը գործակալին հանձ-

---

---

նարարում է պրինցիպալի անունից և նրա հաշվին, պարզևատրման դիմաց կատարել 1.2 կետում նշված իրավաբանական և այլ գործողություններ: Նույն պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ գործակալը պարտավորվում է ի կատարումն նույն Համաձայնագրի իրակա-նացնել պրինցիպալի կողմից արտադրվող քլորոպրենային կաուչուկի գնորդների որոնում և կնքել պրինցիպալի կողմից արտադրվող քլորոպրենային կաուչուկի առուվաճառքի պայմանագրեր, որի քանակը նշվում է նույն համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելվածներում:

6) Ընկերության գտնվելու վայրի հասցեն է՝ Երևան, Բագրատունյաց 70, իսկ Կազմա-կերպության գրանցման վայրը գտնվում է Միացյալ Թագավորությունում:

#### **4. Վճռարեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

*Քննելով վճռարեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռարեկ դատարանը գտնում է, որ վճռարեկ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

Վճռարեկ դատարանը սույն գործի լուծման համար կարևորվում է հետևյալ իրավա-կան հարցադրումը. արդյո՞ք գործակալության պայմանագրի շրջանակներում մատուց-ված ծառայությունների հարկվող շրջանառության նկատմամբ կիրառվում է ԱԱՀ-ի գրո-յական դրույքաչափ:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ կետի համա-ձայն՝ ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափը կիրառվում է այն ծառայությունների հարկվող շրջանառության նկատմամբ, որոնց մատուցման վայրը, համաձայն սույն օրենքի, չի գտնվում Հայաստանի Հանրապետության ներքին տարածքում:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ ծառա-յությունը համարվում է մատուցված Հայաստանի Հանրապետությունում, եթե ծառայու-թյունների մատուցման վայրը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքում: Ծառայությունների մատուցման վայր է համարվում այն տեղը, որտեղ ծառայություն մա-տուցող անձն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն, իսկ այդպիսի վայրի բացակայության կամ որոշման անհնարինության դեպքում՝ նշված անձի գտնվելու վայրը (իրավաբանական հասցեն կամ բնակության վայրը, **բացառությամբ նույն օրենքի 14-րդ հոդվածով սահմանված դեպքերի**):

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ արտո-նագրերի, լիցենզիաների, հեղինակային իրավունքի, ապրանքանշանների և համանման այլ իրավունքների՝ այլ անձանց փոխանցման, գովազդային, խորհրդատվական, ինժեներ-ական, **իրավաբանական**, հաշվապահական, փորձագիտական, թարգմանչական և **հա-մանման այլ ծառայություններ**, ինչպես նաև տվյալների մշակման, ծրագրային ապահով-ման իրականացման և տեղեկատվության հաղորդման ծառայություններ, բանկային, ֆի-նանսական և ապահովագրական (բացառությամբ չիրկիզվող պահարանների վարձակա-լության), շարժական գույքի վարձակալության (բացառությամբ բոլոր տեսակի փախադ-րամիջոցների վարձակալության) ծառայություններ օտարերկրյա իրավաբանական ան-ձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կամ օտարերկրյա ֆիզիկական անձանց՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված անձանց կողմից (*կամ հակա-ռակը*) մատուցման դեպքում *ծառայության մատուցման վայր է համարվում այն վայրը, որտեղ ծառայություն ստացող անձն իրականացնում է ձեռնարկատիրական գործու-նեություն կամ ունի մշտական հաստատություն, որին մատուցվում են ծառայություններ, իսկ դրանց բացակայության դեպքում՝ նրա իրավաբանական հասցեն կամ բնակության վայրը:*

Վերոնշյալ հոդվածների համադրումից հետևում է, որ սույն քաղաքացիական գործով Կազմակերպության կողմից գործակալության պայմանագրի հիման վրա մատուցվող ծա-ռայությունների հարկվող շրջանառության նկատմամբ ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափի կիրառելիության հարցին պատասխանելու համար պետք է որոշվի թե արդյո՞ք Ընկերու-թ-

յան կողմից մատուցված համապատասխան ծառայությունները ընդգրկված են «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված բացառությունների շարքում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 806-րդ հոդվածի համաձայն՝ գործակալության պայմանագրով մի կողմը(գործակալը) պարտավորվում է վարձատրությամբ մյուս կողմի(պրինցիպալի) հանձնարարությամբ, իր անունից, սակայն պրինցիպալի հաշվին կամ պրինցիպալի անունից և նրա հաշվին կատարել *իրավաբանական ու այլ գործողություններ*:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 806-րդ հոդվածի համաձայն՝ գործակալության պայմանագրով մի կողմը (գործակալը) պարտավորվում է վարձատրությամբ մյուս կողմի (պրինցիպալի) հանձնարարությամբ, իր անունից, սակայն պրինցիպալի հաշվին կամ պրինցիպալի անունից և նրա հաշվին կատարել *իրավաբանական ու այլ գործողություններ*:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ գործակալության պայմանագիրը ծառայությունների մատուցման պայմանագրի տեսակ է, որի շրջանակներում կատարվում են իրավաբանական և այլ գործողություններ: Հետևաբար, գործակալության պայմանագրի շրջանակներում պատուցվող ծառայությունները իրավաբանական ծառայություններ են, որոնք ներառված են «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված բացառությունների շարքում: Վճռաբեկ դատարանը նման եզրահանգման համար հիմք է ընդունում նաև սույն քաղաքացիական գործով կողմերի միջև կնքված պայմանագրի առարկան կազմող գործողությունների բնույթը:

Քննվող քաղաքացիական գործի փաստերի համաձայն՝ ծառայությունները ստացած Ընկերության գտնվելու վայրը Երևան, Բագրատունյաց 70 հասցեն է, իսկ ծառայություններ մատուցած Կազմակերպության գրանցման վայրը գտնվում է Միացյալ Թագավորությունում:

Հետևաբար, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի իմաստով գործակալության պայմանագրով մատուցված իրավաբանական ծառայության մատուցման վայրը Հայաստանի Հանրապետությունն է, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գրոյական դրույքաչափով հարկման վերաբերյալ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ կետը Ընկերությանը մատուցված ծառայությունների նկատմամբ կիրառելի չեն:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով, Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար Դատարանի վճիռը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Վարչական դատարանի 15.05.2008 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն  
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒՐՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վարչական դատարանի վճիռ  
Վարչական գործ թիվ ՎԴ/0213/05/08  
Նախագահող դատավոր՝ Լ. Սոսյան

Վարչական գործ թիվ ՎԴ/0213/05/08  
2008թ.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Դ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ. ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի նոյեմբերի 28-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Դիասերվ» ՍՊԸ-ի վճռաբեկ բողոքը Վարչական դատարանի 25.04.2008 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի «Դիասերվ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության Արաբկիրի հարկային տեսչության (այսուհետ՝ Ծառայություն)՝ ստուգման ակտը մասնակիորեն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է անվավեր ճանաչել Ծառայության 08.05.2007 թվականի թիվ 1021078 ստուգման ակտի 4-րդ կետի 2-րդ ենթակետը և 4-րդ կետի 4-րդ ենթակետի՝ 2-րդ ենթակետից բխող տույժերի և տուգանքների կիրառման մասը:

Վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 25.04.2008 թվականի վճռով հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) *Դատարանը կիրառել է ՀՀ հարկային տեսչության պետի 27.08.1997 թվականի թիվ 767 հրամանով հաստատված «Ավելյացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 19-րդ կետի դրույթների վերաբերյալ» հրահանգի 2-րդ և 4-րդ կետերը, որոնք չպետք է կիրառվեն, չի կիրառել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի*

6-րդ մասը, որը պետք է կիրառել, որի արդյունքում սխալ է մեկնարանել «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 19-րդ կետը:

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 19-րդ կետի դրույթների վերաբերյալ» հրահանգի 2-րդ կետով սահմանվում է, որ բժշկական այն պարագաների իրացումը, որոնք կարող են օգտագործվել ոչ բժշկական նպատակներով, ազատվում են ավելացված արժեքի հարկից, եթե այդ պարագաներն իրացվում են բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ մատուցող անձանց:

Սինչեռ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 19-րդ մասով որևէ պայման սահմանված չէ բժշկական պարագաների և տեխնիկայի իրացումն ավելացված արժեքի հարկից ազատելու արտոնության կիրառման համար, այդ արտոնությունը սահմանված է առանց սահմանափակումների:

2) *Դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Դատարանը հայցի մերժման հիմքում դրել է այն հանգամանքը, որ հայցադիմումին կից 14.10.2005 թվականի թիվ 181 և 03.04.2006 թվականի թիվ 62 հաշիվ ապրանքագրերում նշված չէ, որ վաճառվող ապրանքները նախատեսված են բժշկական օգնության և սպասարկման համար, և դատաքննությամբ հաստատված է համարել, որ ապրանքներն իրացվել են ոչ բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ մատուցող անձին:

Ապրանքները բժշկական օգնության և սպասարկման համար նախատեսված լինելու հանգամանքն ապացուցելու պարտականություն Ընկերության վրա դրված չէ, նշված արտոնությունից օգտվելու համար Ընկերությունը կարող է կրել ընդամենը ապրանքները բժշկական տեխնիկա և պարագաներ լինելու փաստն ապացուցելու պարտականություն, ինչը սույն գործով ապացուցման կարիք չունի, քանի որ չի հանդիսանում վեճի առարկա:

Բացի այդ, ստուգողները հարկային արտոնությունը կիրառելի չեն համարել ոչ թե իրացված ապրանքները բժշկական տեխնիկա և պարագաներ չհամարվելու հիմքով, այլ բժշկական ծառայություն մատուցող անձանց իրացված չլինելու հիմքով, դրանով իսկ հաստատելով, որ վիճարկվող մասով իրացված ապրանքներն իսկապես եղել են բժշկական տեխնիկա և պարագաներ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վարչական դատարանի 25.04.2008 թվականի վճիռը:

### **3.Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Ծառայության 08.05.2007 թվականի թիվ 1021078 ստուգման ակտի 4-րդ կետի համաձայն՝ Ընկերությունը ներմուծել է ապրանքներ, որոնք դիտել է ավելացված արժեքի հարկից ազատված, սակայն այդ ապրանքներն ընդգրկված չեն ՀՀ հարկային տեսչության պետի 27.08.1997 թվականի թիվ 767 հրամանով հաստատված «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 19-րդ կետի դրույթների վերաբերյալ» հրահանգում:

2) Ծառայության գանգատարկման հանձնաժողովի 15.06.2007 թվականի թիվ 166/2 որոշմամբ թիվ 1021078 ստուգման ակտը թողնվել է անփոփոխ այն հիմքով, որ չի հիմնավորվել Ընկերության կողմից իրացված ապրանքները բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ մատուցող անձանց իրացվելու հանգամանքը:

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

*1) վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 19-րդ կետի համաձայն՝ ավելացված արժեքի հարկից ազատելը՝ հարկվող շրջանառության նկատմամբ այն չհաշվարկելն է: Ավելացված արժեքի հարկից ազատվում են նույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերում նշված հետևյալ գործարքները և գործառնությունները՝ դոնորային արյան, մայրական կաթի, պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, **բժշկական տեխնիկայի և պարագաների**, բուժօգնության, բուժսպասարկման (այդ թվում՝ կանխարգելիչ և ախտորոշման) ծառայությունների, բուժկանխարգելիչ ձեռնարկություններում ու կազմակերպություններում բուժման հետ կապված և այդ բուժօգնության շրջանակներում հիվանդների կողմից պատրաստված ապրանքների և կատարված ծառայությունների **իրացումը**:

ՀՀ հարկային տեսչության պետի 27.08.1997 թվականի թիվ 767 հրամանով հաստատված՝ ««Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 19-րդ կետի դրույթների վերաբերյալ» հրահանգի 4-րդ կետի համաձայն՝ նույն կետում նշված բժշկական այն տեխնիկայի իրացումը, որը կարող է օգտագործվել ոչ բժշկական նպատակներով, **ազատվում է ավելացված արժեքի հարկից, եթե այդ տեխնիկան իրացվում է բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ մատուցող անձանց:**

Սույն գործով Դատարանն Ընկերության հայցի մերժման հիմքում դրել է նաև այն հանգամանքը, որ հայցադիմումին կից թիվ 181 և թիվ 62 հաշիվ-ապրանքագրերում նշված չէ, որ վաճառվող ապրանքները նախատեսված են բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ մատուցող անձին իրացնելու համար, հետևաբար օրենքի հիման վրա հաստատված հրահանգով նախատեսված ավելացված արժեքի հարկից ազատվելու հիմքերը բացակայում են:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 19-րդ կետը հստակորեն սահմանում է, որ բժշկական տեխնիկայի և պարագաների իրացումն ազատվում է ավելացված արժեքի հարկից: Հետևաբար այդ նորմի կիրառումը կարող է սահմանափակվել միայն օրենքով:

Սինդեռ Ծառայության պետի 27.08.1997 թվականի թիվ 767 հրամանով բժշկական տեխնիկայի իրացումն ավելացված արժեքի հարկից ազատելու համար սահմանվել է որոշակի պայման, այն է՝ դրանք բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ մատուցող անձանց իրացնելը, որն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի ուժով կիրառման ենթակա չէ:

*2) վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 28-րդ կետի համաձայն՝ **ՀՀ օրենսդրությամբ (այդ թվում՝ ՀՀ միջազգային պայմանագրերով) ուղղակիորեն նշված չլինելու դեպքում** ծրագրի (գործունեության) տարբերակումն ըստ մարդասիրական օգնության և բարեգործական բնույթի, ինչպես նաև **սույն հոդվածի դրույթների համաձայն՝ ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների և ծառայությունների շրջանակները որոշում է ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը:**

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքի դրույթների վերաբերյալ հրահանգները, ինչպես նաև դրանց վերաբերյալ պարզաբանումները հաստատում է ՀՀ հարկային տեսչությունը՝ համաձայնեցնելով ՀՀ ֆինանս-

ների նախարարության, ինչպես նաև օրենքի 15-րդ հոդվածի 19-րդ կետի դրույթների վերաբերյալ պարզաբանումները՝ ՀՀ առողջապահության նախարարության հետ:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի վերոնշյալ հոդվածներից հետևում է, որ օրենսդիրն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների շրջանակի որոշման իրավասությունը թողել է ՀՀ կառավարության լիազորված մարմնին, եթե դրանք ուղղակիորեն օրենքով կամ միջազգային պայմանագրերով սահմանված չեն:

ՀՀ հարկային տեսչության պետի 27.08.1997 թվականի թիվ 767 հրամանով հաստատված՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 19-րդ կետի դրույթների վերաբերյալ» հրահանգով սահմանվել են ավելացված արժեքի հարկից ազատվող բժշկական պարագաների և տեխնիկայի ցանկը՝ ըստ դասակարգիչների:

Սույն գործով կազմված ստուգման ակտում նշվել է, որ Ընկերությունը 2005 թվականի ընթացքում ՀՀ տարածք է ներմուծել «ԱՊՀ արտաքին տնտեսական գործունեության ապրանքների անվանացանկ» դասակարգչի 84716040 ապրանքախմբին դասվող ապրանքներ, որոնք ընդգրկված չեն վերոնշյալ հրամանով սահմանված ցանկում:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործի լուծման համար էական նշանակություն ունի ոչ միայն ներմուծված ապրանքների բժշկական տեխնիկա հանդիսանալու փաստի ապացուցման հանգամանքը, այլ այդ ապրանքների՝ Ծառայության հրամանով հաստատված ցանկում ընդգրկված լինելու փաստը:

Հետևաբար հիմնավոր չեն վճռաբեկ բողոքում բերված այն փաստարկները, որ ստուգման ակտը կազմվել է միայն այդ ապրանքները բժշկական ծառայություններ չնատուցող անձին իրացնելու հիմքով, քանի որ ակտի կազմման հիմքում դրվել է նաև Ընկերության կողմից ներմուծված ապրանքները ՀՀ հարկային տեսչության պետի 27.08.1997 թվականի թիվ 767 հրամանով հաստատված հրահանգով սահմանված ցանկում ընդգրկված չլինելու հանգամանքը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքում նշված նյութական իրավունքի նորմերի խախտումները հիմք չեն դատական ակտը բեկանելու համար, քանի որ ՀՀ - քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նյութական իրավունքի նորմի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է գործի սխալ լուծման: Մինչդեռ սույն գործով Դատարանը, սխալ պատճառաբանելով դատական ակտը, ըստ էության ճիշտ է լուծել վեճը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Վարչական դատարանի 25.04.2008 թվականի վճիռը թողնել օրինական ուժի մեջ:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ՝ ստորագրություն  
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր՝ ստորագրություններ*



**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով:

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ բնակարանային օրենսգրքի 54-րդ հոդվածի 2-րդ մասի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 301-րդ հոդվածի առաջին մասի, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի պահանջները:*

*Բողոքը բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Դիմողները հանգուցյալ Ռ.Սարգսյանի և Վ.Գևորգյանի ընտանիքի անդամներն են և վարձակալ Ռ.Սարգսյանի հետ միասին մասնակցել են վեճի առարկա բնակարանի սեփականաշնորհմանը, որի հիմքով բնակարանի համասեփականատերեր են: Բնակարանը, որպես ընտանիքի բոլոր անդամների ընդհանուր համատեղ սեփականություն, ընտանիքի անդամների համաձայնությամբ, գրանցվել է վարձակալ Ռ.Սարգսյանի անվամբ և տրվել է սեփականության իրավունքի գրանցման վկայական: Այն հանգամանքը, որ բնակարանի սեփականաշնորհմանը մասնակցել են նաև դիմողները հիմնավորվում է գործում առկա բնակարանը սեփականաշնորհելու մասին դիմումով, ինչպես նաև արխիվային տեղեկանքով:

Վերաքննիչ դատարանի կողմից խախտվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի պահանջները՝ չկատարելով գործի ապացույցների օբյեկտիվ հետազոտություն և վերլուծություն, ինչի արդյունքում Վերաքննիչ դատարանը հանգել է սխալ հետևության:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոքը բերած անձինք պահանջել են բեկանել Վերաքննիչ դատարանի 23.01.2008 թվականի վճիռը և այն փոփոխել:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 23.01.1992 թվականին Ռ.Սարգսյանը, Հ.Գևորգյանը, Է.Սարգսյանը և Վ.Գևորգյանը դիմում են ներկայացրել Երևան քաղաքի Շահումյանի շրջանային խորհրդի գործադիր կոմիտեին բնակարանը սեփականաշնորհելու մասին:

2) Երևան քաղաքի Շահումյանի շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի 09.04.1992 թվականի որոշմամբ թույլատրվել է բնակարանի սեփականաշնորհումը:

3) 22.05.1992 թվականին Ռ.Սարգսյանի անվամբ տրվել է սեփականության իրավունքի գրանցման վկայական բնակարանի նկատմամբ:

4) Հայաստանի ազգային արխիվի Երևանի քաղաքային մասնաճյուղի 08.05.2007 թվականի տեղեկանքի համաձայն՝ բնակարանի սեփականաշնորհմանը մասնակցել են Ռ.Սարգսյանը, Հ.Գևորգյանը, Է.Սարգսյանը և Վ.Գևորգյանը:

5) 26.04.1994 թվականին գրանցվել է Վ.Գևորգյանի մահվան փաստը:

6) 30.09.2002 թվականի գրանցվել է Ռ.Սարգսյանի մահվան փաստը:

7) Ռ.Սարգսյանի և Վ.Գևորգյանի ժառանգական գույքի նկատմամբ Հ.Գևորգյանին և Է.Սարգսյանին տրվել է ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր:

8) Կադաստրը մերժել է Հ.Գևորգյանի և Է.Սարգսյանի իրավունքների գրանցումը՝ պատճառաբանելով, որ բնակարանի սեփականատերը Ռ.Սարգսյանն էր:

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն վեճի հիմքում ընկած իրավահարաբերությունների ծագման պահին գործող ՀՀ բնակարանային օրենսգրքի 53-55-րդ հոդվածների համաձայն՝ վարձակալի ընտանիքի այն անդամները, որոնք բնակվում են նրա հետ համատեղ, վարձակալի հետ հավասար

---

---

օգտվում են բնակտարածության վարձակալության պայմանագրից բխող իրավունքներից:

Սույն քաղաքացիական գործի փաստերի համաձայն՝ Վ.Գևորգյանը, Հ.Գևորգյանը և Է.Սարգսյանը բնակարանի օրդերում Ռ.Սարգսյանի հետ միասին գրանցված լինելով՝ որպես տվյալ բնակտարածության օգտագործման իրավունք ունեցող ընտանիքի անդամներ, փաստացի ապրելով բնակարանում՝ ՀՀ բնակարանային օրենսգրքի 53-55-րդ հոդվածների ուժով օգտվել են բնակտարածության վարձակալության պայմանագրից բխող բոլոր իրավունքներից, այդ թվում բնակարանի սեփականաշնորհումից բխող իրավունքից:

Հիմք ընդունելով վերոնշյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Հ.Գևորգյանը և Է.Սարգսյանը սեփականաշնորհման հիմքով վեճի առարկա բնակարանի համասեփականատերերն են: Հետևաբար, նրանց սեփականության իրավունքը ենթակա է պաշտպանության ՀՀ Սահմանադրության և օրենքների ուժով:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է Կադաստրի կողմից իրավունքների պետական գրանցումը մերժելու հիմնավորվածության հարցին (տե՛ս օրինակ՝ Բորիս Սկրտչյան ընդդեմ ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Մարաշ տարածքային ստորաբաժանում՝ պետական մարմնի ապօրինի գործողությունները վիճարկելու պահանջի մասին թիվ 3-1640 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 28.09.2006 թվականի որոշումը):

Սույն գործով Հ.Գևորգյանի և Է.Սարգսյանի սեփականության իրավունքի գրանցման մերժման համար Կադաստրը հիմք է ընդունել այն հանգամանքը, որ վեճի առարկա բնակարանի միակ սեփականատերը Ռ.Սարգսյանն է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը և այլ գույքային իրավունքները, այդ իրավունքների սահմանափակումները, դրանց ծագումը, փոխանցումն ու դադարումը ենթակա են պետական գրանցման:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 43-րդ - հոդվածի համաձայն՝ պետական գրանցումը մերժվում է, եթե գրանցման համար ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին, այսինքն՝

ա) չեն համապատասխանում օրենսդրությանը, կամ դրանցով խախտվել են օրենսդրության պահանջները, կազմված են օրենքով սահմանված կարգին ոչ համապատասխան,

բ) բացակայում է պետական գրանցման վճարի անդորրագիրը,

գ) ներկայացվել են մատիտով գրված, ջնջումներով, ուղղումներով, ինչպես նաև ոչ պատշաճ ձևակերպված փաստաթղթեր:

Արգելվում է այլ պատճառներով գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մերժումը, այդ թվում՝ աննպատակահարմարության պատճառաբանությամբ:

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի համաձայն՝ ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով:

Տվյալ դեպքում Կադաստրը միայն ծագած իրավունքները գրանցող պետական մարմին է և չի կարող անձանց համար սահմանել «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով չնախատեսված փաստաթղթեր կամ հիմնավորումներ ներկայացնելու պարտականություններ:

ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը, իսկ 31-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ վավերացված միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են կազմում: Եթե նրանցում սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են օ-

րենքներով, ապա կիրառվում են պայմանագրի նորմերը: «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի առաջին արձանագրության առաջին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք:

Սույն քաղաքացիական գործով Հ.Գևորգյանի և Է.Սարգսյանի նկատմամբ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի չկիրառումը խախտում է վերջինիս՝ ՀՀ Սահմանադրության 31-րդ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի առաջին արձանագրության առաջին հոդվածով երաշխավորված սեփականության իրավունքը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմնավոր լինելը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարություն օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով վերանայվող դատական ակտը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.01.2008 թվականի վճիռը և օրինական ուժ տալ Երևանի Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանի 24.10.2007 թվականի վճռին:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ՝ ստորագրություն  
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒՐՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վարչական դատարանի վճիռ  
Վարչական գործ թիվ ՎԴ-2/0051/05/08  
Նախագահող դատավոր՝ Հ. Թորոսյան

Քաղաքացիական գործ թիվ **ՎԴ-2/0051/05/08**  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Հ.ՍԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի սեպտեմբերի 26-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Անժելա Քոչինյանի վճռաբեկ բողոքը Վարչական դատարանի 26.02.2008 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի Անժելա Քոչինյանի ընդդեմ Արճիսի գյուղապետարանի՝ գյուղապետի գործողություններն ապօրինի ճանաչելու, հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու և հողամասի հատակագիծը համայնքի հողերի քարտեզից սահմանազատելու և ներկայացնելուն պարտավորեցնելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Յ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Անժելա Քոչինյանը պահանջել է իր սեփական հողամասը համայնքի հողերի քարտեզում հաստատելու գործողությունները ճանաչել ապօրինի, ճանաչել սեփականության իրավունքը պետության կողմից իրեն սեփականաշնորհված 1200 քմ հողամասի նկատմամբ և պարտավորեցնել Արճիսի գյուղապետին վիճելի հողամասի հատակագիծը սահմանազատել համայնքի հողերի քարտեզից, հաստատել այն և ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Նոյեմբերյանի տարածքային ստորաբաժանում (այսուհետ Կադաստր)՝ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը գրանցելու համար:

Վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 26.02.2008 թվականի վճռով հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Անժելա Քոչինյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածը, չի կիրառել 1991 թվականի ՀՀ հողային օրենսգրքի 9-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 273-րդ հոդվածը, որոնք պետք է կիրառեր:*

*Քողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Դատարանը, սխալ ընկալելով Արճիսի խորհունտեսության տնօրենի 08.08.1990 թվականի թիվ 53 հրամանի իմաստը և ապացուցողական նշանակությունը, այն դիտել է որպես սեփականաշնորհման ակտ և վճռում նշել, որ Անժելա Քոչինյանը սահմանված կարգով և ժամկետներում դիմում չի ներկայացրել իրավասու պետական մարմնին հատկացված հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը գրանցելու համար:

Մինչդեռ, հայցվորը հստակ պահանջել է օրենքի ուժով ճանաչել բնակարան կառուցելու համար իրեն հատկացված տնամերձ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը:

Դատարանը չի տարբերակել պետական հողերի և քաղաքացիների տիրապետության տակ գտնվող հողամասերի սեփականաշնորհման օրենքով նախատեսված հիմքերը: Պետական հողերը սեփականաշնորհվել են ՀՀ կառավարության որոշումների հիման վրա ստեղծված ժամանակավոր հանձնաժողովների միջոցով: Սեփականաշնորհված հողերի համար տրվել են պետական ակտեր: Քաղաքացիների կողմից օգտագործվող տնամերձ հողամասերը սեփականաշնորհվել են այդ ժամանակ գործող ՀՀ հողային օրենսգրքի 9-րդ հոդվածի ուժով:

Դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել նաև գործում առկա հողի հարկի վճարման անդորրագիրը հայցվորի ամուսնու՝ Ռոբերտ Քոչինյանի անվամբ, Կադաստրի տեղակալի 15.10.2007 թվականի գրությունը, համաձայն որի Անժելա Քոչինյանի սեփականության իրավունքը Կադաստրը չի վիճարկել, այլ իրավունքի գրանցում կատարելու համար պահանջել է գրանցման ենթակա հողամասի հատակագծի սահմանագատումը համայնքի հողերի քարտեզից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վարչական դատարանի 26.02.2008 թվականի վճիռը և գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:

**3.Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Արճիսի խորհունտեսության տնօրենի 08.08.1990 թվականի թիվ 53 հրամանով Անժելա Քոչինյանին հատկացվել է 1200 քմ տնամերձ հողամաս՝ բնակարան կառուցելու համար:

2. Անժելա Քոչինյանի կողմից օգտագործվող հողամասի նկատմամբ պետական գրանցում չի կատարվում, քանի որ նշված հողամասը գտնվում է 001-001 ծածկագրով 0,89 հա համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում:

3. ՀՀ կառավարության 22.06.2006 թվականի թիվ 1061-Ն որոշմամբ հողամասն անհատույց փոխանցվել է Արճիս համայնքի սեփականությանը:

**4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ *վճռաբեկ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը, իսկ 31-րդ - հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի:

Սույն իրավահարաբերության նկատմամբ կիրառելի 29.01.1991 թվականի ՀՀ Հողային օրենսգրքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ տնամերձ հողամասերը, ինչպես

---

---

նակ այգեգործական(ամառանոցի) և բնակելի տան շինարարության ու դրա սպասարկման համար Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ունեցած հողամասերը անհատույց կարգով թողնվում են նրանց որպես սեփականություն:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Դատարանը վճռի մեջ պետք է պատճառաբանի նման համոզմունքի ձևավորումը:

Սույն քաղաքացիական գործի փաստերի համաձայն՝ Արճիսի խորհունտեսության տնօրենի 08.08.1990 թվականի թիվ 53 հրամանով Անժելա Քոչինյանին հատկացվել է 1200 քմ տնամերձ հողամաս բնակարան կառուցելու համար:

Վճռաբեկ դատարանն արդեն անդրադարձել է նույնանման փաստական հանգամանքներում օրենքի ուժով սեփականության իրավունքի ծագման հարցերին (տես՝ Սկրտիչ և Գյուլխանում Գասպարյաններն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, երրորդ անձ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Էրեբունու տարածքային ստորաբաժանման՝ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին թիվ 3-106(ՎԳ) գործով Վճռաբեկ դատարանի 26.01.2007 թվականի որոշումը): Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ 1991 թվականի ՀՀ հողային օրենսգրքի 9-րդ հոդվածի ուժով տնամերձ հողամասերի նկատմամբ ծագում է այն անձանց սեփականության իրավունքը, ում դրանք հատկացվել են: Տվյալ դեպքում Անժելա Քոչինյանի սեփականության իրավունքը վեճի առարկա հողամասի նկատմամբ ծագել է օրենքի ուժով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 273-րդ հոդվածի համաձայն՝ սեփականատերն իրավունք ունի պահանջել ճանաչելու իր սեփականության իրավունքը: Վիճելի հողամասի սեփականատեր օրենքի ուժով հանդիսանում է Անժելա Քոչինյանը: Հետևաբար վերջինս իրավունք ունի պահանջել ճանաչելու իր սեփականության իրավունքը:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում Վարչական դատարանի եզրահանգումն այն մասին, որ ՀՀ հողային օրենսգրքի 9-րդ հոդվածի ուժով Անժելա Քոչինյանի սեփականատեր դառնալու վերաբերյալ հայցվորի պնդումը հիմնավոր չէ, քանի որ սեփականության իրավունքը հաստատող միակ փաստաթուղթը իրավասու մարմնի կողմից տրվող վկայականն է, որը հայցվորը չունի: Այսինքն Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն քաղաքացիական գործով վեճի առարկա հողամասի նկատմամբ Անժելա Քոչինյանի սեփականության իրավունքը ծագել է օրենքի ուժով, անկախ դրա պետական գրանցման փաստից:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վեճի առարկա հողամասը սեփականության իրավունքով Արճիս համայնքին օտարելով խախտվել է Անժելա Քոչինյանի սեփականության իրավունքը այդ հողամասի նկատմամբ:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով, Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար Դատարանի վճիռը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Վարչական դատարանի 26.02.2008 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ ' ս տ ո թ ա գ թ ու թ յ ու ն  
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր ' ս տ ո թ ա գ թ ու թ յ ու ն ն եր*



Քաղաքացիական վերաքննիչ դատարանի 14.02.2007 թվականի վճռով դիմումը բավարարվել է մասնակիորեն:

ՀՀ վճռաբեկ դատարանի 01.06.2007 թվականի որոշմամբ Քաղաքացիական վերաքննիչ դատարանի վճիռը բեկանվել է և գործն ուղարկվել է նոր քննության:

Քաղաքացիական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 28.11.2007 թվականի վճռով դիմումը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Արմեն Ապրեսյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել Թաղապետարանը և Քաղաքապետարանը:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*1) Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 615-րդ հոդվածը, 3-րդ հոդվածի 2-րդ մասը, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, գործի քննության ժամանակ գործող 218-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վեճի առարկա հողատարածքի նկատմամբ Արմեն Ապրեսյանն ունի վարձակալության իրավունք, հետևաբար առանց այդ իրավունքի դադարեցման վերաբերյալ պետական գրանցման, հնարավոր չէ Երևանի քաղաքապետի 01.09.2004 թվականի թիվ 1673-Ա որոշման հիման վրա այլ անձի վարձակալական իրավունքի գրանցում կատարել:

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 615-րդ հոդվածը, քանի որ այդ հոդվածը չի նախատեսում, որ առանց օրենքով սահմանված կարգով գույքի նկատմամբ վարձակալության իրավունք ունեցող անձի իրավունքի դադարեցման վարձատուր կարող է գույքը երկրորդ անգամ վարձակալության հանձնել և նման պարագայում միևնույն գույքի նկատմամբ կարող է կատարվել մեկ այլ անձի իրավունքի պետական գրանցում:

Բացի այդ, Քաղաքապետարանի սխալ վարչարարության պատճառով քանդվել է Արմեն Ապրեսյանին սեփականության իրավունքով պատկանող շինությունը:

*2) Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, սույն գործով վճիռ կայացնելիս անհիմն մերժել է ինչպես հասցված իրական վնասը, այնպես էլ բաց թողնված օգուտը բռնագանձելու պահանջը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 28.11.2007 թվականի վճիռը, և այն փոփոխել:

**2.1.Վճռաբեկ բողոքի պատասխանները**

**2.1.1. Թաղապետարանի վճռաբեկ բողոքի պատասխանը**

Մոսկվայի անվան ճեմուղիի հիմնելու համաձայնությունը կայացվել է Քաղաքապետարանի և Մոսկվայի կառավարության միջև՝ հետագայում այն Կենտրոն թաղային համայնքին հանձնելու համար, որի համար համապատասխան հողամասը վարձակալության է հանձնվել Կենտրոն թաղային համայնքի հիմնադրած «Կենտրոն-Կանաչապատում» ՓԲԸ-ին՝ ճեմուղիին հիմնադրելուց հետո դրա պահպանումն ու խնամքը կազմակերպելու համար: Նշված ճեմուղու կառուցապատողն է հանդիսացել «Կոմպանիոն» ՓԲԸ-ն: Երևանի Կենտրոն թաղային համայնքը և (կամ) վերջինիս տեղական ինքնակառավարման մարմինները, ինչպես նաև համայնքային որևէ կազմակերպություն, այդ թվում՝ Թաղապետարանը, Մոսկովյան ճեմուղին կառուցելու աշխատանքների ժամանակ պատվիրատու

---

---

կամ կապալառու չեն հանդիսացել, և որևէ գործողությամբ կամ անգործությամբ վնաս չեն պատճառել Արմեն Ապրեսյանին:

### **2.1.2. Քաղաքապետարանի վճարել բողոքի պատասխանը**

Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 615-րդ հոդվածը կիրառելը հիմնավորված է, քանի որ Երևանի քաղաքապետի 01.09.2004 թվականի թիվ 1673-Ա որոշմամբ Մոսկվայի անվան ծառուղի հիմնելու նպատակով հողամասի առանձնացումը չի կարող հիմք հանդիսանալ Արմեն Ապրեսյանի հողամասի վարձակալության իրավունքը դադարեցնելու համար, առավել ևս, որ չի ներկայացվել որևէ ապացույց այն մասին, որ Արմեն Ապրեսյանին վարձակալությամբ տրամադրված հողամասն ընդգրկված է առանձնացած հողամասի սահմաններում:

Վճարել բողոքի պատճառաբանությունները և փաստարկներն անհիմն են, Արմեն Ապրեսյանը մինչև դատական կարգով վեճի լուծումը փոխհատուցման խնդրանքով Քաղաքապետարան չի դիմել, և Քաղաքապետարանը նրան փոխհատուցելու պարտավորությունը չի ընդունում:

### **3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Երևանի քաղաքապետի 03.06.2004 թվականի թիվ 1000-Ա որոշմամբ և դրան կից թիվ 1 հավելվածի համաձայն՝ Երևանի Գ.Քոչարի փողոցի թիվ 21 հասցեի 20,8քմ մակերեսով տարածքի նկատմամբ ճանաչվել է Արմեն Ապրեսյանի սեփականության իրավունքը, իսկ դրա զբաղեցրած հողամասը տրամադրվել է վարձակալությամբ հինգ տարի ժամկետով.

2) Երևանի Գ.Քոչարի փողոցի թիվ 21 հասցեի 20,8քմ մակերեսով շինության նկատմամբ գրանցվել է Արմեն Ապրեսյանի սեփականության, իսկ հողամասի նկատմամբ՝ վարձակալության իրավունքը հինգ տարի ժամկետով.

3) Երևանի քաղաքապետի 01.09.2004 թվականի թիվ 1673-Ա որոշմամբ Երևան քաղաքի Գ.Քոչարի փողոցում Մոսկվայի անվան ճեմուղի հիմնելու(կառուցելու) նպատակով 2292.0 քմ մեկերեսով հողամասը 25 տարի ժամկետով վարձակալության իրավունքով տրամադրվել է «Կենտրոն-Կանաչապատում» ՓԲԸ-ին.

4) Երևանի Կենտրոն համայնքի ղեկավարի թիվ Ն 23/35-159 շինարարական թույլտվության համաձայն՝ «Կոմպանիոն» ՓԲԸ-ին թույլատրվել է իրականացնել Երևանի Գ.-Քոչարի փողոցի մայթերի բարեկարգման շինարարական աշխատանքներ.

5) Երևան քաղաքում Մոսկվայի անվան ճեմուղի հիմնադրելու հետ կապված քանդվել է Արմեն Ապրեսյանին սեփականության իրավունքով պատկանող շինությունը.

6) «Էքսպերտ լաբորատորիա» ՍՊԸ-ի 02.08.2004 թվականի թիվ 8-04 գնահատման ակտի համաձայն՝ գնահատման օրվա դրությամբ Երևանի Գ.Քոչարի փողոցի թիվ 21 հասցեի շինության արժեքը կազմել է 12.183 (տասներկու հազար մեկ հարյուր ութսուներեք) ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:

7) «Էլեֆանտ-Ռիելթի» ՍՊԸ-ի անշարժ գույքի գնահատման 30.08.2004 թվականի հաշվետվության համաձայն՝ Երևանի Գ.Քոչարի փողոցի թիվ 21 հասցեի 17,5քմ մակերեսով շինության արժեքը գնահատման օրվա դրությամբ կազմում է 12.620 ԱՄՆ դոլար, որը, համաձայն ՀՀ կենտրոնական բանկի կողմից 30.08.2004 թվականին սահմանված փոխարժեքի, համարժեք է 6.436.200 (վեց միլիոն չորս հարյուր երեսունվեց հազար երկու հարյուր) ՀՀ դրամին:

**4. ՎՃռարեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Քննելով վճռարեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ ՎՃռարեկ դատարանը գտնում է, որ՝

*1) բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 615-րդ հոդվածի համաձայն՝ գույքը վարձակալության հանձնելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ երրորդ անձանց իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար: Վարձակալության պայմանագիրը կնքելիս վարձատուն պարտավոր է վարձակալին նախագուշացնել հանձնվող գույքի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների (գրավի իրավունք, սերվիտուտ և այլն) մասին: Վարձատուի կողմից այդ պարտականությունը չկատարելը, վարձակալին իրավունք է տալիս պահանջել նվազեցնելու վարձավճարը կամ լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի համաձայն՝ պայմանագրի փոփոխումը և լուծումը հնարավոր է կողմերի համաձայնությամբ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի քաղաքապետի և Արմեն Ապրեսյանի միջև 31.07.2004 թվականին կնքվել է Երևանի Գ.Քոչարի փողոցի թիվ 21 հասցեի 20,8 քմ - մակերեսով հողամասի վարձակալության պայմանագիր: Պայմանագիրը վավերացվել է նոտարական կարգով, իսկ վարձակալության իրավունքը գրանցվել է օրենքով սահմանված կարգով: Վերոնշյալ պայմանագիրը լուծված, իսկ Արմեն Ապրեսյանի վարձակալության իրավունքը դադարեցված չեն:

Երևանի քաղաքապետի 01.09.2004 թվականի թիվ 1673-Ա որոշմամբ Երևան քաղաքի Գ.Քոչարի փողոցում Մոսկվայի անվան ճեմնուղի հիմնելու (կառուցելու) նպատակով 2292.0քմ մեկերեսով հողամասը 25 տարի ժամկետով վարձակալության իրավունքով տրամադրվել է «Կենտրոն-Կանաչապատում» ՓԲԸ-ին: Երևանի Կենտրոն համայնքի ղեկավարի թիվ Ն 23/35-159 շինարարական թույլտվության համաձայն՝ «Կոմպանիոն» ՓԲԸ-ին թույլատրվել է իրականացնել Երևանի Գ.Քոչարի փողոցի մայրթերի բարեկարգման շինարարական աշխատանքներ:

Այդ աշխատանքների իրականացման հետ կապված քանդվել է Արմեն Ապրեսյանին սեփականության իրավունքով պատկանող շինությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի համաձայն՝ անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Վնաս է համարվում նաև այդ անձի գույքի կորուստը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 95-րդ - հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինների կողմից իրականացվող վարչարարության հետևանքով անձանց պատճառված վնասը ենթակա է հատուցման՝ սույն բաժնի դրույթներին համապատասխան: Նույն հոդվածի 2-րդ մասը նախատեսում է, որ տարածքային կառավարման մարմնի՝ Երևանի քաղաքապետի, կողմից ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով անձանց պատճառված վնասի համար պատասխանատվությունը կրում է Հայաստանի Հանրապետությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց ապօրինի գործողությունների (անգործության)՝ ներառյալ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի՝ օրենքին կամ այլ իրավական ակտին չհամապատասխանող ակտի հրապարակման հետևանքով քաղաքացուն կամ իրավաբանական անձին պատճառված վնասները հատուցում են Հայաստանի Հանրապետությունը կամ համապատասխան համայնքը:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Երևանի քաղաքապետի կողմից իրականացված վարչարարության հետևանքով Արմեն Ապրեսյանը գրկվել է սեփականության իրավունքով իրեն պատկանող շինությունից, ինչպես նաև վարձակալության իրավունքով տրամադրված հողամասը պայմանագրի պայմաններին համապատասխան տիրապետելու և օգտագործելու իրավունքից: Դրանց արդյունքում Արմեն Ապրեսյանին պատճառվել է վնաս: Ըստ «Էքսպերտ լաբորատորիա» ՍՊԸ-ի 02.08.2004 թվականի թիվ 8-04 գնահատման ակտի՝ գնահատման օրվա դրությամբ Երևանի Գ.Քոչարի փողոցի թիվ 21 հասցեի շինության արժեքը կազմել է 12.183 (տասներկու հազար մեկ հարյուր ութսուներեք) ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, իսկ «Էլեֆանտ-Ռիելթի» ՍՊԸ-ի 30.08.2004 թվականի հաշվետվության համաձայն՝ գնահատման օրվա դրությամբ վիճելի շինության արժեքը 6.436.200 ՀՀ դրամ է:

Հետևաբար, Արմեն Ապրեսյանի հայցապահանջը 6.436.200 ՀՀ դրամի չափով հասցված վնասի փոխհատուցման մասին հիմնավոր է, և այն ենթակա է հատուցման Զաղաքապետարանի կողմից:

Ինչ վերաբերում է Երևանի Կենտրոն համայնքին ներկայացված հայցապահանջին, ապա այն անհիմն է, քանի որ գործում բացակայում է որևէ ապացույց, որով հաստատվում է Թաղապետարանի կողմից ոչ իրավաչափ վարչարարություն իրականացնելու փաստը:

*2) բողոքը երկրորդ հիմքով անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վնասներ են՝ իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), ինչպես նաև չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բաց թողած օգուտի առկայությունը, այսինքն՝ անձի իրավունքի չխախտման պարագայում եկամտի ստացման իրական հնարավորությունը որոշելը, յուրաքանչյուր գործով ինքնուրույն գնահատման ենթակա հարց է, որի ընթացքում պետք է հաշվի առնվեն տվյալ գործի առանձնահատկությունները: Մասնավորապես բաց թողած օգուտի առկայությունը որոշելու համար նախ և առաջ պետք է հաշվի առնվի մինչև իրավունքի խախտումը քաղաքացիական շրջանառությունում համապատասխան գույքի ունեցած կարգավիճակը (մասնավորապես, այլ անձի հետ վարձակալության պայմանագիր կնքված լինելը) կամ սեփականատիրոջ **իրական** մտադրության և հնարավորության միաժամանակյա առկայությունը այդ գույքի տնօրինման եղանակների առնչությամբ (այդպիսին կարող է լինել, օրինակ, իրավունքը խախտված անձի կողմից այլ անձանց ուղարկված համապատասխան օֆերտան) (տես՝ Ջուլիետա Պետրոսյան, Կարեն Դավթյան և Արման Դավթյան ընդդեմ Թեոս Սաֆարյանի՝ պատճառված վնասների հատուցման պահանջի մասին թիվ 3-691(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.03.2007 թվականի որոշումը):

Մինչդեռ սույն քաղաքացիական գործով Արմեն Ապրեսյանի կողմից չի հիմնավորվել վեճի առարկա շինությունը վարձակալությամբ հանձնելու մտադրությունը:

Հետևաբար, բաց թողնված օգուտի մասով հայցապահանջն անհիմն է:

Վճռաբեկ բողոքի պատասխանում նշված փաստարկները հերքվում են վերոնշյալ պատճառաբանություններով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի առաջին հիմքի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի համաձայն, Վերաքննիչ դատարանի վճիռը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով

սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը մասնակիորեն փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Քաղաքացիական վերաքննիչ դատարանի 28.11.2007 թվականի վճիռը և այն փոփոխել: Արմեն Ապրեսյանի դիմումը բավարարել մասնակիորեն՝ բռնագանձել Երևանի քաղաքապետարանից հօգուտ Արմեն Ապրեսյանի 6.436.200 (վեց միլիոն չորս հարյուր երեսունվեց հազար երկու հարյուր) ՀՀ դրամ:

2. Երևանի Կենտրոն համայնքի մասով, ինչպես նաև բաց թողնված օգուտի մասով հայցը մերժել:

3. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ս տ որ ա գր ու թ յ ու ն  
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ս տ որ ա գր ու թ յ ու ն ն եր*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վարչական դատարանի վճիռ  
Վարչական գործ թիվ ՎԴ/0429/05/08  
Նախագահող դատավոր՝ Ա. Ղազարյան

Քաղաքացիական գործ թիվ ՎԴ/0429/05/08  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի հոկտեմբերի 31-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը Վարչական դատարանի 25.04.2008 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Քաղաքապետարան) ընդդեմ Սարգիս Նազարյանի՝ գումարի բռնագանձման և ինքնակամ կառույցը քանդելուն պարտավորեցնելու պահանջների մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Քաղաքապետարանը պահանջել է Սարգիս Նազարյանից բռնագանձել տուգանք՝ 200.000 ՀՀ դրամ գումարի չափով, և պարտավորեցնել քանդել ինքնակամ կառույցը:

Վարչական դատարանի 25.04.2008 թվականի վճռով հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի առաջին մասը, չի կիրառել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի առաջին մասի առաջին պարբերությունը, որը պետք է կիրառեր և կիրառել է նույն օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերությունը, որը չպետք է կիրառեր:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկով.*

Վարչական դատարանը հայցը մերժելիս կիրառել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերությունը և հանգել այն եզրահանգման, որ Երևանի քաղաքապետարանի կողմից չի ապացուցվել, որ ինքնակամ կառույցը կառուցվել է պետական սեփականություն հանդիսացող հողամասի վրա:

Սինչեռ, սույն գործով Երևանի Մանուշյան փողոցի թիվ 4 տան բնակիչ Սարգիս Նազարյանը, առանց անհրաժեշտ թույլտվության և քաղաքաշինական փաստաթղթերի առկայության, ինքնակամ իրականացրել է իր տան երկրորդ հարկի կառուցման աշխատանքները, որի արդյունքում ենթարկվել է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությամբ նախատեսված կարգով:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վարչական դատարանի 25.04.2008 թվականի վճիռը և գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:

**3.Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության գլխավոր մասնագետ Ռ.Կարապետյանի 23.08.2007 թվականի արձանագրությամբ հայտնաբերվել է խախտում, այն է՝ սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձանց կողմից այդ հողամասի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը: Երևանի Մանուշյան փողոցի թիվ 4 տան բնակիչ Սարգիս Նազարյանն առանց քաղաքաշինական փաստաթղթերի գոյություն ունեցող շինության հարթ տանիքի վրա իրականացրել է երկրորդ հարկի կառուցման շինանարարական աշխատանքներ:

2. Երևանի քաղաքապետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 28.08.2007 թվականի թիվ Վ-12/7 որոշմամբ Սարգիս Նազարյանը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ վարչական տուգանքի՝ 200.000 ՀՀ դրամ գումարի չափով:

**4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ *վճռաբեկ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության համաձայն՝ սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձանց կողմից այդ հողամասի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը, ինչպես նաև բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից ինքնակամ կառույցներ կատարելը, բացառությամբ գյուղական համայնքներում տնամերձ հողամասի վրա ինքնակամ կառուցված անհատական բնակելի տան, առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերության համաձայն՝ հողօգտագործման իրավունք չունեցող անձանց կողմից պետությանը և համայնքներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:

Վերոնշյալ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ վարչական տուգանքը 200.000 ՀՀ դրամ գումարի չափով ծագում է սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձանց կողմից այդ հողամասի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելու դեպքում, իսկ 400.000 ՀՀ դրամ գումարի չափով վարչական տուգանքը՝ հողօգտա-

---

---

գործման իրավունք չունեցող անձանց կողմից պետությանը և համայնքներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելու դեպքում:

Սույն վարչական գործի փաստերի համաձայն՝ Սարգիս Նազարյանը՝ որպես հողօգտագործման իրավունք ունեցող անձ, առանց համապատասխան թույլտվության իրականացրել է Երևանի Մանուշյան փողոցի թիվ 4 հասցեում գտնվող տան երկրորդ հարկի կառուցման աշխատանքները, որի համար ենթարկվել է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությամբ սահմանված կարգով:

Մինչդեռ, Վարչական դատարանը հաստատված համարելով Սարգիս Նազարյանի կողմից Երևանի Մանուշյան փողոցի թիվ 4 տան հարթ տանիքի վրա երկրորդ հարկի կառուցման աշխատանքների ինքնակամ իրականացման փաստը, կիրառել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերությունը, որը վարչական պատասխանատվություն է նախատեսում ոչ թե հողօգտագործման իրավունք ունեցող անձի կողմից այդ հողամասի վրա շինություն կառուցելու, այլ հողօգտագործման իրավունք չունեցող անձանց կողմից պետությանը և համայնքներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի վրա շինություն կառուցելու համար:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր չէ Վարչական դատարանի այն պատճառաբանությունը, որ դատաքննության ընթացքում չի հիմնավորվել Երևանի Մանուշյան փողոցի թիվ 4 հասցեում գտնվող տան երկրորդ հարկի կառուցման աշխատանքների իրականացումը պետությանը պատկանող հողամասի վրա, քանի որ այդ փաստը սույն քաղաքացիական գործի լուծման համար որևէ նշանակություն չի կարող ունենալ:

Այսպիսով, վերը նշված հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածների ուժով Վարչական դատարանի վճիռը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել Վարչական դատարանի 25.04.2008 թվականի վճիռը և այն փոփոխել. Երևանի քաղաքապետարանի հայցը բավարարել. Սարգիս Նազարյանից բռնագանձել վարչական տուգանք՝ 200.000 ՀՀ դրամի չափով, և պարտավորեցնել քանդել ինքնակամ կառույցը:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ ' ս տ ո թ ա գ թ ու թ յ ու ն  
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր ' ս տ ո թ ա գ թ ու թ յ ու ն ն եր*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վարչական դատարանի վճիռ  
Վարչական գործ թիվ ՎԴ/0380/05/08  
Նախագահող դատավոր՝ Ա. Մարգարյան

Վարչական գործ թիվ ՎԴ/0380/05/08  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ  
դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի հոկտեմբերի 31-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը Վարչական դատարանի 22.04.2008 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Քաղաքապետարան) ընդդեմ Յողիկ Հակոբջանյանի՝ գումարի բռնագանձման, ինքնակամ կառույցը քանդելու և տարածքը նախկին տեսքի բերելու պարտավորեցնելու պահանջների մասին,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Քաղաքապետարանը պահանջել է բռնագանձել Յողիկ Հակոբջանյանից վարչական տուգանք 400.000 ՀՀ դրամ գումարի չափով, պարտավորեցնել քանդել ինքնակամ կառույցը և տարածքը բերել նախկին տեսքի:

Վարչական դատարանի 22.04.2008 թվականի վճռով հայցը՝ 400.000 ՀՀ դրամ վարչական տուգանքի գումար բռնագանձելու պահանջի մասով, մերժվել է, իսկ ինքնակամ կառույցը քանդելու և տարածքը նախկին տեսքի բերելու պահանջի մասով՝ բավարարվել:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:  
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Դատարանը սխալ է մեկնաբանել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասը և 154-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերությունը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Վարչական դատարանը, սխալ մեկնաբանելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասում և 154-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերությունում ամրագրված «զավթել» և «կառուցել» հասկացությունները, դրանք բովանդակային առումով նույնացրել է և հղում կատարելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 7-րդ մասին՝ գտել է, որ Յողիկ Հակոբջանյանի նկատմամբ պետք է կիրառվի ավելի մեղմ պատժամիջոց՝ 200.000 ՀՀ դրամի չափով:

Վարչական դատարանն անտեսել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի օբյեկտիվ կողմը դրսևորվում է հողամասը ինքնակամ զավթելով, իսկ նույն օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերությունում նշված զանցանքը՝ հողամասում շինություն կառուցելով, ինչը կատարվել է Յողիկ Հակոբջանյանի կողմից հողատարածքը քարտերով և մետաղյա ցանկապատով կառուցելու միջոցով սահմանազատելով:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վարչական դատարանի 22.04.2008 թվականի վճիռը Երևանի քաղաքապետարանի հայցը 400.000 ՀՀ դրամ վարչական տուգանք բռնագանձելու հայցը մերժելու մասով և այն փոփոխել. հայցը բավարարել:

### **3.Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության առաջատար մասնագետ Ա.Գրիգորյանի 11.10.2007 թվականի արձանագրությամբ հայտնաբերվել է հետևյալ խախտումները. պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը ինքնակամ զավթելը և դրա հետևանքները չվերացնելը, ինչպես նաև հողօգտագործման իրավունք չունեցող անձանց կողմից պետությանը և համայնքներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը: Յողիկ Հակոբջանյանը Նոր Նորք համայնքի 7-րդ զանգվածի 1-ին շենքի դիմաց, իր պատուհանների տակ գտնվող մոտ 25 քմ - հողատարածքը սահմանազատել է եզրաքարերով և մետաղյա ցանկապատով:

2. Երևանի քաղաքապետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 24.10.2007 թվականի թիվ Վ-16/4 որոշմամբ Յողիկ Հակոբջանյանը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ վարչական տուգանքի 400.000 ՀՀ դրամ գումարի չափով:

### **4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ *վճռաբեկ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական և (կամ) համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն ինքնակամ զավթելը և դրա հետևանքները չվերացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

Նույն օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերության համաձայն՝ հողօգտագործման իրավունք չունեցող անձանց կողմից պետությանը և համայնքներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:

---

---

Սույն գործով Վարչական դատարանը, 400.000 ՀՀ դրամ վարչական տուգանքի բռնագանձման հայցապահանջի մերժման հիմքում դնելով այն հանգամանքը, որ ՀՀ օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասում և 154-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերությունում ամրագրված «զավթել» և «կառուցել» օրենսդրական եզրույթները ենթադրում են անձի կողմից կատարված նույնաբովանդակ գործողություն, եկել է այն եզրահանգման, որ Յողիկ Հակոբջանյանի նկատմամբ պետք է կիրառվի ավելի մեղմ պատժամիջոց, այսինքն՝ 200.000 ՀՀ դրամ տուգանք:

Մինչդեռ, վերոնշյալ հոդվածներից հետևում է, որ նրանցում արտացոլված իրավախախտումները (զանցանքները) միմյանցից տարբերվում են ինչպես կատարման ձևերով (օբյեկտիվ կողմով), այնպես էլ վարչական պատասխանատվության միջոցի՝ վարչական տուգանքի չափով: Ընդ որում, վարչական տուգանքը՝ **200.000 ՀՀ դրամ գումարի չափով**՝ որպես վարչական պատասխանատվության միջոց, ծագում է պետական և (կամ) համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն **ինքնակամ զավթելու** և դրա հետևանքները չվերացնելու դեպքում, իսկ վարչական տուգանքը՝ 400.000 ՀՀ դրամ գումարի չափով՝ հողօգտագործման իրավունք չունեցող անձանց կողմից պետությանը և համայնքներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի վրա շենքեր և շինություններ **ինքնակամ կառուցելու** դեպքում:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «**ինքնակամ զավթել**» և «**ինքնակամ կառուցել**» օրենսդրական եզրույթները միմյանցից տարբերվող հասկացություններ են և չեն կարող նույնացվել:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-մասի համաձայն՝ եթե անձը կատարել է մի քանի վարչական իրավախախտումներ, որոնց վերաբերյալ գործերը միաժամանակ քննվում են նույն մարմնի (պաշտոնատար անձի) կողմից, տույժը նշանակվում է առավել լուրջ խախտման համար սահմանված սանկցիայի շրջանակներում:

Սույն գործի փաստերի համադրության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Յողիկ Հակոբջանյանը, Նոր Նորք համայնքի 7-րդ զանգվածի 1-ին շենքի դիմաց, իր պատուհանների տակ գտնվող մոտ 25 քմ հողատարածքը եզրաքարերով և մետաղյա ցանկապատով սահմանազատելով, **ինքնակամ զավթել է** պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը, ինչպես նաև որպես հողօգտագործման իրավունք չունեցող անձ պետությանը և համայնքին սեփականության պատկանող հողամասի վրա **ինքնակամ կառուցել է շինություն**: Այսինքն՝ կատարել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված տարբեր իրավախախտումներ (զանցանքներ), որի համար ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ առավել լուրջ խախտման համար սահմանված սանկցիայի շրջանակներում՝ վարչական տուգանքի՝ 400.000 ՀՀ դրամ գումարի չափով:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր չէ Վարչական դատարանի այն եզրահանգումը, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասում և 154-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերությունում ամրագրված «զավթել» և «կառուցել» օրենսդրական եզրույթները ենթադրում են անձի կողմից կատարված նույնաբովանդակ գործողություն, այսինքն՝ որևէ շինություն կամ կառույց կառուցելը:

Այսպիսով, վերը նշված հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վարչական դատարանի վճիռը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Վարչական դատարանի 22.04.2008 թվականի վճռի՝ Յողիկ Հակոբջանյանից 400.000 ՀՀ դրամ վարչական տուգանք բռնագանձելը մերժելու մասը և այն փոփոխել: Երևանի քաղաքապետարանի հայցը բավարարել:
2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն  
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վարչական դատարանի վճիռ  
Վարչական գործ թիվ ՎԳ/0173/05/08  
Նախագահող դատավոր՝ Գ.Ղարիբյան

Վարչական գործ թիվ ՎԳ/0173/05/08  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՂԱՆՅԱՆԻ

2008 թվականի հոկտեմբերի 31-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը Վարչական դատարանի 04.04.2008 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության (այսուհետ՝ նախարարություն) ընդդեմ «Ինժգրոյալ» ԲԲԸ-ի (այսուհետ՝ ընկերություն)՝ 1.000.000 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ նախարարությունը պահանջել է բռնագանձել ընկերությունից 1.000.000 ՀՀ դրամ:

Վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 04.04.2008 թվականի վճռով հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը: Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վարչական դատարանը խախտել է Վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, չի կիրառել «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման» մասին ՀՀ օրենքի 3-րդ, 19-րդ հոդվածի 1-ին կետի «ժդ» ենթակետը, 21-րդ հոդվածի 3-րդ կետը, 22-րդ հոդվածի 2-րդ կետը, որոնք պետք է կիրառվեն:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Վարչական դատարանը չի գնահատել վարչական գործի նյութերում գտնվող ընկերության կողմից ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն հասցեագրված գրությունը, որով հայտնվել է, որ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 11.04.2007 թվականի թիվ 92-Ա հրամանով և թիվ 5 կարգադրագրով նախատեսված խախտումները վերացված են, այն է՝ դադարեցվել է 16.04.2007 թվականից կամրջակային կռունկի շահագործումը և ընկերությունում առկա բոլոր արտադրական վտանգավոր օբյեկտները ներկայացված են գրանցման «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից վարվող ռեեստրում: Նշված գրությամբ, փաստորեն, պատասխանողն ընդունել է կամրջակային կռունկն իր կողմից շահագործելու փաստը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վարչական դատարանի 04.04.2008 թվականի վճիռը և գործն ուղարկել նոր քննության:

**3.Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 11.04.2007 թվականի հրամանով ընկերության նկատմամբ նշանակվել է 1.000.000 ՀՀ դրամի չափով տուգանք՝ օրենքով սահմանված կարգով արտադրական վտանգավոր օբյեկտը (կամրջակային կռունկը) ռեեստրում գրանցման չներկայացնելու համար:

2. Նախարարությանը հասցեագրված 23.04.2007 թվականի գրությամբ ընկերության տնօրենը հայտնել է, որ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 11.04.2007 թվականի հրամանով և թիվ 5 կարգադրագրով արձանագրված խախտումները վերացվել են, այն է՝ 16.04.2007 թվականից կամրջակային կռունկի շահագործումը դադարեցվել է և ընկերությունում առկա արտադրական վտանգավոր օբյեկտները ներկայացված են գրանցման:

**4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ *վճռաբեկ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

«Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի համաձայն՝ օրենքը տարածվում է Հայաստանի Հանրապետության տարածքում շահագործվող (շահագործման նպատակով նախապատրաստվող, կոնսերվացվող, ապամոնտաժվող) արտադրական վտանգավոր օբյեկտների վրա, բացառությամբ միջուկային և էներգատեղակայանքների, ռադիոակտիվ նյութերի վերամշակման, ավիացիայի, ավտոմոբիլային և երկաթուղային տրանսպորտի, ինչպես նաև ռազմական նշանակության օբյեկտների:

Օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ արտադրական վտանգավոր օբյեկտ շահագործող անձինք են համարվում Հայաստանի Հանրապետության տարածքում նույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված բնորոշմանը համապատասխանող օբյեկտ փաստացի շահագործող (շահագործման նպատակով նախապատրաստող) ֆիզիկական անձը կամ կազմակերպությունը, այդ թվում՝ օտարերկրյա, պետական և տեղական ինքնակառավարման մարմինները՝ անկախ տվյալ օբյեկտի նկատմամբ առկա իրավունքի բնույթից: Համաձայն Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի՝ արտադրական վտանգավոր օբյեկտ են համարվում շարժասանդղքները, ճոպանուղիները, կարուսելները, ֆունիկուլյորները, սարքավորումները և մեխանիզմները:

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի «Ժր» կետի համաձայն՝ արտադրական վտանգավոր օբյեկտ շահագործող անձը պարտավոր է տեխնիկական անվտանգության ոլորտի օրենսդրությանը համապատասխան՝ արտադրական վտանգավոր օբյեկտը ներկայացնել գրանցման ռեեստրում:

---

---

Սույն գործի փաստերի համաձայն՝ վիճելի իրավահարաբերության ծագման հիմք հանդիսացող կամրջակային կռունկը, որն ըստ Օրենքի 6-րդ հոդվածի համարվում է արտադրական վտանգավոր օբյեկտ, գտնվել է ընկերության տիրապետման ներքո:

Սույն գործով, Դատարանը հայցի մերժման հիմքում դնելով այն հանգամանքը, որ ընկերությունը արտադրական վտանգավոր օբյեկտը չի շահագործել, գնահատման առարկա չի դարձրել ընկերության կողմից նախարարությանը հասցեագրված 23.04.2007 թվականի գրությունը, որով ընկերության տնօրենը հայտնել է, որ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 11.04.2007 թվականի հրամանով և թիվ 5 կարգադրագրով արձանագրված խախտումները վերացվել են, այն է՝ 16.04.2007 թվականից կամրջակային կռունկի շահագործումը դադարեցվել է և ընկերությունում առկա արտադրական վտանգավոր օբյեկտները ներկայացված են գրանցման:

Այսինքն, վերոնշյալ գրությամբ ընկերությունն ընդունել է իր կողմից մինչև 16.04.2007 թվականը արտադրական վտանգավոր օբյեկտ շահագործելու փաստը:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Օրենքի 4-րդ հոդվածի իմաստով ընկերությունը համարվել է արտադրական վտանգավոր օբյեկտ շահագործող, հետևաբար պարտավոր էր Օրենքի 19-րդ հոդվածի հիմքով կամրջակային կռունկը ներկայացնել գրանցման համապատասխան ռեեստրում:

Այսպիսով, վերը նշված հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար ՀՀ քաղաքացիական դատավարություն օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով՝ Վարչական դատարանի վճիռը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործն ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել Վարչական դատարանի 04.04.2008 թվականի վճիռը և այն փոփոխել. ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության հայցը բավարարել. «Ինժվոբալ» ԲԲԸ-ից բռնագանձել 1.000.000 ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ ' ս տ ո թ ա գ թ ու թ յ ու ն  
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր ' ս տ ո թ ա գ թ ու թ յ ու ն ն ե թ*



**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Դատարանը սխալ է մեկնաբանել «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածը, կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասը, որը չպետք է կիրառել:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Սույն գործի փաստերի համաձայն՝ Կոուպերատիվն իր սեփականությունը հանդիսացող շինությունը նվիրատվության պայմանագրով օտարել է Ռոբերտ Սահակյանին:

Պարզեցված հարկով հարկվող շրջանառությունը կազմում է շինության գույքահարկով հարկման նպատակով դրա համար օրենքով սահմանված կարգով որոշվող արժեքից ոչ պակաս: Եթե օրենքով սահմանված չափից պակաս հատուցումը լինի նույնիսկ 100 տոկոսով պակաս (այսինքն՝ անհատույց), ապա հարկվող շրջանառությունը որոշելիս համախառն եկամտի մեջ պետք է հաշվարկվի նաև այդ շենքի, շինության այն արժեքը, որով հաշվարկվում է գույքահարկը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վարչական դատարանի 21.04.2008 թվականի վճիռը և դատական ակտը փոփոխել:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 20.10.2006 թվականին կայացած Կոուպերատիվի ընդհանուր ժողովը որոշել է այն լուծարել:

2) Կոուպերատիվի երկու փայատերերն ամբողջությամբ հրաժարվել են Կոուպերատիվում ունեցած իրենց փայաբաժիններից՝ հօգուտ երրորդ փայատեր Ռոբերտ Սահակյանի:

3) 04.12.2006 թվականին կնքված նվիրատվության պայմանագրով Կոուպերատիվը քաղաքացի Ռոբերտ Սահակյանին է նվիրել Երևանի Նուբարաշեն 9-րդ փողոցի թիվ 1 հասցեի խանութը:

4) Նշված հաշվետու ժամանակահատվածի համար Կոուպերատիվը հարկային տեսչություն է ներկայացրել գրոյական հաշվետվություններ:

5) Ծառայության կողմից Կոուպերատիվում իրականացվել է ստուգում, ինչի արդյունքում 13.06.2007 թվականին կազմվել է թիվ 1023320 ստուգման ակտը, որով Կոուպերատիվին առաջադրվել է պարզեցված հարկի գծով 1.658.400 դրամի չափով (ներառյալ տույժի և տուգանքի գումարները) լրացուցիչ պարտավորություններ:

6) Ծառայությունն ակտով առաջադրված պարտավորությունների հաշվարկի հիմքում դրել է Երևանի Նուբարաշեն թաղային համայնքի ֆինանսաբյուջետային բաժնի 08.06.2007 թվականի տեղեկանքն այն մասին, որ խանութի արժեքը կազմում է 14.463.000 ՀՀ դրամ:

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ *վճռաբեկ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

*«Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ հարկվող օբյեկտ է համարվում հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում պարզեցված հարկ վճարողի կողմից մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների իրացման շրջանառությունը: Պարզեցված հարկով հարկվող շրջանառությունը որոշելիս շենքերի, շինությունների օտարումից եկամուտը հաշվարկվում է գույքահարկով հարկման նպատակով՝ դրանց համար օրենքով սահմանված կարգով որոշվող արժեքից ոչ պակաս չա-*

---

---

*փոփ: Այդ չափից պակաս հատուցման դեպքում տարբերությունը գործարքի կատարման օրը դիտվում է որպես նոր սեփականատիրոջը ներված պարտավորություն:*

Սույն գործով Վճռաբեկ դատարանն արդեն արտահայտել է «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքի վերոնշյալ հոդվածների մեկնաբանության հետ կապված իր դիրքորոշումը:

Մասնավորապես, վերոնշյալ հոդվածը հիմք ընդունելով՝ Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ սույն գործով պարզեցված հարկով հարկվող շրջանառությունը կազմում է տվյալ շինության գույքահարկով հարկման նպատակով դրա համար օրենքով սահմանված կարգով որոշվող արժեքից ոչ պակաս (տես՝ «Մուստանգ» արտադրական կոդաբերատիվն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության Էրեբունու հարկային տեսչության՝ 13.06.2007 թվականի թիվ 1023320 ստուգման ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին թիվ 3-1765(ՏԳ) գործով Վճռաբեկ դատարանի 25.12.2007 թվականի որոշումը):

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ գույքահարկով հարկման բազա է համարվում հարկվող օբյեկտի *արժեքային մեծությունը*: Ընդ որում, *շինությունների* հարկման բազա է համարվում նույն օրենքի բաղկացուցիչ մասը կազմող հավելվածով սահմանված կարգով գնահատված կադաստրային արժեքը: Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ սույն գործով գույքի արժեք պետք է համարել առնվազն դրա կադաստրային արժեքը: Այսինքն՝ «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածը վերը նշված դեպքերում եկամտի հաշվարկման համար հիմք է ընդունում դրա կադաստրային արժեքը՝ անկախ նրանից՝ շինությունն օտարվել է հատուցմամբ, թե անհատույց:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածից ամենևին չի բխում եկամտոտ ստանալու փաստի պարտադիր լինելը:

ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով Վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնամանա փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ:

Մինչդեռ սույն գործով Դատարանը, անտեսելով նույն գործով նույն իրավական հարցի շուրջ նախկինում արձանագրած Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը, խախտել է օրենքի վերոնշյալ իմպերատիվ պահանջը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի համաձայն, Դատարանի վճիռը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարան-

նի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Վարչական դատարանի 21.04.2008 թվականի վճիռը և այն փոփոխել. «Մուստանգ» արտադրական կոոպերատիվի հայցը մերժել:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ՝ ս տ ո թ ա գ թ ու թ յ ու ն  
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր՝ ս տ ո թ ա գ թ ու թ յ ու ն ն ե թ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վարչական դատարանի վճիռ  
Վարչական գործ թիվ ՎԴ-3/0099/05/08  
Նախագահող դատավոր՝ Ա.Պողոսյան

Վարչական գործ թիվ **ՎԴ-3/0099/05/08**  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ  
դատարան)

*նախագահությամբ* Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի հոկտեմբերի 31-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Լյովիկ Սուքիասյանի վճռաբեկ բողոքը Վարչական դատարանի 19.05.2008 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի Արմինե Աբրոյանի ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արարատի մարզի Մասիսի տարածքային ստորաբաժանման (այսուհետ՝ Կադաստր), ՀՀ Արարատի մարզի Այնթափի գյուղապետարանի, Լյովիկ Սուքիասյանի, երրորդ անձ ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի նոտարական գրասենյակի՝ ՀՀ Արարատի մարզի Այնթափ գյուղի 7-րդ փողոց թիվ 32 տուն հասցեում գտնվող Լյովիկ Սուքիասյանի անվամբ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցումն անվավեր ճանաչելու, Արմինե Աբրոյանի սեփականության իրավունքը ՀՀ Արարատի մարզի Այնթափ գյուղի 7-րդ փողոցի 194,7քմ մակերեսով թիվ 32 տան և 0,065հա տնամերձ հողամասի նկատմամբ գրանցելուն պարտավորեցնելու պահանջների մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Արմինե Աբրոյանը պահանջել է անվավեր ճանաչել ՀՀ Արարատի մարզի Այնթափի գյուղի 7-րդ փողոցի թիվ 32 տուն հասցեում գտնվող Լյովիկ Սուքիասյանի անվամբ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցումը և պարտավորեցնել գրանցելու իր սեփականության իրավունքը նույն հասցեում գտնվող 194,7քմ մակերեսով բնակելի տան և 0,065հա տնամերձ հողամասի նկատմամբ:

Վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 19.05.2008 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Լյովիկ Սուքիասյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Արմինե Աբրոյանը:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) *Դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ, 22-րդ, 24-րդ և 113-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Դատարանը չի գնահատել պատասխանողի կողմից ներկայացված և գործում առկա մի շարք ապացույցներ, մասնավորապես այն փաստը, որ Արմինե Աբրոյանի անունով 10.12.1992 թվականին տրված անհատական բնակֆոնդի բնակելի տան տեխնիկական անձնագրում նշված բնակելի տան մակերեսը՝ 126քմ, համապատասխանում է Լյովիկ Սուքիասյանին տրված բնակելի տան տեխնիկական անձնագրում բնակելի տան մակերեսին՝ 126քմ: Նշվածից հետևում է, որ Լյովիկ Սուքիասյանին տրված սեփականության իրավունքի վկայագրում նշված 194,7քմ ներառում է նաև 83,1քմ չջեռուցվող մակերեսը:

Դատարանի այն պատճառաբանությունը, որ Լյովիկ Սուքիասյանին տրված սեփականության իրավունքի վկայականներում բացի 650քմ տնամերձ հողամասից բնակելի տան մակերեսը 114,3քմ մակերեսի փոխարեն արդեն նշվել է 194,7քմ, ինչը 80,4քմ-ով ավելի է 10.07.1996 թվականի նվիրատվության պայմանագրում կատարված 114,3քմ մակերեսից, անհիմն է, քանի որ Լյովիկ Սուքիասյանը նվիրատվության պայմանագրով ստացած տարածքին ավելացրել է չջեռուցվող 83,1քմ մակերեսով տարածքը, որը նա կառուցել և ջեռուցվող է դարձրել, և դա ընդգրկվել է սեփականության իրավունքի վկայականում:

2) *Դատարանը կիրառել է 1964 թվականի ՀԽՍՀ քաղաքացիական օրենսգրքի 241-րդ և 257-րդ հոդվածները, «Անշարժ գույքի մասին» ՀՀ նախկին օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը, որոնք չպետք է կիրառել:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Լյովիկ Սուքիասյանը նվիրատվության պայմանագիրը կնքելուց հետո անմիջապես այն ներկայացրել է պետական գրանցման և միայն 4 ամիս անց է ստացել սեփականության իրավունքի վկայական, որն իր մեղքով չի եղել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վարչական դատարանի 19.05.2008 թվականի վճիռը և դատական ակտը փոփոխել՝ հայցը մերժել:

**2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները**

10.07.1996 թվականի նվիրատվության պայմանագրով Արմինե Աբրոյանն օտարել է վիճելի տան միայն 114,3քմ մակերեսը, իսկ դեռևս 20.10.1992 թվականին ձեռք բերված 83,1քմ մակերեսով չջեռուցվող տարածքը մնացել է իր սեփականության ներքո, ինչը տեխնիկական գույքագրման վարչության Մասիսի տեղամասի կողմից 27.11.1996 թվականին պետական գրանցում կատարելիս անտեսվել է, և սեփականության իրավունքի վկայականի հատակագծում ներառվել է ամբողջ երկհարկանի տունը, այդ թվում՝ 83,1քմ - մակերեսով չջեռուցվող տարածքը, որի չափերը չեն փոխվել 1996 թվականից հետո:

Այսպես կոչված «չջեռուցվող տարածքն» արդեն իսկ ընդգրկված է եղել և կազմել Արմինե Աբրոյանի բնակելի տան մաս: Լյովիկ Սուքիասյանն այդ տարածքում վերակառուցում չի կատարել, այն առ այսօր այնպիսին է, ինչպես եղել է 1992 թվականին:

Անհիմն են նաև Լյովիկ Սուքիասյանին և Արմինե Աբրոյանին տրված տեխնիկական անձնագրերում բնակելի տան մակերեսների չափերը նույնը լինելու մասին հիմնավորումները:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

---

---

1. 10.07.1996 թվականին կնքված նվիրատվության պայմանագրով Արմինե Աբրոյանը ՀՀ Մասիսի շրջանի Այնթափ գյուղի՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող տնատիրությունը՝ 81,6քմ մակերեսով բնակելի տարածությամբ, 32,7քմ մակերեսով օժանդակ տարածքով, 650քմ մակերեսով տնամերձ հողամասի հետ միասին նվիրել է Լյովիկ Սուքիասյանին:

2. Նվիրատվության պայմանագիրը նոտարական կարգով վավերացվել է 10.07.1996 թվականին, իսկ Լյովիկ Սուքիասյանի նվիրատվության պայմանագրից ծագող սեփականության իրավունքը գրանցվել է 27.11.1996 թվականին:

#### **4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

1) *Վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով հավաքված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ 10.07.1996 թվականին կնքված նվիրատվության պայմանագրով Արմինե Աբրոյանը ՀՀ Մասիսի շրջանի Այնթափ գյուղի՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող տնատիրությունը՝ 81,6քմ մակերեսով բնակելի տարածությամբ, 32,7քմ մակերեսով օժանդակ տարածքով, 650քմ մակերեսով տնամերձ հողամասի հետ միասին նվիրել է Լյովիկ Սուքիասյանին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի պայմանները մեկնաբանելիս դատարանը պետք է ելնի նրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից:

Հիմք ընդունելով պայմանագրում պարունակող բառերի տառացի նշանակությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն պայմանագրի առարկա է ամբողջ բնակելի տունը (տնատիրությունը)՝ որպես մեկ ամբողջական միավոր: Չնայած պայմանագրում նշվել է միայն բնակելի մակերեսը և օժանդակ շինությունները, սակայն դա չի նշանակում, որ չջեռուցվող մակերեսը պայմանագրում հատուկ նշված չլինելու պարագայում չի օտարվել:

2) *Վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

Սույն գործով կիրառելի ՀԽՍՀ քաղաքացիական օրենսգրքի 257-րդ հոդվածի 3-րդ - մասի համաձայն՝ բնակելի տան և շինանյութերի նվիրատվության պայմանագրերը պետք է կնքված լինեն սույն օրենսգրքի համապատասխանաբար 241 և 241<sup>1</sup> հոդվածներով սահմանված ձևով:

Նույն օրենսգրքի 241-րդ հոդվածի համաձայն՝ գյուղական բնակավայրերում գտնվող բնակելի տան առուժախի պայմանագիրը պետք է կնքվի գրավոր և գրանցվի պատգամավորների գյուղական խորհրդի կոմիտեում: *Բնակելի տան առուժախի պայմանագիրը կնքված է համարվում նրա գրանցման պահից:* Գրանցումը պետք է կատարվի նոտարական վավերացման օրվանից ամենաուշը երեք ամսում: Այս հոդվածի կանոնների չկատարումը անվավեր է դարձնում տան առուժախի պայմանագիրը:

Վերոնշյալ հոդվածներից հետևում է, որ դրանցով կարգավորվում են ոչ թե բնակելի տան նկատմամբ գնորդի իրավունքների պետական գրանցման, այլ բնակելի տան առուժախի պայմանագրի գրանցման հարցը, որով պայմանավորվում է դրա կնքման պահը: Այսինքն՝ վերոնշյալ հոդվածներով նախատեսվում է անշարժ գույքի օտարման պայմա-

նագրի գրացման պարտավորություն և դրա չգրանցման հետևանքը, այն է՝ պայմանագրի անվավերությունը: Հետևաբար, պայմանագրի անվավերության հիմք էր պայմանագրի չգրանցումը, իսկ արդեն իսկ գրանցված պայմանագիրը չի կարող անվավեր ճանաչվել այն հիմքով, որ պայմանագրի գրանցումը կատարվել է դրա համար օրենքով նախատեսված ժամկետի խախտմամբ:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքերը հիմնավոր համարելով՝ Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ 228-րդ հոդվածների ուժով վերանայվող դատական ակտը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Վարչական դատարանի 19.05.2008 թվականի վճիռը և այն փոփոխել: Արմինե Աբրոյանի հայցը մերժել:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ՝ ստորագրություն  
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վարչական դատարանի վճիռ  
Վարչական գործ թիվ ՎԴ-3/0169/05/08  
դատավոր՝ Ա. Պողոսյան

Վարչական գործ թիվ **ՎԴ-3/0169/05/08**  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ  
դատարան)

*նախագահությամբ* Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Դ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ. ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի դեկտեմբերի 26-ին,

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը Վարչական դատարանի 14.07.2008 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության Եղեգնաձորի տարածքային հարկային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) ընդդեմ Սերգեյ Սկրտչյանի՝ 2.635.200 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին, և ըստ հակընդդեմ հայցի Սերգեյ Սկրտչյանի ընդդեմ Տեսչության՝ ստուգման ակտը վերացնելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Տեսչությունը պահանջել է բռնագանձել Սերգեյ Սկրտչյանից 2.635.200 ՀՀ դրամ, որից 2.196.000 ՀՀ դրամը՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված տուգանք, իսկ 439.200 ՀՀ դրամը՝ որպես պարտադիր սոցիալական ապահովության վճար:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Սերգեյ Սկրտչյանը պահանջել է անվավեր ճանաչել Տեսչության 10.03.2008 թվականի թիվ 2325406 ստուգման ակտը:

Վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 14.07.2008 թվականի վճռով Տեսչության հայցը մերժվել է, իսկ Սերգեյ Սկրտչյանի հակընդդեմ հայցը՝ բավարարվել:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:  
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*1. Վարչական դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի պահանջները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Դատարանը Սերգեյ Սկրտչյանի գործունեությունը չի դիտել որպես ձեռնարկատիրական, այնինչ գործի նյութերով հիմնավորված է, որ Սերգեյ Սկրտչյանն ավտոմեքենաներ է ներմուծել շահույթ (եկամուտ) ստանալու նպատակով: Այդ փաստը հաստատող ապացույց են թե Սերգեյ Սկրտչյանի հակընդդեմ հայցադիմումը, որով նա հայտնել է, որ ավտոմեքենաները ձեռք է բերել տաքսի ծառայություն մատուցելու նպատակով, ինչը ենթադրում է շահույթ (եկամուտ) ստանալու նպատակ, և թե Սերգեյ Սկրտչյանի հետագա գործողությունները, այն է՝ նա ավտոմեքենաներ ներմուծել է մի քանի անգամ, այսինքն՝ պարբերաբար, և դրանք վաճառելու արդյունքում ստացել է շահույթ (եկամուտ): Ապացույցները սխալ գնահատելու արդյունքում Դատարանի կայացրած դատական ակտը առերևույթ հակասում է Վճռաբեկ դատարանի 01.08.2007թվականի թիվ 3-1161 (ՏԳ) որոշմանը:

*2. Վարչական դատարանը խախտել է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 11.1-րդ հոդվածի պահանջները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Տարածքային տեսչության պետին առանց պետական գրանցման, առանց համապատասխան լիցենզիայի ձեռնարկատիրական գործունեության ստուգում նշանակելու լիազորություն տրվել է ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի 15.07.2005 թվականի թիվ 1-06/379Ա հրամանով:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վարչական դատարանի 14.07.2008 թվականի վճիռը և գործն ուղարկել նոր քննության:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Տեսչության պետի 27.02.2008 թվականի թիվ 2325406 հանձնարարագրի հիման վրա Տեսչության վերահսկողության և գանձումների բաժնի գլխավոր հարկային տեսուչ Մարգար Ավետիսյանին և սոց.վճարների և եկամտահարկի բաժնի հարկային տեսուչ Վահիկ Հարությունյանին հանձնարարվել է քաղաքացի Սերգեյ Սկրտչյանի մոտ կատարել առանց պետական գրանցման, առանց համապատասխան լիցենզիայի (թույլտվության) ձեռնարկատիրական գործունեության իրականացման ստուգում (17.09.2007 թ. - ից ստուգման ավարտն ընկած ժամանակաշրջանի համար):

2) Ստուգումն իրականացնող տեսուչների կողմից 10.03.2008 թվականին կազմվել է թիվ 2325406 ակտը, որով արձանագրվել է, որ Սերգեյ Սկրտչյանն առանց պետական գրանցման զբաղվել է ձեռնարկատիրական գործունեությամբ (արտասահմանյան ավտոմեքենաների ներմուծում և վաճառք): Սերգեյ Սկրտչյանին առաջադրվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի կարգով նշանակված տուգանքի տեսքով 2.196.000 դրամի չափով վերջնական հարկային պարտավորություն:

3) Սերգեյ Սկրտչյանը 29.02.2008 թվականին ստուգումն իրականացնող անձանց բացատրություն է տվել այն մասին, որ վաճառել է իր կողմից ներկրված մեքենաներից երկուսը՝ «Ֆորդ Էքսպլորեր» և «Ջիպ Գրանդ Չերոկի» ավտոմեքենաները:

4) ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության Վայքի հաշվառման-քննական խմբի 24.06.2008թ. թիվ 17/35-269 գրության համաձայն 2007 թվականի հոկտեմբերի 16-ի դրությամբ Վայոց Ձորի Գլխձոր գյուղի բնակիչ Սերգեյ Սկրտչյանը:

---

---

յանի անվամբ հաշվառված են եղել չորս ավտոմեքենաներ՝ մեկ հատ «Ջիպ Գրանդ Չերոկի» մակնիշի ավտոմեքենա, մեկ հատ «Ֆորդ Էքսպլորեր» մակնիշի ավտոմեքենա, երկու հատ «Ֆոլկսվագեն» մակնիշի ավտոմեքենա:

5) ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության Վայքի հաշվառման-քննական խմբի 07.02.2008թ. թիվ 17/35-55 գրության համաձայն՝ 2008 թվականի փետրվարի 1-ի դրությամբ Վայոց Ձորի Գլածոր գյուղի բնակիչ Սերգեյ Սկրտչյանի անվամբ հաշվառված են եղել երեք ավտոմեքենաներ՝ մեկ հատ «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենա, երկու հատ «Ֆոլկսվագեն» մակնիշի ավտոմեքենա:

6) ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության Վայքի հաշվառման-քննական խմբի 24.05.2008 թվականի թիվ 17/35-220 գրության համաձայն՝ 23.05.2008 թվականի դրությամբ Վայոց Ձորի Գլածոր գյուղի բնակիչ Սերգեյ Սկրտչյանի անվամբ գրանցված չէ որևէ ավտոտրանսպորտային միջոց:

#### **4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.**

*Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝*

*1) Վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով չգրանցված կամ հարկային մարմիններում օրենսդրությամբ սահմանված կարգով չհաշվառված անձանց կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու դեպքում (ապօրինի գործունեություն)՝ գանձվում է տուգանք՝ այդ գործունեության արդյունքում հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված իրացման շրջանառության (համախառն եկամտի) հիսուն տոկոսի չափով:

«Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով չգրանցված ֆիզիկական անձանց կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու դեպքում (ապօրինի գործունեություն)՝ գանձվում է տուգանք՝ այդ գործունեության արդյունքում անհատ ձեռնարկատերերի համար նույն օրենքով սահմանված կարգով հաշվարկված տարեկան համախառն եկամուտների 10 տոկոսի չափով (բայց 60.000 դրամից ոչ պակաս), որն ապօրինի գործունեության մասով վերջնական սոցիալական վճարների պարտավորություն է:

Սույն գործով կարևոր է այն հարցի պարզումը, թե արդյո՞ք Սերգեյ Սկրտչյանն ավտոմեքենաների ներմուծման և վաճառքի իրականացման եղանակով զբաղվել է ձեռնարկատիրական գործունեությամբ, թե՛ ոչ:

Վիճարկվող ակտն անվավեր ճանաչելիս՝ Դատարանը պատճառաբանել է, որ Սերգեյ Սկրտչյանը չի իրականացրել ձեռնարկատիրական գործունեություն, քանի որ ավտոմեքենաների ներմուծումը և վաճառքը հատկապես շահույթ (եկամուտ) ստանալու նպատակով չի իրականացվել, այլ 01.02.2008թ.-ի և 23.05.2008թ.-ի դրությամբ վաճառել է իր անձնական գույքը հանդիսացող համապատասխանաբար երկու և երեք ավտոմեքենաներ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշմամբ արդեն իսկ արտահայտել է իրավական դիրքորոշում այն մասին, որ քաղաքացու կողմից իրականացվող գործունեության բնույթը (այդ թվում նաև՝ ձեռնարկատիրական լինելը) որոշելիս, անհրաժեշտ

է օրենքով սահմանված պարտադիր հատկանիշների առկայությունը որոշել, մասնավորապես, հետևյալ հանգամանքները բացահայտելուց հետո.

1. արդյո՞ք գործունեությունն իրականացվել է անձի նախաձեռնությամբ և կամքով,

2. արդյո՞ք գործունեությունը կրում է պարբերական բնույթ,

3. արդյո՞ք գործունեությունն ի սկզբանե իրականացվել է հատկապես շահույթ (եկամուտ) ստանալու նպատակով,

4. արդյո՞ք գործունեությունն իրականացվում է որպես մասնագիտություն (արհեստ), որի արտաքին դրսևորումներից կարելի համարել առևտրի իրականացման կամ ծառայությունների մատուցման հատուկ տարածքի (խանութ, սրահ, արհեստանոց, այլ արտադրական տարածք, հատուկ հարմարեցված տրանսպորտային միջոց), տեղեկատվական-գովազդային բնույթի միջոցառումների, ապրանքի մեծ քանակության և տեսականու առկայությունը,

5. արդյո՞ք քաղաքացու տնտեսական գործունեությունը (քաղաքացիաիրավական գործարքը) վերաբերում է նրա անձնական գույքին,

6. այլ առանձնահատուկ հատկանիշներ (իրավական հիմնավորումները տես՝ Նույն Սահակյանի ընդդեմ «Խտարկո Քոնսթրաքշն» ՓԲԸ-ի՝ ապօրինի տիրապետումից «Շինտրաստ» ՓԲԸ-ի 102.050 հատ բաժնետոմսերը հետ պահանջելու և վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձ Ստեփան Ախոյանի հայցի ընդդեմ «Խտարկո Քոնսթրաքշն» ՓԲԸ-ի՝ սեփականատիրոջ իրավունքի խախտումը վերացնելու նպատակով «Խտարկո Քոնսթրաքշն» ՓԲԸ-ի՝ ապօրինի տիրապետումից «Շինտրաստ» ՓԲԸ-ի 102.050 հատ բաժնետոմսերը հետ պահանջելու պահանջների մասին, 01.08.2007թ., քաղաքացիական գործ թիվ 3-1161 (ՏԳ-)):

Սույն գործի փաստերից հետևում է, որ Սերգեյ Սկրտչյանն ի սկզբանե ավտոմեքենաներ է ներմուծել շահույթ (եկամուտ) ստանալու նպատակով: Այդ հանգամանքը նախ հաստատվում է Սերգեյ Սկրտչյանի կողմից հակընդդեմ հայցադիմումում այդ փաստի ընդունմամբ, մասնավորապես վերջինս նշել է, որ ավտոմեքենաները ձեռք է բերել տաքսի ծառայություն մատուցելու նպատակով, ինչը վկայում է անձի՝ շահույթ (եկամուտ) ստանալու նպատակ հետապնդելու ի սկզբանե ունեցած մտադրության մասին: Վերոնշյալ հանգամանքը հիմնավորվում է նաև Սերգեյ Սկրտչյանի հետագա գործողություններով, այն է՝ նա ավտոմեքենաները ներմուծել է մի քանի անգամ, այսինքն՝ պարբերաբար, ու արդյունքում դրանք բոլորը վաճառել է:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործունեությունը ձեռնարկատիրական որակելու համար պարտադիր հատկանիշ է անհատի՝ շահույթ (եկամուտ) ստանալու նպատակ հետապնդելու ի սկզբանե ունեցած մտադրության առկայությունը, և ոչ թե փաստացի շահույթ (եկամուտ) ստանալու փաստի առկայությունը, քանի որ ձեռնարկատիրական գործունեության արդյունքում փաստացի շահույթ (եկամուտ) ունենալու կամ չունենալու հանգամանքը հանդիսանում է անձի ձեռնարկատիրական ռիսկը:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում ստորադաս դատարանի պատճառաբանությունն այն մասին, որ Սերգեյ Սկրտչյանի կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ չգրադվելը հիմնավորվում է նաև այն հանգամանքով, որ տեխնիկական խնդիրներ ունեցող մեքենաներն օտարելիս՝ Սերգեյ Սկրտչյանը որևէ շահույթ չի ստացել:

**2) Վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.**

Սույն գործով վիճարկվող ակտն անվավեր ճանաչելիս՝ դատարանը հիմք է ընդունել այն հանգամանքը, որ վիճարկվող ակտի կազմման հիմք հանդիսացող հանձնարարագիրն արձակվել է ոչ իրավասու մարմնի կողմից:

«Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 11.1-րդ հոդվածի համաձայն՝ հարկային մարմնի ղեկավարն իրականացնում է սույն օրենքով և իրավական ակտերով նախատեսված պարտականություններ և իրավունքներ, այդ թվում՝ սահմանում է հարկային մարմնի ղեկավարի տեղակալների, վերադաս հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների պետերի, հարկային տեսչությունների պետերի իրավասությունների

---

---

շրջանակները, գործունեության բնագավառները և պատասխանատվությունը՝ նույն օրենքից ելնելով:

«ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ մասի համաձայն՝ հարկային մարմինների կողմից առանց պետական գրանցման, առանց համապատասխան լիցենզիայի (թույլտվության) ձեռնարկատիրական գործունեության իրականացման ստուգումների դեպքում հարկային մարմնի ղեկավարի որոշման հրամանի կամ հանձնարարագրի տրման լիազորությունը կարող է փոխանցվել հարկային (տարածքային) տեսչության պետին:

Սույն գործի փաստերի համաձայն՝ 27.02.2008 թվականի թիվ 2325406 ստուգման հանձնարարագիրն արձակվել է Եղեգնաձորի տարածքային հարկային տեսչության պետի կողմից, որի արձակման լիազորությունը, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 11.1-րդ հոդվածի, «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ մասի և ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության պետի 15.07.2005թ.-ի թիվ 1-06/379 Ա հրամանի ուժով, տեսչության պետին է փոխանցվել ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության պետի կողմից:

Վերոնշյալից հետևում է, որ 27.02.2008 թվականի թիվ 2325406 հանձնարարագիրն արձակվել է նման լիազորություն ունեցող մարմնի կողմից:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-228-րդ հոդվածների ուժով, Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար Վարչական դատարանի վճիռը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու ՀՀ վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործն ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը նշված հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից: Դատական ակտը փոփոխելիս՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել Վարչական դատարանի 14.07.2008 թվականի վճիռը և այն փոփոխել. Եղեգնաձորի տարածքային հարկային տեսչության հայցը բավարարել ու Սերգեյ Սկրտչյանից հօգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 2.635.200 ՀՀ դրամ, որից 2.196.000 ՀՀ դրամ՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի հիմքով նշանակված տուգանքի գումար, 439.200 ՀՀ դրամ՝ «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ կետի հիմքով նշանակված տուգանքի գումար:

Սերգեյ Սկրտչյանի հակընդդեմ հայցը՝ Եղեգնաձորի տարածքային հարկային տեսչության 10.03.2008 թվականի թիվ 2325406 ստուգման ակտը վերացնելու (անվավեր ճանաչելու) պահանջի մասին, մերժել:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ՝ ս տ ո թ ա գ ը ու թ յ ու ն  
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր՝ ս տ ո թ ա գ ը ու թ յ ու ն ն ե թ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒՐՔԻ ԴԱՏԱՐԱՆ**

Վարչական դատարանի վճիռ  
Վարչական գործ թիվ ՎԴ-3/0207/05/08  
Նախագահող դատավոր՝ Ա. Պողոսյան

Վարչական գործ թիվ ՎԴ-3/0207/05/08  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի դեկտեմբերի 26-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը Վարչական դատարանի 28.07.2008 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության Արտաշատի տարածքային հարկային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) ընդդեմ Ժորա Դանիելովի՝ 5.670.000 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին և Ժորա Դանիելովի հակընդդեմ հայցի ընդդեմ Տեսչության՝ 08.05.2008 թվականի թիվ 2326225 ակտը վերացնելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Տեսչությունը պահանջել է բռնագանձել Ժորա Դանիելովից 5.670.000 ՀՀ դրամ գումար:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Ժորա Դանիելովը պահանջել է վերացնել Տեսչության 08.05.2008 թվականի թիվ 2326225 ակտը:

Վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 28.07.2008 թվականի վճռով հայցը մերժվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ բավարարվել:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:  
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) Դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածը, չի կիրառել «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 11<sup>1</sup>-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր:

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Դատարանը, էական համարելով ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի կողմից Տեսչության պետին հանձնարարագիր տալու համար անհրաժեշտ լիազորություն տրամադրված լինելու հարցը, անտեսել է, որ նշված հարցը կարգավորված է «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 11<sup>1</sup>-րդ հոդվածի 4-րդ կետով, որի համաձայն՝ հարկային մարմնի ղեկավարը սահմանում է հարկային մարմնի ղեկավարի տեղակալների, վերադաս հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների, հարկային տեսուչների պետերի իրավասությունների շրջանակները, գործունեության բնագավառները և պատասխանատվությունը:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն՝ հարկային մարմինների կողմից ակցիզային դրոշմանիշների եւ հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման, հաստատագրված վճարների մասին օրենքով սահմանված ելակետային տվյալների և դրանց ուղղիչ գործակիցների, տարադրամի փոխանակման կետերի կամ արժույթային դիլերների-բրոքերների, առանց պետական գրանցման, առանց համապատասխան լիցենզիայի (թույլտվության) ձեռնարկատիրական գործունեության իրականացման ստուգումների, չձևակերպված աշխատողների բացահայտմանն ուղղված ստուգումների ղեկավարում հարկային մարմնի ղեկավարի որոշմամբ հրամանի կամ հանձնարարագրի տրման լիազորությունը կարող է փոխանցվել հարկային (տարածքային) տեսչության պետին:

2) *Դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածը, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 318-րդ հոդվածը, որը պետք է կիրառվեր:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Դատարանը պատշաճ կարգով չի գնահատել Ժորա Դանիելովի կողմից Վրաստանի քաղաքացիներին՝ իր անունից հանդես գալու լիազորագիր տալու փաստը, ինչի արդյունքում հանգել է այն եզրակացության, որ Ժորա Դանիելովի մասնակցությունն արքայաճանապարհի չրի ներմուծմանը, տեղափոխմանը և իրացմանը կրել է ձևական բնույթ և սահմանափակվել է միայն լիազորագիր տալով և հիմնավոր չի համարել Ժորա Դանիելովի կողմից շահույթ ստանալու և ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու փաստը:

Վարչական դատարանն անտեսել է, որ ներմուծողն է պարտավորություն կրում ապրանքի իրացման ընթացքում օրինականության պահպանման համար, այլ ոչ թե լիազորված անձը, որը կատարում է միայն լիազորողի պահանջները, հետևաբար չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 318-րդ հոդվածը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վարչական դատարանի 28.07.2008 թվականի վճիռը և գործն ուղարկել նոր քննության:

### **3.Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Տեսչության պետի 06.05.2008 թվականի թիվ 2326225 հանձնարարագրով հարկային տեսուչներին հանձնարարվել է ֆիզիկական անձ Ժորա Դանիելովի մոտ կատարել առանց պետական գրանցման ձեռնարկատիրական գործունեության իրականացման ստուգում:

2) Ժորա Դանիելովի 06.05.2008 թվականի հայտարարության համաձայն՝ 2007 թվականի դեկտեմբեր ամսին 6 անգամ Հայաստանի Հանրապետության տարածք է ներկրել ընդհանուր 14.000կգ չորացրած արքայաճարինջ, որի համար մաքսատանը վճարել է 1.704.919 ՀՀ դրամ ավելացված արժեքի հարկ: Ապրանքները վաճառվել են մեկ կիլոգրամը 650-700 ՀՀ դրամով:

---

---

3) Տեսչության աշխատակիցների կողմից 08.05.2008 թվականին կազմվել է թիվ 2326225 ստուգման ակտը, որում նշվել է, որ Ժորա Դանիելովը 2007 թվականի դեկտեմբերին 6 անգամ Վրաստանից Հայաստանի Հանրապետության տարածք է ներկրել 14.000կգ չորացրած արքայանարինջ՝ 8.518.400 ՀՀ դրամ մաքսային արժեքով: Ժորա Դանիելովի հայտարարության համաձայն՝ ներկրված ապրանքն իրացվել է մեկ կիլոգրամը 650-700 ՀՀ դրամով:

4) Ժորա Դանիելովի 08.05.2008 թվականի հայտարարության համաձայն՝ վերջինս հրաժարվել է ստորագրել թիվ 2326225 ստուգման ակտը, քանի որ ակտում նշված գործունեության արդյունքում վնաս է կրել, տեղյակ չի եղել հարկային օրենսդրության համապատասխան նորմերին, իսկ ակտում արձանագրված գումարն ի վիճակի չէ մուծել:

5) Վրաստանի Հանրապետության քաղաքացիներ Գելա Չաքրոշվիլիի և Թամազ Չիտաշվիլիի հայտարարությունների համաձայն՝ Ժորա Դանիելովի կողմից վերջիններս տրվել է լիազորագիր Հայաստանի Հանրապետություն գյուղատնտեսական ապրանքներ ներմուծելու համար:

5) 19.11.2007 թվականին Ժորա Դանիելովը լիազորել է Թամազ Չիտաշվիլիին և Գելա Չաքրոշվիլիին իր փոխարեն ներկայանալ մաքսատանը, ստանալ և մաքսագերծել իր անվամբ եղած բեռը, ներկայացնել և ստանալ անհրաժեշտ փաստաթղթեր, իր անունից տալ հայտարարություններ և դիմումներ, կատարել համապատասխան մուծումներ, բեռը տեղափոխել մինչև Հայաստանի Հանրապետություն, ստորագրել և կատարել բոլոր գործողությունները, որոնք կապված են վերը նշված հանձնարարության հետ:

#### **4.Վճարել դատարանի պատճառարանությունները և եզրահանգումը**

Քննելով վճարել բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճարել դատարանը գտնում է, որ

*1) վճարել բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառարանությամբ.*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը մատնանշում է այն փաստերը, որոնք իր կարծիքով էական են վեճի լուծման համար և անհրաժեշտության դեպքում կողմերից պահանջում է ներկայացնել այդ փաստերի ապացույցներ: Դատարանը վեճի լուծման համար անհրաժեշտ ներքին հանգումնք ձևավորելու նպատակով իրավասու է, չսահմանափակվելով վարչական դատավարության մասնակիցների միջնորդություններով, նրանց ներկայացրած ապացույցներով և գործում առկա այլ նյութերով, ձեռնարկելու ողջամիտ միջոցներ, մասնավորապես պահանջելու ապացույցներ, լրացուցիչ բացատրություններ, հանձնարարելու կողմերին անձամբ ներկայանալ դատական նիստի:

Սույն գործով Դատարանն ակտն անվավեր ճանաչելու հիմքում դրել է մաս այն հանգամանքը, որ հանձնարարագիրն ստորագրվել է դրա համար լիազորություն չունեցող պաշտոնատար անձի՝ Տեսչության պետի կողմից:

Սինչեռ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությունը նախատեսում է, որ հարկային մարմինների կողմից ակցիզային դրոշմանիշների եւ հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման, հաստատագրված վճարների մասին օրենքով սահմանված ելակետային տվյալների եւ դրանց ուղղիչ գործակիցների, տարադրամի փոխանակման կետերի կամ արժութային դիլերների-բրոքերների, առանց պետական գրանցման, առանց համապատասխան լիցենզիայի (թույլտվության) ձեռնարկատիրական գործունեության իրականացման ստուգումների, չձևակերպված աշխատողների բացահայտմանն ուղղված ստուգումների դեպքերում հարկային մարմնի ղեկավարի որոշմամբ հրամանի կամ հանձնարարագրի տրման լիազորությունը կարող է փոխանցվել հարկային (տարածքային) տեսչության պետին:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը, անհրաժեշտ համարելով Տեսչության պետի կողմից համապատասխան փաստի ապացուցման անհրաժեշտությունը, պետք է անձից պահանջներ ներկայացնելու այդ փաստի ապացույցները: Մինչդեռ Դատարանը, առանց Տեսչությունից համապատասխան ապացույցը պահանջելու, այդ փաստը հիմնավորված չի համարել՝ այդ հանգամանքը նույնպես դնելով վարչական ակտն անվավեր ճանաչելու հիմքում:

2) վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Սույն գործով Դատարանը հայցի մերժման և հակընդդեմ հայցի բավարարման հիմքում դրել է այն հանգամանքը, որ Ժորա Դանիելովի գործունեությունը ձեռնարկատիրական գործունեություն չէ: Որպես դատական ակտի հիմնավորում հիմք է ընդունվել նաև ՀՀ վճռաբեկ դատարանի 01.08.2007 թվականի թիվ 3-1161(ՏԴ) գործով որոշումը:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի 01.08.2007 թվականի թիվ 3-1161(ՏԴ) գործով որոշմամբ տրված ձեռնարկատիրական գործունեության մեկնաբանությունից հետևում է Ժորա Դանիելովի կողմից ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու փաստը հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանը վերոնշյալ որոշմամբ մասնավորապես հստակ նշել է, որ քաղաքացու կողմից իրականացվող գործունեության բնույթը (այդ թվում նաև՝ ձեռնարկատիրական լինելը) որոշելիս, անհրաժեշտ է օրենքով սահմանված պարտադիր հատկանիշների առկայությունը որոշել մասնավորապես հետևյալ հանգամանքները բացահայտելուց հետո.

1. արդյո՞ք գործունեությունն իրականացվել է անձի նախաձեռնությամբ և կամքով,
2. արդյո՞ք գործունեությունը կրում է պարբերական բնույթ,
3. արդյո՞ք գործունեությունն ի սկզբանե իրականացվել է հատկապես շահույթ (եկամուտ) ստանալու նպատակով,
4. արդյո՞ք գործունեությունն իրականացվում է **որպես մասնագիտություն (արհեստ), որի արտաքին դրսևորումներից կարելի է համարել** առևտրի իրականացման կամ ծառայությունների մատուցման հատուկ տարածքի (խանութ, սրահ, արհեստանոց, այլ արտադրական տարածք, հատուկ հարմարեցված տրանսպորտային միջոց), տեղեկատվական-գովազդային բնույթի միջոցառումների, **ապրանքի մեծ քանակության** և տեսականու առկայությունը.

5. արդյո՞ք քաղաքացու տնտեսական գործունեությունը (քաղաքացիաիրավական գործարքը) վերաբերում է նրա անձնական գույքին:

Ժորա Դանիելովի գործունեությունն իրականացվել է ինքնուրույն, իր ռիսկով և հետապնդել է շահույթ ստանալու նպատակ: Այդ հանքամանքները հաստատվում են վերջինիս կողմից ընդունված այն փաստերով, որ 14.000կգ չորացրած արքայամարիինը ներմուծվել է Ժորա Դանիելովի անունից և վաճառվել շուկայում: Իրավական առումով ապրանքները ներմուծել է Ժորա Դանիելովը, իսկ շուկայում վաճառելն ուղղակիորեն վկայում է շահույթ ստանալու նպատակի մասին: Այն հանգամանքը, որ ապրանքները ներմուծվել են այլ անձանց կողմից, անձի կողմից իրականացված գործունեությունը ձեռնարկատիրական չլիտելու համար բավարար չի կարող համարվել հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 318-րդ հոդվածի համաձայն՝ մեկ անձի (ներկայացուցչի) կողմից ուրիշ անձի (ներկայացվողի) անունից լիազորագրի, օրենքի կամ դրա համար լիազորված պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի ակտի վրա հիմնված լիազորությունների ուժով կնքված գործարքը քաղաքացիական իրավունք-

---

---

ներ և պարտականություններ է ստեղծում, փոփոխում ու դադարեցնում անմիջականորեն ներկայացվողի համար:

Վերոնշյալից հետևում է, որ ներկայացուցչության ինստիտուտի միջոցով քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակիցները կատարում են իրավաբանական գործողություններ՝ առանց անմիջականորեն դրանց մասնակցելու: Սակայն, այդ գործողություններն ուղղված են հենց ներկայացվողի համար իրավունքներ և պարտականություններ ստեղծելուն:

Հետևաբար, սույն գործով Ժորա Դ-անիելովի անունից կնքված բոլոր գործարքները՝ ապրանքների ներկրումը, դրանց վաճառքը, իրավունքներ և պարտականություններ են առաջացնում միայն Ժորա Դ-անիելովի համար:

Այսպիսով, վերը նշված հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածների ուժով Դատարանի վճիռը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Վարչական դատարանի 28.07.2008 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ՝ ստորագրություն  
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒՐՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վարչական դատարանի վճիռ  
Վարչական գործ թիվ ՎԴ/0016/05/08  
Նախագահող դատավոր՝ Գ. Գարիբյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/0016/05/08**  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ  
դատարան)

*Ուսուցիչ* Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Դ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ. ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի դեկտեմբերի 26-ին,

դռնբաց դատական միատուժ, քննելով «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) և Ընկերության տնօրենների խորհրդի նախագահ-գլխավոր տնօրեն Վալերի Օվսյաննիկովի վճռաբեկ բողոքը Վարչական դատարանի 25.07.2008 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի ՀՀ աշխատանքի պետական տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) ընդդեմ Ընկերության տնօրենների խորհրդի նախագահ, գլխավոր տնօրեն Վալերի Օվսյաննիկովի՝ պատասխանողին գործողություններ կատարելուն պարտավորեցնելու և պարտավոր անձի նկատմամբ տուգանք նշանակելու պահանջների մասին, և ըստ Ընկերության և Ընկերության տնօրենների խորհրդի նախագահ, գլխավոր տնօրեն Վալերի Օվսյաննիկովի հակընդդեմ հայցի ընդդեմ Տեսչության՝ Տեսչության 15.10.2007 թվականի թիվ 15-Ա որոշումն անվավեր ճանաչելու և այն վերացնելու պահանջների մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Տեսչությունը խնդրել է հարկադրել Ընկերության տնօրենների խորհրդի նախագահ, գլխավոր տնօրեն Վալերի Օվսյաննիկովին իրականացնել վարչական մարմնի կողմից ընդունված ակտի պահանջը կատարելուն ուղղված գործողություններ, նրա նկատմամբ նշանակել տուգանք՝ բռնագանձելով այն ՀՀ պետական բյուջեի օգտին:

Դիմելով դատարան՝ Ընկերությունը և Ընկերության տնօրենների խորհրդի նախագահ, գլխավոր տնօրեն Վալերի Օվսյաննիկովը պահանջել են ոչ իրավաչափ վարչական ակտը՝ Տեսչության 15.10.2007 թվականի թիվ 15-Ա որոշումը, ճանաչել անվավեր և այն վերացնել:

Վարչական դատարանի 25.07.2008 թվականի վճռով հայցը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժվել:

---

---

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը և Ընկերության տնօրենների խորհրդի նախագահ, գլխավոր տնօրեն Վալերի Օվսյաննիկովը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

### **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) *Վարչական դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածը, ՀՀ վարչական դատարանության օրենսգրքի 24-րդ հոդվածի և 113-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, չի կիրառել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասը, 35-րդ - հոդվածի 2-րդ մասը, 60-րդ հոդվածի 1-ին մասը, 79-րդ հոդվածը, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 267-րդ և 275-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառել, սխալ է մեկնաբանել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձինք նշված պնդումը պատճառաբանել են հետևյալ փաստարկներով.*

Վարչական դատարանը պատշաճ գնահատման չի արժանացրել գործում առկա ապացույցները, որոնք գնահատելիս պարզ կդառնար այն հանգամանքը, որ Տեսչությունը Վալերի Օվսյաննիկովին, որպես վարչական ակտի հասցեատեր, վարչական վարույթի հարուցման մասին չի ծանուցել և վարույթի մասնակից չի դարձրել: Վալերի Օվսյաննիկովը և Ընկերությունը գրկվել են պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքից և հնարավորություն չեն ունեցել արտահայտվելու վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ:

2) *Վարչական դատարանը խախտել է ՀՀ դատական օրենսգրքի 15 հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի պահանջները:*

Բողոք բերած անձինք նշված պնդումը պատճառաբանել են վկայակոչելով Տնտեսական դատարանի օրինական ուժի մեջ մտած 23.11.2007 թվականի վճռի փաստական հանգամանքները:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են բեկանել Վարչական դատարանի 25.07.2008 թվականի վճիռը և գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Տեսչության պետի՝ «Վարչական վարույթ հարուցելու մասին» 09.10.2007 թվականի թիվ 13-Ա որոշմամբ հարուցվել է վարչական վարույթ և որոշվել այն իրականացնել 15.10.2007 թվականին ժամը 11:00-ին՝ Տեսչության վարչական շենքում (գ.թ. 64-65):

2. Տեսչության պետի տեղակալի 12.10.2007 թվականի թիվ 542 ծանուցագրի համաձայն՝ Ընկերության տնօրենների խորհրդի նախագահ, գլխավոր տնօրեն Վալերի Օվսյաննիկովին է ուղարկվել Տեսչության պետի՝ «Վարչական վարույթ հարուցելու մասին» 09.10.2007 թվականի թիվ 13-Ա որոշումը (գ.թ. 24):

3. Տեսչության պետի՝ «Վարչական վարույթ հարուցելու մասին» 09.10.2007 թվականի թիվ 13-Ա որոշումը և 15.10.2007 թվականի ժամը 11:00-ին նշանակված վարչական վարույթի իրականացման մասին ծանուցումը Ընկերությունը ստացել է 15.10.2007 թվականին ժամը 11:45-ին, և այն մուտքագրվել է Ընկերության համակարգչային ծրագիր 15.10.2007 թվականին ժամը 12:02-ին (գ.թ. 70, 110-111):

4. Տեսչության՝ «Ընկերության աշխատողներին գիշերային աշխատանքի համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով հավելումը վճարելու մասին» 15.10.2007 թվականի թիվ 15-Ա որոշմամբ՝ Ընկերությանը պարտավորեցվել է մեկամսյա ժամկետում հաշվարկել և վճարել 2007 թվականի հունվարից մինչև 2007 թվականի օգոստոս ամիսն ընկած ժամանակահատվածում գիշերային աշխատաժամանակի մեջ ներգրավված աշխատողների գիշերային աշխատանքի համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով հավելումը, ինչպես նաև վերանայել ընկերության նախկին աշխատող Հ. Գևորգյանի վերաբերյալ անհատական իրավական ակտերը (գ.թ. 11):

5. Նշված որոշումը Տեսչության պետի 27.11.2007թ.-ի թիվ Ե-643 գրությամբ առաքվել է Ընկերության անօրենների խորհրդի նախագահ, գլխավոր տնօրեն Վալերի Օվսյանին՝ կովին, որը ընկերությունում մուտքագրվել է 29.11.2007 թվականին (գ.թ. 69):

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

*1) Վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ - հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և ՀՀ միջազգային պայմանագրերով:

Վարչական պատասխանատվության ենթարկելու գործերի վարույթը վարչական պատասխանատվության ենթարկելու մասին առանձին տեսակի վարչական վարույթ է, որը կարգավորվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի՝ վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերի քննության վարույթը կարգավորող նորմերով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածի համաձայն՝ վարչական պատասխանատվության ենթարկվող անձն իրավունք ունի ծանոթանալու գործի նյութերին, բացատրություններ տալու, ապացույցներ ներկայացնելու, միջնորդություններ հարուցելու, գործի քննության ընթացքում օգտվելու փաստաբանի իրավաբանական օգնությունից, ելույթ ունենալու մայրենի լեզվով և օգտվելու թարգմանի ծառայություններից, եթե չի տիրապետում այն լեզվին, որով տարվում է վարույթը, գանգատարկելու գործով որոշումը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 275-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ վարչական իրավախախտման գործը քննության նախապատրաստելու ընթացքում պետական մարմինը (պաշտոնատար անձը) լուծում է նաև այն հարցը, թե գործի քննությանը մասնակցող անձինք ծանուցվե՞լ են արդյոք դրա քննության ժամանակի և տեղի մասին:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը, սահմանելով վարչական պատասխանատվության ենթարկվող անձի իրավունքներն ու պարտականությունները, միաժամանակ սահմանում է պարտադիր կանոն, այն է՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը վարչական պատասխանատվության ենթարկվող անձի ներկայությամբ: Նշված կանոնից բացառություն է կազմում միայն այն դեպքը, երբ տվյալներ կան գործի քննության տեղի և ժամանակի մասին նրան **ժամանակին ծանուցելու վերաբերյալ** և եթե նրանից միջնորդություն չի ստացվել գործի քննությունը հետաձգելու մասին:

Այսպիսով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքը, սահմանելով վարչական պատասխանատվության ենթարկվող անձի ներկայությամբ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության իրականացման պարտադիր պահանջ, միաժամանակ սահմանել է պետական մարմնի (պաշտոնատար անձի) պարտականությունը՝ վարչական իրավախախտման գործը քննության նախապատրաստելու ընթացքում

---

---

լուծելու գործի քննության ժամանակի և տեղի մասին քննությանը մասնակցող անձանց պատշաճ ծանուցելու հարցը:

*Հետևաբար, սույն քաղաքացիական գործի փաստերի առանձնահատկությունների հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով պարզման ենթակա է այն իրավական հարցադրումը, թե արդյո՞ք բողոք բերած անձինք պատշաճ կարգով ծանուցվել են վարչական իրավախախտման մասին գործի քննությանը, և դրա հետ կապված արդյո՞ք տեղի է ունեցել վերջիններիս՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով երաշխավորված իրավունքների խախտում:*

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված չէ վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերի քննության մասին վարույթի մասնակիցներին ծանուցելու կարգը, հետևաբար նշված իրավահարաբերության նկատմամբ կիրառելի է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասը:

Վերը նշված հոդվածի համաձայն՝ վարչական մարմինն իր նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելիս վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին պատշաճ ձևով ծանուցում է վարչական վարույթ հարուցելու մասին, եթե վարչական վարույթի հարուցումից մինչև վարչական ակտն ընդունելու միջև ընկած ժամանակահատվածը երեք օրից ավելի է:

Տվյալ դեպքում վարչական մարմինը (տեսչությունը) ունի պատշաճ ծանուցման ձևի ընտրության հայեցողություն:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ Տեսչության հայեցողությունը՝ ընտրելու ծանուցման ձևը պետք է համապատասխանի «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին, որի համաձայն հայեցողական լիազորություններ իրականացնելիս վարչական մարմինը պարտավոր է առաջնորդվել մարդու և քաղաքացու՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, վարչարարության իրականացման համաչափության և կամայականության արգելքի սկզբունքով, ինչպես նաև հետապնդել օրենքով կանխորոշված այլ նպատակներ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերի քննության մասին վարույթի մասնակիցներին ծանուցելը պետք է նպատակ հետապնդի ապահովել պատասխանատվության ենթարկվող անձին լսելու հնարավորությունը, ինչը հնարավորություն կտա վերջինիս լիարժեք իրականացնել իր իրավունքների պաշտպանությունը: Հետևաբար, ընտրվող պատշաճ ծանուցման ձևը պետք է լինի այնպիսին, որ անձին հնարավորություն ընձեռի ապահովել վերոհիշյալ պահանջները:

Սույն գործի փաստերից հետևում է, որ Տեսչության պետի՝ «Վարչական վարույթ հարուցելու մասին» 09.10.2007 թվականի թիվ 13-Ա որոշմամբ հարուցված վարչական վարույթը նշանակվել է 15.10.2007 թվականին ժամը 11:00-ին, որպիսի որոշումն էլ 12.10.2007 թվականի թիվ 542 ծանուցմամբ, փոստային առաքմամբ, ուղարկվել է Ընկերության տնօրենների խորհրդի նախագահ, գլխավոր տնօրեն Վալերի Օվսյաննիկովին, Ընկերությունում այն ստացել է 15.10.2007 թվականին 11:45-ին: Նույն օրը՝ 15.10.2007 թվականին, ժամը 11.00-ին նշանակված վարչական գործի քննության արդյունքում Տեսչությունը կայացրել է «Ընկերության աշխատողներին գիշերային աշխատանքի համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով հավելումը վճարելու մասին» 15.10.2007 թվականի թիվ 15-Ա որոշումը:

Վերը նշված փաստերի համադրության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ չնայած Տեսչությունը ծանուցել է Ընկերությանը և Ընկերության տնօրենների խորհրդի նախագահ, գլխավոր տնօրեն Վալերի Օվսյաննիկովին վարչական իրավախախտման

վերաբերյալ գործի քննության մասին, սակայն ծանուցելու օրենքով սահմանված իր հայեցողությունն իրականացրել է ոչ պատշաճ, քանի որ թե Ընկերությունը և թե Ընկերության տնօրենների խորհրդի նախագահ, գլխավոր տնօրեն Վալերի Օվսյաննիկովը **15.10.2007 թվականին** ժամը 11:00-ին նշանակված վարչական վարույթի մասին ծանուցումը ստանալով **նույն օրը՝ 15.10.2007 թվականին**, չէին կարող ողջամտորեն ներկա գտնվել նշանակված վարչական վարույթին, ինչի արդյունքում չի ապահովել նրանց՝ լավամիտ լինելու իրավունքը, զրկելով վարչական վարույթի մասնակիցներին լիարժեք իրականացնելու իրենց իրավունքների ու ազատությունների արդյունավետ պաշտպանությունը, դրանով իսկ խախտելով ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասով և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 13-րդ հոդվածով երաշխավորված՝ պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ Կոնվենցիայի 13-րդ հոդվածով սահմանված պաշտպանության միջոցները պետք է արդյունավետ լինեն թե՛ գործնական և թե՛ իրավական առումներով, մասնավորապես այն առումով, որ պաշտպանության միջոցներից օգտվելը չպետք է անհիմն խոչընդոտվի պետական մարմինների գործողություններով կամ անգործությամբ (տես՝ Իվանով և այլք ընդդեմ Բուլղարիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 24.11.2006 թվականի որոշումը, կետ 70):

Հետևաբար, վարչական մարմնի՝ ծանուցման ձևը ընտրելու հայեցողությունը պետք է իրականացվի այնպես, որ իրագործվի Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածով հետապնդված նպատակը, այն է՝ անձի վերաբերյալ կայացված վարչական ակտը **դրան պետք է տրամադրվի** այնպես, որ **ողջամտորեն** ապահովվի վերջինիս մասնակցությունը վարչական վարույթին:

Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր չէ Վարչական դատարանի այն հետևությունը, որ Տեսչության կողմից պահպանվել է որոշումն ուղարկելու եռօրյա ժամկետը, իսկ որոշումը ուշ ստանալը չի կարող Տեսչության գործողությունների անօրինականության դրսևորում հանդիսանալ:

Սույն գործի փաստերի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Տեսչության՝ «Ընկերության աշխատողներին գիշերային աշխատանքի համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով հավելումը վճարելու մասին» 15.10.2007 թվականի թիվ 15-Ա որոշումն ընդունվել է օրենքի խախտմամբ, քանի որ այն կայացնելիս չի ապահովվել Ընկերության և Ընկերության տնօրենների խորհրդի նախագահ, գլխավոր տնօրեն Վալերի Օվսյաննիկովի մասնակցությունը վարչական վարույթին, որի պայմաններում խախտվել է նրանց լավամիտ լինելու իրավունքը և պետական մարմնի՝ Տեսչության, առջև իրենց իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանության միջոցների լիարժեք իրականացման իրավունքը:

*2) Վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.*

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքի հիմքում բարձրացված իրավական հարցին պատասխանելու համար վճռաբեկ բողոքի հիմքի շրջանակներում պետք է քննարկման առարկա դարձվի հետևյալ հարցադրումը.

*Արդյո՞ք Ընկերության կողմից վկայակոչված՝ ՀՀ տնտեսական դատարանի 23.11.2007թ.-ի թիվ S-2935 գործի փաստական հանգամանքները նույնանման են սույն գործի փաստական հանգամանքների հետ և դրանում առկա իրավական հիմնավորումները պարտադիր են Վարչական դատարանի համար:*

ՀՀ Դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իր գործի քննության ժամանակ, որպես իրավական փաստարկ, իրավունք ունի մատնանշելու նույնանման փաստական հանգամանքներով մեկ այլ գործով Հայաստանի Հանրապետության դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիմնավորումները

---

---

(այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները), իսկ նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով Վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ յուրաքանչյուր գործ իր փաստական հանգամանքներով եզակի է և մեկ այլ գործով տրված իրավական մեկնաբանության՝ համապատասխան գործով կիրառելիության հարցը լուծելիս, դատարանները պետք է համադրեն գործի քննության ընթացքում վկայակոչված գործի և քննության առարկա գործի էական նշանակություն ունեցող փաստերը:

Տնտեսական դատարանի 23.11.2007թ. թիվ S-2935 գործի փաստական հանգամանքների համաձայն՝ Տեսչության պետի 09.10.2007 թվականի թիվ 429 որոշմամբ Ընկերությունը ենթարկվել էր վարչական տույժի՝ 100.000 ՀՀ դրամ տուգանքի չափով, **և Ընկերությունը ընդհանրապես չէր ծանուցվել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ժամանակի և տեղի մասին:**

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործի և Տնտեսական դատարանի 23.11.2007թ. թիվ S-2935 գործի համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները նույնանման չեն: Մասնավորապես, Տնտեսական դատարանի 23.11.2007թ. թիվ S-2935 գործի հանգամանքներով Ընկերությունը ընդհանրապես չէր ծանուցվել վարչական վարույթի մասին, մինչդեռ սույն գործով Ընկերությունը և Ընկերության տնօրենների խորհրդի նախագահ, գլխավոր տնօրեն Վալերի Օվսյանինկովը ծանուցվել են, սակայն ծանուցման հետևանքով **ողջամտորեն չի ապահովվել վարչական վարույթին նրանց մասնակցությունը, որի արդյունքում խախտվել է բողոք բերած անձանց վարչական վարույթում լաված լինելու իրավունքը:**

Ինչ վերաբերում է բողոքի այն պատճառաբանությանը, որ Վարչական դատարանը խախտել է ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասը, ապա այն հիմնավոր չէ, քանի որ բողոք բերած անձանց կողմից վկայակոչվել է Տնտեսական դատարանի 23.11.2007թ. թիվ S-2935 գործով օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները), այլ ոչ թե Վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները), որպիսի պայմաններում և Տնտեսական դատարանի դատական ակտի հիմնավորումները պարտադիր չէին կարող լինել Վարչական դատարանի համար:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի առաջին հիմքի առկայությունը, Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածի, ՀՀ - քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վարչական դատարանի վճիռը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Վարչական դատարանի 25.07.2008 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ՝ ս տ ո թ ա գ թ ու թ յ ու ն  
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր՝ ս տ ո թ ա գ թ ու թ յ ու ն ն եր*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վարչական դատարանի վճիռ  
Վարչական գործ թիվ ՎԴ/0271/05/08  
Դատավոր՝ Ռ. Հակոբյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/0217/05/08**  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ  
դատարան)

*նախագահությամբ* Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Դ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ. ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի դեկտեմբերի 26-ին,

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը Վարչական դատարանի 01.08.2008 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության Սպանդարյանի 1 հարկային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) ընդդեմ «Հայթուրթեյո» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն)՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, և ըստ Ընկերության հակընդդեմ հայցի ընդդեմ Տեսչության՝ 07.12.2006 թվականի թիվ 1019510 ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Յ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Տեսչությունը պահանջել է բռնագանձել Ընկերությունից 20.313.500 դրամ:

Ընկերությունը հակընդդեմ հայցով պահանջել է անվավեր ճանաչել Տեսչության 07.12.2006 թվականի թիվ 1019510 ակտը:

Վարչական դատարանի 01.08.2008 թվականի վճռով հայցը մերժվել է, իսկ հակընդդեմ հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի պահանջները, չի կիրառել ՀՀ կառավարության 19.12.2002 թվականի թիվ 2052-Ն որոշմամբ հաստատված՝ «Կազմակերպությունների (բացառությամբ բանկերի և ապահովագրական ընկերությունների) դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի (պահուստաֆոնդի) ձևավորման դեբիտորական ու կրեդիտորական պարտքերի անհուսալի ճանաչման և դուրսգրման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 21-րդ, 22-րդ, 4-րդ և 2-րդ կետերը, սխալ է մեկնաբանել «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի ժե) ենթակետը, կիրառել է նույն կարգի 24-րդ կետը, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ և 7-րդ մասերը, որոնք չպետք է կիրառեր:

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Տեսչությունը, Ընկերության հարկային պարտավորությունները հաշվարկելիս, ստուգման ակտում հղում է կատարել կարգին՝ առանց կարգի որևէ կետ նշելու, սակայն դատարանն իր նախաձեռնությամբ մեկնաբանել է կարգի 24-րդ կետը և եզրակացրել, որ այն հակասում է օրենքին (չնշելով օրենքն ու կոնկրետ հոդվածը), և քննարկվող դեպքում պարտք առկա չէ ու հնարավոր չէ այն ներել: Այնինչ, վիճելի ակտի համաձայն՝ ընկերության 2001 թվականի ֆինանսական արդյունքներով 2002 թվականին հաշվարկվել է 48.482.000 դրամ շահաբաժին, որն ըստ կարգի մատնանշած կետերի, ընկերության կողմից պետք է վճարվեր (բաշխվեր) վերը նշած հաշվարկը կատարելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, այսինքն՝ մինչև 2003 թվականի դեկտեմբերի 28-ը (որը նաև կետանցման ժամկետն է): Սակայն, շահաբաժնի գումարը սահմանված ժամկետում չի վճարվել. ընկերությունը, խախտելով կարգի 21-րդ կետը, 2004 թվականի դեկտեմբերի 28-ին շահաբաժնի գումարը չի դիտել որպես անհուսալի կրեդիտորական պարտք և կարգի 22-րդ կետի և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի ժե) կետի հիմքով, որպես հարկվող եկամուտ, դուրս չի գրել: Այսինքն՝ Դատարանն անտեսել է կարգի 21-րդ, 22-րդ, 4-րդ և 2-րդ կետերի պահանջները, սխալ է կիրառել կարգի 24-րդ կետը: Դատարանը նշել է, որ ապացուցված է համարում օրենքի խախտմամբ վիճելի ակտն ընդունելը՝ դարձյալ չնշելով խախտված օրենքները և չտալով խախտման հիմնավորումներ:

Այնուհետ՝ Վարչական դատարանն առանց պատճառաբանության և մեկնաբանության վկայակոչել է ընկերության լուծարման գործընթացում «Հայրուսագազարդ» և «Հայգազարդ» ՓԲԸ-ների նկատմամբ ընկերության ունեցած պահանջների իրավունքները, որոնք վերջինս 06.12.2006 թվականին զիջել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը: Այնինչ նշվածը որևէ առնչություն չունի վիճելի ակտի օրինականության հարցի քննարկման, ինչպես նաև ակտում նշված քննարկվող ժամանակաշրջանի հետ, քանի որ ընկերությունն իր պահանջի իրավունքի զիջման պայմանագիրը կնքել է 06.12.2006 թվականին, իսկ պարտականությունները չի կատարել մինչև այդ առաջացած իրավահարաբերություններով:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վարչական դատարանի 01.08.2008 թվականի վճիռը, և գործն ուղարկել նոր քննության:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Հայրորթերեյդ» ՓԲԸ-ն պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերություն է, որի նկատմամբ ՀՀ կառավարության 17.02.2005թ. թիվ 460-Ն որոշմամբ որոշվել է իրականացնել լուծարման գործընթաց:

2. ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի 24.10.2006 թվականի թիվ 1019510 հանձնարարագրի հիման վրա Տեսչության աշխատակիցներն ընկերությունում իրականացրել են ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կա-

---

---

տարման ճշտության ստուգում, որի արդյունքում կազմված 07.12.2006 թվականի թիվ 1019510 ակտով ընկերությանն առաջադրվել է շահութահարկի գծով 47.974.600 ՀՀ դրամի լրացուցիչ հարկային պարտավորություն: Այդ պարտավորության գումարների հաշվարկը կատարվել է ՀՀ կառավարության 19.12.2002 թվականի թիվ 2052-Ն որոշման, «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 7, 33, 69 հոդվածների և «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 27 հոդվածի պահանջների հիմքով:

3. Տեսչության 18.06.2007 թվականի ընկերության հարկային պարտավորությունների վերաբերյալ հաշվարկների տեղեկանքի համաձայն՝ Ընկերությունն ունեցել է հետևյալ պարտավորությունները. շահութահարկի գծով տուգանք՝ 15.434.700 դրամ, եկամտահարկի գծով ապառք՝ 63.500 դրամ, տույժ՝ 6.900 դրամ, բնապահպանության վճարի գծով ապառք՝ 1.700 դրամ, տույժ՝ 1.300 դրամ, պետական տուրքի գծով տույժ՝ 7.000 դրամ, հարկային համակարգի զարգացման խրախուսման ֆոնդի գումար՝ 4.797.400 դրամ:

4. «Հայներարտբանկ»-ի 29.08.2007թ. թիվ 2, 3 և 4 վճարման հանձնարարականների համաձայն՝ Ընկերության կողմից ՀՀ պետական բյուջե է փոխանցվել 300.000 դրամ եկամտահարկի գումար, 7.000 դրամ պետական տուրքի գումար և 3.000 դրամ բնապահպանական վճար: Նշված վճարումների հիմքով, բացի ընթացիկ պարտավորություններից, մարվել են նաև Ընկերության 18.06.2007թ.-ի դրությամբ ունեցած նշված հարկատեսակների և պետական տուրքի գծով պարտավորությունները:

#### **4.Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.**

*Քննելով վճարելի բողոքը վերը նշված հիմքի սահմաններում՝ Վճարելի դատարանը գտնում է, որ վճարելի բողոքը հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.*

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 5-7-րդ հոդվածների համաձայն՝ ռեզիդենտների համար հարկվող օբյեկտ է համարվում ՀՀ տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող շահույթը, որը հարկատուի համախառն եկամտի և նույն օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է: Եկամուտ է համարվում հաշվետու տարվա ընթացքում ակտիվների ներհոսքը, աճը կամ պարտավորությունների նվազումը, որոնք հանգեցնում են հարկատուի սեփական կապիտալի ավելացմանը: Նույն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի ժե) ենթակետի համաձայն՝ եկամուտների թվին է դասվում նաև Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով դուրս գրված անհուսալի կրեդիտորական պարտքերի գումարները:

ՀՀ կառավարության 19.12.2002 թվականի թիվ 2052-Ն որոշմամբ հաստատված՝ «Կազմակերպությունների (բացառությամբ բանկերի և ապահովագրական ընկերությունների) դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի (պահուստաֆոնդի) ձևավորման դեբիտորական ու կրեդիտորական պարտքերի անհուսալի ճանաչման և դուրսգրման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 2-րդ կետի համաձայն՝ Կարգը տարածվում է շահութահարկ վճարող հանդիսացող կազմակերպությունների նկատմամբ այլ անձանց պայմանագրերից, աշխատանքային հարաբերություններ կարգավորող օրենսդրությունից, վնաս պատճառելու հետևանքով կամ օրենքով նախատեսված այլ հիմքերով առաջացած պարտավորությունների (դեբիտորական և կրեդիտորական պարտքեր) վրա: Կարգի 4-րդ կետի համաձայն՝ դեբիտորական կամ կրեդիտորական պարտքը համարվում է կետանցված, եթե այն Կարգի 2-րդ կետում նշված հիմքերով սահմանված ժամկետում չի մարվել: Այն դեպքում, երբ սահմանված չէ դեբիտորական կամ կրեդիտորական պարտքի մարման ժամկետ, ինչպես նաև ցպահանջ դեբիտորական կամ կրեդիտորական պարտքերի դեպքում, դեբիտորական կամ կրեդիտորական պարտքի մարման ժամկետ է համարվում այդ պարտքն առաջացնող գործարքի (գործառնության, փաստի) կատարման օրվան հաջորդող 60-րդ օրը: Կարգի 21-րդ կետի համաձայն՝ կրեդիտորական պարտքը կետանցված դառնալու 366-րդ օրվանից համարվում է անհուսալի, որպիսի կրեդիտորա-

կան պարտքերը ենթակա են դուրսգրման՝ անհուսալի դառնալու հաշվետու տարում, և դուրս գրված անհուսալի կրեդիտորական պարտքի գումարը հաշվի է առնվում կազմակերպության հաշվետու տարվա հարկվող շահույթը (վնասը) որոշելիս, որպես եկամուտ՝ համաձայն Կարգի 22-րդ կետի:

Սույն գործի փաստերից հետևում է, որ Ընկերությունը, առաջնորդվելով ՀՀ կառավարության 05.12.2001թվականի թիվ 1194 որոշմամբ հաստատված կարգի պահանջներով, 2001 և 2002 թվականի ֆինանսական արդյունքներից ելնելով 2002 թվականին բաշխել է 48.482.000 ՀՀ դրամի, իսկ 2003 թվականին (Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի 28.03.2003 թվականի որոշման հիմքով)՝ 122.865.000 ՀՀ դրամի շահաբաժիններ:

ՀՀ կառավարության 05.12.2001թ. թիվ 1194 որոշմամբ հաստատված՝ «Պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերություններում շահութաբաժինների վճարման գործընթացում պետական բաժնեմասի կառավարման լիազորություններն իրականացնող մարիներին աշխատանքի կազմակերպման» կարգի 9-րդ կետի համաձայն՝ ընդհանուր ժողովների կողմից տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշումների ընդունման օրվանից եռամսյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան մինչև հոկտեմբերի 1-ը, եթե ընդհանուր ժողովն ընդունում է այդպիսի որոշում շահութաբաժինների պետական բաժնեմասին համապատասխանող մասը վճարվում է ՀՀ պետական բյուջե:

Վերը նշված իրավական ակտի բովանդակությունից հետևում է, որ Ընկերության կողմից շահաբաժինների վճարումը բաժնետիրոջը 2002 թվականի համար կարող էր կատարվել ոչ ուշ, քան 01.10.2002 թվականը, իսկ 2003 թվականի համար՝ 01.10.2003 թվականը, որպիսի գործողությունները, սակայն, ոչ միայն սահմանված ժամկետներում, այլև ընդհանրապես չեն կատարվել Ընկերության կողմից: Այսինքն՝ ՀՀ կառավարության 19.12.2002 թվականի թիվ 2052-Ն որոշմամբ հաստատված կարգի ուժով Ընկերության նշված կրեդիտորական պարտքը կետանցված դառնալու 366-րդ օրվանից համարվել է անհուսալի, որը ենթակա էր դուրսգրման՝ անհուսալի դառնալու հաշվետու տարում, իսկ դուրս գրված անհուսալի կրեդիտորական պարտքի գումարն էլ, որպես եկամուտ, պետք է հաշվի առնվեր Ընկերության հաշվետու տարվա հարկվող շահույթը որոշելիս:

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի համաձայն՝ շահութահարկի գումարը հարկվող շահույթի նկատմամբ հաշվարկվում է 20 տոկոս դրույքաչափով: Նույն օրենքի 69-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ նշված օրենքը խախտելու համար վճարողները և դրանց պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Նույն հոդվածի երրորդ մասի համաձայն՝ հարկային մարմին ներկայացված շահութահարկի հաշվարկում նույն օրենքով սահմանված կարգով հաշվարկված վնասն ավել ցույց տալու դեպքում ռեզիդենտ հարկ վճարողից գանձվում է տուգանք՝ ավել ցույց տված վնասի 20 տոկոսի չափով: Նշված տուգանքը չի կիրառվում այն հարկատուների նկատմամբ, որոնք մինչև հարկային մարմինների ստուգումներն ինքնուրույն հայտնաբերել են իրենց կողմից նախորդ տարիների վնասի ավել հաշվարկում, հաշվապահական հաշվառման մեջ կատարել են համապատասխան գրանցումներ և այդ մասին գրավոր տեղյակ են պահել իրենց հաշվառման վայրի հարկային մարմինին:

Միաժամանակ, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի համաձայն՝ հարկվող օբյեկտը թաքցնելու կամ այն պակաս ցույց տալու դեպքում հարկ վճարողներից (հարկային գործակալներից) նույն օրենքով սահմանված կարգով գանձվում է թաքցված կամ պակաս ցույց տրված հարկվող օբյեկտի համար նախատեսված (հարկային տեսչության կողմից հաշվարկված) հարկի գումարը, ինչպես նաև տուգանք՝ այդ գումարի 50 տոկոսի չափով:

Սույն գործի փաստերից հետևում է, որ Տեսչության 07.12.2006 թվականի թիվ 1019510 ստուգման ակտով Ընկերությանը լրացուցիչ հարկային պարտավորություններ են առաջադրվել վերը նկարագրված իրավախախտման համար և ՀՀ կառավարության 19.12.2002

---

---

թվականի թիվ 2052-Ն որոշման, «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 7, 33, 69 հոդվածներին, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 27 հոդվածի պահանջների հիմքով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Դատարանը վճռի մեջ պետք է պատճառաբանի նման համոզմունքի ձևավորումը:

Հիմք ընդունելով վերոնշյալը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանը, խախտելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի պահանջները, առանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու և գնահատելու գործում առկա ապացույցները, չկիրառելով ՀՀ կառավարության 19.12.2002 թվականի թիվ 2052-Ն որոշմամբ հաստատված կարգի 21-րդ, 22-րդ, 4-րդ և 2-րդ կետերը, սխալ մեկնաբանելով «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի ժե) ենթակետը, եկել է անհիմն եզրահանգման այն մասին, որ Տեսչության 07.12.2006 թվականի թիվ 1019510 ստուգման ակտը հակասում է օրենքին: Ընդ որում, նման եզրահանգման գալիս ստորադաս դատարանը կիրառել է Կարգի 24-րդ կետը, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ և 7-րդ մասերը, որոնք սույն գործով կիրառելի չեն:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարություն օրենսգրքի 227-228-րդ հոդվածների ուժով Վարչական դատարանի 01.08.2008 թվականի վճիռը մասնակի բեկանելու համար: Ընդ որում, Վարչական դատարանի վճիռը ենթակա է բեկանման մասնակիորեն, քանի որ եկամտահարկի, պետական տուրքի և բնապահպանական վճարի գծով պարտավորության գումարների բռնագանձումը Դատարանը մերժել է այդ պարտավորությունները Ընկերության կողմից կատարված լինելու հիմքով, իսկ վճռաբեկ բողոքում բացակայում է այդ հանգամանքները հերքող որևէ փաստարկ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել Վարչական դատարանի 01.08.2008 թվականի վճռի՝ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության Սպանդարյանի 1 հարկային տեսչության 07.12.2006 թվականի թիվ 1019510 ստուգման ակտն անվավեր ճանաչելու և նշված ստուգման ակտից ծագած հարկային պարտավորությունների գումարի բռնագանձումը մերժելու մասերը և այդ մասերով գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության: Վճռի մնացած մասը թողնել օրինական ուժի մեջ:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ՝ ստորագրություն  
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒՐՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վարչական դատարանի վճիռ  
Վարչական գործ թիվ ՎԴ/0041/05/08  
Նախագահող դատավոր՝ Ռ. Հակոբյան

Վարչական գործ թիվ ՎԴ/0041/05/08  
2008թ.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Վ.ԱՔԵԼՅԱՆԻ  
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ԳՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի դեկտեմբերի 26-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը Վարչական դատարանի 01.08.2008 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի «Սաթի» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն)՝ օրենքին հակասող ակտերն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է անվավեր ճանաչել Ծառայության 07.11.2007 թվականի թիվ 1032425 ստուգման ակտի 1-ին և 4-րդ կետերը, Ծառայության պետի 27.11.2007 թվականի թիվ ԱՀ 002097 հանձնարարագիրը, ինչպես նաև Ծառայության գանգատարկման հանձնաժողովի 30.11.2007 թվականի թիվ 186/1 որոշումը:

Վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 01.08.2008 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ Ծառայության 07.11.2007 թվականի թիվ 1032425 ստուգման ակտի 1-ին և 4-րդ կետերը և Ծառայության գանգատարկման հանձնաժողովի 30.11.2007 թվականի թիվ 186/1 որոշումն անվավեր ճանաչելու մասերով:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը: Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ընկերությունը:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը սխալ է մեկնաբանել «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը, չի կիրառել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ -

---

---

հողվածը, կիրառել է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 34-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածները, որոնք չպետք է կիրառվեն:

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Դատարանը, սխալ մեկնաբանելով «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը, հանգել է սխալ եզրակացության, որ Ընկերության, որպես զբոսաշրջային գործակալի, իրականացվող գործունեության տեսակը որոշվում է ոչ թե յուրաքայուր միջոցառման ծրագրի շրջանակներով, այլ ընդհանրապես իրականացվող գործունեության բնույթով, որն իր մեջ ներառել է զբոսաշրջային ծառայություններին բնորոշ տարբեր տարրեր: Նշված սխալ մեկնաբանման հիման վրա Դատարանը եզրակացրել է, որ Ընկերությունն ազատված է ավելացված արժեքի հարկից: Մինչդեռ միայն զբոսաշրջային գործակալ լինելու հանգամանքը հիմք չէ ավելացված արժեքի հարկից ազատվելու համար, քանի որ գործում առկա չեն Ընկերության կողմից գործակալական ծառայություններ մատուցելու փաստը հաստատող բավարար ապացույցներ, որոնք պարտավոր էր ներկայացնել Ընկերությունը: Տվյալ դեպքում Ընկերության կողմից չեն ներկայացվել գործակալական ծառայություններ, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացիներին ծառայություններ մատուցելու փաստը հաստատող փաստաթղթեր, որևէ զբոսաշրջային փաթեթ, կամ պայմանագրի հիման վրա հյուրանոցների կողմից տրված որևէ հարկային հաշիվ, որը կհավաստեր զբոսաշրջիկին մատուցած գիշերակացի ծառայությունը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վարչական դատարանի 01.08.2008 թվականի վճիռը՝ հայցի բավարարված մասով և այն փոփոխել՝ Ընկերության հայցը մերժել:

### **2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմքերը, հիմնավորումները**

Բողոք բերած անձն անտեսել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ - հոդվածի պահանջը: Պատասխանողը կրում է իր կողմից կազմված ստուգման ակտի համար հիմք ծառայած փաստական հանգամանքների ապացուցման պարտականությունը: Նման պարտականությունը ոչ միայն պատշաճ կերպով չի կատարվել ստուգման ընթացքում, այլև այդ պարտականությունների կատարման ընթացքում ձեռնարկված միջոցառումների արդյունքը չի արտացոլվել նաև ստուգման ակտում:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Ծառայության Սպանդարյանի 1 հարկային տեսչության 07.11.2007 թվականի թիվ 1032425 ակտի համաձայն՝ բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգման արդյունքում Ընկերությանն առաջադրվել են շահութահարկի (1-ին կետ), ավելացված արժեքի հարկի (4-րդ կետ) և այլ խախտումների գծով լրացուցիչ հարկային պարտավորություններ:

2) Ստուգման ակտի առաջին կետով արձանագրվել է, որ Ընկերությունն ըստ ներկայացրած փաստաթղթերի 2006 թվականի ընթացքում, խախտելով «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածը, առանց հիմնավոր փաստաթղթերի համախառն եկամտից նվազեցվող ծախսերը ավել է ցույց տվել 769.100 ՀՀ դրամով: Ստուգման ակտի 4-րդ կետում նշվել է, որ Ընկերությունը ստուգվող ժամանակաշրջանում իրականացրել է Հայաստանի Հանրապետության և Լեռնային Դարաբաղի տեսարժան վայրերով օրական շրջագայությունների կազմակերպում և նշված գործունեության մասով իրացման շրջանառությունը Ծառայություն ներկայացրած ավելացված արժեքի հարկի հաշվարկներում ցույց է տվել որպես ավելացված արժեքի հարկից ազատված գործարքներ: Ընկերության կողմից իրականացված օրական շրջագայությունների կազմակերպումը չի համապա-

տասխանում զբոսաշրջության գործունեություն, զբոսաշրջային գործակալություն հասկացություններին:

Ստուգման ակտում նշվել է նաև, որ հարկ վճարողն է պարտավոր ներկայացնել իր հարկային արտոնությունը հաստատող փաստաթղթերը, մինչդեռ Ընկերությունը չի ներկայացրել դրանք: Հետևաբար, Ընկերության ներկայացրած հաշվարկներում օրական շրջագայությունների կազմակերպման գործունեություն շրջանառությունը ավելացված արժեքի հարկից ազատված գործունեություն համարելու համար բավարար հիմքեր չկան:

3) Ծառայության գանգատարկման հանձնաժողովի 30.11.2007 թվականի թիվ 186/1 որոշմամբ 07.11.2007 թվականի ստուգման ակտը թողնվել է անփոփոխ:

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

«Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ զբոսաշրջային ծառայություններ են համարվում՝ զբոսաշրջիկներին մատուցվող և նրանց պահանջմունքների բավարարմանն ուղղված տեղաբաշխման, հյուրանոցային, տեղափոխման, էքսկուրսային, սննդի կազմակերպման և մատուցման, մշակութային, մարզական բնույթի միջոցառումների, հանգստի, զվարճանքի կազմակերպման և այլ ծառայությունները, իսկ զբոսաշրջային գործակալ է համարվում այն իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը, որն իրականացնում է զբոսաշրջային արդյունքի խթանման և իրացման գործունեություն, ինչի արդյունքում տրամադրում է զբոսաշրջային փաթեթ:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝ զբոսաշրջության գործունեության մատով **ավելացված արժեքի հարկով հարկվող շրջանառություն է համարվում** զբոսաշրջիկներին (այդ թվում՝ այլ զբոսաշրջիկային գործակալությունների հետ կնքված պայմանագրերի հիման վրա) **մատուցվող ծառայությունների ընդհանուր արժեքը**՝ առանց միջազգային ուղևորափոխադրման համար զբոսաշրջիկային ծառայություններ մատուցող անձանց կողմից վճարվող գումարների: **Օտարերկրյա անձանց մատուցվող զբոսաշրջային ծառայությունները, ինչպես նաև զբոսաշրջիկային գործակալությունների կողմից մատուցվող գործակալական ծառայություններն ազատվում են ավելացված արժեքի հարկից, եթե այդ ծառայությունների շրջանակներում ուղևորությունները, ճանապարհորդությունները, էքսկուրսիաներն իրականացվում են ՀՀ տարածքում:**

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 10-րդ - հոդվածի առաջին մասի համաձայն՝ վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել: Եթե վարչական մարմինը հիմնավոր կասկածներ ունի անձանց ներկայացրած տվյալների, տեղեկությունների իսկության վերաբերյալ, ապա ինքը պարտավոր է ինքնուրույն և իր հաշվին ձեռնարկել միջոցներ՝ դրանց իսկության մեջ հավաստիանալու համար:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի «գ» կետի համաձայն՝ հարկ վճարողը պարտավոր է ներկայացնել հարկային արտոնությունների իր իրավունքը հաստատող փաստաթղթերը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերությունում կատարված ստուգման արդյունքում արձանագրված իրավախախտման հիմքում դրվել է այն հանգամանքը, որ Ընկերությունը, պարտավորված լինելով ներկայացնել հարկային արտոնությունը հաստատող փաստաթղթերը, այն չի կատարել: Մինչդեռ Դատարանը, վկայակոչելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածը, Ընկերության հարկային արտոնությունների առկայությունը ապացուցելու պարտականությունը դրել է Ծառայության վրա:

---

---

Վճռաբեկ դատարանը, հարկ է համարում արձանագրել, որ վարչարարության յուրաքանչյուր առանձին տեսակի իրականացման ժամանակ պետք է հաշվի առնվեն ոչ միայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթները, այլև համապատասխան կոնկրետ ոլորտը կարգավորող օրենքների պահանջները: Այս եզրահանգման համար հիմք է հանդիսանում նաև վերոնշյալ օրենքի 2-րդ հոդվածը, որի համաձայն՝ առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և ՀՀ միջազգային պայմանագրերով:

Մասնավորապես, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածով հստակ սահմանված է, որ հարկային արտոնությունների առկայության փաստը հաստատելու համար փաստաթղթեր ներկայացնում է հարկ վճարողը:

Հետևաբար, ստուգման ժամանակ հարկային արտոնությունների առկայության վերաբերյալ փաստաթղթերը պետք է ներկայացնե՞ր Ընկերությունը, որը չներկայացնելու դեպքում այդ արտոնությունների առկայությունը համարվում է չհիմնավորված:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ զբոսաշրջային ծառայություններ մատուցելու դեպքում «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքով նախատեսված արտոնությունից օգտվելու համար հարկ վճարողը պետք է ներկայացնե՞ր այնպիսի ապացույցներ, որոնք կհիմնավորեին հարկ վճարողի կողմից «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքով նախատեսված զբոսաշրջային ծառայություններին և զբոսաշրջային միջոցառումներին բնորոշ գործունեության իրականացումը: Մինչդեռ սույն գործի քննության ժամանակ Ընկերության կողմից այդպիսիք չեն ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի պատասխանում առկա փաստարկները հերքվում են վերոնշյալ պատճառաբանություններով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի համաձայն, Դատարանի վճիռը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու ՀՀ վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի վերը նշված հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից: Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Վարչական դատարանի 01.08.2008 թվականի վճռի՝ հայցը բավարարելու մասը և այն փոփոխել. «Սաթի» ՓԲԸ-ի հայցը մերժել:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ՝ ս տ որ ա գ ր ու թ յ ու ն  
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր՝ ս տ որ ա գ ր ու թ յ ու ն ն եր*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒՐՆԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վարչական դատարանի վճիռ  
Վարչական գործ թիվ ՎԴ/0470/05/08  
Նախագահող դատավոր՝ Գ. Գարիբյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/0470/05/08**  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ*    Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ*    Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Դ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ. ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի դեկտեմբերի 26-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը Վարչական դատարանի 22.05.2008 թվականի վճռի և 26.06.2008 թվականի լրացուցիչ վճռի դեմ՝ ըստ հայցի «Կայարանչին» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն)՝ Ծառայության օպերատիվ-հետախուզական վարչության Սպանդարյանի բաժնի 28.11.2007 թվականի թիվ 1109800 ակտը վերացնելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է վերացնել Ծառայության օպերատիվ-հետախուզական վարչության Սպանդարյանի բաժնի 28.11.2007 թվականի թիվ 1109800 ակտը:

Վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 22.05.2008 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Լրացուցիչ դիմումով դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է կայացնել լրացուցիչ վճիռ Ընկերության ներկայացուցչին վճարված 240.000 ՀՀ դրամը Հայաստանի Հանրապետությունից բռնագանձելու մասին:

Դատարանի 26.06.2008 թվականի լրացուցիչ վճռով դիմումը բավարարվել է մասնակիորեն՝ 200.000 ՀՀ դրամի չափով:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Դատարանը չի կիրառել ՀՀ կառավարության 31.07.1997 թվականի թիվ 314 որոշմամբ հաստատված «ՀՀ տարածքում առաքվող կամ տրամադրվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների գրանցման(հաշվառման)» կարգի (այսուհետ՝ Կարգ) 5-րդ - մասի 1-ին կետի «բ» ենթակետը, որը պետք է կիրառեր և սխալ է մեկնաբանել նույն Կարգի 2-րդ մասի 1-ին կետը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Դատարանն Ընկերության կողմից շինհրապարակ տեղափոխված մեխը, ամրանը և բետոնը, ՀՀ կառավարության 31.07.1997 թվականի թիվ 314 որոշման 2-րդ մասի 1-ին կետի համաձայն, համարել է գրանցման ոչ ենթակա, քանի որ դրանք ոչ թե ապրանք կամ պատրաստի արտադրանք են, այլ հումք, նյութ:

Նշված դրույթի կիրառման համար անհրաժեշտ է երկու պայմանների միաժամանակյա առկայությունը՝ գույքը պատրաստի ապրանք կամ պատրաստի արտադրանք չհանդիսանալը և այն ներտնտեսական (նույն հասցեի տարածքում) տեղափոխումը: Մինչդեռ Դատարանն Ընկերության կողմից որպես ապրանք ձեռք բերած և պահեստ մուտք եղած մեխը, բետոնը և ամրանը դիտել է որպես հումք՝ հաշվի առնելով Ընկերության ձեռնարկատիրական գործունեության բնույթը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Դատարանի 22.05.2008 թվականի վճիռը և 26.06.2008 թվականի լրացուցիչ վճիռը և գործն ուղարկել նոր քննության:

**3.Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Ծառայության պետի 12.11.2007 թվականի թիվ 1109800 հանձնարարագրի հիման վրա Ընկերությունում իրականացվել է ստուգում:

2) 28.11.2007 թվականի թիվ 1109800 ստուգման ակտով Ընկերությանն առաջադրվել է 6.348.300 ՀՀ դրամի հարկային պարտավորություն՝ տեղափոխվող ապրանքները սահմանված կարգով չգրանցելու համար: Ակտով սահմանվել է, որ Ընկերությունը 2007 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին ապրանքային պահեստից շինարարական հրապարակ է տեղափոխել 12.696.600 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ ապրանքներ՝ դրանք չգրանցելով առաքվող-տեղափոխվող ապրանքների գրանցման գրքում: Ավելին, Ընկերությունը չի ունեցել Ծառայության կողմից հաստատված գրանցման գիրք:

3) Ընկերության և «Սրբտենկա-Կոնսուլ» ՍՊԸ-ի միջև 28.03.2008 թվականին կնքվել է փաստաբանական ծառայություն մատուցելու պայմանագիր, որի գինը կազմել է 240.000 ՀՀ դրամ:

**4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ *այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ կառավարության 31.07.1997 թվականի թիվ 314 որոշմամբ հաստատված Կարգի 5-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետի համաձայն՝ տնտեսվարող սուբյեկտների կողմից առաքումների գրանցման գրքերում գրանցման (հաշվառման) ենթակա են իրենց կողմից առաքվող կամ իրենց մոտից տեղափոխվող ամբողջ արտադրանքը և ապրանքները, բացառությամբ նույն կարգի 2-րդ կետի 2-րդ մասում նշվածների:

**Առաքվող ապրանքը ներառում է իրացման համար չնախատեսված ապրանքների (պատրաստի արտադրանքի) տրամադրումը (հատկացումը, բացթողումը, այլ ձևով օտարումը, այդ թվում՝ անհատույց):**

---

---

**Տեղափոխվող ապրանքը ներառում է տնտեսական տեղաշարժի ենթարկվող** (պատրաստի արտադրանքի՝ պահեստից կամ այլ վայրերից ֆիրմային խանութ, պահեստից վաճառքի կետ կամ այլ վայր (պահեստ և այլն) տեղափոխվող) **ապրանքը** (պատրաստի արտադրանքը), ինչպես նաև մաքսատուն կամ մաքսային կետ տեղափոխվող կամ ի պահ հանձնվող ապրանքը:

Նույն որոշման 2-րդ կետի համաձայն՝ **առաքումների գրանցման գրքում չի գրանցվում պատրաստի արտադրանք կամ ապրանք չհանդիսացող գույքի ներտնտեսական** (նույն հասցեի տարածքում) **տեղափոխումը**, խողովակաշարերով, էլեկտրահաղորդման, էլեկտրակապի գծերով արտադրանքի առաքումը, տարածման նպատակով մասնուլի տեղափոխումը, վերանորոգման և համանման այլ ծառայությունների մատուցման ու աշխատանքների կատարման ժամանակ պահեստամասերի կամ երաշխիքային ժամկետ ունեցող տեխնիկայի տեղափոխումը, տնտեսվարող սուբյեկտների հիմնական միջոցների, փոքրարժեք և արագամաշ առարկաների, բլանկների ու ձևաթղթերի տեղափոխումը:

Վերոնշյալից հետևում է, որ Կարգի 2-րդ մասի կիրառման համար անհրաժեշտ է երկու վավերապայմանների միաժամանակյա առկայությունը: Դրանք են՝ գույքի պատրաստի արտադրանք կամ ապրանք չհանդիսանալը և դրա ներտնտեսական (նույն հասցեի տարածքում) տեղափոխումը:

Դատարանը հայցի մերժման հիմքում դրել է այն հանգամանքը, որ Ընկերությունը շինարարական կազմակերպություն է, որն իրականացրել է ոչ պատրաստի արտադրանք ապրանքի (հումքի) ներտնտեսական տեղափոխություն: Հետևաբար՝ Ընկերության կողմից պահեստից նույն հասցեում գտնվող շինհրապարակ տեղափոխվող ամրանը, մեխը և բետոնը պատրաստի ապրանք չէ, ուստի այն ենթակա չէ գրանցման առաքվող, տրամադրվող, տեղափոխվող կամ վաճառվող արտադրանքի, ապրանքների գրանցման գրքում:

Մինչդեռ սույն գործով Դատարանը չի անդրադարձել և գնահատման առարկա չի դարձրել ապրանքը նույն հասցեով տեղափոխված լինելու հանգամանքը, որը համապատասխան գրանցման գրքում գրանցում չկատարելու համար պարտադիր վավերապայման է:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի համաձայն, Դատարանի վճիռը և լրացուցիչ վճիռը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Վարչական դատարանի 22.05.2008 թվականի վճիռը և 26.06.2008 թվականի լրացուցիչ վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ՝ ս տ որ ա գր ու թ յ ո ն ւ ն  
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր՝ ս տ որ ա գր ու թ յ ո ն ւ ն ն եր*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՈՒՐՆԵՐ ԴԱՏԱՐԱՆ

Վարչական դատարանի վճիռ  
Վարչական գործ թիվ ՎԴ/0009/05/08  
Նախագահող դատավոր՝ Ա.Գազարյան

Քաղաքացիական գործ թիվ ՎԳ/0009/05/08  
2008թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի հոկտեմբերի 31-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը Վարչական դատարանի 25.04.2008 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Քաղաքապետարան) ընդդեմ Արսեն Մակարյանի՝ գումարի բռնագանձման և ինքնակամ կառույցը քանդելու պահանջների մասին,

Պ Ա Ր Ձ Ե Ց

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Քաղաքապետարանը պահանջել է Արսեն Մակարյանից բռնագանձել 400.000 ՀՀ դրամ՝ որպես վարչական տուգանքի գումար, և պարտավորեցնել պատասխանողին քանդելու Երևանի Ներքին Շենգավիթ 11-րդ փողոց 2-րդ նրբանցք թիվ 23/5 տանը կից, սեփականության իրավունքով պետությանը պատկանող հողամասում կառուցված չքմ մակերեսով կցակառույցը:

Վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 25.04.2008 թվականի վճռով հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Դատարանը չի կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ, 24-րդ, 25-րդ հոդվածները, ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածը, որոնք պետք է կիրառեր:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Դատարանը, նշելով, որ տվյալ դեպքում վարչական տույժ կիրառելու համար անհրաժեշտ է, որպեսզի դատաքննությամբ հիմնավորվի այն հանգամանքը, որ ինքնակամ կա-

---

---

ռույցն իրականացվել է պետությանը պատկանող հողամասի վրա, ըստ էության հակասել է Վճռաբեկ դատարանի 18.05.2007 թվականի թիվ 3-410(ՎԳ) և 12.12.2007 թվականի թիվ 3-1835(Ա) որոշումներին: Վերոհիշյալ որոշումներով, համապատասխան մեկնաբանության ենթարկելով ՀՀ հողային օրենսգրքի 55-րդ և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 168-րդ հոդվածները՝ Վճռաբեկ դատարանը հանգել է եզրակացության, որ քաղաքացիներին, իրավաբանական անձանց կամ համայնքներին չպատկանող հողերը պետության սեփականությունն են, այսինքն՝ սեփականատեր չունեցող բոլոր հողերը համարվում են պետության սեփականությունը:

Տվյալ գործով Վճռաբեկ դատարանը, փաստելով, որ գործի նյութերում բացակայել է վեճի առարկա հողամասը ֆիզիկական կամ իրավաբանական անձին պատկանելու մասին որևէ ապացույց, գտել է, որ դրա նկատմամբ պետք է գործի պետական սեփականություն լինելու կանխավարկածը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վարչական դատարանի 25.04.2008 թվականի վճիռը և գործն ուղարկել նոր քննության:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Երևանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության աշխատակցի կողմից 08.10.2007 թվականին կազմվել է արձանագրություն, որի համաձայն՝ Երևանի Ներքին Շենգավիթի 11-րդ փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 23/5 տան բնակիչ Արսեն Մակարյանը, չունենալով համապատասխան քաղաքաշինական փաստաթղթեր, վերակառուցել է իր ծնողներին պատկանող տունը և նախկին շինությունն ավելացրել է 3 քմ-ով:

2) 19.10.2007 թվականին վարչական իրավախախտումների գործերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքներ իրականացնող հանձնաժողովի կողմից կազմվել է թիվ Վ-15/12 արձանագրությունը, որով որոշվել է Երևանի քաղաքապետին ներկայացնել առաջարկություն Արսեն Մակարյանին ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին՝ նշանակելով վարչական տույժ՝ 400.000 ՀՀ դրամի չափով, իսկ նույն մարմնի 19.10.2007 թվականի եզրակացությամբ առաջարկվել է Արսեն Մակարյանի նկատմամբ կիրառել տուգանք՝ 400.000 ՀՀ դրամի չափով:

3) Երևանի քաղաքապետի թիվ Վ-15/12 որոշմամբ Արսեն Մակարյանը ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով ենթարկվել է վարչական պատասխանատվության 400.000 ՀՀ դրամ տուգանքի չափով, ինչպես նաև նրան առաջարկվել է միջոցներ ձեռնարկել իրավախախտման պատճառները և պայմանները վերացնելու ուղղությամբ:

### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ *այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ:*

ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերության համաձայն՝ հողօգտագործման իրավունք չունեցող անձանց կողմից պետությանը և համայնքներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:

Սույն վարչական գործով Դատարանը գտել է, որ վարչական տուգանք նշանակելու և ինքնակամ կառույցը քանդելուն պարտավորեցնելու հարցը կախվածության մեջ է մտնում ինքնակամ շինությունը պետության սեփականություն հանդիսացող հողամասում կառուցված լինելու փաստից, և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ գործով չի հիմնավորվել վեճի առարկա շինությամբ զբաղեցված հողամասը պետական սեփականություն լինելու հարցը, մերժել է քաղաքապետարանի պահանջը:

*1. Վարչական տուգանք նշանակելու վերաբերյալ.*

ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով Վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ:

Վճռաբեկ դատարանը, մեկնաբանելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 168-րդ և ՀՀ - հողային օրենսգրքի 55-րդ հոդվածները, նշել է, որ հողամասի՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձին պատկանելու մասին գործում որևէ ապացույցի բացակայության պայմաններում գործում է դրա՝ պետական սեփականություն լինելու կանխավարկածը (տե՛ս - Սիմոն Սարգսյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին թիվ 3-1835(Ա) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 12.12.2007 թվականի որոշումը):

*2. Ինքնակամ կառույցը քանդելուն պարտավորեցնելու մասով.*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի համաձայն՝ ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված շենքեր, շինությունը կամ այլ կառույցը: Հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցը: *Չօրինականացված ինքնակամ կառույցը պետության, համայնքի կամ այլ շահագրգիռ անձի հայցով, որի իրավունքները և օրենքով պահպանվող շահերը խախտվել են, ենթակա է քանդման, իսկ հողամասը՝ նախկին վիճակի վերականգնման՝ հողամասի սեփականատիրոջ հաշվին:* Ուրիշի հողամասում ինքնակամ կառույց իրականացրած անձը պարտավոր է հատուցել հողամասի սեփականատիրոջը հասցրած վնասը, ներառյալ՝ ինքնակամ կառույցի քանդման և հողամասի նախկին վիճակի վերականգնման ծախսերը:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ ինքնակամ կառույցը քանդելու նախապայման է հանդիսանում այդ կառույցով այլ անձանց իրավունքների խախտումը, անկախ ինքնակամ կառույցը կառուցած անձին սեփականության իրավունքով պատկանող հողամասում կառուցված լինելու հանգամանքից:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին (տես օրինակ՝ «Քննար-88» ՍՊԸ ընդդեմ ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության, 21.12.2006թ. Քաղ. գործ թիվ 3-2504/ՏԴ(ՏԴ), (գումար բռնագանձելու պահանջով)): Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ վճռի թե՛ փաստական և թե՛ իրավական հիմնավորումը: Ըստ Վճռաբեկ դատարանի վերոհիշյալ որոշման՝ վճռի իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ նյութական իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Սինչդեռ Դատարանը, ինքնակամ կառույցը քանդելուն պարտավորեցնելու հարցը կախվածության մեջ դնելով ինքնակամ շինությունը պետության սեփականություն հանդի-

---

---

սացող հողամասում կառուցված լինելու փաստից, չի հիմնավորել սույն վարչական գործի համար այդ փաստի էական նշանակություն ունենալու հանգամանքը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի համաձայն, Գատարանի վճիռը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Վարչական դատարանի 25.04.2008 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ՝ ս տ որ ա գր ու թյ ու ն  
Գ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր՝ ս տ որ ա գր ու թյ ու ն ն եր*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՈՒՐՆԵՐ ԴԱՏԱՐԱՆ**

Վարչական դատարանի վճիռ  
Վարչական գործ թիվ ՎԳ/0557/05/08  
Նախագահող դատավոր՝ Գ.Գարիբյան

Վարչական գործ թիվ **ՎԳ/0557/05/08**  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի հոկտեմբերի 31-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը Վարչական դատարանի 21.04.2008 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) ընդդեմ Սամվել Հովսեփյանի՝ գումարի բռնագանձման և մաքսային պարտավորության կատարմանը պարտավորեցնելու պահանջների մասին,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Կոմիտեն պահանջել է Սամվել Հովսեփյանից բռնագանձել 100.000 ՀՀ դրամ վարչական տուգանք:

Վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 21.04.2008 թվականի վճռով հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը: Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Դատարանը չի կիրառել ՀՀ մաքսային օրենսգրքի 195-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր, կիրառել է ՀՀ մաքսային օրենսգրքի 105-րդ հոդվածը, որը չպետք է կիրառեր:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Դատարանն անտեսել է, որ օրենսդիրը ներմուծվող ապրանքների արժեքի որոշումը կարևորում է միայն մաքսային սահմանով ապրանքները տեղափոխելիս, այլ ոչ թե ապրանքները մեկ մաքսային մարմնից մյուս մաքսային մարմին սահմանված ժամկետում չհասցնելիս, որի դեպքում ապրանքների արժեքը որևէ հետևանք չի առաջացնում:

---

---

Բացի այդ, ՀՀ մաքսային օրենսգրքի 105-րդ հոդվածը սահմանում է մաքսատուրքի վճարման արտոնություններ ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների համար, մինչդեռ մաքսային մարմինը Սամվել Հովսեփյանի նկատմամբ հայց է հարուցել մաքսային կանոնների խախտման, այն է՝ ապրանքները տասնօրյա ժամկետում նշանակման վայր չհասցնելու և չհայտարարագրելու համար 100.000 ՀՀ դրամ տույժի գումար բռնագանձելու պահանջով:

Տվյալ դեպքում Դատարանը պետք է կիրառեր ՀՀ մաքսային օրենսգրքի 195-րդ հոդվածը, որը 100.000 ՀՀ դրամի չափով պատասխանատվություն է սահմանում ՀՀ մեկ մաքսային մարմնից մյուս մաքսային մարմին մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքները կամ տրանսպորտային միջոցները սահմանված ժամկետում չհասցնելու համար:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վարչական դատարանի 21.04.2008 թվականի վճիռը և փոփոխել:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Թիվ 439408 փոխադրման ամփոփագրով սահմանվել է, որ դրանում նշված բեռը նշանակման վայր՝ Կոմիտեի Արարատյան տարածաշրջանային մաքսատուն, հասցնելու ժամկետն է 07.11.2007 թվականը:

2. Կոմիտեի Արարատյան տարածաշրջանային մաքսատան 15.11.2007 թվականի մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրության համաձայն՝ Սամվել Հովսեփյանը 29.10.2007 թվականին թիվ 439408 ամփոփագրով Հայաստանի Հանրապետություն է ներմուծել անվաղող և անվահեծ, որոնք 10 օրվա ընթացքում՝ մինչև 08.11.2007 թվականը, մաքսային մարմին չեն հասցվել:

3. Կոմիտեի Արարատյան տարածաշրջանային մաքսատան պետի 26.11.2007 թվականի որոշմամբ, ՀՀ մաքսային օրենսգրքի 195-րդ հոդվածով սահմանված կանոնների խախտման համար Սամվել Հովսեփյանի նկատմամբ նշանակվել է 100.000 ՀՀ դրամի չափով տուգանք:

### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ *վճռաբեկ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ:*

ՀՀ մաքսային օրենսգրքի 105-րդ հոդվածի համաձայն՝ ֆիզիկական անձինք կարող են առանց մաքսատուրք վճարելու որպես ուղեկցող բեռ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխել ապրանքներ, որոնց ներմուծման համար մաքսատուրքի դրույքաչափը սույն օրենսգրքով սահմանված չէ գրո տոկոս և որոնց ընդհանուր քաշը չի գերազանցում 50 կիլոգրամը, իսկ ընդհանուր մաքսային արժեքը՝ 150.000 ՀՀ դրամը:

ՀՀ մաքսային օրենսգրքի 128-րդ հոդվածի համաձայն՝ ապրանքները և տրանսպորտային միջոցները, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, ենթակա են հայտարարագրման տարածաշրջանային կամ մասնագիտացված մաքսային կետերում վերադաս մաքսային մարմնի սահմանած կարգով. եթե դրանք տեղափոխվում են Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով:

ՀՀ մաքսային օրենսգրքի 130-րդ հոդվածի համաձայն՝ ապրանքների և տրանսպորտային միջոցների համար մաքսային հայտարարագիրը մաքսային մարմին է ներկայացվում մինչև ապրանքների և տրանսպորտային միջոցների նկատմամբ մաքսային հսկողության միջոցների իրականացումը և տրանսպորտային միջոցների բացթողումը ապ-

րանքներ և դրանք տեղափոխող տրանսպորտային միջոցներ ներմուծելիս՝ ներմուծելուն հաջորդող տասնօրյա ժամկետում:

ՀՀ մաքսային օրենսգրքի 195-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության մեկ մաքսային մարմնից մյուս մարմին մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքները կամ տրանսպորտային միջոցները սահմանված ժամկետում չհասցնելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ 100.000 ՀՀ դրամի չափով:

Սույն գործով հայցապահանջի մերժման հիմքում դրվել է այն հանգամանքը, որ Սամվել Հովսեփյանը ՀՀ մաքսային օրենսգրքի 105-րդ հոդվածի հիման վրա իրավունք ունի առանց մաքսատուրք վճարելու որպես ուղեկցող բեռ ՀՀ մաքսային սահմանով տեղափոխել ապրանքներ, որոնց ներմուծման համար մաքսատուրքի դրույքաչափը նույն օրենսգրքով սահմանված չէ գրո տոկոս և որոնց ընդհանուր քաշը չի գերազանցում 50 կիլոգրամը, իսկ ընդհանուր մաքսային արժեքը՝ 150.000 ՀՀ դրամը և սույն գործով չի հիմնավորվել ներմուծված անվադողերի և անվահեծերի արժեքի՝ 150.000 ՀՀ դրամից ավելի լինելու հանգամանքը:

Մինչդեռ Սամվել Հովսեփյանը վարչական պատասխանատվության է ենթարկվել մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքները Արարատյան տարածաշրջանային մաքսատուն սահմանված ժամկետում չհասցնելու համար: Այսինքն՝ սույն գործով կիրառման ենթակա է ՀՀ մաքսային օրենսգրքի 195-րդ հոդվածը, որով վարչական պատասխանատվություն է նախատեսվում մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքները կամ տրանսպորտային միջոցները սահմանված ժամկետում չհասցնելու համար:

Հետևաբար, ներկայացված հայցապահանջի հիմնավորվածությունը գնահատելիս Դատարանը պետք է գնահատման առարկա դարձնե ամփոփագրի մեջ նշված ապրանքները Սամվել Հովսեփյանի կողմից մինչև օրենքով սահմանված տասնօրյա ժամկետը Արարատյան տարածքային մաքսային կետ հասցված լինելու հանգամանքը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի համաձայն, Վարչական դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Վարչական դատարանի 21.04.2008 թվականի վճիռը և այն փոփոխել. ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի հայցը բավարարել՝ Սամվել Հովսեփյանից բռնագանձել 100.000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ վարչական տուգանքը:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ՝ ստորագրություն  
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒՐՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վարչական դատարանի վճիռ  
Վարչական գործ թիվ ՎԴ-2/0038/05/08  
Նախագահող դատավոր՝ Հ. Թորոսյան

Վարչական գործ թիվ **ՎԴ-2/0038/05/08**  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Դ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ. ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի հոկտեմբերի 31-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը Վարչական դատարանի 11.04.2008 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության Մարտունու հարկային տեսչության (այսուհետ՝ Ծառայություն) ընդդեմ անհատ ձեռնարկատեր Վաղարշակ Սկրտչյանի՝ 26.965.003 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Ծառայությունը պահանջել է Վաղարշակ Սկրտչյանից հոգուտ պետական բյուջեի բռնագանձել 26.965.003 ՀՀ դրամ:

Վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 11.04.2008 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ բռնագանձվել է 24.439.753 ՀՀ դրամ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը: Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ և 113-րդ - հոդվածները, «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 59<sup>ժ</sup>-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Դատարանը վճռում նշել է, որ ըստ հայցադիմումի՝ հաշվարկն իրականացվել է 21.08.2007 թվականի դրությամբ, ինչպես նաև այն, որ հաշվարկի մեջ մտցվել է նաև 2007 թվականի հոկտեմբեր ամիսը: Սակայն, ըստ հայցադիմումի, Վաղարշակ Սկրտչյանի

հարկային պարտավորությունների հաշվարկը կատարվել է 15.11.2007 թվականի դրությամբ:

Վաղարշակ Սկրտչյանի անձնական հաշվի քարտի ամսական հաշվարկի 01.10.2007 թվականի դրությամբ հաշվարկված 975.000 ՀՀ դրամը Դատարանն ընդունել է որպես 2007 թվականի հոկտեմբեր ամսվա պարտավորություն և այդ գումարը հաշվի չառնելով՝ չի բռնագանձել: Մինչդեռ 01.10.2007 թվականի դրությամբ հաշվարկված 975.000 ՀՀ դրամը վերաբերում է մինչև 14.09.2007 թվականն ընկած ժամանակաշրջանին:

Վճռով հիմք է ընդունվել 2007 թվականի Վաղարշակ Սկրտչյանի 8 լրիվ ամիսների համար հաշվարկված պարտավորությունը և 2006 թվականի նոյեմբերի պարտավորությունը մեկ խողովակի համար, սակայն Վաղարշակ Սկրտչյանն իրականում գործունեություն է իրականացրել երկու խողովակով:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վարչական դատարանի 11.04.2008 թվականի վճիռը՝ հայցը մերժելու մասը, և փոփոխել՝ հայցը բավարարել:

**3.Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. 07.11.2006 թվականին անհատ ձեռնարկատեր Վաղարշակ Սկրտչյանը հայտարարություն է տվել Մասիս քաղաքում և Արգավանո գյուղում մեկ խողովակով 03 ՍԼ 806 պետհամարանիշի ՁԻԼ-130 շրջիկ մեքենայով ավտոտրանսպորտային միջոցների գազալցման գործունեություն իրականացնելու մասին:

2. 07.11.2006 թվականին անհատ ձեռնարկատեր Վաղարշակ Սկրտչյանը հայտարարություն է տվել Աշտարակ քաղաքում մեկ խողովակով 01 ՍՏ 188 պետհամարանիշի ՁԻԼ-130 շրջիկ մեքենայով ավտոտրանսպորտային միջոցների գազալցման գործունեություն իրականացնելու մասին:

3. 14.09.2007 թվականին Վաղարշակ Սկրտչյանը հայտարարություն է տվել 14.09.2007 թվականից գազալիցքավորման գարծունեության անժամկետ դադարեցման մասին:

4. Վաղարշակ Սկրտչյանի անձնական հաշվի քարտում 2007 թվականի սեպտեմբերի հաշվարկները կատարվել են 01.10.2007 թվականին:

**4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ *վճռաբեկ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ:*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը պետք է պարզի կողմերի ներկայացրած պահանջների և առարկությունների, ինչպես նաև այն իրավական ակտերի հիման վրա, որոնք կիրառելի են տվյալ գործով: Դրանց միջոցով է Դատարանի համար պարզ դառնում, թե տվյալ գործով որ փաստի (փաստերի) առկայությունը կամ բացակայությունը կարող է հիմք հանդիսանալ հայցը բավարարելու կամ մերժելու և համապատասխան իրավական նորմերը տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի դարձնելու համար:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս՝

1. գնահատում է ապացույցները,

---

---

2. որոշում է, թե գործի համար նշանակություն ունեցող որ հանգամանքներն են պարզվել և որոնք չեն պարզվել,

3. որոշում է տվյալ գործով կիրառման ենթակա օրենքները և այլ իրավական ակտերը,

4. որոշում է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը:

Դատարանը հաստատված է համարել, որ 2007 թվականի 8 լրիվ ամիսների համար պատասխանողի հիմնական պարտքը կազմել է 18.000.000 ՀՀ դրամ: Դատարանը, դրան ավելացնելով 2006 թվականի նոյեմբեր ամիսը, հաստատագրված վճարների գծով պարտքի հիմնական գումարը հաշվարկել է 19.125.000 ՀՀ դրամ՝ հիմք ընդունելով, որ Վաղարշակ Սկրտչյանը 2006 թվականին գարծունեություն է իրականացրել մեկ խողովակով:

Մինչդեռ սույն գործում առկա է Վաղարշակ Սկրտչյանի 07.11.2006 թվականի հայտարարությունը Մասիսի քաղաքում և Արգավանդ գյուղում մեկ խողովակով շրջիկ մեքենայով գազալցման գործունեություն իրականացնելու վերաբերյալ: 07.11.2006 թվականի Վաղարշակ Սկրտչյանի մեկ այլ հայտարարության մեջ նշված է Աշտարակ քաղաքում մեկ խողովակով շրջիկ մեքենայով գազալցման գործունեություն իրականացնելու վերաբերյալ:

Վերոնշյալ հայտարարություններից հետևում է, որ Վաղարշակ Սկրտչյանի կողմից ներկայացված յուրաքանչյուր հայտարարություն առանձին հայտարարություն է մեկ խողովակով գազալցման գործունեություն իրականացնելու վերաբերյալ: Հետևաբար՝ 2006 թվականի նոյեմբեր ամսին Վաղարշակ Սկրտչյանը գազալցման գործունեություն է իրականացրել ոչ թե մեկ խողովակով, այլ երկու առանձին խողովակներով, որոնց վերաբերյալ տվել է առանձին հայտարարություններ: «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ հաստատագրված վճարի վճարումը կատարվում է վճարողի կողմից ինքնուրույնաբար՝ յուրաքանչյուր ամսվա համար մինչև հաջորդ ամսվա 15-ը ներառյալ:

Դատարանը գտել է նաև, որ անճշտությունն առաջացել է հաշվարկի մեջ 2007 թվականի հոկտեմբեր ամիսը ներառելու հետևանքով:

Մինչդեռ սույն գործում առկա Վաղարշակ Սկրտչյանի հաստատագրված վճարի անձնական հաշվի քարտում 2007 թվականի հունվար ամսվա հաշվարկները կատարվել են 01.02.2007 թվականի դրությամբ: Նման տրամաբանությամբ էլ սեպտեմբեր ամսվա հաշվարկները կատարվել են 01.10.2007 թվականի դրությամբ: Մինչդեռ Դատարանը բռնագանձվող գումարի մեջ չի հաշվարկել 2007 թվականի սեպտեմբեր ամսվա 14 օրվա (մինչև գործունեության դադարեցումը) համար նախատեսված 975.000 ՀՀ դրամի չափով հաստատագրված գումարը:

Այսինքն՝ հաստատագրված վճարների գծով գումարը պետք է հաշվարկվի 2006 թվականի նոյեմբեր ամսվա համար՝ 2.250.000 ՀՀ դրամի չափով՝ երկու խողովակով գազալիցքավորման գործունեություն իրականացնելու համար, 2007 թվականի 8 լրիվ ամիսների համար՝ 18.000.000 ՀՀ դրամ և 2007 թվականի սեպտեմբեր ամսվա համար 975.000 ՀՀ դրամ՝ որպես 14 օրվա հաստատագրված վճարի գումար:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի համաձայն, Վարչական դատարանի վճռի մասը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել Վարչական դատարանի 11.04.2008 թվականի վճռի՝ հայցը մերժելու մասը և գործն այդ մասով ուղարկել Վարչական դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ՝ ս տ ո թ ա գ թ ու թ յ ու ն  
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր՝ ս տ ո թ ա գ թ ու թ յ ու ն ն եր*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒՐՆԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վարչական դատարանի վճիռ  
Վարչական գործ թիվ ՎԴ-2/0083/05/08  
Նախագահող դատավոր՝ Հ. Թորոսյան

Վարչական գործ թիվ **ՎԴ-2/0083/05/08**  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Դ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ. ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի հոկտեմբերի 31-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը Վարչական դատարանի 23.04.2008 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության Վարդենիսի հարկային տեսչության (այսուհետ՝ Ծառայություն) ընդդեմ «Պապ Գերասիմ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն)՝ 1.254.500 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Ծառայությունը պահանջել է բռնագանձել Ընկերությունից 1.254.500 ՀՀ դրամ:

Վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 23.04.2008 թվականի վճռով հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Դատարանը չի կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածը, որը պետք է կիրառել, իսպառել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ, 24-րդ հոդվածները, չի կիրառել «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 7-րդ և 35-րդ հոդվածները, 19-րդ հոդվածի 16.2 կետը, որոնք պետք է կիրառել:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Դատարանը հայցը մերժելիս անտեսել է, որ Ընկերության տնօրենը դատարան ներկայացրած իր դիմումով չի առարկել 1.254.500 ՀՀ դրամի չափով պարտավորություն ունենալու փաստի դեմ, այլ միայն հայտնել է, որ ներկայումս հնարավոր չէ նշված գումարը վճարել, քանի որ ընկերությունը չի գործում: Սինչդեռ Դատարանը դրանք ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածին համապատասխան չի համարել ապացուցման կարիք չունեցող:

Դատարանն անտեսել է նաև վարչական գործի նյութերում առկա Ընկերությանը քաղաքացիական դորտում կապիտալ շինարարություն իրականացնելու համար 11.03.2002 թվականին ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից տրամադրված լիցենզիան և պետական տուրքի գծով 1.254.500 ՀՀ դրամի չափով 2003-2004 թվականներին չկատարված պարտավորություն ունենալու մասին Ծառայության կազմած տեղեկանքը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վարչական դատարանի 23.04.2008 թվականի վճիռը և գործն ուղարկել նոր քննության:

**3.Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից 11.03.2002 թվականին Ընկերությանը տրվել է 6717 լիցենզիան քաղաքաշինական դորտում կապիտալ շինարարություն իրականացնելու համար:

2. Լիցենզիայի գործողության ժամկետը սահմանվել է մինչև 11.03.2005 թվականը:

3. Ծառայության 01.08.2006 թվականի տեղեկանքի համաձայն՝ Ընկերությունը պետական տուրքի գծով ունի 1.254.500 ՀՀ դրամի պարտավորություն, որից 200.000 ՀՀ դրամը՝ ապառք, 1.054.500 ՀՀ դրամը՝ տույժ: Դրանք առաջացել են 2003, 2004 թվականների ընթացքում պետական տուրքից և դրանց նկատմամբ հաշվարկված տույժերից:

4. Ընկերության տնօրենը Դատարանին հասցեագրված դիմումի մեջ նշել է, որ Ընկերությունը 2004 թվականից մինչ օրս չի գործում, ուստի հնարավորություն չունի վճարել բյուջեի հանդեպ առաջացած պարտավորությունը:

**4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ *վճռաբեկ բողոքը հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ:*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ապացուցման կարիք չունեն այն փաստերը, որոնք հակառակ կողմը չի վիճարկում, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գտնում է, որ դրանց ապացուցումն անհրաժեշտ է:

Չնայած սույն գործով Ընկերության տնօրենի կողմից ներկայացված դիմումի մեջ նշվել է, որ Ընկերությունը 2004 թվականից մինչ օրս չի գործում, ուստի հնարավորություն չունի վճարել բյուջեի հանդեպ ունեցած պարտավորությունը, այնուամենայնիվ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոնշյալ հոդվածը դատարանին թույլ է տալիս առանձին դեպքերում հակառակ կողմի ընդունած փաստի ապացուցումը համարել անհրաժեշտ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի «ժա» կետի համաձայն՝ Հաստատանի Հանրապետությունում պետական տուրքը զանձվում է *լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ տալու համար:*

---

---

Նույն օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքաշինության բնագավառում կապիտալ շինարարություն իրականացնելու համար տրված լիցենզիայի պետական տուրքը գանձվում է տարեկան՝ բազային տուրքի 100-ապատիկի չափով:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքով սահմանված կարգով պետական տուրքի վճարման ժամկետի հետաձգման գծով արտոնություն ունեցող վճարողի կողմից պետական տուրքի վճարման համար սահմանված ժամկետում վճարումը, ինչպես նաև նույն օրենքով սահմանված տարեկան պետական տուրքերի վճարման համար սահմանված ժամկետներում վճարումը չկատարելու դեպքում բյուջե չվճարված պետական տուրքի գումարները ենթակա են վճարողից բռնագանձման պետական բյուջե՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար 0,5 տոկոսի չափով հաշվարկված տույժի հետ միասին:

Սույն գործով Դատարանի կողմից հայցի մերժման հիմքում դրվել է այն հանգամանքը, որ հայցվորն իր պնդած փաստերը հաստատող բավարար իրավական և փաստաթղթային հիմնավորումներ չի ներկայացրել, որի պատճառով հայցադիմումով ներկայացված պահանջը դատական կարգով չի հիմնավորվել:

Բացի այդ, Դատարանը հաստատված է համարել, որ այդ Ընկերության պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքի համաձայն՝ դրանք գոյացել են 2004-2005 թվականների ընթացքում, մինչդեռ Ընկերությանը տրված լիցենզիայի գործողության ժամկետը ավարտվում է 11.03.2005 թվականին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս

1. գնահատում է ապացույցները,

2. որոշում է, թե գործի համար նշանակություն ունեցող որ հանգամանքներն են պարզվել և որոնք չեն պարզվել,

3. որոշում է տվյալ գործով կիրառման ենթակա օրենքները և այլ իրավական ակտերը,

4. որոշում է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ մերժելու հարցը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-րդ հոդվածի համաձայն՝ դատարանի վճիռը պետք է լինի օրինական և հիմնավորված:

**Վճռի իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ նյութական իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:**

**Վճռում ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:**

Վճռի իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա վճռի իրավակիրառ գործառույթը, ընդգծում դատական գործունեության և դատական վճռի օրինականությունը (տես՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն ընդդեմ «Քնար-88» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, քաղ. գործ թիվ 3-2504/ՏԴ(ՏԴ) (գումար բռնագանձելու պահանջով)):

Դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վճիռը կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին (տես՝ Անժելա Ղազարյանը, Արփիկ և Արմինե Գասպարյաններն ընդդեմ Շուշանիկ Սարգսյանի, Ոսկեհատ, Նունե, Հրանուշ Գասպարյանների՝ ժառանգական գույքը ժառանգների միջև բաժանելու պահանջի մասին, քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.12.2007 թվականի որոշումը, թիվ 3-1843(ՎԴ)): Դատական ակտի պատճառաբանվածության վերաբերյալ ՀՀ քաղաքացիա-

կան դատավարության օրենսգրքի 132-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածների պահանջը ենթադրում է, որ դատարանը պետք է պատճառաբանի նաև կողմի ներկայացրած ապացույցները ոչ բավարար համարելու վերաբերյալ իր դիրքորոշումը, *ինչպես նաև որոշի տվյալ փաստական հարաբերությունների նկատմամբ կիրառման ենթակա նորմը*, որը սույն գործով դատարանը չի կատարել:

Մասնավորապես, սույն գործով հայցվորի կողմից Դատարան է ներկայացվել ՀՀ քաղաքաշինության նախարարի կողմից 11.03.2002 թվականին Ընկերությանը տրված թիվ 6717 լիցենզիայի պատճենը և Ընկերության պարտավորությունների վերաբերյալ Ծառայության կողմից կազմված տեղեկանքը, որում նշված է, որ Ընկերության 1.254.500 ՀՀ դրամի չափով պետական տուրքի գծով պարտավորություններն առաջացել են 2003, 2004 թվականների պետական տուրքից և դրանց նկատմամբ հաշվարկված տույժերից: Այսինքն՝ վերոնշյալ տեղեկանքով հիմնավորվում է, որ Ընկերության պետական տուրքի գծով պարտավորությունները հաշվարկվել են 2003, 2004 թվականների պետական տուրքից և դրա նկատմամբ հաշվարկված տույժերից:

Հիմք ընդունելով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 7-րդ և 19-րդ հոդվածները, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ լիցենզավորված անձի մոտ յուրաքանչյուր տարի պետական տուրք վճարելու պարտավորությունը ծագում է լիցենզիա տալու ուժով: Այսինքն՝ Ընկերության մոտ պետական տուրք վճարելու պարտավորության առկայությունը կարող է հիմնավորվել համապատասխան իրավասու պետական մարմնի կողմից լիցենզիա տրված լինելու և այն Ընկերության կողմից արդեն իսկ վճարված չլինելու փաստով:

Հետևաբար, վերոնշյալ տեղեկանքով արձանագրված պարտավորությունները կատարված լինելու վերաբերյալ ապացույցների բացակայության պայմաններում այն բավարար հիմք է Ծառայության հայցը բավարարելու համար:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի համաձայն, Վարչական դատարանի վճիռը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Վարչական դատարանի 23.04.2008 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ՝ ստորագրություն  
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒՐՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վարչական դատարանի վճիռ  
Վարչական գործ թիվ ՎԴ/0193/05/08  
Նախագահող դատավոր՝ Ա.Ղազարյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/0193/05/08**  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*մախազահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի հոկտեմբերի 31-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը Վարչական դատարանի 11.04.2008 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության Ավանի հարկային տեսչության (այսուհետ՝ Ծառայություն) ընդդեմ «Վառադ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն)՝ 2.541.700 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Գործի դատավարական մախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Ծառայությունը պահանջել է բռնագանձել Ընկերությունից 2.541.700 ՀՀ դրամ:

Վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 11.04.2008 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը: Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Դատարանը չի կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր, սխալ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ և 26-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Պետական տուրքի գումարի վճարման մասով հայցը մերժելով՝ Դատարանը պատճառաբանել է, որ հայցվորը հայցադիմումին կից փաստաթղթերում և գործի քննության

ընթացքում չի ներկայացրել պետական տուրքի գանձման օբյեկտը՝ լիցենզիան: Հայցվորը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26 հոդվածի համաձայն, պետք է կրի փաստի վիճելի մնալու բացասական հետևանքները:

Հայցվորը գրկված էր լիցենզիան դատարանին ներկայացնելու հնարավորությունից, քանի որ այն գտնվել է նիստին չներկայացած Ընկերության մոտ: Ստեղծված պայմաններում լիցենզավորման առկայությունը ապացուցելու համար Ծառայությունը ներկայացրել է ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալի 14.12.2004 թվականին Ծառայությանը ներկայացրած տեղեկությունները՝ քաղաքաշինության նախարարության կողմից տրված լիցենզիաների մասին, որտեղ նշված է նաև 15.11.2004 թվականին Ընկերությանը տրված քաղաքացիական և էներգետիկ քաղաքաշինության ոլորտներում կապիտալ շինարարություն իրականացնելու լիցենզիաների առկայությունը:

Դատարանը հաշվի չի առել ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալի կողմից ներկայացրած տեղեկություններում պարունակվող Ընկերության՝ կապիտալ շինարարություն իրականացնելու լիցենզիա ստանալու վերաբերյալ ապացույցը՝ դրանով իսկ խախտելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24 հոդվածը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վարչական դատարանի 11.04.2008 թվականի վճիռը և այն փոփոխել՝ հայցը բավարարել ամբողջությամբ:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

*Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝*

1. Ծառայության պետի 05.05.2006 թվականի հանձնարարագրի հիման վրա Ընկերությունում իրականացվել է ստուգում, որի արդյունքում պետական տուրքի գծով հայտնաբերվել է 409.100 ՀՀ դրամ հարկային պարտավորություն լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ տալու համար նախատեսված պետական տուրքը չվճարելու համար:

2. ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալի գրության համաձայն՝ Ընկերությանը տրվել են 8936-01-2.1 Ի և 8937-01-2.1 Ի լիցենզիաներ քաղաքացիական և էներգետիկ ոլորտներում կապիտալ շինարարություն իրականացնելու համար:

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ *վճռաբեկ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ վարչական դատարանի 22 հոդվածի համաձայն՝ դատարանը ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Դատարանի կողմից բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտում իրականացնելու փաստը պարզելու համար հարկավոր է նախևառաջ ստուգել, թե արդյոք դատարանը հետազոտել է բոլոր **վերաբերելի** և թույլատրելի ապացույցները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 23 հոդվածի համաձայն՝ վերաբերելի է այն ապացույցը, որը ավելի կամ պակաս հավանական է դարձնում վեճը լուծելու համար էական նշանակություն ունեցող որևէ փաստի գոյությունը, քան այն կլիներ առանց այդ ապացույցի:

---

---

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի «Ժ» կետի՝ Հայաստանի Հանրապետությունում պետական տուրքը գանձվում է լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ տալու համար:

Սույն գործով պետական տուրքի մասով հայցը մերժելիս Դատարանը գտել է, որ հայցվորի կողմից գործի քննության ընթացքում չներկայացվեց պետական տուրքի գանձման օբյեկտը՝ լիցենզիան:

Մինչդեռ դատարանը գնահատման առարկա չի դարձրել այն հանգամանքը, որ ՀՀ - քաղաքաշինության նախարարի տեղակալի կողմից ներկայացված տեղեկությունները վերաբերելի ապացույց են և հավանական են դարձնում լիցենզիա տալու փաստը, քանի որ նշված տեղեկությունները ուղղակիորեն հավաստում են լիցենզիան տրամադրելու փաստը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալի կողմից տրված տեղեկությունները կարող են փոխարինել լիցենզիայի բնօրինակը գործի համար էական նշանակություն ունեցող փաստերը պարզելու գործում, քանի որ ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալի տեղեկությունները տրամադրվել են լիցենզիան տրամադրված մարմնի՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության պաշտոնատար անձի կողմից:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի համաձայն, Դատարանի վճիռը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույլալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: ՀՀ վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի վերը նշված հոդվածներով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Վարչական դատարանի 11.04.2008 թվականի վճիռը և այն փոփոխել. ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության Ավանի հարկային տեսչության հայցը պետական տուրքի մասով բավարարել. «Վառադ» ՍՊԸ-ից բռնագանձել 409.100 (չորս հարյուր ինը հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ պետական տուրքը: Վարչական դատարանի վճիռը մնացած մասով թողնել օրինական ուժի մեջ:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ ' ս տ ո թ ա գ թ ու թ յ ու ն  
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե ' ս տ ո թ ա գ թ ու թ յ ու ն ն եր*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒՐՔԻ ԴԱՏԱՐԱՆ**

Վարչական դատարանի վճիռ  
Վարչական գործ թիվ ՎԳ/1822/05/08  
Դատավոր՝ Գ. Դարիբյան

Վարչական գործ թիվ ՎԳ/1822/05/08  
2008թ.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ  
դատարան)

*նախագահությամբ* Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Դ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ. ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի դեկտեմբերի 26-ին,

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը Վարչական դատարանի 28.07.2008 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի Օլեգ Գոլովյանի ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ Կադաստր), երրորդ անձինք՝ Երևանի քաղաքապետարանի, «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի, «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ի՝ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելուն պարտավորեցնելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Յ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Օլեգ Գոլովյանը պահանջել է պարտադրել Կադաստրին կատարելու ք. Երևան, Արամի փողոց թիվ 7 հասցեում գտնվող 615,2քմ շինության և 203,1քմ - հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցումը:

Վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 28.07.2008 թվականի վճռով հայրը քավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:  
Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Օլեգ Գոլովյանը:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, որի արդյունքում չի կիրառել ՀՀ հողային օրենսգրքի 54-րդ, 55-րդ հոդվածները, 60-րդ հոդվածի առաջին մասի առաջին ենթակետը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 168-րդ հոդվածի 2-րդ մասը, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասը, որոնք պետք է կիրառեր, և կիրառել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածը, ՀՀ Սահմանադրության 8-րդ և 31-րդ հոդվածները, որոնք չպետք է կիրառեր:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Դատարանը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտման չի ենթարկել գործում առկա ապացույցները, անտեսելով այն հանգամանքը, որ 07.07.1997 թվականի թիվ 4270 սեփականության վկայականի համաձայն՝ Ս. Վարդանյանի, Ա. Սաֆարյանի և Օլեգ Գոլովյանի սեփականության իրավունքը գրանցվել է միայն 615,2քմ անավարտ բնակելի տան նկատմամբ, այնինչ դատարանի վճռով պատասխանող կողմը պարտավորեցվել է գրանցել Օլեգ Գոլովյանի, որպես շենքի համասեփականատիրոջ, սեփականության իրավունքը շինությանը ծանրաբեռնված հողամասի նկատմամբ:

Ք. Երևան, Արամի փողոց թիվ 7 հասցեում գտնվող 203,1քմ հողամասը պետական սեփականություն է, հետևաբար չի կարող գրանցվել Օլեգ Գոլովյանի անվամբ:

Բացի այդ, Դատարանը, չկիրառելով ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի առաջին մասի առաջին ենթակետը, անտեսել է այն հանգամանքը, որ ք. Երևան, Արամի փողոց թիվ 7 հասցեում գտնվող շենքը պատմության և մշակույթի հուշարձան է:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է մասնակիորեն բեկանել Վարչական դատարանի 28.07.2008 թվականի վճիռը և այն փոփոխել՝ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելուն պարտադրելու պահանջի մասով Օլեգ Գոլովյանի հայցը մերժել:

### **2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմքերը և փաստարկները.**

04.07.1997թ.-ին գրանցվել է Էդիկ Սիմոնյանի և Սիլվա Գրիգորյանի սեփականության իրավունքը ք. Երևան, Արամի 7 հասցեի 203,1 քմ հողամասի և 615,2 քմ անավարտ շինության նկատմամբ, նրանց տրվել է թիվ 4270 սեփականության վկայագիրը, որտեղ հողամասի բնութագիրը բաժնում նշված է 203,1 քմ հողամաս: 1997թ.-ի հուլիսի 5-ին Էդիկ Սիմոնյանը և Սիլվա Գրիգորյանը ք. Երևան, Արամի 7 հասցեի անավարտ բնակելի տունը և հողամասը վաճառել են Օլեգ Գոլովյանին, Սերգեյ Վարդանյանին և Աշոտ Սաֆարյանին: Պայմանագրի 3-րդ կետում նշված է, որ անավարտ բնակելի տան տարածությունը կազմված է 203,1 քմ հողամասից և 615,2 քմ ընդհանուր մակերեսից: 07.07.1997թ.-ին տրված սեփականության թիվ 4270 վկայագրի համաձայն՝ Օլեգ Գոլովյանի, Սերգեյ Վարդանյանի և Աշոտ Սաֆարյանի սեփականության իրավունքը գրանցվել է ք. Երևան, Արամի 7 հասցեի անավարտ բնակելի տան 615,2 քմ շինության և 203,1 քմ հողամասի նկատմամբ:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոքի պատասխան ներկայացրած անձը խնդրել է վճռաբեկ բողոքը մերժել:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ժողովրդական պատգամավորների Սպանդարյանի շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի 10.06.1993 թվականի թիվ 22/24 որոշմամբ թույլատրվել է Արամի փողոցի 7-րդ շենքի թիվ 3 բնակարանը վաճառել Կարինե Պետրոսյանին: Ի կատարումն նշված որոշման Սպանդարյանի շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի և Կարինե Պետրոսյանի միջև կնքվել է 17.06.1993թ.-ի պայմանագիրը, որով վաճառել է Արամի փողոցի 7-րդ - շենքի թիվ 3 բնակարանը՝ 95,95քմ ընդհանուր մակերեսով:

---

---

2. 04.07.1996 թվականի թիվ 4270 անշարժ գույքի սեփականության վկայականի համաձայն՝ Արամի փողոցի 7-րդ շենքի թիվ 3 բնակարանը՝ 95,95քմ ընդհանուր մակերեսով, սեփականության իրավունքով հաշվառվել է Էդիկ Սիմոնյանի և Սիլվա Գրիգորյանի անվամբ՝ համապատասխանաբար 2/3 և 1/3 բաժիններով:

3. ՀՀ ժողովրդական պատգամավորների Երևանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի՝ Արամի փողոցի 7-րդ շենքի վերակառուցման մասին 25.03.1994 թվականի թիվ 12/9 որոշման համաձայն՝ շենքը պատմության և մշակույթի հուշարձան է:

4. 05.07.1997 թվականին Էդիկ Սիմոնյանի, Սիլվա Գրիգորյանի՝ որպես վաճառողների, և Սերգեյ Վարդանյանի, Աշոտ Սաֆարյանի, Օլեգ Գոլովյանի՝ որպես գնորդների, միջև կնքվել է անավարտ բնակելի տան առուծախի պայմանագիր, որով գնորդները վաճառողներից ձեռք են բերել Երևանի Արամի փողոց թիվ 7 հասցեում գտնվող անավարտ բնակելի տունը՝ 615,2քմ ընդհանուր մակերեսով: Պայմանագիրը վավերացվել է նոտարական կարգով: Նշված պայմանագրից ծագող իրավունքերը ստացել են պետական գրանցում՝ համաձայն 07.07.1997 թվականի թիվ 4270 սեփականության վկայականի:

5. Կադաստրի ղեկավարի 08.05.2007թվականի թիվ ԵԼ-2839 գրության համաձայն՝ Արամի փողոց թիվ 7 հասցեում Սերգեյ Վարդանյանի, Աշոտ Սաֆարյանի և Օլեգ Գոլովյանի անվամբ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով հաշվառված է 615,2քմ ընդհանուր մակերեսով բնակելի տուն և 203,1քմ մակերեսով հողամաս՝ վարձակալության իրավունքով:

6. Կադաստրի ղեկավարի 18.05.2007թ. թիվ ԵԼ-3179 գրությունով պետական գրանցումը մերժվել է հետևյալ պատճառաբանությամբ. «1. Արամի փող. թիվ 7 շենքը, որը պատմության և մշակույթի հուշարձան է, որպես բնակարան Սպանդարյանի շրջ.գործկոմի 10.06.1993 թվականի 22/24 որոշմամբ սեփականաշնորհվել է Կարինե Պետրոսյանին: 03.07.1996 թվականի 3873 առուծախի պայմանագրով բնակարանը գնել են Էդիկ Սիմոնյանը և Սիլվա Գրիգորյանը, և այն հաշվառվել է վերջիններիս անվամբ, սակայն «Մանանա» արտադրական կոդայերատիվին հատկացվել է 450 քմ հողամաս օֆիսի և հյուրանոցի վերակառուցման համար, մինչդեռ տեղում 450 քմ սահմանագատված հողամաս առկա չէ: Շենքով ծանրաբեռնված հողամասի մակերեսը 210քմ է»: Նշված գրությամբ միաժամանակ հայտնվել է, որ գույքը գտնվում է բացառիկ գերակա հանրային շահ ճանաչված տարածքում:

7. ՀՀ կառավարության 25.01.2007 թվականի թիվ 108-Ն որոշմամբ նույն որոշման թիվ 1 հավելվածում նշված տարածքներում իրականացվող քաղաքաշինական ծրագրերի նկատմամբ ճանաչվել է բացառիկ՝ գերակա հանրային շահը: Նշված որոշման թիվ 1 հավելվածի ցանկի 29-րդ սյունակում նշված է նաև Արամի թիվ 7 հասցեում գտնվող բնակելի տան մասին:

#### **4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.**

*Քննելով վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ հողային օրենսգրքի 55-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիներին, իրավաբանական անձանց կամ համայնքներին չպատկանող հողերը պետության սեփականությունն են:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 168-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քաղաքացիներին, իրավաբանական անձանց կամ համայնքներին չպատկանող հողը և բնական այլ պաշարները պետական սեփականություն են:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշմամբ արդեն իսկ արտահայտել է իրավական դիրքորոշում այն մասին, որ վեճի առարկա հողամասը ֆիզիկական կամ իրավաբանական անձին պատկանելու մասին որևէ ապացույցի բացակայության դեպքում գործում է դրա՝ պետական սեփականության լինելու կանխավարկածը (իրավական հիմնավորումները տես՝ Սիմոն Սարգսյան ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին, 12.12.2007թ., քաղաքացիական գործ թիվ 3-1835 (Ա)):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Դատարանը Օլեգ Գոլովյանի՝ Արամի փողոց թիվ 7 հասցեում գտնվող 203,1քմ մակերեսով հողամասի նկատմամբ սեփականության իրավունք ունենալու հանգամանքը հաստատել է առանց բավարար ապացույցների առկայության, քանի որ սույն գործում առկա ապացույցներով չի հիմնավորվում Երևան քաղաքի Արամի փողոց թիվ 7 հասցեում գտնվող շենքի թե նախկին սեփականատերերի և թե ներկայիս սեփականատերերի մոտ հողամասի նկատմամբ սեփականության իրավունք երբևիցե ձեռք բերելու հանգամանքը: Մասնավորապես, վերոնշյալ ապացույցներով չի հիմնավորվում Օլեգ Գոլովյանի՝ Արամի փողոց թիվ 7 հասցեում գտնվող 203,1քմ մակերեսով հողամասի նկատմամբ սեփականության իրավունք ունենալու հանգամանքը:

Փաստորեն, Դատարանը պարտավորեցրել է Կադաստրին գրանցելու հողամասի նկատմամբ Օլեգ Գոլովյանի սեփականության իրավունքը՝ առանց հաշվի առնելու այն հանգամանքը, որ այդ հողամասը գտնվում է պետության սեփականության ներքո:

Բացի այդ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի համաձայն՝ արգելվում է քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով փոխանցել պետական և համայնքային սեփականություն հանդիսացող այն հողամասերը, որոնք պատմական և մշակութային արժեքների օբյեկտներ են:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Արամի փողոցի թիվ 7 հասցեում գտնվող շենքը պատմական և մշակութային օբյեկտ է, հետևաբար այդ շենքի տակ գտնվող հողամասը, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ուժով, չէր կարող սեփականության իրավունքով փոխանցվել Օլեգ Գոլովյանին:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով կիրառելի չեն Դատարանի կողմից վկայակոչած՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածում ամրագրված ձևական պահանջները չարաչափելու արգելքին վերաբերող, ինչպես նաև սեփականության իրավունքի պաշտպանությանը վերաբերող ՀՀ Սահմանադրության 8-րդ և 31-րդ հոդվածներում ամրագրված դրույթները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարություն օրենսգրքի 227-228-րդ հոդվածների ուժով Վարչական դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, ՀՀ վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու ՀՀ վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը նշված հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը

---

---

բխում է արդարադատության արդյունավետության շահերից : Գատական ակտը փոփոխելիս՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Վարչական դատարանի 28.07.2008 թվականի վճռի՝ հողամասի նկատմամբ Օլեգ Գոլովյանի սեփականության իրավունքի պետական գրանցման հայցի մասը և այն փոփոխել: Օլեգ Գոլովյանի հայցի նշված մասը մերժել:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ՝ ս տ որ ա գր ու թ յ ու ն  
Գ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր՝ ս տ որ ա գր ու թ յ ու ն ն եր*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՈՒՐՄԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Վարչական դատարանի վճիռ  
Վարչական գործ թիվ ՎԴ/1494/05/08  
Դատավոր՝ Ռ. Հակոբյան

Վարչական գործ թիվ ՎԴ/1494/05/08  
2008թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ  
դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Դ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ. ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի դեկտեմբերի 26-ին,

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը Վարչական դատարանի 01.08.2008 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի Երևանի քաղաքապետարանի ընդդեմ Լենո Ջախարյանի՝ տարածքը նախկին տեսքի բերելուն պարտավորեցնելու և 200.000 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջների մասին,

Պ Ա Ր Ձ Ե Ց

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Երևանի քաղաքապետարանը պահանջել է բռնագանձել Լենո Ջախարյանից Երևանի քաղաքապետարանի 07.11.2007 թվականի որոշմամբ նշանակված 200.000 ՀՀ դրամ վարչական տուգանքի գումարը և պարտավորեցնել տարածքը բերել նախկին տեսքի:

Վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 01.08.2008 թվականի վճռով 200.000 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասով գործի վարույթը կարճվել է՝ հայցվորի կողմից հայցապահանջի նշված մասից հրաժարվելու հիմքով, իսկ տարածքը նախկին տեսքի բերելուն պատասխանողին պարտավորեցնելու մասով հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:  
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Դատարանը սխալ է մեկնաբանել «Երևան քաղաքում պետական կառավարման մասին» ՀՀ Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-727 հրամանագրի 1.13-րդ կետի*

---

---

*«բ» ենթակետի պահանջները, ինչպես նաև չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 3-րդ կետը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Դատարանը եզրահանգելով, որ բացակայում են տարածքը նախկին տեսքի բերելուն Լենո Չախարյանին պարտավորեցնելու իրավական հիմքերը, սխալ է մեկնաբանել ՀՀ - Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-727 հրամանագրի 1.13-րդ կետի «բ» ենթակետը, համաձայն որի՝ Երևանի քաղաքապետը քաղաքաշինության, բնակարանային և կոմունալ տնտեսության բնագավառում իր իրավասության սահմաններում միջոցներ է ձեռնարկում ապօրինի շինարարության կանխման, կասեցման և վերացման ուղղությամբ: Դատարանը հանգել է սխալ եզրակացության, որ «միջոցներ ձեռնարկելը» չի նշանակում առանց վարչական ակտի ընդունման պարտավորեցման հայցադիմում դատարան ներկայացնելը: Դատարանի նշված եզրահանգումն անհիմն է, քանի որ տարածքը նախկին տեսքի բերելու առաջարկությունը նախատեսված է Երևանի քաղաքապետի՝ վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 07.11.2007 թվականի թիվ Վ-18/4 որոշմամբ:

Դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 3-րդ կետը, որի հետևանքով սխալ եզրահանգում է արել այն մասին, որ ինքնակամ կառույցը քանդելուն պարտավորեցնելու վերաբերյալ որևէ նորմ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով կամ որևէ այլ իրավական ակտով նախատեսված չէ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վարչական դատարանի 01.08.2008 թվականի վճռի՝ հայցը մերժելու մասը և այն փոփոխել՝ հայցն այդ մասով բավարարել:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 05.09.2005 թվականի թիվ 1212759 վկայականի համաձայն՝ Նորք-Մարաշ համայնքի Նորքի այգիներ թիվ 180<sup>ա</sup> հասցեում գտնվող 63,9քմ մակերեսով բնակելի տունը, 21քմ օժանդակ շինությունը և 0,05հա մակերեսով հողամասը սեփականության իրավունքով պատկանում է Լենո Չախարյանին:

2. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության աշխատակիցների 26.10.2007 թվականի արձանագրության համաձայն՝ Նորքի այգիներ թիվ 180<sup>ա</sup> հասցեում հայտնաբերել են «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի խախտման փաստ, այն է՝ Լենո Չախարյանի կողմից Նորքի այգիներ թիվ 180<sup>ա</sup> հասցեում գտնվող սեփական տան վրա, առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի, ինքնակամ կառուցվել է 64քմ մակերեսով մանսարդային հարկ:

3. Երևանի քաղաքապետի՝ վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 07.11.2007 թվականի թիվ Վ-18/4 որոշման համաձայն՝ Լենո Չախարյանը, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով, ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ 200.000 ՀՀ դրամ տուգանքի տեսքով: Նշված որոշմամբ Լենո Չախարյանին առաջարկվել է նաև միջոցներ ձեռնարկել իրավախախտման պատճառները և պայմանները վերացնելու ուղղությամբ:

4. Երևանի քաղաքապետի՝ վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 07.11.2007 թվականի թիվ Վ-18/4 որոշմամբ նշանակված 200.000 ՀՀ դրամ վարչական տուգանքի գումարը Լենո Չախարյանի կողմից վճարվել է:

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.**

*Քննելով վճռաբեկ բողոքը վերը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

«Երևան քաղաքում պետական կառավարման մասին» ՀՀ Նախագահի 06.05.1997 թվականի թիվ ՆՀ-727 հրամանագրի 1.13-րդ կետի բ) ենթակետի համաձայն՝ քաղաքաշինության, բնակարանային և կոմունալ տնտեսության բնագավառներում Երևանի քաղաքապետն իրականացնում է քաղաքաշինական գործունեության հսկողությունը, միջոցներ է ձեռնարկում ապօրինի շինարարության կանխման, կասեցման և վերացման ուղղությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի առաջին կետի համաձայն՝ ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված շենքը, շինությունը կամ այլ կառույցը: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցը: Չօրինականացված ինքնակամ կառույցը պետության, համայնքի կամ այլ շահագրգիռ անձի հայցով, որի իրավունքները և օրենքով պահպանվող շահերը խախտվել են, ենթակա է քանդման, իսկ հողամասը՝ նախկին վիճակի վերականգնման՝ հողամասի սեփականատիրոջ հաշվին:

Սույն գործի փաստերից հետևում է, որ առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի, Լենո Չախարյանն ինքնակամ կառուցել է 64քմ մակերեսով մանսարդային հարկ, որի համար Երևանի քաղաքապետի 07.11.2007 թվականի թիվ Վ-18/4 որոշմամբ ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով: Ընդ որում, Երևանի քաղաքապետը, վերը նշված վարչական իրավախախտման կապակցությամբ հարուցված վարչական վարույթի շրջանակներում, 07.11.2007 թվականի թիվ Վ-18/4 որոշմամբ առաջարկել է Լենո Չախարյանին միջոցներ ձեռնարկել իրավախախտման պատճառները և պայմանները վերացնելու ուղղությամբ:

Փաստորեն, Երևանի քաղաքապետը, ՀՀ Նախագահի 06.05.1997թվականի թիվ ՆՀ-727 հրամանագրով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում, միջոցներ է ձեռնարկել ապօրինի շինարարության վերացման ուղղությամբ, որպիսի գործողություններն իրենց մեջ ընդգրկում են նաև ինքնակամ կառույցի քանդման ու հողամասի սեփականատիրոջ հաշվին հողամասի նախկին վիճակը վերականգնելու ուղղությամբ համապատասխան միջոցների ձեռնարկումը:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում Դատարանի եզրահանգումն այն մասին, որ բացակայում է տարածքը նախկին տեսքի բերելուն Լենո Չախարյանին պարտավորեցնելու պահանջի բավարարման իրավական հիմքերը:

Բացի այդ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Երևանի քաղաքապետի 07.11.2007 թվականի թիվ Վ-18/4 որոշմամբ Լենո Չախարյանին առաջարկվել է տարածքը բերել նախկին տեսքի, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անհիմն է դատարանի եզրահանգումն այն մասին, որ Երևանի քաղաքապետարանը պարտավորեցման հայցադիմում է ներկայացրել դատարան առանց վարչական ակտի ընդունման:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարություն օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վարչական դատարանի վճիռը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու ՀՀ վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

---

---

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործն ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը նշված հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից: Դատական ակտը փոփոխելիս՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Վարչական դատարանի 01.08.2008 թվականի վճռի՝ հայցը մերժելու մասը և այն փոփոխել՝ հայցը բավարարել. պարտավորեցնել Լենո Ջախարյանին ք. Երևան, Նորքի այգիներ թիվ 180<sup>ա</sup> հասցեում գտնվող տարածքը բերել նախկին տեսքի:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ՝ ս տ որ ա գր ու թ յ ու ն  
Գ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր՝ ս տ որ ա գր ու թ յ ու ն ն եր*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒՐՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վարչական դատարանի վճիռ  
Վարչական գործ թիվ ՎԴ-1/0052/05/08  
Նախագահող դատավոր՝ Հ.Հովհաննիսյան

Վարչական գործ թիվ **ՎԴ-1/0052/05/08**  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Ա.ՍԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ե.ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի դեկտեմբերի 26-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Հ.Թոսունյան» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) տնօրեն Հակոբ Թոսունյանի վճռաբեկ բողոքը Վարչական դատարանի 11.07.2008 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության Կապանի տարածքային հարկային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) ընդդեմ Ընկերության տնօրեն Հակոբ Թոսունյանի՝ 20.000 դրամ վարչական տուգանքի բռնագանձման պահանջի մասին, և ըստ հակընդդեմ հայցի՝ 25.03.2008 թվականի թիվ 087048 որոշումը և 20.02.2008 թվականի թիվ 1110403 ակտը վերացնելու պահանջների մասին,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Տեսչությունը պահանջել է Ընկերության տնօրեն Հակոբ Թոսունյանից բռնագանձել 20.000 դրամ վարչական տուգանքի գումարը:

Հակընդդեմ հայցով Հակոբ Թոսունյանը պահանջել է վերացնել Տեսչության 25.03.2008 թվականի թիվ 087048 որոշումը և 20.02.2008 թվականի թիվ 1110403 ակտը:

Վարչական դատարանի 11.07.2008 թվականի վճռով հայցը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժվել:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Հակոբ Թոսունյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Տեսչությունը:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածի պահանջները:*

---

---

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Հակընդդեմ հայցը մերժվել է վիճարկվող ակտը բողոքարկելու ժամկետների բաց թողնման պատճառաբանությամբ: Վարչական դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ ակտը բողոքարկվել է ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության գանգատարկման հանձնաժողովին, որպիսի պայմաններում դատական կարգով ակտի բողոքարկման համար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված են այլ ժամկետներ:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վարչական դատարանի 11.07.2008 թվականի վճիռը՝ 20.01.2008 թվականի թիվ 1110403 ակտն անվավեր ճանաչելու պահանջը մերժելու մասով, այդ մասով փոփոխել դատական ակտը՝ հակընդդեմ հայցը բավարարել:

### **2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմքերը և փաստարկները.**

Վարչական դատարանի կողմից դատական սխալ թույլ չի տրվել: Անձն անհիմն չի գրկվել դատական պաշտպանության իրավունքից, քանի որ իրավունքների և պարտականությունների ծագման հիմք է հանդիսանում վարչական ակտի ուժի մեջ մտնելը: Այդ պահից առաջանում է անձի օրենքով երաշխավորված իրավական պաշտպանության միջոցներից օգտվելու իրավական հնարավորությունը, որից օգտվել է պատասխանողը՝ վարչական տուգանքի որոշումը վերացնելու պահանջով դիմելով դատական պաշտպանության: Նշված պահանջը իրավացիորեն մերժվել է Վարչական դատարանի կողմից:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության ակտի 14.02.2008 թվականի թիվ 1110403 հանձնարարագրի հիման վրա իրականացված ստուգման արդյունքում Տեսչության 20.02.2008 թվականի թիվ 1110403 ակտով Ընկերությանն առաջադրվել են լրացուցիչ հարկային պարտավորություններ:

2. Ընկերության տնօրենը ակտի օրինակը ստացել է 22.02.2008 թվականին:

3. 13.03.2008 թվականին ակտը բողոքարկվել է ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության գանգատարկման հանձնաժողովին (այսուհետ՝ Հանձնաժողով):

4. Հանձնաժողովի 28.03.2008 թվականի որոշմամբ ակտը թողնվել է անփոփոխ:

5. Ակտի վիճարկման պահանջը դատարան է ներկայացվել 20.05.2008 թվականին:

### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկման հայցի դեպքում հայցը դատարան կարող է ներկայացվել վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում, իսկ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այն դեպքերում, երբ վարչական մարմնի ընդունած ակտը կամ ակտը չընդունելը կամ գործողություն կատարելը կամ չկատարելը բողոքարկվել է վարչական կարգով, սույն հոդվածով սահմանված ժամկետները հաշվարկվում են բողոքի քննության համար սահմանված ժամկետի ավարտից հետո:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 46-րդ - հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վարչական վարույթի առավելագույն ժամկետը 30 օր է:

Սույն գործով հայցի մերժման հիմքում դրվել է այն հանգամանքը, որ Ընկերությունը բաց է թողել վարչական ակտի վիճարկման ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետը:

Վարչական դատարանի վերոնշյալ եզրահանգումը Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում հետևյալ պատճառաբանությամբ.

Տեսչության 20.02.2008 թվականի թիվ 1110403 ակտն Ընկերության տնօրենին ներկայացվել է 22.02.2008 թվականին: 13.03.2008 թվականին ակտը վարչական կարգով բողոքարկվել է Հանձնաժողովին, որի 28.03.2008 թվականի որոշմամբ ակտը թողնվել է անփոփոխ: Վերոնշյալից հետևում է, որ Տեսչության 20.02.2008 թվականի ակտը դատական կարգով կարող էր բողոքարկվել 14.04.2008-ից (վարչական կարգով ակտի բողոքարկման համար սահմանված եռեսնօրյա ժամկետն ավարտվելու հաջորդ օրվանից) հաշվարկված երկու ամսվա ընթացքում՝ մինչև 14.06.2008 թվականը:

Սույն գործով Տեսչության 20.02.2008 թվականի թիվ 1110403 ակտի վիճարկման պահանջը դատարան է ներկայացվել 20.05.2008 թվականին: Այսինքն, Ընկերությունն ակտի վիճարկման պահանջը դատարան է ներկայացրել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածի պահանջների պահպանմամբ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների խախտման արդյունքում պատասխանողը գրկվել է դատական կարգով բողոքարկված վարչական ակտի ըստ էության քննության հնարավորությունից:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի համաձայն, Վարչական դատարանի վճիռը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ, 240-241<sup>1</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել Վարչական դատարանի 11.07.2008 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ՝ ս տ որ ա գր ու թ յ ու ն  
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր՝ ս տ որ ա գր ու թ յ ու ն ն եր*



**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով:

*Դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի պահանջները, սխալ է մեկնաբանել ՀՀ հողային օրենսգրքի 72-րդ հոդվածը:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Ռուբեն Միրաքյանը պահանջել է մասնակիորեն անվավեր ճանաչել Քաղաքապետի 09.11.2005 թվականի թիվ 2391-Ա որոշման 100-րդ կետը և սեփականության իրավունքի գրանցումը՝ 1/2 մասով այն հիմքով, որ տարածքի նկատմամբ Ռուբեն Միրաքյանի օգտագործման իրավունք ունենալու պայմաններում վիճելի որոշմամբ ճանաչվել է միայն Եվա Գևորգյանի սեփականության իրավունքը: Այսինքն՝ Ռուբեն Միրաքյանի կողմից Քաղաքապետի որոշման իրավաչափությունը չի վիճարկվել: Մինչդեռ, Դատարանը Քաղաքապետի 09.11.2005թ. թիվ 2391-Ա որոշման 100-րդ կետը և Երևանի Լեռնի փողոցի 76/5 բնակելի տան նկատմամբ Եվա Գևորգյանի սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր է ճանաչել ամբողջությամբ՝ եզրահանգելով, որ վիճարկվող որոշումն իրավաչափ չէ: Այսինքն՝ Դատարանը, ըստ էության, դուրս է եկել հայցապահանջի սահմաններից, ինչը հանգեցրել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի խախտմանը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վարչական դատարանի 30.06.2008 թվականի վճիռը, փոփոխել այն կամ գործն ուղարկել համապատասխան դատարան նոր քննության:

**2.1 Ռուբեն Միրաքյանի վճռաբեկ բողոքի պատասխանի հիմքերը և հիմնավորումները.**

Վարչական դատարանը կատարելով գործի ապացույցների բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտություն և վերլուծություն հանգել է ճիշտ հետևության, քանի որ գործի քննությամբ հիմնավորվել է, որ Ռուբեն Միրաքյանը վիճելի տարածքի օրինական օգկագործող է:

**2.2 Քաղաքապետարանի վճռաբեկ բողոքի պատասխանի հիմքերը և հիմնավորումները.**

Վարչական դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ հողային օրենսգրքի 72-րդ հոդվածը, որը հիմք է հանդիսացել վիճարկվող որոշման ընդունման համար: Քաղաքապետի որոշումն օրինական է, հետևաբար այն չի կարող անվավեր ճանաչվել: Նման պայմաններում վճռաբեկ բողոքի փաստարկները հիմնավոր են:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունի հետևյալ փաստը՝

Դատարանը 30.05.2008 թվականի վճռով Քաղաքապետի 09.11.2005 թվականի թիվ 2391-Ա որոշումը և Եվա Գևորգյանի սեփականության իրավունքի գրանցումը մասնակի անվավեր ճանաչելու և տան 1/2 մասի սեփականատեր ճանաչելու պահանջների մասին հայցը մասնակիորեն բավարարելիս Քաղաքապետի վերոնշյալ որոշումը և Եվա Գևորգյանի սեփականության իրավունքի գրանցումը անվավեր է ճանաչել ամբողջությամբ:

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝ վճռաբեկ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ Վարչական դատարանում գործը հարուցում է միայն հայցի հիման վրա: Իսկ նույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ Վարչական դատարանը գործն ըստ էության

---

---

լուծող դատական ակտ կայացնելիս որոշում է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը:

Վերոնշյալից հետևում է, որ դատարանը պարտավոր է վարչական գործը հարուցել միմիայն համապատասխան հայցի հիման վրա, գործը քննել և վեճը լուծել միմիայն այդ գործով ներկայացված հայցապահանջների շրջանակում:

Ռուբեն Միրաքյանը պահանջել է մասնակիորեն անվավեր ճանաչել Քաղաքապետի 09.11.2005 թվականի թիվ 2391-Ա որոշման 100-րդ կետը և սեփականության իրավունքի գրանցումը՝ 1/2 մասով այն հիմքով, որ տարածքի նկատմամբ Ռուբեն Միրաքյանի օգտագործման իրավունք ունենալու պայմաններում վիճելի որոշմամբ ճանաչվել է միայն Եվա Գևորգյանի սեփականության իրավունքը: Մինչդեռ, Գատարանը Քաղաքապետի որոշման 100-րդ կետը և Եվա Գևորգյանի սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր է ճանաչել ամբողջությամբ: Այսինքն՝ Գատարանը, դուրս է եկել հայցի շրջանակներից, ինչը հանգեցրել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ, 64-րդ և 113-րդ հոդվածների պահանջների խախտմանը և վարչական գործի սխալ լուծմանը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների համաձայն, Գատարանի վճիռը բեկանելու համար:

Ռուբեն Միրաքյանի վճռաբեկ բողոքի պատասխանում ներկայացված փաստարկները հերքվում են վերոնշյալ պատճառաբանություններով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Վարչական դատարանի 30.05.2008 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ստորագրություն  
Գ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՈՒՐՄԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Վարչական դատարանի վճիռ  
Վարչական գործ թիվ ՎԳ/0292/05/08  
Նախագահող դատավոր՝ Ա.Արմվյան

Վարչական գործ թիվ ՎԳ/0292/05/08  
2008թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ  
դատարան)

*նախագահությամբ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի հոկտեմբերի 31-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Գրիգոր Գավալյանի վճռաբեկ բողոքը Վարչա-  
կան դատարանի 16.05.2008 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի Գրիգոր Գավալյանի ընդդեմ  
ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման  
ծառայության Երևանի ստորաբաժանման Մալաթիա-Սեբաստիա բաժանմունքի (այսու-  
հետ՝ Ծառայություն)՝ արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնե-  
լու մասին հարկադիր կատարողի 05.12.2007 թվականի որոշումը վերացնելու պահանջի  
մասին,

Պ Ա Ր Ձ Ե Ց

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Գրիգոր Գավալյանը պահանջել է վերացնել Ծառայության  
05.12.2007 թվականի արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնե-  
լու մասին որոշումը:

Վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 16.05.2008 թվականի վճռով հայցը  
մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Գրիգոր Գավալյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմ-  
նավորումներով.

*Դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածը,  
չի կիրառել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդ-  
վածի 1-ին մասի 1-ին կետը, նույն օրենքի 28-րդ հոդվածը, որոնք պետք է կիրառել, կիրա-*

ռել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածը, որը չպետք է կիրառեն:

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Դատարանը գործի բազմակողմանի քննություն չի իրականացրել, գնահատման չի արժանացրել գործում առկա մի շարք ապացույցներ: Մասնավորապես, 01.11.2006 թվականին և 14.10.2006 թվականին Հրայր Ազանիկյանի լիազորված անձ Գառնիկ Ազանիկյանը գրել է ստացականներ այն մասին, որ Անահիտ Խանգեղյանից ստացել է Գրիշա Գավալյանի պարտքից 2000 ԱՄՆ դոլլար: Վերը նշված ստացականներով, ինչպես նաև Կարինե Մայիլյանի բացատրությամբ, Անահիտ Խանգեղյանի՝ Ծառայության Երևանի ստորաբաժանման պետին ուղղված դիմումով հիմնավորվում է, որ Գրիգոր Գավալյանի կողմից պարտատերերի պարտքի գումարն ամբողջությամբ մարվել է, և կողմերը հաշտության են եկել գործի հարկադիր կատարման փուլում:

Հրայր Ազանիկյանը երկրորդ անգամ Ծառայություն է ներկայացրել 30.05.2006 թվականին տրված թիվ 06-348 նույն կատարողական թերթը, որը փաստացի կատարված է եղել, որի հիման վրա հարուցված վարույթը ենթակա էր կարճման՝ Դատական ակտերի հարկադիր կատարման մասին օրենքի 42-րդ հոդվածում կատարողական վարույթը փաստացի կատարված լինելու հիմքով:

Անհիմն են որոշակի բանկային տոկոսներ հաշվարկման ենթակա լինելու վերաբերյալ Դատարանի պատճառաբանությունները, քանի որ գումարը Ծառայության դեպոզիտ հաշվին մուծված լինելու պայմանում կողմերը տոկոսներ պահանջելու իրավունք չունեն, քանի որ նրանք ցանկացած ժամանակ կարող էին ստանալ այդ գումարները:

Անհիմն են նաև Դատարանի այն պատճառաբանությունները, որ Անահիտ Խանգեղյանը Ծառայությունում Հրայր Ազանիկյանի շահերը ներկայացնելու լիազորություն չի ունեցել: Մինչդեռ, 17.06.2004 թվականին 3 տարի ժամկետով Հրայր Ազանիկյանի կողմից տրված և նոտարական կարգով վավերացված լիազորագրում հաստիկ նշվել է, որ Անահիտ Խանգեղյանն իրավունք ունի հանդես գալ Ծառայությունում, Հրայր Ազանիկյանի փոխարեն տալ դիմումներ, ձևակերպել և ստանալ փաստաթղթեր, ստորագրել և կատարել այն բոլոր գործողությունները, որոնք կապված կլինեն տվյալ հանձնարարության հետ:

Սույն գործով երրորդ անձ Կարինե Մայիլյանի կողմից Երևանի Ռստիկանության վարչության Քանաքեռ-Զեյթուն բաժնում տրված բացատրության մեջ նշված է, որ վերջինս իր պարտքի գումարը պետք է ստանա Հրայր Ազանիկյանից Ծառայություն փոխանցված 5.600 ԱՄՆ դոլլար դեպոզիտ հաշվից, որն էլ պետք է տար նրան լիազորված անձ Անահիտ Խանգեղյանը, ուստի Կարինե Մայիլյանն իր բացատրության մեջ նշել է, որ Գրիգոր Գավալյանից պարտք ու պահանջ չունի:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վարչական դատարանի 16.05.2008 թվականի վճիռը և փոփոխել կամ գործն ուղարկել նոր քննության:

### **3.Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Վերաքննիչ դատարանի թիվ 06-348 գործով վճռվել է Գրիգոր Գավալյանից, Լարիսա Ասաթյանից, Լիլիթ Ամիրջանյանից համապարտությամբ հօգուտ Հրայր Ազանիկյանի բռնագանձել 1000 ԱՄՆ դոլլար, դրա նկատմամբ հաշվարկել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսներ մինչև վճռի փաստացի կատարման օրը: Նույն ակտով վճռվել է Գրիգոր Գավալյանից հօգուտ Հրայր Ազանիկյանի բռնագանձել 1100 ԱՄՆ դոլլարին համարժեք դրամ և դրա նկատմամբ հաշվարկել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսներ: Նշված վճիռն օրինական ուժի մեջ է մտել 05.05.2006 թվականին:

2. 01.11.2006 թվականին 14.10.2006 թվականին տրված ստացականների համաձայն՝ Ա.Խանգեղյանը Գ.Գավալյանի կողմից տրված 2000 ԱՄՆ դոլլար գումարը փոխանցել է Գ.Ազանիկյանին, որն իրեն տրված լիազորագրով իրավունք ուներ դրամ ստանալու: Այդ հանգամանքը դատաքննության ընթացքում ընդունել է նաև Հրայր Ազանիկյանը՝ նշելով, որ դա ենթակա է հաշվարկման Գ-րիգոր Գավալյանի պարտավորությունների մարման ժամանակ:

3. Ծառայության Երևանի բաժնի հարկադիր կատարող Ս. Սամվելյանի 29.03.2007 թվականի որոշմամբ արգելանք է դրվել Գ-րիգոր Գավալյանին պատկանող Երևանի Կոմիտասի 41-րդ շենքի 36-րդ բնակարանի վրա:

4. Ծառայության հարկադիր կատարող Է.Վենյամինովը 05.12.2007 թվականին կայացրել է որոշում՝ Գ-րիգոր Գավալյանին և Լիլիթ Ամիրջանյանին պատկանող Երևանի Կոմիտասի 41-րդ շենքի 36-րդ բնակարանը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին:

5. Վերաքննիչ դատարանի կողմից քննված թիվ 06-348 գործով կիրառված հայցի ապահովման միջոցի շրջանակներում Ծառայության դեպոզիտ հաշվին մուծվել է հայցագրի 5600 ԱՄՆ դոլլարը, որի նկատմամբ դրված արգելանքը վերացվել է 27.04.2006 թվականին:

**4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝ *վճռաբեկ բողոքը հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.*

Վերաքննիչ դատարանի կողմից հայցի մերժման հիմքում դրվել է այն հանգամանքը, որ հայցվորի կողմից չի հիմնավորվել երկու կատարողական թերթերի փաստացի կատարումը և պահանջատերերի հրաժարվելը բռնագանձումից: Բացի այդ, Դատարանը հաստատված է համարել, որ 15.02.2006 թվականին տրված թիվ 06-348 կատարողական թերթում նախատեսված բռնագանձման ենթակա գումարի չափն ավելին է հայցվորի վկայակոչած 2000 ԱՄՆ դոլլարից, քանի որ հաշվարկման են ենթակա որոշակի տոկոսներ՝ մինչև վճռի փաստացի կատարումը:

Վճռաբեկ դատարանն իր կողմից կայացված բազմաթիվ որոշումներում նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ վճռի թե՛ փաստական և թե՛ իրավական հիմնավորումները:

Վճռի իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ նյութական իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Վճռում ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Վճռի իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա վճռի իրավակիրառ գործառույթը, ընդգծում դատական գործունեության և դատական վճռի օրինակաւնությունը (տես՝ *ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը ընդդեմ «Քնար-88» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, քաղ. գործ թիվ 3-2504/ՏԴ(ՏԴ) (գումար բռնագանձելու պահանջով)*):

Դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վճիռ կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին (տես՝ *Անժելա Ղազարյանը, Արփիկ և Արմինե Գասպարյաններն ընդդեմ Շուշանիկ Սարգսյանի, Ոսկեհատ, Նունե, Հրանուշ Գասպարյան-*

ների՝ ժառանգական գույքը ժառանգների միջև բաժանելու պահանջի մասին քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.12.2007 թվականի որոշումը, թիվ 3-1843(ՎԴ): Դատարանի կողմից գործի քննության ընթացքում պետք է ուսումնասիրվեն գործում առկա բոլոր ապացույցները, վերլուծության ենթարկվեին կողմերի ներկայացրած և դատաքննությամբ հետազոտված ապացույցները, դրանցով համապատասխան հանգամանքները հիմնավորված կամ անհիմն համարելու համար(տե՛ս Ռ-ազմիկ Մարությանն ընդդեմ Ստեփան և Անահիտ Մարությանների, ՀՀ Կենտրոն նոտարական գրասենյակի՝ ժառանգական գույքի ընդունման փաստի ճանաչման և ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը մասնակի անվավեր ճանաչելու պահանջների մասին քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի թիվ 3-54(ՎԴ) քաղաքացիական գործով որոշումը): Մինչդեռ սույն գործով Դատարանը մերժելով հայցը՝ չի նշել, թե վերոնշյալ տոկոսները որ ժամանակահատվածի համար պետք է հաշվարկվեն, և նման պայմաններում ինչպես է Գրիգոր Գավալյանի պարտքի գումարը ավելին վերջինիս կողմից մատնանշված 2000 ԱՄՆ դոլլարից: Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ Դատարանը գնահատման առարկա չի դարձրել այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի կողմից քննված թիվ 06-348 գործով կիրառված հայցի ապահովման միջոցի շրջանակներում Ծառայության դեպոզիտ հաշվին մուծվել է հայցագնի 5600 ԱՄՆ դոլլարը, որի նկատմամբ դրված արգելանքը վերացվել է 27.04.2006 թվականին:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ Ջոն Վարդանյանի և Ռ-ազմիկ Մուրադյանի անունով կատարողական թերթ չի տրվել հետևյալ պատճառաբանությամբ.

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ եթե դատական ակտը կայացվել է հօգուտ մի քանի հայցվորի կամ ընդդեմ մի քանի պատասխանողի, ապա տրվում են համապատասխան քանակի կատարողական թերթեր, որոնցից յուրաքանչյուրում նշվում է *դատական ակտի այն մասը, որը ենթակա է կատարման տվյալ կատարողական թերթով*:

Սույն գործում բացակայում է ապացույց, որով կհիմնավորվի, որ վերը նշված կատարողական թերթը պահանջելիս Հրայր Ազանիկյանը պատշաճ կերպով լիազորված է եղել թիվ 06-348 գործով մյուս հայցվորներ Ջոն Վարդանյանի և Ռ-ազմիկ Մուրադյանի կողմից: Նման ապացույցի բացակայության պայմաններում և հիմք ընդունելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոնշյալ գործով կատարողական թերթ տրվել է միայն Հրայր Ազանիկյանին:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի համաձայն, Վարչական դատարանի վճիռը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Վարչական դատարանի 16.05.2008 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ՝ ս տ որ ա գր ու թ յ ու ն  
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր՝ ս տ որ ա գր ու թ յ ու ն ն եր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒՐՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վարչական դատարանի վճիռ  
Վարչական գործ թիվ ՎԳ/0139/05/08  
Նախագահող դատավոր՝ Ա. Պողոսյան

Վարչական գործ թիվ **ՎԳ/0139/05/08**  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի նոյեմբերի 28-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը Վարչական դատարանի 17.06.2008 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) ընդդեմ Ռոման Վարդանյանի՝ գումարի բռնագանձման և մաքսային պարտավորության կատարմանը պարտավորեցնելու պահանջների մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Կոմիտեն պահանջել է Ռոման Վարդանյանից բռնագանձել 191.364 ՀՀ դրամ, որից 183.690 (մեկ հարյուր ութսուներեք հազար վեց հարյուր իննսուն) ՀՀ դրամը որպես վարչական տուգանքի գումար, 7.674 ՀՀ դրամը՝ որպես Կոմիտեի կողմից վճարված պետական տուրքի գումար և պարտավորեցնել կատարելու ՀՀ մաքսային օրենսգրքի 40-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունը:

Վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 17.06.2008 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ ՀՀ մաքսային օրենսգրքի 40-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունը կատարել պարտավորեցնելու և 4.000 ՀՀ դրամ պետական տուրքի գումարը բռնագանձելու մասով:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

---

---

*Դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ մաքսային օրենսգրքի 40-րդ հոդվածը և 199-րդ - հոդվածի 1-ին մասը, խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Դատարանը հաստատված է համարել, որ Ռոման Վարդանյանը չի կատարել ՀՀ - մաքսային օրենսգրքի 40-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունը, այն է՝ «ժամանակավոր ներմուծում» ռեժիմով ներմուծված ավտոմեքենան սահմանված ժամկետում չի արտահանել կամ չարտահանված ապրանքները չի հանձնել մաքսային մարմինների պատասխանատու պահպանմանը, սակայն պատասխանողին ազատել է պարտավորության չկատարման համար նախատեսված վարչական տուգանքի բռնագանձումից:

Դատարանը, չունենալով վարչական ակտն անվավեր ճանաչելու պահանջ, դուրս է եկել հայցապահանջի շրջանակներից և քննության առել Կոմիտեի՝ Բագրատաշենի մաքսակետի պետի 17.03.2008 թվականի վարչական ակտի իրավաչափությունը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վարչական դատարանի 17.06.2008 թվականի վճիռը և գործն ուղարկել նոր քննության:

### **3.Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) 21.01.2008 թվականին Կոմիտեի Բագրատաշենի մաքսային կետում Ռոման Վարդանյանի կողմից ներկայացվել է հայտարարագիր, ըստ որի՝ նույն օրը «ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով 30 օր ժամկետով Հայաստանի Հանրապետություն է ներմուծվել «Կրայսլեր Սիբրուս» մակնիշի 1996 թվականի արտադրության ավտոմեքենա:

2) Կոմիտեի Բագրատաշենի մաքսային կետի պետի 17.03.2008 թվականի թիվ 1394 որոշմամբ Ռոման Վարդանյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության 21.01.2008 թվականին թիվ С 1742 հայտարարագրով ժամանակավոր ներմուծված ավտոմեքենան սահմանված ժամկետում հետադարձ չարտահանելու կամ այլ մաքսային ռեժիմով չվերահայտարարագրելու համար:

### **4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ մաքսային օրենսգրքի 40-րդ հոդվածի համաձայն՝ «ժամանակավոր ներմուծում» ռեժիմով ներմուծված ապրանքները սահմանված ժամկետում չարտահանելու կամ մասնակի արտահանելու դեպքում ապրանքները տեղափոխող անձը, եթե սահմանված ժամկետում չարտահանված ապրանքները չի հանձնել մաքսային մարմինների պատասխանատու պահպանմանը, **պարտավոր է այդ ապրանքների արտահանման համար սահմանված ժամկետի լրանալուն հաջորդող տասն օրվա ընթացքում դրանք վերահայտարարագրել «ներմուծում» ազատ շրջանառության համար** կամ **«վերաներմուծում» մաքսային ռեժիմով՝** վճարելով այդ ռեժիմով նախատեսված մաքսային վճարները և դրանք սահմանված ժամկետից ուշ վճարելու համար օրենքով սահմանված տույժերը՝ հաշվարկված այդ ապրանքներն արտահանելու համար սահմանված ժամկետի ավարտի պահից, կամ նույն հոդվածի «ա» ենթակետում նշված ժամկետում ապրանքներն արտահանելու դեպքում վճարել նույն ենթակետում նշված տույժերը՝ հաշվարկված դրանք արտահանելու համար սահմանված ժամկետի ավարտի պահից:

ՀՀ մաքսային օրենսգրքի 199-րդ հոդվածի համաձայն՝ **հետագա արտահանման պարտավորությամբ ՀՀ ներմուծված ապրանքները և տրանսպորտային միջոցները սահմանված ժամկետում չարտահանելն** առաջացնում է տուգանքի նշանակում՝ այդ ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային արժեքի տասը տոկոսի չափով:

Դատարանի կողմից սույն գործով հաստատված է համարվել Ռոման Վարդանյանի կողմից ՀՀ մաքսային օրենսգրքի 40-րդ հոդվածով նախատեսված պարտավորության չկատարման փաստը:

Վերոնշյալից ակնհայտ է, որ Դատարանի կողմից նորմի դիսպոզիցիայով նախատեսված խախտման փաստը հաստատված համարելու դեպքում օրենքով նախատեսված սանկցիայի չկիրառելը հանդիսանում է ՀՀ մաքսային օրենսգրքի 40-րդ և 199-րդ հոդվածների խախտում:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ Վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա: Նույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ դատարանը վճիռ կայացնելիս որոշում է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը: Այսինքն՝ վերը նշված հոդվածների իմաստով դատարանը պարտավոր է՝

- վարչական գործը հարուցել միմիայն համապատասխան հայցի հիման վրա,

- վարչական գործը քննել միմիայն այդ գործով ներկայացված հայցապահանջների շրջանակում (Տես՝ Ժորա, Հակոբ Կիչատյաններն ընդդեմ Կարինե, Սոնա, Նարեկ Կիչատյանների՝ Երևանի Բաշինջաղյան 173 շենքի 16 բնակարանից Ժորա, Հակոբ Կիչատյանների բաժինն առանձնացնելու պահանջի մասին և Կարինե, Սոնա, Նարեկ Կիչատյաններն ընդդեմ Ժորա, Հակոբ Կիչատյանների՝ Երևան Բաշինջաղյան 173 շենքի 16 բնակարանը սեփականության իրավունքով կողմերի միջև բաժանելու և մուտքերն առանձնացնելու պահանջների մասին թիվ 3-1132(ՎԳ) գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 06.07.2007 թվականի որոշումը):

Սինչդեռ սույն գործով Դատարանը, խախտելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 64-րդ և 113-րդ հոդվածների պահանջները, քննության առարկա է դարձրել վարչական ակտի իրավաչափության հարցը՝ դուրս գալով հայցի առարկայի շրջանակներից:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների համաձայն, Վարչական դատարանի վճիռը բեկանելու համար:

Սիւժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր որ ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից: Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

---

---

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել Վարչական դատարանի 17.06.2008 թվականի վճիռը՝ հայցը մերժելու մասով և այն փոփոխել. Ռ-ուման Վարդանյանից բռնագանձել 183.690 ՀՀ դրամ՝ վարչական տուգանքի գումարը, ինչպես նաև 3.764 ՀՀ դրամ՝ պետական տուրքի գումարը:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ՝ ստորագրություն  
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՈՒՐՆԵՐ ԴԱՏԱՐԱՆ

Վարչական դատարանի վճիռ  
Վարչական գործ թիվ ՎԳ/1492/05/08  
Նախագահող դատավոր՝ Ա. Աբովյան

Վարչական գործ թիվ ՎԳ/1492/05/08  
2008թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Ա.ՍԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս.ՕՀԱՆՅԱՆ

2008 թվականի դեկտեմբերի 26-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը Վարչական դատարանի 21.05.2008 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) ընդդեմ «Անկրկնելի Ցուլ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) տնօրեն Սերյոժա Հակոբյանի՝ 7.500.000 ՀՀ դրամ վարչական տուգանք բռնագանձելու պահանջի մասին և ըստ հակընդդեմ հայցի՝ Ծառայության օպերատիվ-հետախուզական վարչության պետի 29.11.2007 թվականի թիվ 044496 որոշումը մասնակի վերացնելու և մնացած մասը փոփոխելու պահանջների մասին,

Պ Ա Ր Ձ Ե Ց

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Ծառայությունը պահանջել է բռնագանձել Սերյոժա Հակոբյանից 7.500.000 ՀՀ դրամ:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Սերյոժա Հակոբյանը պահանջել է մասնակի վերացնել Ծառայության 29.11.2007 թվականի թիվ 044496 որոշումը և մնացած մասը փոփոխել:

Վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 21.05.2008 թվականի վճռով հայցը մերժվել է, իսկ հակընդդեմ հայցը բավարարվել է մասնակիորեն:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:  
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

---

---

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածը, կիրառել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 77-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, որոնք չպետք է կիրառեր:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի իմաստով Դատարանը վարչական ակտը վերացնելիս իրավասու չէր փոփոխել այն և վճռով սահմանել տուգանքի չափ:

Դատարանը, կիրառելով վարչական ակտի փոփոխման կամ բեկանման հիմքերը սահմանող «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 77-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, անտեսել է այն հանգամանքը, որ նշված հոդվածը նման իրավունք վերապահում է վարչական մարմնին և ոչ թե դատարանին:

Դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս իրավասու է վարչական մարմնի համար սահմանել միայն պարտականություն՝ ընդունել վարչական ակտ կամ կատարել գործողություն, այն է՝ իրականացնել վարչարարություն՝ հիմք ընդունելով դատարանի իրավական դիրքորոշումը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վարչական դատարանի 21.05.2008 թվականի վճիռը և գործն ուղարկել նոր քննության:

## **3.Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Ծառայության 14.11.2007 թվականի վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության համաձայն՝ Ընկերության տնօրեն Սերյոժա Հակոբյանը 2007 թվականի նոյեմբեր ամսին Ընկերությանը պատկանող տարածքի առևտրի իրականացման վայրում 25 ֆիզիկական անձանց տրամադրել է վաճառատեղեր, որով խախտել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի 12-րդ մասը:

2) Սերյոժա Հակոբյանը Ծառայության օպերատիվ-հետախուզական վարչության պետի 29.11.2007 թվականի որոշմամբ տուգանվել է 7.500.000 ՀՀ դրամի չափով:

## **4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի 12-րդ մասի համաձայն՝ **առևտրի իրականացման վայրի կազմակերպչի կողմից** առանց պայմանագրի կնքման վաճառատեղեր վճարովի կամ անհատույց օգտագործման նպատակով վաճառողներին տրամադրելը, ինչպես նաև առևտրի իրականացման վայրում (բացառությամբ գյուղատնտեսական ապրանքների շուկաների, կենդանիների շուկաների և տոնավաճառների) **ֆիզիկական անձանց վաճառատեղերի տրամադրումն առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով՝ յուրաքանչյուր տրամադրված տեղի համար:**

ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն՝ պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա:

Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են ՀՀ Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Նշված սահմանադրական նորմը, ամրագրելով իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը, միաժամանակ օրենսդրին հասցեագրել է հիմնարար առաքելություն՝ օրենքների հիման վրա որոշելու պետական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց իրավասությունը (լիազորությունը) իշխանությունն իրականացնելիս:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 114-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ այն դեպքում, երբ վարչական մարմինն իրավասու է եղել գործել իր հայեցողությամբ, դատարանը ստուգում է նաև, թե արդյոք վարչական ակտն ընդունելը կամ այն ընդունելը մերժելը, գործողություն կատարելը կամ անգործություն դրսևորելը իրականացվել է օրենսդրությանը համապատասխան: Երբ վարչական մարմինն իրավասու է եղել գործել իր հայեցողությամբ, և վարչական դատարանը հանգում է այն հետևության, որ վարչական մարմինը հայեցողական լիազորություններն իրականացրել է օրենսդրությանը ոչ համապատասխան, ապա վճռի եզրափակիչ մասը սահմանում է իրավասու վարչական մարմնի պարտականությունը՝ վարչական ակտ ընդունել կամ կատարել գործողություն՝ հիմք ընդունելով դատարանի իրավական դիրքորոշումը:

Սույն գործով Սերյոժա Հակոբյանը պատասխանատվության է ենթարկվել 25 ֆիզիկական անձանց վաճառատեղերի տրամադրման համար: Տվյալ վարչական իրավախախտման համար պատասխանատվություն սահմանող նորմը նախատեսում է տուգանքի նշանակում յուրաքանչյուր տեղի համար սահմանված նվազագույն աշխատավարձի **հարյուրապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով**: Սերյոժա Հակոբյանը պատասխանատվության է ենթարկվել տուգանքի առավելագույն չափով՝ յուրաքանչյուր տեղի համար 300.000 ՀՀ դրամով:

Դատարանը, սույն գործի քննության ժամանակ ստուգելով վարչական մարմնի կողմից հայեցողական լիազորության իրականացումը, անվավեր է ճանաչել Ծառայության 29.11.2007 թվականի թիվ 044496 որոշման խմբագրությունը և պարտավորեցրել է Ծառայությանը 30-օրյա ժամկետում փոփոխել որոշումը՝ հաշվի առնելով, որ իրավախախտման ծավալի մեջ է մտնում 19 ֆիզիկական անձանց վաճառատեղեր տրամադրելու փաստը, ինչպես նաև այն, որ տրամադրված յուրաքանչյուր տեղի համար տուգանքի չափը պետք է որոշվի **վարչարարության հիմնական սկզբունքների հաշվառմամբ**, որի նպատակահարմար չափը չի կարող գերազանցել 150.000 ՀՀ դրամը:

Մինչդեռ վերոնշյալ հոդվածներից հետևում է, որ այն դեպքում, երբ Դատարանը հաստատված է համարում վարչական մարմնի հայեցողական լիազորության իրականացումը ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ, իրավասու չէ սահմանել պատասխանատվության առավելագույն, նվազագույն կամ կոնկրետ չափ: Այսինքն՝ Դատարանը միջամտել է վարչական մարմնի հայեցողական լիազորությանը, ինչը թույլատրելի է միայն հայեցողական լիազորության իրավաչափության ստուգման տեսանկյունից (Տե՛ս Արթուր Խաչատրյանն ընդդեմ Երևանի քաղաքապետի՝ պաշտոնատար անձի օրենքին հակասող ակտը մասնակիորեն անվավեր ճանաչելու պահանջի մասին թիվ 3-295(ՎԴ) գործով Վճռաբեկ դատարանի 02.03.2007 թվականի որոշումը):

Այսպիսով, վերը նշված հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով, Դատարանի վճիռը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

---

---

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Վարչական դատարանի 21.05.2008 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ՝ ս տ ո թ ա գ թ ու թ յ ու ն  
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր՝ ս տ ո թ ա գ թ ու թ յ ու ն ն ե թ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒՐՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վարչական դատարանի վճիռ  
Վարչական գործ թիվ ՎԳ/0377/05/08  
Նախագահող դատավոր՝ Գ. Գարիբյան

Վարչական գործ թիվ **ՎԳ/0377/05/08**  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Դ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ. ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի նոյեմբերի 28-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը Վարչական դատարանի 06.05.2008 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Քաղաքապետարան) ընդդեմ Արտակ Ոսկանյանի՝ ինքնակամ շինությունը քանդելու և գումար բռնագանձելու պահանջների մասին,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Քաղաքապետարանը պահանջել է Արտակ Ոսկանյանից բռնագանձել 400.000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ վարչական տուգանքի գումարը, պարտավորեցնել պատասխանողին քանդելու Երևանի Քանաքեռի Շրջանցիկ թունելի՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող հողամասում կառուցված շինությունը, ինչպես նաև վճարված պետական տուրքի գումարը:

Վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 06.05.2008 թվականի վճռով հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ, 24-րդ, 25-րդ հոդվածները, ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածը, սխալ է մեկնաբանել ՀՀ - քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածը, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասը:*

---

---

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Դատարանը հայցը մերժելիս պատճառաբանել է, որ Քաղաքապետարանի 24.10.2007 թվականի որոշմամբ արձանագրվել է Արտակ Ոսկանյանի վերակառուցման շինարարական աշխատանքներ կատարելու և ոչ թե ինքնակամ շենք կամ շինություն կառուցելու փաստը և, վերլուծելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասը, հանգել է այն եզրակացության, որ ինքնակամ շենքեր կամ շինություններ կառուցելը պետք է դրսևորվի անձի կողմից տվյալ հողամասի վրա կատարված գործողությամբ՝ մասնավորապես որևէ շինություն կամ կառույց կառուցելով: Դատարանը վերակառուցման շինարարական աշխատանքներ կատարելու հանգամանքը որակել է որպես ընդհանուր օգտագործման տարածքում բարեկարգման նպատակով կատարված վերանորոգում և դրա նկատմամբ կիրառել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 156-րդ հոդվածը: Մինչդեռ վարչական գործի նյութերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ Արտակ Ոսկանյանի կողմից կատարվել են ոչ թե գոյություն ունեցող շինության ընթացիկ նորոգման կամ բարեկարգման գործողություններ, այլ հին շինության փոխարեն կառուցվել է նորը, և այդ աշխատանքները ներառված չեն ՀՀ կառավարության 02.02.2002 թվականի թիվ 91 որոշմամբ հաստատված ընթացիկ նորոգման և բարեկարգման աշխատանքների ցանկում: Նոր շինություն կառուցելու փաստի մասին վարչական իրավախախտում թույլ տալու մասին արձանագրությունում նշել է նաև Արտակ Ոսկանյանը:

Ինչ վերաբերում է Դատարանի այն փաստարկին, որ Քաղաքապետարանը չի հիմնավորել տարածքը պետությանը կամ համայնքին սեփականության իրավունքով պատկանելու հանգամանքը, ապա սեփականատիրոջ պարզումն էական է միայն կատարված զանցանքի համար պատասխանատվության չափը որոշելու առումով և չի կարող դիտվել որպես հայցի մերժման հիմք: Դատարանն այդ հարցին անդրադառնալիս անտեսել է ՀՀ վճռաբեկ դատարանի 18.05.2007 թվականի թիվ 3-410(ՎԳ) և 12.12.2007 թվականի թիվ 3-1835(Ա) գործերով որոշումներում արտահայտված դիրքորոշումը, որով սահմանվել է հողի նկատմամբ պետական սեփականության կանխավարկածի սկզբունքը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է մասնակիորեն՝ գումար բռնագանձելու պահանջի մասով բեկանել Վարչական դատարանի 06.05.2008 թվականի վճիռը և հայցն այդ մասով բավարարել:

### **3.Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Երևանի քաղաքապետի 12.10.2007 թվականի թիվ 004291 արձանագրության համաձայն՝ Երևանի Քանաքեռի Շրջանցիկ թունել հասցեում Արտակ Ոսկանյանի կողմից իրականացվել են նախկինում գոյություն ունեցող կիսաքանդ բաղնիքի և զուգարանի վերակառուցման շինարարական աշխատանքներ շուրջ 20քմ մակերեսով: Նույն արձանագրության մեջ առկա Արտակ Ոսկանյանի բացատրության համաձայն՝ իրենք խարխիված բաղնիքի, զուգարանի և խոհանոցի փոխարեն կառուցում են նորը:

2) Վերոնշյալը հաստատվել է վարչական իրավախախտումների գործերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքներ իրականացնող հանձնաժողովի 24.10.2007 թվականի թիվ Վ-16/9 արձանագրությամբ, որով առաջարկվել է Արտակ Ոսկանյանին Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով ենթարկել վարչական պատասխանատվության՝ 400.000 ՀՀ դրամ տույժի:

3) Երևանի քաղաքապետի 24.10.2007 թվականի «Վարչական իրավախախտման գործի վերաբերյալ» թիվ Վ-16/9 որոշմամբ Արտակ Ոսկանյանը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով ենթարկվել է վարչա-

կան պատասխանատվության՝ 400.000 ՀՀ դրամի չափով տույժի: Միաժամանակ Արտակ Ռսկանյանին առաջարկվել է միջոցներ ձեռնարկել իրավախախտման պատճառները և պայմանները վերացնելու ուղղությամբ:

4) Գործում բացակայում է վեճի առարկա հողամասը ֆիզիկական կամ իրավաբանական այլ անձի պատկանելու մասին ապացույց:

**4.Վճռաբեկ դատարանի պատճառարանությունները և եզրահանգումը**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ *այն հիմնավոր է հետևյալ պատճառարանությամբ.*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարանը գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը պետք է պարզի կողմերի ներկայացրած պահանջների և առարկությունների, ինչպես նաև այն իրավական ակտերի հիման վրա, որոնք կիրառելի են տվյալ գործով: Դրանց միջոցով է դատարանի համար պարզ դառնում, թե տվյալ գործով որ փաստի (փաստերի) առկայությունը կամ բացակայությունը կարող է հիմք հանդիսանալ հայրը բավարարելու կամ մերժելու և համապատասխան իրավական նորմերը տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի դարձնելու համար (Տես՝ ՀՀ - կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության Մարտունու հարկային տեսչությունն ընդդեմ անհատ ձեռնարկատեր Վաղարշակ Սկրտչյանի՝ 26.965.003 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ-2/0038/05/08 գործով 31.10.2008 թվականի որոշումը):

Սույն գործի քննության ընթացքում Դատարանը գտել է, որ գործի համար էական նշանակություն ունի ինքնակամ շինությունը պետության սեփականություն հանդիսացող հողամասում կառուցված լինելու փաստը, ինչպես նաև այն, որ Արտակ Ռսկանյանի կողմից կառուցվել է ոչ թե նոր ինքնակամ կառույց, այլ իրականացվել են գոյություն ունեցող շինության վերակառուցման աշխատանքներ, որոնց համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվություն առաջանալ չի կարող:

***1. Ինքնակամ կառույցի հասկացության մասով.***

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ հողօգտագործման իրավունք չունեցող անձի կողմից պետությանը և համայնքներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի համաձայն՝ ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական կանոնների էական խախտումներով **կառուցված կամ վերակառուցված շենքը, շինությունը կամ այլ կառույցը:**

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ կառույցը համարվում է ինքնակամ, եթե

1. այն կառուցվել է օրենքով կամ այլ իրավական ակտերով այդ նպատակի համար չհատկացված հողամասում,
2. կառուցվել կամ վերակառուցվել է առանց թույլտվության,
3. կառուցվել կամ վերակառուցվել է թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական կանոնների էական խախտումներով:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝ շինարարական թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է կառուցապատողի իրավունքը՝

---

---

**իրականացնել որոշակի շինարարական գործունեություն ինչպես նոր կառուցվող կամ վերակառուցվող տարածքում, այնպես էլ գոյություն ունեցող շենքերում և շինություններում:** Շինարարական թույլտվություն չի պահանջվում ՀՀ կառավարության սահմանած ցանկում ներառված շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման, ներքին հարդարման և տարածքների բարեկարգման աշխատանքների համար, եթե դրանք չեն խոչընդոտում անշարժ գույքի նպատակային օգտագործմանը և չեն հակասում սահմանված սերվիտուտներին:

Սույն գործով Դատարանը հայցի մերժման հիմքում դրել է այն հանգամանքը, որ Արտակ Ոսկանյանի կողմից իրականացվել է վերակառուցում, որի համար շինարարության թույլտվություն չի պահանջվում, հետևաբար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի կիրառման հիմքերը բացակայում են:

Սինչդեռ վերոնշյալ իրավական ակտերից հետևում է, որ հին շինության քանդման և դրա փոխարեն նորի կառուցման (թեկուզև նույն մակերեսով) համար անհրաժեշտ է համապատասխան թույլտվություն:

Սույն գործով այդպիսի թույլտվություն Արտակ Ոսկանյանին չի տրվել, հետևաբար նրա կողմից վերակառուցված շինությունը համարվում է ինքնակամ և դրա նկատմամբ կիրառելի են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածները:

2. *Հողամասը պետության սեփականություն լինելու կանխավարկածի մասով.*

ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իր գործի քննության ժամանակ որպես իրավական փաստարկ իրավունք ունի մատնանշելու նույնաման փաստական հանգամանքներով մեկ այլ գործով Հայաստանի Հանրապետության դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները), իսկ նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով ՀՀ վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնաման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ յուրաքանչյուր գործ իր փաստական հանգամանքներով եզակի է և ՀՀ վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտով տրված իրավական մեկնաբանության՝ համապատասխան գործով կիրառելիության հարցը լուծելիս դատարանները պետք է համադրեն նախադեպային գործի և քննության առարկա գործի էական նշանակություն ունեցող փաստերը: Այսինքն՝ դատարանը նախադեպային որոշմամբ տրված օրենքի մեկնաբանության՝ քննվող գործով կիրառելիության հարցը լուծելիս պետք է նախ առանձնացնի այն փաստական հանգամանքները, որոնք էական նշանակություն են ունեցել նախադեպային որոշման կայացման համար և այնուհետև դրանք համադրի քննվող քաղաքացիական գործի փաստական հանգամանքների հետ՝ որոշելով դրանց նույնական լինել կամ չլինելու հարցը (Տես՝ «Արաբկիր Ալկո Լիկյոր-Օդու գործարան» ՍՊԸ-ն ընդդեմ Սոս Բաղդասարյանի՝ բնակարանի 1/7 մասի սեփականատեր ճանաչելու և բնակարանի մասի վրա բռնագանձում տարածելու պահանջների մասին թիվ 3-480(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.07.2008 թվականի որոշումը):

Սույն գործով Դատարանը պատճառաբանել է, որ Քաղաքապետարանի կողմից գործի քննության ընթացքում որևէ կերպ չհիմնավորվեց վիճելի տարածքի՝ պետությանը կամ համայնքին սեփականության իրավունքով պատկանելու փաստը՝ անտեսելով այն հանգամանքը, որ Վճռաբեկ դատարանը հողամասի պետական սեփականություն հանդիսանալու կանխավարկածի հետ կապված արդեն արտահայտել է իր դիրքորոշումը: Մասնա-

վորապես Վճռաբեկ դատարանը, հաստատված համարելով այն հանգամանքը, որ գործի նյութերում բացակայում է վեճի առարկա հողամասը ֆիզիկական կամ իրավաբանական անձին պատկանելու մասին որևէ ապացույց, արձանագրել է, որ նման դեպքերում գործում է դրա՝ պետական սեփականություն լինելու կանխավարկածը (Տես Սիմոն Սարգսյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին թիվ 3-1835(Ա) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.12.2007 թվականի որոշումը):

Հիմք ընդունելով վերոնշյալը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործում նույնպես բացակայում է վեճի առարկա հողամասը ֆիզիկական կամ իրավաբանական այլ անձի պատկանելու մասին որևէ ապացույց, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով նույնպես կիրառելի է այդ հողամասի պետական սեփականություն հանդիսանալու կանխավարկածը:

Այսպիսով, Դատարանը սույն գործի քննության ժամանակ հաշվի չի առել Վճռաբեկ դատարանի վերոնշյալ որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները: Հետևաբար Դատարանի վճիռն օրինական և պատշաճ կերպով պատճառաբանված չէ:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների համաձայն, Վարչական դատարանի վճիռը բեկանելու համար, քանի որ դա հանգեցրել է գործի սխալ լուծման:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի վերը նշված հոդվածներով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Վարչական դատարանի 06.05.2008 թվականի վճռի՝ գումար բռնագանձելու մասը և այն փոփոխել: Արտակ Ոսկանյանից բռնագանձել 400.000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ որպես վարչական տույժի գումար, ինչպես նաև 8.000 (ութ հազար) ՀՀ դրամ պետական տուրքի գումարը:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ՝ ստորագրություն  
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒՐՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վարչական դատարանի վճիռ  
Վարչական գործ թիվ ՎԴ/0262/05/08  
Նախագահող դատավոր՝ Ա. Սարգսյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/0262/05/08**  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Դ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ. ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի նոյեմբերի 28-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը Վարչական դատարանի 25.06.2008 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի «Նոր Շին» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն)՝ 18.12.2007 թվականի թիվ 1034648 ակտի 1-ին և 4-րդ կետերն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է անվավեր ճանաչել Ծառայության 18.12.2007 թվականի թիվ 1034648 ակտի 1-ին և 4-րդ կետերը:

Վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 25.06.2008 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը: Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ընկերությունը:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածը, սխալ է մեկնաբանել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Դատարանը ներքին համոզմունք ձևավորելու նպատակով ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել անհրաժեշտ ապացույցներ ձեռք բերելու համար, մասնավորապես տեղյակ

լինելով «Շվեյկ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) և Ընկերության տնօրենների միջև մատակարարման կեղծ պայմանագրեր կնքելու փաստի առթիվ հարուցված քրեական գործի առկայության մասին գործի ընթացքի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ չի պահանջել, ինչի հետևանքով գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն չի կատարել: Սույն գործով վճիռ կայացնելուց շուրջ մեկ ամիս առաջ թիվ ԳԴ-5/0002/01/08 գործով Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 27.05.2008 թվականի դատավճռով Կազմակերպության տնօրեն Ռոբերտ Երիցյանը Ընկերության տնօրեն Արման Մաթևոսյանին առանց ապրանքների փաստացի մատակարարման կեղծ հաշիվ-ապրանքագրեր տրամադրելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ - հոդվածի 3-րդ մասով ճանաչվել է մեղավոր և դատապարտվել է: Դատարանը հաշվի չի առել այդ դատավճիռը, և դրանով հաստատված այն հանգամանքը, որ Ռոբերտ Երիցյանը մեղավոր է ճանաչվել այն բանում, որ Ընկերության տնօրեն Արման Մաթևոսյանի հետ 15.08.2006 և 20.11.2006 թվականներին կնքված ընդհանուր առմամբ 8.415.340 ՀՀ դրամ արժողությամբ ապրանքների մատակարարման պայմանագրերով Ընկերությանը փաստացի մատակարարել է շուրջ 1.300.000 ՀՀ դրամ արժողությամբ ապրանքներ, իսկ մնացած գումարի դիմաց առանց ապրանքների մատակարարման տրամադրել է կեղծ հաշիվ-ապրանքագրեր, որի հետևանքով պետությանը պատճառվել է 2.243.600 ՀՀ դրամ առանձնապես խոշոր չափի վնաս: Փաստորեն տարբեր դատական մարմիններ միևնույն հանգամանքների և փաստաթղթերի իրավաչափության հարցի կապակցությամբ կայացրել են տարբեր, իրար հակասող դատական ակտեր:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վարչական դատարանի 25.06.2008 թվականի վճիռը և այն փոփոխել՝ Ընկերության հայցը մերժել:

**2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները**

Սույն գործով Ընկերության համար առկա են եղել ոչ բարենպաստ փաստական հանգամանքներ, որոնց առկայության դեպքում փաստի ապացուցումը հանդիսացել է հարկային պետական ծառայության պարտականությունը: Փաստորեն Ծառայության կողմից իր պարտականությունների չկատարման հանգամանքը սույն վճռաբեկ բողոքում ներկայացվում է որպես Դատարանի կողմից թույլ տրված դատավարական նորմի խախտում, այն էլ այն դեպքում, երբ Դատարանը քրեական գործի նյութեր պահանջելու իրավունք ՀՀ - վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի հիման վրա չուներ: Դատարանի խնդիրը կազմված ակտի օրինակակնությունն ստուգելն է: Ինչ վերաբերում է թիվ ԳԴ- 5/0002/01/08 գործով Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 27.05.2008 թվականի դատավճռով հաստատված հանգամանքները զնահատելուն, ապա պետք է նշել, որ այդ դատավճիռն իրավական հետևանքներ է առաջացնում բացառապես այլ սուբյեկտի համար, այն որևէ իրավունքներ Ընկերության համար չի առաջացնում: Ավելին, Դատարանը չէր կարող վերոնշյալ դատավճիռը որպես պարտավորությունների առաջացումը հիմնավորող ապացույց դնել տվյալ քրեական գործին մասնակից չդարձած անձի նկատմամբ կայացվող դատական ակտի հիմքում:

**3.Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

- 1) 18.12.2007 թվականի թիվ 1034648 ստուգման ակտով արձանագրվել է, որ Կազմակերպության կողմից դուրս են գրվել 6.731.200 ՀՀ դրամի հաշիվ-ապրանքագրեր Ընկերությանն ապրանքներ մատակարարելու մասին, սակայն ապրանքներ չեն մատակարարվել, որի համար Ընկերությանն առաջադրվել են շահութահարկի և ավելացված արժեքի հարկի գծով պարտավորություններ:

---

---

2) Գործում առկա են Կազմակերպության և Ընկերության միջև կնքված թիվ 1, թիվ 2 մատակարարման պայմանագրերը, որով մատակարարը պարտավորվել է ապրանքները հանձնել գնորդին:

3) Գործում առկա են նաև հաշիվ-ապրանքագրեր մատակարարված ապրանքների տեսականու վերաբերյալ:

4) Թիվ 1, 2, 3 և 8 վճարման հանձնարարականների համաձայն՝ Ընկերությունը Կազմակերպությանը փոխանցել է գումարներ՝ համապատասխանաբար թիվ 3 հաշիվ ապրանքագրի, թիվ 2, 4 և 2 պայմանագրերի:

5) Գործում առկա են Կազմակերպության կողմից մատակարարված և Ընկերության կողմից ընդունված ապրանքների հանձնման-ընդունման ակտերը:

6) Կազմակերպության տնօրեն Ռոբերտ Երիցյանի 06.12.2007 թվականի բացատրության համաձայն՝ վերջինս Ընկերության տնօրենի հետ կնքել է թիվ 1 և թիվ 2 մատակարարման պայմանագրերը, դրանցով Ընկերության կողմից փոխանցվել է գումար, որի մի մասը վերջինս վերադարձրել է Ընկերության տնօրեն Արման Մաթևոսյանին:

7) Կազմակերպության տնօրենի 15.12.2007 թվականի տեղեկանքի համաձայն՝ 15.08.2007 թվականի և 20.11.2007 թվականի պայմանագրերով սահմանված կարգով Կազմակերպությունը պատշաճ կերպով կատարել է իր պայմանագրային պարտավորությունները, Ընկերությունն էլ պատշաճ կերպով կատարել է գումար վճարելու իր պարտավորությունները, և Կազմակերպությունը վերջինիս նկատմամբ որևէ պարտք ու պահանջ չունի:

8) Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 27.05.2008 թվականի դատավճռով Կազմակերպության տնօրեն Ռոբերտ Երիցյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 3-րդ մասով՝ առանց ապրանքներ մատակարարելու կեղծ հաշիվ-ապրանքագրեր տրամադրելու համար: Նույն դատավճռով բավարարվել է քաղաքացիական հայցը, և որոշվել է Ռոբերտ Երիցյանից բռնագանձել 2.243.600 ՀՀ դրամ՝ որպես պետությանը պատճառված վնասի հատուցում:

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝ հարկային օրենսդրության կիրառման առումով անապրանք փաստաթուղթը հարկերի հաշվարկման և (կամ) վճարման համար հիմք հանդիսացած (հարկային հաշվառման մեջ ներառված)՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին ձևականորեն համապատասխանող վճարահաշվարկային այն փաստաթուղթն է, որում նշված գործարքը (ապրանքի մատակարարում, ծառայության մատուցում կամ աշխատանքի կատարում) այդ փաստաթուղթը կազմած կողմերի միջև փաստացի չի կատարվել կամ կատարվել է այդ փաստաթղթում նշված պայմաններից էականորեն տարբերվող պայմաններով: Փաստաթղթերը չեն համարվում անապրանք, և նույն հոդվածով նախատեսված պատասխանատվությունը չի կիրառվում, եթե անձն ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման պայմանագրի համաձայն կրում է գործարքը կատարելու պարտավորություն:

Դատարանը հայցի բավարարման հիմքում դրել է այն հանգամանքը, որ ակտը կազմվել է Ռոբերտ Երիցյանի բացատրության հիման վրա, որի հետ Ընկերությունը չի ծանոթացել: Միաժամանակ, Դատարանը նշել է, որ կողմերի միջև կնքված գործարքները և դրանց հիման վրա կազմված հաշիվ-ապրանքագրերը «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասի հիմքով չէին կարող համարվել անապրանք, քանի որ հենց Կազմակերպությունն է կրել գործարքը կատարելու, այն է ապրանք մատակարարելու պարտավորությունը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով կիրառելի չէ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասը, քանի որ կողմերն ընդունել են միմյանց միջև մատակարարման պայմանագրի համաձայն պարտավորությունների կատարված լինելու հանգամանքը, իսկ վերոնշյալ նորմը վերաբերում է այն դեպքերին, երբ պայմանագրի կողմը դեռևս ունի պայմանագիրը կատարելու պարտավորություն:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը վեճի լուծման համար անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով իրավասու է, չսահմանափակվելով վարչական դատավարության մասնակիցների միջնորդություններով, նրանց ներկայացրած ապացույցներով և գործում առկա այլ նյութերով, ձեռնարկելու ողջամիտ միջոցներ, մասնավորապես պահանջելու վարչական վարույթի նյութեր, տեղեկություններ, ապացույցներ, լրացուցիչ բացատրություններ, հանձնարարելու կողմերին անձամբ ներկայանալ դատական նիստի:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ Դատարանի պարտականությունն է պահանջել վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստեր պարունակող ապացույցներ:

Սինչդեո Դատարանը, գործի քննության ընթացքում պարզելով, որ Կազմակերպության և Ընկերության տնօրենների միջև առկա է մատակարարման կեղծ պայմանագրեր կնքելու փաստի առթիվ հարուցված քրեական գործ, որևէ միջոց չի ձեռնարկել նշված քրեական գործի մասին լրացուցիչ տեղեկություններ պահանջելու համար, այն պայմաններում, երբ վճռի կայացման օրվա դրությամբ առկա էր Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 27.05.2008 թվականի դատավճիռը, առավել ևս, որ դատաքննության ընթացքում Ծառայությունը միջնորդել էր կասեցնելու գործի վարույթը, համապատասխան քրեական գործի առկայության պատճառով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների համաձայն, Վարչական դատարանի վճիռը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել Վարչական դատարանի 08.05.2008 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:
2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է ստնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ` ս տ ո թ ա գ թ ու թ յ ու ն  
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր` ս տ ո թ ա գ թ ու թ յ ու ն ն եր*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒՐՔԻ ԴԱՏԱՐԱՆ**

Վարչական դատարանի վճիռ  
Վարչական գործ թիվ ՎԴ/1944/05/08  
Նախագահող դատավոր՝ Բ. Մկոյան

Վարչական գործ թիվ ՎԴ/1944/05/08  
**2008թ.**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*մասնագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Դ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Հ. ԴՈՒԿԱՍՅԱՆԻ  
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

2008 թվականի դեկտեմբերի 26-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը Վարչական դատարանի 04.07.2008 թվականի վճռի դեմ՝ ըստ Ռուբեն Գինոյանի հայցի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Քաղաքապետարան)՝ պետական մարմնի ակտը մասնակի վերացնելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Չ Ե Ց**

**1. Գործի դատավարական մախապատմությունը**

Գիմելով դատարան՝ Ռուբեն Գինոյանը պահանջել է վերացնել Քաղաքապետարանի 11.02.2008 թվականի թիվ 02/18-Գ-358 գրության երկրորդ պարբերության «աակայն 62-րդ հոդվածի 11-րդ կետի համաձայն չի կարող փոխանցվել սեփականության իրավունքով» մասը:

Վարչական դատարանի 04.07.2008 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ռուբեն Գինոյանը:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Դատարանը սխալ է մեկնաբանել «ՀՀ հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածը, չի կիրառել ՀՀ կառավարության 24.09.2001 թվականի թիվ 896 որոշմամբ հաստատոված «Ոչ հիմնական շինությունների տեղադրման կարգի» 2-րդ կետը, որը պետք է կիրառել:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկով.*

Գատարանն անտեսել է, որ 22,3 քմ մակերեսով հողամասը ծանրաբեռնված է ոչ թե կառույցով, այլ դրա վրա տեղակայված է սեփականության իրավունքով Ռուբեն Գինոսյանին պատկանող 19,11 քմ մակերեսով մետաղական կրպակ:

Ավելին, 26.11.2005 թվականին ուժի մեջ մտած «ՀՀ հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի բովանդակությունից հետևում է, որ սեփականության իրավունքով ենթակա են փոխանցման այն հողամասերը, որոնք զբաղեցված են հասարակական և արտադրական օբյեկտների կառուցման և սպասարկման համար նախատեսված և սահմանված կարգով կառուցված շենքերով, շինություններով: Վերը նշվածից երևում է, որ օտարման ենթակա են միայն կառուցված հիմնական շենքերով ու շինություններով ծանրաբեռնված հողերը, մինչդեռ սույն գործով վեճի առարկա հողամասը զբաղեցված է ոչ թե կառուցված հիմնական շինությամբ, այլ ոչ հիմնական շինություն համարվող, սպասարկման համար տեղադրված մետաղական կրպակով:

Բացի այդ, ՀՀ կառավարության 24.09.2001 թվականի թիվ 896 որոշմամբ հասատատված «Ոչ հիմնական շինությունների տեղադրման կարգի» 2-րդ կետի համաձայն՝ Ռուբեն Գինոսյանի կրպակը համարվում է ոչ թե կառուցված, այլ տեղադրված ոչ հիմնական շինություն, հետևաբար դրանով զբաղեցված շինությունը ենթակա չէ սեփականության իրավունքով փոխանցման:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վարչական դատարանի 04.07.2008 թվականի վճիռը և գործն ուղարկել նոր քննության:

**2.1. Ռուբեն Գինոսյանի վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները.**

Բողոք բերողը արհեստականորեն նեղացրել է «ՀՀ հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում նշված հասկացությունների շրջանակը, քանի որ վկայակոչված նորմում բառացի և տառացի խոսքը գնում է շինության մասին, առանց տարբերակելու հիմնականը և ոչ հիմնականը:

Բացի այդ, կրպակը հողի մեջ ունի հիմքեր, պահանջում է թաց շինարարական պրոցեսներ՝ հողին ամրակցված է բետոնացման միջոցով, չի կարող անջատվել առանց եռակցման միջոցով կտրման և մետաղի ջարդոնի վերածման, անջատման դեպքում կղադարի կրպակ լինելուց:

Ավելին, ոչ հիմնական շինություն լինելու դեպքում կրպակի նկատմամբ սեփականության իրավունքը 2004 թվականին չէր կարող որպես անշարժ գույք գրանցվել կադաստրում:

**3.Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Ռուբեն Գինոսյանին 13.12.2004 թվականին տրված սեփականության իրավունքի վկայականի համաձայն՝ Ռուբեն Գինոսյանը Երևանի Ավան-Առինջ թաղամասի 3/2 շենքի մոտ գտնվող 19,11քմ մակերեսով կրպակի սեփականատերն է: Վարձակալության հանձնված 22,3քմ մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, օգտագործման նպատակը՝ կրպակի կառուցման և սպասարկման, իսկ 19,11քմ մակերեսով շենքի նպատակային նշանակությունը՝ հասարակական, օգտագործման նպատակը՝ կրպակ (**գ.թ.11**):

2. Երևանի քաղաքապետի տեղակալ Կ. Գավթյանի 11.02.2008 թվականի թիվ 02/18-Գ-358 գրության համաձայն՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման 13.12.2004 թվականի թիվ 1286611 վկայականի վարձակալությամբ տրամադրված 22,3 քմ մակերեսով հողամասն ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, սակայն 62-րդ հոդվածի 11-րդ կետի համաձայն չի կարող փոխանցվել սեփականության իրավունքով (**գ.թ. 15**):

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ *այն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ*.

«ՀՀ հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 04.10.2005 թվականի թիվ ՀՕ-199-Ն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերից օրենսդրությամբ սահմանված կարգով անհատույց (մշտական) օգտագործման կամ վարձակալության իրավունք ձեռք բերած և այդ իրավունքները գրանցած իրավաբանական և ֆիզիկական անձանց, ներառյալ՝ օրենսգրքի 118-րդ հոդվածի 4-րդ կետի հիմքով ձեռք բերված (բացառությամբ օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի)՝ սույն օրենքի ուժով սեփականության իրավունքով փոխանցվում են հասարակական և արտադրական օբյեկտների կառուցման և սպասարկման համար նախատեսված և սահմանված կարգով կառուցված, այդ թվում՝ կիսակառույց շենքերով, շինություններով զբաղեցված հողամասերը՝ անկախ շենքերի, շինությունների ավարտվածության աստիճանից:

ՀՀ հողային օրենսգրքի 62-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ կառուցապատված հողամասերի փոխանցումը սեփականության իրավունքով իրականացվում է քաղաքաշինական փաստաթղթերին համապատասխան՝ նախատեսվող նպատակային նշանակության հաշվառմամբ: Հողամասի ընթացիկ օգտագործումը նախատեսվածին չհամապատասխանելու դեպքում մասնավորեցում չի կատարվում:

Սույն գործի փաստերի համաձայն՝ վեճի առարկա հողամասը Ռուբեն Գինոսյանի սեփականության իրավունքով փոխանցումը մերժվել է ՀՀ հողային օրենսգրքի 62-րդ հոդվածի 11-րդ կետի հիմքով: Գործի քննության ընթացքում Քաղաքաշինության մերժումը հիմնավորել է այն հանգամանքով, որ սույն գործով շինության՝ կրպակի օգտագործումը չի համապատասխանում հողամասի նպատակային նշանակությանը:

Մինչդեռ վճռաբեկ բողոքը բերվել է այն հիմքով, որ վեճի առարկա հողամասը զբաղեցված է ոչ թե կառուցված հիմնական շինությամբ, այլ ոչ հիմնական շինություն համարվող, սպասարկման համար տեղադրված մետաղական կրպակով, որը սույն գործով քննության առարկա չի դարձվել:

Հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ վճռաբեկ բողոքում բարձրացված հարցադրումները Վարչական դատարանում գործի քննության ժամանակ չեն բարձրացվել, քանի որ դրանք չեն հանդիսացել սույն գործով վեճի առարկա հողամասը Ռուբեն Գինոսյանին սեփականության իրավունքով փոխանցելը մերժելու հիմք, վճռաբեկ բողոքի հիմքը Վճռաբեկ դատարանը քննության առարկա չի դարձնում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Վարչական դատարանի 04.07.2008 թվականի վճիռը թողնել օրինական ուժի մեջ:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ՝ ս տ որ ա գր ու թ յ ու ն  
Գ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր՝ ս տ որ ա գր ու թ յ ու ն ն եր*



---

---

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Դատարանը սխալ է մեկնաբանել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Դատարանը «կրկնական փաստ» արտահայտության տակ հասկացել է այն դեպքը, երբ մեկ տարվա ընթացքում տնտեսվարող սուբյեկտը նորից է ձեռք բերում ապրանք և դրանք չի գրանցում:

Դատարանն անտեսել է, որ սույն գործով ՀՀ վճռաբեկ դատարանը, 25.12.2007 թվականի որոշմամբ անդրադառնալով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածին, պարզաբանել է, որ առաջին անգամ ձեռնարկատիրական գործունեության առարկաները չգրանցելու համար պատասխանատվության ենթարկելուց հետո, եթե անգործությունը փաստացի շարունակվել է, այն իրենից ներկայացնում է ինքնուրույն իրավախախտում, որի համար պատասխանատվությունը նախատեսված է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ պարբերությամբ: Փաստորեն սույն գործով նույն հարցի վերաբերյալ արդեն առկա է ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումը, որը Դատարանը հաշվի չի առել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վարչական դատարանի 25.06.2008 թվականի վճիռը և գործն ուղարկել նոր քննության:

## **3.Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Ծառայության պետի 29.03.2007 թվականի թիվ 1107563 հանձնարարագրի հիման վրա Ընկերությունում իրականացվել է ստուգում:

2) 26.04.2007 թվականի թիվ 1107563 ստուգման ակտով Ընկերությանն առաջադրվել է 3.030.000 ՀՀ դրամի հակային պարտավորություն՝ իրացված ապրանքները սահմանված կարգով չգրանցելու համար:

3) Սույն գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.12.2007 թվականի որոշմամբ ՀՀ տնտեսական դատարանի վճիռը բեկանվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի սխալ մեկնաբանության հիմքով, և գործն ուղարկվել է նոր քննության:

## **4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ *այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեության առարկաները չգրանցելու, այսինքն՝ առաքվող, տրամադրվող, տեղափոխվող կան վաճառվող արտադրանքը, ապրանքները, ինչպես նաև կատարվող աշխատանքները և մատուցվող ծառայությունները ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով չգրանցելու դեպքում գանձվում է տուգանք՝ ձեռնարկատիրական գործունեության չգրանցված առարկաների վաճառքի (իրացման) գներով արտահայտված(հաշվարկված) ամբողջ արժեքի 25 տոկոսի չափով, այդ թվում՝ վաճառված (իրացված) մասի համար: **Հարկային տեսչության կողմից խախտումն արձանագրվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում ձեռնարկատիրական գործունեության առարկաները չգրանցելու կրկնական փաստ արձանագրվելու դեպքում գանձվում է տուգանք՝ ձեռնարկատիրական գործունեության չգրանցված առարկաների վաճառքի (իրացման) գներով արտահայտված (հաշվարկված) ամբողջ արժեքի 50 տոկոսի չափով:**

Վճռաբեկ դատարանը սույն գործով արդեն արտահայտել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի կիրառելիության վերաբերյալ իր դիրքորոշումը (Իրավական հիմ-

նավորումները տես՝ «Գրվաչ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության՝ 26.04.2007 թվականի թիվ 1107563 ստուգման ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին թիվ 3-1799(ՏԳ) գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.12.2007 թվականի որոշումը):

ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ:

Նշված հոդվածով ուղղակիորեն սահմանվում է Վճռաբեկ դատարանի կողմից տրված իրավական հիմնավորումների պարտադիր բնույթը բոլոր դատարանների համար նույնանման փաստական հանգամանքներով գործեր քննելիս:

Ավելին, սույն գործով առկա են ոչ միայն նույնանման փաստական հանգամանքներ, այլև խոսքը գնում է նույն գործի մասին, որով Վճռաբեկ դատարանը հստակ արտահայտել է իր դիրքորոշումը «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի կիրառելիության վերաբերյալ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Գատարանը տույլ է տվել ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի պահանջների խախտում, հետևաբար ավելորդ է համարում կրկին անդրադառնալ նշված հարցի մեկնաբանմանը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի համաձայն, Վարչական դատարանի վճիռը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: ՀՀ վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի վերը նշված հոդվածներով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել Վարչական դատարանի 25.06.2008 թվականի վճիռը և այն փոփոխել. «Գրվաչ» ՍՊԸ-ի հայցը մերժել:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ՝ ստորագրություն  
Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ն Ե Ր՝ ստորագրություններ*



**Տպագրված է «Բավիղ» ՍՊԸ տպարանում**

Թուղթը՝ 90 գր. կավձ., 70/100, 1/16 38.25 տպագրական մանուլ

Տպաքանակը՝ 450

Հասցե՝ Ք. Երևան, Ուլունեցու 68

Հեռ.՝ 20-80-85

*E-mail: [bavigh@mail.ru](mailto:bavigh@mail.ru)*

*[www.bavigh.am](http://www.bavigh.am)*